

ԳԻՐԸ  
ՊԻՏՈՅԻՑ

ԵՐԵՎԱՆ

ՏՊԵՅԱԻ ԳԻՐՔՍ ԱՐԳԵԱՄՔՔ  
ԱԼԵՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
ԱՌ Ի ՅԻՇԱՏԱԿ ՆՈՐՈԳ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ  
ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ





«МАТЕНА ДАРАН»  
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МАШТОЦА  
ПРИ СОВЕТЕ МИНИСТРОВ АРМЕНИИ

# КНИГА ХРИЙ

Критический текст,  
предисловие и комментарии

ГОАР МУРАДЯН

ИЗДАТЕЛЬСТВО НАН АРМЕНИИ  
ЕРЕВАН 1993

9(47.928)

9-56

«Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԳԻՐԳ ՊԻՏՈՅԻՑ

Աշխատասիրությամբ

ԳՈՀԱՐ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ

2800



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱԱ ՀՐԱՏԱՐԱՎՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1993



Տպագրվում է Մաշտոցի անվան  
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝  
ՀԳԱԱ թղթակից անդամ Ս. Ս. Արևշատյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել  
պատմական գիտությունների թեկնածուներ  
Մ. Ս. Ծիրինյանը և Ա. Ս. Սահակյանը

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ճարտասանական արվեստը մ. թ. ա. 5-րդ դարում Ատտիկայում ժողովրդավարության պայմաններում առանձնացել էր որպես գեղարվեստական խոսքի և հասարակական կյանքի յուրահատուկ բնագավառ՝ քաղաքական պայքարի զորեղ միջոց հանդիսանալով: Այդ արվեստը կատարելագործելու նպատակով անտիկ աշխարհում բազմաթիվ տեսական աշխատություններ են գրվել, հայտնի են և ուսուցողական նպատակներով գրի առնված նմուշ-նառերի օրինակներ: Հելլենիստական միապետական ուժերից և Հռոմեական կայսրությունը այլևս չէին նպաստում հասարակական կյանքի գեմեղրատական ձևերին, և հետտորական արվեստը դուրս մղվեց ապարնզից: Իսկ ճարտասանության տեսությունը շարունակեց զույտունել որպես գրելու արվեստ, վերածվեց պոետիկայի, սակայն համախորտաբար զահպանելով նաև կազմելու հրահանգների իր ձևը. և այդ ձևով նրան ժառանգեց միջնադարը:

4-րդ դ. վերջին—5-րդ դարի առաջին կեսին գրված Ափիոնիոսի ճարտասանական վարժությունների՝ «նախակրթությունների» ժողովածուն բյուզանդական դպրոցի հիմնական ճարտասանական ձևերից էր. այն կիրառվել է և եվրոպական համալսարաններում՝ ընդհուպ մինչև 17—18-րդ դարերը: Իր գրությունից համեմատաբար քիչ անց՝ 5-րդ դարի նրկրորդ կեսին, ժամանակի դպրոցում լայն տարածում գտած դասագրքերը հայերենի թարգմանելու ծրագիրն իրականացնելիս՝ հայ թարգմանիչները մասամբ թարգմանել են այն, մասամբ վերաշարադրել, նաև զգալի ինքնուրույն շերտի հավելումով:

Այդպես ստեղծվել է «Պիտոլից գիրքը», որը հայկական իրականության մեջ նույն դերն է խաղացել, ինչ և իր նախօրինակը, և որպես ճարտասանության դասագիրք օգտագործվել մինչև 18-րդ դարը:

«Պիտոլից գիրքը» հայ միջնադարյան գրականության ամենահետաքրքիր և ամենաբարդ հուշարձաններից է: Այն պարունակում է ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն շերտեր. ավանդությունը վերագրել է այն պատմահայր Մովսես Խորենացուն, սակայն այն գրված է

Գ 618 Գիրք Պիտոլից (Մատենադարան, Հայաստանի նախարարների խորհրդին առընթեր Մաշտոցի անվ. հին ձեռագրերի ին-տ., Աշխատասիր՝ Գ. Մուրադյան., Պատ. խմբ.՝ Ս. Ս. Արևշատյան.—Եր.: Հայաստանի ԳԱԱ հրատ., 1993—363 էջ:

Ավանդությամբ Մովսես Խորենացուն վերագրված «Պիտոլից գիրքը» 5-րդ դարի ճարտասանության ձևերից է, որը լայնորեն կիրառվել է միջնադարյան Հայաստանի դպրոցներում: Կրկնով հունարեն թարգմանությունների շարքի անկապտելի օղակներից մեկը, այն իր ծավալի գերակշիռ մասով ինքնուրույն գործ է, աշխարհիկ գիտական մտքի եզակի հուշարձան:

Սույն հրատարակության մեջ զետեղված է «Պիտոլից գրքի» նոր քննական բնագիրը՝ կազմված Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հիման վրա, շոշափվում են նաև նրա հեղինակի, թվագրման, հունարեն սկզբնագրի և նախօրինակի հետ առնչության, հայերեն աղբյուրների, ինչպես նաև լեզվի և ոճի հարցեր:

ԳՄԴ 83. 3 Հ 1

0503020913  
Գ 703(02)—93 Չհայտ.



այնքան խրթին և երբեմն անկանոն լեզվով, որ հետազոտողները ստիպված են եղել կասկածի ենթարկելու այդ ավանդությունը: «Պիտոյից գիրքը» կրել է իր հունարեն նախօրինակի և հայերեն աղբյուրների ուժեղ ազդեցությունը՝ իր հերթին նախօրինակ և աղբյուր հանդիսանալով բազմաթիվ հեղինակների համար. «Պիտոյից գրքի» հունաբան բառապաշարի մեծ մասը բաղկացած է նախորդ թարգմանություններում ստեղծված նորակազմ բառերից: Այն հայ գրականության առաջին հուշարձանն է, որ գրված է այգօրինակ բառերի և նրանց նմանակությամբ ստեղծված բազմաթիվ նորաբանությունների կիրառությամբ (այդ ուղղությունը հետագայում զարգացել և լայն տարածում է գտել, բավական է հիշատակել այնպիսի անուններ, ինչպիսիք են Գրիգոր Նարեկացին և Գրիգոր Մալխասրոսը):

«Պիտոյից գիրքն» իր հետազոտողին երկու մեծ խնդիր է առաջադրում՝ առաջին հերթին ցույց տալ բուն հուշարձանի ծագման պատճառներն ու պայմանները, նրա լեզվաոճական առանձնահատկությունները, պարզել, թե ով, երբ, ինչ եղանակով և ինչ նպատակով է իրականացրել այդ գործը, բացահայտել նրա բնագրային կապերն իր սկզբնագրի, նախօրինակի և աղբյուրների հետ: Մյուս խնդիրը հուշարձանի հետագա կյանքի ուսումնասիրությունն է, այլ հեղինակների վրա նրա թողած ազդեցության լուսաբանումը, որ պարզում է այս ձեռնարկի հսկայական նշանակությունը միջնադարյան հայ մատենագրության զարգացման գործում: Բնական է, որ միայն առաջին խնդիրը լուծելուց հետո կարելի է ձեռնամուխ լինել երկրորդ հարցի պարզաբանմանը, որն առայժմ ապագայի գործ է մնում:

«Պիտոյից գիրքը» ճարտասանական վարժությունների (նախնական վարժությունների՝ «նախակրթությունների») ժողովածու է: Այն բաղկացած է 10 գրքից՝ ըստ նրա մեջ մտնող վարժությունների տեսակների. «պէտք» (որևէ իմաստունի դիպուկ խոսքն է և նրա վերլուծությունը), «խրատ» (նույնը, սակայն առանց հեղինակի հիշատակության), «եղծումն» (տրված առասպելական սյուժեի ճշմարտության, հավանականության, օգտակարության կլն վիճարկումը), «հասարակ տեղի» (մեղադրական ճառ է՝ այս կամ այն հանցանքի վերաբերյալ), «ներբողան» (տրված անձնավորության, կենդանու, առարկայի կլն գովաբանումը), «պարսաւ» (նախորդի հակառակը), «բաղդատութիւն» (տրված երկու առարկաների, անձանց կլն համեմատությունն է ըստ ներբողյանի և պարսավի գլուխների՝ պարզելու համար, թե ով է ավելի գովության կամ պարսավանքի արժանի), «բարառնութիւն» (երևակայական ճառ է, որ

կարտասաններ տվյալ անձը երևակայական կամ հնարավոր առիթով), «արտասանութիւն» (որևէ վայրի, իրադարձության նկարագրությունն է), «գրութիւն» (այս կամ այն գործողությունը կատարելու նպատակահարմարության բնարկումն է): Տասը գրքերից յուրաքանչյուրը սկսվում է համապատասխան տեսակի համառոտ սահմանումով (որի մեջ մտնում է բուն սահմանումը, նշվում տվյալ տեսակի հնարավոր ենթատեսակները և թվարկվում են այն կետերը, կամ գլուխները, որոնցից բաղկացած պետք է լինի տվյալ տեսակի վարժությունը), որից հետո գալիս են բուն նախակրթությունները կամ նմուշ-օրինակները. տարբեր գրքերում նրանց թիվը տարբեր է ( 3, 4, 5, 6, 7): Տասներորդ գրքից հետո կա բարառնության երեք հավելյալ օրինակ (Յաւելուած), և վերջաբան՝ գրված Մովսես քերթողի անունից իր աշակերտ Թեոդորոսին:

Այսպիսով, «Պիտոյից գիրքն» առաջին հերթին ճարտասանական ձեռնարկ է, և այդ պատճառով այն պետք է դիտել ժամանակի կրթական համակարգում, որի կարևոր օղակներից մեկը ճարտասանությունն էր: Սակայն «Պիտոյից գիրքը» նաև հունաբան դպրոցի գործունեության արգասիք էր, որ ստիպում է մեզ համառոտակի անդրադառնալու այդ գործունեության նպատակներին, առանձնահատկություններին և թարգմանություններին թվագրման բարդ խնդրին:

Միջնադարյան Հայաստանում, ինչպես և Բյուզանդիայում, գիտությունը պատկանում էր դպրոցին: Բյուզանդական դպրոցը կայսրության ողջ պատմության ընթացքում մնում էր աշխարհիկ և պահպանում ու մշակում էր անտիկ ավանդություններն ու մշակույթը: Տարրական դպրոցը, որ կոչվում էր քերականի (γραμματικὸς -ի) դպրոց, հաճախում էին ինչպես հեթանոսների, այնպես էլ քրիստոնյաների երեխաները (խոսքը Բյուզանդական կայսրության պատմության վաղ շրջանի մասին է), և այնտեղ նրանք տառաճանաչ էին դառնում հեթանոսական աստվածների անուններով (Μαγίου, էջ 251): Քանի որ ուսուցման հիմնական նպատակը խոսքին տիրապետելն էր (Γασπαροβ, էջ 10—11; Самодурова, էջ 482), կրթության հաջորդ փուլը քերականական (γραμματικὸς -ի) դպրոցն էր, որտեղ սովորում էին պասիվ տիրապետել խոսքին, իսկ հաջորդ՝ հոետորի (ὀρθωρ -ի) դպրոցը, որի նպատակն էր խոսքին ակտիվ տիրապետելը (Browning, էջ 105—117): Քերականության հիմնական ձեռնարկը մ. թ. ա. 2-րդ դարի լիբրսանդրացի քերական Դիոնիսիոս Թրակացու «Քերականությունն» էր (ինչպես նաև Թեոդոս Ալեքսանդրացու «կանոնները»): Ճարտասանական կրթությունը, որ կարելի էր ստանալ կայսրության մեծ քաղաքներում տեղադրված ճարտասանական դպրոց-



ներում, միշտ եղել է բարձր պետական պաշտոններ զբաղեցնելու անհրաժեշտ պայման (Kennedy, 1983, էջ 48; Browning, էջ 113—114): Այս շրջանում այն դարձել էր լուկ ոճը մշակելու արվեստ, նույնացել պոետիկայի հետ (Baldwin, էջ 39): Ճարտասանության դպրոցի շրջանավարտները պարտավոր էին վարպետորեն տիրապետել խոսքին և կատարելագործել իրենց ոճը: Հիմնական ձեռնարկը երկրորդ սոփեստականության\* տեսարան Հերմոգենես Տարսոնացու (2-րդ դ.) «Ճարտասանական արվեստն» էր, որից առաջ ձեռագրերում սովորաբար տեղագրված էին հայտնի անտիոքացի ճարտասան և պետական գործիչ Լիբանիոսի աշակերտ Ափթոնիոսի «նախակրթությունները» (տե՛ս Aphthonios)\*\*: Վերջիններս պարունակում էին տասնչորս տեսակի նախնական վարժություններ գրելու հրահանգներ կամ սահմանումներ՝ մեկական նմուշ-վարժություններ յուրաքանչյուր տեսակի համար: Համապատասխան կանոններով մշակված պատմական, դիցաբանական, իսկ ավելի հազվադեպ՝ կյանքից վերցված (սակայն ոչ իրական, վերացական) նյութը կարող էր հետագայում դառնալ առանձին ճառ, կամ էլ ճառի, գրական, պատմական երկի մաս: Ափթոնիոսն իր ժողովածուի տեսական հրահանգները գրել էր նույն Հերմոգենեսի հրահանգների հիման վրա (տե՛ս Hermogenes)\*\*\*, համառոտելով դրանք և դպրոցի կարիքների համար՝ լավագույնս հարմարեցնելով: Նրանց շափազանց լակոնիկ բովանդակությունը սահմանափակվում է տվյալ տեսակի «սահմանումով» (ὄρος), «բաժանումով» (ὄ-αιρεσις) և երբեմն՝ ոճական առանձնատկությունների հպանցիկ քննադատումով: Նրանցում փորձ անգամ չկա կապելու այս կամ այն տեսակը ճարտասանության Արիստոտելից եկող երեք սեռերի հետ (համարաձախոսական, ատենական և բաղխոհական, տե՛ս Kennedy 1983, էջ 66): Ճարտասանական դպրոցում դասական հեղինակների հետ ծանոթանալուց և այդ նախնական վարժությունները (προγυμνάσματα - praexercitamina) յուրացնելուց հետո անցնում էին ինքնուրույն ճառեր կազմելուն (μελέται - declamationes):

\* 2—4-րդ դարերում տարածված մի գրական ուղղություն էր, որը նորից կյանքի էր կոչել հոնտորների հրապարակային ճառեր արտասանելու հնչյունիտական և հոնոնական միապետության պայմաններում մոռացություն արված սովորույթը: Սակայն ի տարբերություն ատտիկյան հոնտորների, նրանց նպատակն էր հանդիսատեսին ոչ թե համոզելը, այլ հիացնելը, նրանց ելույթներն ավելի նման էին թատերական ներկայացումների (տե՛ս Kroll; Eisenhut, էջ 71—73; Lesky, էջ 326—345, 972—976, առանձին հեղինակների մասին տե՛ս Wright, էջ 224—242):

\*\* Նրա մասին տե՛ս Brzoska; Hock, O'Neil. pp. 211—218.

\*\*\* Նրա մասին տե՛ս Radermacher; Hock, O'Neil. pp. 153—171.

Բարձրագույն փիլիսոփայական դպրոցներում ուսումնասիրում էին փիլիսոփայությունը զբաղվելու համար նախապատրաստական առարկաներ՝ դիալեկտիկական (տրամաբանություն), որը բերականության և ճարտասանության հետ միասին լրացնում էր արևմտյան ԼՐՈՒՄ-ին համապատասխանող շարքը (Kennedy 1980, էջ 163), ինչպես նաև զուստրիում կազմող թվաբանությունը, երաժշտությունը, երկրաչափությունը և աստղագիտությունը\*: Այս ամենից հետո միայն ձեռնամուխ էին լինում փիլիսոփայության ուսումնասիրությանը (Самодурова, էջ 487—495): Ինչպես Բյուզանդիայում, այնպես էլ լատինալեզու արևմուտքում, ողջ միջնադարի ընթացքում տրամաբանության հիմնական ձեռնարկն էր մնում Արիստոտելի «Կատեգորիաների» («Ստորոգությունների») Պորփյուրի «Ներածությունը», ինչպես նաև Արիստոտելի մի շարք աշխատություններ (Самодурова, էջ 488. Аревшатян, էջ 196—197):

5-րդ դարի կեսերին Հայաստանում՝ քրիստոնեական ողջ աշխարհը համակած դավանաբանական վեճերի պայմաններում, որոնք առավել սրվել էին 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո, գիտական համակարգված գիտելիքների մեծ պահանջ առաջացավ: Նշված ժամանակաշրջանում հայ թարգմանիչներն արդեն ավարտել էին քրիստոնեական գրականության այն կարևորագույն երկերի թարգմանությունը՝ ասորերենից և հունարենից (ի դեպ, ասորերենից թարգմանությունների մեծ մասն իրագործվել է 5-րդ դարի առաջին երեք տասնամյակներում), որոնք անհրաժեշտ էին հայկական եկեղեցու առաջնահերթ պահանջները բավարարելու համար (տե՛ս Ակինյան, դասական հայերենը, էջ 26—27): Ինչ վերաբերում է գիտական երկերին, ապա դրանք, ինչպես վերը տեսանք, հիմնականում տարբեր մակարդակի դպրոցներում կիրառվող դասագրքեր էին: Հենց այդպիսի դասագրքերի թարգմանությունն այժմ ձեռնամուխ եղան այսպես կոչված «հունարան դպրոցի» ներկայացուցիչները\*\*:

\* 5-րդ դարում հոնոնացի ճարտասան Մարտիանոս Կապելլան այս նախապատրաստական գիտություններն անվանեց «յոթ ազատ արվեստներ», և միայն 9-րդ դարից սկսած նրանց հորըրբվեցին «տրիվիում» և «կվադրիվիում» (Lausberg, էջ 34), որ բառացի նշանակում է «եռուղի» և «քառուղի»:

\*\* Թարգմանությունների գերջին դասակարգումը տե՛ս Аревшатян, էջ 37—39 (դասական թարգմանությունների ցուցակ), էջ 186—189 (հունարան թարգմանությունների ցուցակ): Նույնպիսի դասակարգման կողմնակից է Լ. Տեր-Պետրոսյանը (Տեր-Պետրոսյան): Անցյալի հայ բանասերներն առանձնացնում էին նաև դասական և հունարան շրջանների միջև ընկած մի միջանկյալ փուլ, երբ թարգմանության լեզուն արդեն կորցրել էր իր սկզբնական մաքրությունն ու հստակությունը, սակայն դեռևս չէր վերածվել հունարան թարգմանությունների հատուկ սկզբնագրի ստրկական պատճենման: Ի տարբերություն



ցին Դիոնիսիոս Քրակացու «Քերականությունը» (բնագիրն ուսումնասիրության մասերը տե՛ս АДОИЦ)\*, Ափթոնիոսի նախակրթությունների տեսական մասերը (14 գրքից միայն տասր), որոնց հիման վրա ստեղծվեց մասնակի թարգմանական «Պիտոցից գիրքը, Պորփյուրի «Ներածությունը» և Արիստոտելի մի շարք երկեր, որոնք առաջին երկուսի հետ կազմում էին քերականություն-ճարտասանություն-տրամաբանություն շարքը, իսկ ավելի ուշ բուն փիլիսոփայական գործեր՝ մի քանի այլ նորապատնական երկեր (Аревшатын, էջ 202—210), Պլատոնի երկխոսությունները (Аревшатын, էջ 218—227), նորապատնական փիլիսոփա Դավիթ Անհաղթի աշխատությունները, (Аревшатын, էջ 269—327), և Դիոնիսիոս Արեոպագոցու ստեղծագործությունները, որոնցում նկատվում է նորապատնական փիլիսոփայության և քրիստոնեական աշխարհայացքի առավել հետևողական միացում (Аверинцев, էջ 73—74): Սրանց զուգահեռ թարգմանվում էին բովանդակությամբ դասական շրջանի ավանդույթները շարունակող երկեր, սակայն նրանցում որոշակիորեն զգացվում էր նոր, «հունարան», «նյութական» թարգմանչական մեթոդի ազդեցությունը: Ինչ վերաբերվում է քառյակ գիտությունների շարքին (Թվարանություն-երկրաչափություն-երաժշտություն-աստղագիտություն), ապա դրանք Հայաստանում զարգացրել է 7-րդ դարում Անանիա Շիրակացին:

Չնայած, ինչպես վերը նշվեց, հունարան դպրոցի երևան գալը պայմանավորված էր թարգմանվող հիմնական երկերի նոր՝ գիտական բովանդակությամբ, այնուամենայնիվ հունարան թարգմանությունները դասականներից առանձնացնելիս՝ որոշիչ է հանդիսանում լեզվական կրթվանք: Նրանց հիմնական առանձնահատկությունը\*\* սկզբնագիր բառացի,

«սակեղարյանի»՝ Ն. Ակինյանն այն կոչում է հայ գրականության «արծաթե» դար (Ակինյան, Դասական հայերենը, էջ 57—82): Լր. Աճառյանը հատուկ զուլի է նվիրել այդ շրջանի լեզվի բնութագրմանն իր «Հայոց լեզվի պատմության» երկրորդ հատորում (Աճառյան, էջ 107—113)՝ «Հետմերոպյան հայերենը» (որ նա այդպես է կոչում ի տարրերություն առաջին շրջանի «մերոպյան հայերենի»): Գ. Լաֆոնտենը և Բ. Կուլին անվանում են այն **«Նախահունարան»** (pre-hellénophile-Lafontaine, Coulie, էջ 137):

\* Նրանում կերտված քերականական տերմինաբանությունը քննության է ենթարկված Ա. Մուրադյանի կողմից, տե՛ս Մուրադյան Ա.:

\*\* Հունարան լեզվի մասին տե՛ս АДОИЦ, էջ CLXXXIV—CXCHII, Ակինյան, Դասական հայերենը, էջ 89—90, Մանանդյան, Հունարան դպրոցը, Աճառյան, էջ 142—168, Մուրադյան Ա., հատկապես էջ 324—338, Mercier, էջ 59—75, Հունարան լեզվի համառոտ նկարագրություններ են պարունակում սովորաբար առանձին հուշարձանների հրատարակությունների կամ նրանց արևմտյան լեզուներով թարգմանությունների առաջաբանները:

նյութական թարգմանությունն է՝ ինչպես շարահյուսության, այնպես էլ բառակազմության առումով (նորաստեղծ նախածանցավոր, բարդ և վերջածանցավոր բառեր), ինչպես նաև մի շարք արհեստական քերականական ձևերի կիրառությունը: Ծիշտ է, բառային և շարահյուսական պատճենման՝ հունարանությունների առանձին դեպքեր առկա էին արդեն սակեղարյան թարգմանություններում\* (տե՛ս, օրինակ, Benveniste, էջ 11), նրանք ավելի հաճախակի են դառնում «հետմերոպյան» կամ «արծաթե դարի» թարգմանություններում\*\*։ Հունարան դպրոցի թարգմանություններում հունարանություններին ավելի հաճախ դիմելու միտումն իր տրամաբանական շարունակությունն է գտնում, սակայն թարգմանվող երկերի գիտական բնույթը, նրանցում մեծ թվով տերմինների առկայությունը և բացառիկ ճշգրտության ձգտումը բերում են այնպիսի մի իրավիճակի, երբ այն իշխող սկզբունք է դառնում, ստեղծելով թարգմանչական նոր մեթոդ\*\*\* և լեզվի նոր որակ: Մինևույն ժամանակ արդեն հունարան դպրոցի գործունեության շրջանակներում ժամանակի ընթացքում նյութականության սկզբունքն ավելի ու ավելի հետևողական է կիրառվում, որի շնորհիվ ուշ շրջանի թարգմանություններում այն համարյա բացարձակ է դառնում, իսկ թարգմանությունների լեզուն՝ այնքան խորթին, որ հաճախ հասկանալու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ հունարեն բնագիրը:

Նկատելով այդ օրինաչափությունը, Լ. Մանանդյանը բաժանել է հունարան դպրոցի գործունեությունը երեք շրջանի (Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 86—258): Եթե այս դասակարգումը հիմնականում ընդունվել է հետագայի բանասերների կողմից, ապա նույնը չի կարելի ասել նրա՝ թարգմանությունների թվագրումների և դրանք լոկ ըստ այս կամ այն ածանցի կիրառության խմբավորման սկզբունքի մասին: Վեր-

\* Այս օրինաչափությունը դիտելիս՝ մենք զանց ենք անում վաղ շրջանում ասորերենից կատարված թարգմանությունները, որոնց թվում էլ կային ավելի «մաքուր» և ավելի «ստորարան» թարգմանություններ, սակայն նրանցում տարրերությունը բացատրվում է ոչ թե թարգմանչի կիրառած մեթոդով, այլ նրա վարպետությամբ (Тер-Петросян, էջ 26—27):

\*\* Օրինակ, Բարսեղ Կեսարացու երկերի թարգմանություններում. տե՛ս Uluhogian, 403—422, Lafontaine, Coulie, էջ 137:

\*\*\* Գ. Լաֆոնտենը և Բ. Կուլին (նույն տեղում) այդ մեթոդն անվանում են «մեխանիստական» և բացատրում այն սկզբնագիրը լավ չհասկանալու փաստով, սակայն այդպիսի մեխանիստական ինքնին հակասում է որևէ մեթոդի կիրառության զաղափարին:



չինս լուրջ քննադատության է ենթարկվել (Մալխասյանց, էջ 76—84, Ավդալրեգյան, էջ 112—131, Terian, The Hellenizing School, էջ 176): Մանադյանի թվագրումների ողջ համակարգի անկյունաքարը Տիմոթեոս Կուզի «Հակաճառության» թվագրումն է, որը նա համարում է հունաբան դպրոցի գործունեության երկրորդ շրջանի առաջին թարգմանությունը և տեղադրում 6-րդ դարի կեսերին, իսկ առաջին շրջանի բոլոր թարգմանությունները՝ համապատասխանաբար 6-րդ դարի առաջին կեսում: Այս տեսակետի կողմնակիցների թվին է պատկանում Ն. Ա. Կիրյանը (Ակիրյան, Գասական Հայերենը, էջ 85—100, նույնի՝ Դավիթ Հարբացի, էջ 22—25, նույնի՝ Տիմոթեոս Կուզ, էջ 18—22) և մի շարք մերօրյա արտասահմանցի հայագետները (Terian, Phlio, էջ 6—7, նույնի, The Hellenizing School,\* Lafontaine, Coulte, էջ 117):

Սակայն հայագիտության մեջ գոյություն ունի նաև մեկ այլ տեսակետ, որը հիմնվում է «Հակաճառության» թարգմանության Գ. Տեր—Մկրտչյանի առաջադրած թվագրման վրա՝ 480—484 թթ. (Տեր—Մկրտչյան): Այն ընդունել է Մ. Աբեղյանը (Աբեղյան, էջ 118—119), և ըստ այդ թվագրման առաջին շրջանի թարգմանություններն իրագործվել են 5-րդ դարի երրորդ քառորդում (Аревшатын, էջ 166—189\*\*): Այս վեճերի հետ է կապված նաև Մովսես Խորենացու և Եղիշեի «Պատմությունների» թվագրման մինչև օրս վիճարկվող հարցը, քանի որ հայտնի է, որ երկուսի համար էլ աղբյուր են հանդիսացել առաջին շրջանում իրագործված Փիլոն Ալեքսանդրացու թարգմանությունները (Халатянц, էջ 375 կլն, Կյուլենսերյան, էջ 151—174):

Զնայած թվագրման վերաբերյալ գոյություն ունեցող լուրջ տարածանություններին, բոլոր հետազոտողներն էլ համամիտ են, որ առաջին շրջանի հիմնական ստեղծագործություններն են Թրակացու «Քերականությունը» (ապացուցված կարելի է համարել, որ այն հենց առաջին թարգմանությունն է, տե՛ս Մանանդյան, Հունաբան դպրոցը, էջ 123—124

\* Այստեղ Ա. Տերյանը վիճարկում է առաջին երեք շրջանների միջև եղած տարբերությունները ժամանակալին հաջորդականությամբ բացատրելու անհրաժեշտությունը, կապելով դրանք առանձին թարգմանիչների անձնական նախադրությունների հետ և տեղադրում բոլորը 572—575 և 603 թվականների միջև: Նա առանձին է դիտում միայն չորրորդ յմբի թարգմանությունները, որոնց մեծ մասը կապված է Ստեփանոս Սյունեցու անվան հետ:

\*\* Այստեղ մանրամասն շարադրված է հունաբան դպրոցի ուսումնասիրության և նրա շուրջ ժամայված վեճերի պատմությունը: Հեղինակը նրա գործունեությունը չորս շրջանի է բաժանում (Аревшатын, էջ 186—188): Նման մի ակնարկ կարելի է գտնել և Ա. Մուրադյանի գրքում (Մուրադյան Ա., էջ 76—111):

Մուրադյան Ա., էջ 109), «Պիտոլից գիրքը» և Փիլոնի երկերը, ըստ Ա. Արևշատյանի՝ տրիվիումի բերականություն-ճարտասանություն-փիլիսոփայություն (ըստ նրա այդպես է, և ոչ տրամաբանություն) աստիճաններին համապատասխան (Аревшатын, էջ 145—150)\*: Դրա հիման վրա նա տեղադրում է Փիլոնի երկերի թարգմանությունները «Պիտոլից գրքի» թարգմանությունից՝ հետո՝ համարելով, որ շնայած դրանք կապ չունեն տրամաբանության հետ, ունենալով փիլիսոփայական-գաղափարական բովանդակություն, սակայն «կյանքի էին կոչված լրացնելու տրիվիումի վերջին՝ երրորդ աստիճանը, բայց միայն սկզբնական շրջանում» (Аревшатын, էջ 150):

Այսպիսով, հունաբան դպրոցի հիմնական նպատակն է եղել իր ժամանակի հունական կրթությունը հայկական հողի վրա փոխադրելը, իսկ Ափթոնիոսի նախակրթությունների թարգմանությունը այդ ծրագրի իրականացման օրինաչափ օղակներից մեկն էր\*\*։ Մեզ օրինաչափ է թրվում և այն, որ Ափթոնիոսի ձեռնարկից թարգմանվել են միայն տեսական հրահանգները (սահմանումները), իսկ բուն նախակրթությունների բնագիրը, ինչպես կտեսնենք ստորև (տե՛ս ծանոթագրությունները), «Պիտոլից գրքի» հեղինակն ինքնուրույն է շարադրել: Զէ որ Ափթոնիոսի նախակրթությունները նմուշներ են, չուրատեսակ վարժությունների օրինակներ, որոնք, ինչպես ենթադրվում է, պետք է ընդօրինակելին աշակերտները: Եվ թարգմանիչն ընդօրինակել է դրանք՝ կարծես նրանց առաջին հայ աշակերտը հանդիսանալով, իսկ իր գրած նախակրթությունները պիտի ընդօրինակելին հայ աշակերտների հետագա սերունդները\*\*\*:

\* Վերջին գաղափարը հունարան դպրոցի թարգմանությունների կապակցությամբ առաջին անգամ առաջ է բաշել Ն. Դուբյանը (Դուբյան, էջ 34—35), սակայն որպես երբորդ աստիճանի գործ նա մասնանշում է Դավիթ Անհաղթի «Սահմանք փիլիսոփայական»-ը: Հայաստանում տրիվիումի գոյության գաղափարը կարելի է գտնել Լ. Լեյի մոտ (Lewy, էջ 15): Հայերեն թարգմանությունները ժամանակի բյուզանդական դպրոցների ծրագրի հետ է կապում Ա. Տերյանը (Terian, The Hellenizing School, էջ 183):

\*\* Հետագայում «եռյակ» և «քառյակ արվեստներ» և փիլիսոփայությունը, որոնք 5—7-րդ դարերում հայացվել էին հունաբան դպրոցի գործունեության շնորհիվ, բարձրագույն կրթության անկապտելի մասը դարձան և ուրիշ «արտաքին» կամ «նուրբ» գործերի հետ դասավանդվում էին հայկական համալսարաններում (Արևշատյան, Մաթեմատիկա, էջ 29—30): Ծարտասանության դասագիրքը «Պիտոլից գիրքն» էր (նույն տեղում, էջ 37):

\*\*\* Այդպիսի ընդօրինակության փաստ կարելի է համարել Մաշտոցի անվան Մատենադարանի № 1803 ձեռագրի (18-րդ դ.) գրչի հանկարծակի շեղումը մյուս ձեռագրերի բնագրից մի քանի հատվածներում (պետք 2, խրատ 4, եղծում 4, հասարակ տեղի



Ափթոնիոսի սահմանումների թարգմանության և օրինակները փոխելու փաստը կարելի է համադրել Քրակացու թարգմանչի կողմից քերականական դրույթները լուսարանող մի շարք օրինակների «հայացման» կամ «քրիստոնեացման» փաստի հետ. այսպես. «Պողոս»—Σωκράτης («յատկապէս»)՝ իմա հատուկ անվան օրինակ է. ΑΔΟΝΑ, էջ 13), «Համազասպեան Մանուէղ»- Αἰακίδης ὁ Ἀχιλλεύς («հայրունական» անվան օրինակ է. ΑΔΟΝΑ, էջ 13—14), «Պետրոս»—Ὁ μαθητής («եզական» անվան օրինակ է. ΑΔΟΝΑ, էջ 16—17), «Յովհաննէս Զբարեան եւ Յովհաննէս Զերեղեան»- Αἰας ὁ Τελαμῶνιος καὶ Αἰας ὁ Ἰλῆος («հումանուն» է. ΑΔΟΝΑ, էջ 19): Սակայն Քրակացու մոտ այդ օրինակները բնագրի փոքր մասն են կազմում և առաջին հայացքից նկատելի չեն, իսկ «Պիտոյից գրքի» օրինակները նրա բնագրի առուծի բաժինն են կազմում, և թարգմանչի ակտիվ վերաբերմունքը նրանց նկատմամբ նաև այն իրողության արտահայտությունն է, որ ճարտասանության հիմնական նպատակը խոսքին ակտիվ տիրապետելն էր:

\* \* \*

«Պիտոյից գրքն» ավանդաբար վերագրվել է Մովսես Խորենացուն: Մեր հետազոտած ձեռագրերից մի քանիսում նրա անունն առկա է վերնագրերում կամ հիշատակարաններում:

№ 6623 (1668 թ.), էջ 217 (հիշատակարան). «Գծագրեցավ գիրքս ճարտասանութեան, որ է արարեալ մեծի քերթողահօրն Մովսէսի Խորենացոյ...»:

№ 1804 (1690 թ.), էջ 1 ա. «Գիրք Պիտոյից Մովսէսի Խորենացոյ»:

№ 1800 (1783 թ.), էջ 2 ա. «Յաղագս պիտոյից գրոց Մովսեսի Քերթողի արարեալ»:

№ 3125 (1766-ից հետո), էջ 31. «Գիրք որ կոչի Պիտոյից արարեալ եւ շարահիւսեալ Մեծի Քերթողահօրն յիրոյ Մովսէսի Խորենացոյ Աստուծոյ համար»:

3): Հավանաբար այդ ձեռագրի կամ նրա նախօրինակի գրիչը՝ պարտաճանաչ կերպով արտագրելով ողջ գիրքը, որոշել է փորձել այդ նախակրթությունները շարադրել իր խոսքերով, շնորհիվ, սակայն, բովանդակությունից: Բացի այդ «Պիտոյից գրքի» վերջում կցված են երեք հավելյալ բարանություններ, որոնցից առաջինը արժարժում է 8-րդ գրքի 1 նախակրթության թեման. «Զինչպիսի բանս ասիցէ (VIII. 1, «ասէր») Ադամ եւանելով ի դրախտէն»: Միայն այդ փաստը բավական է հավելվածն ուղ ներմուծություն համարելու համար:

առաժառանգ վարդապետի ի վարժումն եւ ի կրթութիւն ուսումնասէր մանկանց եկեղեցոյ»:

Ինչպես տեսնում ենք, բոլորն էլ ուղ (17—18-րդ դարերի) ձեռագրեր են:

Այդ ավանդության համար հիմք կարող էր հանդիսանալ վերջաբանի վերնագրում հիշատակվող Մովսէս Քերթողը, որը, սակայն, կարող էր Խորենացին չլինել: Եվ ահա հետազոտողներն անբավարար համարելով ավանդության տվյալները, որոնց թվում կան նաև մի շարք միջնադարյան ավելի ուղ հեղինակների վկայություններ (տե՛ս ստորև), ձգտել են ավելի վստահելի կովաններ գտնել «Պիտոյից գիրքը» Խորենացուն վերագրելու համար: Սակայն նրանց բերած բոլոր կովաններն էլ մեզ վիճելի են թվում, մի քանիսն ուղղակի հնացած են հայագիտության արդի փուլում: Այսպես, «Պիտոյից գրքի» առաջին հրատարակիչ Հովհ. Զոհրապյանն իր առաջաբանի մեծ մասը նվիրել է այդ դրույթի ապացուցմանը (Գիրք պիտոյից, էջ է-ժա): Բացի հեղինակի տաղանդի մասին ընդհանուր դատողություններ անելուց, նա համեմատում է վերջաբանի խորագիրը՝ «Մովսէսի Քերթողի արարողի Պիտոյիցս տառի խրատաբանութիւն» Խորենացու «քերթող»\*\* և «քերթողահայր» մակդրի հետ, որով՝ սկսած 10-րդ դարից, նրան հորջորջել են մի շարք հեղինակներ: Մեզ ավելի հավանական է թվում Բաումգարտների ենթադրությունն այն մասին, որ այդ խորագիրը\*\*\* (ինչպես նաև հավելվածի նախակրթությունները, տե՛ս

\* «Մովսէս քերթող»-ը կամ «Մովսէս Խորենացին» հիշատակվում է նաև Երուսաղեմի № 515 ձեռագրում (1796—7 թ.) և Զմմառի վանքի № 222 (18 դ.) և № 619 (1776 թ.) ձեռագրերում:

\*\* Այդ տերմինի ծագման և կիրառության մասին տե՛ս ΑΔΟΝΑ, էջ CXCII—CXCIII:

\*\*\* Ինչպես և ողջ վերջաբանը, որի լեզվի և ոճի տարբերությունը մնացած բնագրից նկատել են արդեն Զ. Մանուգյանը, (Մանանդյան, Խորենացու առեղծվածը, էջ 158—172) և Ստ. Մալխասյանը, (Մալխասյանց, էջ 67—73), ըստ որում Մանանդյանը հենց այս հիման վրա էր վերագրում այդ վերջաբանը Մովսես Խորենացուն՝ նրան 9-րդ դարի հեղինակ համարելով, իսկ Մալխասյանը՝ քննադատելով նրա այս վերջին դրույթը, պնդում էր, որ նաև լեզվաոճական առանձնահատկությունները թույլ չեն տալիս նույնացնելու Մովսես Քերթողին Խորենացու հետ: Այսպիսով, վերջաբանը կարող էր գրվել արդեն այն բանից հետո, երբ Խորենացին ստացել էր «քերթող» մակդիրը, և նրան էր վերագրվել «Պիտոյից գիրքը», կամ էլ, ինչպես վերը նշվեց, Մովսես Խորենացին և Մովսես Քերթողը նույն անձնավորությունը չեն: Ի դեպ, «Պիտոյից գրքում» «քերթող» նշանակում է միայն «պոետ», և նույնիսկ «քերթողությունը» հակադրված է «ճարտասանությանը», տե՛ս II. 3. ա. «...որք թէպէտ եւ կարի» զատուցեալ են յիրեբաց միջոցաւ...», որ, մեր կարծիքով, նույնպես խոսում է զոնն այդ խորագրի ուղ գրության օգտին:



նաև Զարպհանալյան, Պատմություն, էջ 272) ավելի ուշ է գրվել և կցվել բնագրին (Baumgartner, էջ 465): Իր թեզն ապացուցելու համար Զոհրապ-յանը հենվում էր նաև Ստեփանոս Ասողիկի հետևյալ տեղեկություն վրա. «յայտն ժամանակի էր մեծ փիլիսոփոսն հայոց Մովսէս, որ զճարտասա-նական արուեստ ի գործ առնու ի հայս» (Ասողիկ, էջ 79). նա վկայա-կողում է և մի այլ տեղի, որտեղ Ասողիկն անվանել է նրան «ճարտա-սան Մովսէս» (Ասողիկ, էջ 82): Սակայն Ասողիկն այստեղ, հավանաբար, ի նկատի ունի վերոհիշյալ Մովսես Քերթովին:

Ինչևէ, այն պատկերացումը, որ իրոք խորենացին է «Պիտոյից գրքի» հեղինակը, այն աստիճանի իշխող էր բանասիրության մեջ, որ այն հրատարակվել է խորենացու երկերի ժողովածում (Մովսէս խորենացի, Մատենագրությունը, էջ 339—581):

Այդ գաղափարի կողմնակից էր և Գ. Զարպհանալյանը (Զարպհանալ-յան, Պատմություն, էջ 268—272), շնայած երկուսի միջև «յայտնապէս կտեսնուի ոճոյ զանազանութիւնը» (նույն տեղում, էջ 269), որ նա փորձում էր բացատրել այն հանգամանքով, որ «Պիտոյից գիրքը» խորե-նացին հորինել էր երիտասարդ հասակում և նույն ոճով գրել նաև իր հայտնի «Ի յիշատակի սրբոցն Հոփսիմեանց» ճառը (նույն տեղում, էջ 271): Սակայն այդ ենթադրության առաջին մասը լոկ ենթադրություն է մնում, իսկ երկրորդ մասն, ըստ մեզ, նույնպես որևէ բան չի ապացու-ցում, քանի որ նշված ճառի հեղինակային պատկանելությունը նույնպես ապացուցված չէ, իսկ ոճի մասին դատողությունները սուբյեկտիվ տպա-վորության բնույթ են կրում (ճառի բնագիրը տե՛ս Մովսէս խորենացի, Մատենագրությունը, էջ 304—325):

Նույն դրույթը փորձել է ապացուցել և Բաումգարտները (Baumgartner էջ 513—514). նա առաջին հերթին հիմնվում է միջնադարյան վկայություն-ների վրա (Baumgartner, էջ 463)՝ Կիրակոս Գանձակեցու, որը խորենացու երկերի թվում նշում է նաև «Պէտք» (Կիրակոս Գանձակեցի, էջ 28), և Մխիթար Այրիվանեցու՝ «Պէտք Մովսիսի» (Մխիթար Այրիվանցի, էջ 36)\*: Բացի այդ նա, համաձայնելով Զոհրապյանին, խոսում է Մովսես Քերթովի (Rhetor) և Մովսես պատմիչի լեզվի և ոճի նմանության մասին (Baumgartner, էջ 481), նրանց երկուսի հունական գրականությանը մակե-րեսային ծանոթության մասին, և, վերջապես, բանասիրական կովաններ է առաջ քաշում՝ երկու հեղինակներն էլ օգտվել են միևնույն հունարեն աղբյուրներից. ա) Թեոն Ալեքսանդրացու ճարտասանական աշխատու-

թյունից (տե՛ս Theon), բ) Նիկողայոս Մյուռացու նախակրթություննե-րից, որոնք «Պիտոյից գրքի» աղբյուրների թվին են պատկանում (տե՛ս մեր ծանոթագրությունները, իսկ խորենացին նրանից բաղել է Պասի-ֆայեի մասին առասպելը (Մովսէս խորենացի, 2.37, տե՛ս Baumgartner, էջ 513): Սակայն այդ երկու կովաններն էլ այժմ ընդունելի չեն. ա) խո-րենացին իրոք օգտվել է Թեոնի երկից, բայց միայն նրա հայերեն թարգմանությունից (տե՛ս Թեոֆիլ), իսկ «Պիտոյից գրքի» հեղինակն, ինչպես ցույց է տրվում ծանոթագրություններում, նրանից բոլորովին չի օգտվել, բ) Պասիֆայեի մասին առասպելին խորենացին առավել հա-վանականությամբ ծանոթացել է իր հայտնի աղբյուրից՝ Փիլոնի թարգ-մանություններից\*\*:

Այսպիսով, «Պիտոյից գիրքը» խորենացու անվան հետ կապող ավան-գական վարկածն ամբողջովն կոչված՝ հետազոտողների առաջ քաշած փաստարկներն անբավարար են: Մյուս կողմից կան փաստեր, որոնք թեև նույնպես բավարար չեն ապացուցելու համար հակառակը, սակայն աստիճան են կասկածի ենթարկելու ավանդույթը:

Առաջինը խորենացու և «Պիտոյից գրքի» հեղինակի հակադարձ վերա-բերմունքն է հունական առասպելների նկատմամբ: Հիշենք, որ խորենա-ցին, ի տարբերություն պարսկական «սուտ» առասպելների, շատ բարձր էր գնահատում հունական «պերճ ու ողորկ» առասպելները, «որք զճըշ-մարտութիւն իրաց այլարանաբար յինքեանս ունին թարուցեալ»: Հմմտ. «եղծումների» (III) մեջ՝ 1. ա. «ստութեանն արկածք շարեաց» (խոսքը «քերթողական պատմութեան» մասին է, որի թեման Նեոլբեի մասին առասպելն է), ը. «առասպելական ստաբանութիւն», 2. ա. «(Հերոդո-տոս) քան զքերթողացն զանցանէ ստաբանութիւն... (պատմելով Կանտու-զեսի առասպելը) աւարատի առասպելաբանութեամբ, որ ամենեւին զա-տեալ ի ճշմարտութենէ...», 3. թ. «պատմութիւն (Հերակլեսի մասին), որ ի սկզբանէ մինչև ի վերջ ստութեամբ զանգեալ է...», 4. բ. «(Ներիպի-զէս)... որ զՄեդեայս պատմէ, ... ծայրացեալ սաստկանայ ստաբանու-թեամբ»:

\* Այն, ի տարբերություն Արթուրի գրքի, դասագիրք չէր և հավանաբար թարգման-վել էր զուտ ճանաչողական նպատակներով. բնագիրը հանդիպարի հունարեն սկզբնա-գրով (ըստ Վալցի հրատարակության, տե՛ս Theon) տե՛ս Թեոֆիլ, թարգմանության մասին տե՛ս Ակինյան, Թեոն, Bolognesi, La traduzione; Bolognesi, Nuovi contributi, Bolognesi, La tradizione manoscritta:

\*\* Հանդիպում է «Յաղագս թէ ոչ շնայցես» (Փիլոն 1892, էջ 278—279) և «Յաղագս քան ունի անասուն կենդանացոց» (Փիլոն, 1822, էջ 158—159, Terian, Philo, էջ 248—249) ճառերում:

\* Ուշ ներմուծություն է «կարգադրութիւն գրոց սրբոց» ցուցակի մեջ (Հարությունյան):



Մեզ կարող են առարկել, ասելով, որ «Պիտոյից գրքը» ճարտասանական ձևերով է, և որ այս խոսքերը ոչ թե հեղինակի մտքերի արտահայտությունն են, այլ գուտ ճարտասանական խաղ են: Այդ դեպքում անհասկանալի է մնում, թե ինչու Ափթնիոսի գրքից զանց է աճվել հաջորդ՝ *κχτασχευί* տեսակը, որի մասին միայն ակնարկ կա «եղծման» սահմանման վերջում՝ «ստեղծումն», և որտեղ Ափթնիոսը երբեմն հաստատում է այն նույն առասպելները, որոնք եղծել է նախորդ գրքում:

Մյուս փաստարկը երկու երկերի միջև գիտվող լեզվաոճական տարբերությունն է: Խորենացու լեզվի մասին մի փոքր ակնարկ կա «Պատմության» Ստեփան Մալխասյանցի աշխարհաբար թարգմանության առաջարանում (Մովսես Խորենացի, էջ LIX—LXII), որտեղ նա բնութագրում է այդ լեզուն որպես արվեստական, բայց և պարզ և հստակ, և նշում նրանում առկա շարահյուսական հունաբանությունները՝ հայցականը անորոշ դերբայով, բացարձակ սեռական, որոշի և որոշյալի, հատկացուցի և հատկացյալի, բայի և մակբայի միջև միջանկյալ բառերի առկայությունը, կրավորական բայերի հետ ուղիղ խնդիրների կիրառությունը, հարաբերյալի՝ երկրորդական նախադասության մեջ ձուլվելը հոլովի փոփոխությամբ, անցյալ դերբայը որոշի դերում՝ անորոշով դարձվածքի փոխարեն: Վ. Առաքելյանն ավելացրել է նաև ուղղական անորոշ դերբայի հետ, բացարձակ սեռականը (ինչպես նաև նամականի սկզբում գործածվող կաղապարային՝ ողջունի բանաձևը, որը, սակայն, կապ չունի շարահյուսության հետ. տե՛ս Առաքելյան, էջ 114—115):

Հնայած բերված առանձնահատկությունների մեծ մասը համընկնում է նախակրթություններում մեր նշած հունաբանությունների հետ\* (տե՛ս ծանոթագրությունները), սակայն այդ հանգամանքը դեռևս բավական չէ այդ երկու հեղինակներին նույնացնելու համար: Այնուամենայնիվ, Խորենացու լեզուն հստակ է, շարահյուսությունը միշտ տրամաբանորեն ավարտուն է և հետևողական (Առաքելյան, էջ 116). այս ամենը մտքի պարզության արդյունք է: Այնինչ «Պիտոյից գրքի» հեղինակը ձգտում է գրել ճոխ, խրթին ոճով, բարդ և երբեմն անհետևողական շարահյուսությամբ: Կարո՞ղ էր արդյոք դա նույն հեղինակը լինել՝ երիտասարդ և ավելի հասուն տարիքում, դժվարանում ենք դատել:

Մովսես Խորենացու և «Պիտոյից գրքի» աղբյուրները քննելիս՝ անհնար է շրջանցել բանասիրության մեջ տեղ գտած այն տեսակետը, որ

Խորենացին՝ բացի «Պիտոյից գրքի» հեղինակը լինելուց, իր «Պատմության» մեջ գործնականորեն կիրառել է ներբողյանի կանոնները, և որ նրա մոտ կա նույնիսկ «Պիտոյից գրքի» հանվան հիշատակություն (Առաքելյան, էջ 301—305)<sup>5</sup>: Առաջին դիտարկումը վերաբերում է Տիգրան Մեծին նվիրված դրվագին (1. 31), սակայն ներբողյանի սահմանումով պահանջվող կետերի մեծ մասը բացակայում է Խորենացու բնագրում, իսկ զուգահեռ գտնելու Մ. Արեղյանի ջանքերը համոզիչ չեն (մասնավորապես նաև այն բանի համար, որ նա փնտրում է դրանք նշված դրվագից դուրս (1. 21—31): Թերևս միայն ներբողյանի «գործք» բաժինն իր ենթաբաժիններով կարելի է համեմատել Տիգրանի բնութագրի մի քանի մակդիրների հետ (1. 24), այն էլ ոչ նույն հաջորդականությամբ: Հետևաբար, առկա զուգահեռները բավարար վկայություն չեն կարող հանդիսանալ այն բանի, որ Տիգրանի մասին պատմությունը շարադրված է ներբողյանի կանոնների համաձայն, չնայած բացառված չէ ներբողյանի ժանրի մասին ընդհանուր պատկերացումների ազդեցությունը, որ կարող էր Խորենացու հունական կրթության արդյունքը լինել:

Հայտնի է Մ. Արեղյանի փորձը նույնացնել Խորենացու բնագրից իր առանձնացրած «Հիսուսն պիտոյից» բառակապակցությունը «Պիտոյից գրքի»<sup>6</sup> հետ: Այսպես, խոստանալով տալ մեր ազգի նախնիների ցուցակը... (1.19), Խորենացին ավելացնում է. «Եւ այսոցիկ այսպէս կարգեց... սկսայց բեզ եւ որ ինչ զկնի այնոցիկ ի հիւսման պատմութենէ պիտոյից»: Այս հատվածն իրոք դժվարություն է հարուցում մեկնաբանման համար, և պետք է նշել, որ թարգմանիչները փորձել են շրջանցել այն ոչ նշգրիտ թարգմանությամբ (օրինակ, Монсей Хоренский, էջ 32): Մ. Արեղյանի տեսակետն արտացոլվել է Ստ. Մալխասյանցի թարգմանության

\* Մասնագետներին հայտնի է Կ. Մելիք-Օհանջանյանի փորձը՝ ցույց տալու, որ ներբողյանի կանոններով է շարադրված Կորյունի «Մաշտոցի վարքը» (Корюн. էջ 26—32). Հեղինակն էլ զգալով այդպիսի առնչության ժամանակագրական հակասությունը, վերապահություն է անում՝ նշելով, որ միգուցե Կորյունն անմիջականորեն օգտվել է «հունարեն սկզբնաղբյուրից» (Корюи, էջ 27): Այդ երկու ենթադրություններն էլ հերքվում են Ա. Տերյանի՝ Կորյունի երկի նորագույն ուսումնասիրությամբ («Կորյունի Մաշտոցի վարքը որպես ներբողյան»), որտեղ նա ցույց է տալիս, որ այն իրոք ներբողյան է, սակայն առնչություն չունի «Պիտոյից գրքի» հետ, այլ արդյունք է Կորյունի հունական կրթության և ներբողյանի ժանրին նրա ծանոթության (Terian, Kortwn's Life, հատկապես էջ 6, 11): Այս ուսումնասիրության արդյունքների լույսի ներքո չի հիմնավորվում և Կ. Մուրադյանի փորձը՝ քացատրել «Մաշտոցի վարքի» կառուցվածքը Բարսեղ Կեսարացու Դամբանականի հայերեն թարգմանության ազդեցությամբ (Մուրադյան Կ., էջ 114—123):

<sup>55</sup> Այս խորագիրն, անկասկած, ոչ է մի ծագում է առաջին գրքի «Յաղագս պիտոյից»

\* Վերջ է վերջո, հայերենում հունաբանությունների թիվը հասկանալի պատճառներով սահմանափակ պետք է լինի:



մեջ (Մովսես Խորենացի, էջ 126): Այդ մեկնաբանությունը քննադատել է Բ. Գևորգյանը, մեր կարծիքով, ավելի ճիշտ հասկանալով բնագիրը. «Կսկսեմ այն բաներից, որոնք սորանցից լետոյ պիտոյ են պատմութեանս հիւսմանը» (Գևորգյան, էջ 26): Մենք առաջարկում ենք մի փոքր ճշգրտում մտցնել այդ մեկնաբանության մեջ՝ ընդունելով, «պատմութե» (այսինքն՝ «պատմութեան») տարրն թերցումը (Մովսէս Խորենացի, էջ 57). «Կսկսեմ (պատմել) քեզ և այն, ինչ սրանցից հետո է, պատմություն հյուսելու անհրաժեշտությունից (ելնելով)»: այսինքն «ի պատմութենէ» բացառական հոլովի փոխարեն՝ «ի պիտոյից»: Այստեղ հակադրված է «կարգել»՝ «հերթականությամբ դասավորել» (Մալխասյանց «Նշանակել») և հիսել՝ «կապակցված պատմություն շարադրել»: հմմտ. «ի պատմութեանս հիսել» (3. 65), նաև հուն. πλέω «հյուսել» և «(ողբերգության) բովանդակությունը հորինել», πλοκή «հյուսվածք» և «(գրամատիկ սյուժեի) կազմությունը» (Liddle, Scott, s. v):

Եվ այսպես, Խորենացին իր «Պատմության» բնագրում չի հիշատակում «Պիտոյից գրքը», իսկ Տիգրան Մեծին բնութագրելիս ավելի շուտ առաջնորդվել է ժանրի մասին ընդհանուր պատկերացումով, քան ներբողյանի խիստ կանոններով: Եվ այնուամենայնիվ, Խորենացին օգտվել է «Պիտոյից գրքից», ինչպես իր մնացած «երկրորդական աղբյուրներից» (Халатянц, էջ 372—374): Դրանք, ի տարբերություն «հիմնական աղբյուրների», որոնցից նա պատմական տեղեկություններ է քաղել, «ոճական նյութ» են մատակարարել նրան (Халатянц, էջ 373): Ճիշտ է, բնագրային զուգահեռները շատ քիչ են, և այդ պատճառով «Պիտոյից գրքը» հանդես չի գալիս Խալաթյանցի մոտ Խորենացու աղբյուրների թվում, իսկ Ռ. Քումսոնն իր անգլերեն թարգմանության առաջարկում՝ թվարկելով բոլոր աղբյուրները, միայն հիշատակում է այն, «չնայած Մովսեսի որոշակի բնագրային կախումն այս ճարտասանական ձեռնարկից հնարավոր չէ ապացուցել» (Moses Khorenatsi, էջ 22): Սակայն Խորենացին

վերնագրից, իսկ ըստ Ա. Բաուզարտների, սկզբնական վերնագիրը կարող էր լինել «նախակրթութիւնք» կամ դրա նման մի բան (Baumgartner, էջ 465): Նույն տեղում նա ենթադրում է, որ կարող է կորած լինել ոչ միայն նախնական վերնագիրը, այլև առաջարանը և առաջին երկու գրքերը, որոնք պիտի համապատասխանեին Ափթնիոսի «առակ» և «պատմություն» գրքերին: Սակայն զուտ գործնական բնույթի ձեռնարկը, մեր կարծիքով, դժվար թե կարիք ունենար առաջարանի, իսկ Ափթնիոսի առաջին գրքերից բացի «Պիտոյից գրքի» հեղինակը դանց է առել նաև նրա վեցերորդ և տասներորդ գրքերը (տե՛ս ժանրագրությունները):

«Պիտոյից գրքից», ինչպես և Փիլոնի թարգմանություններից փոխ է առել մի շարք հունարանություններ (որոնք կազմում են նրա «հունարան» բառապաշարի գերակշռող մասը): Դրանցից շատերը կերտված են Փիլոնի թարգմանչի ձեռքով և մասամբ վկայված են նաև «Պիտոյից գրքում»: Կան նաև մի խումբ բառեր, որոնք փիլոնյան նորարանությունների նմանակությամբ կերտված են «Պիտոյից գրքի» հեղինակի կողմից, սակայն վերջիններից մի քանիսը իր սեփական թարգմանության արդյունք են, քանի որ հանդես են գալիս հրահանգներում կամ վերնագրերում (տե՛ս հավելված 1)\*:

Բանասիրության մեջ նաև կարծիք է հայտնվել, որ նախակրթությունների մի մասը ավելի ուշ է ներմուծվել «Պիտոյից գրքի» կազմի մեջ, ուստի այն մեկ հեղինակի գործ չէ (Հովսեփյան, Դավիթ Հարթացի, էջ 206—213, նույնի՝ Խոսրովիկ թարգմանիչ, էջ 3—4, Մանանդյան, Խորենացու առեղծվածք, էջ 167, Հունարան դպրոցը, էջ 115—116): Սակայն «Պիտոյից գրքի բնագրի, նրա լեզվի, ինչպես նաև նրա աղբյուրների ուսումնասիրությունը (տե՛ս ժանրագրությունները) թույլ չի տալիս համաձայնելու այդ ենթադրության հետ. այսպես՝ ա) նախակրթությունների զգալի մասի համար (54-ից 31-ի համար) կա մի հունարեն նախօրինակ՝ Ափթնիոսի նախակրթությունները, միատեսակ են և դրանից օգտվելու սկզբունքները, բ) ամբողջ բնագիրը չի է փիլոնյան (և այլ թարգմանություններում ստեղծված) նորակազմ բառերով և յուրահատուկ շարահյուսական դարձվածքներով, որ և ստեղծում է լեզվի և ոճի միասնականություն (բացի վերջաբանից և բարառություն հավելյալ օրինակներից), գ) միևնույն են աղբյուրները օգտագործելու և Աստվածաշունչը վկայակոչելու սկզբունքները:

Մասնավորապես, Ափթնիոսի նմանակությամբ գրված նախակրթություններից որևէ մեկի համար այդպիսի ենթադրությունը (ուշ գրության մասին) չի կարելի ընդունելի համարել: Այսպես, ըստ Գ. Հովսեփյանի «Մահման հասարակ տեղույ» և «Յաղագս շան» հատվածների հեղինակը

\* Եվ իհարկե, «հեղինակային կազմություններ» (Առաքելյան, էջ 103) չեն:

\*\* Պետք է նշել, որ Խորենացու բառապաշարի կապակցությամբ «Պիտոյից-փիլոնյան» այս առանձնահատուկ բառերը քննել է Զ. Մանանդյանը (Մանանդյան, Խորենացու առեղծվածք, էջ 181—198), սակայն այդ քննությունը լրջորեն քննադատվել է ինչպես քրեանսիրական խոցելիության (Ավգալիբեյան, էջ 112—131), այնպես էլ այն եզրակացությունների տեսանկյունից, որոնց նա հանգել է այդ քննության հիման վրա (Մալխասյանց, էջ 76—84):



Դավիթ Հարքացին է\*, իսկ ըստ Հ. Մանանդյանի «Պարսաւ որթոյ» (VI 4) և, «Պարսաւ նաւարկութեան» (VI. 5) նախակրթութիւնները գրված են մյուսներից տարբեր ոճով: Ճիշտ է, առաջինում իրոք (ավելի շուտ նրա մի մասում) յուրահատուկ ոճ է դիտւում, սակայն դա էլ քայտարվում է աղբյուրի ազդեցութեամբ: Այդ շարքում Հ. Մանանդյանը մատնանշում է նաև «Բաղդատութիւն Աբրահամու և Եղիայի» (VII. 1) նախակրթութիւնը, սակայն ինքն էլ զուգահեռ է բերում նրա և Փիլոնի բնագրից, որ թույլ չի տալիս առանձնացնել այն մյուս նախակրթութիւնների շարքից: «Արտասանութիւն միայնամարտութեան Դավիթի եւ Գողիաթի» (XI. 3) նախակրթութիւնն, ըստ Գ. Հովսեփյանի, գրել է Խոսրովիկ թարգմանիչը\*\*։ Սակայն դա էլ ընդունելի չէ, քանի որ այդ բնագրի և նույն թեմայով գրված բարաոնութեան միջև (VIII. 3.) «Զի՛նչպիսի բանս ասաց Դավիթ յորժամ զԳողիաթ եսպան» կան զուգահեռներ: «Պիտոյից գրքում» առկա են և ուրիշ դեպքեր, երբ մի նախակրթութեան բնագիրն առնչվում է մյուսի հետ, երբեմն էլ նրանից մեկը գրված է լինում Ափթոնիոսից վերցրած թեմայով, իսկ մյուսը՝ ոչ:

Աստվածաշնչի զովագների հիման վրա գրված «արտասանութիւնների» թեմաները նշմարվում են արդեն I և II գրքերի «զ» «յարացոյց» գլխում. հմմտ. IX. 1՝ I. 2. դ, IX. 3՝ I. 4. դ. (նաև VIII. 3), IX. 4՝ II. 6. դ: Կան և բնագրային զուգահեռներ (բոլոր զուգահեռներն արտահայտված են ծանոթագրութիւններում):

Այս բոլոր փաստերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ «Պիտոյից գիրքը» մեկ հեղինակի գործ է: Մենք վերը տեսանք նաև, որ բանասիրական կովանները առայժմ բավարար չեն ապացուցելու համար, որ այդ հեղինակը Խորենացին է: Սակայն միայն «Պիտոյից գրքի» բովանդակութեան քննութիւնը հնարավորութիւն է ստեղծում որոշակի գատո-

ղութիւններ անելու նրա աշխարհայացքի որոշ առանձնահատկութիւնների մասին: Այսպես, կարելի է ենթադրել, որ այդ հեղինակը մի ճարտասան է, որի համար ճարտասանութիւնը ցանկացած թեմաներ քննարկելու ներուակ մի համակարգ է: Կարելի էր նույնպես ենթադրել, որ Աստվածաշունչը նրա համար անտիկ աղբյուրներին հավասարազոր մի գրական աղբյուր է, իսկ աստվածաշնչական կերպարներին նույն դերն է հատկացվում, ինչ և դասական գրականութեան գործող անձանց: Սակայն նախակրթութիւնների ժանրի մեջ աստվածաշնչական թեմաների ներմուծումը զուտ գրական նորամուծութիւն չէ՝ Աստվածաշունչը քրիստոնյա հեղինակի առաջնակարգ հեղինակութիւնն է, և այդ իրողութիւնն իր կնիքն է դրել ողջ հուշարձանի վրա: Անտիկ իմաստունների խոսքերը հաստատելու համար (գիրք I, II) միշտ բերվում են աստվածաշնչային իմաստունների խոսքերը («յարացոյց» գլուխը) և օրինակներ նրանց կյանքից («վկայութիւն հնոցն»), ողջ բնագիրը հագեցած է աստվածաշնչային զովագների մեջբերումներով, հիշատակութիւններով և վերապատումներով. հեղինակը հաճախ ուղղակի կամ անուղղակի վկայակոչում է Սուրբ Գիրքը, նրա թեմաներով են գրված այն նախակրթութիւնները, որոնք պահանջում են աղբյուրի առավել խոր իմացութիւն (ներքոդեան, պարսաւ, բաղդատութիւն), ինչպես նաև ստեղծագործական մտեցում, վարպետութիւն, երեակայութիւն (հմմտ., օրինակ. բարաոնութիւնների մեջ չկա մանրամասն գլուխների բաժանում, արտասանութիւնների մեջ այն բոլորովին բացակայում է, որ հեղինակին ստեղծագործական ազատութիւն է ընձեռում): Ինչ վերաբերում է անտիկ սյուժեներին, I և II գրքերում դրանք սահմանափակվում են իմաստունների խոսքերով և հեղինակի համառոտ գովաբանութեամբ («ասողին գովութիւն»), իսկ նախակրթութիւնների բնագրերը համարյա ամբողջովին զուրկ են անտիկ իրականութիւններից: Իսկ, ինչպես վերն արդեն տեսանք, Ափթոնիոսից նա վերցրել է «Եղծումն» գիրքը, որտեղ հերքվում է անտիկ առասպելների արժանահավատութիւնը, և բաց թողել առասպելները հաստատող «ստեղծումն» տեսակը:

Ինչ վերաբերում է «Պիտոյից գրքի», ինչպես նաև Փիլոնի թարգմանութիւնների թվագրմանը, ապա դրանք պետք է հայտնվեին կամ 6-րդ դարի առաջին կեսին (եթե հետևենք Հ. Մանանդյանին), կամ էլ 5-րդ դարի երրորդ քառորդում (եթե հետևենք Ս. Արևշատյանին): Երկու հնարավոր թվագրումներն էլ յուրովի տրամաբանված են, սակայն կարոտ են բանասիրական վստահելի կովանների: Իսկ այլ տեղեկութիւնների բացակայութեան դեպքում թարգմանական բնագրի համար այդպիսի

\* Հովսեփյան, Դավիթ Հարքացի, էջ 204—206: Այդ միտքը չի ամրապնդվում, մեր կարծիքով, նաև նրա բերած միջնադարյան վկայութիւններով. այսպես, Հարքացուն են վերագրում մեր բնագիրը «Պատճառաց գիրքը» (Մատենադարան, ձեռ. № 1879) և Առաքել Սյունեցին (Առաքել Սյունեցի, էջ 165, 172): Հմմտ. նաև Մշոյ ս. Առաքելոց թարգմանչաց Վանքի № 244 ձեռագրում՝ «Գիրք պիտոյից Դավթայ: Տարբեր հեղինակների զոյութեան ապացուցներից մեկն էլ, ըստ Գ. Հովսեփյանի, որոշ ձեռագրերում նախակրթութիւնների տարբեր կազմն ու դասավորութիւնն են. սակայն, մեր կարծիքով, այդ փաստը խոսում է միայն այն մասին, որ «Պիտոյից գիրքը» գործնականորեն որպես դասագիրք է կիրառվել:

\*\* Փանի որ այն հանդիպում է ձեռագրերում, ճիշտ է, որոշ բնագրային շեղումներով, նրա անվան տակ (տե՛ս Արտասանութիւն Խոսրովկայ):



կովան կարող են հանդիսանալ նրա հետքերը որևէ ինքնուրույն և վստահելի թվագրություն ունեցող հուշարձանի մեջ: Եվ իրոք, ինչպես բազմիցս նշել է Ս. Արևշատյանը (Аревшатын, էջ 154, 177, 179, 185), Ղազար Փարպեցու 5-րդ և 6-րդ դարերի սահմանագլխին գրված «Պատմությունը» և դրանից էլ առաջ շարադրված «Թուղթը» (տե՛ս Փարպեցի), Հ. Մանանդյանի խոսքով ասած, «Պիտոյից-փիլոնյան» բառապաշար են պարունակում, որը կարելի է բաժանել երեք մասի՝ ա) Փիլոնի թագմանություններում վկայված բառեր\*, բ) նույնպիսի բառեր, որոնք վկայված են և «Պիտոյից գրքում», գ) դրանց նմանակությունը կերտված և «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերում կիրառված բառեր (մանրամասն տե՛ս Մուրադյան Գ., 2): Այդ բառերն, իհարկե, իրեղեն ապացույց են այն բանի, որ Փիլոնի թարգմանությունները իրոք գոյություն են ունեցել 5-րդ դարի երկրորդ կեսին՝ 50—70-ական թվականներին (Аревшатын, էջ 186). «Պիտոյից գրքի» համար, ցավոք, այդ եզրակացությունը միայն հավանականության արժեք ունի: Համենայն դեպս, այդպիսի հավանականության օգտին են խոսում այն հանգամանքները, որ ա) այդ բառերը «Պիտոյից գրքի» բնագրի օրգանական մասն են կազմում և բազմաթիվ նույնօրինակ բառերից մի քանիսն են, բ) մեր կարծիքով, բնական է ենթադրել, որ «Պիտոյից գրքը» գրվել է Փիլոնի թարգմանություններից ոչ շատ ժամանակ անց: Ղազար Փարպեցու բառապաշարը, այսպիսով, հաստատում է Ս. Արևշատյանի թվագրման և դասակարգման ճշտությունը:

Այսպիսով, «Պիտոյից գրքը» ստեղծվել է Ափթոնիոսի նախակրթությունների հիման վրա, ինչպես նաև հայերեն Աստվածաշնչի՝ և այլ աղբյուրների կիրառությամբ, ամենայն հավանականությամբ, 5-րդ դարի երկրորդ կեսին: Այն հունաբան դպրոցի՝ հունական կրթական համակարգը հայկական հողի վրա տեղափոխելու ծրագրի իրականացման անհրաժեշտ օղակներից մեկն էր: «Պիտոյից գրքը» մեկ հեղինակի գործ է (այդ հեղինակը և՛ թարգմանիչ էր և՛ ինքնուրույն ստեղծագործող), սակայն այն Մովսես Խորենացու հետ կապող ավանդությունը բավարար բանասիրական փաստարկներով չի ամրապնդվում:

\* Նշենք, որ բոլոր դեպքերում խոսքը ավելի վաղ հուշարձաններում չվկայված բառերի մասին է:

## ՆԵՐԿԱ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

«Պիտոյից գրքի» առաջին հրատարակությունն իրականացրել է Աստվածաշնչի հայտնի հրատարակիչ Հովհ. Զոհրապյանը (տե՛ս Գիրք Պիտոյից) Վիեննայի Մատենադարանի ամբողջական բնագիրը պարունակող հինգ ձեռագրերի հիման վրա, որոնցից հնագույնը 13-րդ դարի է (նույն տեղում, էջ Ժբ-Ժգ): Տարբերությունների բաժնում ձեռագրերը տարբերակված չեն, միայն նշված է, ասենք, «2 օրինակ» կամ «հին օրինակ»: Բացի այդ բնագիրն օժտված է ընդարձակ ծանոթագրություններով, որոնք մեծ մասամբ ճանաչողական բնույթ են կրում (տեղեկություններ են պարունակում հիշատակվող անտիկ հեղինակների կամ առասպելների մասին), երբեմն բանասիրական բնույթի են, երբեմն էլ հրատարակիչը մեկնաբանում է զժվար տեղիները: Նա բերում է նաև համարյա բոլոր աստվածաշնչական ղուգահեռները, վերջում կցված է այդ ղուգահեռների ցանկը և մի առարկայական ցանկ (էջ 449—488):

Մովսես Խորենացու «Մատենագրութիւնը» հատորում «Յաղագս պիտոյից» բնագիրը կազմված է Վիեննայի յոթ ձեռագրի հիման վրա, որոնցից հնագույնը 1298 թվականից է (Մովսես Խորենացի, Մատենագրութիւնը, էջ 8), սակայն մանրամասն տեղեկություններ նրանց մասին չեն հաղորդվում, միայն հատ ու կենտ տարբերություններ են նշվում և ծանոթագրություններ չկան:

Սույն հրատարակությունը պատրաստելիս մենք ուսումնասիրել ենք Մաշտոցի անվան Մատենադարանի 26 ձեռագիր, որոնցից 15-ն են ամբողջական բնագիրը պարունակում. երեքը՝ 14-րդ դարի (№ № 2515, 6897, 1681), վեցը՝ 17-րդ դարի (№ № 3446, 3696, 1804, 1861, 6623, 1803) և հինգը՝ 18-րդ դարի (№ № 1800, 1801, 1802, 3125, 2562): № 2174 ձեռագիրը (1309 թ.) պարունակում է 10 նախակրթություն՝ խառը հերթականությամբ (վեց բարաոնություն, երկու պարսավ, մեկ ներբողյան, մեկ բարաոնության հավելվածից): № 3466 (1286\*) և 17-րդ դարի № № 9826 և 8371 ձեռագրերում բնագիրը ներկայացված է միայն սահմանումներով (այդ երեքն ունեն բազմաթիվ ընդհանուր բնթերցումներ): Մնացած ութ ձեռագրերն ունեն որոշակի համառոտված կազմ. նրանք պարունակում են



բոլոր սահմանումները, իսկ պետքի և խրատի սահմանումներից հետո՝ բոլոր նախակրթութունների վերնագրերը, բացի I. 1-ից և II. 1-ից:

Այդ ձեռագրերից մեկը 15-րդ դարի է (№ 2335), իսկ մյուսները՝ 17-րդ դարի (№ № 539, 1714, 1916, 2368, 1809, 3207, 2361):

Այսպիսով, մեր ձեռագրերում «Պիտոյից գրքը» ներկայացված է երկու խմբագրություններով՝ ամբողջական և համառոտ: Ամբողջական բնագիրը միշտ հանդես է գալիս հավելվածով և վերջաբանով, նշանակում է դրանք բավական վաղ են մտել «Պիտոյից գրքի» կազմի մեջ և նրա անբաժան մասը դարձել: Զեռագրերի մեծամասնությունը մեջ, աննշան բացառություններով, պահպանված է գլուխների բաժանումը (ա... բ... գ...): Համառոտ խմբագրության շորս ձեռագրերում (№ № 1809, 1714, 3207, 1916) «Պիտոյից գրքի» բնագրին հետևում է մի փոքր հատված (1—2 էջանոց)՝ «Արիստոտել ասաց՝ սկիզբն աշխարհի...», որ ձեռագրացուցակում կամ չի նշվում (Յուցակ ձեռագրաց, էջ 616, 674, 964), կամ էլ հանդես է գալիս որպես «Անուանք իմաստասիրաց» (նույն տեղում, էջ 646), իսկ իրականում՝ մի հատված է Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» Ա ճառից (Փիլոն, 1822, էջ 11—12): № 1809 ձեռագրում այդ հատվածից հետո գալիս է մեկ այլ հատված՝ «Մասունք մարմնոյ» (անդ, էջ 646), որն առկա է և № 2368 ձեռագրում՝ «Պիտոյից գրքի» բնագրից հետո:

Մենք հիշատակեցինք այդ հատվածները ոչ միայն այն պատճառով, որ դրանք կրկնվում են ձեռագրից ձեռագիր, այլ որովհետև այդ ձեռագրերում նրանք հանդես են գալիս որպես «Պիտոյից գրքի» բնագրի անբաժան մաս:

Ամբողջական խմբագրության ձեռագրերից № 3446 արտագրված է 3696-ից, և № 3446 մենք չենք նշելու, նույն խմբի մեջ է մտնում նաև № 6623-ը:

Առանձին խումբ են կազմում № 1800 և 1802 ձեռագրերը, որոնք բազմաթիվ ընդհանուր տարրնթերցումներով տարբերվում են մնացած բոլորից: № 1861 հաճախ համընկնում է № 2515-ի հետ: Բավական հաճախ երեք հնագույն (№ 2515, № 6897, № 1681) ամբողջական ձեռագրերը (երեքն էլ՝ 14-րդ դարի) տալիս են միասնական և մյուսների համեմատ գերազասելի ընթերցումներ: Դրանք էլ մենք հիմք են ընդունել բնագիրը կազմելիս:

Մեր օգտագործած ձեռագրերն են.

1. A — № 2515. «Ժողովածու», 1325 թ., Մործորու վանք, էջ 171ա—347բ. «Գիրք պիտոյից»:

26

2. B — № 6897. «Ժողովածու», 1317 թ., Գլաձոր, էջ 421ա—517բ. «Գիրք պիտոյից»: էջ 447ա—478բ և 481ա—517բ՝ բնագիրը գրված է նույն ձեռքով, ավելի լայն թերթերի վրա և կողքից կտրված՝ մյուս թերթերի հետ հավասարեցնելու համար, այնպես որ մեծ մասամբ դուրս են ընկել լուսանցանիշերը, իսկ երբեմն վնասված է նաև բնագիրը:

3. C — № 1681. «Ժողովածու», ԺԳ դ., Գլաձոր, էջ 1ա—235ա «Գիրք Պիտոյից»:

4. D — № 2174. «Ժողովածու», 1309 թ. (տարբեր ձեռքեր՝ էջ 1ա—52բ, 43ա—108բ, 109ա—236 բ), էջ 53ա—106ա՝ ա, բ, գ, դ, ե, զ բարառնությունները, էջ 75ա՝ «Ի պարսաւանաց գլխոյն է վասն որթոյ տնկոյն», էջ 85ա՝ «Պարսաւ ձիոյ», էջ 94բ՝ «Ի ներբողական գլխոյն է, ներբողեան աղանոյ», էջ 103ա՝ «Զի՛նչպիսի բանս ասիցէ Երկիր ընդունելով զարին Արեւի արդարոյ» (Յաւելուած բ). սխալաշատ է:

5. E — № 1861. «Ժողովածու», ԺԷ դ., 1685-ից առաջ, էջ 1ա—118ա. «Յաղագս պիտոյից», 118բ՝ «Մովսէսի Խորենացոյ Պատմութիւն հայոց», «Բարթողիմէոսի Մեկնութիւն Վեցօրէից»:

6. F — № 1801. «Ժողովածու», 1765 թ., էջմիածին, էջ 6ա—144բ՝ «Յաղագս պիտոյից» (վերջաբան չունի):

7. G — № 1803. «Ժողովածու», 1604 թ., էջ 4ա—57բ՝ «Յաղագս պիտոյից» (I. 1, 4, 2), «Յաղագս խրատու» (II. 1, 4), «Յաղագս եղծման» (III. 1, 4), «Սահման հասարակ տեղոյ» (IV. 2, 3), «Սահման ներբողենի» (V. 3), «Յաղագս պարսաւի» (VI. 1), «Սահման բաղդատութեան» (VII. 1), «Սահման բարառնութեան» (VIII. 2), «Սահման արտասանութեան» (IX. 1), «Սահման դրութեան» (X. 2, Յաւելուած), սխալաշատ է. I. 2, II. 4, III. 4, IV. 3 ինքնուրույն է շարագրում:

8. H — № 1804. էջ 2ա—211բ՝ «Գիրք պիտոյից Մովսէսի Խորենացոյն»:

9. I ա) I<sub>1</sub> — 1800. 1783 թ, էջ 2ա—150ա՝ «Յաղագս Պիտոյից գրոց Մովսէսի Քերթողի արարեալ», տողատակում՝ «Պիտոյիցս Մովսէսի՝ Քաղղէոս վարդապետինս է»:

բ) I<sub>2</sub> — № 1802. 1776 թ., էջ 3ա—184ա՝ «Յաղագս Պիտոյից գրոց Մովսէսի Քերթողի արարեալ»:

10. K ա) K<sub>1</sub> — № 3696. ԺԷ դ., 1661-ից առաջ, էջ 1ա—269ա՝ «Պէտք են ընչից...», նաև № 3446, որն արտագրված է № 3696-ից. 1661 թ., երից մանկանց ուխտ, էջ 1ա—241 բ՝ «Գիրք պիտոյից». մինչև էջ 10 բ հատվածաբար է պահպանված, էջ 1-ից առաջ չհամարակալված էջ կա՝ I.

27



1-ից մի հատվածով, էջ 1, 2՝ շփոթված և միմյանց հետ սխալ կցված հատվածներ՝ I. 1-ից (դ, գ և ալլն):

բ) K<sub>2</sub> — № 6623. 1663 թ., էջ 2ա—217բ՝ «Գիրք Ճարտասանութեան, Պէտք են բնչից...»:

11. M — № 3125. ԺԸ դ., 1766-ից հետո, էջ 31ա—82բ՝ «Գիրք որ կոչի Պիտոյից արարեալ և շարահիսեալ Մեծ Քերթողահօրն իւրոյ Սրբոյն Մովսիսի հորենացոյ Աստուածաբան վարդապետի ի վարժումն և ի կրթութիւն ուսումնասէր մանկանց եկեղեցւոյ: Յաղագս Պիտոյից. Գլուխ Ա...», սխալաշատ ձեռագիր է: Սրան մոտ է № 2565 ձեռագիրը (1763 թ. 4. Պօլիս), որը բաղկացած է միայն «Պիտոյից գրքի» բնագրից (էջ 1ա—265ա):

12. N ա) N<sub>1</sub> — № 2335. «Ժողովածու», 1476, Երուսաղեմ, էջ 36բ—39բ՝ «Յաղագս պիտոյից»։ բոլոր սահմանումներն են և I, II գրքերի նախակրթութիւնների վերնագրերը, բացի I. 1-ից և II. 1-ից. սխալաշատ է:

Նույն բովանդակութեամբ՝

բ) N<sub>2</sub> — № 539. «Ժողովածու», ԺԷ դ., էջ 262ա—270բ:

գ) N<sub>3</sub> — № 1714. «Ժողովածու», 1636, 1659, Տաթև, էջ 209բ—277բ՝ «Ի ճարտասանական գրոց մասունք են Յաղագս պիտոյից»:

դ) N<sub>4</sub> — № 3207՝ «Ժողովածու», ԺԷ դ., էջ 90ա—95բ՝ «Ի ճարտասանական գրոց մասունք են Յաղագս պիտոյից»:

ե) N<sub>5</sub> — № 1916. «Ժողովածու», 1633, Լով, էջ 190ա—294բ՝ «Ի ճարտասանական գրոց մասունք են Յաղագս պիտոյից»:

զ) N<sub>6</sub> — № 1809. «Ժողովածու», 1613 կամ առաջ, էջ 171ա—176բ՝ «Յաղագս պիտոյից»:

է) N<sub>7</sub> — № 2368. «Ժողովածու», 1640—1641, Կ.Պօլիս էջ 485բ—491բ՝ «Ի ճարտասանական գրոց մասունք են Յաղագս պիտոյից»:

ը) N<sub>8</sub> — № 2361. «Ժողովածու», ԺԷ դ., 1679-ից հետո, էջ 259բ՝ «Ի ճարտասանական գրոց մասունք են Յաղագս պիտոյից», էջ 262՝ «...իրաւացեան և օգ...» («Սահման հասարակ տեղոյ») բնագրովում է, էջ 263ա մարտը է:

13. J ա) J<sub>1</sub> — № 3466. 1286<sup>ա</sup>, էջ 259ա—266բ՝ սահմանումների բնագրերը (սկիզբը թերի է՝ «...ծականք և ոմանք խառնք»):

\* Մեր բնագրից առջ տեղադրված է «Թէոփնեայ Աղեքսանդրացոյ յաղագս ճարտասանական կրթութեանց» (էջ 167ա—258բ), իսկ ձեռագրացուցակում այդ վերնագրից առաջ (!) կարդում ենք «Գիրք պիտոյից» (Յուզակ ձեռագրաց, Ա, էջ 1018):

բ) J<sub>2</sub> — № 8371. «Ժողովածու» (պարունակում է նաև Թէոփն) ԺԷ դ., էջ 280բ—287ա՝ «Յաղագս պիտոյից»:

գ) J<sub>3</sub> — № 9826. «Ժողովածու» (պարունակում է նաև Թէոփն) ԺԷ դ. 1607-ից հետո, 1651 թ., Կեսարիա, էջ 404բ—417ա՝ «Յաղագս պիտոյից»:

Զոհրապյանի բնագիրը կնշվի Z պայմանական նշանով, նրա տողա-  
-ակերից վերջրած տարբերակները՝ Z<sub>1</sub>, Z<sub>2</sub>, Z<sub>3</sub>, Z<sub>4</sub> («1 օր» «2 օր» և  
-յն) և Z<sub>5</sub> («հին օրինակ»): Z (Z<sub>2</sub>) նշանակում է, որ Զոհրապյանի  
-տողատակում նշված է «3 օր», այսինքն՝ նրա ընտրած տարբերակը  
հիմնվում է երկու ձեռագրի վրա:

Վերը մենք բերեցինք Զոհրապյանի հրատարակութեան բնութագիրը:  
Ինչ վերաբերում է բուն բնագրին, ապա մեր կազմածն էական մեծ տար-  
բերութիւններ չունի Զոհրապյանի բնագրից: Սակայն, ինչպես կարելի է  
դատել տարբերակներից, մեր օգտագործած ձեռագրերը՝ կամ հնա-  
գույնները և լավագույնները, իսկ երբեմն՝ նաև ձեռագրերի մեծամասնու-  
թիւնը ժամանակ առ ժամանակ հիմք են հանդիսացել այլ ընթերցում  
բնութիւն համար՝ տողատակ տանելով շեղում: Զոհրապյանի ընթերցումը:  
Թարգմանական հատվածների համար որոշիչ դեր է խաղացել հունարեն  
-կղերնագիրը, որը որոշ դեպքերում ստիպել է մեզ շտկելու ոչ միայն  
Զոհրապյանի բնագիրը, այլ բոլոր ձեռագրերում համընկնող միակ ըն-  
թերցումը: Նման դեպքերը մեկնարանված են ծանոթագրութիւններում:  
Այնուամենայնիվ, հաշվի առնելով նշված հանգամանքները, պետք է նշել,  
որ ընտիր ձեռագրերի հիման վրա Զոհրապյանի կազմած բնագիրը, այս  
նոր բնագրի լույս ընծայվելուց հետո էլ բոլորովին չի կորցնում իր ար-  
ժեքը, ինչպես և համարյա շին հանում հմուտ հրատարակչի բովանդա-  
կայից ծանոթագրութիւնները, իսկ նրա բերած աստվածաշնչական զու-  
գահունքն անգիրագնահատելի ծառայութիւն են մատուցել մեզ:



ՅԱՂԱԳՍ ՊԻՏՈՅԻՅ

Պէտք են բացայիշատակ համառօտ՝ քաջադիպութեամբ ի դէմս  
 ինչ վերաբերեալ: Եւ ասացեալ է այսպէս, յորոց եկաց կենցաղոյս  
 օգտակարագոյնն<sup>1</sup>: Եւ պիտոյիցս ոմանք<sup>2</sup> են բանականք, եւ ոմանք<sup>2</sup>  
 5 գործականք, եւ ոմանք խառնք: Եւ բանականք են, որ բանին միայն<sup>3</sup>  
 նշանակեն զշահն. որպիսի ինչ. զառաքինութեան զոստս քրտամբք  
 եւ աշխատութեամբ, Պղատոն ասաց բուսանիլ<sup>4</sup>: Քանզի օգուտ այս-  
 պիսի պիտոյից բանիւ ցուցանի: Եւ գործականք են, որ զգործն  
 ունին յինքեանս. որպիսի ինչ. Պիթագորաս «ո՞րչափ իցէ կենցա-  
 10 ղոյս շափ<sup>5</sup>», հարցեալ յումեմնէ, սուղ ինչ երեւալ՝ ծածկեցաւ. այս-  
 քան գոլ զժամանակն ընձևեաց՝ որքան եւ տեսութեան շափ: Աս-  
 տանօր ի ներքոյ կայ գործն միայն տեսութեան<sup>6</sup>: Եւ խառնք են, որ  
 յերկաքանչիւրոց<sup>7</sup> բանիւ և գործով. որպիսի ինչ. Դիոգինէս համբակ  
 տեսանելով ստահակեալ, զմանկածուն տանջեաց՝ ասելով<sup>8</sup>, «ընդէ՞ր  
 15 այդպէս դաստիարակես»: Աստանօր գործ էր գանն, եւ բանն հար-  
 կանելոյն պատճառ. վասն որոյ եւ խառն է<sup>9</sup>: Արդ զանազանութիւն  
 այս է պիտոյից:

Իսկ գործեսցես զնա զխօք այսպիսեօք: Սակաւ ինչ ասացես  
 նախ՝ ասողին գովութիւն<sup>9</sup>, զկնի այնորիկ զնոյն ինքն զպէտսն<sup>9</sup> փո-  
 20 խելով ասացես, ապա զպատճառն<sup>9</sup>, ի վերայ այնորիկ եւ յընդ-

2 N<sub>3</sub>N<sub>3</sub>N<sub>6</sub>N<sub>6</sub> քք փխ պէտք, ZBCFG  
 HIKMN բացայիշատակք  
 3 յարարեալ փխ ասացեալ  
 4 J<sub>2</sub>J<sub>3</sub> օդտակարագոյն  
 4, 5. N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>6</sub>N<sub>6</sub> բնականք  
 6 ZDFIKMN<sub>2</sub>J<sub>2</sub>J<sub>3</sub> զառաքինութեանն  
 8. AEG ցուցանէ

9. J Պիւթագորաս  
 10. J առ զինչ երեւան  
 12. J արտաբոյ, գործոյն, J տեսութիւն  
 15. K<sub>1</sub>HM բանն փխ գանն  
 20. J այնոցիկ

դիմակէն դիցես, ասացես եւ զառակն, եւ բերցես ի վերայ զյարա-  
 ցոյցն<sup>9</sup>, եւ հաստատեսցես վկայութեամբ հնոցն<sup>10</sup>, եւ աւարտեսցես  
 զպէտսն դուզնաքեայ ի վերայ բանիւ<sup>11</sup>:

<1.> Պէտք գործականք

5 Դիոգինէս տեսեալ զմանուկ ստամբակ, զմանկածուն գաւազա-  
 նան էհար<sup>12</sup>:

Յիրաւի սքանչացեալ զարմացի ոք ընդ իմաստասիրացն ամե-  
 նագեղեցիկ յօրինեալ պարս, որ զի յաւէրժ նոքա կարացին իբր օրի-  
 նակ իմն, անբաղայ ազատութեամբ, ի բաց զհոգս ընկենլով աշ-  
 10 խարհականս, իմաստասիրականին եւեթ պարապեալ տեսութեանց  
 բանի, եւ այնու դէպ վերոյ ամենայնց լինել մարդկան: Բայց եւ ի  
 նոսա դարձեալ թուի թէ որք զմեծն գովութեան ունին յաղթանակ,  
 շնականացն անցեալ խոստովանեսցին հոյլք, այսպիսաբար զանա-  
 զանելով վերաբերութեամբ, վասն զի նոցա գոլ բանիւ լուացն<sup>13</sup>,  
 15 բնախօսութիւն է սիրելութիւն: Իսկ այնց յոյժ բարեբաստ եղելոցն<sup>14</sup>,  
 հանապազ վկենցաղօգտակարագոյն խրատուք միանգամայն բանի  
 ի գործոց ցուցանի նահատակութիւն: Տի՛նա, պահապանք լինելով  
 իրաւանց եւ պաշտպանք, եւ բոլոր քաղաքի պատճառք բարեզար-  
 դութեան, նորին աղագաւ եւ պատուականագոյնք ի նոսին անուա-  
 20 նեցան զուխ, այնքան յայլոցն վերագոյն:

ա. Որչափ մեծն ի նոսա Դիոգինէս հուշակի, փայլեալ իւրովքն  
 միշտ խրատաբանութեամբք, որոց յոյժ անբաւ երանութեանցն է  
 գովութիւն եւ հանդէս բոլորիցն եղեալ բանաւորաց<sup>15</sup>:

բ. Որպես զի միս ի բազմաց նորա իմաստասիրութեանց ա-  
 25 ռաջի ահա եղեալ, պատուականագոյն վարկանիմ զվարդապետու-  
 թեան նորա օրինակս. անցցուք զհրաշալի գործոյն տեսանել երե-  
 տումն, զոր ամենեցուն ի խրատ, յայտ է, եւ ի զգուշութիւն ծանուցե-  
 ալ. եւ են բացայիշեցեալքն այս ինչ: Քանզի նա երբեմն զանվա-  
 յելուչ սովորական տեսանէ իմաստութեան՝ կացի անազդակեալ ի  
 30 քաղաքի, եւ անդէն առանց միոյ վաղվաղակի երկբայութեան թո-  
 դեալ զնա եւ զդաստիարակն ջնեալ պատուհասէր:

գ. Ստոյգ եւ արդարեւ ընտրող արդարագատն իրաւանց, զի ի

2. Բոլորք՝ զնոյն փխ հնոցն  
 6. ZBCEI<sub>2</sub>K<sub>2</sub> եհար  
 15 I բարեբաստ  
 22. AEHI<sub>2</sub>K<sub>2</sub> յորոց  
 30. ZBCEFH<sub>2</sub>M այլ փխ եւ  
 31. Z<sub>3</sub>HM ջնջեալ



մանկածուն կողմն միտեալ կարկառէր զանիրա ստահակութեանցն տուգանս: Յաղագս որոյ զայս ի սկզբանէ գիտելով ծնողաց՝ զիրաքանչիւրն ծննդոց զխակութիւն անզգամութեանն<sup>5</sup>, թէ ախորժարար սիրեն ի վատթարն կոյս յեղուլ, վասն որոյ եւ անդստին իմն գոցցես փութացեալ ճեպին, գեր զամենայն լաւագոյն նոցա համարելով, ոչ միայն զկելոյն հոգալ պատճառս՝ այլ եւ զբարեոքն առաւել կելոյ<sup>17</sup>: Եւ այնորիկ նմին իրի աղագաւ մեծաւ ջանան զիմաստնագոյնան գտանել հնարիւք, այլ եւ զյոյժ հաւատարիմս ի վարդապետաց: Եւ ի ձեռս տուեալ, այնուհետեւ բազումս յուսան խրախամիտ լինելով՝ առ ի զբարեբախտագոյնսն ի նոցանէն ընդունելով վայելս: Եւ կարի քաջ խոստովանեալ այս զտցի բան: Որոց թէ ի սկզբանն առաքինագոյն ուսուցիչն հանդիպեսցի, եւ ոչ սուղ ինչ այնուհետեւ աշակերտն տարակուսեսցի զնոյնս ճշգրտապէս զիմաստութեանցն բերել պտուղս բազումս եւ ամենագանս: Որովք եւ հանգոյն նորիմք բարեզարդութեամբք ի կենցաղումս բերկրեալք, ցայնքան ի վայելուլ վարժողաց զօգտակարագոյնսն կրթեալ խրատս, մինչև սիրելիք կարի քաջ թագաւորացն եղանիլ, վերակացուք քաղաքացն, պարծանք ծնողաց, եւ բովանդակ շինութեան տան եւ զաւառի պատճառք: Այլ եւ ինքեանք իսկ բոլոր բարեբախտիկ երեւեալ զուարճանան փառօք:

գ. Իսկ որոց այնպէսն ոչ պատահեսցի մանկավարժն, բայց սոցին հակառակ ասացելոցս խենէշութեամբ զգածեալ, եւ ամենայն անարի տաղտուկ կապեալ վատութեամբ, նա ոչ միայն թէ զանզգամութիւն ի մանկանցն ոչ կարասցէ հանել ոգւոց, եւ կամ բարեաց նոցա լինել պատճառ, այլ միանգամայն, որպէս ճշմարիտն երեւի՝ զբազմապատիկսն ի վերայ առնէ տալ զաղիտիցն սաստկագոյն թշուառութիւնս, յանգիտութեան ասեմ անուսումնութենէ. յորմէ անպիտանք ի բոլորումն գտանին վայելչականս: Այնու զի ոչ ի մեծ ատենիցն վարին հանդէս, եւ ոչ յայլ ինչ ի մի արժանաւորացն եւ պանծալեացն, այլ թախիծք դրացեացն գուլ, եւ մերձաւորացն տխուր տրտմութիւն, եւ զխոլիկն ատելիք հարազանտն ամուսնաց, եւ գրեթէ հասարակաց ամենայն իսկ մարդկան՝ իշխանաց եւ իշխեսցելոց<sup>18</sup>: Զայս մի ըստ միոջէ թուի անառակն կորուստ խոշտարաց ի ծովիցն

5. AE լաւագոյնն  
6. Z<sub>2</sub>QI զպատճառս  
9. ZBGFK<sub>1</sub> խրախամիտս

23. AEH ոգոց, 24 բոլորք՝ պատճառք  
27. AEGI գտանին om  
32. բոլորք՝ թուեալ

լեալ խնամողաց ոչ է հարկաւոր, եւ կամ աներեւութարար ի ծածուկ անկեալ իմաստք<sup>19</sup>:

ե. Որպէս զի զայս հաւաստեալ իմանալ յանվարժիցն ձիոց է եւ ի զերեւացեալն ամայն անդաստանաց. յորոց մին զմշակին ահա ամբաստանէ ձեռաց, եւ երկրորդն՝ զվերելակին տխմարութիւն յանհրահանգն յանդիման ելոյ կացուցանէ<sup>20</sup>:

զ. Բայց եւս նմանապէս եւ ի Հեղեայ շարաշար կրիցն կարի յոյժ հաստատուն է ուսանել. այնու զի բարիք ոչ զիրան խրատելով որդիս առ ի յաստուածայինսն ուղիղ գնալ ճանապարհս, ընդ որոց եւ պատուհասեալ՝ զբաւեցաւ ի կենցաղոյս<sup>21</sup>:

է. Տի՛նա՛՛ եւ ոչ փոքր ինչ խրատարանութեամբ եւ մարգարէի ումեմն զսոյն Աստուած մատուցեալ վկայէ բանիւ, եթէ «Դէտ գրեզ կացուցի ի վերայ տանն Իսրայէլի, որում թէ ոչ բողոքեսցես՝ զարիւնն ի քոց խնդրեցից ձեռաց»<sup>22</sup>:

ը. Արդ՝ այսպէս պարտ եւ արժան է ի վերայ ասացելոցս զարմանալ միայն ընդ մեծ եւ հոշակաւորն Դիոգիսէս, եւ զնոյն գովել եւ ընդունել, եւ զբրիցութիանն նմա տալ իմաստասիրութեանն գովանաց մրցանակ: Որ այսպէս կենցաղօգուտն կարաց խրատուք զընդհանուր քաղաքացն տնօրինել իրս, եւ զեղեցկաբար վարելով՝ զարձեալ զանապակ բարեացն ուսոյց պահել մտերմութիւն եւ վարդապետաց առ իրեանց հաւատացեալ մանկունսն: Որով ի ներկայումս զաշխարհագովութեանցն առցենն պսակս, եւ անուն քաջ առ ի յապալսն թողցեն անմոռաց յիշատակաւ:

<2.> Պէտք բանական  
25 Աղէքսանդրոս Մակեդոնացի հարցեալ յումմեմէ. «Ո՞ր են քո գտնիք», զսիրելիսն ցուցեալ ասաց. «ի սոսա»<sup>23</sup>:

ա. Ամենայն ումեք, բայց մանաւանդ իմաստնագունիցն մարդկան յոյժ գովութեան արժանաւոր համարելի է միշտ զառաւել սաստկութեամբ զերազանցեալ ահեղագոյն թագաւորութիւնն<sup>24</sup>  
30 Աղէքսանդրի, որ զփոքր ինչ հայրենի առեալ իշխանութիւն վաղ-

21 AEI ի մանկունսն  
22 AEI յիշատակ  
23 ZEF N<sub>9</sub>N<sub>10</sub> Մակեդոնացի  
24 ACEFHKMNZ<sub>2</sub> ցուցեալ om.  
27 AEHK իմաստագունիցն



վաղակի յառաջեալ՝ ի ծայրագոյն թագաւորութեանն ժամանեաց  
զահ<sup>25</sup>, եւ նովիմբ զ՝ առ ի ներքոյ արեգական<sup>26</sup> առ հասարակ ծովու  
եւ ցամաքի աստուածարար տիրեաց: Եւ զայն ոչ միայն քաջու-  
թեամբն, քան եթէ յաւէտ իմաստութեամբն յարդարեալ հնազանդե-  
ցոյց, վասն զի հմտագունի եւ առաւել փորձին Արիստոտելի կրթու-  
թեամբն յովմագոյն էր հրահանգեալ<sup>27</sup>, որով ահագին միանգա-  
մայն եւ հիանալի այնպէս զինքն ցուցանէր բոլորեցունց<sup>28</sup>:

բ. Մինչ զի ուրումն տեսեալ զյոյժ փարթամութիւնն եւ զբար-  
գաւաճեալ պատիւ թագաւորութեանն, եւ ընդ միտ ածեալ զանբա-  
ութեան մթերեալ գանձուցն զիտել զշտեմարանս, որով աղագաւ  
եւ անցեալ հայցէր պատասխանիս, ասելով թէ. «Մ՛ւր իցենք քո  
գանձք», իսկ նորա ի սիրելիսն յառեալ՝ լուծանէր զհարցուածոյն  
խնդիր:

գ. Գեղեցկապէս եւ արդարեւ լի իմաստութեամբ այլ եւ քան  
զամենայն խրատաբանութիւնս նորա այս վայելչագոյն ասացաւ  
բան: Քանզի որ սիրելեօքն լինին թաթաւուչք յաշխարհիս, թուի թէ  
ամենայն փառաւորութեամբք ըստ բոլոր պարառութեան բարոյն  
յղփացեալք յօրանան: Վասն զի թագաւորի նորօք պահպանեալ  
տէրութիւնն, յաւէտագոյն իմն պատուով անցեալ վայելչանայ հա-  
նապազ ի կենցաղումս, այլ եւ իշխանք յաջողեալք նոքիմբք, անա-  
ռիկ ամբութեամբ կամակարարար զիշխանութեանցն տանին վարկ:  
Սոյնք եւ գաւառաց բարեկարգութեան, եւ քաղաքաց պայծառու-  
թեան ամենագեղեցիկ պատճառ եւ իւրաքանչիւր շինութեան տանց:  
Բայց եւ ի գլխաւոր կացութեան եւ ի խումբս երեւելի մարդկան օճառք  
են խորին խաղաղութեան<sup>29</sup>, եւ միանգամայն երջանիկ քաջափառու-  
թեանց: Անդուստ եւ աստուածային բարեպաշտութեանցն լցեալ  
կատարին հաճոյք՝ անձանձրոյթ յորդորմամբք, ընդ որոց ի նմանէ  
ընդ այնր նախախնամականք մարդասիրութիւնք հանապազ եղանին  
բաշխեալ: Բայց պարզաբար իսկ համառօտ եղեալ բան, թէ որ ինչ  
միանգամ որ բարութեանց ասացէ վերաբերումն, սիրելեացն մեր-  
ձաւորութեամբք յարդարեալ բարգաւաճին:

դ. Իսկ որք ամայիք ի բարեկամացն գոն եւ թափուրք, ո՞վ ոչ  
զիտէ, զի զվերջին թշուառութեանցն պահանջին աղէտս, դրժանս ի  
թշնամեաց կրելով, անարգութիւն ի դրացեաց, վանդումն եւ աւա-  
րումն ստացուածոց ի քաղաքացեաց եւ ի գեղջկաց եւ ի հակա-

ռակորդ սահմանակցաց. եւ ինքեանց միշտ զդառն հարկանել ծա-  
ռայութիւն: Եւ համանգամայն իսկ յամենայն կողմանց յորդեալ  
հիբութեանցն վտանկք, բարեկրութեանցն եւ ոչ բնաւ երեւին հետք:

ե. Եւ զի այս ի զինուորութեանցն հոյսս եւ ի նաւաստութեանն՝  
քաջագոյն է գիտելի. որ մին թէ ոչ դաշնաւոր եւ յոյժ սիրելագոյն  
ընդ ինքեան ունիցի զմարտակիցս, ոչ միայն զյաղթութեանն շտանի  
մրցանակ, այլ եւ վանեալ եւս ի թշնամեացն, վաղվաղակի պար-  
տութեամբ շարաւ ի կենցաղոյս վճարի: Եւ նաւաստին առանց  
սիրելեացն օգնականութեան, թերեւս եւ ոչ ի գործն իսկ յարմարեալ  
պատշաճեսցի:

զ. Ձսոյն եւ ի մեծ հռչակեցելում հայրապետին է տեսանել, որ  
ունելով ընդ ինքեան զդաշնաւոր բարեկամսն եւ զսիրելագոյն ընդ-  
ոծին ծառայան, եւ նորօք զշորս զօրացեալ թագաւորսն ի վերայ  
հնգիցն վանեալ ստտակէր. եւ այնպէս զգերեալսն ի նոցանէ աւա-  
րեալ՝ հանդերձ թափէր հարազատան<sup>30</sup>:

է. Ըստ նմին օրինակի եւ ոմն ամէնիմաստուն արտաբերեաց  
բանիւ, զհաւատարիմ բարեկամս զեղ ասելով կենաց<sup>31</sup>:

ը. Ձոր պարտ եւ արժան է ապա հռչակելի գովութեամբ նա-  
զարանել զմեծ եւ զդիցազնականն Աղէքսանդրոս թագաւոր, որ ոչ  
այլ ինչ եւս վարկեալ լուագոյն բարեբախտութեան կենցաղոյս  
պատճառս, քան թէ յովով սիրելեացն փարթամանալ պարուր, եւ  
յամենայն ժամանակս պայծառապէս երանութեամբ զքաջավայելուչ  
պարծանաց տանել բարեհամբաւութիւն, եւ նորասբանչ յապառնի-  
սն՝ յաշխարհի թողուլ յիշատակ:

<3.> Պէտք բանական

Ձի զՍոկրատէս ոմն եհարց իմաստնաւոր, թէ «զվէ՞ ի քաջ  
մտառուացն, եւ ի վատառուսն զնոյն պահանջես համարս<sup>32</sup>». եւ եւ  
ասէ, թէ. «ի նոցանէ՞ վասն փութոյն, իսկ ի վատառուաց ի միտ՝  
վասն ջանոյն»<sup>33</sup>:

եթէ որ իմաստնագոյն խորհրդով ներակրթել զինքն կամիցի,

2 Z ի գահ, Z<sub>2</sub> նորիմբք, K նորիմբ 28 Z հանապազ om., Z<sub>2</sub> գեղանին  
12 Z<sub>3</sub>EIK գհայցուածոյն 34—35 ZB աւերումն

11—12 Z<sub>3</sub> որով ունելով, A որովն ելով 27 EFHIKMN զնոյնս, ZABCEFHK  
14—15 B աւերեալ հաղարս, I համարս հաղարս: ZBFM  
24 Z<sub>3</sub>K յիշատակք N<sub>9</sub>N<sub>10</sub> եւ om.  
26 Z<sub>3</sub>EIN զի om., A Սոկրատէս, Z 28 HIMN<sub>1</sub>N<sub>4</sub>N<sub>7</sub> վատառուացն  
N<sub>9</sub>N<sub>10</sub> եհարց ոմն



և ի բոլոր արուեստաւորացն յառեալ հայիցի խումբս առ ի գիտել  
գեղեցիկ զիրաքանչիւր բարեկից վերաբերումն շահիցն, թուի ինձ  
թէ մեծագոյն միջոցաւ զամէնիւրն գտցէ գերազանցեալ զմաստա-  
կացն հոյսն: Վասն զի առաւել յայնոսիկ վարժիւք հրահանգեցին  
նոքա, զմեծագոյն օգտիցն վայելեցուցին քաղաքաց բարութիւնս, և  
5 իւրաքանչիւր հայրենեան գաւառացն, այլ և ընդհանուր իսկ ամե-  
նայն մարդկան:

ա. Բայց և ի նոցանէ դարձեալ անդր եւս մեծագոյն վայելչա-  
կանօք գիտութեանն զյոյժ հռչակելին որ տեսցէ զՄովրատէս. որ զի  
10 թէպէտ և յաղբատ տանէ ելով, և ի ծնողաց աներեւելիաց, և մա-  
նաւանդ ի կատարելում հասակի բուռն զբանականն հարեալ ար-  
հեստից, այլ իրով քաջուշեղագոյն մտաուրեւեմքն, և անձանձը-  
ոյթ երկասիրելովն, արդարեւ քերականցեալ զամենեքումք՝ ի  
ծայրագոյն վարդապետութեանն ժամանեալ հասաւ զահ<sup>34</sup>: Յոր  
15 այլքն թէպէտ և ծախիւք մեծագունիւք, և յլով աշխատեսցին ջա-  
նիւ, սակայն անկար ամենայն իրօք ի նոյն նորա վերաբերիլ լիցին  
սահման: Քանզի յայնպէս իմն հիանալի բոլորեցուն զարհեստիցն  
ցուցեալ հանգամանս, մինչ զի կանոնաբար իմն ամենայն վար-  
ժապետաց նորայն եղեալ լինէր առաջնորդութիւն:

բ. Որոյ աղագաւ հայեցեալ ուրումն զմտերմագոյնն տեսանելով  
սարաս վարդապետութեան և զուգախնդիր զպատուոյն հայցեալ  
վարկ, նմին իրի և մատուցեալ հարցանէր, թէ «Հի՞մ ի քաջառու-  
ացն՝ զնոյնս և ի վատառուացն պահանջես համարս»<sup>35</sup>: Եւ նա  
ասէ. «Յոմանց յաղագս երագագոյն փութոյն. իսկ ի կիսոցն՝ յառա-  
25 ւել խոնջական ջանուն»:

գ. Վայելուչս իմն և արդարս յոյժ յարմարագոյն արտատուեալ  
պատասխանիս: Քանզի հմուտ և առաքինի վարդապետք, որ մտե-  
րիմ երկասիրութեամբ ի կիր զուսուցչապետութեանն արկցեն վերա-  
կացութիւն, և զերկաքանչիւր դասս աշակերտելոցն յիմաստայնոց  
գիտութեանն վերադրիցեն արգասիս, ո՞վ ոչ գիտէ, զի այնգունիւքն  
30 վայելչացեալ հանդերձ բարութեամբ յաշխարհի յօրանան: Վասն զի  
արագառուացն ստէպ ստէպ ընձեռելով զհանգամանս ուսումնա-  
սիրութեանն, և ի նոցին յլովագոյն յոգիս համբարելով զիմաս-  
տից պտուղս, կարէ այնպիսին ի սուղ ժամանակի մինչ ի ծայրա-

11 AELI զբանական  
17 KM զարուեստիցն  
21 Z(Z<sub>2</sub>) BCFHKMN հայցել  
36

23 բոլորք՝ հազարս, C համարս ուղղ-  
հազարս

գոյն զիտաւորութեանն վերաթուշել աստիճան. զոր այլ որ թերեւս  
և ի բազում ծախեալ ամանակի՝ կարի դժուարաւ ի նոյն ժամա-  
նեալ կարացցէ տեղի: Իսկ առ տարտամագոյնսն անձանձրոյթ  
երկասիրական վարեցեալ վարդապետութեամբ բերելով զեզերանս,  
5 թէպէտ և երկայնագոյն ամանակաւ, համայն բաւական է ի նոյն  
կարել հասուցանել աստիճան կատարելութեան. որ է արդարեւ  
բարեբաստիկ, և քաջափառագոյն վայելչանաց ամբարումն: Ապա  
չիրաւի է թէ այնպիսիքն զուգահաւասար յերկաքանչիւրոցն զսակե-  
ալն պահանջիցեն պատիւ ի բարեբախտագոյն եղելոց աշակերտաց:

դ. Բայց թէ հակառակ սոցին վարժողըն պղերգագոյնք և  
անփութասէրք իցեն, և մանաւանդ եթէ զմախանաց եւս լինքեանս  
բերցեն կեղծիս, նոքա ոչ զքաջամիտսն ի կատարելութիւն յառաջեն՝  
որք թէպէտ և երկայնագոյն ծախեսցեն ամանակ, այլ բթեցուցեալ  
ևս ընդունակս անչափն պատրաստեն կորստեան: Նոյնպէս և  
զծանրագոյնսն մտօք հրաժարեցուցեալ իսկ ի բարի յուսոյն, միշտ  
15 լքուցանելով ի զերեւանս զնոցա զառածեն ոգիս՝ ախմարագոյնս  
յոյժ գործելով, որ ամենաթշուառ հիբութեանցն եղանի պատճառ:  
Ապա չիրաւի այնպիսիքն ոչ միայն թէ զարժանաւորն շտանիցին  
յաշակերտելոցն զպատիւն, այլ բազում անգամ և թշնամանաց ևս  
արժանաւորք ի նոցունց լինին բերանոց, և միանգամայն ապագո-  
վանաց դօրովանս գրեթէ յամենայնցն տանին մարդկանէ:

և. Բայց զայս հաւաստութիւն և ի պաճարարոյժ մարդկանէ, և  
կամ յերկրագործ մշակացն յաւէտ է գիտել ի մանկանց: Քանզի և  
նոքա ոչ եթէ զառուգագոյնսն և եթ զարմանելով՝ զտկարօքն ան-  
տես արարեալ զանց առնեն, և կամ միսն՝ զքաջաբերն տածելով  
երկիր, և անտած խնամով զերեզն<sup>36</sup> դերեւացուցանիցէ անդաս-  
տան: Այլ հոգ զուգահաւասար տանելով երկաքանչիւրոցն, ընդ  
նմին հաւասարասէս և զվայելելոյն տանին բարութիւն:

զ. Զսոյն զայս և նախամեծարն ի մարգարէս Մովսէս զոյգս  
30 յերկոցունց զերկզրամենին պահանջէր վարկ<sup>37</sup>:

է. Եւ զնոյն օրինադրելով ասէր. «Ղայդ փարթամն ոչ յաւելցէ,  
և մի աղբատն նուազեցուցանել իշխեսցէ»<sup>37</sup>:

բ. Յաղագս որոյ պարտ և արժան է ամենավայելուչ և մեծա-

1 Z<sub>2</sub> վերաթուշել  
12 AELI զքաջամիտս  
16 Z<sub>2</sub>K լքեցուցանելով  
26 I որ է անպտուղ գերեզն



գոյն պատուով նազարանել զճուղակելին Սոկրատէս, որ ծայրագոյն  
 առաքինութեանց բարութիւն զվարդապետացն արդարակ հարթու-  
 5 թեամբ առ աշակերտեալսն բերել ասաց պարապ, եւ ի կիր զբանին  
 առնուլ վերաբերութիւն: Յորոց դիրահեշտալի վայելչանօք զպա-  
 տուոյն տարեալ առցեն շահս, եւ գեղեցիկ մրցանակ գովութեան ի  
 բոլոր մարդկանէ, եւ անուն իսկ ամենահրաշ պանծալի՝ որպէս թէ  
 անջինջ մատենիւք<sup>38</sup> անցեալ յապառնիսն թողուցուն հանապազ:

<4.> Պէտք խառնք

10 Զլիպոնացի ոմն հարցեալ, թէ ո՞ր սահմանք Սպարտաց. եւ  
 նորա զնիզակն ցուցեալ ասէ. «Յայսմ վայրի»<sup>39</sup>:

ա. Զմեծ հանդէս քաջարութեանցն գովել, եւ մանաւանդ իմաս-  
 տասիրագոյն եւս եւ անմահասէր դիտաւորութեամբ, ստուգապէս  
 որպէս ինձ՝ եւ ամենեցուն թուի յոյժ գերազանցեալ ահա գեր զբնաւ  
 ընդ արեգակամբս ի մարդկայինս ազգէ արութեամբ՝ միայն կակո-  
 15 նականս անցեալ գտցի ազն: Որք ամենեւին զխենէշ վատասրտու-  
 թիւնն արտաքոյ յիրեանց վարեալ հալածեցին սահմանաց, եւ  
 միշտ կրթեալ քաջութեամբն միանգամայն եւ իմաստութեամբ, վա-  
 սըն որոյ արդարեւ յիրաւի եղեն փառաւորք ընդ երկնաւս եւ հոշա-  
 կելիք, մինչ զի բաւականք իւրեանց համարեցան քաջութեամբ քա-  
 20 ղաքաց փոխանակ պարսպաց արժանի ամրութեան, եւ կամ հնա-  
 րաւոր այլ ինչ մենքենայից կանգնելոյ, զահագին եւ զճոյակապ  
 սպառազինութեանցն ասեմ. զոր առ համբարտակ բոլոր թշնամիան  
 ցուցին նահատակութիւն, ի պակուցումն նմանապէս եւ ի պար-  
 տութիւն: Այլ եւ զորս միանգամ հնազանդեցուցեալսն անկանէին ի  
 25 ծառայութիւն, եւ կամ թէ ոչք ինքնակամ իսկ ի նոցայն լինէին  
 օգնականութիւնս, որպէս օրէնս իմն զոգցեն բնականս՝ զայս ղնե-  
 լով, հրաման տալին զպարիսպն ի միջոյ ի բաց բառնալ եւ զպա-  
 տուարս, եւ ամբանալ ընդ յաղթականն նոցին քաջութեամբքն. եւ  
 յապահովական խորին խաղաղութեամբ<sup>40</sup> վայելել ի բարութեան.

որպէս եւ առաջիկայս զնոցանէ իսկ ունի յայտնել բանս, զանհա-  
 մեմատ լինելով արութիւնս<sup>41</sup>:

բ. Զոյց ուրումն զլայնագոյն եւ զանպարագիր կալուածս նոցա  
 տեսանելով վայրացն՝ զարմանալով հանդերձ մատուցեալ հայցէր  
 5 պատասխանիս, թէ ո՞ր իցեն կետահարութիւնքն սահմանաց  
 մայրաքաղաքին նոցա Սպարտայ: Եւ նորա զնիզակն ցուցեալ բայ-  
 «յայսմ վայրի»:

գ. Եւ կարի քաջ լի իմաստութեամբ սքանչելագոյն ընձեռեալ  
 բան: Վասն զի ո՞ սասացէ ոչ գիտել, զի որք ի դէնս են հրահան-  
 10 գեալ, եւ միշտ նորիմբք ի դէմս թշնամեաց յառաջանան նահա-  
 տակութեամբ, ստոյգ աճեցունս օր ըստ օրէ գործելով զբարե-  
 փառութեանցն իշխանութիւն, այլ եւ ընդարձակս եւս եւ անուորտս  
 զիրեանցն յիրեցուցանեն սահմանս կոշեցեալ: Ըստ որում ապա եւ  
 տիրել վայրացն, թերեւս բոլորեցուն իցէ ծանօթագոյն. զի ոչ հաս-  
 15 տատեալ ինչ բերեալ լինին նշանօք, ոչ փոսիւք ինչ փորելովք, կամ  
 հողաբլուրս յերկրէ յարուցանելով, եւ ոչ արձանս ի քարանց կանգ-  
 նելով, եւ ոչ բնաւ այլով ինչ սոցին օրինակաւ. բայց ճշմարտապէս  
 ասել, թէ մենամարտիկ նահատակացն արգասիւք զանսխալա-  
 գոյնսն մանաւանդ ունելով հաստատութիւն: Տի՛նա, այնպիսինք ոչ  
 20 միայն զիրեանցն վիճակեալ կալուածս բաւական կարծեն հզօր  
 ունել ձեռամբ, այլ եւ յոլովս անգամ զհակառակամարտ թշնա-  
 մեացն զցանկալիս բուրաստանացն<sup>42</sup> եւ զարգաւանդահոզն վտարեն  
 երկիր: Եւ համանգամայն իսկ զկապուտ ազգաց, եւ զաւար ոսկոյ  
 եւ արծաթոյ եւ պատուական քարանց յինքեանս հաւաքելով, ամե-  
 25 նավայելուչ բարեբախտութեամբ զկենցաղոյս անցուցանեն յաւի-  
 տեան:

դ. Իսկ եթէ որք դիւցազանցն նմանեալք, այսգունակ բոլոր  
 ասացեալ բարութեամբք յօրանան առձեռնպատրաստ, ապա անա-  
 րեացն եւ ամենեւին խենէշ լքելոցն զի՞նչ ինչ ոչ բիրապատիկ  
 աղիտիցն վերաբերիցին թշուառութիւնք: Որք զրկեալք ի հայրե-  
 30 նեան ժառանգութենէն լինին տարագիր, այլ եւ յիրեանցն իսկ  
 ստացելոյ, եւ կամ ի գեղեցիկ ինչ փարթամութենէ հանդերձ զար-

—4 EIM առնուլ զբանին,  
 4 I<sub>1</sub> բարբերութիւն, I<sub>2</sub> բերբերու-  
 թիւն  
 9 FN զզականացի  
 10 բոլորք՝ ցցեալ

14 ZN միայն օտ.,  
 14—15 Z<sub>2</sub>1 զլակոննանս, B ազգն  
 19 BFHK<sub>2</sub>M յիրեանցն  
 21 EHIKM մեքենայից  
 25 Z<sub>1</sub> ծառայութիւնս, Z<sub>1</sub>EG ծառա-  
 յութեանց

1 Z<sub>2</sub>AGI<sub>2</sub> յայտնեալ  
 4 ABCEH զարմանով  
 6 բոլորք՝ ցցեալ  
 9 Z<sub>2</sub>AEGI որո՞յ

15 BFGHIM եւ կամ,  
 16 ZCEFH հողաբլուրս ինչ  
 19 ZBCFHIKM ունել  
 27 Z<sub>2</sub>ի<sub>2</sub>Z<sub>1</sub>ABEFGHIK ոք  
 30 AEGI թշուառութիւնքն



միւրն մատնին անկեալ ի դռն երթալով ծառայութիւն: Նա թերեւս եւ վերջին թշուառութեամբն սրով հակառակորդացն զրաւեալք վախճանին ի կենաց:

5 ե. Քանզի զայս ի հօր եւ ի բռնագոյն գազանսդ է տեսանել, որք զփանաքիս եւ զերկշտոսն ահաւորագոյն միայն ձայնի բաց է ի բաց հայածականս յիրեանցն առնեն բնակութենէ, եւ զըմբռնեալսն գէշ արկեալ ապականութեամբ ծախեն<sup>43</sup>:

10 գ. Այսպէս եւ աստուածայինն Գաւթ արիացեալ, զանարդիւն յոյժ զօրութեամբ Գողիթ կործանէր, եւ զնորունն վանելով զօր, ինքեան հնազանդեցուցանէր ցեղին զամենայն ցանկալիս գաւառացն<sup>44</sup>:

է. Զսոյն ի հնումն պատուիրէ եւ տէրունեան բանն երջանիկ զօրավարին Յեսուայ. «զօրացի՛ր» ցնա ասելով, «եւ քա՛ջ լեր առ ի բաժանել զահմանս ազգացն՝ արբահմանս զարմիր»<sup>45</sup>:

15 ը. Ընդ որ պարտ եւ արժան է ապա բազում ընդ այսոցիկ մեծարանօք զլակոնացուցն գովել ազգ, որպէս անկրելի արութեամբ եւ անհատ գրեթէ զամենայն բարեփառութեանցն վայելեցին կեանս, հանդերձ անմոռաց անուամբ եւ հռչակելի: Եւ իբր օրէնս իմն ամենեցուն հաստատագոյն զինուորականացն զօրութեանց միշտ թող-  
20 լով՝ զառ ի զէնսն բերել ասացին պարասպ, անեցուցանելով զնահատակութիւնս:

<5.> Պէտք բանական

ԶԹ՛ւանով ոմն պիթագորական եհարց, եթէ յետ քանի՞ անուր կնոջ առ այր մեծաւորութեան արժան է մտանել ի տէրունիսն: Եւ  
25 նա ասէ. «յիրեմմէն նոյն օրին, յօտարէն՝ եւ ոչ բնաւ երբէք»<sup>46</sup>:

ա. Ընդ յոյժ մեծախորհուրդ իմաստասէրն Պիթագորաս թուի, թէ առաւել բոլորեցուն իրաւացի է միշտ զարմանալ, եւ միանգամայն զգեղեցիկ ներբողականն նմա հատուցանել վարկ: Որքան իմն յինքեան զբարեսիրութեանն կարաց բերել նախանձ յօժարական կամօք, մինչ զի անդադար երկասիրութեամբ զտարաշխարհիկն  
30 առնէր ուղեգնացութիւն յճգիպտոս՝ ամենամալայնուշ յաղագս հնա-

րելոյ իմաստութեանն: Եւ անդ բուռն այնուհետեւ զբոլոր բանականն հարեալ կրթութեանց, անդադար զինքն վարժէր եւ հրահանգէր<sup>47</sup> եւ առաւել գիտութեանցն յօրանայր հմտութեամբ գեր զմարդիկ: Այլ նա զնոյնս առեալ՝ ի հելլենացուց բաւական լինէր փոխազրել լեզու:

5 հօրասպէս կամակարութեամբ: Եւ անդուստ յառաջեալ զվարդապետականն ի ձեռն առնոյ: զործ, առ ի կիր ամենեցուն զկենցաղօգուտն արկանել խրատարանութիւնս, ոչ միայն արանց արուորագոյն ասեմ բնութեանէ, այլեւ կանացի կնատ եւ անզօր լինելութեանն զնոյն մատազարարէր վարդապետութիւնս, եւ ի ծայրս իմաստիցն ածէր հանճարոյ, օրէնսգիր արժանաւոր ամենեցուն կացուցանէր մազկան: Զոր եւ առաջիկայ տեսութիւնս թարց միոյ կրկրայութեան՝ յանդիման զնորայն ունի բարեմտութիւն<sup>48</sup>:

բ. Վասն զի լսող ոմն մեծագոյն նորա եղեալ իմաստիցն՝ կին անուն Քէանով, որ հարցեալ լինէր յումեմնէ, թէ յետ քանի՞ անուր մերձաւորութեան կնոջ առ այր՝ արժան ի տէրունեանն է մտանել տաճարս: Եւ նորա բայ. «Յիրեմէն՝ նոյն օրին, իսկ յօտարէն՝ եւ ոչ բնաւ երբէք»:

գ. Եւ այլ զի՞նչ եւս գեր զայս զիպողագոյն եւ մեծավայելուշ զանազան ընդ երկնաս բարեբախտութիւն, քան զբիրըղձալի եւ պատուական ամուսնութեան խոստովանեալ շնորհն, որ յամենա-  
20 ստան Աստուծոյ եւ ի բարեգութն նորայն կամաց մարդկայինս պարգեւեցաւ ազգի: Քանզի ցորբան պարկեշտ սա զարդարեալ մաքրութեամբ պատուեսցի ի միաբանական հաւասարութենէն, ո՞վ ոչ գիտէ, զի անշափագոյն եւ պէսպէս բոլոր կենցաղոյս բարեփառութիւնք յարաճեցեալ յօրանան ի միակամ սիրոյն կապանաց: Նախ եւ առաջին՝ համբակացն ծաղկեալ հարազատութիւնք կարի յոյժ պայծառացեալ զուարճանան, եւ ապա անդուստ բովանդակ ազգին հոմացեղ յառաջխաղացումն, յոյց եւ պարունակարար ամենայն իւրք ըստ ըղձիցն յարմարի գործ. առ նմին խորին խաղա-  
30 դութեանն<sup>49</sup> հեղանին բարութիւնք: Այլ նա աստուստ եւ քաղաքացն յօրինին կաճառք, եւ միանգամայն իսկ յաւետագոյն խմբեալ երջանկութիւնք. եթէ տանց շինութիւն, եւ եթէ օրինաց բարեկարգ յարմարութիւնք, եւ կամ թագաւորաց խրոխտալի պատիւք, եւ իշ-

9 БФКМ Գողիթ  
17 Z<sub>1</sub>AG անհաստ  
20 Z(Z<sub>3</sub>)F ասացին բերել  
23 IKM էհարց  
24 N միաւորութեան  
25 N յօտարին  
27 Z<sub>3</sub> յիրաւի  
29 I զբարեբախտութեանն

4 BFH հելլենացուցն  
16 K տաճար  
20—21 ABCEFIM յամենաստ



խանացն սակեալ վճարմունք հարկաց, բազում եւ այլ եւս անթիւ  
աջողութիւնք կենաց, որք ի սմանէն լեալս ոք ասելով ոչ վրիպեսցէ  
ի ճշմարտութենէն: Տի՛նա պարզաբար իսկ ասել, եթէ յողջախոհն  
ամուսնութենէ եւ աստուածային բարեպաշտութեանցն յորդորմունք,  
5 հանդերձ խայրօքն եւ սուրբ նուիրօք, եւ նոցին համանման առա-  
քինութեանցն լցեալ կատարին մասամբք: Որոյ ազագաւ եւ յամե-  
նաբաւական աջոյն անկարօտ՝ արդարեւ վայելեալք մարդկայինս  
առձեռնպատրաստ բարեբախտանայ բնութիւն:

դ. Իսկ որք ոչն այսպէս վարին, այլ հակառակ նմին՝ լի ամե-  
10 նայն բղջախոհութեամբ զգեղեցիկ հարազատութեանն քայքայնն  
դաշնաւորութիւն, նոքա ոչ միայն յասացեալքս քաջափառութեան  
ոչ վայելեն, այլ եւ անտանելի աղետիք յամենայն կողմանց զվա-  
տաբախտութեանցն կրեն հիբութիւնս, թշնամիք հասարակաց բնու-  
15 թեանս համարելով, եւ հակառակ արարչական զօրութեանն եւ նո-  
րին գեղեցկայարմար կարգաց: Ոչք վեր ի վայրն զառածեալ կոր-  
ծանեն զհարազատ մանկանցն համակամ սիրելութիւնն, եւ զազդին  
յաւեժ յարութիւն ընդ իրեարս շփոթելով, պատեբազմաց լինին ա-  
ռիթք եւ գերութեանց եւ համօրէն դառն վախճանի սրոյ խողխող-  
ման: Զոյց մի ըստ միօջէ թուել զաղիտիցն վերբերութիւնս, ոչինչ  
20 են հարկաւոր պէտք զարտուղեցելոցն յողջախոհութենէ, որ արժանի  
արդարեւ աստուածառօքն են բարկութեան՝ յազագս թողլոյ տար-  
օրէն շարութեամբ զպարկեշտ մարդկայինս վարուցն սովորութիւնս,  
եւ իջանելով յանասնականն անարգելութիւն:

ե. Քանզի զայս ստույգ եւ ի թռչուն կենդանեաց գոյ իմանալ<sup>50</sup>,  
25 ըստ ոմանց իմաստնագոյն բնախօսութեանն. որք ճշմարտապէս  
զատողութեամբ պարկեշտագոյն յողջախոհութեան զտատրակաց  
գոյ ասացին երամս<sup>51</sup>. վտան զի օրինակ իմն իբր զաշնաւոր ուխտա-  
պահութեամբ զմտերմութիւն միշտ առ իւրն համանման պահէ զու-  
գակից՝ ի կեանսն համայն եւ զկնի մահուն եզոյն ուրուք ի նո-  
30 ցանէ<sup>52</sup>, յորմէ եւ արժանի իսկ տէրունեան եզեւ սրբագոյն ողջակի-  
զեալ նուէր<sup>53</sup>:

զ. Զսոյն եւ յառաքինի հայրապետն էր տեսանել, զի ոչք զա-  
մուսնութեանցն պահեցին հարազատութիւնս, միշտ հաճոյք աստու-  
ածայինն գտան կամաց<sup>54</sup>:

է. Այլ զնոյն եւ երջանիկն Պօղոս խրատարանէ, պատուական  
ասելով զամուսնութիւնն եւ սուրբ զանկողինսն, բայց զպոռնիկս եւ  
զշունս դատի Աստուած<sup>55</sup>:

ը. Յազագս որոյ յիրաի ապա գովել եւ ընդունել է հանդերձ  
5 զարմանալով զաուցեալն իմաստասիրութեամբ Թէանով, եւ զնոյն  
պատուականագոյն համարել, որ ոչ այլ ինչ ասաց յարմարիչ  
բոլոր կենցաղոյս բարեբախտութեան, ընդ նմին եւ աստուածային  
հաճոյիցն եղանիլ կամակատարու, առաւել գեր զամուսնական ող-  
ջախոհ պարկեշտութեանցն պահել մտերմաբար դաշնաւորութիւն:

2—3 Եւ զշունս եւ զպոռնիկս, 1KM  
դատէ

1 ZBCFHM այլն, 1K անթիւք  
10 Z բողջախոհութեամբ

19 Z2EKM վերաբերութիւնս



<Գ Ի Ր Ք II>

ՅԱՂԱԳՍ ԽՐԱՏՈՒ

Խրատ է բան բացասութեամբ<sup>1</sup> գլխաւորեալ<sup>2</sup> յորդորելով լինել, եւ կամ հրաժարեցուցանելով<sup>3</sup>: Եւ խրատուս ոմն<sup>4</sup> է բացասական, որպէս. «Պէտք են ընչից»: Եւ ոմն՝ հրաժարական<sup>5</sup>, որպէս. «Ոչ է պարտ զամենայն գիշերն քունել»: Եւ ոմն՝ յորդորական, որպէս. «Պարտ է յաղքատութենէ փախչել»<sup>6</sup>: Եւ ոմն՝ պարզ, «Մի հաւ քաջ»: Եւ ոմն՝ շարալծեալ. «Ոչ է բարւոք բազմիշխանութիւն, մի իշխան եղիցի»: Եւ ոմն՝ առաւելահրաշ. «Ոչինչ տկարագոյն երկիր սնուցանէ բան զմարդ»: Արդ զանազանութիւն այս է խրատու: Իսկ գործեացես զնա նմանապէս պիտոյիցն<sup>7</sup>՝ զներբողականսն ասելով, եւ զյարասականն, եւ զպատճառն, եւ զընդդիմակին կազմութիւն, զառական, եւ զյարացոյցն, եւ զվկայութիւն հնոցն, եւ զի վերայ բանին յորդորումն<sup>8</sup>:

15 Զանազանեցաւ խրատ ի պիտոյից, զխրատն առանց դիմաց գոլ, իսկ զպէտսն հանդերձ գիմօք<sup>9</sup>: Դնել դարձեալ՝ զխրատն միշտ բանական, բայց պէտքն՝ երբեմն եւ գործականք<sup>10</sup>:

< 1. > Պէտք են ընչից, եւ առանց սոցա ոչ է հնար ինչ լինել յարժանեացն!:

20 Յոյժ հրաշալի է եւ ամենավայելուչ արգասեօք բազմագոյն ճարտասանացն երջանիկ պարու՝ արթննացուցն բերող լեալ խոստո-

3 N բանն  
 6 N<sub>1</sub> ի բուն լինել, N<sub>2</sub>N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>HI  
 7 IN<sub>7</sub>N<sub>8</sub> փախչել, HN<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>N<sub>8</sub> յազ-  
 քատութենէն  
 9-10 N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>N<sub>7</sub>N<sub>8</sub> երկիրս նոցանէ  
 11 N<sub>3</sub>N<sub>6</sub> գիտոյիցն  
 13 N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>N<sub>7</sub>N<sub>8</sub> հնոցն om., ZABC  
 EFHIKN գի ի վերայ  
 15 N<sub>9</sub> N<sub>10</sub> J գի ի բրտան  
 16 N<sub>9</sub> N<sub>10</sub> J գի ի բրտան

վանեսցի քաղաք: Որ եզ բան զմի զյոյժ կենցաղօգտակարագոյնսն զիրեքօք անցուցանելով իրս, բարեացն եւ եթ երաշխաւորք եղեն եւ առիթք:

5 ա. Բայց յառաջեալ ի բուրեցունց հմտութեամբ միայն Դի-  
 մոսթենէս, որ ի բուն ծայրն ժամանեալ եհաս քաջաւաւութեան: Եւ  
 մանաւանդ զքաղաքավարութեանն օրինի եթէ ոք համազուգել կա-  
 մեսցի հաւասարապէս բազդատութեամբ, անկշռելի սմա ի դասս  
 քաղաքավարացն ամենեկին ոք գտցի պարադիտեալ: Որ զազնու-  
 ական բարուցն լինքեան բերելով մտերմութիւն, առաւել զքաջառա-  
 քինութեանն զուարթութիւն եւ միանգամայն զըստ բարեձանոյց  
 10 խրատու<sup>12</sup>, շինութեան եւ յոյժ խաղաղութեան քաղաքաց լինէր  
 պատճառ, այլ եւ հենախաղաց հիւսէր շար ի վերայ թշնամեացն  
 եկելոց զանազան ամուր զինուք եւ քաջամարտիկ զօրացն հանդի-  
 պեալ, եւ մենքենայիւք, որով անառիկ փութացեալ զգուշութեամբ,  
 15 անընդոստ եւ խորին խաղաղութեամբ<sup>13</sup> զիւր պահէր հայրենեան  
 քաղաք<sup>14</sup>:

բ. Զորոյ եւ մեզ մի ըստ եզոջէ զբոլոր նորա շարալծեալ յոլո-  
 վութիւն խրատուցն յաւէտ ահա երկայնագոյն է անցանել բանիւ:  
 Այլ զմիոյ առաջիկայիս, որ համանգամայն նորա արգասեացս հա-  
 ւաստի կարէ ցուցանել յառաջադիմութիւն, ոչինչ զանդաղելի է ա-  
 20 ռաջի մեզ վերբերել յսողաց, զոր ասէս, թէ «Պէտք են ընչից, եւ  
 առանց սոցա անկար է լինել ինչ յարժանեացն»:

գ. Եւ արդ՝ զի՞նչ հաւ այլ յարմարագոյն վայելչութեամբ, եւ  
 միայն կարգաւոր՝ մարթիցի օժանդակութիւն գիր ստորակայ գայս  
 25 բանականացս պարզեւեալ շնորհ, քանզի ո՞ւմ ումեք ոչ յայտնագոյն  
 այս ցուցանի: Վասն զի որք միանգամ գոյաւորեալք ընչեղութեամբն  
 յղփանան մարդիկ, այնուհետեւ յոր ինչ եւ յառեալ ձեռնարկեսցեն  
 ի պիտանացուսն, կարի իմն դիրահեշտարար եւ քաջապէս տանին  
 ի յանկումն՝ եթէ զբանականութեանն եւ կամ զգործականն ասաս-  
 ցես արհեստ, այլ եւ եթէ զգեղեցիկ շինուածոցն, եւ կամ զվաճա-  
 30 ռականութեանն կազմուածոյ, եւ կամ զնոյն իսկ զպատերազմա-  
 կանն խաղաղացուցանել վրդովումն, եւ ի հնազանդութիւն զթշնա-  
 միսն ծառայեցուցանել: Տի՛նա, եւ նովիմք թագավորացն սիրելի, եւ

14 ABG մենքայիւք, EFHKM մեքե-  
 նայիւք, Z<sub>2</sub> մեծ մեքենայիւք  
 17 Z<sub>2</sub> զորոց եւ ո մեզ  
 25 Z(Z<sub>1</sub>) EH պա բգեւել



պատուական քաղաքաց, եւ ի գլխաւոր կացութիւնս զանազան պեր-  
ճացեալ զարդուք, բոլորեցուն թուին ցանկալիք ի տեսութիւնս. այլ եւ  
յատուածայինն նուէրս զուարթառատք եւ բարեպաշտօնք: Այլ եւ  
պարզաբար իսկ ասել, համանգամայն բարեկեցութեանցն ծայրիւք

5

դ. Իսկ այնորիկ, որ սոսկ յընչիցն եղանին եւ ամենեւին թա-  
փուրք, եւ ոչ մի ինչ կամ սուղ ի բարեբաստազունիցն նոցա յաջո-  
ղեալ կատարի գործ, այլ միշտ ի բարուոյն վերջացեալք վայելից,  
եղկելիք յոյժ երեւեալ տեսանին, եւ լիք հիբութեամբ: Նախ եւ առա-  
ջին անբատացեալք հարկաւորացն՝ սովով ծնկին եւ ցրտաբեկու-  
թեամբ, եւ թափառականք ի բնակութեանցն հեռանալով, զտածա-  
նելի ծառայութիւնն՝ օտարացն հարկանեն ստրկութիւնս: Եւ եւս  
յաւէտ զի անբասագոյնք ի բանս, եւ յարհեստս ամենայն անի-  
մաստք, այլեւ թշնամեացն առձեռնպատրաստ յաւար եւ ի շարա-  
շար վանդումն: Եւ միանգամայն իսկ անվայելուչք եւ վատափառք,  
որք զվերջին մանաւանդ կենցաղոյս զգածեալ տանին թշուառու-  
թիւնս<sup>15</sup>:

10

15

ե. Զոր օրինակ եւ ի զինուորական նահատակութեանցն, եւ ի  
նաւաստիկ վաճառաշահութեանց դիրաւ ճանաչի, զի եթէ ոչ զինու-  
որն թողալօք եւ զինուք այլ եւ երկվարացն կազմութեամբ իցէ  
պատրաստագոյն, ոչ զյաղթութեանն եւ ոչ զաւարտութեանցն կա-  
րեն յինքեանս բերել մրցանակ, այլ զհակառակն<sup>16</sup> պարտութեան  
եւ սրախողխող բեկմանն: Հանգոյն սմին եւ նաւաստին, եթէ ոչ  
զգործեացն եւ զմենքենայիցն ունիցի մթերս, նոյնպէս եւ ոչ նա  
զվաճառաշահութեանցն ստանայ մեծութիւնս, բայց հակառակ՝ նա-  
ւարեկութեամբ խորասոյզ եղեալ կորնչի:

20

25

զ. Զնոյն եւ ամենիմաստ թագաւորն Սողոմոն առնէր. քանզի  
զհայրենի զանազան պատուականութեան մթերումն զանձուցն առ-  
եալ, որով եւ նովիմք հուշակելի անճառելոյն Աստուծոյ անուանն  
շինէր տաճար, որ եւ յոյժ զարմացմամբ անցեալ՝ ազգաց պատմի  
յազգս<sup>17</sup>:

30

է. Բայց եւ նորին՝ հանճարասիրաբար վկայեալ, ասէ. «Փրկանք  
մարդոյ իւրն ընչեղութիւնս»<sup>18</sup>:

բ. Վասն որոյ պարտ եւ արժան է ընդունել՝ միանգամայն եւ

2 EGI թուի

3 Z(Z<sub>2</sub>) F նուէրք

7 CK<sub>2</sub>M եւ կամ

24 Z<sub>3</sub>EIKM զմեքենայիցն

27 AEG Սողովմոն

զովութեամբ մեծարել զյոյժ հուշակելին ճարտասանաց<sup>19</sup> գրիմոս-  
թենէս. որ անմախասէր խրատուքն՝ եւ դիպողագոյն բոլոր քաղա-  
քաց ընձեռեալ պահպանական ուսոյց ամբութիւն: Եւ մանաւանդ  
զի ոչ այլ ինչ առաւել լաւ համարեալ, քան թէ հանդերձ երկա-  
սիրութեամբ զընչիցն ստանալ փարթամութիւնս, եւ նովիմք անկա-  
րօտ բարեբաստանալ ի կենցաղումս:

5

<2.> Յիմար է, որ ընդ վեցս քան զինքն հակառակէ<sup>20</sup>:

ա. Հուշակելումն յոյժ ծայրագոյն պատուականութեամբ Եսի-  
ողեայ՝ յամենավայելուչն բերթողաց պարս, արժանաւոր է առաւել  
միշտ զհրաշափառագոյն նազաբանութիւն նմա հատուցանել վարկ:  
Որ գեղեցկատարփելի իմն եւ յարգարուն հմտութեամբքն յառաջեալ՝  
զբոլորիւքն գերազանցեաց բերթուածովք այնքան, մինչ զի արձա-  
նակեալ ուրեմն յիւր զիւցազանական տաղսն<sup>21</sup>, զեր ի վերոյ զինքն  
ասաց լինել<sup>22</sup> գեր զհուշակելին եւ զվեհն ամենայն բերթողաց<sup>23</sup>  
Հոմերոս: Եւ մանաւանդ ըստ այնմ եւս, զի զերկնի բնութիւն եւ  
զերկրի, միանգամայն զրովանդակ տարերցդ առ իրեարս յարա-  
գրեալ յարմարագոյն խառնումն՝ քննութեամբ պարատեսեալ զե-  
կոյց բոլորեցուն: Այլ ընդ նմին եւ զմշակականն հանգամանաց տե-  
ղեկութիւն, եւ զյոյով այլ եւս զկենցաղօգտակարագոյնս արորժա-  
կացն<sup>24</sup>:

10

15

20

բ. Յորոց մի ի նորա գիտնական վերաբերեալ խրատուց առա-  
ջիկայս իսկ մեզ հարցաբնեւալ յայտնեսցի, զոր ասէս բայ. «Շամ-  
բուչ է, որ ընդ վեհագունին քան զինքն բերէ հակառակութեան  
վեհ»<sup>25</sup>:

25

գ. Եւ այս է արդարեւ հրաշափառագոյն բան, եւ յաւտախաղ-  
աց բարութեանց մատակարար: Քանզի ստուգագոյն զիւր ինքեան  
ումեք ճանաչել բնութեանն արգասիս եւ ի նմին շափաւորապէս  
խաղաղանալ, արդարեւ ճշմարիտ ամէնիմաստ գիտութեան է ծայր,  
եւ բոլորահշտ վայելչութեան աւարտ: Զի ոչ կշռապէս յիւրն հայի  
զօրութիւն, այնպիսին խոհականագոյն հեղութեամբ ոչ առ անհա-  
ւասարան, այլ միշտ առ կրսերագոյնսն մատուցեալ յօժարէ բերել  
հակառակութիւն: Յորմէ գիտացեալ զյաւէտ մրցանակ յաղթութե-  
անն ի գլուխ եղեալ, գոզցես պատուականագոյն իմն անցեալ յօրա-  
նայ: Եւ կամ թերեւս համարձակեալ եւս առ զոյզն. ուր անձանձրոյթ  
երկս առաջի արկանելով եւ հրահանգս, տանի եւ անդ զյաղթութե-  
անցն աշխարհագովութիւնս, եւ անուանի քաջափառութեամբ միշտ

30

35

11 Z<sub>3</sub>KI գեղեցկատարփալի

22 B հարցաբնեւալ



ի խաղաղութեան դամանակս կատարէ կենցանդոյս:

4. Իսկ որ որ զինքն անգիտանայ եւ կամ զիր ունակութիւն, ալլ եւ յանդգնեալ առ հզօրագոյնն եւս քան զինքն հանդերձ ամբարհաւաճութեամբ վէճ տացէ հակառակութեամբ, ո՛չ ապաքէն 5  
ահա յայտ է, զի անդէն եւ անդ իսկ վտանգեալ սաստիկ անժուկալութեամբ ի մարտին զանհնարին պարտութեանցն տարցի աղետըս եւ միանգամայն վերջին թշուառութեամբք զրաւեալ հերքիցի այնպիսին ի կենցաղոյս: Ալլ նա թէպէտ եւ զերծանիցի, սակայն յոյժ վիրաւորեալ դժնդակագոյն՝ օրինակ իմն անկեալ դնի կիսամահ, եւ թուի թէ հանապազ ապագովանաց կորանք անդր եւս աղիտագոյն գեր զմահուն վտանգս բերեալ ցուցանի:

5. Վասն զի զայս որ հաւաստեալ ի զուպարս ըմբշաց<sup>26</sup> եւ կամ ի ճարտասանացն ծանիցէ հանդէսս: Քանզի մին թէ առ բնագոյն գազանսն յապագէն մարտիցէ, ոչ միայն թէ զյաղութեանցն 15  
աշխարհագովութիւնսն տանել ոչ կարէ, այլ եւ դժուարակիր տանջանօք զմահուն ժառանգեսցէ պատուհաս: Իսկ միւսն յորժամ ընդ դժնեայ եւ բաւական ճարտասանացն<sup>27</sup> յարադրեալ զինքն ձկտեցուցէ, շառագունանաց միանգամայն եւ վերջին ձաղանաց երթեալ տարցի մրցանակ<sup>28</sup>:

6. Բայց այս գործ եղիւ եւ երբեմն ի հինսն ի հակառակսն մեծի նախամարգարէին Մովսէսի, զԿորնթայ ասեմ եւ զԱքիրոնէ, որպէս զի զոմն աստուածառաք բարկութիւնն հանդերձ նորուն հրկիզութեամբ սատակէր բանական անարժան վասն զիմադարձութեանն, եւ զոմն երկրասույզ վախճանաւ կենդանուցն կորուսանէր<sup>29</sup>:

7. Տինա, զսոյն եւ մեծախորհուրդն խրատաբանէ Սողոմոն, անբնշիւն՝ ոչ հակառակել ընդ փարթամին: զի մի յոլովագոյն բայ կշռովք բարձցէ զնա<sup>30</sup>:

8. Եւ արդ յիրաւի այսպէս եղիցի արգաւանդամիտ եւ վեհագոյն առնս՝ բոլորեցուն զմեծարանացն բերել պատիւ: Ոյց ոչ միայն զյոյժ օգտակարագոյն ախորժակացն եցոյց տեղեկութիւն, ալլ եւ զիրաբանչիւր եւս ասաց ճանաչել բնութիւն, հանդերձ խոնարհութեամբ: Եւ նովիմք առ արժանաւորսն վարել իմաստաբար, որ է արդարեւ մայրաքաղաք խորին խաղաղութեան եւ օճառ անբաւ բարութեան<sup>31</sup>:

21 BM զզԱքիրոնէ  
26 AE Սողոմոն

30 AEI<sub>1</sub> զպատիւ

<3.> Արժան է յաղհատութենէ փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի վիճաց հոսիլ ի բարձանց<sup>32</sup>:

9. Ընդ յոյժ պատուականագոյնսն եւ բարգաւաճեալսն յամենայն իմաստակացն պարսն յիրաւի որ հրաշացեալ զարմասցի, եւ ընդ նմին զնեբրողականն վերաբերեսցէ բան: Վասն զի զյոբունս յաշխարհի հրահանգելով մարդիկ ամէնիմաստ խրատուք եւ վայելչականօք, պատճառ քաղաքաց եղեն ոչ միայն բարեկարգութեանն եւ կամ խաղաղասէր կենաց, ալլ եւ զմեծագոյն իրաւացի ատենիցն պայծառացուցանել վայելչութիւնս:

10. ա. Յորոց գերագանցեալ իմն զամենեքումքք խոհականագոյն իմաստիւք այժմ միայն Բիաս ճանաչի իմաստակ: Սքանչելի յերկուցս այսոցիկ աւարտեալ բանականագոյն արհեստից՝ ճարտասանութեան համանգամայն ընդ նմին եւ քերթողութեամբ, որք թէպէտ եւ կարի մեծապէս զատուցեալ յիրերաց են միջոցաւ, սակայն սա 15  
այնքան զօրացեալ առուագոյն արգասեօք, մինչ զի զմին գլխովք եւ պայծառ բանիւք, եւ զմիւսն յարմարալից եւ կշռակի շափովք<sup>33</sup> արտայայտեալ բոլորեցուն ընձեռեաց վայելչական վարդապետութիւնս:

բ. Զորոյ զանց զնորա յոլովագոյնն առնելով ասացուածովք, զառաջիկայս արդէն զմի ի նորա կենցաղօգուտն խրատուց անցեալ տեսցուք, որ ասիս, թէ. «Պարտ է յաղքատ շքաւորութենէ փախչել, եւ ի մեծն ծով անկանել եւ կամ ի ծայրագոյն հոսիլ բարձանց գահից»:

գ. Եւ յիրաւի թերեւս եւ ոչ արտաքոյ վայելչականին զայս հիբացելոց յոյժ յորդորական մատոյց խրատ: Քանզի եւ ստույգ իսկ պակասեալքն յընչից հանապազ զզառն մահուն ճաշակեն աղէտս: Նախ եւ առաջին հարկաւոր կերակրոցն պիտոյիւք սովով իմն հաշին եւ ցրտաբեկութեամբ, եւ երկրորդ անգամ՝ զի զսակեալ հարկ թագաւորաց, եւ ընդ նմին զպատիւս իշխանացն ոչ ուտեք ունին կարել վճարել: Բազում անգամ եւ բանտարգելութեամբ յարածամ զնոցայն որ տանջեալ գտցէ անձինս. զոր թողում ասել՝ զանարգանսն որ ի հրապարակսն լինել, եւ զքնաւ արհամարհանս ի քաղաքացեացն, զանփառագոյնսն ի կացուրդսն, եւ զանբանս գրեթէ ի կաճառս ատենիցն: Ալլ եւ եւս յորժամ զգրացեացն զերջանիկ տեսանելով զբարեբաստութիւնսն, որ նոցա առաւել հաշումն եւ արդարեւ զառնագոյն գեր զմահուն է համարեալ զժոխս: Եւ միայն զմե-

1. N<sub>1</sub>N<sub>2</sub>N<sub>3</sub> IM փախչել, N<sub>4</sub>N<sub>5</sub> I անկանել 33 BCHKM զանփառագոյնս  
21 ABCFHIK փախչել 36 ZCFI համարել



ծագոյնսն եւ զամենեկին ողորմելի թշուառութիւնսն զայնս, որք  
յաստուածային երախայեացն եւ նուիրացն թափուրք եւ հանապազ  
գտանին վերջացեալք: Եւ զի այսպէս եւ աւելի գեր զասացեալսս  
բազմադիմի կիրս զանապակ շարեացն ունի աղքատութիւն, ապա  
յիրաւի ուրեմն լիցի անձինն առնել վիհ, եւ միանգամայն երթեալ  
յամենայնցն դադարել շարեաց:

դ. Եւ յայտ ուստի՞ է մեզ, եթէ ոչ ի հակառակէս է իմանալ.  
քանզի թէ որ ընչիւրն են թաթառուչք, նոքին բարգաւաճեալք ցու-  
ցանին եւ մեծարգոյք առ սիրելիս յամենայնի եւ ի տոհմայինս.  
կարօղք են եւ զբարուք ծերատածութիւնսն անդրէն փոխանորդել  
ծնողացն, որբոց եւ այրեաց բարեմտագոյն լինել վերակացու եւ  
յոյս բարի համարձակապէս առ ի հանդերձեալսն համբարել: Տի՛նա,  
միանգամայն մեծարոյք մարդկան եւ քաջահաճոյք աստուածային,  
որպէս ասացի, լինին կամաց: Ապա ճշմարտապէս ուրեմն առ յայ-  
տքիւր երիցս զայնոսիկ համարելի է եղկելիս<sup>34</sup>, ոյք դժնդակագոյն  
աղքատութեամբն ծնկին:

ե. Զոր օրինակ եւ ի կարի ախտաժէտսն է տեսանել, զի այն-  
քան շարալլուկ եւ վշտացեալք յառաւելութենէ խանդին ցաւոցն,  
մինչ զի անգամ աղօթիւր եւ խնդրուածովք զմահուն բաղձանօր  
հայցեն հանգիստ: Եւ զի ոչ կարացեալք համբերել, բազում անգամ  
թերեւս եւ իրովին իսկ վախճանեալք՝ գնան յաշխարհէ, լաւագոյն  
քան զհիւանդութեան վտանգս զվաղվաղակի զբաւումն համարե-  
լով<sup>35</sup>:

զ. Եւ զի այսպէս տնանկութիւնն է արկածիւր շարաշար լի,  
վասն այնորիկ եւ դժնեալ խորհրդականն Աքիտոփէլ յառաջագոյն  
գիտացեալ զաղէտս չբարութեանն, երթեալ ինքնաձեռն խեղդա-  
մահ սատակէր<sup>36</sup>:

է. Զսոյն եւ նորուն իսկ սաղմոսերգողին իբրու երկաթի վարա-  
կեալ կապանօր՝ զկարօտեալս բոլորիս ասաց լինել յաշխարհի<sup>37</sup>:

ը. Յաղագս որոյ ի դէպ ապա եւ պատշաճ է ներբողելով մեծա-  
րել զԲիաս իմաստակ եւ նմին զգլխաւորագոյնն հատուցանել զովու-  
թիւն, որ այնպիսի իմն զօրաւորագոյն գտաւ խորհրդով, մինչ զի  
երկակի արուեստի զարմանալի զիրն յարմարել կարաց իմաստս:  
Եւ մանաւանդ զի եւ գիտացեալ եւս զանբաւ աղքատութեանն աղէ-  
տըս, ամենեցուն զայս յորդորական ընձեռեաց խրատս, փութալ

9 HK տոհմայինսն  
24 BK: տնանկութիւն  
25 ABEFHIZ<sub>5</sub> Աքիտոփէլ  
33 Z<sub>5</sub>ին յարմարեալ

զիարդ եւ է հնարիւր ըստ նորայն զերծանել վտանգս եւ յապահո-  
վութեամբ խաղաղանալ, օրինակ իմն յանքոյթ նաւահանգստի:

<4.> Որ Աստուծոյ հաւանի, առաւել նա լուիցէ նմա<sup>38</sup>:

Որ միանգամ գեղեցիկ յարմարութեամբ զարդարել զամենայն  
բանաւորացն կարէ արուեստս, եւ լուսաւորագոյն յաւէտ բանիւր  
զլսելիս հեշտացուցանել, ինձ մանաւանդ ոչ որ այլ առաւել ի դէպ,  
բան եթէ զերջանիկ քերթողականս բերեալ ցուցցի ախորժակ՝ շա-  
հաւորագոյն եւ յոյժ պիտանացու: Վասն զի բոլորեքեան գոգցես  
որպէս ի յաւէտախաղաց իմն աղբերէ, ի սորայն կրթելով գիտու-  
թիւն երթեալ համարձակ զիրաքանչիւր լնլով տանին կարօտու-  
թիւնս իմաստիցն:

ա. Որոյ սքանչելի հանճարոյս թէպէտ եւ յառաջագոյն նախա-  
գտակք այլք լինելով ոմանք, սակայն յառաջելով բարգաւաճեալն  
եւ մեծն Հոմերոս, այնքան կարաց գերազանցել զամենեքումք՝  
ծայրացուցանելով զինքեան հմտութիւն, մինչ զի ի վերջէ եկեալքն,  
եւ ոչ լսող անգամ արժանաւորապէս նորայն կարացին լինել քեր-  
թութեանց, թող թէ զուգահաւասար նմա գտանիլ: Յոյց եւ խոստո-  
վանեալն իսկ եղեւ՝ հայր ամենեցուն զնա ասել քերթողաց<sup>39</sup>:

բ. Բայց այժմ զյոքնագոյն նորա ասացեալ դիցազնական տա-  
ղիւր<sup>40</sup> խրատաբանութիւնս<sup>41</sup>, կարի երկայնագոյն եւ կամ եթէ ան-  
կար իսկ զրովանդակն է ճառել բանիւս: Այլ զմիս, որ առաջիս կայ  
լցեալ բարեշահութեամբ խրատ, յառեսցուր գիտել քննութեամբ,  
եւ է այսպիսի ինչ. «Որ Աստուծոյ հաւանի, ասէ՛ առաւել նա լու-  
իցէ ի նմանէ»:

գ. Ստոյգ արդարեւ ճշմարտութեամբ լի այս ասացեալ պատ-  
ճառ: Քանզի ո՛վ ոչ զԱստուծոյ անբաւ գիտէ բարերարութեանն նա-  
խախնամական զօրութիւն, որոյ յունչէ զամենայն գոյացուցեալ<sup>42</sup>,  
ընդ նոսին եւ զմարդկային բնութիւնս, այլ եւ զսա մեծագոյն իմն  
եւ հրաշալի պատուով յարգեալ, բանիւ ասեմ եւ մտօք, անձնիշխան  
եւ ազատ<sup>43</sup> ունելով յինքեան կամս՝ իբր օրինակ իմն թագաւորա-  
կան պատիւ շնորհելով ի վերայ բոլորն ստորակաց լինելու-  
թեանցս<sup>44</sup>: Եւ այնպէս անդուստ մինչեւ ցայժմ ի նոյնութեան միշտ  
զաշխարհ պահելով՝ խնամեալ տածէ արարչական իւրով մարդա-

3 | առաւելն լուիցէ  
13 Z<sub>3</sub>K յառաջանալով  
16—17 BCEFHIZ<sub>1</sub> քերթողութեանց  
21 AE բանիւ  
28 AE մարդկայինս  
32 ABCH յայժմ  
33 Z(Z<sub>2</sub>)K<sub>2</sub> իւրով արարչական



սիրութեամբն: Ըստ որում ընդ այսքանեաց առատատուր պարգևաց  
ի մէնջ խնդրէ ոչ այլ ինչ, բայց միայն դուզնաբեայ հաւանական  
լսելութիւն՝ ըստ իւրոցն քաջահաճոյ կամաց: Իսկ ապա որ հնա-  
զանդութիւն առ ամենասուրբ Աստուծոյ ասացեալ բերեն կաման,  
5 յամենայն խոստովանեալ բարութիւնսն լիով ահա եւ անկարօտ  
վայելեն. առողջ՝ նախ եւ առաջին անձին բարեկենդանութեամբ,  
ընդ նմին եւ թաթառուք համբակօք, ընչիւք փարթամագոյն, ներ-  
քոյ զարդարեալ բնաւ քաջափառութեամբ, եւ արտաքոյ բարեխառն  
օգովք, եւ տարեւորականաց զանազան լցեալ պտղովք:

10 դ. եւ արդ որ այսքանեաց յորդարուխ մատակարարութեանց  
բոլորեցունն ստացողի<sup>45</sup> եւ ոչ սուղ ինչ շնորհահատոյց լինելով  
ցուցանիցէ հնազանդ խոնարհութիւն, այլ ապարասանեալ ընդվզի  
ի նորայն ճշմարիտ հրամանաց, նա զի՞նչ ինչ ոչ զանտանելի  
15 թշուառութեանցն կրիցէ աղէտս, որ է համօրենն պատճառք կորստե-  
ան, պատերազմացն ի վերայ յարուցելոց, եւ զցանկալիս ընչիցն  
եւ ստացուածոց<sup>46</sup> աւարելով, դտան հրձգութիւնս, եւ զբարձրա-  
բերձ շինուածոցն տապալմունս, գերութիւնս կանանց, միանգամայն  
եւ համբակացն, եւ զբեթէ բոլոր իսկ հասակաց սրախողխող լինել  
ի ժանտախտակացն, եւ աստուածառաք բարկութեանցն, հաւակ  
20 լինօղ բազում եւ ալլոցն հս անբաւ հիբութեանցն:

ե. Զոր օրինակ եւ առ երկրաւոր թագաւորս սոյն անցեալ յօրա-  
նայ ընդ նորօք հնազանդելոցն: Վասն զի որք սակաւ ինչ առ նո-  
սայն կատարեն քաջութիւնս, մեծամեծ հաւատան պարգևաց. եւ  
զայն ոչ միայն առ իւրեանցն վայելին ժամանակաւ, այլ եւ զկնի  
25 եկեալ զաւակին աներկբայաբար թողուն յիշատակ:

զ. Այսպէս եւ մեծ հոյրապետն Աբրահամ զկնի աստուածա-  
յինն երթալոյ ձայնի, արժանաւոր ժառանգել զպարգևացն խոստա-  
ցեալ լինէր երկիր՝ հանդերձ խաղաղութեամբ ինքն եւ զհետ իւր  
բովանդակ նորին զաւակք<sup>47</sup>:

30 է. Նմանագոյն ձայնի եւ երջանիկն Պօղոս վկայէ ասելով, թէ.  
«Որք սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս<sup>48</sup>»:

ը. Արդ գիտելով զայս, յարմարագոյն լիցի սքանչանալ եւ գո-  
վել զմեծն եւ հոշակաւոր Հոմերոս, որ այնչափ իմն յօրացեալ գի-

տութեամբ՝ մինչեւ կարի քաջառաքինաբար կանոնս զնելով եւ օր-  
էնս, ուսոյց լսողաց հաւանութիւն բերել մարդկայինս ազին առ  
արարչական զօրութիւնն, եւ նովիմք քաջապէս ի մեծս բարեբաս-  
տանալ կենցաղում եւ անուն պարծանաց յանսպառն թողուլ ամա-  
նակ:

5 <5. > Ոչ ամենեցուն ինչ զնոյն տունալ է, եւ ոչ օգուտ բերէ<sup>49</sup>:

Բազում շահաւորագոյն օգտութեանցն բերող մարդկայինս ա-  
զին զդասս կատակերգակացն տեսանելով ուրուք, միշտ իմասցի  
լեալ պատճառ սքանչելագունիցն իրաց: Որ ընդ հեշտալի եւ քաղց-  
10 րալուր մատուցման բանիցն խառնեալ յօրինեցին եւ զզանազան  
օգտաբեր խրատուցն վարդապետութիւնս, միովն՝ ի բարեացն յոր-  
դորեալ տեսութիւն, եւ միւսովն՝ ի շարէն ի բաց հրաժարեցուցա-  
նել զուարճալից հանդերձ բերկրանօք. այնպէս երկաքանչիւրն  
կողմանք զբազմաժողով լսողացն յարդարեալ կաղմեցին զմիտս:

15 ա. Յորոց միջոյ հաւեալ յաջողակութեամբ ի գերազանցեալն  
ամբարձաւ աստիճան՝ զՄենանդրոս ասեմ զզուրի՝ կատակերգա-  
կացն: Որում թէպէտ եւ բազում միջոցաւ դէպ զկնի եղև բոլորե-  
ցուն լինել<sup>50</sup>, սակայն իմաստութեամբ այնքան աուլցեալ, մինչ զի  
եւ ոչ մի որ առ սա բաւականաբար ըստ առաւելութեան եւ կամ  
20 նուազ զօրութեան կալաւ հաւասարութիւն:

բ. եւ յայտ՝ աստուտ ի միոյս նորա ճանաչի բազմացն ասա-  
ցեալ խրատուցն՝ զոր ասէս, բայ. «Ոչ բոլորեցուն զնոյն առեալ է»:

գ. եւ յիրաւի զիպողագոյն ասացեալ խրատաբանութիւն: Քան-  
զի եւ ո՞ւմ ոչ արդօք այս իցէ ժանօթագոյն առ ի կենցաղս նաւե-  
25 լով, եւ հանապաղ զմարդկայինս տեսանելով պայծառացեալ ազգի  
վերուստ նախախնամութենէն: Որք ոչ միայն կերպարանիս զանա-  
զանութեամբ սքանչելի զարարչականն ցուցին գործ զօրութեան,  
այլ առաւել հս ազգի ազգի յօրնագոյն ախորժակացն բերմամբք:  
Վասն զի ոմանք զիմաստասիրութիւնն ունելով, եւ այլք ճարտասա-  
նութիւն, կէսք զբերթողական շահաւորագոյն արուեստ, եւ մի ըստ  
30 միոջէ անբաւագոյն զըստ իւրաքանչիւրն ցանկութեանց<sup>51</sup>, չլովք

18 Z<sub>2</sub>F1 հասարակաց

19 Z<sub>1</sub>I ժանտախտակացն

31 B սիրեն

33 Z<sub>1</sub> զհոշակաւորն, K<sub>2</sub> հոշակաւորն,

! հոշակալին

4 I կենցաղումս, յանուն

6 Z<sub>2</sub>I, ինչ առեալ է, I<sub>2</sub> ինչ առաւել է

8 E կատակերգացն

10 EHM զանազան

11 AEI շարեացն

15 Z<sub>2</sub>AFK աջողակութեամբ

16—17 E կատակերգացն, H կատա-  
կերգոգացն

22 E առեալ է

26 Z<sub>2</sub>I<sub>2</sub> կերպարանին



եւ զձեռնագործականն առին ի կիր: Եւ այս ի բազմազան շնորհէն յցեալ կատարեցաւ վայելչութիւն կենցաղոյս:

4. Եւ զի թէ ոչ այսպէս, այլ բոլորք միումն անցեալ լինէաք ախորժակի, ի վաղնշուցն իսկ թերեւս ի միջոյ բարձեալ սորայս  
5 գտանէր յարմարութիւն: Քանզի եթէ ամենեքեան մշակական գործ-  
առնութեամբ վարէին, ո՞ւրդեօք զգինուորականն մեզ առնէր պահ-  
պանութիւն, որ պատճառ ամենեցուն է խաղաղութեան: Եւ դարձ-  
եալ՝ ո՞ զնաւաստութեանն շահավաճառութիւն, որք զբարին մեզ  
կելոյ մատուցեալ սպասաւորեն օգտութիւնս, եւ կամ զայս եւս  
10 անթուելիսն, ոչք միշտ պաշտպանեալ յիրերաց, զկենցաղոյս հար-  
կանեն սպասաւորութիւն: Եւ եթէ այս այսպէս է, ապա պարտ եւ  
արժան է ճանաչել իւրաքանչիւր ումեք զիւր ինքեան անկ, եւ ի  
նմին մանաւանդ բազում անցանել երկասիրութեամբ, զի ի կա-  
տարումն ածելով զարմանալի ամենայն ցուցցէ տեսողաց, որով եւ  
15 ինքն բոլոր անկարօտ յօրասցի ի կենցաղումս բարեբաստութեամբ:  
Իսկ որ ոք անխորհրդաբար յառեալ յոչ իւր պատշաճագոյնն յան-  
դգնեսցի, իբրու ընդդիմամարտ իմն ինքեան այնպիսին լինելով  
անձին եւ հակառակ աստուածայինն վարել շնորհի, ո՞ ոչ զիտէ, զի  
միայն զաշխատութեանցն եւ եթ ունելով երկս, եւ միշտ դժոխա-  
20 գոյն թշուառութեամբ յերկաքանչիւրոց կողմանցն զրկեալ գտանի:

Բայց տեսցուք զմիւսս, զոր ասէ, թէ. «եւ ոչ օգուտ բերէ»: Եւ  
զայս զիտելի ապաքէն ամենայն իրօք է<sup>52</sup>, զի բովանդակ մարդկա-  
յինս վայելք ի հակառակէն խառնեալ<sup>53</sup> բազում անգամ եւ զսխա-  
լանացն յինքեան ցուցանէ բերս, մշակականն՝ զանբերութեանց  
պտղոյն եւ զկարկտիցն, եւ զինուորականն՝ զպարտութեանցն, եւ  
25 միանգամայն իսկ վաճառականն՝ զբազմաժողով ընչիցն կորուստ,  
եւ այլք մի ըստ միոջէ զիւրաքանչիւրն դաւանաց տուգանս: Զոչս  
եւ ոչ ընդ միտ արկանելի է<sup>52</sup> անգամ ի վնասակարն վճատել ան-  
ցից, որ ոչն երբէք հանապազ յայսմ յարամնայ պատահս, այլ յու-  
սով առաջիկայ մեծագոյն շահիցն մխիթարել ոչ չափաւորապէս,  
30 եւ զիւրաքանչիւր ասացեալ ախորժակսն անձանձրոյթ մտօք ի վար  
եւ զկելոյն արկանել՝ համագամայն եւ զբարի կելոյն անդուստ տա-  
նել վայելչականութիւն<sup>54</sup>:

ե Քանզի զայս եւ յանբան կենդանիսդ գոյ իմանալ<sup>55</sup>, որ ոչ  
ամենեքեան զնոյն հարկանեն սպասաւորութիւն, բայց ոմն՝ զգինու-  
որականն, եւ այլ ոմանք՝ զերկրագործականն, եւ այլք զայլ ինչ՝  
ըստ իւրաքանչիւր անկից:

5 4. Զսոյն եւ մեծն ի մարգարէս ի խորանաշինութեանն առնէր,  
հրաման տալով ումեմն՝ զուկին գործել եւ զարծաթ եւ կամ զպա-  
տուական ականցն բազմութիւն, եւ այլ ումեմն՝ զծիրանին եւ զբե-  
հեզն, եւ որ սոցիինն էին նմանք, յոյց աստուածայինն աւարտեցաւ  
կրելի տաճար<sup>56</sup>:

10 5. Այսպէս եւ շնորհալիցն Պօղոս վերաբերեաց բանիւ ասելով.  
«Ումեմն ի հոգւոյն, ասէ, տուեալ է բան իմաստութեան, եւ այլում  
բժշկութեան հաւատացեալ շնորհ. իսկ ումեմն թարգմանութիւն լե-  
զուաց, եւ որ ի կարգին»<sup>57</sup>:

15 6. Իսկ արդ որոյ յայսքանս բաժանեալ զգօրութիւն իմաստու-  
թեանն ծանեաք արտաբերումն հեշտալուր բանիւք եւ քաղցրալից  
զյոյժ հոչակելոյ կատակերգակիս Մենանդրի, ո՞ւմ եւս այլ առա-  
ւել, քան եթէ ի դէպ նմա զգլխաւորագոյն գովութեանցն հատուցա-  
նել իցէ մրցանակ:

20 <6.> Իմաստուն խորհրդով՝ բազմաձեռն գօրութեան յաղ-  
թէ, իսկ անուսումնութիւն անհնարին շար է<sup>58</sup>:

Զմեծ գովութիւն բերթողացն, որք յաւէտ իմաստութեանցն պա-  
րապեցին, առաւել աստուստ է ճանաչել, զի խոյս տալով յընդ-  
վայրայածն եւ փախուցեալ յերկայնագոյն բանից, եւ կամ յանօ-  
գուտ աշխարհական ինչ զբօսանաց, միայն հոգ բազում տարեալ  
25 աշխատութեամբ արդարեւ կարճառօտութեան չափովքն, եւ յարմա-  
րական ասացուածովքն զիւրեանցն շարագծելով բանս, զարմանալի  
յոյժ եւ օգտակար հաւաստագոյն ամենայն կացուցին լսողաց: Եւ  
մանաւանդ սոցունց նման գտցէ որ հրաշալի զողբերգակացն դաս:  
Վասն զի եւ նոքա մեծավերջական չափովքն<sup>59</sup> զհնոցն երգելով  
30 պատմութիւնս, այնպիսի իմն ըստ նոցա քաջարութեանցն զուգա-  
հաւասար եւ զիւրեանցն ցուցին իմաստութիւն, մինչ զի խառնելով

8 B որ  
9 K գայլ, H գայլսն  
15 ZBC կենցաղումնս

17 Z(Z<sub>1</sub>) իրբեւ, H իրբ  
18 Z(Z<sub>1</sub>) CH վարեալ, M վարելալ  
31 BHI ախորժական

3 EFHKM այլք  
5 ACHK<sub>1</sub> խորանաշինութեան  
8 BIM սոցին  
12 ABCF թարգմանութիւն  
19 N<sub>1</sub> Մենանդրոս իմաստուն  
27 Z<sub>2</sub> հաստատագոյն  
29 E1 չափովն



ևս զքաղցր նուագերգութիւնս ծայնիցն, և զաջողակ խրատուցն կարգաւորութիւնս յարմարական, որով սփոփեալ զբնաւ վշտացեալ սգաւորացն միտքարելով անձինս:

5 ա. Եւ ի սոցանէ դարձեալ որ զմեծ յաղթանակ գովութեանցն երթեալ տանի, Եւրիպիդէս ճանաչի ողբերգակ: Զի կորովագոյն իմն և զեղեցկայարմար դիւցազնական ողբերգութեամբքն<sup>60</sup> ուրախացուցեալ զոգիս մտառուացն, անջինջ յիշատակաւ ի նոսին և զխրատուցն արձանակեալ<sup>61</sup> անմահարար եթող արժանաւոր յիշելոյ արուեստ:

10 բ. Որ մինչև ցայժմ ևս զարմանալի սորայս անցեալ կենցաղօգտակարագոյն պատմի հմտութիւն, զօրէն այսոցիկ ասացեալ խրատու, թէ. «Խոհականագոյն իմաստութեամբ բազմաձեռն՝ կարէ հերքող լինել զօրութեան. իսկ անվարժութիւն՝ անբաւ աղէտ»:

15 գ. Եւ կարի քաջ՝ ճշմարտագոյն և անսխալ վերաբերեալ բան: Վասն զի իմաստութեանն շնորհ՝ յոյժ և արդարեւ իբրու անճառելի իմն վայելչութիւն ի բոլորեցունն իջեալ ստացողէ<sup>62</sup> բանաւորացս պարզեւեցաւ ազին, և սովաւ ի մէջ ամենայն կենդանեաց երեւեալ ցուցանի հրաշալի: Քանզի թէպէտ ինքն ըստ ինքեան փանաքի և տկար է զօրութեամբ, սակայն մեծանձանցն սովաւ կարէ յաղթող լինել և զօրաւորագունիցն, մինչ յամենում ի ներքոյ իւրոյն արկանել ձեռին. օգագնացիցդ՝ ի ձեռն հնարաւոր տիրեալ մենքենայից, 20 ալ և զժնդակագոյն ցամաքայնոց գազանացդ՝ զանազան որոգայթիւր և պէսպէս զինուցն օժանդակութեամբ, իբրու և ոչ փոքր ինչ զնոցայն համարելով շարութիւն, որոյ աղագաւ հանապազ գեր ի վերոյ լինելով՝ մալեալ հնազանդեցուցանէ: Նոյնգունակ այսու և լուղակացդ<sup>63</sup> ժամանեալ հասանէ բնութեան ի խորասոյզն ի վեր ածել յանդնոց: Տի՛նա, պարզաբար իսկ զոմանս յասացելոցս ի կերակրանացն մատուցանէ պէտս, և զայլսն իւրաքանչիւրսն արժանաւորաց անկա: Այսպես թագաւորական վարելով իշխանութեամբ, 30 ապա ևս գեր զնոյն աւելի ի խաղաղութեան միանգամայն և ի պատերազմի իմաստութիւն ի մէջ անցեալ, զմին աճեցուցանելով բարգաւաճագոյնս յարդարէ, իսկ միւսումն յոլովագոյն մարտացուն ձեռաց զպարտութեանցն և եթ անէ տալ զհերքութիւնս:

գ. Իսկ հակակ նորին անուսումնութիւն յոր ինչ իրս և ձեռնարկիցէ, բնաւորեցաւ և շփոթս յարուցանել և ամբոյս և զբոլոր վեր ի վայր ջանայ կործանել զհաստատութիւն մարդկայինս կենաց: 5 Եթէ զքաղաքաց զտնօրէնութիւնս, և կամ զամէնիցն բարեկարգութիւն, և եթէ զինչ և իցէ զանազան արհեստիցն, եթէ զբանականն ասացես, և եթէ զգործնականն, այնպէս զոգցես անհմտութեամբ զերեւացուցանէ, մինչ զի գրեթէ ամենեւին յանասնականն անբանագոյն զառածանէ շարութիւն:

10 ե. Զոր օրինակ և նաւաստին հմուտ տեղեկութեամբն զ'ի վերայ լոյծ մկանացն<sup>64</sup> ճանապարհորդելով մեծագոյն տառիդ, ուստի և յոյժ չքնաղագիտն հասանէ շահից:

զ. Այսպէս և զբանակն մաղիանացուց՝ իմաստութեամբ ի գիշերամարտութեանն զեղևնեան վարէր զօրութիւն<sup>65</sup>:

15 է. Զսոյն և առակողն հաստատէ բանիւ, թէ. «Իմաստութեամբ մղի պատերազմ առաւել, քան եթէ յոլովագոյն ձեռամբ»<sup>66</sup>:

20 Յաղագս որոյ յարմարագոյն և վայելուչ է ընդ այսոցիկ հատուցանել մեծին Եւրիպիդէայ նորոգագոյն ամենեւին զներբողականն բան, որ սքանչելի զիմաստութեանն գիտելով շահս, գերաշխարհիկ և ծայրագոյն զնա գոյ ամենայնցն ասաց<sup>67</sup> քաջափառութեանց:

<7.> Կրօութիւն է ամենայն ինչ<sup>68</sup>:

25 Զյոյժ բանաւոր իմաստասիրացն հոլլս ընդ միտ արկանելով ուրուք, միշտ զգլխաւորագոյնն ի դէպ է նուիրել նոցա գովութիւնս: Որք զեղեցկապէս զմարմնականս արհամարհելով զբօսանս, միայն մաքրագոյն տեսութեան բանին գտան պարապեալք, և նովիմք քաջանուն պարծանօք վայելչացան յաշխարհի: Յոյց և եօթանցն յառաջեալ դաս՝ իմաստնագոյնք ցուցան քան զամենեւեան, և յաւէտ բարգաւաճեալք այնու, զի մէն մի արտաբերելով զօրաւորագոյն խրատ, գրեթէ զամենեցունցն կարացին ծածկել գիտութիւն և հիանալիք բազմաժողովն ցուցանել լսողաց: Տի՛նա այնչափ հմտագոյն իմաստիւրն առաւելան քան զնոսա, որքան թէ և նորա զանազանեալք յայլոցն գտան մարդկանէ:

1 Z(Z<sub>1</sub>)AF գլխաւորակ 21 Z<sub>1</sub>EH<sub>1</sub>KM մեքենայից  
5 AB<sub>1</sub>EFH<sub>1</sub>KM Եւրիպիդէս, Z(Z<sub>1</sub>)H<sub>1</sub> 26 H<sub>1</sub> լուսակացդ  
գորովագոյն 26—27 Z(Z<sub>1</sub>)CF ածեալ

1 Z<sub>1</sub>EIKM հակառակ 17 Z<sub>1</sub>2K նորագոյն  
6 ZB<sub>1</sub>CEFH<sub>1</sub>2K զգործական 22 Z<sub>1</sub>BEFH<sub>1</sub>KM հարկանելով  
7 Z<sub>1</sub>BK<sub>2</sub> զերեւեցուցանէ 23 A<sub>1</sub> աշխարհի  
31 AEIM իշաստիւր



ա. Եւ նոցա ի միջի դարձեալ աուցեալ հանճարայեղց խոհականութեամբ՝ Պերիանդրոս Կորնթացի:

բ. Որ իւրով եզական շահաւորագոյն խրատուս գրուորեցունն տայ գիտել զյաւէտախաղաց իւրաքանչիւրն արգասիս, ասելով եթէ. «վարժումն է ամենայն ինչ»:

գ. Եւ այս է արդարեւ ստոյգ գեղեցիկ բան, որ ճշմարտապէս առ մարդկայինս յօրանայ բնութեան: Քանզի. սա ի միջասահմանի կալով, արուեստից միանգամայն եւ անարուեստութեանց, դիւրադարձ իմն լինելով առ երկաքանչիւր կողմանց, յինչ եւ ձեռնարկիցէ որ վարժելոցն եւ հրահանգելոցն յանցնիւր ախորժակս, եւ զկատարելութեան մատուցանել մրցանակս: Նախ եւ առաջին անդատին իսկ ի տղայականն տիս կրթութեամբ վարեցեալ, զբանական ստանայ շնորհ: Սմին կարօտանայ իմաստասէրն եւ ճարտասանն, համայն եւ քերթողն, եւ յուրով եւ այլ եւս բանական արուեստաւորք. այսպէս եւ ձեռագործականն բոլոր ախորժակք, եթէ զինուորականն եւ եթէ մշակականն իցէ, եւ կամ նաւաստականն տեղեկութիւն, բոլորք ի վարժիցն երկասիրութենէ յարմարապէս պայծառանան՝ ի բարձրագոյն երթալով աստիճան, այնչափ մինչ զի ոչ ումեք կարծել այնպիսում հանդիպել կատարելութեան:

դ. Իսկ ոյք անվարժութեամբն զերեւանան, եւ անարի խենէշ տաղտկութեամբք զգածեալք լինին յամենայն վայելչական իրաց մերկք եւ կողոպուտք լինելով՝ զվերջին թշուառութեանցն ամբարեն կորուստ: Եւ ոչ զմի ինչ յասացեալ ախորժակացն ստանալով ի յօճառ բարեկեցութեան, այլ անասնարարոյք լինելով դատարկութեամբն եւ անգործութեամբ, գձուձ եւ տխրալից կարօտանօք զկենցաղս անցուցանեն:

ե. Վասն զի եւ յըմբշամարտս է տեսանել, զի զորօրինակ նոքա ի ձեռն հանապազորդ կրթութեանցն միայնամարտութեամբն ի գուպարս հանդիսիցն<sup>69</sup> յաղթողք լինելով, միշտ զաշխարհագովութեանցն տանին մրցանակս:

զ. Նոյնգունակ եւ քաջն Յեսու անձանձրոյթ կալով ի սպասաւորութեան աստուածային խորանին եւ մեծի նախամարգարէին Մովսէսի<sup>70</sup>, անդուստ ժամանեալ հասանէր ի գահ զօրավարու-

թեան<sup>71</sup>, եւ ի բաժանել զերկիրն պարզեաց տեսական ազին<sup>72</sup>:

է. Զսոյն եւ երանելին Պօղոս յոյժ զգուշացուցանելով գրէ Տիմոթեայ ասելով. «Կրթեա զանձն բո յաստուածպաշտութիւն»<sup>73</sup>:

ը. Եւ արդ որ այսքան իմաստութիւն բերելով յինքեան, զմեծագոյնն շահից մարդկային բնութեանս վարդապետեաց գիտութիւն սքանչելի իմաստասէրն Պերիանդրոս, երկասէր վարժիցն ասելով զբնաւ կարողապէս ստանալ բարեբախտութիւն, ապա ո՞րք ոչ նմա առանց մախանաց զբարեհամբաւութիւն վերաբերիցէ բան:

1 Z<sub>2</sub>KM ազգիՆ

7 E1 գրարեբախտութիւն

7 Z<sub>2</sub>ABEF1 բնութիւն

10 ZBEFHKM հրահանգելոց

19 ACFHK հանդիպիլ

23 E1 ասացեալ

31-32 Z(Z<sub>1</sub>)AC սպասաւորութիւն



<Գ Ի Բ Ք III>

Յ Ա Ղ Ա Գ Ս Ե Ղ Մ Մ Ա Ն

Նղծումն է ի բաց բարձումն առաջիկայ իրի<sup>1</sup>: Եւ եղծանելի է ոչ զյոյժ հաւաստին, եւ ոչ զյաւէտ անկարելին<sup>2</sup>, այլ որ զմիջին բնութիւնն<sup>3</sup> ունի<sup>4</sup>: Եւ եղծանելով պարտ է նախ առաջին սուղ ինչ<sup>5</sup> բամբասանս ասել<sup>6</sup> իրացն ասողին, եւ ապա զնոյն ինքն զնել զիրացն արտադրութիւն:

Եւ զեղծումն գործել զխտովք<sup>7</sup>. առաջին՝ անյայտիւ, երկրորդ՝ անհաւանականաւ, երրորդ՝ անկարելեաւ, չորրորդ՝ անյարմարականաւ, հինգերորդ՝ անվայելչականաւ, վեցերորդ՝ անօգտակարաւ<sup>8</sup>: Եւ զկրթութիւնս զայս օգտակարագոյն ընկալիցս քան զայսն, վասն զի ամենայն արուեստիս զօրութիւն եղծմամբք եւ ստեղծմամբք զատեալ լինի<sup>9</sup>:

<1.> Եղծ զնէովբայ<sup>10</sup>

ա. Որ ինչ միանգամ ի ստութենէն արկածք շարեաց յաշխարհ բերեալ զեղանին, ոչ այլ ուստեք առաւել, քան եթէ ի քերթողացն պատմութենէ<sup>11</sup> լեալս տեսցէ որ: Վասն զի յաւէտ որպէս չքնաղագիւտ իմն եւ յոյժ պատուականագոյն իրաց ի հետ անցանելով՝ բարբաջանացն եւ առասպելարանութեանցն<sup>12</sup>, եւ նոցին ահա գրտակը լինելով՝ միշտ անհատ կամօքն նմինց պարապեցին մոլորական վարդապետութեան: Բայց թէ եւ խառնակեալ եւս ունիցին այլքըն սակաւագոյն ինչ ի ճշմարտութենէն, ոչ ինչ են ընդ այն զար-

2 N<sub>1</sub>N<sub>8</sub> իրին, 1 իրիս  
3 բոլոր կարելին  
4 բոլոր ունին  
7 I<sub>2</sub>N<sub>1</sub>N<sub>2</sub>: առաջինն, HMN<sub>8</sub> երկրորդն, MJ եւ երկրորդ  
8 MJ երրորդաւ... չորրորդաւ... հինգ-երրորդաւ  
9 MJ վեցերորդաւ  
13 Z<sub>4</sub>BCGEHK զնեովբեայ  
20 Z<sub>2</sub>AEGI խառն

մանք, յաղագս ծածկելոյ զյոյժութիւն ստութեան ընդ զուզանքեայն ստուգութեամբ առ ի խաբանս միանգամայն եւ ի կորուստ պարզամտացն լինել:

բ. Եւ մանաւանդ եւս որ զնէովբայս՝ ամենեւին անհաւատալի զրուցեալ պատմէ ճառ, ասելն զնէ՝ կին՝ Տանտալեայ<sup>13</sup> եւ յոյժ սիրելի Լետովայ դիւի<sup>14</sup> մօրն Ապողոնի եւ զսոյն լեալ համբաւէ թաթաուչ համբակօք, զուգաթիւս իմն՝ վեց արուօք, եւ նոյնչափ իգօք, եւ ապարասանեալ բայ յաղագս բազմորդութեանն, նախատէր զԼետով: Ընդ որ բարկացեալ յոյժ աստուածուհին, առաքէր ասէ զԱպողոն եւ զԱրտեմիս զիր որդիսն, եւ սատակեալ բառնայր Ապողոնի զարուսն եւ Արտեմեա՝ զէգսն: Վասն զի նպար բնձեռեալ էին, որպէս համբաւէն՝ հասուցանել զյանկարծօրէն մահսն. եւ զնէովբէ ի յանկարծադէպն եւ դժնդակն տրտմութենէ անզգայացնալ քարանալ<sup>15</sup>, եւ գրէ թէ արձանն մինչեւ ցայժմ եւս արտօսք թորէ:

գ. Եւ այլ զի՞նչ քան զայս ստութիւն կայցէ, որ զի ամենայն իրաց հաստատութիւն ի ներքոյ երկնից՝ առաւել երկուք այսոքիւք են, որ ունին զհաստատութիւն յայանութեան: Նախ՝ որք անուամբ թաղաւորացն ուրուք ժամանակաւ, եւ ապա՝ անուանակոչութեամբ տեղեացն, յորս գործեցեալն միշտ նշանաւոր ցուցանիր: Իսկ սա, զի յայսցանէ եւ ոչ մի ինչ ճշմարտապէս ի մէջ բերէ, երեւի թէ զամենեւին անյայտութեանն յօղէ առասպելարանութիւն:

դ. Այլ եւ անհաւանելի եւս առաջիկայս, որ զի զի՞նչ միարանութիւն վեհեցն<sup>16</sup> ընդ մարդկայինս իցէ բնութեան, զատ եւ որիչ լինելով յիրեբրացն իւրաքանչիւր բնակութեամբ: Քանզի նոքա հասեալ վիճակեցան զվերինսն, եւ սոքա զստորինս վայր եւ ոչ կաճառաւ անգամ ընդելակցեալք են առ միմեանս, եւ ոչ բնաւ բարեկամութեամբք երբէք գտան միաւորեալք: Բայց զոր ունին զուր նախախնամութեանն, յաղագս ինքեանց յաւէտ բարեմտութեանն եւ սիրոյ, եւ ոչ եթէ յաղագս տուրեւառիկ ինչ շահից, յորմէ սովորեցին սիրելութեանն աճել բարիք<sup>17</sup>:

ե. Տի՛նա դարձեալ եւ անկարելի իսկ է, մարդկայինքս կամակարար եւ որում փափարեն, հասանել, անգամ եւ ոչ արտաբնոցն իրաց, թող թէ զաւակասերութեան, ըստ ասործելոյն յոքունց եւ կամ նուաղից: Իսկ ապա նմա թէ այսպէս է, ի՞բք գոյր հնար զու-

12 AB զմահսն  
17 Z որ  
23 Z<sub>6</sub>ինCFHM բնակութեան  
25 AGI զվերինս



գիւր զուարճանալ զարմիր, եւ եթէ էր եւս, շնորհահատուց լինել  
պարտ էր, եւ ոչ հակառական վարել ձայնիւ: Եւ մանաւանդ զի  
զայն քաջագոյն գիտէր, թէ որ պարգեւեացն զայնպէս բարեբախ-  
տիկ պայծառութիւնն, նոյն անդրէն եւ ի բաց հանել կարող էր եւ  
5 զնէ ընդ դժնդակագոյն արկանել տանջանօք:

դ. Բայց եւ ո՞ւմ անյարմարական ծանօթացի բան, քան եթէ  
վեհիցն ի բարկութիւն շարժել, ոչց միշտ յանախտութեան անցեալ  
մնացին գոյացութիւնքն: Եւ մանաւանդ անկարգարարն վարել հրա-  
մանաւ՝ թողուլ զմեղուցեալն եւ յանմեղ համբակսն զաստուածա-  
10 ռաքն կարկառեալ սրտամտութիւն: Քանզի այս անիրաւ դատաստան  
եւ ոչ ի կարի շար դատաւորացն եւ յախմարագունից երբէք արտաքս  
ելեալ հաստատի, թող թէ ի պատուականագունաց. եւ ամենեւին  
իսկ ոչ:

է. Այլ նա ինքն ընդ ինքեան գոգցես թէ մարտնչելով, սորին  
15 յաջորդաւ բոլորովին յանվայելչականն երթեալ յօրանայ բանս:  
Այսպիսի իմն, յաղագս որոյ թէպէտ եւ անշափ տրտմութեանցն  
կիրք հասեալ երբէք զեղանիցին ի մարդիկ, հիւանդութեանց արդե-  
օք եւ ծանրագոյն ինչ խտտի լինիցին ձեռնտու, այլ վախճան հա-  
սուցանել ի վերայ թուի, թէ ոչ ուրեք բնաւորեցաւ: Սակայն թէ եւ  
20 զրաւեսցի, ո՞չ ապաքէն ամենեւին յապականութիւն անցեալ գնայ,  
եւ անյիշատակ եղեալ՝ մոռանայ զկենդանական կրիցն սովորու-  
թիւն, զադար յամենայնցն առնուլ մարմնական անցից, այլ ոչ ար-  
ձանանալ եւ միւսանգամ արտօսք թորել, որ է յատուկ առանձինն  
միայն զգայական կենդանեաց:

ը. Իսկ արդ որ այսքան առասպելական ստաբանութեանցս  
գտաւ գուլիս եւ միշտ յամենայն շարեացս սկզբանցն աւարտեալ՝  
զմեծագոյնն բամբասանաց տարաւ վարկ, սա ապա պարտ եւ ար-  
ժան է գոլ ոչ միայն յանօգտակարագունիցն համարել դասու, այլ  
եւ յոյժ վնասակարացն, եւ յանտանելի կախարդական պատրա-  
30 նացն: Յորմէ հրաժարմամբ ի բաց դարձուցանելով որ զսելեացն  
դէմս, յիրաւի իրր ի ժանդախտական եւ ի մահացու ինչ զեղոց  
դժուարեալ ի բաց հեռացի:

5 ա. Իսկ ի պարզամտացն թէ որ ի ճշմարտութենէ սխալեսցէ,  
որպես եւ Հերոդոտոս, առանց միոյ երկբայութեան զամենեւին ծայ-  
րագոյն դարձանացն ընկալցի մրցանակ: Զի զձեւ շարագրի ցուցա-  
նելով՝ իրբեւ հաւաստութեան լինել պատմող, եւ վիպասանութեամբ  
վարելով, անդր եւս քան զքերթողացն զանցանէ ստաբանութիւն<sup>20</sup>:  
Եւ զայլսն յուրվագոյն սորա պատիր պատմութիւնս ի վերջ հարկա-  
նելով թողցուր:

բ. Բայց զմիս՝ զոր համբաւէս, զԿանտուղէս թագաւոր լիդացոց  
լեալ, անցեալ պարագիտեսցուր: Վասն զի նա, ասէ, առաւել քան  
զարժանն յիրումն տարփէր ամուսնի, մինչ կարծել գերագոյն քան  
15 զբնաւ կանանց նորայն գեղեցկութիւն. եւ բաղձայր փափաքանօք, զի  
եւ այլք տարազգեստ ի հանդերձիցն տեսանեն զնէ. եւ այնպէս յան-  
գէտս, ասէ, աղէկարծումն ժամանակի մերկ զնէ իրումն մարտա-  
կցին ցուցանէր Գիւգեայ: Ընդ որ յետոյ զգացեալ զառականս կնոջն  
առնել իմն զրուցի զայրանայր ցասմամբ, եւ խորհուրդ ընդ տեսո-  
20 ղին ունելով, հրաման տայր, բայ, նմին, զի թէ ոչ զԿանտուղէսն  
սպանցէ՝ զայրն ներա, ինքն սրով վախճանեսցի: Եւ պատմէր, թէ  
նորա հաւանեալ թագուհոյն, նենգութեամբ զրժեալ սպանանէր  
զթագաւորն, եւ զկինն՝ կին առնէր, եւ զլիդացոցն յաջորդէր իշխա-  
նութիւն:

25 գ. Արդ որպէս նախաձայնեալս զեկուցաւ, լիդացոցն ասէ թա-  
գաւոր. այո այս արդեօք լիցի եղեալ, եւ յայլոց ոմանց ասացեալ  
քերթողաց: Բայց առաջիկայ բանս բոլորովին անյայտարար վեր-  
ջացեալ զեղանի, այնու որ զպատահմանցն տարփանսն առաւել քան  
զշափն յիւր կենակիցն ասաց ունել: Քանզի եւ տրփանացն զառա-  
30 ծումն ի մարդիկ եղեալ, բնաւորեցաւ իմն յայնսիկ յորդորել սաս-  
տկապէս, որք յանկարծաղէպ գեղեկակերպն հանդիպին երեսաց,

11 A ի om.  
18 Z(Z<sub>1</sub>)C լինին

22 Z(Z<sub>3</sub>) յամենայն

3 BEFH<sup>1</sup>IKM կրթութիւն  
8 Z<sub>2</sub>BEFH<sup>1</sup>IK հաստատութեան  
9 Z<sub>3</sub>I ստաբանութեամբ  
14 ABEPH<sup>1</sup>IK կարծեալ

16 Z(Z<sub>2</sub>)EHM գնա  
21 AI նորա  
22 IK թագուհոյ  
30 Z(Z<sub>2</sub>)I յորդորեալ



այլ ոչ եթէ ընդ որում բազմաժամանակեայն զուգեալ իցէ ամուսնութեամբ. որոյ յերկարութեամբ ժամանակին եւ սիրոյն նուազի յորդութիւն<sup>21</sup>:

5 դ. Տի՛նա եւ զոր սիրէն իսկ ոք, միշտ ի ծածուկ առ ինքեան պահէ. եւ զնորա հանոյսն հանապազ կամի սպասաւորելով կատարել յաղագս նորոգման եւ յաւելուած գթոյն առնելոյ, զի նովիմբ ուրախացեալ՝ խորին խաղաղութեամբ<sup>22</sup> զկենցաղս անցուացէ: Եւ ոչ եւս անհաւան հակառական վարեցեալ՝ հրապարակագոյժ ձազանօք թշնամութեանն ի մէջ արկանիցէ ատելութիւն. որոյ եւ մանաւանդ կանանց առանձինն մահուչափ է զմերկն յումբէ տեսանել, եւ յաւէտ վասն այնպիսի փառաւորեայն թագուհոյ<sup>23</sup>:

15 ե. Այլ եւ անկարելի եւս էր առն օտարի զմեծապատիւ դշխոյն, թէ եւ Կանտուղէսն կամէր, մերկ ի հանդերձիցն տեսանել, զայնչափ նախազգուշութեանց ի մէջ եղելոց<sup>24</sup>, եւ յառագաստափակ գահոյիցն, եւ ի բազմութենէ ջահիցն լուցելոց, եւ միանգամայն պահպանելով ներքինեաց եւ նաժշտաց յամրածածուկ սենեակս<sup>25</sup>: Յոյց թէ եւ ի մտերմագոյն ոք ի սպասաւորացն ի ժամուն յայնմիկ արտաքոյ հանդիպեցի, առանց հաւաստի հարցափորձանաց անհնար լիցի ի ներքս թողանիլ, թող թէ պատուականագունին եւ յոչ ի սպասաւորացն եղելոյ կարգի՝ ամենեւին իսկ անմտանիլի գոյ:

20 գ. Այլ զի՛նչ անյարմարագոյն առ ի լսել գեր զայն կացցէ, ընդ զուղնաքեայ յանցմանն այնչափ ի զայրացումն գալ ամուսնին, մտարերեալ սպանութեանցն թափել թոյնս, զպատճառն ինքեան դոյ<sup>26</sup> ամենեւին բարեփառ երջանկութեանն լինելոյ: Եւ ընդ որում համապատիւ թագաւորութեանն զուարճացեալ վայելչանայր, թողեալ զնա եւ այնմ զուգել զինքն յամուսնութիւն, զոր փոքր մի յառաջագոյն եւ տեսլեան արժանի արդեօք ոչ արարեալ, իբրեւ զգեղջուկ ոք եւ զյոյժ վարկանելով քամահիլի, թէ ոչ զի ստութեամբ լի զբանսն համարելի է զշարագրիս<sup>27</sup>:

30 եւ համանգամայն իսկ անվայելուչ զդրժելն Գիւգեայ իրում սիրելագոյն նիզիկակցին, որ միշտ համակամ ի պատերազմունսն էր, եւ վայելող ի բոլոր խրախալից խաղաղական ժամանակի: Իսկ զթագաւորութեանն յոժարելով ունել զգահ, ի բազում ինչ իրաց զընդդիմութեան եւ զառաւել անվայելութեան տեսանել է գործ:

35 Վասն զի յազգայնոց եւ ի գայեկաց թագաւորին, եւ յոքնախումբ

13 BCF Կանդուղէսն, Կ Կանտուղէսն

30 ABCEFHK<sub>2</sub>M Գուգեայ

26 Z(Z<sub>2</sub>)CEM զուգեալ

35 ZAEFK<sub>1</sub>M եւ ի յոքնախումբ

մարտիկ զօրականացն զժնդակագոյն եւ անջրելի քինու՝ խնդրեալ լինէր մահուն վրէժխնդրութիւն: Եւ կամ յաղագս հարազատաց թագին եւ վայելից տէրութեանն, եւ կամ արժանաւոր փոխանորդացն յաջորդելով զթագաւորութիւնն, ի մէջ մատուցեալ մահուչափ՝ բաւական բառնալով բազում հիքութեամբ նորայն լինէին անձին, առ ոչ զթագաւորութեանն թողացուցանել իշխանութիւն:

5

ը. Այսպէս եւ յովով քան զսոյն Հերոդոտայն ասացեալ պատմութիւն խուզեալ՝ աւարտի առասպելաբանութեամբ, որ ամենեւին զատեալ ի ճշմարտութենէն, եւ առիթ ամբարշտութեան մշտնջենաւոր իւրոցն լինի լսողաց: Յաղագս որոյ անօգուտ համարելով՝ արժան է զանարդարակ շարագրութիւնս եւ ոչ միայն հրաժարել ի կրթելոյ, այլ եւ մեծ միջոցաւ ի բաց ի նորայն որոշել լսելութենէ:

10

<3.> Եղծ գերակեայ<sup>28</sup>

15 ա. Զամենայն իսկ պատմութիւնս քերթողացն<sup>29</sup> պատճառ կորրստեան յիրաւի ոք թերեւ բաղբաղեցէ լինել, որք զպարզամիտսրն իրեանց առասպելական հնչմամբ յոյժ պատրեալ զդրուցուցանեն, եւ միանգամայն յամբարշտութեանն արկանեն ճանապարհ:

20 բ. Բայց առաւել որ ի մեծն տօնի զԵրակեայն համբաւեն՝ ի բազմախումբ գիշերոջն զտարօրէնութեանցն առնել խարդաւանս, անդր եւ ի վեր քան զբոլորն ասացեալ է ստութիւն: Վասն զի այս ոչ միայն յարդարակն ստերիւրէ պողոտայէ, այլ եւ յոքնաբեղուն եւ ի բիր մասն կախարդական շարեացն իբր մշտնջենաւոր կորրստեանն լինի առիթ լսողացն, այսպիսի բանիւր զրուցելով: ՅԱրկաղիա ուրեմն քաղաքի կացուրդ եղանել Աթենայ, եւ զնորին քրմուհի զոմն զԱւգէ՝ զԱլիայ դուտոր, պար անցանելով<sup>30</sup> ի գիշերապաշտամանն, բայ, Երակէս բռնադատէր եւ ի գիտութիւն ապականութեանն մատանի առ նմա թողեալ, առէ, անցեալ զնայր: Եւ զնէ, յղացեալ Աւգեայ ծնանելով զՏեղեփոս՝ առ յիրն կրից ընկալեալ զանունն<sup>31</sup>: Եւ հօրն զգացեալ զապականութիւնն բարկանայր յոյժ: Եւ զՏեղեփոսն գրեն ընկեցիկ առնել յանապատ, եւ անդ նմա եղին ստին ընծայել: Եւ զԱւգէ կամեցեալ անդնդասոյղ կորստեամբ բառնալ: Ընդ որ ճանապարհորդեալ Երակէս յայնժամ, գրէ թէ եւ ի մատա-

25 FHIKM զօգէ

31 Z(Z<sub>4</sub>)CFHIKM ընծայեալ, FIKM

27—28 EFHIKM Օղեայ

զօգէ. H զուգէ

28 ZIK<sub>2</sub> ի յիւրն



նույն ծանուցեալ առ ի յինքենէ գոյ զապականութիւնն գործեալ<sup>32</sup>.  
և յայնմանէ ապա զյւրմէն<sup>33</sup> ծնեալ համբակ ի վեր բառնայր<sup>34</sup> և  
զնէ ապրեցուցանէր ի մահուանէ վտանգիցն: Եւ համբաւեն եւս  
դարձեալ, ըստ հմայից Ապողոնեայ Տեւթրաս ի նմանէ զԱւգէ կին  
առնուլ<sup>35</sup> և զՏեղեփոսն՝ որդի:

5 գ. Արդ՝ որպէս ասէս, եղիցի ուրեմն յայտնի Արկադիա բազար:  
Բայց ընդ ո՞չց ալլոց ճշմարիտ պատմագրացն այսպիսի հռչակելի  
գործեալ իրք ընդ ժամանակաւ անկեալ հաստատեցաւ, ոչք զբոլոր  
կիրս անցից կենցաղոյս հաւաստի բնութեամբ յարմարեալ պատ-  
մեցին՝ զմիայնամարտութիւնս ի ցամաքի և զնաւակառուութեանցն  
10 ի ծովու, և զնոցունց յաղթութեանցն և զպարտութեանցն: Իսկ  
զայս ոչ արդեօք կարէին ընդ նշանաւոր ժամանակացոյց արկանել  
շարագրութեամբ<sup>36</sup>, թէ ոչ ամենեւին սխալանաց և անլանտութեան  
բերէ նշանակ:

15 գ. Տի՛նա, թող զայս, երկրորդս առաւել անհաւանութեանցն  
օնի ստաբանութիւն: Զիա՞րդ որ նա իրաւանցն փալլէր ուղղու-  
թեամբ, և պարկեշտացեալ ողջախոհութեամբն պայծառանայր,  
յայնպիսի մտաբերէր տարօրէն խառնակութիւնսն և կամ ի յօք-  
նաժողով յաշխարհագումար տօնին զԱթենայն կատարելով նուի-  
րական պարերգութիւնս: Ո՞չ ապաքէն աստանօր հաճոյանալ ար-  
20 ժան էր ի սրբարանին և ոչ զհակառակն՝ գործել պղծութիւն, մի զի  
ի բազմահաւաք դիւցազնական խմբեցելոցն զանգիտելի էր և եր-  
կրորդ անգամ յաստուածառաքն երկնշէլ բարկութենէ: Այլ անհաւա-  
նելի էր և կուսին լուսեամբ խաղաղանալ, որ ի տղայութենէ նու-  
իրեալ Աթենայ՝ զինքեանն պահէր սրբապէս կուսութիւն, և մա-  
25 նաւանդ զի առձեռնպատրաստն էր գուժի զեկուցանել պարերգա-  
կացն բազմութեան և նքբիմբք դիւրագերծ ի նորայն լինել բռնա-  
դատութենէ:

30 ե. Այլ թէ և հաւանէր եւս քրմուհին, յոյժ անկարելի իսկ նոցա  
և զանարժան խառնիցն էր կատարել հեշտութիւն, զի որպէս ի  
միջօրէի արեգականդ, ի ջահիցն և ի լապտերաց անթարուստ  
ստուերաւ ամենայնքն պայծառացեալ լինէին վայրք: Եւ մանաւանդ  
զի գլուխ պարուն միանգամայն և կատարող տօնին նէ լինելով,  
խօսել անգամ գաղտնիութեանցն և կամ ջսկ զուրուք ի՞բր առնոյր

1 BHIKM իմաստնոյն, փխ ի մատա-  
նւոյն  
5 ABCEFHK զՏեղափոսն, I Տեղափոսն

7 ACKM յալլոց  
27—28 Z(Z<sub>1</sub>)EH ի բռնագատութենէ  
30 BI կատարեալ

յանձն, յոր աչք ամենացուն յառեալ հայէին, թող թէ խայտառա-  
կանացն բերել յօժարութիւն:

5 զ. Դարձեալ և զնշանակ ձաղանացն առ նմա թողուլ այս կարի  
յոյժ յանանելեացն գոյ, և շամբուշ մտացեացն անգամ ելով,  
ինքամբ զինքեան յայտնել թշնամանս, թող զի իմաստնագունին և  
ամենեւին ոչ: Իսկ հօրն յայնքան բարկութիւն շարժեալ ամենեցուն  
յայտնի է, և ոչ որ անգիտանայ, զի անյարմարութեամբ և վրի-  
պանօք լցեալ է բանս զչեմեռանդն գուժ ծնողացն առ իւրեանցն  
ունել մանկունս. և վասն նոցին ազգի ազգի հնարիւք ջանան  
10 զգժուարինսն առնել դիւրինս, ալլ թէ և զանձինս եւս հասցէ ի  
վերայ դնել, յօժարամիտք լինին ի փրկութիւն: Եւ զի այս ալսպէս  
է, սմա ապա ո՞րպէս յարմարագոյն է ինքնաձեռն յիւրն լինելով  
որդիս, զոմն գազանաց ընկենուլ կուր, և զոմն ծովավէժ սատակ-  
մամբ բառնալ: Եւ կամ այն ինչ անհամբոյր վարագին զալ տղա-  
15 յոյն ի դիեցումն և մարթել մարդօրէն զանհաստատն խնամել, թէ  
ոչ զի անդէն և անդ վաղվաղակի կամ ի ցրտաշունչ սառնաման-  
եաց և կամ ի խոշակայեղց ջերմութենէ և կամ ի դժնդակ ինչ գա-  
զանաց և ի թունաւոր ճրճեաց սատակեալ լինէր:

է. Եւ եթէ այս անկարգ և արտաքոյ յարմարականին ասացեալ  
եղի, հետեւագոյնս ընդ անկոխ և ընդ ամենեւին անապատ երկիր  
20 Հերակլեայ՝ որպէս մոլեկանի ումբ ճանապարհորդելն<sup>37</sup> ո՞ւմ ոչ  
թուեսցի անվայելուչ: Զի ոչ յառաջգիտութեան ինչ ունէր ծանօթու-  
թիւն յաղագս զՏեղեփոսն բառնալոյ և ոչ սովորական ընդ այն  
վարել ուղեգնացութեան: Եւ թէպէտ ասացեալ ըստ անցից դիպուա-  
25 ծոյն արդեօք կալցի զտեղի, սակայն զամօթանացն յայտերեւակի  
գիտութեանն աներեւելիս պարտ էր առնել և ոչ հրապարակաղոյժ  
ինքեամբ զիւրն ի մէջ ածել կորանս: Եւ գլուխ առասպելաբանու-  
թեանս այս. քանզի սովորութիւն է վեհիցն<sup>38</sup> և անդ ըստ օրինա-  
գրեալ մարդկան, զպտոնկացեալսն և զբոլորովին անօրինեալս շա-  
30 րաշար տանջանօք բառնալ ի միջոյ և ոչ թէ նոցին հրամանօք բա-  
ղաբարնակ լինելով և կրկնաբախտիկ բախտի եղանել տուիչք:

ը. Այլ և սոյն պատմեալս և Տեւթրեայն իսկ յոյժ անօղտա-  
կարագոյն էր թագաւորին և երջանկութեամբ վայելչացելոյն խար-

5 B յայնեւելով Z(Z<sub>1</sub>)CK թող թէ  
9 ACEFHI մանկունսն  
14 Z<sub>1</sub>BCFHIK տղայնոյն  
15 Z<sub>2</sub>K մարդօրէն

16 ABCEF ցրտաշունչ  
23 ABCEFHM զՏեղափոսն



դաւանացն զուզել ամուսին եւ զնորին խոյզողութեանն<sup>39</sup> զարմ  
թագաւորութեանն ցուցանել ժառանգաւոր, որ նմա ի ներքնոցն  
միանգամայն եւ յարտաբնոցն զանբարգաւաճագոյնսն ի վերայ հա-  
նապազ հանդերձ պատկառանօք այլ եւ տալ շառագունանս:

5 թ. Իսկ պատմութիւն, որ այսգունակ ի սկզբանէ միշտ ի ծայր  
ստութեամբ է զանգեալ, եւ ամենեւին կախարդական պատրանօք եւ  
ոչ սուղ ինչ մասամբ զճշմարիտն կալաւ կարծիս ի սմանէ: Ապա  
ո՞ որ ոչ զժուարեալ ի բաց դարձուցանիցէ զդէմս եւ բնաւին հրա-  
ժարեալ, անյիշատակ զամբարշտութեանս առնիցէ բերս:

10 <4.> Եղծ զՄեղեայ<sup>40</sup>

ա. Զի թէ գոյր հնար յաղագս ստարանութեանցն զյաղթու-  
թեանն առնուլ մրցանակ եւ կամ աշխարհագոլութեամբ յաւէտ  
բարգաւաճել, յոյժ գերազանցեալ քան զամենեսեան Եւրպիդէս  
գտանէր ողբերգակ, որ ընդվզեալ ուռճանայր առասպելապատում  
15 ճառիւքն<sup>41</sup> գեր զբազումս ի հոյսս բերթողական պարուցն:

բ. Բայց առաւել որ զՄեղեայս պատմէ, անդր եւ ծայրացեալ  
սաստկանայ ստարանութեամբ: Զի զսէ ասէ ի Սկիւթական գաւառ-  
էն նաւել<sup>42</sup> զհետ Յասոնայ ուրումն եւ գալ ի Թէտալիա անդ ի գործ  
20 զկախարդականն արկանէր արուեստ: Եւ զթագաւորն, որ տիրէր  
գաւառին, դաւաճանութեամբ մտածէր կորուսանել, եւ զգտերսն  
հաւանեցուցեալ յաղագս հօրն զառամեութեան, զի ոչ ունի ասէ  
արու զարմ, որ զհայրենեանն յաջորդեալ ժառանգիցէ իշխանութիւն,  
«արդ, եթէ կամիրք, բայ, կարող եմ ես զնա ըստ հասակի մանկա-  
գոյն եւ նորոգապէս ձեզ ցուցանել»: Եւ զայս խօսելով՝ անդէն եւ  
25 անդ պատմէ տարացուցիւ յայտնել նոցա զգործոյն հանգամանս.  
Եւ առեալ խոյ մի յօշեալ ամանայր ի սան, եւ, զ'առ ի կերբոյն  
բորբոքէր հուր<sup>43</sup> եւ յեռանդանէն ի միջոյ սանին խլրտեալ զխոյն  
ցուցանէր իբր զկենդանի. եւ այնու պատրեալ՝ յօշէր զՊէլիաս, եւ  
30 «էր ի սանին» ասէ, եւ աւելի ինչ ոչ:

գ. Արդ՝ նախ եւ առաջին պատմութեանս սկիզբն իսկ բոլորո-  
վին զանյայտութեանն ցուցանէ բան: Վասն զի թէպէտ եւ ի մէջ  
բերիցէ զտեղին հանդերձ թագաւորան, այլ զի ոչ ընդ ժամանակաւ՝

ի Սկիւթացուց գաւառէն զնաւագնացիկն ճանապարհորդութիւն Մե-  
ղեայ արտաբերեալ յայտնեաց, աստանօր հայեալ աներեւութանայ:  
Բայց թէ եւ այլոց ոմանց սոյն ճառեցաւ բերթողաց, սակայն մեք  
առանց բննելոյ ոչ հարեանցի թողցուք. բայց արդարեւ այսպէս  
5 խուզելով եւ ի նոցանէն զժամանակին պահանջեսցուք զհաւաստու-  
թիւն. ուստի ինձ թուի թէ ոչինչ կարեն յայտնի ցուցանել, ոչ զնա-  
ւելն անդր, եւ ոչ զգործեցեալ իրն: Ի գա՛լն արդեօք կատարեաց  
զշարագործութեանցն պատրաստութիւն, եթէ տարրացեալ ընտելու-  
թեամբ եւ երկայն աւուրբք զգաւողականն յարագրեաց խորհորդ-  
այս եւ ոչ մի ինչ յայտնեացն գոլ ցուցանելով առաջիկայ անհա-  
ւանութեամբն:

դ. Քանզի նէ, որ սրովն եւ այլովք պատերազմական գործեօք ոչ  
կարէր համարձակութիւն բերել զվրիժակն ընձեռելով խողխողումն,  
զիա՞րդ համարձակէր զկախարդականն ի գործ արկանել արուեստս  
15 եւ կամ իշխել իբրու ի գուգնաքեայ ինչ մտաբերել գործ. որում բա-  
զում երկիւղք հանդերձեալ էին զպատկառանացն ածել յապահո-  
վանս եւ ոչ եթէ զթշուառահասոյցն անձամբ անձին յօրինել տան-  
ջանօք լի սատակումն, զոր ի թագաւորէն էր ընդունելոց: Եւ մանա-  
ւանդ՝ յաղագս որոյ եւ գիւթութեանցն աղէտք շարեաց յորժամ գամ  
20 մի ի վեր եկեալք ըմբռնեսցին ի վեհիցն ումեթէ<sup>44</sup> գոգցես իբր ի  
յաւէտ բարկութիւն ածելով զնոսա զանհնարին շարաշար մահու-  
անցն վրէժս զինուն հատուցանել ի վերայ նոցա, եւս բազմապատիկ  
բան զմահապարտացն եւ զայնոցիկ, որ միշտ շարութեամբն է կե-  
ցեալ: Իսկ նէ, զի զայսոսիկ գիտելով ի՞բր ապա եւ կամ որո՞վ իբօք  
25 ինքնաձեռն լինելով, յայնպիսի շարագործութիւնս յանդգնեալ բերէր  
բաջալերութիւնս. կարծեմ եւ ոչ բնաւ իսկ:

ե. Տի՛նա, թէ եւ արկանէր եւս ի կիր զխաբէութիւնն, թերեւս  
առ անտեղեակս ոմանս, եւ կամ առ բարբարոսս արդեօք էր կարո-  
ղութիւն՝ անտար վրիժագործութիւն: Բայց ոչ առ ստոյգ հելլենա-  
ցիսն եւ յոյժ հրահանգեալսն, որք իմաստութեամբն աուցեալք լի-  
նին ամենահնարն գիտութեամբ գրեթէ եւ բոլորեքեան իսկ, բայց  
մանաւանդ մանկունք թագաւորացն, եւ հարկաւորաբար ահա զմե-  
ծագոյն խոհականութեան բերեն իմն յինքեանս նսն՝

զ. Այլ ի վերայ այնորիկ ախմարագոյն յիմարութեան եւ խոյին

1 Z5 ABCIK խոյ՝ գողութեան  
8-9 ABCEHI2K1 հրաժարել  
18 AEFHKM Յասոնայ

19 ZB արուեստս  
21 Z2E հաւանեցուցանել

14 ZH արուեստ  
17 BEI յօրինեալ

20 AEIM իբրեւ



5 գոլ տարացոյց առ իրն աննման, որ այս եւ ոչ գոյզն ինչ կալցի  
 գյարմարութիւն: Վասն զի թէ նմանեալ իւրք գործեցեալ լինէին  
 կախարգութեանցն իրք, արդեօք պատրեալ հաւանէին, բայց ան-  
 բանիւն՝ որ զինչ ինչ զճշմարտութեանցն յարդարէր օրինակ առ  
 10 մեծապատիւ թագաւորն: Ո՞ր որ էր, որ յայն մտաբերէր անհամբոյր  
 շարութիւն եւ զօրէր զօտարացն անգամ տեսանել զիշատեալ զմար-  
 մինն, թող թէ զիւրն զծնողի՝ ըստ բնական սովորութեան զթոյն,  
 զյոյժ զսոսկալի եւ զգծուարագէպն՝ իբր զհեշտալի առաջի զհայրս-  
 նեանն անդամոցն տեսանեն շարաշար կոտորումն եւ անխնայարար  
 յանձանօթին մատնեալ ձեռս:

15 է. Այլ զի ստութեամբ լի բանս է եւ մեծագոյն մոլորութեամբ,  
 յանվայելչական յանկի գլուխ այսուիկ եւս, զի եւ նորա լիցին ըստ  
 կանացի եւ կնատ բնութեանն զիրաշարժք եւ երագափոփոխք ի  
 պատրանսն լինել: Սակայն առոյգ եւ ողջամիտ ծերունին հնագի-  
 տագոյն իմաստութեամբն ոչ երբէք եւս եւ շնելոյ զայս անհարժան  
 համարէր, այլ գործով իրացն հանդիպել եւ ամենեւին իսկ օտար:

20 ր. Եւ արդ զի անօգտակարագոյն ի սկսմանէ մինչեւ ի ծայր  
 ներիպիղեայս ասացեալ եղև առասպելարանութիւն<sup>45</sup> եւ ինքն ըստ  
 ինքեան ստութեամբ լի եւ յոյժ պատճառք վնասակարութեան կըր-  
 թողացն են եւ կորուստ: Ապա փութալի համարեցուք հեռանալ  
 յամբարշտեալ սուտ բանիցն, եւ բոլորովին ի բանաստեղծականն  
 հրածարել պատմութեանց:

12 ABCEFHIM յանդի

<ԳԻՐՔ IV>

ՍԱՀՄԱՆ ՀԱՍՍՐԱԿ ՏԵՂԻՈՅ

5 Հասարակ է տեղի բան աճեցական էից բարեաց կամ շար-  
 եաց<sup>1</sup>: Եւ ասացեալ է այսպէս վասն հասարակ ամենեցուն յարմար-  
 եւոյ, որ հաղորդին<sup>2</sup> նմին իրաց: Քանզի որ սեղանակապտին է<sup>3</sup>  
 բան, ոչ միումն յարմարի եւ միւսումն՝ ոչ, այլ նմանապէս որք  
 զնոյնս յանցանեն, պատշաճի<sup>4</sup>: Կրկնարանութեան իմն նմանեալ է  
 եւ յորդորական բանի կա<sup>4</sup>: Յաղագս որոյ յառաջարան տեղի<sup>5</sup> ոչ ունի,  
 այլ զյառաջբանին ստեղծանեմք զօրինակս հրահանգիցն աղա-  
 դաւ առ մանկունս:

10 Արդ դասեցես<sup>6</sup> տառ յառաջբանական մտածութեանցն<sup>7</sup> յընդ-  
 դիմակէն նախ առաջին գլուխ<sup>8</sup>: Եւ ապա զնոյն ինքն զիրին արտա-  
 դրութիւն<sup>9</sup>, ոչ իբր ուսուցանելով, այլ իբր զայրացուցանելով զսող-  
 սրն: Ապա բաղդատեցես<sup>10</sup> զմերձակայ իրն առ այլ ինչ մեծ եւ կամ  
 15 նուազ<sup>11</sup>: Յետ այնորիկ զիցես զբարսն: Եւ զկնի այնորիկ՝ զար-  
 տելութիւնն զանցեալ զկեանսն բամբասեցելոյն ըստգտանելով:  
 Ապա ողորմութեան ի բաց հանումն: Եւ փակեցես զբանն կատա-  
 րելական գլխով<sup>12</sup> իրաւացեան եւ օգտակարան, եւ կարողան<sup>13</sup>:

<1. > Յաղագս շան<sup>14</sup>

20 ա. Բաղում ցանկալի կրօնիւք որոշեալ ազգ մարդկան յանաս-  
 նական սեռից; ո՞վ աղջախոհ՝ բննիչ<sup>15</sup>. Եւ մանաւանդ երկուք օգտա-

1 N<sub>4</sub>N<sub>7</sub>N<sub>8</sub>J հասարակաց

2 N է օտ.

4 HN<sub>2</sub> սեղանակապտին

10 MN<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>N<sub>7</sub>N<sub>8</sub> գատեցէ, բոլորք՝  
 գատեցէ

12 Z(Z<sub>1</sub>) իբր II օտ., N<sub>4</sub>J գլուխն

13 ZABCEFGHIKMN բաղդատեցէ

14 բոլորք (բացի Z<sub>5</sub>ին)՝ նմանող

15 J զկեանս

18 Z<sub>2</sub>K շնացողաց



կար իրօքս այսօրիւր. նախ առաջին՝ բանիւ, որով նմանահասար  
վեհիւն<sup>16</sup> տիրեմբ հողածին կենդանեաց, եւ երկրորդ՝ ամուսնական  
կարգաւորութեամբ, որ ոստ բարուցն կամաց զաճումն ազգիս  
զործէ: Ուստի յայտ է, թէ մինչ այս ամեթ եւ զետեղ պահեսցի  
5 կարգ, ամենազան բարեփառութիւն յաշխարհս յորդեալ զեղցի, եւ  
մանաւանդ մարդկանս տեսակի շարատեւ անմահութիւն: Իսկ եթէ  
այս ի միջոյ ի բաց բարձեալ՝ անասնականն շահեսցէ անկարգ  
խառնակութիւն, անդէն վաղվաղակի նմին հետեւեսցի ամենաշար  
վատարախտութիւն: Բայց առաւել եւս անտար խոռվութիւնք պա-  
10 տերազմական աղիտից շահեսցեն, որով համանգամայն մարդկանս  
ազն ի միջոյ ի բաց բարձցի: Արդ զայս գիտակցեալ՝ բարեխոհ  
նախնիքն հոգ խնամոյ վերակացութեան այսմ փորձեցան տանել եւ  
յարմարական կանոնաւ զօրէնս ամուսնութեանն փութացան կազ-  
մել. զի զկարգս դասու առ միմեանս անշփոթ ազն մարդկան կալ-  
15 ցին, եւ անցնիւր այր զիրոյ ամուսնին զաշն ամբողջ եւ հաստատուն  
պահեսցէ, եւ կինն նուիրեալ իւրում առն՝ պարապեսցէ զարժանա-  
ւոր պարտ սիրոյն հատուցանել. եւ ի ձեռն երկոցուն համակամ  
մտերմութեան կենընծայ բոլորափառութեան ամենեցուն պատա-  
հեսցէ: Որով կրօնիւր եւ վարեցեալ իսկ ազգ մարդկան անդուտ  
20 մինչեւ ցայժմ բազմամարդութիւ՛, ազգիս դիպեցաւ եւ զեղեցկակար-  
գութիւն քաղաքաց, տանց մեծափարթամ շինութիւն եւ մանկանց  
բարեսնութիւն գրգահաց, ծերոց քաջատածութիւն եւ առ միմեանս  
սիրայեղց խաղաղութիւն ազգաց, վեհավայր տաճարաց ըղձակերտ  
շինութիւն եւ վեհիցն<sup>17</sup> արժանաւոր բարեբանութիւն պաշտամանց  
25 եւ այլ եւս սոցուն հոմասեր բարեդիպութիւնք, որպէս եւ տեսանէք  
իսկ ամենայնիւ քաջազուարճ ծաղկեալ զազգս:

Ի. Որում համբարտակ այս շարառ եւ անխուզ պակշտեալս  
այր փութացաւ կանգնել զցանկութիւնս իւր եւ բաղձացաւ պղծել  
զնուիրեալ սուրբ անկողինս<sup>18</sup> ընկերի իւրոյ եւ զզաշն սիրելի հա-  
30 րազատ ամուսնութեան ի բաց քակեալ: Վասն որոյ բազմապաճոյճ  
զարդարանօք պճնեալ զինքն՝ ակնախտիղ կազմեաց որոզայթ, եւ  
լրբենի երեսօք խնձղանաց եւ լկտի խեղկատակութեամբ՝ յողացաւ  
զերել զմիտս կնոջն: եւ մեծակաշառ կապինօք եւ զինբրբու հաց-

7 Z (Z<sub>1</sub>) շահեսցի  
10 ZF1 աղետից  
14 Z1 զկարգս

23 Z(Z<sub>3</sub>)H եղձակերտ  
25 Z<sub>1</sub>IK<sub>2</sub> համասեր  
33 Z<sub>2</sub>AEI գինեբրուաց կերութեամբ

կերութեամբ կախարդեալ հեշտացոյց<sup>19</sup>, մինչ կարաց զրուն հարա-  
զատ ամուսնին սէր ի բաց խզել եւ զյեղարն յինքն գրաւել: Եւ ապա  
առնասնական յարձակմամբ դիմէր կատարել զհեշտ ցանկութիւն  
պղծալից գործոյն: Ոչ զերկիւղ նախանձայոյզ քինու սեղեխապա-  
5 նութեան առնն յիշեցեալ, եւ զամօթ լուտալի ձաղանաց հասարա-  
կիս, եւ ոչ զձեր իրաւացի օրինացդ դատաստան, այլ զամենայն  
բամահարար ի բաց առընկեցեալ՝ դարանէր յայնժամ զպղծու-  
թիւնսն կատարել: Էր զի ի տար աշխարհի գտեալ զայրն, զարարսն  
փաղաղէր, եւ զշար գործն յաճախէր. եւ էր զի ամայի դտունն ի  
10 տնտեսութենէ թողեալ՝ զատուցանէր զկինն ի գործս խառնակու-  
թեանն. եւ այսպէս պակշտոտ խելագարութեամբ սրարբեցուցեալ<sup>20</sup>  
ձգէր կինն չիւրն գերեալ ի բուն առնէն:

գ. Իսկ եթէ որ զոչն ստացուածոց ընկերին խորող փորձեցաւ  
լինել գող՝ առ ի զկարօտութիւն աղցաւոր պիտոյից անձինն լցուցա-  
15 նել, որ թերեւ. ոչ այնչափ ինչ ի բարկութիւն ձգէ զզրկեալն, որչափ  
ի յարգահատանս զթոյ կարեկցութեան, ձեր արդարակորով իրա-  
ւունքդ ոչ տան թոյլ աստուտ անբաղայս անցանել գնալ, այլ ար-  
գարակ ըստ գործոյն՝ բերեն ի վերայ զհատուցումն դատաստանի:  
Իսկ այս պակասամիտ շնացող, որ գեր ի վերոյ ունի զամբաս-  
20 տանութեանս բան, զիա՞րդ վրիպեսցէ տանել զարժանի գործոցն  
հատուցումն: Որ ոչ զինչս ուրուք ձրձեաց առ ի լրումն կարօտու-  
թեան, այլ զամուսնութիւն նախանձայոյզ առն կաշկանդեաց առ  
վաւաշունչս գիտութեան, որում հետեւի եւ փարթամութեան ընչից  
տանն դերեւումն:

գ. Եւ զայս ոչ ի յանկարծաղէպ իրաց պատահեալ կրեաց, թէ  
ունիցի թողութիւն, որպէս զէպ լինի ի գինեաց եւ կամ յայլոց պա-  
տահից յակամայ. գալ յիրս սխալանաց, եւ ոչ ի բնութենէ հեշտ  
ցանկութեանց պատրեալ՝ շունելով եղար, իւ զբոց բաղձիցն ցա-  
30 ծուսցէ, քանզի զայս. ահա ի վաղնջուցն իսկ նախահոգացեալ ծնող-  
քրն յարմարեցին ըստ աշխարհի: Այլ կամաւոր բարուք իորհրդոց  
յայս միտեալ վարեցաւ ճակաճանութիւն, եւ զմարդկային յարմա-  
րական ամուսնութեան կարգ խոկացաւ իջուցանել յանասնական  
անկարգ խառնակութիւն եւ ընդդէմ վեհիւն<sup>21</sup> եւ մարդկան կամաց  
զիւր շար խորհուրդս կանգնեաց համբարտակ: Որում ժամանակ ի  
35 զէպ գտեալ զառաջարկութիւն փորձեցաւ գործով կատարել, անջա-

12 Z զկինն ձգէր  
17 AEI անբաղայ

34 Z<sub>1</sub>EI յորում, Z<sub>1</sub>AEFHIM ժամա-  
նակի զէպ



տելով դամուսնութիւն այլոյ ի լրումն իրոյ շար ցանկութեանն կամաց:

5 Ե. Ուստի յայտ է, թէ ոչ այս եւ եթ է սկիզբն շարագործութեան գորա, այլ յառաջագոյն թուի բազումս կատարել<sup>21</sup> անիրաւութիւնս, զրկութիւնս, գողութիւնս, սպանութիւնս, կախարդութիւնս եւ զայլ եւս վատթարութեան տեսակս, յորմէ բոլորն բազկանայ: Քանզի եթէ ոչ էր ընդելակրթեալ անզուստ մինչեւ ցայժմ ընդ տեսակս շարութեան, ոչ ոսն առեալ արդեօք գայր յայս ծայրագոյն մեղանաց գործ:

10 Դ. Իսկ եթէ ոչ ի միում ժամանակի փոյթ տարաւ մի ինչ իրաւացի կարգաց, այլ շարախտական ղեղով մեղանաց վարեցաւ ի վնաս անձին եւ հասարակիս, վասն սորա պարտ ի՞նչ իցէ յողորմութիւն գալ, եւ զիրաւացիին զընկենուլ դատաստան. զոր քաւ եւ մի լիցի ողջախոհաց ի ճակաճանիս հայելով ի դէմս գլել ի գութ: Որ յառաջ զկինն պատրեաց լրբենի երեսաց խնծղալից հայեցուածովք, եւ այժմ զձեզ փորձի կախարդել արտօսրահոս ողորմելի գեղձմամբք, եւ զմի եւ զնոյն զգայութիւն կեղծաւորեալ՝ երկուց կազմէ որոգայթ: Զոր ոչ այժմ միայն, այլ վաղադոյն կրթեալ է չիրոց կորանմանիցն, զի յարգարուն զշար կամաց առաջարկութիւն զիրաւ կարասցէ կատարել, եւ յանձեւութեանս<sup>22</sup> այլու ձեւով որսասցի ի ձէնջ զփրկութիւն:

25 Է. Այլ դուք զյառաջու գորա զգործեցեալսն յիշեցէք, զառն զրկանսն ի սիրելի ամուսնոյն, զտանն ի բարեփառութենէն զգերելումն, զծերոց եւ զմանկանց անտաժութիւն, զհասարակիս վնաս, զօրինացն՝ քամահանս<sup>23</sup> եւ զայլ ամենայն զժնդակութիւնս, զոր նախաձայնեցաք յառաջագոյն. եւ սմա զարդարակ հատուցէք վարկ յայսմ իրաւագարդ կաճառի, զի կշիռ զիրոյ սերմանցն՝ բերս ըմբոշխնեցէ պտուղ՝ զմահ: Եւ զանգիտելի ինչ ոչ է յայս վճիռ գլել զդատաստանդ, այլ յաւէտ քաջալերելի, քանզի ոչ նորագոյն անիրաւութեան սկիզբն առնէք այժմ, այլ վաղուց կարգեցելոց իրաւացի օրինաց արբանեակր լինիք: Քանզի եւ օրէնք իսկ զայս հրամայեալ քարոզեցին՝ շարաց դատաստան, եւ նախախնամող օրինատուն սոյն այս է հաճոյ՝ խզել զշարս եւ հասարակս զսոյն սիրէ հանապազ կատարեալ դատաստան:

35 Ը. Եւ ձեզ անխէթ ի սոյն պարտ է յառնել վրէժխնդիր սրովդ

15 Z(Z<sub>1</sub>) խարեաց փխ պատրեաց  
19 ZCEF կամացն

21 Z(Z<sub>1</sub>)K փրկութիւն  
28 BE այս

իշխանութեան, զի խոշորել զշարս ոչ մարդասպանութեան գործ է, այլ իրրեւ զշարութիւն բառնալով՝ մարդասէր օգնականութեան: Իսկ օգտակար խնամք մարդկան ո՞ւմ հաւատացան ի վեհէն<sup>24</sup>, քան թէ ձեզ, որք մշականմանք՝ վնասակարացն յապաւողք կարգեցայք եւ օգտակարացն, օգնականք: Ուստի յայտ է, թէ զմիոյ շարիս ապականութիւն պարտ է ի յօգուտ բոլորիս մատուցանել, զի ամենայն արք եւ կանայք խրատեալք ա՛հիւ տանջանացն սորա՝ միտս ստասցին, եւ զիրաքանչիւր անկողինս ամուսնութեանն սրբազան եւ ամբողջ պահեսցեն, որ զբարեգիպութեան մրցանակ հասարակիս բերեալ մատուցէ, զաշխարհավար կանոն՝ անյեղ եւ հաստատուն պահեսցէ:

10 Թ. Եւ այսմ օգտակար իրաց առիթ լինել՝ վեհանմանիցդ քաջ կարելի է: Քանզի ոչ իբրեւ զայլ բոլորս անկարս լսող եւ եթ անցեալ նստիք, այլ կարող ունիք զօրութիւն արդարակ կշռով ըստ անցնիւր գործոց հատուցանել դատաստան<sup>25</sup>: Քանզի յայդ իսկ կանխեալ ածէք զսուր երկսայրի իշխանութեանդ ընդ մէջ<sup>26</sup>, զի առ երկուց կողմանց պէտս կամակարս ի վար արկանիցէք՝ զանբժշկելի շարացն զարմատս կենացն տակակոտորս առնելով եւ զհասարակիս աւելորդ յարձակմունս յապաւելով: Վասն որոյ ժամ է յայտհետեւ զահազին սուրդ ձգել ի խզումն շարիս կենաց եւ ձեզ զմրցանակ արդարագատութեան ընդունել յայս իրաւագարդ կաճառի յերկակ հաւասարապէս կողմանց՝ ի մարդկանէ միանգամայն եւ յամենցունցն թագաւորէ Աստուծոյ<sup>27</sup>:

<2.> Յաղագս բժշկի, որ մահու դեղս տայ<sup>28</sup>

25 Թ. Ոչ անախտ եւ անկարօտ բնութեան կենաց պատահեաց մահկանացու բանաւորացս ազն զօրէն անմահիցն, ո՞վ քաջդ խոհեմք<sup>29</sup>, այլ զանազան կարեօք պատանդեցաւ, եւ ամենայն աղցաւոր պիտոյից ցուցաւ կարօտեալ քան զբնաւ կենդանիս ստորաբնակս կենցաղում: Վասն որոյ պէտք եղեն սմա զանազան արուեստից, ի զկենացն հայթայթեցէ հնարս ի տելումն կենդանութեան: Բայց քան զամենայն պիտանացու արուեստս, ոչք ըստ կենացն եւ ըստ ըղձալի կենաց վայելչութիւնս մատուցանեն կենցաղոյս, քաջապէս

5 E1, եթէ  
6 Z<sub>1</sub>իւ ի om.  
20 K խուղումն

24 M զբժ. որ մահացու դեղ տայ  
29 EGI արհեստից



յարմարի յօգուտս մարդկան բժշկութեանցն շահ: Վասն զի ոչ զօրէն  
այլոցն յառողջութեան ժամանակին միայն ընծայեալ մատուցանէ  
զօգնականութիւնս, այլեւ յորժամ արհեստիցն պէտք տկարացեալ  
մնան յօգնելն, յանժամ սա ի շարաշար ախտիցն հասեալ գործէ  
5 փրկութիւն եւ արժարժելով յառողջութիւն, երկայնակեցութեան  
պարգեւօք պսակէ զկենդանին: Վասն որոյ ծանուցեալ հանճարասէր  
մարդկան զկենացս արհեստից զպտուղ, ամենայն ուժով փորձեցին  
զայս նախախնամութիւն պանծացուցանել յաշխարհի, զի ունիցին  
ամուր ապաստանի նեղեալքն ի զանազան ախտիցն: Ուստի մեծաւ  
10 այցելութեամբ զամենայն պէտս բժշկութեան փութացան անկարօտ  
պատրաստել՝ զտեղիս բնակութեան բժշկացն յարուցանելով եւ  
զհանճարեղ հմտագոյն մարդիկ ընտրեալ զինուորելով ի բժշկութիւն  
եւ առատապէս անոնօք փարթամացուցանել զկարգեալ բուժիչսն,  
զի բաւական ունիցին ինչս առ ի պէտս պատրաստութեան զեղոց եւ  
15 սպեղանեաց եւ այլոց ծախից եւ բեկելոցն առողջութիւն մատուցա-  
նեն եւ խզեալ մարմնոց սինձ յարմարութեան լիցին: Եւ համայն  
այս արհեստ արդարեւ իսկ իրր ծառ կենաց տնկեցաւ ի մէջ մարդ-  
կանս ազին, եւ մատուցանելով զպտուղ իւր ի ճաշակումն ամենայն  
վտանգելոց՝ յախտէ զրաւեցոյց, եւ մերձեցեալ կենդանացոյց, որ-  
20 պէս տեսանէք իսկ ի վաղնջուց մինչեւ ցայժմ ցուցիւ կատարեալ  
զասացելոց բանիցս բեղունս:

բ. Զոր փրկութիւն փորձեցաւ շիջուցանել այս շարամիտ եւ մա-  
հաշունչ այր՝ զհակառակն գործելով: Որ քաջապէս հրահանգեցաւ,  
որպէս գիտէք, ըստ ասկղիպիդեայցն<sup>30</sup> զբժշկութիւն, թերեւս ոչ  
25 վասն կարեկից ցաւազնելոցն լինել՝ բուժելով լախտից. այլ զի  
զհակառակն դիրուս մատուցէ, խանդալով ընդ առողջութիւնս:  
Վասն որոյ ընկալեալ զայր քաղաքացի առատաբեր ընծայիւք եւ  
պաղատանօք հանգերձ, որ մեծապէս թախանձէր ողորմելի ձեռով  
վասն անձին փրկութեան: Որում ոչ ընծայիւքն կաշառեալ աշառե-  
ցաւ, եւ ոչ ի բնութեանն կարեկցութիւն խանտաղատեալ խոնար-  
30 հեցաւ, ոչ յարարողէն զարհուրեալ գողացաւ, եւ ոչ ի վրէժխնդիրս  
վայրէ պատկառեալ ակնածեաց: Այլ անբասքնելի բարուք առընկե-  
ցեալ զամենայն, արբոյց փոխանակ կենսականի զմահաշունչն զեղ,

7 K արուեստից  
13 Z, AEI կանոնօք  
17 Z արուեստ, Z(Z)C դժառ  
18 AEG ազինս

21 ZCEF գրեղունս  
33 AE կեանս ականի, I կեանս ան-  
կանի

զոր ոչ կարէ ուրանալ, այլ զօրէն հրոյ մտեալ փաղաղէր զբոլոր  
բնութիւնն<sup>31</sup> բերքելով շարաշար զմարդն ի կենցաղոյս: Եւ զայս  
ահագինս գործելով ամենապիղծող անձն, անյուշ առնէր ի մտաց  
զայլուոյն եւ զորբոցն սուգ անհնարին ողբոց, եւ զամայութիւն  
5 տանն, եւ զանտաժութիւն ընտանեացն ամենեցուն:

գ. Իսկ այսպիսի անագորոյն ապականչի պատահել նմանապէս  
անարգահատելի ձեռով արութիւն է, եւ անսալ՝ անարութիւն: Քանզի  
եթէ որ մեկին ունէր զամբաստանութեանն բան՝ սպանող, որ թեր-  
եւս հարստահարեալ զրկեցաւ ինչ յընկերէն, եւ վարեցաւ որսիւք ի  
10 վրէժս, յայս ահագին ձգեալ վայր ձերոյ սաստիկ հրամանօք՝ ոչ  
կարաց ողջանդամ աստուտ ճողոպրել, այլ տարաւ փոխանակ  
խողխողմանն զնոյն ինքն հատուցումն վրիժուց: Իսկ այս արիւ-  
նախանձ վիրագ կրկին ամբաստանութեան պարտական, որ փո-  
խանակ առողջական դեղոյ՝ հիւանդականօքն վարեցաւ անյագ, եւ  
15 փոխանակ կենաց՝ մահու ցուցաւ պատճառ<sup>32</sup>, զիա՞րդ վրիպեցէ  
յընդունելոյ զիրոյ գործոցն արժանի հատուցումն:

դ. Եւ մանաւանդ զի ոչ որպէս պատահէ բժշկաց, ակամայ ան-  
գիտութեամբ գործեաց մահ, թէ տարցի զներումն. եւ ոչ յընչից  
զրկեալ՝ շընդունելով յառաջագոյն զբժշկութեանն վարձուց սակ, եւ  
20 ոչ յայլ ինչ մեծ կամ փոքր պատճառէ թշնամութեան յաղթեալ  
հարկեցաւ զալ յայս անյուր շարութիւն: Այլ միայն ի շարախորժակ  
սրտին եղեալ խանդալով ընդ համատոհմիցս կենդանասեր բազմա-  
մարդութիւն, զորս միշտ բաղձիւք խոկացաւ յընդդէմսն իջուցանել,  
թէ էր օգնեալ կարողութիւնն. վասն որոյ պատեհ գտեալ ժամանակ  
25 զառաջարկութիւն խորհրդոյն գործով կատարել, առ որ կարացն՝  
փորձեցաւ:

ե. Ուստի յայտնապէս ճանաչի հանճարեղաց, ոչ այս վիրագու-  
թիւն սկիզբն շարագործութեանց զորս, այլ յանցելոցն երեւի ապա-  
կանացու վարուց ախորժակօք անյագ վարեցեալ: Զբազում հիւան-  
դաց հոյս յանխնայ զրաւելով տմարդի բարուք անտեսութեան եւ  
30 երբեմն շարաշար դեղովք վարեցեալ ի ծածուկ դրժեալ կորոյս  
արգեօք զյորունսն, այլ բազում անգամ թերեւս խեղդիւք եւ հեղ-  
ձուցմամբք բերքեաց զանթիւս ի կենցաղոյս<sup>33</sup>: Քանզի թէ ոչ էր  
հանապազ ընտելակրթեալ ընդ ասացեալսն ամբարշտութիւն եւ ընդ

24 EG օգնել  
25 AEG կատարեալ



այլ բազում համանման սոցա, ոչ արդեօք կարէր կատարել գառա-  
չիկայ ամբաստանութեանս վճարումն:

գ. Իսկ եթէ միշտ անագորոշն բարուք յապականութիւն համա-  
տոհմիցս յողացաւ եւ ի փրկութիւն ոչ երբէք, պատշաճագոյն է բո-  
լորից անողորմ բարուք զսորա շարաշար զբաւումն փափագանօք  
տեսանել եւ ոչ յաղթիլ զթով կարեկցութեան կեղծաւորեալդ անձին,  
որ զբնութիւնն եղկելի ձեռով ուսման փորձի ի փրկութիւն իւր պատ-  
րաստել: Բայց դուք մի զայժմու կերպարանդ, այլ զառաջու գործե-  
ցեալսն նկատեալ յիշեցէք, դանմեղ առնն շարաշար մահու վախ-  
ճանն, զորոյ անտես արար զթախանձանս, այրոյն եւ զորբոց ցան-  
հնարին հառաչանս սգոյ թափառանաց<sup>34</sup>, զբազում տանցն ամաշու-  
թիւն, զոր սա հասոյց կոտորելով զժառանգան, եւ զբամահանսն որ  
ի վեհն<sup>35</sup> եւ ի համասերսդ եւ ի բնութեան կարիս արար: Եւ մի սմա  
լստ ձեռոյդ, այլ ըստ գործոյն բերէք ի վերայ զվճիռ գատաստանի,  
զի մի արգահատելով զողորմածացն անկս, այլ անողորմութեամբն  
զիւրն տարցի վճիռ:

է. Այլ քաջապէս եւ զայս զականեցէք հզօրքդ, զի իրաւացի  
օրինաց վարիչք լինել ոչ պարսաւանս բերէ, այլ գովութիւն: Եւ դուք  
ոչ նորագործ իրաց մարդասպանութեան հաւակ լինիք այժմ, թէ  
կասկածէք, այլ հին օրինաց սովորութեան հետեւիք, որում ամենե-  
բեան հմուտ են, զոր եւ վեհն<sup>35</sup> իսկ ի սկսմանէ աշխարհի օրինա-  
դրեաց կանոն<sup>36</sup>, շարագործաց հատուցանել զնոյն հատուցումն: Եւ  
քաջ բարգաւաճեալ բունք այս կանոնաւ փորձեցան տնտեսաւարել  
զաշխարհ եւ խողխողմամբ շարաց իբր զոհիւ ընծայից հաճոյացեալ  
մտերմացան տուողին նոցա զիշխանութիւնս, եւ ձեզ այժմ բառնալ  
ի կենաց՝ զհասարակաց թշնամի զվիրագս այր ոչ զմարդասպանու-  
թեան, այլ զհաճոյութեան կամաց վեհին<sup>35</sup> բերէ նպատակ:

բ. Բայց քաջ նկատելի է ձեզ եւ զիրացս բնութիւն<sup>37</sup>, զի այս-  
պիսի ձեռնարկութիւն առնել՝ ոչ վնասու պատճառ գործոյ իսկ է  
յաշխարհ, այլ կարի օգտակար. եւ ձեզ ի բարձրելոյն<sup>38</sup> վասն այդո-  
րիկ տուաւ հարստութիւնդ, զի յարածամ զօգուտն մատակարարի-  
ցէք ընդ ձեռամբն հնազանդեցիլոց: Եւ քան զայս օգուտ զի<sup>39</sup> կա-  
ղիցէք ընձեռել, եթէ զգեղծս քաղելով այժմ զբժշկութեան ծառմաբ-  
րեալ, պողաբեր կենաց կազմիցէք. զի զարհուրեալ համարուեստ-

5

10

15

20

25

30

9 ZհնBC շարարար  
16 Z զիւր

17 BFIK զականիցէք  
34 Z(Z)K զարհուրեալք

քըն սորա ահիւ տանջանաց, մի զմահու այլ զկենացն զեղուսցեն  
պտուղ: Որով մարդկան ազն բազմասեր երկարակեցութեամբ վար-  
գացեալ ծաղկեսցի, եւ բժշկութեանն արուեստ՝ փարեյի եւ ոչ  
փախելի<sup>39</sup> ամենեցուն լիցի:

բ. Եւ այսմ օգտակարութեան առիթ լինել ոչ տեսողաց դիրին  
է, այլ իշխանացդ, որ ոչ զշարել միայն բնաւորեցան ընդ լուտալի  
գործան, այլ եւ վրէժխնդիր լինել՝ կարող առին զօրութիւն<sup>40</sup>: Քանզի  
յայդ իսկ են ածեալ զտնօրէնութեանդ ընդ մէջ զօրութիւն<sup>41</sup>, զի զշար  
քաղն խլելով՝ բուն սերմանցն մատուցի օգնականութիւն: Ուստի  
ժամ է այսուհետեւ ձգել զահագին սուրդ ի խզումն ապականիչ  
վիրագիս, եւ զուն ժամ ոչ թողուլ ի ծանրութիւն տարերցս շրջել ի  
կենցաղումս եւ հասարակիս մատուցանել զանկասկած կենաց օգ-  
նութիւն ի բժշկացն արհեստէ: Եւ ձեզ ի մահացու եւ յանմահ բանա-  
ւորաց տանել զարդարադատութեան մրցանակ յիրաւազարգս կա-  
ճառէ:

5

10

15

<3.> Յաղագս նարտասանի մատնչի<sup>42</sup>

ա. Զառաւել դժբնդակութեանց գործօնեալ եւ զանդէպն արա-  
րող շարեաց, եւ համանգամայն իսկ ասել, եթէ բովանդակ աղի-  
տիցն առիթ եւ վնասակարութեանց, որ միանգամ զկենցաղս ըստ ոչ  
բնութեան տատանեալ շարժեաց, եւ օրինակ իմն ի մերս հեղեղա-  
բար հոսեաց գաւառ: Այս է ժանտ եւ արտատեղի վրէժք ի վաղըն-  
ջուցն հետէ մինչեւ ցայժմ երկայն ձգեալ ժամանակաւ, եւ անագան  
ուրեմն խոստովանեալ յայտնեցաւ անպարունակելիդ վարակեալ  
զրժանօք գլուխ շար. աւասիկ որ ի ձերս ըմբռնեալ ատեան ձգեցաւ,  
ո՛վ արք դատաւորք<sup>43</sup>: Քանզի յորժամ ոչն իւրաքանչիւրում կալ ի  
հանգստեան կամեցան զաղարս, անճոռնի մարդիկ անազղակեալք  
ամբարտաւանութեամբ իւրեանցն վասն խնդրի՝ պանծալի ասեմ  
ի զօրութիւն, յորմէ ի հարկէ այնուհետեւ շուրջանակի շարժեալ  
զրդէք պատերազմ: Յաղագս որոյ խաղաղասէր մարդկան իրաւացի  
սորին վարկեալ աղագաւ, զքաղաքացն խորհեցան առնել շինուածս  
ի յարաստոյց վիմաց եւ ի հմուտ ոչ չափաւորապէս ճարտարագոյն  
արուեստաւորաց: Այլեւ հանդերձ բոլոր տեղեկացեալ զգուշութեամբ

12 ZAEH կենցաղումնս  
13 K արուեստէ, Z3Gl անմահ

17 Z3Fl գործունեակ  
24 K ձեռս



ի պահապանս, զոր զատուցեալ ի մարտիկ զինուորացն որոշէին  
 դասս եւ ես զօրավարաց զեւս յոլով ոռճկօք դարմանեալ եւ թռչա-  
 կօք, տի՛նա՛ եւ երիվարօք եւ ընտիր զինուօք եւ փորձագոյն ընդզեմ  
 5 թշնամեացն հոգացեալ ունել կազմութիւն: Եւ որք յայսոսիկ վարէին  
 ընչիւք ըստ կարգի իւրաքանչիւր պիտոյից, ոչ եւս որպէս թէ վար-  
 կեալ ինքեանց համարէին ծախս, զօրաւորագունիցն յաւէտ ընձեռել  
 10 շահս, յորժամ միայն ի խորին խաղաղութեան<sup>44</sup> եւ եթ զինքեանս  
 տեսանէին լեալս, եւ յանընդոստ յապահովութեան, աներկեւղ՝ ի  
 քաղաքացն յանառիկ յուսալով յամբութիւն, օժանդակեալք յա-  
 10ւետագոյն եւ զօրացն բազմութենէ: Բայց որ բնաւ եւս մեծ, պաշտ-  
 պանեալք օգնականութեամբք զօրավարացն հանճարայեղց վարե-  
 ցեալ խորհրդով: Քանզի առձեռնպատրաստ զգտեալ զօրականսն  
 փոքր ինչ արդեօք հարցաքննեալ՝ կարգէին ի գունդսն, իսկ զորս  
 նոցայն կացուցանէին գլուխ եւ ի վերայ հրամանատար, զնոսա ի  
 15 յոյժ հմտագունիցն ճարտասանացն ընտրեալ դասուէ եւ զդժեհեայ<sup>45</sup>  
 առաւել եւ բաւական գիտութեամբ, եւ պատարուն բոլորն իսկ լցեալ  
 իմաստութեամբ, եւ մանաւանդ զի որք ազգասէրք եւս ի յարեմէցն<sup>46</sup>  
 էին եւ համբուրասէրք, այլ եւ յորդորք ամենեւին ի քաղաքաց խնա-  
 մակալութիւն: Որք ըստ այսգունակն փորձեալ բարուք զօրավարացն  
 20 հանդերձեալ արգասեօք հաւատարմային անձինք, զամենավայելուչ  
 կենցաղօգտութիւն այսբար տնօրինեալ յաշխարհ՝ ծովացուցանէին  
 յաղագս ձեռնտու նոցայցն լինելով խաղաղութեան գեղից եւ քաղա-  
 քաց: Յորմէ ամենեւին ըստ իւրաքանչիւրն կարգի գեղեցկապէս  
 աճեցալ պայծառութեամբ, միշտ կենցաղոյս զարգանայր բարեփա-  
 25 ուութեանցն առատ յղփութիւնք եւ բարեպաշտագոյն առ Աստուած  
 միանգամայն ասացից, համօրէն թէ եւ առ մարդիկ, այնպիսիքն  
 յիրաւի անչինջ յիշատակի<sup>47</sup> հասցեն բարուք վարեցեալք ի զօրա-  
 վարութեան:

բ. Իսկ որք հակառակ սմին հանդիպին՝ շարակամ բարուք,  
 30 տարազարդ հարուածովք զանձեութեանցն քաղաքացն ածեն վան-  
 դումն, վասն զի հինահարութեամբ ուղիսեալ՝ զանվճար աղիտիցն  
 միշտ արկածս յաշխարհ հեղեղեն: Ըստ որումն եւ շարագեւս այս  
 այր, որ այժմ ըմբռնեալ առաջի ձեր անցեալ կայ ի մէջ, յոխորտու-  
 թեամբ լի զանձն առնէր հրապարակապէս. որ եւ չառաւել իսկ բա-

6 EI ընձեռեալ  
 17 Z(Z<sub>3</sub>)EI յարեմիցն  
 34 Z(Z<sub>1</sub>) հրապարակապէս, Z<sub>1</sub>M հրապար-  
 80  
 բակատես, Z<sub>1</sub> հրապարակէս, ABC  
 FH հրապարակէս

զում էր վարժեալ կրթութեամբ<sup>48</sup>, զճարտասանացն ոգեմ արհեստ  
 ի մանկութենէ, եւ յաղագս յոլովակին հրահանգելոյ՝ զինքն աղու-  
 ցուցանէր խորամանկութեամբ բաւականապէս հմտացեալ գիտու-  
 5 թեան: Եւ իբրու այնուգունակ տեսանէին, անձնապանձ լեալ բան ի  
 բուն հասանելով խորխտացեալ զոգցես բանականապէս իմն իմաս-  
 տութեամբ, հմուտ պատերազմիկ իրաց վկայեալ զինքենէ տայր  
 կարծիս բոլորից, որք ի դորայն յորդորեալք պատրէին ճոռոմա-  
 բանութենէ: Եւ մանաւանդ զի ի վերայ կորովութեանն եւս բանից  
 զմարմնոյն տեսանէին գեղեցիկ հասակ՝ զուզամասնութեամբ վա-  
 10 յելչացեալ, զօրաւորագոյն կարշնեղութեամբ՝ առ ի յընդդիմամար-  
 տիցն տալ պատերազմ, զոր առեալ յոյժ փութանակի բարգաւաճա-  
 պէս պայծառութեամբ գլուխ զղա բոլոր պատուով սպառազէն եւ  
 ընտանի կացուցանէին, եւ առաջնորդ զօրաց: Իսկ վատշուէրս իբրու  
 հասանելով յանգիտացեալ գահագլխութեան աստիճան, եւ ապա  
 15 այնուհետեւ զոր ի վաղնջուցն աղուն որսացեալ խորամանկութեամբ՝  
 անզէն եւ անդ զաւուղ մատնիչ. որոց զօրաւիզն եւ պաշտպան  
 հաւատացեալ էր լինել, նոցին եւ զանխուլ փութացաւ հասուցանել  
 շարիս, բանագնաց ի թշնամիսն ելով՝ առ ի յիւրայոցն, վասն զծա-  
 ծուկս նոցա մերկանալ խորհուրդ՝ յայտնի թշնամեացն տայր գիտել  
 20 տեղեկութեամբ, եւ հմուտ մանաւանդ մերոցն զնոսա առանձին  
 ուսուցանէր իրաց, որպէս թէ զիա՞րդ հնարիւք ինչ զիւրաւ զմերս  
 սւերել կարասցեն քաղաք եւ հուրք մղեղակ<sup>49</sup> զգեղեցկատեսակն  
 կիզուլ շինուածս, այլեւ յուարի գերութեան զյոլով ստացուածոցն  
 վարել անդր ասպատակողացն եւ ի բերան անողորմ զընակիչս  
 25 արկանել սրոյ եւ ի գերութեան զապրեալսն բուռն տանել հինա-  
 հարութեամբ, զի եղծեալ յափշտակութեամբն՝ բովանդակ խանգա-  
 րեալ մերոյս քաղաքի ապականեսցին կարգք: Յաղագս զայն ի զը-  
 լուխ տանելոյ առաջարկեալ դրժանօք խորհուրդ նենգութեան, պա-  
 կուցանել եւ իւրոցն գտանէր պաճարանս զօրաց, զոմանս լքուցանէր  
 30 երկիւղի՝ առաջի վճատութեանն նոցա արկանելով արհաւիրս, եւ  
 զկէսս յինքն արկեալս՝ շարամոգականն թովէր բանիւք իւր վատա-  
 խորհրդութեանն առնել հաղորդս: Եւ այնպէս զանազան հնարիւք,  
 եւ ազգի ազգի ջանացեալ, մինչ զի համայնաչինջ թերեւս զընաւ  
 մերս առնել կարասցէ գաւառ: Յորմէ եւ եկեալ իսկ զրեթէ անպար-

3-4 Z(Z<sub>2</sub>)H գիտութեամբ  
 10 Z(Z<sub>1</sub>)CM ի օմ.  
 18 Z<sub>2</sub><sup>1</sup> յիւրոցն  
 20 BIM առանձինս  
 27 AEI կարգ



տելի հինահարութեանն վանդումն՝ փոքր մի ահա զեռես հասանէր  
բակել եւ անմարդի զըրորն ցանկալի թողուլ բնակութիւնս: Բայց  
որ աշծմդ ի բարեփառ տեսանէք շինութեանն յապահովացեալ, նախ  
եւ անաջին յաստուածայինն ի վերուստ օգնել զօրութենէ՝ նախա-  
5 յանամական հասանելով նորա շնորհի, եւ երկրորդ՝ ի բաջամարտիկ  
այլոցն մտերիմ նահատակաց: Այլեւ որքան ինչ միանգամ զորայն  
էր գալ, ի միջոյ զըրովանդակն կամեցաւ բառնալ ի բաց եւ անհետա-  
գօտելի բոլորումն կորստեան խորհեցաւ կարգաց:

7. Արդ՝ աղէ ընդ միտ հարկանելով ի ձեզ ինքեանս գիտիցէք,  
10 զի եթէ դասալիքն, որ ի գնդէն յատուկ զարձաւ ի փախուստ, եւ կամ  
գողն, որ միումն եւ սուղ տանց անշինութեան գտաւ պարտակ եւ  
համայն յորժամ ըմբռնեալ իրաւամբ ի ձերս լիցի ածեալ բեմ, եւ ոչ  
փոքր ինչ մասնիկ թարց մահուն վրէժխնդրութեան թողցին անպա-  
տուհաս, այլ փութանակի եւ լի ամենայն ճեպով զարդարակ ձերդ  
15 ատենի տուժեալք հատուցին տուգանս: Իսկ այս դժոխապէս լցեալ  
շարեօք գլուխ, որ զայնքան թշուառութիւն ի մերս, որպէս ասացաւ,  
հաւել քաղաք. եւ յերեւեալ մեր բարի, ի հակառակացն սիրեաց  
աղարտ վարել ձեռանէ: Տի՛նա միանգամայն իսկ ասացից համա-  
նօտ բանիւք, թէ որ եզ անգամ կենցաղոյս ըստ վայելչականին էր  
20 յարմարեալ կարգ, ամենումն ի միջոյ էանց ի բաց կորուսանել: Եւ  
արդ, որ այսքան անթուելի վարեցեալ շարեօք, թէ եւ բիւր մահու  
սպանանել գոյր զգա հնար, համայն նուաղեալ բոլորիւ առ զորայն  
գտանէր պարտիս: Բայց զի ոչ է կարելի զմուղ յատուկ իւրովքն  
մասամբք յոլովն սպանանել մահու, սակայն միովն դժնդակագու-  
25 նիւ ինչ գտեալ՝ պարտ եւ արժան է խզմամբ անողոր աններելի  
սրտմտութեամբ ի զայրացումն գրդել, եւ զազանաբար զշարդ գօշել  
աճեցեալ հասակ:

8. Եւ մանաւանդ զի ոչ խուն ինչ պատճառք գոն ի մէջ բերելոյ  
նենգագործ վնասակարութեանցն, թէ ոչ իժաբարոյզ ունի բազբա-  
30 ղեալ անձն: Վասն զի ոչ վասն աղբատութեան ընչից, քանզի յօք-  
նակի եւ բազմարժամ շահիւք ի սակարկեալն փարթամանայր հար-  
կից, եւ ոչ սակա անպատիւ ճոխութեան, վասն զի մեծապայծառ  
շքեղութեամբ անցեալ զգահագլխութեանց կալաւ աստիճան, զոր ի

4 Z<sub>1</sub>BFHK օգնեալ  
6 Z(2)CI միանգամայն  
10 FHIKM թէ  
15 Z<sub>2</sub> հատուցեն, EFHK հատուցին  
27 ABCH աճեցել  
29 Z<sub>4</sub>ABCEPHIK իժաբարոյ գռնի

թագաւորացն՝ կարգեալ եւ յիշխանաց. այլեւ ոչ յուրուք հրապու-  
րանաց, ըստ որում ինքն իսկ պետ էր ամենեցուն, եւ հրամանա-  
տար զօրացն, զոր ընդ ձեռամբ ունէր իշխեցեալս<sup>50</sup>: Այլ միայն  
յիւր շար բարուցն սովորութենէ խորհրդիւ զմերս որսացեալ կործա-  
5 նել քաղաք եւ զամենայն բարուցն վայելուչ մասունս անհետ առ-  
նել ի թշնամեացն կամեցեալ ձեռանէ:

9. Ուստի քաջայայտ է, եթէ ոչ յատուկ այսմ եւ եթէ է պարտակ,  
յորում խոստովանեալս մեծագոյն գտաւ շարիս, այլ բազում եւ  
այլոց եւս, որպէս ինձ թուի, կարծեմ եւ բոլորեցուն, եթէ յառաջա-  
10 գոյն անդատին ուրեմն ի տղայականն զարգացեալ ի հասակէն՝ նա-  
խաշաւիղ կրթութեամբ ընդ ամենայնս էր անցեալ թիւրութիւնս  
շարեաց: Մանաւանդ՝ զործօնեալ շնութեան, զողութեան, եւ խոյ-  
զողութեան<sup>51</sup>, արբեցութեան, եւ անառակ որովայնամուրութեան, յո-  
րում այսքանեօք ուռճացեալ, եւ համօրէն իսկ աղժապղծութեամբ  
15 տարրացեալ, եւ ապա յայնցանէ իբրու օրինակ իմն քայլափոխու-  
թեամբ ի կատարելագոյնս գալ յայս մտարեւելով շարութիւն, բոլոր-  
ումն զայս ի վերայ դնելով աւարտ: Ընդ որոց մի գուցէ եւ վեհն<sup>52</sup>  
իսկ Աստուծոյ շարժեալ զօրութիւն, զոր ի ձերդ անաշառ զգա մատ-  
նեաց բեմ, զի երթեալ անբաղայ զիւր ինքեան մահու տարցի վճիռ:

10. Այլեւ զուր թերեւս ընդ աշծմու զորայդ թորեալ հայիցիք  
արտասուաց իջուցեալ վտակս՝ հանդերձ թախծեալ դիմօք, եւ նկուն  
կորացեալ հասակաւ, արգահատելի որպէս թէ զինքն ցուցանելով,  
ընդ գետին եւ եթ պշուցեալ տխուր հայեցեալ, եւ այդորիկ աղազաւ  
արժանի ինչ թողութեան եւ ներելոյ զգա համարիցիք լինել: Ըստ  
25 որում երկիւղ է, մի կախարհանօք զձերդ աղանդեալ որսայցէ զգա-  
յարանս եւ յորդորեալ ի գութ, զի հնարիւք զիւր կարասցէ անձին  
գտանել փրկութիւն: Եւ եթէ յանկարծ դա հասցէ թողութեան վիճա-  
կի, ինձ թուի ոչ միայն ի շար ընդ այն հայելով մարդկան եւ աճե-  
ցեալ բազմացին տարօրէնութիւնք, այլ եւ աստուածառաքն իսկ  
30 ամենեցուն եկեալ հասանէ բարկութիւն: Յաղագս որոյ առաւել  
պարտ եւ արժան է զայրանալ. եւ մանաւանդ եւ զգործեցեալսն եւս  
յիշելով զոր ի դմանէ լինէին վրէժք՝ զարտասուս մարցն ի վերայ  
արկեալ մանկանց վասն տարածամ անջատման յիրերաց, նմանա-  
պէս եւ զամուսնացն, հրկիզութիւնս տանց, եւ զկործանումն բերձա-  
35 կատար պարսպաց եւ զայլ ազգի ազգի եւ թշուառութեամբ լցեալ



մահա, դայն որ ի գերութենէն հասանէր բովանդակ ընդ միտ է հարկանել եւ վայելուչ գանձեոնրնտել շար գազանիդ օշատել մասունս մարմնոյ:

5 է. Բայց եւ ո՛ւմ այլ ումեր իրաւացի նորագիւտ ինչ տանջանօր առաւել գեր դմա զանվարկ դառն պատուհասին չափելի հատուցումն եւ ի վերայ կատարած զմահուն հատանել դատ, որ հաւակ այնքանեացն եղեալ աղունց, զնոյն եւ գործով կատարող, ընդ որ յառաջագոյնն անցաք բանի:

10 Բ. Եւ մանաւանդ զի յոյժ օգտակարագոյն կենցաղոյս զժոխահեող<sup>53</sup> է կորնչել այր, դժնդակն հանդերձ մահու, բառնալ յամենեցունց ասեմ տեսութենէ: Քանզի յորժամ խզումն ի ձերումդ դա կրեսցէ ատենի, համօրէն իսկ գրեթէ մարդկան լինի յիշատակ խրատու գալ ի զգաստութիւն, երկաքանչիւրոցն սանձահարեալ կողմանց՝ շարաց միանգամայն եւ բարեաց: Վասն զի կիսոցն երկուցեալ, ի հարկէ յուղիղն այնուհետեւ վարին կարգաւորութիւն եւ բարեացն յօժարեալք ի զգազար ի նմին առնուլն, քաղաքասէրք ելով միշտ եւ համբուրասէրք. եւ այնպէս կենցաղօգտութեան բերք վայելչացեալ յօրինեալք յառաջ խաղան:

20 Թ. Տի՛նա, եւ յաւէա զի ձեզ ոչ անկարութիւն եւս է ըստ յառաջասացեալումն յաշխարհ տնօրինել բարի, եթէ լոկ զօփայցէք իբրու զմի յայլոց մարդկանէ, որոց շիցէ բաւականութիւն կարողապէս ցուցանել զօրութիւն ըստ բղձիցն կամելոյ եւ զիրացն առնել որոշումն: Այլ դուք զայն ունիք իշխանութիւն կամակարապէս, զոր ի վաղնջուց նախահարցն<sup>54</sup> իսկ է, զիրաւախոհս կացուցանել բեմ, 25 վասն բոլորից ընդ օրինաւորն գնալ պողոտայ եւ մի արտատեղի ուրեր զառածել խորհրդով, զձերումդ գեղեցիկ դատաւորութեանց յազգունակ առնուլ մարդկանէ հատուցման վրէժ: Վասն որոյ պարտ եւ արժան վարկանելի է այժմ ամենայն անյապաղ փութով ի ձեռս զմահացուն առնուլ անօթս եւ զպարս բազմախումբ մեծս 30 յորդորել կաճառ՝ ի վրէժ առնուլ պահանջել, որպէս զի խելալ ի սմին շարք բարձցի ժամու եւ բազում խաղաղութիւն յԱստուծոյ ձեզ եւ միանգամայն շնորհեսցի աշխարհի:

ա. Քանզի յորմէ հետէ միանգամ ի լինելութիւն մարդկայինս բաղկացաւ ազն եւ կարօտեալ աղցաւորս գտաւ պաճարանօր, որով հայթայթեալ զիրն կարասցէ տանել երկարածութիւն, յարատեւողն 5 ելով ի փոխանորդութեանցն, ոչ քան զընչիցդ այլ ինչ ահա լեալ խոստովանի պատճառք կենդանութեանս մերոյ եւ յառաջխաղացութեանս, եւ որ հաստատուն զբանաւորացս պահէ բնութիւն, այլ եւ յամենայն յոր ինչ մերձեցեալ՝ զիրահեշտաբար վճարէ զպէտս, որք միանգամ բռնագատեալ կենցաղոյս պահանջեն խնդիրք: Որոյ աղագաւ յիրաւի իհարկէ բոլորերին գաս ստացեալ, ըստ իւրաքանչիւրն լեալ կարող հանդուրժելոյ. եւ յառաջատեալք զմիմեամբք առնեն ելեել՝ ի խնամելն միանգամայն եւ յաճեցուցանել, զի բաւական ահա ըստ պիտոյից լիցի ոչ շափաւորապէս եւ օգնութեանն սպասաւոր: Եւ ցորքան սոցա իւրաքանչիւրոցն տիրեն ստացուածոց, 15 առանց եւ մի ուրուք զրժանաց հուղկահարութեան, ամենայն յարմարեալ բարեզարդութեամբ՝ աստի յաւիտենիս ըմբռնեալ պատկանին վայելեալք: Զի առ ծնողս առատաբար զձերատածութեանցն գեղեցիկ պաշտեցեալ մատակարարէ խնամս, եւ առ տղայս՝ զմանկանութեանց բարգաւաճագոյն կամօք եւ զբարեկամացն պահեն սիրելութիւն հանապազ: Ուստի գեղեցկավայելուչ մեծարանօր եւ առ զոռոզս իշխանացն բերէ համարձակութեան պատիւ, նոյն մանաւանդ չընծայատարն ելոյ՝ եւ առ թագաւորսն երեւելագոյն. տի՛նա՛ 25 եւ բարձրագլուխս ի մէջ յօքնախումբ կացեալ հրապարակաց լի հանդերձ խորտապանժ տեսութեամբ ի զանազան պայծառ զգեցեալ պատմուճանաց: Եւ եւս ի զուարթառատն լինելոյ սփռող եւ բարեփառագոյն իսկ՝ յամենեցունց փարթամն անցեալ համբաւի չընչից, որ եւ բարեպաշտ իսկ առ ամենեցունն այնպիսին կարէ լինել արարիչ, ցանկորդ զխայրեացն մատուցանելով ընդարձակաձեռն նուէքս, յորմէ առաւել պատարուն եւ լի զնախաինամութեանցն առեալ տանի շնորհ: Եւ այսգունակ յաջողեալ բարեբաստութեամբ, մի ըստ մէոջէ չընչիցն մտերմաբար վայելէ չերկաքանչիւրսն՝ ի բարեկարգութեան միանգամայն եւ ի բարեպաշտութեան: 30 Բ. Իսկ որ դաւաճանեալ այսմ բոլորաշարմար կարգաց ի հակառակն փութայ այսոցիկ շարժել տարազարդութիւն, ի ստացուածոցն զամենեսան զերծուլ վրդովմամբ, ի վերջինն ամեալ հասու-

5 Z պատուհասի  
13 BCEHK սանձահարել  
24 Z(Z1) կաղուցանել  
25 AEI1K գառածեալ  
26 Z(Z1)C վարկանել է

35



ցանկ այնուհետև թշուառութիւն եւ համանգամայն զի բաց բար-  
ձուքեանն խորհեցեալ վանդումն<sup>56</sup> յաշխարհ հեղեղեալ: Եւ թերեւ  
զարմանալի ինչ ոչ են, զի եթէ յիրերացն շարասէր յօժարեն մար-  
զիկ խողխողումն, ո՞րչափ եւս յընչիցն առնել ամայի: Իբրու զայս  
ամենադժնեայ, որ անագան ի ձերս խոստովանեալ այժմ՝ ձգեցաւ,  
բեմ, ո՞ խոհեմագոյնք դատաւորաց<sup>57</sup>: Քանզի սա կատերազմական  
ձեպեալ կազմէր գործիս, եւ ազգի ազգի մահացու զէնս. եւ զայս ոչ  
ընդդէմ թշնամեացն մերոց դաւառիս նահատակէր, այլ թողեալ  
զբաղաբազմարութիւնն, եւ որ ինչ ըստ ըզձալի վայելչականին էին  
կեանք, աւազականոց զինքն կազմելոյ հասեալ կալաւ զլեառն հան-  
դերձ իւրանման մարդկաւ ի բնակութիւն: Եւ անդ այնուհետև ոչ  
շափաւորապէս եւ կամ մասնաւորս ինչ գործելով աղունս, այլ յո-  
բունս եւ անբաւ, գրեթէ զհասարակացն, որպէս ասացեալ եղև  
զկենցադոյս պատճառս բարեբաստութեան, զընչիցն նախ. եւ առա-  
ջին պատահեցելոցն ւարեալ գերիէր փարթամութիւնսն եւ ան-  
դուստ ապա ի կուտառութեանցն անցեալ զնայր յափշտակութիւնս  
եւ յայլ եւս ի չղիրս անասուն կենդանեացն, ի հօրանս անդոց եւ  
հօտից<sup>58</sup>, օրինակ իմն շարագոյն գազան ինչ ի վերայ անկեալ օց-  
տէր, տեղի եւ ոչ փոքր ինչ ներելոյ թողեալ եւ պատկառանաց: Եւ  
զայս ոչ առ անբանսն եւեթ գործելով ասացի հասուցանել գերու-  
թիւնս, այլ բազում անգամ եւ ի բանաւորսն զնոյն եւ առաւել եւս ի  
վերայ երբ որ ձիր վրիժուց: Քանզի զոմանս սրախողխող իսկ ընչիցն  
աղագաւ առնելով, եւ զկէս յաղագս ցանկալի ստացուածոցն, եւ  
կամ այլոց եւս գեղեցիկ հանդիպեալ պատմութեանաց, շարագանս  
հանդերձ կապանօքն արարեալ՝ ի բաց տեռազերծելով, մերկս մի-  
անգամայն եւ ողորմելիս ոչ միայն մարդկայինս թողեալ լինէր տե-  
սութեան, այլ թուի թէ եւ հասարակ տարերցդ գոյացութեան: Եւ  
արդ՝ որ անսքանեաց խոստովանեալ գտաւ շարեաց, որո՞ւմ թողու-  
թեան գոնեայ եւ դուն ինչ մասամբ առ ի ձէնջ արդեօք հասցէ, եթե  
ոչ անբաւապէս զհակառակն կրեսցէ դառնագոյն մահու պատուհաս:  
գ. Եւ զի թէ այրասպանն ի մի որ վնասելոյ անձն եւ զայն թեր-  
եւ ոչ կամայ, այլ կամ վասն ուրուք ինչ զրկահարանաց ընդդէմ  
մարտոցեալ, եւ կամ սակս յանկարծագէպ ինչ իրաց. առանց խոր-  
հրդոյ հանդիպեցաւ, եւ սակայն յորժամ իրաւամբք ըմբռնեալ եւ ի

զիցազնական ձերդ լինի ածեալ առեան, ո՞վ ոչ գիտէ՝ զի զվերջին  
թշուառութեանցն այնպիսիքն կրեն պատուհաս: Իսկ ո՞րչափ եւս  
առաւել սմա ի դէպ է բան զասացելոցս եւ անդր եւս վաղվազակի  
զգծնդակագոյնն հատուցանել շարիս, որ ոչ յատուկ շոպելոյ ըն-  
չիցն եղև պատճառ, այլ մանաւանդ թէ եւ յոլովից եւս արանց, եւս  
եւ երիտասարդական տիոց գտաւ խողխողիչ, ի ժանտախտական  
իմն զոգցես ամենեցուն լեալ հարուած: Եւ մանաւանդ պարզաբար  
իսկ ասել, թէ որչափ իւր ինքեան գալ էր, զբովանդակն ի միջոյ ի  
բաց կամեցաւ բառնալ վայելու: Ըստ որում ի դէպ ապա ընդ այսո-  
ցիկ գործելոց է եւ զվարկն հատուցանել արդարակ:  
գ. Բայց երեւի եւ ոչ ի միտջէ կարեւոր վտանգից սորա եկեալ  
յայս շարութեան հետեանս: Վասն զի ոչ զաղբատութիւն ունի բաղ-  
բաղել, եւ ոչ դարձեալ զհարաստահարիլն յումբէ, եւ ոչ որ սոցին  
իցեն հանգոյն պատճառք, եթէ յաղագս այնոցիկ բռնի զօրէն որ-  
պէս վարակեալ ինչ շղթայիւք յայս ձգեցաւ վայրագութիւնս, զոր եւ  
ոչ մի բան յանդիման կարէ կացուցանել պաճարանս իւրումդ շար  
կարկատելով անձին: Այլ միայն զի շիջուցանել զհասարակաց կա-  
մեցաւ զբարեբախտութիւնս եւ առաջնորդ հանդերձ մախանօք ան-  
տանելին լինել հիքութեանց:  
ե. Տի՛նա՛՛ զազանարարոյս այր ցուցանի զոգցես ի վաղընջու-  
ցն հետէ բազմաց եւ անշափից տարօրէնութեանց լեալ գործօնեայ,  
եւ ոչ որպէս թե արդի ինչ ի ծայրագոյնս եկեալ երեւի շարիս: Քան-  
զի թէ ոչ առ սակաւ սակաւ առեալ կրթութիւն փոքրագունիքն ան-  
օրէնութեամբքն վարժիլ՝ շնութեամբ, գողութեամբ եւ այլով համա-  
նման շարեօք, ոչ արդեօք միանգամայն ի գլխաւորագոյնսն ժամա-  
նեալ հասանէր շարութիւն, որ յամենայն կողմանց մահ ի սորայս  
արգելեալ փակեցաւ սահման:  
գ. Այլ՝ մի գուցէ արդեօք այժմ ողորել ի կախարդական ինչ  
բանից դորա զձեր ողջախոհագոյն յօժարեալ հանդիպեցուցանիցէք  
լսելիս, եւ կամ ի զփալղ նայիցիք եւ յոգոցն ի ներբուստ հանել  
հառաչանս, միանգամայն եւ ի վայր արտասուս առաջի հեղով:  
նմանապէս ըստ ժամուս եւ զձեւ դորա ցուցեալ հասակիդ պատրու-  
ակ, որպէս թէ ի վերայ զթախժութիւնք արկանել զիմաց եւ վարա-  
գոյր, որովք զներումն թերեւ առ ի ձէնջ գողացեալ մարդասիրու-

2 BCPhiK հեղեղի  
3-4 Z(Z<sub>3</sub>) մարդիկ յօժար են  
17 Z(Z<sub>3</sub>)HM անդեոց, E1 անդոց  
18 Z գազանի

1 Z<sub>2</sub>K լիցել  
16 Z կարէ յանդիման  
20 Z<sub>5</sub>h ABCK<sub>1</sub> տի սա  
22 Z(Z<sub>3</sub>)BCIM արդ



թեան՝ չիւրն անդրէն փութասցի ճեպել վրիժագործակ վայրագութիւն: Տի՛նա՛՛ եւ զայդ իսկ կերպարանելով՝ երեւի որպէս ոչ շարինչ արարեալ խղճիւ ապաշաւել: ալլ յաղագս թէ ընդէ՞ր ամաշի յինքենէ զաւազականոցն թողլով տեղիս. եւ կամ է՞ր աղագաւ աներկիւղք ընդ այն եւ ամբողջ՝ անխարդախ մարդկան եւ պարզամիտ իցէ զնալ ճանապարհ:

է. Բայց աղէ վաղնջուցն յիշեցէք զգորա ազունս ընդ միտ հարկանելով, զվայրավատմունս ընչիցն պատուական եւ ստացուածոց. եւ կամ զառականս ամօթագեղ ամուսնացելոցն, ոչ ինչ նուազ եւ կուսից առ ի զծաղիկ պատկառանաց ի բաց զզեատուցն մերկանալ շոպելովն, միանգամայն եւ զուխ արեանցն ի դորա հոսելով ձեռաց: Վասն որոյ ապա դիպողագոյն եւ զանհետադատելին ումեք վաղվաղակի աւրնթեր դմա է ընձեռեալ մահու դատաստան:

ը. Ըստ որում զայսոսիկ առաջի եղեալ, ժամ է այսուհետեւ եւ օգտակարագոյն յոյժ ըստ երկուց օրինակաց զանձեռնընտել վայրագիդ ի բոլոր մասանց վարկանել զի բաց ի կենցաղոյս խզումն<sup>59</sup>, այսպիսի ինչ: Վասն զի յորժամ զարհուրեալք շարացն մեծապէս ահիւ եղիցին հոյլք, օրինակ իմն ընդդէմ առաջիկայ անցիւքն երեսանակակոծեալք՝ տեսողք միանգամայն եւ լսողք, քաջայայտ ամենայն իրօք է, զի նոյնքան բարեսէր եւ ազնուականագոյն մարդկան ի կատարելում արգարագործութեանն հաստատուն եղիցին անձինք, որով եւ բովանդակ իսկ ի խաղաղութեան անցեալ մնացէ աշխարհ: Եւ արդ՝ զի ոչ նորոգ ինչ եւ կամ նախասկիզբն յայս գալ բռնադատիք կամս, իրրու թէ ոսոխք աստուածայինն լինելով իրաւանց եւ վրէժխնդիրք, ալլ եւ ի վաղնջուց իսկ մանաւանդ եթէ օրինադրեալ այս խոստովանի բարեփառագոյն հարանցն կազմեալ բն: Վասն զի դոր օրինակ՝ առաքինեացն իցէք պսակող մարդկան եւ խաղաղասիրաց, նոյնգունակ եւ սոցայցն հակառակի անխնայ արարողացն շար, կարի ի ճահ է եւ իրաւացի հատուցանել մրցանակ:

թ. Բայց զի եւ ոչ որպէս զայլսն ի մարդկանէ գոլ երեւիք<sup>60</sup>, որոց զանուղայսն գործողաց տեսանելով՝ բազում կարօտին զօրավիզն հայցելով ըստ ըղձիցն օգնականութիւն, յաղագս որոյ յատուկ զզոփալն միայն յիրաւի յինքեանս բերեն եւ յոգոց ելանեն: Իսկ երջանիկ ձերում եւ վայելուչ ճոխութեանդ կամելն միայն եւեթ

1 AI ճեպեալ  
10 ZK պատկառանացն  
13 ZAM ընձեռել  
17 Z գարհուրեալ  
25 ZHIK<sub>2</sub> վաղնջուցն  
31 Z<sub>1</sub>AI զանուղայսն

գործ վճարէ<sup>61</sup>, վասն բնաւիք առձեռնպատրաստ կարողապէս. եւ լի բոլոր համարձակութեամբ յօրինաց եւ զերկանքանչիւրսն ունիք հատուցանել վարկ, մանաւանդ յորժամ ոչ եւս զհեղզ պղերգութեանցն բարձեալ ի ձեզ բերիցէք յինքեանս ախտ, յիշելով միանգամայն եւ զի վերուստն ամենեցուն նախախնամող<sup>62</sup> եւ դատաւոր եւ երկեւզ՝ մի գուցէ, արհամարհեալ ստունգանելով, ձեզ իսկ եւ գլխովին աշխարհի զանտանելի ինչ հասուցանիցէք վտանգս: Ապեթէ փոխանակ այսորիկ շարժեալք ի զայրացումն լինիցիք եւ զինեալք վաղվաղակի շար անձինդ ճեպիցիք ի կորուստ, յայնժամ 10 քաջահաճոյք աստուածայինն լինելով կամաց, արժանի յոյժ խընդութեանն բարգաւաճեալք միշտ եւ հանապազ յաստիս բերկրիցիք յախտենի: Վասն որոյ բոլոր ճշմարտապէս ի մեծս իմ առաջի զնելով տեսարանի զբիրագործդ յայտ արարեալ մեղանշական անձնէ, ապա որում եւս արդեօք մնացեալ ամբաստանութեան տակաւին 15 ծախիցէք ժամանակ, եթէ ոչ վեհք միանգամայն եւ նուաստագոյնք մերձակայ ատենիս յիրաբանչիւրսն մահացու ընթանալ զէնս երագիցէք. եւ յարձակեալք ի վերայ զշարք սատակիցէք, զոր գառն զբաւեալ մահու՝ փոքրագոյն ոչ ինչ ահա զընդհանուր կենցաղոյս յուսացիք ընդունել զբարեբաստութիւն:

<5.> Յաղագս գերեզմանակրկտի<sup>63</sup>

ա. Զի որք միանգամ դժնդակ են աուցեալ շարութեամբ եւ անողորմելի քինուցն ոխակալութեամբ առ մարդկայինս վարին բնութիւն եւ միանգամայն զազանօրէն սրտմտութեամբ զաստիկ թշնամութեանցն թափեն թոյնս: Եւ զայն աղէտս յատուկ ի կենդանեացն 25 որ յագեցուցանէ անձինս, եւ համայն յորժամ նովիմք խոստովանեալ՝ յատեան ձգեսցի շարեօք, թերեւ սուղ ինչ բաղբաղեալ գտցէ տեղի փաստաբանութեան յաղագս երկուց այսոցիկ պատճառեալ իրաց, կամ զանցեալն ինչ ի նմանէ անըմբերելի ընդ ինքն կիրս, եւ կամ առ հանգրձեալսն երկուցեաց կասկածէ ի կրկնապատիկն 30 վասն հատուցանելոյ շարիս: Բայց որ առ վախճանեալսն նմանապէս լեալ օձորովայն գայ ի վրէժխնդրութիւն բարութ, թո՛ի թէ եւ ոչ միտ իրիք ներողութեան հանդիպել կարասցէ բաղբաղանօք: Որգու-

7 EFKMZ<sub>1</sub> ապա  
9 ZEIK ճեպիցէք  
24 Z աղէտ  
30 Z վախճանեալս



նակ մանաւանդ ըստ իմաստնոցն կայեալ բանի, եթէ ընդ զբաւել  
 համբարտակացն վախճան, անդէն եւ թշնամեացն հալեալ շնչիլ  
 սրտմտութիւն որ առ ի նոսայն, այլ ոչ թէ ի նորոգումն գալ մոռաց-  
 մանն՝ սովորեաց: Որ եւ քան զդժնդակագոյն զազանացն անցանէ  
 5 զրժողութիւն եւ քան զշարացն այնպիսոյն շարութիւն անտեղի յի-  
 մարութեամբն գրգռեալ, իբր զոչ միանգամայն մտաւոր մարդ:  
 Քանզի վարդապետարան մարդկայինս եղեալ ազին՝ ընութիւնս իսկ  
 ուսուցանէ, յայսպիսին ինչ մեզ գալով պատկառանս. որ գեղեցկա-  
 կարգութեամբն է յօրինեալ կրօնիւք ի սկզբանցն մինչեւ յանկումն  
 10 գալ կենցաղոյս: Զի մեծամեծար եւ պայծառագոյն հանդերձիւք  
 զվախճանեալսն ի մէնջ բարեքաշկապէս զարգարանօք պատեմք,  
 թէպէտ եւ ոչ ինչ առ ի շահ նոցա գործեցեալն լինի. համայն վասն  
 բնական սովորութեանն՝ միանգամայն եւ զհարազատ գիտցն հա-  
 տուցանեմք զհոսկ յետին աւուր պատիւ, արժանի օրինաւոր թաղ-  
 15 մանն առնել եւ պատանաց: Այլ եւ ողբերգակեալ արտօսրահառաշ  
 կականելով մինչեւ ի գերեզմանին յուղարկեմք ակն: Եւ զայն ոչ  
 եւեթ յատուկ մերձաւորագոյնք կատարեն մարդիկ ի սիրոյն լեալ  
 հեղձամղձուկ, այլ եւ ռիք լուծեալ թշնամի տեղեւացն արտասուեն  
 այն օր՝ ըստ բնութեանն շարժեցեալք դիրբաւ ի գեղձումն: Եւ այս-  
 20 պէս բարեկարգութեամբ վարեցեալքն՝ նովին մխիթարին յուսով՝  
 գարձեալ զնոյն ընդունել յանձինս յիրաքանչիրն հասեալ վախճա-  
 նի. այլեւ մեծ շնորհակալութեան սպասեալ եւս յԱստուծոյ ակնու-  
 նելով հատուցման, յաղագս ամենաբարեքն եւ լի բոլոր զգաստ  
 մտերմութեամբ վարել օրինօք:  
 25 Բ. Եւ որ այսքանում գեղեցկանսիճ եւ վայելուչ կարգի զհակա-  
 ռակն փութացաւ հասուցանել խախտումն, զուզնաքեալ ինչ հիբաց-  
 ցելոցն աղագաւ հանդերձիցն, եւ կամ սակս գեղձացեալ ինչ քինուց  
 յայն յարձակեալ զազանանման բարուք գործ: Ոչ յատուկ, առ որ  
 յանդգնութիւնն բերէ տեռագերծել զվարճանեալն, նորին մերձա-  
 30 տրացն եւ եթ պարտական է վնասուց, այլ առ հասարակ բանաւորս  
 ազին անկարգարար յարուցեալ ընդդէմ: Իբրեւ զայս ամենադժնդակ  
 եւ լի շարեօք այր, որ յետ բազում ամանակաց արդ ուրեմն անա-  
 գան խոստովանեալ ի ձերս ըմբռնեալ ձգեցաւ բեմ, ո՛վ վեհք դա-

13 A1, սովորութեան.  
 31 Z(Z1)C իբրու

տաւորաց<sup>64</sup>: Բայց արդ եւ զնոյն իսկ ոչ դանդաղեցայց զգործեցեալ  
 ի դմանէ աղունս մերկ եւ առանց պատրուակի բանիւ յանդիման  
 կացուցանել: Քանզի սորա գիշեր իմն անլուսին անձեռնպատրաստ  
 գտանելով օգնական իւրոյ ամենաշար սպասաւորեալ խարդախա-  
 5 նացն եւ ապա այնուհետեւ լի ամենայն անարժան փութացեալ յան-  
 դգնութեամբ ի տեղիս հասանէր շիրմացն իսկ, երբ ամայի ծանու-  
 ցեալ եւ թափուր ի մարդկանէ. յայնժամ գործի եւ ոչ ինչ պատ-  
 րաստագոյն ունելով, այլ դեռ եւս զայն ինչ վախճանեցելոյ վիճ  
 10 անմաքուր ձեռօք սկսանէր փոսել. եւ այնչափ երկիւղիւ շառագու-  
 նեալ՝ մինչ զի եւ ոչ սուղ ինչ յարմարագոյն զբաց տալն արարեալ  
 կարգ<sup>65</sup>: Այլ՝ առ խուռն պեղելով՝ այսր եւ անոր կացուցեալ լինէր  
 հողակոյտ բլուրս. մինչ զի ի վերնայարկն ջանացեալ՝ ի տապա-  
 նին մերձեանայր ի կափարիչն: Եւ վասն ոչ լինելոյ ատակ, եթէ զաղ-  
 խեցելոյն կարել փեռեկել մաժուածս, ի հարկէ տապար ի գործ ար-  
 15 կեալ շերդակոտոր առնելով քանդէր եւ անդէն բուռն զհիբացելոյն  
 հարեալ պատանաց՝ արիւնաթաթախ հանդերձ ձեռօք հազիւ ուրեմն  
 ի բաց զերձանելով ցեղեաս, մերկ եւ ի բաց ընկեցիկ արտաքս զայ-  
 նորիկ մեռելոյ ընկենոյր մարմինս<sup>66</sup>. յոյժ ողորմելի տեսութիւն ոչ  
 20 միայն մարդկայինս ասեմ բնութեան, այլ թուի թէ եւ հասարակ  
 գոյացութեանցս ընդ երկնադ: Եւ այսպէս ոչ ի հասարակաց պատ-  
 կառեալ բնութենէս, եւ ոչ զամենատես աստուածայինն ընդ միտ  
 ածեալ նախախնամութիւն, միանգամայն եւ ոչ զբարեփառ ձեր  
 իրաւախոճ իշխանաց զահաւոր դատաստանի պատուհաս, այլ քա-  
 մահանս արարեալ եւ կամ ոչինչ արժանի գործեալ մեղանաց էանց  
 25 էզնաց<sup>66</sup>:  
 Գ. Եւ զի եթէ զհողկահարուան, որք ի յանբան կենդանիսն  
 զագահ աւելաստացութեանցն բաղձան լնուլ փափագումն, եւ կամ  
 դարձեալ զուզնաքեալ ինչ մարդկան զգեստուցն աղագաւ համար-  
 ձակեցան բերել զրժանս, համայն եւ զայն ի հեռաստանն եւ ի կարի  
 30 անապատսն վրիժակելով տեղիս՝ մեծապէս երկիւղիւ վասն ի տե-  
 սողացն պակուցեալք, եւ զայն՝ սակայն առ հոմանման կենդանիսն  
 որ տեսցէ, զոր թերեւս փոքր ինչ եւ զբաղայցն ունիցին առ նոսա  
 յօղել պատճառս. կամ թէ յաղագս զոռոգահարեալք յումեքէ խնդրի-  
 ւով վրէժ, եւ կամ որ սոցին իցեն նմանք: Բայց համայն թէ եւ ըմ-

22 ZE զձեր բարեփառ  
 23 ZE իշխանաց

25 Z1A1 զնաց. FH եւ զնաց  
 33 Z(Z1) զի ZAEI յօղեալ



րոնեալք երբէք՝ եւ յանաշառղ ձեր յինին ածեալ բեմ, մի ազա՞տ եւ  
թարց շարաշար մահու հատուցանելոյ դատաստան զերծանե՞լ կա-  
րացցեն, եւ ոչ բնաւ երբէք: Բսկ ապա այս շար վիրաբ գորո՞ւմ ոչ  
գառնագոյն իցէ արժանի ի կենցաղոյս հրաժարել, վասն զի ոչ առ  
կենդանիս, որպէս ասացի, այլ առ հիբացեալ վախճանեցելոցն ի  
գերեզմանսն վնասել յօժարեաց ձեռնարկել: Ըստ որում ապա յոյժ  
ցաւագնագոյն մահու պարտ եւ արժան վաղվաղակի զգա ի բաց  
կորուսանել:

Գ. Այլ եւ զայս որպէս երեւի սորա գործեցեալ ի յաւամայ  
վտանգելոյ, եւ ոչ ի միողէ ուստեք: Քանզի ոչ զաղբատութիւն առ  
ժանր աղցաւորացս ունի տսել պէտս, եւ կամ գտոկոսիս ի վերայ  
մթերեալ պարտուց, որում բաւական ա՞հա հայրենին էր զայս ամե-  
նայն դիրացուցանել զկարիս ժառանգութիւն, եւ կամ զթովելն յու-  
մեքէ, որպէս անկատար ինչ յարմարի տիոց յիւր ինքեան բերեալ  
դիրապատիր յեղմունս՝ տեղի հաւանական տուեալ բանից: Վասն  
զի զայդ եւ առաջիկայդ ծանօթագոյն ամենեցուն կատարեալ հա-  
սակիդ խոստովանէ տեսութիւն փոքրագոյն ոչ ինչ, մանաւանդ թէ  
եւ աղջամղիինն վկայէ ժամանակ: Այլ ինքնակամ որպէս թէ զհա-  
սարակնց թշնամանել եւ խայտառակել կամեցաւ բնութիւն. մի-  
անգամայն իսկ թէ եւ զմտքուր աշխարհիս պղծել տարերս շար ժա-  
հահոտութեամբ մարմնոյ մեռելոցն, որպէս զկենդանականն օդ եւ  
զպայծառ արեգակնայինն ի վերայ հեղեալ ճառագայթս: Վասն  
որոյ ընդ այսքանեաց գործող նորագոյն լեալ վրիժուց, թէ եւ բիւր  
հնար զմա զոյր անգամ մեռանել, նուազեալ ամենայն գտանէր ի-  
րօք վասն զարդարակն հատուցանելոյ վարկ, բայց սակայն զմիդ՝  
երագագոյն եւ նորանշան ինչ օրէն է մահու կարկառել պատուհաս:

Ե. Բայց եկ բեր ճշմարտապէս զսա ասել գործօնեայ, եւ ոչ  
յատուկ այսորիկ եզոց աղունս, զոր եթէ կամեսցի իսկ որ նախա-  
հաւակ ոչ կարացէ լինել, այլ ի մատաղն իսկ անդստին սա տիոց  
առ սակաւ սակաւ հոգ խնամոյ մանունց տանելով սկսեալ մեղա-  
նաց: Որպէս թէ զծնողս անարգու, հակառակ սիրոյ՝ թշնամանող  
մերձաւոր դրացեաց եւ յաւետագոյն առ այնոսիկ, որք հարազատ  
առ ի յարենէցն՝<sup>57</sup> ազգականութենէ էին մարդիկ, ընդ նմին շնութեան  
եւ գողութեան, եւ համանման սոցայցն ասացեալ շարեաց տարօրէ-

5 Z(Z<sub>1</sub>)CM վախճանեցելոյն  
26 A երագոյն I զմի գերագոյն  
92

32 ZAHIK որ  
33 Z<sub>1</sub>IK, յարենիցն, F յարեանցն

նութեան: Որով աղագաւ օրինակ իմն ոտնափոխութեամբ գնաց-  
եալ, մինչ զի ի ծայրագոյնն ժամանեալ հասաւ շարիս, զի ի վերջոյս  
երթեալ այժմ գօրէն շար գազանի կրեսցէ սատակումն:

Գ. Այլ արդեօ՞ք յարտասուտդ եւ ի դէմս տխուր, եւ ի ծմբեալ  
կերպարան հասակիդ հայիցիք, եւ որպէս թէ ի հասարակաց արգա-  
հատելով մարդկային բնութիւն, զնոյն կառուցեալ ընդ միտ ածէք.  
Եւ այդորիկ աղագաւ զկաթոգնեալդ խորհիցիք ողորմե՞լ եւ թերեւս  
սո՞ւղ ինչ ի դմա զմարդասիրութեանն կաթեցուցանել գով: Ըստ  
որում մի գուցէ, զի տրտում դորա արկեալ զիւրեւ տեսութիւն, ոչ  
մերձակայ յաղագս երկիրդի ամանակիս, զոր բազում անգամ թուի  
թէ եւ ծաղր արարեալ մտօք՝ ի վաղնչուցն ուսեալ կրթութենէ: Այլ  
աշխարէ կարծեմ զոչ ժամանակ լեալսն գործելով<sup>58</sup>, եւ կամ թէ  
էրո՞ւմ այնպէս շիրմացն ախեալ դրունք: Բայց աղէ հայեցարուք,  
ոչ զգալի սասն երեսօք, այլ խոհականապէս ոգւոց տեսութեամբ. եւ  
արժանի յիշատակի զհիբացելոցն ի մէջ առէք զընկեցիկն արարեալ  
մարմինս անգամ անգամ լեալ գէշ ի կերակուր ոչ միայն գազանաց  
երկրի եւ սողնոց, այլ եւ թռչնոց երկնից<sup>59</sup> անդր ժողովելոց, զնորոգ  
սուգն սիրելի բարեկամաց, զողբերգութիւն ողորմ հարազատ ման-  
կանցն հանդերձ ամուսնու, զամենաթշուառ ծերունի ծնողացն յեր-  
կիր խոնարհեալ կիսամահ ի վերայ դիմաց՝ սակս ոչ եւս կարել  
մարթելոյ զնոյն եւս վախճանելոյ միւսանգամ ողջունել բնութիւն: Եւ  
զայսն մի բտտ եզոջէ ունիք ի սաստիկ գալ ի զայրացումն եւ ի  
զննութիւն, ո՞վ քաջբդ, եւ զաննեքելին առանց միոյ երկբայութեան  
ի դա՞ զանազան տանջանաց ցուցանել հանգամանս, որով եւ խզն-  
ալ վաղվաղակի բարձցի ի կենդանութենէ:

է. Տի՛նա եւ օգտակարագոյն զի՞նչ եւ այլ որ մեծս կենցաղոյս  
եւ կամ հանուր տիեղերաց գեր զշարաթոյն գազանաբարոյիդ խոս-  
տովանեցի կրել սատակումն: Վասն զի յորժամ սոսկալի դորայովդ  
աղետից վարդապետեալ լինի տեսութեամբ, յայնժամ բարեխրատքն  
ուրախացեալք առաւելագոյն յիրեանցն ողջախոհասցին առա-  
քինութեան կալ հաստատուն: Այսպէս պակուցեալ երկիրդ ոչ շա-  
փաւորապէս եւ շարացն ընդ կրունկ հարեալ՝ ակամայ ի զգաստ  
համեստութեանցն լիցին եկեալ քաջաբարութիւն, զի անվնաս զի-  
րեանցն եւ անխարդախ փորձեսցին անցուցանել ժամանակ:

9 Z զիւրեաւ  
20 AEI խոնարհել  
23 HI քաջ  
26 Z(Z<sub>2</sub>)B եւ (I) օտ.  
32 ZհեACEH կրուկ



բ. Եւ մի ի միտս ուրուք արտապողոտայ իրաւացոյն այս ձեզ  
 եկեացէ՛ ի շարացն պահանջել վրէժս: Ապա թէ ոչ՝ է՞ր աղագաւ ի  
 վաղնջուցն իսկ ի բարեփառ հարանցն հոգացեալ այս յօրինէր բեմ,  
 5 եթէ հասարակ եւ անորիշ խառն զշարացն ընդունէր պարս, նմանա-  
 պէս եւ զբարեպէր մարդկան: Եւ մանաւանդ զճշմարիտն ասել, թէ  
 բովանդակ իսկ աշխարհիս բարեկարգ յարմարութիւն շարժեալ վեր  
 ի վայր՝ ըստ ոչ բնութեան անցեալ ի տարազարդ առաւել դասեալ  
 լինէր յեղանակումն: Այլ վասն այնորիկ եւ օրէնս օժանդակեցին  
 10 ձեռն տուեալ աստուածայինք, զի զոր օրինակ պսակի արժանի  
 զյոյժ լաւագոյնսն առնիցէր ի մարդկանէ, նովին ձեւով եւ զանու-  
 զայսն՝ պատժի եւ մահու պատուհասի:

Թ. Եւ վասն զի յայդ իսկ սրտեալ զատուցայր նախերջանիկ  
 գահերիցութիւն յամենակալն ասեմ թագաւորաց եւ ի գոռ այլոց  
 իշխանութեանց<sup>69</sup>, վասն այսորիկ եւ ոչ խռն ինչ ընդ մէջ անկարու-  
 15 թեանցն ձեզ երեւի անկեալ տարակոյս առ ի զքաջահաճոյսն արար-  
 չին բոլորեցուց հատուցանել կամաց՝ հանգոյն այլոցն ընդ իշ-  
 խանութեամբ լինելոց մարդկան<sup>70</sup>, որ սոսկ տրտմելն եւեթ ունին  
 զանիրաւացն, յորժամ տեսեալք եթէ զըստ ոչն արժանեացն ի դէպն  
 20 ընկալեալ լինին պատուհաս<sup>71</sup>: Իսկ ձեռն՝ պղերգ միայն հեղգութե-  
 անցն աստանօր պահանջեալ ի բաց ընկեցումն եւ անդէն առ-  
 ձեռնպատրաստ արտաբերական բանիցն զկնի եւ գործն յաջորդի:  
 Բայց եւ ոչ վայրապար զայն է գիտելի, զի եւ աստուածայինն բար-  
 կութիւնքն յաղագս անտես զայսպիսիս առնելոյ դատելի շարժեալք  
 վաղվաղակի յաշխարհ հեղանին, հասանելով միանգամայն ոչ փոք-  
 25 րագոյն եւ ձերում իշխանութեանդ վտանգ տարակուսի իսկ եթէ  
 զհակառակն հոգացեալ՝ այցելութիւն ամենավայելուչ ձեօք հանդերձ  
 ի բովանդակ անցանէ աշխարհ եւ ի բազում խաղաղութեան յամես-  
 ցէ եւ բարեբաստութեան:

2—3 Z<sub>3</sub>BFHM եւ ի վաղնջուցն  
 14 EI այնորիկ,  
 18 AEI;M ըստ,  
 22 BCFHIK, աստուածային  
 23 ACEI գայսպիսիսս  
 26 AC ձեւք, B ձեւք,  
 27 Z(Z<sub>1</sub>)M աշխարհ անցանէ

< Գ Ի Բ Ք V >

ՍԱՀՄԱՆ ՆԵՐՐՈՂՆԻ

Ներբողեան է բան արտադրական եղելոց<sup>1</sup> բարեաց: Եւ ասա-  
 ցեալ է այսպէս յաղագս հնոյն ի գեղս գովութիւնս առնելոյ. գեղս  
 կոչէին զներբողոցս<sup>2</sup>: Ներբողելի է զդէմս, եւ զիրս, եւ զժամա-  
 5 նակս, եւ զտեղիս, զանբան կենդանիս, եւ զժառս<sup>3</sup>: Զդէմս, որպէս  
 զԳիմոսթենէս կամ զՊղատոն<sup>4</sup>. զիրս, որպէս զարգարութիւն կամ  
 զողջախոհութիւն. զտեղիս, որպէս զանդաստան կամ զնաւահան-  
 գիստ<sup>5</sup>. զժամանակս, որպէս զգարուն կամ զամառն. զանբան կեն-  
 դանիս, որպէս զձի կամ զարջառ, զտունկս, որպէս զձիթենի կամ  
 10 զորթ<sup>6</sup>: Եւ ի գովելն՝ պարտ եւ արժան է նախաշաւիղ առնել ըստ  
 տեղւոյ պատճառին<sup>7</sup>, ապա դնել<sup>8</sup> զազգն, եւ զնոյն բաժանել<sup>8</sup> ի  
 գաւառս եւ ի նախածնողս եւ ի հարս, ապա զսնունդն, եւ բաժանել  
 յուսումն եւ ի վարժս եւ յօրէնս:

Եւ ապա զմեծ<sup>9</sup> գլուխ ներբողենին դնել<sup>10</sup> զգործսն. եւ զնոյն  
 բաժանել<sup>11</sup> յանձն եւ ի մարմին, եւ ի դիպուածս. զանձն յիմաստու-  
 15 թիւն եւ յողջախոհութիւն, յարութիւն եւ յարգարութիւն<sup>12</sup>. զմարմին  
 ի<sup>13</sup> գեղեցկութիւն եւ ի զօրութիւն եւ յերագութիւն. զդիպուածս ի<sup>14</sup>  
 ճոխութիւն եւ յընչեղութիւն եւ ի սիրելիս:

Եւ ի վերայ այսոցիկ դնել<sup>15</sup> զբաղդատութիւն՝ յարագրութեամբ  
 20 ներբողեցելումն զմեծագոյնսն ընդունել<sup>16</sup>: Եւ ապա զի վերայ բա-  
 նին ի կատարման ըստ պատճառի<sup>17</sup>:

1 Z(Z<sub>2</sub>) ներբողենի  
 2 ZABCEFHJKMN եղելոյ, Z<sub>1</sub>1<sub>2</sub> բա-  
 րութեանց  
 6 N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub> պղատոն, J զՊղատոն  
 7 J կամ զողջախոհութիւն om.  
 9 N<sub>1</sub>N<sub>4</sub> ձիթենի  
 10 J ի om.  
 10—11 J ըստ եզելո  
 12 J եւ բաժանել om.  
 14 ZN<sub>2</sub>N<sub>3</sub>N<sub>8</sub> ներբողենին, EH զգործս  
 17 J յարագրութիւն  
 19 CEGH զի ի վերայ



ա. Ինձ միշտ ընդ առաւելասքանչին նախամարգարէն Մովսէս  
 եւ ընդ յոյժ գեղեցկակերպն չեբբայականն ազգի զարմանալ գայ եւ  
 յաւէտ հիանալ, ոչ միայն ընդ անբաւ ուղղութիւնսն նորա եւ ընդ  
 5 զուարճալի յառաքինութեանն մասանց, որ մինչեւ ի կառարն հճաս  
 շնորհի բարւոյն, այլ զի բարձեալ ի դէմսն կրէր յայտնապէս ցու-  
 ցիւք զաստուածայինն զգեցեալ ահաւոր փառս՝ օրինազրելով Իսրա-  
 յէլի, մանաւանդ թէ եւ ընդհանուր իսկ բոլոր տիեզերաց, առաջնորդ  
 միանգամայն եւ պատմող լինելութեան երկնի եւ երկրի<sup>18</sup> եւ որ ի  
 10 նոսա: Որով ինքն հոշակելին եւս ի վերայ լցեալ նշանագործու-  
 թեամբ, եւ այլ յաւէտ անթիւս առ նմին երեւեցոյց եւ զգովութեանցն  
 հանապազ բերս: Այլ նա այնքան զօրաւորագոյն եւ լուսաւոր մար-  
 գարէականն զուարճացաւ հոգւով, մինչ զի ոչ ումեք ըստ վայելուչն  
 արժանեաց եւ ոչ զարմանալ անգամ կարացէ. թող թէ եւ բանի  
 15 քննմամբ բաւականապէս գերազանցեալն հասանել իմաստութեան:  
 Բայց թէ եւ կամեսցի եւս գովել բարեսիրութեանն աղագաւ՝ զրո-  
 վանդակն ճշգրտի պատմել գործ, ոչ մի եւ երկու, այլ թէ եւ ամե-  
 նայն իսկ պարբ իմաստնագոյն բանաւորացն ի մի վայր ժողովե-  
 ցին, սակայն ոչ ինչ կարացեն մանրամասնաբար զաստուածական  
 20 առնն երանել բարեփառութիւն: Բայց այնքան եւ եթ օգտել ճառիւք  
 գեղեցկութեան զլսողս, որչափ իւրաքանչիւրն զօրեսցէ ասել ախոր-  
 ժակ հաճոյական կամաց: Որում եւ ես այժմ նմանապէս համարիմ  
 պատշաճագոյն լինել ըստ սովորութեանն իմաստնոց, թէ եւ զամե-  
 25 նայնն ոչ, այլ որչափ մեզն թողանի կարգաւ մի ըստ միոջէ վեր-  
 բերելով հանդիսասցուք անցանել այնպիսի բանիւք ի գովութիւնս  
 երանելոյ նախամարգարէին:

բ. Եւ նախ առաջին ի զաւառէն հաւեսցուք, յորում սքանչելին  
 ծնաւ այր՝ այսինքն յեգիպտացոցն զարգացեալ երկրի, ի կարի  
 յոյժ ամենայնիւ բարեբախտիկն վայրս: Անդ, ուր պայծառութիւն  
 30 շատութեան պողոցն է իբր ինքնարերս իմն, եւ գրեթէ անխոնջ  
 պահելով զմշակացն մանկունս ի բարեխառնութենէ՝ օդոցն, որովք  
 ցուցանի ուռճացեալ առ ի զանազանս բուսուցանել ծաղիկս, եւ զա-

նուշահոտ բուրաստանիցն հարկանելով վայելութիւնս: Տինա, այ-  
 նորիկ արգաւանդութիւն գաւառի յարազուարճ լինելով, հոժ ահա  
 եւ խիտ բազմութեամբ մարդոյ եւ անասնոյ, ընդ նմին եւ այլոցն  
 անբաւ բարեաց պարունակին ի նմա գոյութիւնք<sup>19</sup>:

գ. Եւ գլուխ պարծանաց ինքեան միշտ զամենագեղեցիկս բե-  
 5 րելով համարի զարմն, որ առաւել եւս ի նախահարցն ունի գովու-  
 թիւն. զորոյ բոլորեցուն արարիչն Աստուած յայտնի ծանօթութեամբ  
 եւ անսուտ բանիւ զնոցայն հոշակեցուցանէ առաքինութիւնս պա-  
 տուականագոյն անուանակոչութեամբ<sup>20</sup>: Եւ այնպէս գեր ի վերոյ  
 10 անցեալ զնոսա վարկանի արժանաւորս իւրում առնել մերձաւորու-  
 թեան զհեղինակսն ի բարեպաշտութիւն, մինչ զի զոր բոլոր աշ-  
 խարհ առանձինն ունի կոչել անուն պարծանաց՝ զԱստուած, զայս  
 նորա մի մի ի վերայ ինքեանց առին<sup>21</sup> փոխանակ անշափ ուղղու-  
 թեան վարուց:

դ. Գոյն օրինակ եւ ծնողքն սորա թէպէտ եւ յառաջագոյն ոչինչ  
 նշանաւորք ի տեսականն ազգի<sup>22</sup>, բայց սակայն ի վայելչականին  
 ծնանել, իբրեւ յոյժ հոշակաւորք եւ բարեհամբաւք ամենայնիւ չե-  
 կոտասանն անուանեցան ցեղս՝ հանդերձ որոշեալ պատուականա-  
 15 գոյն տոհմին Ղեւեալ: Եւ այնչափ մերձաւորագոյն եւ հուպ յաս-  
 տուածայինսն անցեալ կացին լուսաւորութիւնսն, զարգարելով բա-  
 հանայութեամբ միանգամայն եւ մարգարէութեամբ, որքան թէ Իս-  
 20 րայել ընդ երկնաւս յայլոցն ազգաց զանազանեալ կոչեցաւ ժողո-  
 վուրդ սեփական<sup>23</sup>:

ե. Բայց միւս եւս ի վերայ, զի սքանչելագոյն զարձեալ նորին  
 25 եւ ծնունդն էր, ի կարգիս անցեալ տեսցուք: Քան անդէն իսկ ի ծնա-  
 նելն հրաշալիօք իմն գողցես ինքեան զեկուցանէր համօրէն զփր-  
 կութիւն եւ զազատութիւն ազգին, խափանելով յիսկզբանն նախ  
 զգոռոզ թագաւորին հրամանս<sup>24</sup>, որ կատարեալ զօրանայր ի ժա-  
 30 մանակին ի վերայ հեբբայեցուցն, երբեմն աներեւութաբար՝ հեղ-  
 ձուցիկսն տալ առնել զմանկունսն, եւ երբեմն յայտնապէս ի միջոյ  
 ի բաց բառնալ: Իսկ յորժամ զաստեւոր եւ զզարմանալին տեսին  
 ծնունդ, անդէն արգելեալ շարութեանն լինէր գործ. վասն զի ի նմա  
 ճշմարտապէս ցուցանիւք, որպէս ասացի, պէսպէս աստուածայինն  
 ծաղկեալ շնորհն: Որ առժամանակ մի թաքուցեալ լինէր յահէ թա-

1 Z<sub>2</sub>K<sub>1</sub> Մովսէսի մարգարէին,

5 AEIKM էհաս

8 B առաքինութեանս

24 Z(Z<sub>1</sub>) եւ նորին

25 Z<sub>2</sub>EH ծնունդ

28 Z(Z<sub>1</sub>)E զհրամանս



գաւորին եւ պաշտպանեալ իբր ի վերուստ յամենաբաւական աշոյն՝  
 ի ձեռն ծնողացն նախախնամութեան իմաստից, որում արուեստի  
 տապանակ գործեալ զնէին ի ներքս ընկնելով ի խաղին: Եւ անդ  
 ապրեալ ըստ պատահման, եւ ըստ տեսութեանն Աստուծոյ ի գրս-  
 տերէ թագաւորին լինէր, զոր առեալ ի վեր, թէպէտ եւ գարշելիք  
 համարեալ էին երբայցեցիրն յաշս եգիպտացոցն<sup>31</sup>, սակայն սակս  
 շնորհալից դիմացն եւ առոյգ զեղեցկակերպ բնութեանն ոչ ինչ  
 զանգիտեալ. բայց խանդաղատելով վաղվազակի յորդեգիրս իւրու-  
 մն հաստատէր երջանակութեանն<sup>25</sup>:

10 գ. Եւ իբր շքնազագիւտ համարելով խնդութեամբ յայնժամ եւ  
 մեծաւ գրգանօք տարեալ ի թագաւորականն խնամէր տան, սնուցա-  
 նելով զանազան կերակրանօք, եւ գունակ գունակ զգեցեալ պատ-  
 մուճանօք, եւ զգուշացեալ այնուհետեւ ուստի խոզիսողմանն էր եր-  
 կիւղ՝ նմին իրի ի նոցունցն երթեալ գարմանէր յարկս<sup>27</sup>:

15 է. Եւ ապա յորժամ ի փոքր մի զարգացելումն տղայական ի  
 վեր շարժէր հասակ, անդէն եւ անդ եւ ոչ սուղ ինչ ծախեալ ժամա-  
 նակ ի վատթարն անցուցանէր արուեստս իբր զգեղջուկ օք, այլ  
 փութապէս վարժէր եւ հրահանգէր<sup>26</sup> ի նմին յնդիպտոս զբանական  
 պայծառութեանցն գիտութիւնս<sup>27</sup>:

20 ը. Եւ անդուստ առլցեալ իմաստասիրութեամբ այնգունակ մի  
 ընտ միողէ, յորժամ սկսաւ ի բարձրագոյնսն ամբառնալ կատար-  
 րելութիւնս՝ աճեցուն հասակաւ եւ զարդարուն հանճարովք, արհա-  
 մարհեալ ի բաց այնուհետեւ հրաժարէր կոշիկ որդի. դասերն փարա-  
 տնի. եւ որպէս առ ոչինչ իմն զգանձուցն վարկանելով մեծութիւն  
 առ այնու ցանկութեամբ զոր ախորժեացն իսկ եւ կրթեցաւ վրէժ-  
 ինդիր լինելով ազգին ի թշնամեացն: Եւ զայս փափագումն արկ-  
 եալ ի յոգին՝ անցեալ զնայր, յազատութիւնն՝ օգնականութեամբ  
 Աստուծոյ ի խիստս ստրկութենէ շարշարանաց զբովանդակ իսրա-  
 չէլեանն ձգեալ ազգ<sup>27</sup>:

30 թ. Այլ նա թողեալ զայսոսիկ, առ սակաւ սակաւ ի մեծն երթի-  
 ցուք գովութիւնս<sup>28</sup>, բննելով թէ որո՞վք արդեօք վարեցաւ օրինօք:  
 Այլովք եւ ոչ միով, բայց միայն հայրապետացն առաքինութեամբ,  
 զորս իբր առաջի աշաց ունելով զնոցա նահատակութեանցն բարե-

4 AEI պատահմանն  
 9 ABHIM երջանկութեանն

29 Z(Z<sub>1</sub>)BK ազն  
 32 Z<sub>4</sub>AE միովք

պաշտութիւնսն ընթեռնոյր յորդորելով եւ առ լինքենէ եւս ի նոյնն  
 յաւելոյր լինելով եւ այլոց օրինակ բարեաց: Եւ թողեալ զայն ոչ  
 զօրէն երից նախահարցն<sup>29</sup> անգիր յիշատակօք յառաջ մատուցեալ  
 հաստատէր զճշմարտութեանն ստուգութիւն: Բայց այնպէս իմն ար-  
 ժանաւոր գտեալ մեծամեծ սքանչելեաց իրով զերազանցեալ մար-  
 րութեամբ վարուցն, մինչ զի աղբիւրաբար առ ի լինքեան բազում  
 եւ մեծամեծս հոսելով յաւետախաղացս վտակս, բաւականապէս ա-  
 մենեցուն զրով զգերաշխարհիկն ընթեռնոյր օրինադրութիւն աս-  
 տուածայինն գրեալ մատամբ<sup>30</sup>:

10 ժ. Առ այսոսիկ դարձեալ բերցուք զնորա եւ զգեղոյն հանգա-  
 մանաց տեսիլ, եւ այս ո՞ւմ ոչ իցէ յայտնի. զի զոր նա ի տղայու-  
 թեան ունէր զեղեցկութիւն հրաշալի, զայն եւ ոչ յարբունս տիոցն  
 որ պանծասցի բերել պարծանս ի տեսողացն առաւելեալք զեղեց-  
 կութեամբ: Եւ ստուգելի զսոյն ի թագաւորին է դասերէ, յորժամ  
 ետես զնա պայծառացեալ զեղեցկութեամբ յամենայն մասանց  
 մարմնոյն, ոչ ինչ զանդաղեցաւ առնուլ իւր ժառանգորդ՝ վասն ա-  
 ռաւել հաճոյական փափագանացն: Տի՛նա՛ այնչափ զբաւեալ ի գեղ-  
 ոյն պատրեցաւ բաղձանս, զի ոչ բնաւ ընդ միտ զխտրութեանն իրս  
 ածել ըստ բնական սովորութեան՝ զոր առ իսրայէղացիսն ունէին<sup>31</sup>,  
 բայց վաղվազակի լինքն առեալ ընդունէր<sup>27</sup>:

20 ժա. Իսկ եթէ զեղեցկութեամբ այնպէս ցուցաւ զարմանալի,  
 ապա եւս սքանչելի զօրութեամբն գտցի ըստ երկուցն հանդիպեալ  
 ժամանակացն: Առաջին՝ զի զեգիպտացին տեսանելով ի վերայ իւ-  
 րոյն գոռոզացեալ տոհմայնոյ եւ ընթաղրեալ առ ետեղն սատակէր՝  
 25 բռնագոյն վարեցեալ հարստահարութեամբ<sup>32</sup>: Եւ երկրորդ անգամ՝  
 զմեծն կափուցեալ ի բերան ջրհորոյն վէմ, զոր յորունք եկեալ ջա-  
 նային հովիւք եւ հազիւ թէ շարժէին. իսկ նա միայն առանց ուրուք  
 օգնականի կարաց ի բաց տապալել եւ զբռնացեալ հովիւսն հալա-  
 ծել միայնամարտութեամբն եւ օգնէր հաճոյացեալ օրիորդացն մա-  
 30 զիանացոց կարող ձեռամբ արբուցանել ջուր խաշանցն<sup>33</sup>:

ժբ. Նոյն գովելի եւ յերագութեանն է մասին՝ դիրաշարժ զնա-  
 ցրս ի Մագիամն<sup>34</sup> առնել փութանակի: Այլ եւ ի կատար լերինն  
 ստէպ ելեւէջս առնելով եւ ի գլուխ զյառաջարկեալն տանել զորձ՝  
 թեթեւագոյն մարմնոյ ցուցանէր հանդես<sup>35</sup>:

4 Z<sub>2</sub> զճշմարտութեանցն գստուգու-  
 թիւն, AEI<sub>2</sub> գստուգութիւն  
 9 E1 աստուածային  
 13 A1 առաւելեալ

24 Z(Z<sub>1</sub>)CM տեղն  
 31 Z<sub>3</sub>K սոյն  
 32 Z(Z<sub>1</sub>) ի վերայ կատար



ժգ. Բայց շեւ եւս զմեծն սորա ասացեալ երանութիւն զոգուոյն  
զառաքինութեան մասունս, որովք քան զամենայն մարդ առաւելեալ  
գտանի: Եթէ յիմաստութեանն, առաւել հմտագոյն ոչ մարդկայնովս  
եւ եթ վայելչացեալ հանճարով, այլ եւ աստուածային ճշմարիտ  
տեսութեամբն: Յորմէ ի լիագոյն իմաստութենէն վայելելով յայտնի  
բոլորեցուն կարգաւ մի ըստ միոջէ զաշխարհարարութեանն պատ-  
մէր գործ, միանգամայն եւ զօրէնսդրութեանն իսկ՝ ի հինգն շարա-  
դասէր գիրս: Որոյ իմաստութիւնն անմոռաց մինչեւ ցայժմ եւս նո-  
րայն է կատարելագոյն:

ժդ. Այսպէս եւ յողջախոհութեանն ո՞վ պարկեշտագոյն քան  
զասացեալս գտցի, այլ, որ քառասնամեայ աւուրքք ժուժկալեալ՝  
զմաքոր կուսութեանն պահեաց զաւանդութիւնս, եւ այն զի կեցեալ  
ի տան թագաւորին հանդերձ փափկութեամբ, ընդ որ առաւել է  
զարմանալ: Զկնի այնորիկ թէպէտ եւ զուգեաց իւր ամուսին ոչ յա-  
ղագս հեշտ ցանկութեան մանաւանդ, քան թէ զօրէնս բնութեանն  
լնլով, եւ հարազատն զաւակի յառաջ խաղացումն առնել. մինչեւ  
երկուց լինել որդուց, եւ ապա թողեալ ի բաց միայն աստուածայ-  
նոյն պարապէր բանի անսխալ կարծեօք:

ժե. Եւ ի վերայ այսորիկ ունէր մեծագոյն պսակ պարծանաց  
եղեալ յարբունական կերպարանին գլուխ՝ զյոյժ հռչակելի արութի-  
ւնն: Քանզի առ ոչինչ զթագաւորին համարեցաւ զսպառնալիս՝ իւ-  
րովն անպարտելի քաջարութեամբ<sup>36</sup>, որ եւ ի նոյն յուսացեալ միւս-  
անգամ ի նահատակադիրն Աստուած, համարձակութիւն բերէր ան-  
երկիւղաբար տիրել ի վերայ ամենայն հակառակամարտն զոռո-  
զաց: Նա, եւ զառ ի Մադիամն զփախուսան<sup>37</sup>, որ էր ոչ անարու-  
թեան գործ, այլ զօրէն քաջ նահատակի հնարաւոր իմաստից պա-  
ճարանք, որ առ ժամանակ մի խոյս տալով, յաղագս այնորիկ զի  
կարօտասցին ազգն օգնականութեան նորին. եւ նա պարապելով ա-  
ռանձինն զօրութեանցն հրահանգեցի հմտութիւն, որպէս պարտ եւ  
պատշաճն էր լինել յառաջիկայսն: Որպէս եւ եղեւն իսկ, յորժամ  
զարձեալ յնգիպտոսն իջանէր հոգեւոր սպառազինութեամբքն եւ  
աստուածաբար ի ձեռին առեալ շորիւքն վարելով տարերօք<sup>38</sup> կըշ-  
տամբել եւ յանդիմանել զգոռոզն եւ համօրէն տասնհարուածեալ  
զաւաղանսն զրովանդակն տանջելով քանդէր երկիր եւ քաջապէս

յաղթութեամբ կարող լեալ փրկել զազգականս ի շարաշար նեղու-  
թենէն:

ժզ. Եւ անդէն առ նոսին զարդարութեանն կատարէր գործ:  
Նախ՝ կանխագէտն ասեմ շնորհիւ, որոց հրաման առեալ ընդ վաս-  
տակոյն ի հակառակամարտիցն պահանջել վարձ, իբրեւ ճշմարիտ  
իմն վարելով դատողութեամբ կշռապէս զխնդիրն տայր առնել առ  
գործոյն հաշուելով զուգահաւասար վարկիւ պատճառանօք զանօթս  
ոսկւոյն առնուլ եւ զարծաթոյ<sup>39</sup>: Եւ երկրորդ՝ արդարութիւն, ամե-  
նայն աշխարհի զգրաւորականն ընձեռելով գիրս խրատու եւ նախա-  
զգուշութեան:

ժէ. Բայց բեր աղէ փոխեցուք բանիս եւ յարտաքինն նորա  
հայել մեծութիւն, զոյս շուրջ զիւրեւ ի բոլոր ազգացն հաւարեալ  
խրումն համբարէր ազգի, առաւելապէս իմն կամեցեալ երեւցու-  
ցանել բառացիս առ բնաւ ազգօք, փոխանակ թշուառականագոյն  
աղքատութեանն: Եւ յայտ ի խորանին կազութենէն է<sup>40</sup>, ոյք զանա-  
զան զեղեցկութեամբ յարուցեալ կանգնեցին նիթովք պատրաստու-  
թեանն՝ յայնմանէ ի նորայն մթերից ստոյգ արդարեւ հրաշակերտ  
աստուածային կոչեցեալ խորան: Բայց եւս աւելի քան զասացեալսս  
անդր եւ զեր ի վերոյ այնր զգալի մեծութեանն զհոգեւորն տարաւ  
փարթամութիւն ճոխութեան:

ժը. Եւ ապա թող զայսոսիկ, ո՞ ոչ ընդ նորա եւ ընդ ահաւորն  
զարմանայցէ իշխանութիւն. եւ կամ ընդ նորասբանչ լուսաւոր պայ-  
ծառութիւնն՝ ըստ յառաջագոյն ասացելումն, որ անշափ զաստուա-  
ծայինն էր զգեցեալ փառս եւ տիրէր՝ ոչ իւրումն եւ եթ բազմա-  
խումբ ժողովրդեանն այնոցիկ, որք ոչն կարէին հօլանի ի դէմս նո-  
րա հայել, այլ եւ բնաւից իսկ շուրջ զիւրեւ բարբարոսացն, եւ գրեթէ  
ընդհանուր տիեզերաց՝ ըստ համբաւոյն սքանչելեաց ի վերայ մե-  
ծին թագաւորէր անուն:

ժթ. Սոյն ահա աստուածաբանալս այր ամենայն ուստեք եւ սի-  
րելեօք լինէր զուարճացեալ, մի՛ զհամօրէնն իսկ ունելով ժողովուրդ  
եւ ապա՝ ի նոցունց զպատուական ծերոցն դաս եւ բազում այս ի  
բարգաւաճագունիցն մարդկան: Տինա՝ միանգամայն իսկ է զԱստու-  
ած ասելն նմա բարեկամ, եւ կամ զբոլոր անմարմին զօրութիւնն  
ոչինչ վրիպեմք ի ճշմարտութենէն, զի նորին Աստուծոյ է ձայնս

13 ZB թագաւորի  
22 ZB քաջութեամբ

32 Z<sub>1</sub>EI ձեռն

23—24 Z(Z<sub>2</sub>) էր զգեցեալ աստուածա-  
յինն

24—25 Z բազմաբոխ  
31 ZB բազումս



ասացեալն. «ոչ ընդ ումեք այնպէս յանդիմանակայ խօսեցայ, որպէս ընդ իմում ծառային Մովսէսի»<sup>41</sup>:

5 Ի. Եւ մասն մեծ գովութեան երանեալ նախամարգարէին կեանքն եւ զկնի կենացն կեանքն լի եւ խորին եւ պարարտ ծերութեամբ՝ յերիս քառասներորդս հասանէր ամս, եւ ըստ հաստատուն գրեցելումն ոչ ունելով կարկամութիւնս ի զէման, եւ ոչ մի ինչ պակասութիւն ի բոլորն անգամոց<sup>42</sup>: Բայց յամենայնէ այսպիսեացս անբստգիտ եղեալ՝ զիւրն անցուցանէր ժամանակ ի բարի հասանելով վախճան, եւ միջասահման երկաքանչիւր կողմանցն լինել, զոր արժանաւորապէս ասացից, ոչ մահու գրաւեալ, այլ անմահութեամբ զուարճացեալ: Քանզի ըստ թաղմանն կարծիս տայր զհասարակացս կրել մահ<sup>43</sup>, բայց ըստ աստուածայինն ծածկեալ աշոյ՝ ոչ ի մահ, այլ ի կենդանութենէ յառաւել փոխադրեալ կենդանութիւն:

15 Իա. Եւ զկնի մեծարգի կատարմանն զյոյժ անմոռանալին պարծանաց եթող յիշատակ, որ մինչեւ ցայժմ եւս եւ յանբաւ յաւիտեանս անապական ընդհանուր նորայն պատմին կատարելագոյն իմաստութեանցն մարգարէութիւնք յամենայն եկեղեցիս Քրիստոսի:

20 Իբ. Եւ ի՞բբ ապա, որ այսպէս ի բոլոր կողմանց զգեր ի վերոյսն էառ գովութեան մրցանակս, կարասցէ որ առ սա զհամեմատութեանն հատուցանել վարկ: Ինձ թուի թէ ամենայնիւ եւ ոչ բնաւ որ, բայց թէ մեծն ի ծնունդս կանանց յարուցեալ Յովհաննէս: Այն որ զոգուցն մաքրեաց զերեսս յաշխարհականս արէկոծութենէ՝ եւ լուսափայլ առաքինութեամբ յանդիման զԱստուածն ետես բան, եւ 25 առընթեր բոլորեցունց ականատեպ եցոյց մատամբ: Նա՛ այժմ որ երբեմն մեծի թագաւորին անուանեցաւ կարապետ, եկեալ հանգիտապատիւ այսորիւք ցուցցի օրէնսդրին Մովսէսի<sup>44</sup>: Զի զոր նա ի մօտոյն պատմեաց, զայն սա ի հեռաստանէ յառաջագոյն վճարեաց՝ պատմելով զգալուստ փրկչին եւ զամենայն տնօրէնութեանն մարգասիրութիւնս, զորս կատարեաց, եւ սպասաւոր պաշտօնէին հրամայեաց հնազանդ լինել<sup>45</sup>: Արդ՝ այլովքն ամենեքումբք առաքինութեամբք արդեօք կայցի զհասասարութիւնն, բայց միւսովն՝ թէ ոչ է

13 ABI փոխադրել  
15 Z(Z<sub>1</sub>)ABHI մեծյարգի  
21 AEI վարկս  
25 Z<sub>2</sub>K նայն  
27 Z(Z<sub>1</sub>)ABCH օրինադրին

շանդաղելի ասել, օրինադրութեամբն, թուի թէ գեր ի վերոյ անցեալ դասեսցի ի բարձրագոյն նազելով տեղոջ ըստ բարեկամութեան օրինի:

5 Իգ. Ինկ արդ որ այնպէս յիսկզբանցն մինչեւ ի կատարածն զյաղթանակն էառ գովութեան եւ ինքն ըստ ինքեան ի կարի յոյժ հրաշափառագունիցն գտաւ աւարտեալ առաքինութեանցն մասամբք, իմաստասիրութեամբք եւ ողջախոհութեամբք, արութեամբ, եւ արդարութեամբ, եւ անթիւք այլովքն համանման բարեօք՝ հոգոյ եւ մարմնոյ գեղեցկութեամբ: Ընդ նա ապա ոչ միայն զարմանալ է եւ 10 գովել, այլ եւ ընդունել եւս մեծաւ բաղձանօք մերովք յարդարեալ բարեպաշտութեամբ: Եւ միշտ պարապ բերելով իմաստութեանցն աղազաւ արժանաւորապէս ըստ նորայն վայելչութեանց կարել յաւելտ զաշխարհագովութեանցն յօրինել բանս եւ հանապազ երանելով էտ զաշխարհագովութեանցն յօրինել բանս եւ հանապազ երանելով 15 վերայ զտէրունականն յարադրելով արձակել ձայն՝ զասացեալսն առ հրէայսն թէ. «Մովսէս զամենայն ինչ որ մարգարէացեալն գրեաց, յաղագս իմ էր եւ յաղագս իմոյ գալստեանն, մարմնանալոյն միանգամայն եւ հայրենի ծոցոյն ճանապարհորդելոյն յաշխարհ»<sup>46</sup>:

<2.> ներբողեան ձիբեւոյ<sup>47</sup>

20 ա. Որ ինչ միանգամ ի վաղնջուց անտի եկեալ ի կենցաղս կենդանեացդ գոյացան տեսակք, ամենեցուն ըստ իւրաքանչիւր ումեք այլ եւ այլս քան զարժանաւորն դէպ եղև կրել վարուց հետեմունս ըստ անվայելչականին սովորութեան, բանաւորին՝ կամաւոր 25 փոփոխմամբ ի բարոյն ի հակառակն եւ անբանից՝ ըստ ժամանափոփոխմամբ ի բարոյն իստաւորութիւն: Բայց տնկոցդ բնութիւն, կի ընդունել զայսպիսի աստաւորութիւն: Բայց տնկոցդ բնութիւն, որում ի լինելութեանն վիճակացաւ բնութեան<sup>48</sup>, ի նմին եւ յաւել- 30 ժացեալք յանհատն յարածամ պահին մշտնջենաւորութեան, ոյց պատշաճագոյն արգասաւորութիւն բոլորիցն յիւրաքանչիւր զրուցեալ յայտնեսցի գովութեանց: Այլ այժմ, որ առաջի կայ մեզ գեղեցկայարմար եւ հռչակելի առաքինութիւն ձիբեւոյս, սկիզբն արաւել բարեկանաւ բանիւս ծանօթացուցուր: Որ արդարեւ յօգտավերբերականաւ բանիւս ծանօթացուցուր: Որ արդարեւ յօգտավարագոյն բերմանէ իւրոց շահիցն յարգեալ եւ պիտանացու ի մէջ

10 Z<sub>2</sub> յարադրեալ  
13 EI յօրինեալ  
15 E<sub>2</sub>K<sub>2</sub> յարդարելով  
24 ZC անբանիցն  
31 Z<sub>2</sub>AEI կրելոցն  
32 Z<sub>4</sub>AEIK ծանօթացուցուր



տեսողացն եւ զօրէն պատուականագունի եւ փարթամացելոյ ի բո-  
լոր գոյացութենէ ծառոց ի վեր համբարձեալ առաւելեալն ազնուա-  
կանութեամբ՝ եկեալ բերէ ըստ անկիցն իւրոց զամենահաճոյ եւ  
զհրաշալի գովաբանութիւն:

5 բ. Եւ նախ առաջին՝ յօրացնալ բարեբախտութեամբք ի գաւառէ  
անտի: Քանզի տեղի որոշեալ սորա ընդհանրական աշխարհ է բնա-  
կութեան. ոչ զարեգակնակէզ եւ զտապայեղց խորշակագնաց վայ-  
րըս, եւ ոչ զարձեալ զգժոխըմբերագոյնան եւ զվտանդեցուցիչ՝ տի-  
րեցեալ ի սառնամանեացն, այլ զբարեխառնն եւ զառցեալ զանա-  
10 զան պայծառութեամբ՝ սոցին միջասահմանն: Որ օգտակարին եւ եթ  
ընդունակ լինելով մասին, ոչ միայն միում ումեք, այլ առ հասա-  
րակ իսկ կենդանեաց փափագելի համարեալ, հնարին անզբազա-  
պէս ի բոլոր ժամանակի տատուստ պաշտեցեալն հասու գոյ զար-  
գացմանց, ըստ որում եւ զուարճացուցիչ եւ ցանկալի ի ձեռն առե-  
15 լոյ տնկոյս կալուածոց<sup>49</sup>:

գ. Եւ ի նախածնող սորին լինելութեան սկիզբն եւ հաստա-  
տութիւն կենդանականս երեւի պատճառաց, ուստի ամենապատիկն  
պարզեւք եւ շնորհք հաւասար առ իւրաքանչիւր ուրուք պէտս հաս-  
եալ՝ մատակարարեցան յաշխարհ. եւ նովիմք յօրինեալ ամենայն  
20 ինչ՝ կայ եւ ունի զանհրաժարելին հիմնեցուցեալ վայելչութիւն<sup>50</sup>:

դ. Իսկ ծնողս սմա այլս զո՞ եւս որ ասացէ, զի անծածուկ  
երեւութիւ յայտնեալ ճանաչին ժրագլուխք եւ արդարակորով եր-  
կրագործքն, որք առ իրեանցն մտերմաբար երկասիրութեանց  
աշխատութիւնս եւ ջանս արկանելով յերկիր ըստ այլոց սերմա-  
25 նեաց եւ տնկոց յիւրաքանչիւրն կացուցանելոյ յօրինուածի, ածեալ  
եւ զառաջի եղեալս յիւրումն հանդերձեցին կազմութեան:

ե. Եւ քանզի սա այնպէս ունի զբազմօրինակ սննդեանն ի վե-  
րակացուցն հայցեալ պաճարանս, ոչ որպէս զոմանս ի պասքե-  
ցելոցն եւ յանլցուցանելի բնութենէ ծառոց, առ որս անդրանալով  
30 յանվճար զղարմանս մատուցանելոյ խնամողացն եղկելի եւ թախ-  
ժականն ըմբռնեալ յարածամ կշտամբեցին տարակուսանօք: Եւ ոչ  
զարձեալ նմանի կարի յոյժ բամահելի անպիտանիցն, զորոց ան-  
փոյթ աննելով ստացողացն թողուցուն անխնամս: Այլ զի զիւրա-  
կրելի եւ շափաւորապէս զտածմանցն խնդրել նիւթս, բազում  
35 խնդամտութեամբ եւ հաւանական կամօք ակնածու սմա ընդունդ-  
ղացն լինելով զկատարելութեանն յօժարաբար ընձեռեալ ախորժա-

6 Z1FI յաշխարհէ  
104

կրս եւ հաւաստագոյն եւս վստահութեամբ անցեալ ժառանգութեան  
վասն զրկեցելոց ի սմա ունակացեալ տեւողութեանց առնուլ հմտու-  
թիւն. զի հաւատարմացեալ կամաւորութեամբ եւ օրինօք՝ զկար-  
ծրատուր եւ զանվթարելին հաստատեալ ունի յինքեան բնութիւն:  
5 Զոր առ այժմ փոքր ինչ զեկուցանելով համառօտաբար՝ յապա ե-  
կելոց ծանօթացուցուք սորին աչողագոյն տեսութեանց:

զ. Որոյ ըստ այլումն ամենայնի պատուականութեան մեծարգի  
եւ մեծանձնութիւն հասակի, առանձնացեալ ի բարձրաբերձացն ա-  
ճեցմանէ, որոց ի յանհեղեղ առաւելութենէն՝ բազում անգամ պա-  
տահումն բնկալեալ՝ զձուձք եւ խոտանք յաշս տեսողացն երեւես-  
10 ցին. եւ է երբէք զի վայրաբերութեամբ իսկ անյիշատակ զբարձու-  
մըն ի տեղեացն կրիցեն, եւ զնոյն որոշումն ի գետնանախանձիցն եւ  
երկրաքարշ պատաղելոցն ընդունելով, կշռակի եւ շափաւոր գոյու-  
թեամբն ի մէջ երկոցունց շարապատահ զժրնդակութեանցն զուար-  
15 ճացեալ՝ կրեալ բաւականապէս զընդացմամբ ողջութիւն<sup>51</sup>: Եւ հա-  
ւատ հաստատուն զանկորացուցանելի կազմութենէն սորա գեղեց-  
կութեանն ընձեռէ զուխ, զի ոչ ի ձմեռնային ժամանակէ հերբեալ  
իրրու զայլս, եթէ սաղարթաթափ լեալ զգեհնուցու զտխրական տգե-  
ղութիւն. այլ առ ոչինչ համարելով զասացեալ ընդգիմամարտու-  
20 թիւնս, փթթեալ յարածամ ամառնային ակնախտիղ գեղապայծառու-  
թեամբքն, եկեալ պատրաստաբար ի ժամանակի զբաջապողու-  
թեանցն ցուցանէ առաւելութիւն<sup>52</sup>, որովք առատաբեր եւ հասուցա-  
նող ի կատարելութիւն ի մէջ հոմանմանիցն երեւի տնկոց: Եւ ըստ  
նմանութեան յարգոյ եւ պատուականագիւտ գանձուց ամրածածուկ  
25 ի վնասակարացն յարձակմանց զպտուղսն առնելով բնաւորական  
պահպանութեամբ՝ ամբողջս եւ պատարունս ընծայելով ստացո-  
ղացն:

է. Յորոյ անկարօտ բեղնաւորութենէ բազում ինչ իրաց առ իւ-  
րաքանչիւր պիտանացու խնդիրն մատակարարել պաշտպանիցին  
30 խնամք, զմարգելոյն առեմ եւ զյօրինիչ կերակրանացն նիւթոյ եւ  
ընդ նոսին՝ հաւասար զարծարծումն լուսաւորութեան: Որովք ուռ-  
ճացեալք հողեւորականն մասամբք զբարեւաւութիւն յանցնիրն  
զուշակեն ընթացից:

3-4 Z կարժրատարք  
12 AE գետնանախանձից  
16 B զանկորացուցանելի  
20 IZ<sub>2</sub> գերապայծառութեամբքն  
22 Z հասուցանող  
32 AEI հողեւորական



ը. Քանզի երբեմն սա իւրով շահաւետագոյն բերովք ի մէջ  
ըմբշական մրցմանցն<sup>53</sup> մատչելով ի մարզումն, առաւելագոյնս  
քան զընաւ նահատակաց խումբս, ոչք կարօտեալ օգնականութեան  
մենքննայից եւ հնարաւոր գործեաց եւ առանց նոցա զվրթպանացն  
5 եւ եթ ունին կրել նշանակաւ: Բաւական է զայն ի ձեռն առելոցն ցու-  
ցանել գործ հզօրապէս ուժգնութեան եւ զնոյն վեհագունիցն կացու-  
ցանել արժանի պարգեւաց եւ պատուոց<sup>54</sup>:

Թ. Ընդ որոց հայելով յայսպէս պատրաստութեամբ ըստ իւրա-  
բանչիւրոցն առնել վճարումն, կարծեմ թէ եւ պաշտեցեալ ի սմանէ  
10 արդարութիւն է բոլորեցուն գիտելի: Զի ոչ երբէք ըստ որթոյդ վրդո-  
վասէր բերոց, եւ կամ ըստ այլոց եւս նմանելոյ սմին ցուցանէ առ  
ընդունողսն զժընդակութիւն, թերեւս խելագարութեամբն ապշե-  
ցուցանելոյ հաւ շարեաց կարգացեալ, յիրաւացի եւ ի ճշմարիտ  
վարուց զըմբռնեալսն յինքնէ ի հոլանեայն փոխէ անիրաւաբար  
15 յանդգնութիւն, այլ հեշտընկալ եւ խաղաղասէր մատուցմամբ իւրո-  
ցըն շահից խնամարկեալ զստացողսն դարմանէ՝ ի յստակամիտ եւ  
յանզեկս զգաստութեան վարս հաստատուն պահելով:

Ժ. Եւս գեղեցկագոյն մատակարարութեան յինքնէ սկիզբն արա-  
րեալ՝ զլուսոյն արժարժման յինքնէ մատուցանէ պէտս, որով  
20 զխաւար գիշերոյն քայքայելով յորդորեացէ զնոսին յիմաստասիրա-  
կանն ներակրթել վարժման, առ ի շուրջ տեսութեամբն զփորձ ճա-  
շակելոյ համանգամայն իրաց աշխարհիս հնարեսցին զօգտակարն  
ի բարի երեւմանէն մտերմաբար ախորժակ ընդունելի ստացումն  
եւ նորին ընդդիմակին հրաժարումն եւ ի բաց բարձութիւն յիւրե-  
25 անցն յորինեալ կազմութեամբք սահմանաց<sup>55</sup>:

Ժա. Յորում ամենապատիկ երանութեամբք պայծառացեալ վի-  
ճակի պէսպէս կրօնիւք քարելաւութեան, զետեղեալ իբր ի խաղա-  
ղացեալ նաւահանգստիս՝ ողջախոհութեանն մասն եւ յաճախապէս  
եւս քան ըստ ինքեան խոհականութեանն զօրավիզն օգնականութե-  
30 ամբքք պաշտպանեալ ունի զգաստագոյն պարկեշտութիւն ի յաւե-  
ժացեալն հաստատեալ տեսողութեան<sup>56</sup>:

Ժբ. Եւ զի այս այսպէս հաստատութեամբ խոստովանեալ կայ  
եւս առաջի ի վեր բերել զսորա զփարթամութեան երիցացուցեալ

արգասաւորութիւն, որ ոչ միայն ըստ միում իմիք օրինակին մանու-  
թեամբ անկարօտ հաճելի իրիք շահից լեալ պիտանացու ստացո-  
ղացն, այլ բոլորովին իսկ ինքն հանդերձ վայելչացեալ սաղարթ-  
իւրն եւ պտղով ընդունելութիւն մատուցեալ կրել հանապաղ զս-  
պաստանեցելոցն խումբս ի քաջաբաստիկն ունի երանութեանն<sup>56</sup>:

Ժգ. Եւ մանաւանդ զի եկեալ առ այս, ձեռնտուութիւն մատու-  
ցանէ բազմութեամբ սիրելեաց մշակացն մանկամբք, եւ ամենայն  
իշխանօք եւ իշխեցելովք<sup>57</sup>:

Ժդ. Եւ առ նմին երկարութիւն սորին ժամանակին, քանզի այն-  
պէս բաւականութեամբ ունի զկենացն տեսողութիւն, մինչ զի կա-  
10 րողութիւն է առ մի մի այլոցք եռամասնեայ զինքեանն ցուցանել  
ամանակաց թիւ: Եւ զսոյն ոչ եթէ վայրապար ինչ առանց շահի  
ընդունայնս անցուցանելով, մինչ եկեալ հասեալ ի բնաւիցն սահ-  
մանեալ վախճան<sup>56</sup>:

Ժե. Որոց ըստ այլ ամենայն բազմաբեղուն ուրախարերն շա-  
հից, համայն եւ հրաժարելն ի կենդանութենէն ոչ ամենեւին ան-  
յիշատակացեալ մնացեալ սորա հանգստակաց վայրն եւ ոչ դուզ-  
նաքեայ ինչ անաճ երեսցուցեալ բողբոջ, այլ յօբունս անթառամ-  
ելի առուզութեամբ բուսուցեալ շառաւեղս: Որոց պատշաճագոյն  
20 ընդունելով աճեցումն՝ անմոռաց զսորուն եւ ձեռով եւ գոյութեամբ  
եւ այլեւս աջողակ ունակութեամբ եկեալ ցուցանեն տեսողաց նմա-  
նութիւն<sup>56</sup>:

Ժզ. Զոյր այսպէս տեսանելով յամենայնի նահատակութիւն՝  
բաւական համարեալ արդ առ ի քննելոյ զմիանգամայնս իսկ յար-  
25 դարուն եւ ամենահաճելի կատարելութիւն բարւոյ, անցցուք եւ  
զբաղդատականին եւս փորձ համեմատութեան տեսանել: Առ որ  
զո՞վ որ ի յայլոց տնկոց զուգահաւասար ասիցեմք բերել նմանու-  
թիւն, զի բոլորեքեան վերջացեալք նուաստագունին եւ եթ հանդի-  
պեցան կողման: Այլ թերեւս զնմանապէս գովելին ի տունկս արմա-  
30 ւենի, որ թէպէտ եւ ըստ երկուց ինչ մասանց ունի հանգոյն սմա  
զհաւասարութիւնն, յայլոց եւս ամենեւին վերջացեալ գտանի: Քան-  
զի յարագուարճ պայծառութեամբն եւ քաղցրաճաշակ պտղովն զմի  
եւ զնոյն եկեալ առ սա բերէ զզուգութիւն, իսկ ըստ պէսպէս բժշկու-  
թեանցն, որում իւրաքանչիւր ուրուք ի սմանէ կատարին պէտս եւ

2 Z<sub>2</sub> EH մարտնշելով  
4 AEFHMKM մերեկնայից  
16 EH շահիցն

17 BCFIM ի յանգեկի  
23 Z(Z<sub>2</sub>) ախորժընդունելի  
29 AI խոհականութեան

12 ACF զսոյնս, IM գայնս  
19 FIM առուզութեամբ

21 Z(Z<sub>2</sub>) աջողակութեամբ



կամ ըստ այլումն, որ ի տէրունեանն տաճարի գործէ միջօրեայ լուսաւորութիւն, բոլորովին իսկ անգամ եւ բանիւ երբէք չէ օրէն ընդ գերազանցելումս կացուցանել հաւասար<sup>58</sup>:

5 Ժէ. Իսկ որ այսպէս առլցեալ սբանշելագոյն արգասաւորութեամբք եւ կատարելապէս զմասունս առաքինութեանն պարունակեալ կրէ յինքեան եւ հաւասարութեամբ եւս խնդրողացն զօգուտն մատուցանէ, զի՞նչ եւս ոք տո սա ի մարդկանէ մարթացէ ըստ արժանեացն իւրոց ասել զովութիւն: Բայց եթէ համառօտաբար իսկ ընդ տուողին հրաշանալ անպատմելի պարգեւասիրութիւն, որ զայսպիսի գեղեցիկ եւ ամենափարթամ անխնայ առատութեամբ շնորհեաց պարգեւ զսա միայն օգտակարագոյն ստացուած ի համանգամայնս համարելով վայելից կենցաղոյս, մտերմաբար եւ վստահալից կամաւորութեամբ ի կենացն եւ ի բարեկեցութեան յարածամ ընդունել պէտս:

15 <3.> ներքոյեան գարնայնոյ<sup>59</sup>

ա. Ի բոլոր աշխարհի եւ ի սորայն մասունս վեհագոյն երիցութեան պատուոյ հասին դասիւ եւ զօրութեամբ յառաջացեալ<sup>60</sup> գտան գեր զկրսերագոյնս գոյիցն<sup>61</sup>, բայց ոչ մեծագոյն եւ գեղեցկաշարմար երկին քան զերկիր, եւ ոչ արեգակն քան զպարս աստեղաց, եւ ոչ արփի քան զերիսդ ի տարերաց պատուականութեան հասան<sup>62</sup>, որչափ գարնանայինն զուգաւորութիւն քան զտարույն երիս ժամանակս: Վասն զի երկին թէպէտ եւ գեղեցկութեամբ եւ մեծութեամբ առաւելաեալ ցուցաւ<sup>63</sup> քան զերկիր, այլ ոչ եթէ լինելութեանն սորա է պատճառ. եւ արեգակն թէպէտ եւ իւրով լուսովն լրացուցանէ զամենայն, այլ համանգամայն զուգահասար այլոց լուսաւորացն եղեւ: Այսպէս եւ արփիդ, թէպէտ եւ զվերագոյն անցեալ կալաւ վայր՝ հուպ ի մաքրագոյն էիցն<sup>64</sup>, այլ ոչ եւ ի գոյացուցանել էիցն յառաջանայ քան զխոնարհագոյնս տարերացն<sup>65</sup>, այլ եւ զուգահասար այլոցդ եւս երիցդ բազկանայ ի բնաւ գոյացութիւնս: Իսկ 30 զգարնանային զուգաւորութեան ժամանակն քան զայլսն նախնորութեամբն երիցագոյն է եւ իբր զմի՝ թուոց սկիզբն ամենեցուն եւ գոյաւորութեամբ գերազանցեալ, եւ պատճառ յղիւթեան այլոցն

26 Z(Z<sub>1</sub>) Թէեւ  
27 ZBEH եւ om.  
108

31 Z(Z<sub>1</sub>)GH իբրեւ

լինի<sup>66</sup> գեղեցկութեամբ իբրեւ զերկիր պանծացեալ իրոխտայ առ ամենայնիւ ծաղկազգեստ: Եւ համայն թէպէտ եւ սորա գոյացութիւն զօրէն լուսոյ ինքն զինքենէ խօսի ցուցիւք եւ չէ կարօտ պատմող վարդապետի ուսուցանել զիւր գիտութիւն, այլ այժմ ըստ կարի անցցուք բանիւ պատմել վասն բնակութեան բարեբաստիս:

5 բ. Արդ երկիր ունի սա ոչ զմասնաւորն, այլ զգեղեցկութիւն ամենայն վայրաց, զոր միանգամ Աստուած գեղեցկադիր յարմարութեամբ ըղձակերտեալ կառուց վայր եւ ինքն բարեխառնութեամբ նորոգէ իբրեւ զերկրորդ պատճառաց՝ զլեռնայինն ծաղկազգեստ հովիտս բարձանց, եւ զդաշտային հասկահասուն եւ զծառափթիթ անդատանս, եւ զծովայինն խաղաղացեալ վայելուչ դէմս, նոյնօրինակ եւ զօղայինն արփամերձ ըղձալի տեղիս, յորս զօրէն թագաւորազին գրգեալ զուարճանայ ի վայելչութիւնս վայրացն եւ համբուրեալ փառաւորի եւ փառաւորէ իւրով շքեղութեամբն:

15 գ. Եւ սակայն զայս վայելչութիւն վայրաց թէպէտ զուգահասար սմա ունին եւ այլ ժամանակք տարուոյ, այլ ոչ նմանապէս սորա պատահեն վայելչութիւնք սոցա: Զոր սա ոչ յարգեան ժամանակի, այլ ի սկզբան լինելութեանն ստացաւ պատիւ պանծանաց ի նախապատճառէն ամենեցուն<sup>67</sup>, որ յառաջ քան զպարս աստեղաց 20 ծնաւ զսա: Եւ ի սմա հրաշագործեալ ընծիւղեաց յերկրէ զամենազան տունկս ծառոց եւ սերմանեաց եւ զհողածին եւ զծովային տեսակս կենդանեաց եւ զայլ ամենայն գոյացութիւնս, որ ի մէջ երկնի եւ երկրի են հրաշալիք. եւ զսա՝ զօրէն ակամ ի զանազան պատկերաց պայծառացոյց, եւ զբոլորս ի սմա ծնեալ զարդարեաց սովաւ 25 եւ իբրեւ զխնդութիւն եւ զլիութիւն հանդիպեցոյց զժամանակս եւ զմերս ազն:

դ. Վասն որոյ ծնողին սորա արեգական, որ զամենայն բարութիւնս մատակարարէ յաշխարհ, սովորութիւն կալաւ յամենայն տարուոյ գալ ի միջին գօտին երկնի, իբրեւ յարբունական վայր ի զուլս կենդանաբեր խոյին ծնանել զզուգաւորութիւն գարնանային ժամանակին<sup>68</sup>: Զի հիմն եւ արմատ ամենայն բարութեան աշխարհի զսա դիցէ եւ իբր զնախծին զարմ ամենայնիւ զարդարեացէ եւ զամենայն սովաւ:

ե. Ոստի եւ զսնունդ սորա զօրէն թագաւորազին ըստ ըղձի մատուցանէ. զի ինքն եւ իւրքն համադամ խահիւք եւ ծաղկազարդ 35

14 Z<sub>2</sub>l փառաւորի եւ om.  
17 բոլորը՝ վայելչութիւն

18 AEI լինելութիւն  
32 Z<sub>2</sub>GI<sub>1</sub> գնախածին



բուրիւր խրախասցին: Զոր եւ սա ուսեալ ախորժակ ստանայ, զհօ-  
րըն նմանութիւն բերէ առ ալլս եւ յամենայն տեղիս, ուր եւ ընթա-  
նայ արեգակն եւ սփռին օդք, փութայ եւ ինքն հասանել, զի մի ոք  
կարօտ եւ թերի գտցի չիրոց բարեխառն պարգեւացն, ալլ ամե-  
նայն վայրք վայելչասցին բարեխառնութեամբք:

Գ. Եւ զայս ախորժելով փորձի ուսանել զթագաւորականն հան-  
ճար եւ զոյգ ի ձեռն առնուլ զպատերազմական<sup>69</sup> եւ զխաղաղական  
վարս, զի պատերազմականան զհամբարտական հերքեալ բարձցէ  
ի միշոյ եւ խաղաղականան զամենայն երկիր գրաւեալ միահեծան  
կալցի:

Է. Վասն որոյ զլեռնային եւ զղաշտային զղառնաշունչ օդոցն  
բռնութիւն փութայ ցածուցանել եւ զնոսա բարեխառնելով քաղցր  
անձրեւօք լրացուցանէ, եւ զծովային մրրկացն ալէկոծութիւն լուծա-  
նել, եւ ի խոռվութեան գործել խոր խաղաղութիւն<sup>70</sup>: Եւ այսպէս ի  
ծովու եւ ի ցամաքի շահել խորովք բարեխառնութեամբքն եւ բնա-  
կան օրինօքն վարել, զոր ընկալաւ յարարչէն ի սկզբան լինելու-  
թեան աշխարհի. եւ անդուստ մինչեւ ցայժմ ընդելակրթեցաւ ան-  
յեղ եւ հաստատուն պահել:

Ը. Եւ զժառս ի սաղարթագեղ պտղածնութիւն շարժել, եւ զսեր-  
մանս բանջարոց՝ ի բոյս եւ ի ծաղիկս, եւ զայլս՝ ի յատորութիւնս  
եւ ի պտղահասութիւնս, եւ զանասուն կենդանիս եւ զթռչունս եւ  
զլուղակս<sup>71</sup> ի խառնս որդեծնութեան յորդորել: Զի այսու ամենայնիւ  
կարասցէ իբրեւ որդի զհարց ստացուածս զարգացուցանել, եւ ամ-  
բողջ պահելով<sup>72</sup>:

Թ. Զորս ոչ միայն ի յօրնասերել եւ ի յաճեցուցանել ածէ, ալլ  
եւ բնական զօրութեամբն, զոր ստացեալ ունի բարեխառնութիւն,  
փորձի գեղեցկութեամբ եւ զօրութեամբ զարդարել զամենայն: Վասն  
որոյ զլեռնային եւ զղաշտային վայրս առ հասարակ բուսազգեստ  
եւ ծաղկազարդ զնդչեցուցանէ, եւ զանասուն կենդանիս եւ զմար-  
դիկ՝ զարեան առնելով յաճախութիւնս, բնաւորեցաւ զօրաւորս գոր-  
ծել եւ կարչնեղս եւ բաւականս յորդեծնութիւն եւ երազունս առ ի  
կատարել զզանազան արհեստից գործս<sup>72</sup>:

6 Z<sub>1</sub>I ունել փխ ուսանել, K<sub>2</sub> առնել, 27 AGI զարդարեալ  
ZAE զհանճար 29A1 զծաղկազարդ  
20 ZGI ի(II) om. 30 F գորովարս, G զաւուրս  
22 FGHIM յոգակս 32 AEG1 զանազանս

Ժ. Բայց սա ոչ միայն մարմնոց մատուցանէ զբաշազգայութիւն  
եւ զհարստակողն առուգութիւն, ալլեւ հոգւոց զիմաստութիւն եւ  
զարութիւն եւ զայլն երկուս առաքինութիւնս, զորս ի ներկայումն  
նախահոգականան զօրացուցեալ՝ զապառնեացն օգուտս ցուցանէ:  
Ուստի նաւաստին արիացեալ՝ զնան ձգէ ի խորագոյն ծովուն եւ  
մեքենայաւոր արհեստին իմաստութեան զնախն ուղեգնացութիւն  
եւ զվաճառաշահութիւն գործէ եւ արիութեամբ՝ զբռնութիւն գործ-  
ւեաց եւ զօդոցն բերման: Այսպէս եւ մշակն ի ձեռն առնու զմշա-  
կական գործիս, եւ զխստագոյնս անդաստանացն փութայ կակղել-  
եւ զանսերմանս սերմանել, եւ զաւելորդ բոյս ի սերմանց եւ ի  
ծառոց յապաւել եւ խլել. եւ իմաստական արիութեան գործովքն  
վաճառականապէս ընդ միոյն զհարիւրապատիկսն փոխանորդէ  
օգուտս: նմանապէս եւ զինուորն իմաստութեամբն զլինուորական  
իրին արհեստս կրթէ եւ արութեամբ հանդիսացեալ՝ զգուշանայ  
զգաւառի փրկութիւն:

Ժա. Տինա, եւ օղագնացիցդ երամք ժրացեալք անդադար վա-  
րին յանցնիւր գործս եւ բնական ունակութեամբ արհեստից շինեն  
զբոյսն: Ալլ եւ որ քան զամենայն տկար եւ փանաքի է զօրութե-  
ամբ՝ մեղու, զերկասիրութիւնն պատուէ, որոյ գործն պատուակա-  
նագոյն է՝ թագաւորաց միանգամայն եւ գեղջկաց<sup>73</sup> երթալով ի բժշչ-  
կութիւն<sup>74</sup>: Բայց օն անդր ի բաց թողեալ զանբանիցն՝ զսակոցն ա-  
սացից բնական շարժմունս, որք զձմերայնոյն մեկանալով տխրու-  
թիւնս՝ յաւէտ գեղեցկութեամբ յօրինին: Եւ համայն ամենայն ասա-  
ցեալքս նշանակիչք են ողջախոհութեան, որպես դատարկութիւն  
բղջախոհութեան:

Ժբ. Իսկ որ անդադար երկով կրթէ զկենդանիս եւ զժամանակս,  
հարկ է եւ ողջախոհութեան կանոնաւ մարբել զմիտս նոցա, որ թէ-  
պէտ եւ զան ի խառնս յայսմ ժամանակիս, թերեւ ոչ վասն ցան-  
կութեան առաւել քան թէ ըստ աստուածային ձայնին «զԱճեցէքն»<sup>75</sup>  
կատարելով: Իսկ զհաւանելն Աստուծոյ՝ ո՞ ոչ գիտէ յաւէտ ողջա-  
խոհութեան գործ, որպէս բղջախոհութեան՝ զհաւանելն<sup>76</sup>:

2 (Z<sub>3</sub>)BEFIM առողութիւն, բոյորր՝ 16 ZG ժրացեալ  
հաւուց հոգւոց, բոյորր՝ գօրութեւն 25 Z բողջախոհութեան  
6 Z<sub>2</sub>HIM մեքենաւոր, AB մեքենա- 26 CEF<sub>1</sub>K<sub>3</sub>M որք  
յաւոր 29 ZG ձայնի  
10 B1 զանսերմանս 31 Z բողջախոհութեան  
13 ZBM իմաստութեամբ



ժգ. Բայց երկասիրութիւն քան ողջախոհութեան եւս քաջար-  
դարութեան լինի առիթ: Վասն զի ոչ յանիրաւ յափշտակութենէ  
հրամայէ մեծանալ, այլ արդար վաստակոյ զնել յԱստուծոյ զա-  
մենայն բարիս: Ուստի յայտէ, զի այս ժամանակ զերկասիրութեան  
5 եւ զբարեբանութեան առ այս զոչգ զարգացուցանէ, որք արիացեալ  
յերկս եւ զբարեբանութիւն տուողին հասարակ իրագործեն եւ հայ-  
ցեն պաղատանօք զառաջիկայ բարեգործութեանցն յաշողութիւնս:  
Իսկ ճանաչելն<sup>76</sup> զնախախնամողն հայր եւ տրիտուր հատուցանել  
զփառաւորութիւն ամենեցուն աներկբայ խոստովանի կատարեալ  
10 արդարութիւն:

ժգ. Եւ զի այսպէս ունի ժամանակս զամենազան բախտի մա-  
տակարարութիւն, յիրաւի սիրելի է սա ամենայն մարդկան, եւ ցա-  
մաբային պաճարաց, եւ թռչնոցն, եւ ծովային լուղակաց<sup>77</sup>, որք  
զարմացեալ ի յինքեանս պատուեն զհրաշալի բարեփառութիւն սո-  
15 րա եւ նաթճելով պատմեն զհոյակապ նազաբանութիւն պանծա-  
նաց:

ժե. Որ զփարթամութիւն թագաւորաց եւ գեղջկաց<sup>78</sup> եւ ամե-  
նայն արուեստաւորաց մարդկան մատուցանէն եւ բնաւ հողածին  
կենդանեաց զարմս ծննդովքն եւ ձագուցն երամովք գործէ թաթա-  
20 ուշս եւ արտաբին վայելիւք երջանիկ բառացիս:

ժգ. Արդ ժամանակ, որ այսպէս ծաղկազգեստ պատմուճանաւ  
զարդարէ զմայրս ամենեցուն երկիր եւ քաջասնական տելումն տե-  
սակաց կենդանոյ մատուցանէ եւ բարեկեաց փարթամութիւն մար-  
դկանս ազին, զո՞ որք յերից ժամանակաց տարւոյ ածեալ ընդ սմա  
բաղդատեսցուք<sup>79</sup>, որ զուզահաւասար երեւեսցի բերովք բախտից:  
25 Զաշնանայի՞ն զուզաւորութիւն. այլ ի նմա տերեւթափ լինին եւ  
ցամաքին տունկք, եւ ամենայն ինչ սգազգեստ եւ թախծադեմ երե-  
ւի, իսկ ի սմա հրճուալից ծաղկափթիթ զուարճանան կենդանիք եւ  
տունկք<sup>80</sup>: Ուստի յայտ է, զի որպէս ուրախութիւն քան զտրտու-  
թիւն, այսպէս եւ զարնանայինն քան զաշնանայինն գերազանցէ  
30 ժամանակ<sup>81</sup>: Եւ թերեւս զամեռայինն, այլ եւ սա անշափ բռնութե-  
ամբ օղոցն եւ բերմանց վշտացուցանէ զամենայն, իսկ սա բարե-  
խառնութեամբ սփոփեալ զօրացուցանէ: Բայց ինչ զուզակշոնեսցի

սմա ամառայինն, որ աճումն եւ հաստումն միայն շնորհէ, զո-  
րքս ի սմանէն ընկալաւ ծնունդս, իսկ սա միանգամայն հասկա-  
հասութիւնս սերմանց եւ պողածնութիւնս ծառոց: Եւ նա զերկ-  
րորդ վայր դասու անցեալ կալաւ, իբր ի թիւս երկակն, իսկ սա  
5 իբրեւ զնախածին՝ զառաջին գահ թագաւորական բաղմականին:  
Բայց հրաշափառ եւս գերազանցեալ է գարնանայինս, զի ի սմա  
գոյացեալ զարդարեցաւ ամենայն ի միջոցիս արարածք, եւ տօնուտ  
ուրախութիւն բնաւ կենդանեաց գործեցաւ, եւ թագաւորական պե-  
տութեան պատիւ պանծանաց մարդոյս պարգեւեցաւ, զոր ոչ ա-  
մառնային, եւ ոչ այլ որ յերկուցն տարաւ ճոխութիւն:

ժէ. Եւ արդ զի այնպէս ամենայն մասամբք զանբաղդատելի  
հրաշափառ ներբողաբանութիւն տարաւ ժամանակս, մի որ նկնա-  
խոհ ի վայր գտցի քան զթռչնոցդ երամս, որք խնդամտեալ առ  
հասարակ հնչեն երաժշտական ձայնիւ զցնծութեանն երգս: Այլ զար-  
15 թուցեալ տօնական ձայնիւ գեղապարեսցէ սմա զյարմարական բա-  
նից պարտս, զի միանգամայն սորա գովութիւն յիշատակ աշխար-  
հիս ծննդեան լիցի եւ ի բարեբանութիւն արարողի հօրն: Եւ ինքն ի  
գովելն գովեսցի իբր զպարտահատոյց բարեբարի, եւ զմաստասէր  
ճարտարբան. եւ բարեդիպութեանցն սորա զուարթամիտ հանդի-  
20 պնացի շնորհաւ օգնականութեան ամենեցունցն Աստուծոյ:

<4.> Ներբողեան պատերազմի<sup>82</sup>

ա. Զպատշաճողագոյն զգիտաւորութիւնն եւ զսրատես խորհրդ-  
դիւն զհմտանալն ամենայն իսկ կենցաղոյս իբր հարկաւորաբար  
խնդրեն ի մարդկանէ, բայց մանաւանդ պատերազմականս պիտա-  
նանայ ամենավայելուչ խելամտութեամբ առնուլ զտեղեկութիւն: Որ  
25 թէպէտ անվարժիցն եւ խամացելոց լսելեաց դժնդակալուր սորայն  
է պատմութիւն, յորմէ ի բաց զիւրեանցն դարձուցանեն դէմս՝ իբրեւ  
ի շար ինչ կարծեցեալ իրաց: Սակայն իմաստաբար տեսողացն ոչ  
եւս այսպէս, յորժամ ի խոյզ առեալ զի նմա կայսն<sup>83</sup> գտցեն օգ-  
տութիւնս, այլ փութացեալ ըստ պատուականութեանն զներբողա-  
կանս հատուցանեն փոխարէնս: Քանզի ո՞վ որ անտեղեակ այսորիկ  
30 իցէ բանի, զի ամենայն ի ներբոյ երկնիս լինելութիւնք ոչինչ ա-

7 ZBG բարեգործութեանց  
13 FGH լողակաց  
23 Z<sub>1</sub> կենդանեաց, AG կենդանոյ, HI  
կենդանի

24 Z(Z<sub>2</sub>) զոր  
26 ZHK զաշնանայինն

15 Z(Z<sub>1</sub>) G զեղապարէցէ  
16 Z(Z<sub>1</sub>) սորայն  
17 Z(Z<sub>1</sub>) CEGH ի (l)om.  
27 BCFH<sub>12</sub> պատմութեան  
32 AEK ի ներբոյնոյ



ուանց հակառակին խառնուածոյ գոյացեալք եղեն<sup>84</sup> ըստ պատահիցն: Եւ յայնմանէ ապա բազումք, որպէս ասացի, անփորձաբար քննութեամբ սովորութիւն կալան ոչ ընտրողական վարել դատողութեամբն՝ համարելով զճշմարտութիւն ստութիւն, ընդ որ ոչինչ են զարմանք: Վասն զի ըստ երկաքանչիւրոցն որոշել զչարս ի բարոյն գործ է զեզերելոցն յուսումնասիրութեան<sup>85</sup> գտանել, զոր մեզ կարի յոյժ երկայնագոյն է անցանել առ իւրաքանչիւրսն բանիւ եւ արտահայտ զնոցայն բերել ուսմունս, եւ կամ յիրերաց բաժանել սահմանաւ: Մանաւանդ զի այժմ առաջիկայս իսկ պահանջէ զիւրեւ զբանն տանել յաղագս կատարելապէս պանծանաց եւ բազմադիմի նահատակութեամբ զխաղաղութեանցն որսալ զիւտ, զպատերազմականէս ասեմ իրէ: Զորոյ գովութիւն ըստ հանդիպեալ ժամանակի սքանչելագործն վճարմունք սորա գրեթէ համօրէն իսկ ւէրունեան մատենաք հռչակեցուցանեն պանծալիս՝ գրատրականն հաստատեալ տառիք եւ բաւականապէս ամենեցուն լուուցանեն, իբրեւ քարոզական բարբառեալ ձայնիւ:

բ. Բայց համայն եւ մեք ըստ զխաւորեալ<sup>86</sup> ներքողական մասանց ճանապարհորդեցուք բանիւս ընդ նորս գովութիւնս առաջի հմուտ լսողաց հանդիսանալ: Որ պարփակեալ շուրջանակի իբրեւ պարիսպ ամրութեամբ՝ զի ներքս արգելեալն մարդիկ<sup>87</sup> պահել անընդոստ խաղաղութեամբ ի յուրտս՝ զհակառակորդացն մերժելով գունդս եւ ընդ ամենայն տեղիս զիւրն ցուցանէ նահատակութիւնս: Քանզի զնաւակոութեանցն ի ծովու, եւ զքաղաքամարտութեանցն ի ցամաքի, եւ զձիականն՝ պատերազմաւ ճեպեալ ի հեռարձակն հասանէ թշնամիս եւ ըստ այնգունակ ամենաբաջն խրոխտանաց երթեալ ի բոլորն ժամանէ վայրս, խաղաղութեանցն եւեթ լինելով վերակացու՝ ի ծովու միանգամայն եւ ի ցամաքի:

գ. Եւ զի այնպէս իմն օգտակարագոյն եւ յաւէտ մեծարեալ պատերազմացն երեւի գործ, յորժամ ընդդէմ յարուցելոցն ի վերայ զինի մարտիւ, եւ առաւել յիւրումն բերէ զլուս զյաղթութեանն ցուցանելով մրցանակս, մինչեւ անգամ եւ աստուածայնոյն զնա գիտեմ հաճոյացեալ կամաց ցայնքան, որ զի եւ զինքն իսկ իբրեւ զգորավար գողցես ի յեսուեանն նշանակէր պատերազմի<sup>88</sup>: Եւ երբեմն

իբրեւ զկառարշաւ ձիավարութեամբ զփրկութեանցն խօսէր բերս<sup>89</sup>: Այլ եւ յեզիպտոս ի փարաւոնեան զօրացն սրտապախ ահի խոստովանեալ. «տէր պատերազմի ընդ մեզ»<sup>90</sup>:

դ. Զոր երեւի եւ աստուածարեալ հայրապետին առեալ ի ձեռն զպատերազմականս գործ եւ զիմեալ ի վերայ շորիցն հերքէր թագաւորաց<sup>91</sup>: Նմանապէս եւ երջանիկ Դաւիթ պատերազմականաւս գտանէր հանդիսացեալ առ յանդուգն համբարտակեալ այլազգին<sup>92</sup>:

ե. Եւ զի այսպէս աստուածաշնորհ իմն զիրիս տեսանեմք պատրաստութիւնս՝ յաւէտ կենցաղօգուտ բարութեամբ ազգի մարդկան, զոր եւ հողեկիրքն ի ձեռն առին արքն, եւ անդուստ այլոցն ընկալեալ փոխանորդեցին մի ըստ միոջէ ի վերջ եկելոցս, որ իսկապէս իրացն անցին գործօնեալք եւ աճեցուցեալ մինչեւ ցայժմ ըստ անցնիւր դարուց իբրեւ հայրաբար խնամով սնուցին զպատերազմականս յօրինելով խնդիր:

զ. Քանզի բազմաւորական իմն պահանջէ պէտս, որ յատուկ նմա եւեթ պարապին մանկունք, անդստին ի տղայական հասակէն վարժեալ յայսպիսի իմն ձգին ախորժակ, անձնախրոխտ լինել եւ անզանդիտելի սրտիւ համարձակագոյնք եւ յարածամ կրթութեամբ զգինուորականն ունել ի ձեռին գործիս: Զի կամաւոր յօժարութեամբ զնորին հրահանգեցին հմտութիւնս, զեղեցկապէս ցուցանելով արգասիս յանձին զզանազան արհեստից վարժամբ զիպողագոյն, ձիավարութեամբքն յասպարէզան առնուլ նպատակ եւ կորովակի նետաձգութեամբ հարկանել զառաջի եղեալ ինչ կէտ, այլ եւ ի կառարշաւան աջողապէս, եւ ի վահանամարտութիւնս ըստ հանդիպին ի դէպ պատկանեալ, եւ որ այլ եւս ինչ պատերազմականն իցեն արհեստք ամենայնիւ զինքեանս ցուցանեն արիարար վարժեալս: Զի մի երբէք ի դրժողն խամութեանէն հասցէ ի վերայ պարտութեան վտանգ, այլ զի արտաբոյ իւրեանցն հալածեսցեն գաւառի անընդհատ հրահանգիւր կրթութեամբ<sup>93</sup>: Որ ըստ նմին կարգի իմն գողցես թէ օրինօք վարին բնաւորապէս սարասեալ յանձինս, միշտ զխաղաղութեան միայն մատակարարել բարութիւն քաղաքաց եւ գաւառաց եւ համօրէն իսկ բոլոր ազանց, որոց միանգամ պաշտպանն հանդերձին լինել, զնորին եւ ամբարնակ յիւրեանց պահեն հովանուց:

է. Այլ եւ ըստ զեղոյն հանգամանաց թէպէտ եւ ոչ ինքն ըստ ինքեան իրն ունիցի, համայն որք զնորայն հարկանեն սպասաւորու-

3 AI վարեալ  
5 AI որոշեալ

8 Z<sub>1</sub>EFHIKM ի յիրերաց  
14 FIM հաստատել

4 Z(Z<sub>1</sub>)ABE զի փխ. զոր  
21 K արուեստից

27 ZIM պարտութեանն



5 Թին, ամենալալելու գեղեցկութեամբ գտանին պայծառացեալք: Քանզի զայնոսիկ որոշեալ զատուցանեն ի զինուորական դասն, որք գեոեա յարբունս տիրոցն են եւ հասակագեղն փաղփեալ զիմօր եւ կշռապէս զուգամասնութեամբքն հանդերձ առաւել յարմարագոյն եւ սքանչելի երեւին տեսութեամբ ամենեցուն:

Բայց որ կարշնեղագոյնք ես են եւ քաջապինդ զուժոյն կարեն ցուցանել հանդէս, յայնպիսեացն մարդկանէ լինին, որ զպատերազմականն յարդարեն իր եւ զիւցազնաբար զօրութեամբ առ ի ծանր զինազգեստն լինելով հանդուրժեսցեն վստահացեալք ապա յիրեանցն կարողութիւն, նոյնգունակ եւ զիրացն առնեն կամակարութեամբ վճարումն:

10 Թ. Եւ ի վերայ այնորիկ զօրաւոր բռնութեանն նոցա յոլովակի խնամելով եւ զերագութեանցն ունին առնել յառաջատեալ թեթեւութիւն: Քանզի զյարձակմանն գիտացեալ ժամ, վաղվաղակի ի կիտաղրեալն հասանեն վայր. եւ ուր դարձեալ սուղ ինչ ընդ կրուկ ի թըշնամեացն պիտի խոյս տալ, աճապարեալք փութան ճողոպրել անվիրաւորելիք մնալով:

15 Ժ. Տի նա սա առաւելապէս իմաստութեան է գործակ, վասն զի ոչ միայն ըստ անցնիր պատերազմականն գործոց են հմուտք եւ տեղեակք, այլեւ յամենայն իր հանճարեղ խորհրդով երեւին վարեցեալք: Եւ որչափ զանազան տաժանելի հանդիպմունք հանդերձեալ կան առաջի նոցա, այնքան եւ իմաստութեանցն աճեն հնարագիտութիւնք, զի ըստ իւրաքանչիւրն իրաց գեղեցկապէս մտածութեամբք եւ զելսն իմանան: Զի ո՞ ոչ գիտէ թէ որք հանապազ ի զիւրութեան են հեշտացեալ մարդիկ՝ անփորձ պատրաստութեան, եւ յիմաստիցն բազում անգամ պղերգացեալք գտանին իսկ որոց վշտըմբեր աշխատութեամբ կենացն է փրկութիւն, վասն այսորիկ եւ խոհեմագոյնք բնաւորեցան լինել:

30 Ժա. Թուի թէ յաւէտ ես ողջախոհք՝ վասն երկուց պատճառաց. մի՝ զի թշնամեացն յաղթեսցեն եւ անդադար զլնստուած աղաչեն եւ երկրորդ՝ վասն փրկութեան անձանց ի հարկէ զպարկեշտութիւն համբուրեն:

Ժբ. Բայց արիութեամբն այնքան ապա գեր ի վերոյ անցեալ

8 K իրս  
10 EI իւրեանցն  
10—11 I կամակորութեամբ  
116

15 Z<sub>2</sub>HIK կրուակ  
26 Z<sub>1</sub> I վշտըմբեր  
27 BC վայսայտորիկ

5 յառաջանան խորխտական ձեւով, մինչ ոչ ումեք բանիւ բաւականապէս զնոցայն ասել գովութիւն: Վասն զի այլ ինչ քաջութիւնք ի կենցաղումս արարեալք յարանունաբար գոն առ սոսա, այլ ոչ կարող համազոյգ լինել տիրականիս: Որ ինքն ըստ ինքեան արութիւնդ իսկ կոչեցեալ անուն՝ ստուգապէս ի պատերազմականէս անուանի<sup>94</sup>, առ ի քաջապէս միշտ յիւրումն հանդիսի նահատակել, եւ մարտնչի գոցցես արիաբար առնել զյարձակումն, եւ այլ ես բազում քաջասրտութիւն նոցա՝ բոլորեցուն է քաջայայտ:

10 Ժգ. Բայց թերեւս զպատերազմականն լսելով անուն, ոչ խորհրդաբար անբաժացեալ զնոսա որ կարծեսցէ յարդարութեանն կատարմանէ: Ըստ այնց արդեօք յիրաւի, որք զայլոցն ապշուպեալ յափշտակեն ինչս: Բայց որք իրեանցն լինին վերակացուք գաւառաց եւ քաղաքաց եւ յապահովացեալ ի խաղաղութեան զրնակիչսն պահեն ի թշնամեաց եւ մանաւանդ զտէրութեանն տաճարս հանդերձ վայելչական նուիրօք, այնոքիւք ոչ միայն արդարութեան են գործօնեայք, այլ եւ ամենայն իսկ բարեպաշտութեան կրօնից պատճառք: Ընդ որով ծերատածութիւնքն աճեն, եւ խաղաղ մանկասնութիւնքն զարգանան, եւ հարազատ ամուսնութեանն պարկեշտ անկողինքն պահին եւ որ այլ ես ինչ սաստուածային օրինացն են հաճոյք ի պատերազմողացն կատարին ձեռաց:

25 Ժդ. Այլ եւ ընչեղութեամբ դարձեալ ո՞ փառաւոր քան զնոսա: Զի հայրենի ստացուածովքն ամբողջանալով՝ բազմանան օրրատօրէ յառաւել փարթամութիւնս անցանել: Եւ մանաւանդ յորժամ թշնամեացն հերքողք եղիցին, բաժանելով զաւարիցն ընչեղութիւնս զուկույ եւ զարծաթոյ եւ զանշափութիւն ջոյիւր կենդանեացն եւ զայլ ամենայն աղիսաղլսելով զկապուտս ազգաց, գեր ի վերոյ են քան զբնաւ մարդիկ ամենազան մեծութեամբ եւ զրեթէ հաւասարք թափառաց:

30 Ժե. Յաղագս այնորիկ եւ անհամար բազմութեամբ զսիրելեացն ունին ողջունելի դասս: Քանզի բոլոր քաղաքացի մարդիկ եւ որոց նորայն հաւատացան պահպանք, խաղաղութեանց միշտ փափագեալ քաղձանօք սակս իրեանց յապահովութեան զնոցա կախին սիրոյ: Այլ եւ թագաւորք իշխանօք եւ իշխեցելովքն<sup>95</sup> հանդերձ՝ ճշմարտապէս իսկ ենն նոցա բարեկամք: Զորոյ զքաջափառութեանց զի՞նչ եւս որ բաւականացի վերաբերել բանիւ, որ անդա-

13 AE զբնակիչս  
15 EH այնքեիկ  
16 F1 գործունեայք  
26 AE12 զկապուտ



տին ի սկզբանցն բարեհամբաւութեամբ հռչակեցաւ ի սքանչելագործ մարդկանէ, որ յառաջն ասացաւ:

5 ժզ. Եւ այնպէս բարեբախտն ճոխութեամբ զիւրեանց վարին ժամանակ կենաց. եւ իբրեւ հասեալք ի կատարման ամանակ, ոչ բազմամեայ ծերութեամբ ապականեալ կերպարանաց, եւ ոչ ջերական ախտից իմիր, այլ մինչդեռ յարբունս տիրոցն են, ամենեցուն երեւեալ ըղձալի. եւ ապա փութանակի անդէն եւ անդ զվախճանն ընկալեալ առանց եւ դոյզն ինչ ճղճմելոյ զաստուտն առնելով զբաւումն<sup>96</sup> երթեալ ի յառաւելն փոխին կեանս:

10 ժէ. Եւ այնգունակ ի հետ մահուցն մեծապէս գովութեանցն մնայ յիշատակ անդրեօքն, եւ համանման կենդանագրութեամբքն ի փողոցս եւ ի յանցս հրապարակաց հանդերձ գեղեցիկ յօրինմամբք եւ դարձեալ գծագրեալ ի մատեանս արձանակեն անջինջ յիշատակօք<sup>97</sup> եւ իսկոյն ի բոլորից գրեթէ ի կենդանեաց հնչեալ միշտ նոցայն մեծարի բարեհամբաւ անուն:

15 ժբ. Եւ արդ որ յամենայն կողմանց անբստգիւտ բարգաւաճանօք պատերազմականս ծանուցաւ իր, զո՞ որ իրաւացի վարկեալ ընդ սմա յարգարեսցուք բազդատելով: Ինձ թուի ըստ վայելչականին ոչ, թողում զմշակականն, եւ զայլ որ առգատել ընդ սմա: 20 Քանզի նա է, որ զհարկուոր կերակրանացն մատուցանէ պաճարանս մարդկան. նոյնգունակ եւ սա պատճառք կենդանութեան նոցա, միանգամայն եւ աշխարհի՝ յաղագս ի թշնամեացն պահելով խողխողմանէ ամբողջ, մնայ միշտ խաղաղական: Իսկ սատուիչ է խաղաղութեան: Բայց այսու՝ զի մշակացն մանկունք ի գեղջկաց եւ յրոամիկն մարդկանէ են խարաղնագոյնք, իսկ պատերազմականքն վեհագոյնք եւ ազատանմանք լինելով մանաւանդ եւ շքեղակերպսեւս, յաղագս այս զմեծագոյն բարգաւաճանացն յիրաւի երթեալ տարցին մրցանակս ի գլուխ:

30 ժթ. Եւ արդ յորժամ այսպէս համակ ի հրաշալեացն ցուցաւ պատերազմականս իրագործութիւն, ապա պարտ եւ արժան է գովել յաւէտ նորագոյն բանիւք զարմանալիս ամենեցուն կացուցանել. զի այնպէս իմն կենցաղօգուտ լինելով՝ միշտ խաղաղութեան է գործակ եւ մեծավայելուչ յիւրումն տեսանի գերազանցեալ կար-

գի եւ իբր յորդորական ձայնիւ զամենեսեան շարժէ երախտահատոյցք լինել բարեբանութեամբք ոչ միայն ի ներկայումս, այլ եւ յապառնինս: Որում հատուցեալք վայելչակի զբարեսիրութեանն ժառանգեսցուք անուն եւ նմանապէս բերկրելով հանապազ ամենագեղեցիկս ախորժակաւ, այնպէս հեշտալի կենօք յաւելլով յաշխարհի, քան ամենայն իրի՝ սմա տացուք զերիցութեանն պատուականութիւն հանդերձ իմաստական բանիւ:

<5.> ներքողեան աղաւնոյ<sup>98</sup>

ա. Ընդ յոյժ պատուականագոյնսն ո՞ որ արդեօք ոչ մեծապէս 10 ձգեսցի յանհասանելիս գալով զարմացումն յորժամ զառաւել գեղեցիկ լցեալ բարեբախտութեամբ կենդանիս ընդ միտ ածիցէ եւ յամենայն կողմանց տեսանիցէ յարմարական ձեւով զսա զարդարեալ ի վայելչութեան միանգամայն եւ յաւէտ պայծառութեան՝ 15 զայս զաղաւնոյս երեւեալ յատուկ շքնաղակերպ գոյութիւն ի բովանդակ երամս թուչնոց: Վասն զի այնքան խրոխտացեալ անձնապանծ բարեփառութեամբ է եւ ծայրացեալ ի բարձրագոյնսն գերազանցէ սքանչելի աստիճան, մինչ զի ոչ մարդկայինս եւ եթ ազին թուցաւ մեծափափագ բազմանաց արժանի, այլ եւ յամենայն 20 իսկ աստուածային գրոց յարգեալ զսոյն եւ մեծարեալ՝ հանդերձ հռչակելի գովութեամբ, եւ զարմանալիս ամենեցուն կացուցանելով յաղագս հեղ հանդարտութեանն, եւ ընտելասէր բարուցն, եւ յոյժ մաքրագոյն պիտանի սրբութեանն եւ ալլոց եւս բարեաց սոցին նմանողաց: 25 Զորոյ թէ կամեսցի որ մանրաքնին տեսութեամբ անցանել զհետ համօրէն ասացելոցն եւ որ ի նմա կայ, պատշաճաբար զգոյութեանցն գտցէ ցոյցս, ինձ թուի թէ մեծ վերջացեալ թողանի առ ի զբոլորն յայտնել բան, յոյս նմանապէս ոչ է համարձակելի: Բայց ըստ կարողութեան հանդիսացուք այսպիսի բանիւ, վստահանալով ի հմուտ լսողաց ունկնդրութիւն, եւ մի ըստ միողէ ղնելով առաջի զիրաբանչիրն ասացուք կարգ ներքողենի:

3 HI յորում, E1 զբարեսիրութեան  
8 D ի ներքողական զիւրոյն է. ներքողեան  
13 E1 պայծառութեանն  
21 CEF1 հանդարտութեան  
23 DEFIM մանրաքննին

1 ABCEFK, հռչեցաւ  
4 Z<sub>2</sub>AEI ժամանակ  
12 CFHK<sub>1</sub>M եւ յանցս  
13 FH արձակեն  
18 Z<sub>1</sub> յարագրեսցուք  
22 AEI թշնամեաց  
27 Z<sub>3</sub>BFHKM այսք  
32 EF խաղաղութեանն  
33 Z<sub>1</sub>AFHI իմն յիւրումն



5 ր. Եւ նախ ի բնակութենէն հաւեսցուք: Զի ոչ ի միում կողման ուրեք զատուցեալ ունի դադար հանգստեան, այլ գրեթէ ընդ ամենայն տեղիս յորս միանգամ մարդկայինս սփռեցաւ ազն, անդորր հասեալ եւ թռչունդ այդ կալաւ իւր վայր բնակութեան՝ յարամնալով ընդ մարդկան:

գ. Եւ ի վերայ այնորիկ պատիւ գոյութեան սորա՝ եղև յամենեցունց ընկալեալ արարչէ զուգահաւասար շնորհիւ ընդ բոլոր կենդանեացդ դասակս, օգտութեան աղագաւ:

10 դ. Եւ անդուստ դարձեալ իբրև խնամածութիւն հօր աւետարեր ի նեղութեանն ժամանակի նոյի ի շուրցն հեղեղէ գոզցես որդերար իմն սա լինէր:

15 ե. Տի նա, եւ այլ եւս ի ճոխագոյն քաղաքացեացն մարդկանէ. որ արդարեւ զօրէն ծնողաց իսկ բերեն առ գեղեցիկ թռչունս գութ, զբունոյն առնելով յարմարութիւնս ի վայելչական սրահս, եւ ի բարձրաշէն կանգնեալ աշտարակս, եւ այնպէս զատուցեալ որոշեն յատկապէս ի սաստիկ գթոցն յամենայն թռչնոց, անդադար խնամելով միշտ եւ դարմանելով այնքան, մինչ զի գրգեաւ փափկասուն հեշտանաց ի բնակութեան օրրստօրէ գեղեցիկ յօրինուածովն, ըստ նմին ձեւոյ եւ զախորժակն ընկալեալ:

20 գ. Նմանապէս եւ ուսումն, ոչք ոչ զանգիտելով յիրերաց միշտ զայն եւեթ սիրեցեալ իւր կրթութիւն զհամարնակն լինել իւր ընդ մարդկան, եւ կամ զընտելականն մերձաւորութիւն<sup>99</sup>, բայց կարի յոյժ ցանկալի ախորժակ, որով անցեալ յարթամ խաղաղականին պարապէ կենաց:

25 է. Այլեւ ունի օրէնս իմն ստացեալ յինքեան այսզունակ բնականապէս կարգօք միայն առանձինն, որով հանապազ յիւրումն վարի կեանս՝ գեր ի վերոյ քան զամենայն հաւուց առեալ սովորութիւն: Զի ոչ միշտ վայրաբնակ լինելով ընդ անձեռնընտելսն հաւասարէ, եւ ոչ ընդ ընտասնունդսն դեգերեալ ծխոյ աղտեղութեամբ ներկանի<sup>100</sup>, այլ յերկաքանչիւրոց ծայրագունիցն զմիջինն կալաւ իւր վայր բնակութեան, որ է արդարեւ առաքինութիւն. իբրև գեղեցիկ իմն կարգեալ այնու վարի օրինօք:

30 ը. Նոյն օրինակ եւ հասակին ձանաչի մեծութեամբ, առ ի խոյս դարձեալ յերկաքանչիւրոց տայ կողմանց, որ ոչ իբրև զբնաւորուպսն նուաստացեալ, եւ ոչ իբրև զանարդիւսն է<sup>101</sup> անհեղեղ.

35 Z(Z<sub>2</sub>)DEI իբրու

բայց կշռածեութեամբ հասեալ զյարմարագոյնն կալաւ շափաւորապէս պատկանեալ տեսակ, եւ լի բոլոր մասանց հաւասարութեամբ. եւ այնպէս մի ըստ միողէ ամենեւին բարգաւաճեալ յաւեժանայ:

5 թ. Եւս զի անկ իւրումն բնութեանն բաւականապէս օժանդակեալ՝ անձին հերիք զուժոյն դնելով պնդութիւն: Քանզի բազում ուրեք յորժամ դրժողք յարձակին հաւք, որպէս առաթուր հարեալ վարէ, եւ ինքն գիրազերժ եղեալ մնայ կենդանի:

10 ժ. Այլ երագութեամբն ինձ թուի եւ քան զբոլոր օղագնաց կենդանեացդ երամս յառաջատեալ իւրովն գերազանցէ թռչմամբ, յորժամ թեւացեալ սլանայ երագաշարժ թեթեւութեամբն առաւելու զբազմօքն անցանել քաջ ի բաց: Տի նա յոյժ անգամ ի դաւողացն թափէ զինքն թռչնոց փութոյն անխափան կամակարութեամբ:

15 ժա. Եւ այլ զի՞նչ եւս զգեղոյն պայծառացեալ վայելչութիւնն ասացուք, որ յաւէտ բարգաւաճեալ գեղեցկազարգութեամբն երեւի նազելի, եւ յոյժ մեծագոյն զօրութեամբ՝ զներբողականս ձգէ յինքն բան, այնքան հրաշափարագոյն ձեւ տեսեալ, մինչ ոչ ումեք կարել զբաւականն ասել նմանապէս զովութեամբ: Զի ոմանք զծինաթոյր սպիտակութեամբ ցայն փայլեն զգունոյն ցուցանելով խրոխտ վայելչութիւն, մինչ վէճ համարձակ հակառակութեամբ գրեթէ առ արեգակնայինն բերել ճառագայթարձակ լուսաւորութիւն: Եւ կէսք ոսկեճաճանչ իմն զպարանոցան ունին մանեակաձեւ խառնեալ գոյն, որ ի բաղձանս փափագանացն զամենայն ձգէ տեսողացն անձինս: Եւ այլք այլ ինչ իբր զանազան երանգովք անկեալ երփն երփն գունով փաղփաղեցուցանեն թոյրս, զօրէն ծաղկաւէտ մարգաց եւ բուրաստանաց բազմատեսակ յօրինեալ գեղեցկութեամբ:

30 ժբ. Բայց ապա եթէ որ կամեսցի ընդ միտ ածելով յառել ի ներքս ի թռչունս յայս, դացէ անբաժ եւ ոչ յիմաստութեանն մասնէ: Քանզի ըստ մերձաւորութեանն հուպ գոյոյ առ մարդկայինսս, նոյնզունակ եւ զմտաց ընկալաւ մասնաւորեալ շնորհ եւ յայտ աստուատ ճշմարիտ ասացեալս, զկոշողացն նոցա լսելով ձայնս յոր

5 K իւրում  
23 Z<sub>3</sub>EFHKM մանեկաձեւ

25 BCEFIK փաղփեցուցանեն  
31 AEI մարդկայինս



երթնան փութով զհրամանն կատարելով, մտաւոր խորհրդիւ իրեանցն հասանել պարենիցն:

5 Ժգ. Գտանի ի նոսա եւ ողջախոհութեան իմն կրօնաւորութիւն, այնու զի ոչ անկարգաբար ինչ յօտարազգիսն առնեն զխառնիցն յարձակումն, այլ միայն յիրում համանմանին դեզերեալ՝ զհաւասարութեանցն բերնն աւանգս: Եւ զի այսպէս բոլորովին գեղեցկաւ լայելուչ յամենայնի աղանեացդ երեւցաւ ազգ:

10 Ժդ. Թերեւս զարութեանն որ բաղբաղեցցի զնորա գործ, վասն ոչ յայտնապէս ուրեք տեսանին խորխտանաց վճարեալ իրս, բայց իմաստասիրացն աճեալ զիտութեամբ փոքր ի տեսութեան զայն ճանաչեն տեղեկութեամբ: Քանզի որ քննախօսութեանն պարապեցին, ասացին զնմանէ ոչ ունել լեզի: Եւ յայնմանէ ապա օտար գտանին ի դառնութենէն, որ պատճառքն են անարութեան, եւ հուպ ի քաղցրագոյն լինել բարս, ոչ ընդ ումեք բերելով սրտմտութիւն, 15 այլ անցեալ յատուկ զհանգարտն սիրեաց վարել կենակցութեամբ:

20 Ժե. Եւ հանապազ մտերմաբար զարդարութեանն ունել զուգահաւասար մատակարարութիւն առ խնամածուսն ինքեան պահելով հաւատարմութիւն: Ոչ ուրեք երկբայանալով ընդ վայր զատուցմամբ յօտարն առնեն տեղիս բնակելոյ ի դրժանացն կասկածել երկիւղից, այլ հանդերձ ծննդովքն յանդիման ստացողին յողան, անխորամանկաբար կամօք ցանկորդեալ առ նոսա ունել միաբանութիւն:

25 Ժզ. Նաեւ ըստ բազմութեանդ ազգի վայելուչ ցուցանի յորնազան երամոցն աճեցեալ շատութեամբ, որպէս փարթամագոյն երեւեալ եւ յոյժ բառացի: Զի թէպէտ եւ ոչ ի միում ժամու բազմացին՝ լինելով իբրեւ զայլ հաւուցդ երամս, սակայն վայելչապէս ունի յինքեան զտարեբացդ զուգակշիռ բարեխառնութեամբ հանդերձ, որ ըստ շորիցդ բաժանեալ ժամանակաց ձագասնոց եւեթ լինելով զիրն բազմացուցանէ՝ ծնունդս:

30 Ժէ. Յոյժ վայելուչ սա եւ բարեփառութեան է մասին: Վասն զի այնպէս իմն աստուածային եւ երկնապանծ տեսանի հոյակապեալ անուամբն՝ միշտ արժանի զարմանալոյ, որ անզուստ մինչև ցայս

8 Z(Z<sub>3</sub>)ABCFHIM գօրութեանն  
16 FHI զարդարութեան  
17 B<sub>1</sub> խնամածուս, C խնամածուս,  
18 ZM զհաւատարմութիւն

28 Z(Z<sub>2</sub>)D ձագասնոյ  
30 Z(Z<sub>2</sub>) բարեխառնութեան  
31 Z(Z<sub>4</sub>)ACEFHJKM երկայպանծ

հնչեալ պատմի հրաշափառ յաղագս մաքրագոյն բնութեանն: Զի թէ ի նոյի դարին էր<sup>102</sup> ըստ յառաջագոյն ասացելումն, յաւէտ սքանչելի սոյն գտաւ կենդանի, բարգաւաճեալ ի գովութեան միանգամայն իւր հաւատարմութեան: Եւ եթէ յեւս վեհագոյնն, սակայն նորասքանչ տեսութեամբ եւ անդ ցուցաւ Յորդանան ի վերայ աստուածային բանի, ի նմանութիւն աղանոյ տէրունեանն իջանել հոգի<sup>103</sup> բարեհամբաւելով ընդ ամենայն տիեզերս:

5 Ժը. Զսոյն եւ սիրելեօքն զուարճանայ յամենուստ քաղաքացեօքն եւ համայն ազատատոհմիկն զարմիւ:

10 Ժթ. Եւ այնպէս երկարածիգ աւուրք կեցեալ բազում անգամ հաւասարէ մարդկայինս բնութեան, ի վայելչութեան զիրն անցուցանել ժամանակ: Այլեւ յորժամ վախճանին հասանէ աւուր, ոչ ընդ վայր ինչ ընկեցեալ զնի իբրեւ զմի որ անսուրբ, այլ ի հեշտալի վայելս մարդկան պատրաստեալ լինի կենօք եւ մահո՛՛ նուիրաց եւս եւ պատարագաց մեծին մատչելով Աստուծոյ<sup>104</sup>, Եւ որոց ի հաշտութիւն զբոլորեցունն ածէ արարիչ, ի նոցունց եւ զբարեբանութեանցն առեալ տանի հանապազ գովութիւն անմոռաց զհետ կատարման իւրոյ:

20 Ի. Իսկ արդ կենդանի որ այսպէս բոլոր բոլորովին բարեացն պարծանօք գտաւ աւարտեալ, առ սա զո՞՞ որ ի թռչնոցն ածեալ բաղդատեսցուր: Զայլ եւ ոչ զբնաւ զոր, բայց եթէ զնմանապէս ցանկալին տատրակ, որ թերեւս կալցի ինչ զհաւասարութիւն: Վասրն զի սրբութեամբ զոյգ յողջակէզս եւ ի բաղձանս խորտակակերութեան, բայց յաղագս զունոցն զանազանութեան եւ յոյժ հրաշափառ գեղեցկաթոյրն երեւելոյ պաճուճանօք յաւէտ գերազանցեալ աղանիս երթեալ տանի զմեծագոյն յարգանացն երիցութիւն:

25 Իա. Եւ արդ յորժամ այսքանեաց բարեմասնութեանց եղև ընդունակ ի սկզբանցն մինչև ի կատարած, եւ զարդարեալ ցուցաւ յամենուստ անպախարակելի փառաւորութեամբ, լի արժանաւորապէս նմա արասցուր զաշխարհագովութեանցն տալ մրցանակս, թէ ոչ զի սքանչանալով միայն ընդ գեղեցկութիւնն, եւ ընդ յաւէտ սրբութեանն պատուականութիւն եւ զտէրունեան պատմութեան այնզունակ զիսաւորելով ի թռչունս՝ զթագաւորականն հատուցուր պատիւ:

1 DEI<sub>2</sub> բնութեան  
6 EI զտերունեան  
11 B զիւր

26 K զմեծագոյն յարգանացն տանի  
31 EI գեղեցկութեամբ  
33 Z<sub>3</sub>DEFIKM այնուզունակ



< ԳԻՐՔ VI >

ՅԱՂԱԳՍ ՊԱՐՍԱԻԻ

Պարսաւ է բան արտադրական<sup>1</sup> էից շարեաց<sup>2</sup> հակառակ գովութեան լեալ<sup>3</sup>: Եւ զնոյն ունի բաժանումն. վասն զի նոյնքան պարսաւեսցես<sup>4</sup>, որքան գովեցերն: Զդէմս, որպէս զԵսրինէս, իրս որպէս զնաւարկութիւն, ժամանակս՝ որպէս զաշուն, տեղիս՝ որպէս զլերինս եւ զապառաժս, անբան կենդանիս՝ որպէս զձի, տունկս՝ որպէս զորթ<sup>5</sup>:

Պարտ եւ արժան է ի պարսաւելն նախաշաւիղ առնել, որպէս ի ներքողանս<sup>6</sup>, ի վերայ ածել եւ զազգն<sup>7</sup>, նմանապէս<sup>8</sup> եւ զսնունդն՝ գովութեանց հաւասար<sup>9</sup>, եւ ապա զգործան զնել, եւ զբաղդատութիւնն, եւ զի՛ վերայ բանին՝ պատճառին ձայնակցեալ<sup>10</sup>:

< 1. > Պարսաւ Արեսողումայ

ա. Զառաւել շարութեանցն գործս եւ զբոլորովին վերջացեալն ի ճշմարտութենէ եւ անդր եւս անցանելով բիրապատիկն աղիտիւք զեր զբան, ոչ զայլ որ առաւել բան եթէ զԱրեսողումայս այժմ վերագիտեսցուք վալրագութիւն անձին: Նա, որ միշտ բարեպաշտիկն բարձրացեալ կենօք, մանաւանդ թէ եւ առաքինասէր ծնողաց համբակ, ունելով ի վերայ եւ զգեղեցկակերպութեանն շնորհ, յոյժ հակառակ այսոցիկ կատաղելով՝ զկորստականն յառաջ երբեր հանդէս: Քանզի որքան միանգամ թշուառացեալք եղեն ի մարդկանէ՛ վնաս կրելով իւրաքանչիւր ոք իւր դժպատե՛հ դիպուածովքն եւ կամ անյարմար զգալութեանցն տանել տարազարդութիւն եւ կամ զայլ

2 բոլորը՝ արտադրական, N<sub>1</sub> շարաց 12 Z<sub>3</sub>AGM Արեսողովմայ, l<sub>2</sub> Մօղոսօ-  
4 JG զէսքենէս նի  
5 AC ժամանակ(ս) քնթ., BGMNJ 13 Z<sub>2</sub>K վերջացեալսն  
ժամանակ 18 Z<sub>2</sub>K գաւակ փխ. համբակ

ինչ զանդամոցն զշարաշար խեղութիւն եւ կամ թէ աղբատք արդեօք եւ անառակ ծնողօք բանդագուշեցան եւ վրիպեալք ի վատթարագոյնս միտեցին շարիս, այնպիսիքն թէ եւ տարցին զպարսաւանցն առ փոքր ինչ զբամբասանս յիրաւի, բայց որ բոլոր բոլորովին ըստ սորայումն փառաւորեցաւ բանի եւ զնոյն ի շարութեանցն հանգանակեալ ծախիցէ իրս, այնպիսին մերկ եւ առանց միոյ երկբայութեան զանջինչ պարսաւանացն տարցի մրցանակ. որպէս եւ առաջարկեալս ապագովելի այլ: Որում եւ ես հանդիպելով փորձեցայց անտարակոյս մտածութեամբ զբաջայայտ սորայս պատմել զազանաբարոյ այլանդակութիւն, զոր բազմաց առաջի զնելով՝ գլխաւորեցից այսպիսի ձեւով:

բ. Արդ զայս զվատշուէրս ըստ գրեցելումն համարեսցուք, թէ պարգեւացն երբեր երկիր<sup>11</sup>, որպէս եւ էն: Իսկ զի՞նչ գեղեցկութեան նորա նմանեաց, որ յոյժ դժոխահեռ աղու եւ դագ բանիւքն վարէր<sup>12</sup> եւ ինքնահալած ի հայրենեանն լինէր գաւառէ ի տարաշխարհիկն անցանել երկիր<sup>13</sup>, թէ ոչ զի մեծապէս յամբաստանութիւն ինքեան զփափաղելին մատուցանիցէ երկիր, որում յետոյ կարօտեալ եւ տեսութեան անգամ ոչ լինէր արժանի:

գ. Այլ ոչ զայն եւեթ ունելով վայելչութիւն ստացաւ ոսոխ անձին, բայց եւ զերիցս երանելեաց նախահարցն առաքինութիւնս, որոց մինչեւ ցարդեանս ամանակ եւ ցանբաւ յաւիտեանս նոցայն բացերեւեալ արձանագրի արգարագործութեանցն գովութիւն:

դ. Ընդ նոսին յարմարեալ զուգահաւասարէր եւ ծնողին բարեպաշտութիւն ամենիմաստ երջանկութեամբ լի: Եւ սակայն զսա ոչինչ կարաց ի յանդգնութեանցն բուժել աղիտից, որ զմիշտ հակառակն ընտրեաց իւր սովորութիւն, եւ զգերեւացեալն անդաստանի յաջորդել անբերութիւն, այս ինքն զմայրենի փշաբերութեանն շարութիւն<sup>14</sup>:

ե. Տի նա, թէպէտ եւ ի հոյակապ եւ ի հոշակելի տան թագաւորականի եղանէր զարգացեալ տիովք եւ զմարդախոշոշ բարուց ոչ թողոյր ցանկութիւն լցուցանել ի ծնողսն անպատուութիւն, բայց

1 ACEFKM եթէ 23 ABFGK զուգահաւասէր  
8 FI յառաջարկեալս 27 B<sub>1</sub> յաջորդեալ  
14 բոլորը՝ դժոխախեռ 31 Z(Z<sub>4</sub>) ABCEFM ծնողքն, Z(Z<sub>4</sub>)ABF  
19 BCK<sub>2</sub> օսոխ IM անպատուութիւն  
21 Z<sub>3</sub>AEI նոցայցն,  
22 Z(Z<sub>2</sub>)A արգարութեանցն



միշտ բոլոր յօժարամտութեամբ ի վերայ այնորիկ ախորժելով  
անցեալ եղև զհետ եւ եղուդակն ամբարտաւանութեանց, այնքան  
մինչ գրեթէ իբրև զմի յանբանից իւրովն յայտնեցաւ անպիտանու-  
թեամբ այսպիսաբար կրթութեամբ: Վասն զի ոչ զինուորականին  
5 պարսպեաց վարժից, եւ ոչ իմաստասիրական ինչ կրթութեանց,  
որ առանձինն բանականին արուեստ բարգաւաճանաց գոյանայ,  
այլ միայն որպէս ասացի՝ զանապակն ուսաւ վայրագութիւն շա-  
րութեան<sup>15</sup>:

զ. Եւ ի հետ այսր ամենայնի որում պարտ եւ արժանն էր  
10 մովսէսականն վարել օրինօք, փոխանակ այնորիկ իբրև գրա-  
ւորական կտակաւ վարեցաւ անօրէնութեամբ ընդզէմ նորայն հրա-  
մանաց: Քանզի նա առ ծնողս բերեալ համբակաց զանարգանացն  
կամակարութիւն, եւ մինչ ցբանիցն անգամ ոչ թողացոյց մեղա-  
նքս<sup>16</sup>, ի վերայ զմահուն հատանելով վճիռս Իսկ սա անարգելով  
15 զմեծ պատուիրանն ինքնաձեռն յօժարութեամբ, միանգամայն գա-  
րեանցն պատրաստէ յարուցանել ուխտ ոչ այլ ուստեք առաւել,  
քան թէ ի հայրենի ծոցոյ եւ ի նորին հարազատէ եղբայրականն  
փողիցն<sup>17</sup>:

է. Բայց շեւեւ զմեծն ասացեալ զվերջին պարսաւանացն տե-  
20 զի՝ զունակութիւնս մարմնոյն եւ ոգւոյ. զմարմնոյն բարեշքութիւն,  
որպէս եւ յառաջն ասացի, թէ ամենաշար խորամանկութեամբն  
թէպէտ եւ ունէր եւս զօրէն պոռնկացելոց կանանց զգեղեցկա-  
դիմութեանն կերպարան<sup>18</sup>, վաղվաղակի գրեթէ ի շարագեղն դար-  
ձոյց տեսիլ: Ըստ ճշմարտիւ իմաստնոցն քննութեան, զոր ոչ ասա-  
25 ցին բնական գեղեցկութիւն երբէք, բայց պատրանք առաջօք կա-  
խարդական ձեւով երեւեալ՝ լի բազում ժանտատեսիլ վատթարու-  
թեամբ, զի շարութեանցն ծածկեսցին զնացք ի տգիտաց ոմանց,  
այլ ոչ եւ յիմաստնոց, զի նոցայն որպէս կամին՝ ցուցանի:

ը. Սմին հանգոյն գտցի սոյն եւ ծանրաշարժ գնացիւք երբեմն  
30 զժառոյ կախեալ առ ոչ կարել ժամանել ի փախստեանն, ի ներքոյ  
նորա անցանելով ոստոց թեթեւագոյն փախստիւ եւ յաղագս այ-  
նորիկ կաշկանգեալ զօրէն երկաթապինդ լինէր կապանօք<sup>19</sup>:

թ. Անդանօր կնատագոյն ապա սորա եւ ուժոյն յայտնեցաւ

ստութիւն, յոչ միոյ պարտեալ հակառակամարտէ՝ իւրովին կախա-  
ղանելով երեւոյթ ձեւովն:

ժ. Իսկ եթէ մարմնականն այսքան առաւելեալ եպերանօք ի  
սոսկալի թշուառութիւնն յանգեցաւ, ապա քանի՞օն զշամբուշ սո-  
5 րայն վերադիտեսցուք անմտութիւն անձին, այնչսփ մինչ զի եւ  
զիւրն ոչ ճանաչել բարեսեացս յառաջ՝ նախահոգակն ծնողի, որ  
սմա մեծապէս մատուցանէր գրգանս, այնմ փոխանակ սիրոյ՝ շա-  
րահատոյցն եղև վիճակելով փոխարէնս<sup>20</sup>: Զոր անգամ եւ յանբան  
կենդանիս անկար է այսպիսի ինչ գտանել խմամարութեան կուրու-  
10 թիւն: Եւ երկրորդ, զի զուր եւ ապիրատ մոլութեամբ զքաջուղէշ եւ  
զպտղեղ զՅովաբայն բոցակէզ հրգեհիւ տոշորէր անդաստան,  
զայնորիկ, որ զնա երբեմն յանլոյժ սպառնալեաց հօրն ջանալով  
յոյժ՝ թափեալ զերծուցանէր<sup>21</sup>:

ժա. Եւ ի վերայ այսչափ ստգտանաց, զոր մի զվատացելոյս  
եւ զանարի տաղտկութեանցն ասացից խենեշութիւն երկրորդելով  
15 ըստ յառաջասաց ձայնին, որ ի փախուստ կացուցանելովն զինքն  
առանց նահատակեցելոցն ախոյանից եւ առանց վէր յանձն առնլոյ  
եւ առանց միոյ իրիք պատճառի համանգամայն իւրով անարու-  
թեամբն լքուցանէր զձեռս մարտիկ նահատակացն եւ այնպէս օց-  
20 տէր լուծանելով զսիրտս եւ զհամագունդ շարաժողով ինքեան բա-  
նակի: Եւ իսկոյն այնպէս անձամբ անձին արարեալ՝ ամենեցուն  
առաջի իբրև զթիրախ կանգնեալ կայր, հակառակամարտ թշնա-  
մեացն լինել նետաձիգ<sup>22</sup>:

ժբ. Յաղագս որոյ մի գուցէ զանխլասցի ի մէնջ եւ շարագոյն  
անիրաւութեանցն պարսաւանք մարդակերպ այսորիկ գազանի:  
Քանզի զի՞նչ նրդեօք այնմ հեռի արգարութեան զործոյ հանգոյն  
կացցէ, որ առանց միոյ վնասու զհարազատն եղբայր խողխողէր  
անողորմաբար<sup>23</sup> եւ վայրենացեալ բարուք եւ նենգապատիրն  
ստաբանութեամբք զամենահեղ ծնողին թիրէր դատաստան<sup>24</sup> եւ  
30 միանգամայն ի լուսաւորն պատուիրանէ արտորուշեալ գտանէր՝  
յափշտակող առ ամենեսեան, զրկող զներքինս եւ զարտաքինս ան-  
հնարին շարագործութեամբք:

ժգ. Որովք առաւելաւ անդր եւս քան զանիրաւութեանն տե-  
սակս, միւսն եւս ահա աւարտ վերջին շարեացն ի զուխ կապելով՝

2 EK<sub>2</sub> ելուզակն

10 EI, մովսէսականն

12 EH ծնողան

24 Z (Z<sub>1</sub>)A ճշմարիտ

18 AEZ<sub>2</sub> Իւիք

29 Z(Z<sub>1</sub>)G խաբուութեամբք փխ. ստա-  
բանութեամբք



զյոյժ անխուզ վաւաշոտութիւն ցուցանէր: Վասն զի այնպէս ան-  
արգելութեամբ զանգեալ, մինչ զանց առնելով զբոլորին՝ ի հայ-  
րենեանն ելանէր անկողին պղծելով զսուրբ աւանդ ամուսնու-  
թեանն: Եւ զայն ոչ աներեւութաբար ըստ բազում գիշացելոցն սովո-  
րութեան զանվայելուչն կատարել աղունս առակելով զծնողսն, այլ  
ի վերայ տանեաց յանդիման ամենայն Իսրայէլի<sup>25</sup>, յորմէ եւ բար-  
բարոսականն անգամ սոսկացեալ խոսսափեն անձինք, յորժամ  
զայսպիսիս լուիցեն անարժան լուրս:

Ժդ. Այլ նա եկ բեր զսա աղէ ասել ինձ, թող զասացեալսս  
զարչ եւ աղտեղի եւ յամենայն կողմանց ողորմելի անյիշատակ  
մնալ ի կենցաղումս, միշտ սոսկ եւ թափուր չընչիցն օգնականու-  
թենէ, արդարեւ զօրէն տարաշխարհիկ եւ անյարկ հանգստարանի  
հանդիպելով: Եւ յայտ աստուատ է շքաւորութիւնն, զի ի քարանց  
մտաբերելով յարուցեալ կանգնէր իւր անուղղայ կենացն յիշատակ  
անմոռաց<sup>26</sup>:

Ժե. Եւ զի ամայի ի բարեկամաց՝ բոլորեցուն ճանաչի լսողաց,  
եղկելի առելութեամբ զիւրն անցուցանել ժամանակ, վերջացեալ  
յառաքինասէր նահատակացն սիրոյ չիւրայոցն հոմացեղից: Տի  
նա, եւ զորս ունէրն յանկս յինքն, շարաթոյնք էին եւ յոյժ դժնեայ  
ըստ նմանութեան ինքեան, մահաբեր խորհրդակիցք լինելով հոյժ  
անզգամաց: Յազագս որոյ յիրաւի ապա ընդհանուր սորայս հեղ-  
եալ տարածեցաւ ստուերացեալ վատափառութիւն, առ ի զամենե-  
ցուն լսելիս շարահամբաւ եւ հայհոյող կամակորութեամբ միայն  
անուամբն բաւական է ի բաց գարծուցանել:

Ժզ. Որ եւ վաղազրաւ կենօքն զիւրն յանկեաց ամենաթշուառ  
հիքութեամբ լի աւուրս, եւ զնոյնս զժոխատանջ եւ բազմազան  
հայածանօք աւարտեալ եւ այնոքիւր զանտանելին եւ անվախճան  
գձուձ եւ ամենեւին վատթարագոյն մահուամբ, զոր պարզարար  
իսկ ասել՝ շանց նմանելով արգարեւ մահուանէ ի մահ յուղարկե-  
լով<sup>27</sup>:

Ժէ. Բայց եւ շարագոյն զկնի վախճանին սոյն ցուցանի եւ  
յաւէտ հաւաստի հանապազ գոչելով զանբաւ շարութեանցն սորա  
գործս տէրունեանն զեկուցանեն գիրք ի ձեռն մեծին Մովսէսի ընդ

13 Z(Z<sub>3</sub>) անդուստ  
19 ABCFH յանկնս

29 AEI շանցն, H1<sub>2</sub> ուղարկելով

բնաւ տիեզերս աշխարհի, յորմէ բոլոր բարեսիրացն խոսսափեալ՝  
փախչին յորժամ զկարի յոյժ զվրիժագործութեանցն լսիցեն ձայնս  
ժր. Եւ զի այսքանեօք մոլեկան ախտիւք նախահաւակ ի սկզ-  
բանէ մինչեւ ի կատարած սորայս յառաջացեալ խոստովանեցաւ  
կատաղութիւն, զո՞ որ ապա ի բազմահոյլ շարացն զուզամանելով  
բերեալ յարդարեսցուք առ սա: Թուի թէ ըստ արժանեացն եւ ոչ  
բնաւ ընդ ումեք համեմատեսցի, բայց եթէ միով մասամբ վայրա-  
գագոյնն Եսաւ, որ իբրեւ զսա վրիպեալ ի գերաշխարհիկն եւ յերկ-  
նագնացն եղև պողոտայէ: Վասն զի երկոքեան սոքա զոյգ աւելա-  
ստացութեան եւ քամահողք բոլոր աստուծային գտան պատուիրա-  
նին, եւ անուամբ միապէս ընդդիմամարտք առաքինասէրն եղեն  
ծնողաց, բայց զօրութեամբ ոչ եւս: Քանզի մին լոկ աղօթս առնե-  
լով վախճան իւրումն հայցէր ծնողի<sup>28</sup>, իսկ սա՝ բոլորովին պատե-  
րազմաւ զինեալ կամեցաւ ինքնագործ շարեօքն շիջուցանել զճրա-  
գրն Իսրայէլի<sup>29</sup>: Եւ նա թէպէտ եւ հալածական առնէր զեղբայրն,  
այլ ոչ այնպէս շարաշար մահուամբ զիւրն խողխողէր հարազատ  
եւ փախստական զհայրն առնէր, եւ զեր ի վերոյ զիւրն ցուցանէր  
վրիժագործութիւն, քան զնորա եւ զայլոցն ամենեցուն շարաւ կե-  
ցելոց:

Ժթ. Իսկ արդ որ այսքան զխաւորագոյն պարսաւանօք զյաղ-  
թանակն էառ շարեաց, միանգամայն թափուր յարդարութեանն լի-  
նելով գործոց. այլ եւ նմանող անասնաբարոյն յայտնեցաւ գիշու-  
թեամբ, պարտական սպանութեան եւ ամենայն աղծապաղծու-  
թեանն: Եթէ ի գաւառէ հալածական յամենալից բարութեամբ  
պաշտպանեցելոյ, եւ եթէ ի վայելչական ծնողացն եւ ընտրելոց  
նախահարցն օտար այլանդակութեամբն աննման, տարագիր ի  
ժառանգութենէ եւ յառաքինութենէ, եւ եթէ յեւս վեհագոյն պատու-  
իրանացն ի բաց մերժեալ, հէք եւ թշուառական ի կենդանութեանն  
եւ ի մահուանն: Ի սմանէ ապա ո՞ որ ոչ ի բաց զլսելեացն զարձու-  
ցանիցէ երեսս. եւ յամենայն կողմանց հաւաքելով զամբաստանու-  
թեանցն բան, զմեծագոյնն ի վերայ կապիցէ դսրովանս:

4 Z(Z<sub>1</sub>) AEFK մինչ  
8 ABCFGIM գերաշխարհիկ  
22 AG նմօղ

23—24 Z<sub>1</sub>H ազգազդուութեան  
25 Z(Z<sub>3</sub>) A<sup>2</sup>EH եւ թէ



ա. Որ որ արդեօք քաջակորով եւ սրատես մտերմաբար խո-  
հականութեամբ ըստ իմաստասիրացն հետազօտելով քննել կամի-  
ցի զանբան կենդանեացն<sup>30</sup> զգոյացութիւնսն, եւ թողեալ զձիոցդ  
ամենաշար ունակութիւնս եւ վնասակարագոյն, այլում զամբաս-  
տանութեանցն մատուցանէ բամբասանս, ինձ թուի թէ եւ ոչ բնաւ  
յումեքէ այնպէս կարասցէ լիով զանօգտութեանցն գտանել անպի-  
տանութիւն, որպէս ի յանգոսնելի կենդանոջս: Որ ոչ միայն ստա-  
ցողացն յանշահն հակամիտէ կողմ յոլով պախարականօք եւ կամ  
զատուցեալ ի ճշմարիտն հեռանայ կարծեաց, այլ բազում անգամ  
եւ զգծուարագոյնսն հաւաքելովն ընձեռէ աղէտս առ ի յինքննէ,  
հանդերձ անտանելի վնասակարութեամբ: Բայց թերեւս ոմանք  
շամբուշք եւ կամ փառամոլեալք յանառակ շրջագնացութենէն  
մարդիկ կարծիցեն իմն զսա վարկանելով լինել բարեփառութեանց  
ինչ պատճառ եւ յաղագս այնորիկ սմա եւ զնեբբողականսն ի վե-  
րայ բերեալ մատուցանեն մեծարանս: Ընդ որ ոչինչ է զարմանալ,  
վասն զի խաւարեալք անգիտութեամբ տգիտանան զբարւոյն ծա-  
նօթութիւն, որպէս յանտեսութենէ զլոյս եւ կամ ի դառնութենէ՝  
զմեղուն քաղցրութիւն: Իսկ իմաստնոցն ոչ այնպէս, այլ կարի քաջ  
ի հակառակէն բացայայտեալ ճանաչի միայն զսպագոփութեանցն  
հարագատարար հարկանել սպասաւորութիւն: Յաղագս որոյ նմա-  
նապէս ոչինչ ծածկութիւ վարեցալք եւ մեք, թէպէտ եւ բազմաց  
հոլանի սորայն երեւիցի վատթարութիւն, եւ թէ զբովանդակն ոչ  
զօրեացուք ասել, այլ որչափ մեղն թողանի, վերաբերեացուք ճշմա-  
րիտ պատմութեամբ զամբաստանութեանս մի ըստ միոջէ ունելով  
զաս:

բ. Եւ նախ ի գաւառէն իսկ պախարակեսցի, որ ասի ընդ ամե-  
նայն տեղիս ունել իր բնակութիւն՝ ուր միանգամ մարդկան է  
տարածեալ ազգ: Եւ անդ ոչ ամենայն ուրեք կարացեալ անվթար  
զանցիցն առնել զնացս, բայց է զի խոյս տալով յապառաժուտ եւ  
յերեզն տեղեաց եւ յանտառախիտ եւ ի ճաղճախուտ վայրացն գոգ-  
ցես իբրեւ փախստեայ իմն ի հարթայատակ եւ յարգաւանդահողն՝

2 Z հին Z<sub>1</sub>ABCDEFHKM որք  
4 A1 ձիոց  
14 Z(Z<sub>3</sub>) կարծեցին

17 ZA խաւարեալ  
32 Z(Z<sub>1</sub>) իբր

ընդ սահմանաւ անկեալ պարաւանդի: Եւ անդ թէ եւ բնական ըստ  
ոմանց թուելոյ յայտնապէս զէն ի յիրումն բերէ ոտս՝ զկարծու-  
թիւն սմբակացն, սակայն թէ փոքր ինչ յաւազինն ելանիցի կայան,  
վաղվազակի դիրապախս ելով կասեալ գտանի, գրէ զսպականու-  
թեանն յաջորդեալ վիճակ:

գ. Եւ զի սոյն կենդանի ասի դարձեալ ըստ աստուածային  
նախախնամական հաճոյիցն՝ բանի գոյացեալ զօրէն բոլոր պա-  
ճարացդ, զայս մերումս շնորհեաց ազգի: Եւ սակայն անարժան  
նորա բարեբարութեանն լինելով իբր մեծ միջոցաւ արտալածեալ  
ի բարեացն՝ որոշեցաւ ի շարութեանն կողմն. եւ յայտ այնու է, զի  
ոչ հասարակացն է ստացուած, այլ մանաւանդ ամբարհաւանիցն  
եւ շարացելոց մարդկան<sup>31</sup>:

դ. Որք իբր հայրաբար մտերմութեամբ զվարկն հատուցա-  
նելով դայեկեն. եւ զնա գործակից ունելով վարին յաւազակու-  
թիւնս, եւ յաւարիցն հինահարութիւնս ի վերայ խաղաղացելոց  
յանմեղութեան<sup>31</sup>: Եւ զի ստոյգ արդարեւ յափշտակութեանցն եղ-  
եալ խոստովան արբանեակ, յայտնի գոյ ամենեցուն եւ ոչ որ ան-  
գիտանայ:

ե. Նոյն օրինակ գիտելի է զսորա եւ զառուել դժնդակութիւն<sup>32</sup>  
սննդեանն որ զօրէն ցոլացեալ բոցոյ անյազաբար դերկաբանչի-  
րոցն փաղաղէ զարմանս որովայնամոլ շուայտութեամբ: Մանա-  
ւանդ զի բազում վշտատեսութիւն տածողացն ստէպ զսարենիցն եւ  
զայլոցն ամենեցուն խնամոցն հայցելով հասուցանել ի վերայ աշ-  
խատութիւնս եւ զի ոչ ըստ անբաւութեան ծախոյն եւ զօգտիցն  
փոխանակելով մատուցանէ վարձ, այլեւ զայն կամ սուղ ինչ  
մասամբ եւ կամ եթէ բնաւ իսկ ոչ<sup>33</sup>:

զ. Եւ յետ այսորիկ առ յոյժ վայրենամիտ բարուցն, բազում  
հանճարեղից եւ հմտագունիցն ձեռնարկելով պիտանանայ վարժո-  
ղացն առ ի զյոքնապատիկն վերաբերելով հանդէս աշխատասիրու-  
թեան հանդերձ անյազաբար տանջանօք, որ զօրէն շարագործի  
բոնաբար ածեալ լինի կապելով կնդամբք եւ ճախանոցօք եւ ազգի  
ազգի կտտանօք եւ մղեն երախաձգութեամբն սանձակոծելով  
զկզակս, եւ հանապազ գրեթէ զարինահոսն յարուցանեն քրտունս  
եւ իբրեւ զբազում շարեաց պարտական վարակեն ի դժուարարձակ

3 Z(Z<sub>4</sub>)B1M ելանիցէ  
4 Z<sub>1</sub>K գրեթէ  
6 Z աստուծայինն

13-14 AE հատուցանէ՝ ելով  
29 Z հին Z<sub>1</sub>AEFM զօքնապատիկն



շղթայս: և այնպէս կէսք ի նոցանէ սղագոյն հասանն կրթութեան  
և կէսք ամենեւին իսկ ոչ, միայն ըստ սովորական անընտելու-  
թեանն վարելով ասորժակի<sup>34</sup>:

5 է. Յաղագս որոյ իբր օրինօք իմն բնաւորականօք յոխորտա-  
ցեալ ցուցանի զխրոխտ և զյեղուզակ բարուցն ունելով ամբար-  
հաւածութիւն, որ յանկարծակի ըմպահկելով դժոխահեռ յոխոր-  
տանօք և այն հանգոյն մոլեկաճացն ի վզանուտն անցեալ ստամ-  
բակութիւն:

10 ը. Բայց ահա և յառաջիկայս փոփոխելով զմարմնոյն տես-  
ցուք տարազարգութիւն, որ թէպէտ և յոլովագոյն զգունոցն ունի  
զանազանութիւն քաջագեղեցիկն փաղփեալ ձեռով՝ անընական յին-  
քեան ունելով զվայելչութիւն, այլ թէ և սակաւիկ մի ի բազմա-  
մատոյցն պակասեցի պարենիցն, անդէն զգձուձ տգեղութեանցն  
ձեւանայ բնութիւն<sup>35</sup>:

15 թ. Սա բազում անգամ ասմարագունիցն և զթեթեւաշարժ  
երագութեան երեւեցուցանէ կարծիս, բայց սուղ ինչ առ աշօք ան-  
ցեալ ընդ յարձակելն վաղվաղակի և զլքմանն բերէ պարտութիւն  
ոչ ժամանելով ի կիտադրեալն հասանել ի տեղի, զօրէն պղպջակի  
լուծանելով և այնպէս հարեալ կայ յոյժ պարաւանդելով կնատ և  
20 իսէնէշ գոյացութեամբն:

ժ. Տի՛ նա, քան զերեւելեացն ամենայնիւ անպիտանագոյն ան-  
կեալ դնի մասամբք բոլորովին պակասեալ յիմաստութեանն ինչ  
նշանակէ անծանօթաբար առ բարեհատոյցսն եղև վարեցեալ՝ ու-  
նելով հոյս ստացողաց: Վասն զի ի միջասահմանին կալով վայրի,  
25 երբեմն հեշտաւ թշնամեացն հարկանէ արբանեկութիւն ծառայու-  
թեան, և երբեմն անորոշաբար ձայնի՝ իւրումն ստացողի, որ  
զրեթէ խլացեալ ականջօք ոչ լսէ զանուն ինքեանն կոշման, որպէս  
գովելին եզն, կամ կամակատար շանցդ ազգ<sup>37</sup>: Յորոց վերջացեալ  
քան զերկոսեան ի պակասամտութեանն յանկեցաւ ծայրս, ըստ  
30 երջանիկ մարգարէին, յորմէ հրաժարեցուցանէ զամենեսեան, ոչ  
լինել անմտագոյն իբրև զկենդանիս զայս<sup>38</sup>:

ժա. Սոյն և անարութեամբ է զգածեալ երկուք այսոքիւք յե-  
ղանակօք: Մի՛ զի յանգուզն բերմամբն զյանկարծադէպն յաջորդէ

զահավիժութիւն հանդերձ վերելական, և երկրորդ՝ զի ինքնահա-  
լածն լինի սարսուղով իմն և այնգունակ բազմապատիկ երկ-  
շտութեամբն ընդոտուցեալ յաղօտաբար ինչ ձայնից և հարթու-  
ցեալ ահա մինչև ոչ ումեք ի ձեռնընտել կարծի պաճարաց<sup>39</sup>:

5 ժբ. Յաղագս որոյ յիրաւի ապա խոտորեալք ի յարզարու-  
թեանն ուղիղ շաւղաց մարդիկ զսա գտին գործի անիրաւութեան առ-  
ձեռնպատրաստ, որպէս և յառաջն ասացի: Եւ սովաւ իբրև զօ-  
բաւիզն օգնականաւ վարեցեալ՝ որսացան յափշտակել յափշտա-  
կութիւնս, և ուսան ի վերայ զարեանցն յարուցանել հեղեղս և  
10 զայլս ազգի ազգի վրիժագործութիւնս, որպէս երեւեցաւս բնա-  
կանապէս յինքեան ունել զարտաբոյ իրաւանցն շարիս. և յաղագս  
այնորիկ ուսոյց և ստացողացն զնոյն կատարել սովորութիւն:

ժգ. Բայց զի՞նչ պիտոյ է և յաղագս անարգել ևս բղջախոհու-  
թեանն ծախել զբանս, որ ի վաղնջուցն հետէ մարգարէն Երեմիաս  
15 նախատեաց զառաւել գէշ վաւաշոտութիւնն սորա, ասելով զիսրա-  
յէլեանն երբեմն ազգէ զսոսկալիս բամբասելով իգամոլութիւն. թէ  
«ձիք մատակախազք եղեն՝ իւրաքանչիւր ի կին ընկերի իւրոյ  
վրնջելով»<sup>40</sup>:

ժդ. Եւ զի նուազեալ սակաւութեամբ ի կենցաղումս յօրանայ  
20 և ոչ ըստ անգադար խառնիցն զբազմութեանն առնու աճելութիւն  
հակառակին պատահելով, զայս բոլորեցուն է զիտելի<sup>41</sup>, որ իբր  
զաւելաստացութիւն ինչ և զանօգտակարագոյն կենցաղոյս՝ զսա  
համարելով բանականս ազին: Վասն սորին պատճառի և ոչ ամե-  
նեքեան ստանան զօրէն հարկաւորագոյն պաճարացդ առ բոլորե-  
25 սեան գտանելով, բայց դուն և նուազ և սակաւուց ոմանց զիւրն  
մատուցանէ սպասաւորութիւն, յոյժ ատելի գրեթէ հասարակացն է  
մարդկան ապագովեալ կենդանիս, բայց առաւել բարեպաշտիցն,  
որոց միանգամ ամենաթշուառութեամբ եղև քաջածանօթ<sup>42</sup>:

ժե. Այլ թէ և ունի ևս սիրելիս յատուկ զխումբս հուղկահա-  
30 րացն և զնմանողս նոցին շարս, որոց անկար է զբոլոր անօրէնու-  
թեանցն կատարել առաջարկութիւն մեկուսացելոց ի սմանէ, զոր  
և ի յանցելումն բազմապատիկ եղև խոստովանեալ առ ի հաւա-  
տարմութիւն աներկբայաբար իմաստասէր լսողաց: Եւ այսու օրի-

6 բոլորը՝ գծախախտ  
7-8 Z<sub>4</sub>ABD EFHK<sub>1</sub> ստամբակութեան  
9ZEI առաջիկայս

17 BEFM արձակելն  
22 EI գնէ ի

2 Z<sub>2</sub>FK<sub>1</sub> սարսուղով  
6 Z(Z<sub>3</sub>)ABCFHIM ուղեղ  
13-14 Z բղջախոհութեանն

15 AE վաւաշոտութիւն  
31 A<sub>1</sub> զատարեալ



նակաւ զթշուառայեղց է տեսանել վատափառութիւն ընդհանուր համբաւեալ, որ բոլորովինն իսկ է բազում պախարականօք հայհոյեալ ոչ միայն ի մարդկանէ, այլեւ անարժան եւ աստուածային սրբամատոյցն ողջակիզի ի բաց որոշեալ ընկեցիկ լինել օրինադրել մարգարէին Մովսէսի<sup>13</sup>:

Ժգ. Վասն որոյ եւ զկենացն եւս հանդիպեսցուք ասել ժամանակ, թէ յերկայն եւ թէ ի սուղ աւարտեալ յանկիցի, միշտ թշուառայեղց տաժանութեամբ եւ ծիրական ախտիւք պաշարեալ, դեղոց եւ արինահոսն օշոտելոց կարօտանայ առ ի հմտագոյն ընդունել բժշկաց, եւ ի զառամ ծերութեանն գարշելի եւ անշահագոյն զսա համարելով, զոմանս ի բացարձակն յուղարկելով անտառս առ ի գաղանակուր լինելով եւ զայլս ի տուն աղորեացն արգելով զենթաձգութեանն հարկանել ծառայական սպասաւորութիւն:

Ժէ. Նոյն օրինակ եւ ելք վախճանի սորա ոչ եւս առ ի պէտս դարմանոյ մարգական մատուցանին երբէք, այլ արտաքս ընկեցեալ լինի կերակուր շանց եւ շաղղակեր թռչնոց: Եւ յետ այսորիկ շարաթոյն իմն եւ վնասակար զեռուն, ըստ իմաստասիրացն բանի, ի նխեալ մարմնոցն սորա ասեն ծնանել՝ յարանուն ինքեան ձիաստաց<sup>14</sup> կոչեցեալ, յովովից սատակման լինելով պատճառ<sup>15</sup>:

Ժբ. Ապա ուրեմն ժամ է այսուհետեւ յանասնական սեռից զոր առ ծայրապատար սորայս համեմատել շարութիւն: Զայլ որ եւ ոչ բնաւ, բայց միայն զհեղգագոյնդ ի կենդանեացդ էջ, որ զնորին անպիտանութեանն վարեցաւ հետ եւ երկաքանչիւր սորա ի սոսկալիսն եղեն յաւետացեալ բանականս ազին անմաքրութեամբ ի նուէրսն՝ զոյգք եւ անմտութեամբ՝ հաւասարք: Բայց միովն ամբաստանեալս ի ի մէնջ առաւելու խրոխտ եւ յեղուզակն բարուք, եւ այն զի ի յաւար յափշտակողացն առձեռնպատրաստ յօրանայ եւ անցեալ ինքն ըստ ինքեան զգերակայ անիրաւութեանն տանի մրցանակս:

Ժթ. Իսկ արդ որ այսպէս ի սկզբանէ մինչեւ ի կատարած բոլոր մասամբք խոստովանեալ կենդանիս այս ցուցաւ ստգտանելի լի անմտութեամբ եւ մոլեկան վաւաշոտութեամբ, ամբարհաւած միանգամայն եւ անարի, անյագ յորկորամոլութիւնս եւ անզարդ ի գեղեցկութեանն մասին. եւ համայն պարզաբար իսկ սա՝ երեւ-

եալ յայտնեցաւ անմաքուրս՝ մայր ամենայն շարութեանց ի կենդանութեան եւ յետ վախճանի: Ապա պարտ եւ արժան է ամենայն հանդիսատեսն իմաստնոց միշտ պարպ բերելով բանի եւ սմակարել՝ զմեծագոյն ապահովութեանցն հատուցանել մրցանակս:

<3.> Պարսաւ լերին<sup>16</sup>

ա. Ընդ միտ ածելով եւ խուզելով ուրուք հմտաբար տեսութեամբ՝ յերկուս յայսոսիկ որոշեալ հատած՝ ի լեռնային եւ ի դաշտային հաստատեալս առ ի ներքոյ երկնի իմասցի աշխարհ: Որ եւ ի սոսա դարձեալ ոչ այնքան միջոցք զանազանութեան ըստ գոյացութեանն ենթադրի, որքան թէ ըստ երկաքանչիւր սովորականն յայտնեալ ճանաչին անյեղափոխելի կրից: Վասն զի մին՝ զպանծալին եւ զառլցեալն հեշտակեցութեամբք ունելով բարբրախտութիւն, ամենայնիւ անմասն ի տաժանելի եւ աղիտաբերն լինել ըստգտանելի դժնդակութենէն: Իսկ երկրորդի՝ լեռնայինս հակառակ նմին խոցոտիչ եւ ցաւեցուցանող եւ միանգամայն անտանելի հիբութեանցն ձեռնտու, որ դժոխքմբերագոյն իմն եւ պակուցանող յոյժ տեսողաց ամենեցուն միայն յերեսութենէն իսկ ճանաչի ի տարակուսանս արկանել վտանգից բռնաձիգ շարութեամբն: Ըստ որում եւ այլն ամենայն պաշտեցեալն ի սմա արկածք զառնութեան թէպէտ եւ բոլորեցուն քաջայայտ են եւ կարի յոյժ քասքնեցուցիչք առ ի լսել, մի ինչ եւ մեզ վասն զպատշաճն արտաբերելոյ աստուստ զամբաստանութեանցն բամբասանս զանդազելի թուեսցի մանրամասնարար առաջի դնել լսողաց: Զի մի զանխլացեալ այսպիսուոյս լիցի դժնդակութիւն՝ իբր աներեւոյթ որոգայթ ի կործանումն միշտ ըմբռնելոցն մատչելով, այլ զի ընտելակրթեալք յասացելոցս ի միտ ունելով զշարեացն հոգաբարձութիւն, զարժանաւորն եւթ հնարեսցին յինքեանս ստանալ աստուստ ազատութիւն: Զորոյ զսաստակապէս ըստգտանս եւ պախարակութիւն առաջին այսպէս վերաբերելի է սկսմամբ հանգստակալ տեղւոյն կալուածոց:

բ. Յաղագս որոյ սա գաւառ որոշեալ զատոյց իւր իբրու ոչ զմասն մի ի գոյութենէ աշխարհիս, այլ զընդհանրականն գծով եւ

4-5 Z1B13 օրինադրեալ  
12 AE արդելով  
134

13 K զենթաձգութեանցն  
28 E1 անիրաւութեան

8 Z3ACEFH1KM հաստեալս  
10 Z2ACEFH1KM են զբի

13 Z յաղիտաբերն



զցամար. և ի սոցանէ ապա խոյս տուեալ ի խաղաղուտ և յապահովացեալն տեղեաց յոլովագոյն զզծնդակն՝ հասեալ կալա փափագելի և ընտանի շարեացն իւրոց զհիւսիսայինն խստաշունչ սառամանեացն վայրս: Յորում բուռն և անհերքելի սատարութեամբ օղոյ վարեցեալ, միշտ անբնակ իմն և աղիտագործ սարասի լցեալ տեսանի և ոչ զմի ինչ վայելչականն իրաց փութայ կատարել գործս:

5 Գ. Եւ եթէ այս այսպէս է, ապա կարի յոյժ անվայելուչ է բարւոր նախածնողին, թէպէտ և ի նմանէ արարաւ, որպէս ի լուսոյ խաւար և զշարահաւս, անուանել պատճառ:

10 Դ. Այլ ճշմարտիւ զսմա ասել ի դէպ է ոչ զայլ որ նախահարս և ծնողս, բայց եթէ սորայն շարութեան զխարխարիչն երբեմն ժամանակի<sup>47</sup>, և զբարձողն պատշաճագոյն յարմարութեանցն զարկածս ջրհեղեղին, յորմէ և զղրղելով իւրաքանչիւր որ, յապականութիւն ընդունելով փոխադրութիւն աշխարհիս մասունք՝ եկեալ, 15 ըստ ասացելոյն իմաստնոյ ուրումն, ի պակասել բարւոյն սորայս երեւեալ ծանուցաւ լինելութիւն<sup>48</sup>:

20 Ե. Յաղագս որոյ յիրաւի մեկնեալ այլանդակագունիս ի սնուցողագոյնն վայրաց հետեմանէ, անդստին իսկ զհարազատն ինքեան առեալ ընդունի ի ծնողէն համաշնջական սովորութիւն: Վասն զի չէ ինչ այս անգիտութեան ի սմանէ երեւեալ տեսութիւն, եթէ ի բանականաց և կամ յանասուն կենդանեաց, և կամ ի թրոչնոց և տնկոց պէտս հասեալ ի սմանէ մատչիցին խնամք, այլ փոխանակ յինքենէ տածմանց, թէ և զարգացելքն յոմանց ըստ զանազան հեշտալի պաճարանաց ի ձեռս եկեսցեն վրիպակութեամբ, 25 ոչ բարեբաստութեան ինչ, որքան թէ ծիրականն հարեալ դժընդակութեամբ ընձեռէ կորստեան:

30 Զ. Բայց ի բաց թողով զայս, տեսցուք և զախորժական, միթէ ըստ ճահագունին ինչ իցէ ազնուագոյն կարգի, որ զանպտղութեանն սուլմամբ բքոցն և յիրերաց վերայ կուտակեալ մառախրղիցն թունիք իբրև զպանծալի ինչ և յօգտակարութեանն մատուցեալ պէտս՝ կամեցեալ յինքեանս աճեցումնս, ի նմին մշտընջենաւոր հաստատեցաւ անբեղնաւոր կապտութեան: Եւ զի՞նչ ար-

զեօք երեւեսցին պատճառք զայն ախորժելով, եթէ ոչ զբամահելի անպիտանութիւնն ամենայն տեսողաց առձեռն ցուցանելով պատրաստագոյն:

5 Է. Նաև ոչ պարզաբար զասացեալ մթազգածութեանցն և կամ զմրկացն կրեալ ունի յարածամ դժնդակութիւն, ընդ որ հայելով ուժգնութիւն արկածից՝ պատկառեալ արդեօք կենդանեաց փրկութեան ի շարեաց մասնէ վիճակի: Այլ նմանութեամբ խորամանկ դժոճղի որպէս օրէնս ինչ հաստատունս և հաճոյս զխարէութեանն ցանկորդելով յինքեան և զնոյն զոգցես զօրէն բանաւորացս վարժի իմն հրահանգի զանօրէնութեանցն ցոյցս: Է երբեմն փարատեցուցանելով զծմականիստ մէզս և այնպէս իբր ընտանի և կամակատար մերձեցելոցն յինքն ճանաչի, և է երբեմն բնաւորականան անդէն յանկարծակի պարփակեալ մառախղով, յորում է այլագոյնս կեղծաւորեալ դիմակս, զբազումս ի տխմարագունիցն 15 ըմբռնեալ ի սմին խորամանկութեան վտանգելով և յոյն ճողպրելի պահելով թշուառականութեան ահա քան զամենայն աղէտս զհիբագոյն ժառանգեցուցանէ կորուստ:

20 Ը. Եւ արդ հայելով ուրուք մի քան զմի ի սմա սաստկագոյն աղէտս թշուառութեան, մեծանձնութիւնն կարծիցի աննմա՞ն ասացելոցս գտանել պարսաւանաց: Բայց ըստ անսխալ գիտելի է այսպէս, զի թէ շափաւորն այնր աղազաւ, որ ցանկալին ի տեսանելն է և պատրաստ առ ի սակեալն վճարել պէտս, տանի ապաքեն առանձնաբար յամենեցունց բարեբանութիւնս, ո՞րչափ ևս առաւել կալցի առ այս անհեղեղն սովորութիւն: Եւ եթէ այս այսգունակ 25 հաւատարմացաւ, ապա զո՞վ անպատշաճագոյն և անշափ քան զյառաջարկելոյս կայցէ տեսանել զոյութիւն:

30 Թ. Յորմէ անդրանալի և ամենեւին սրացման արժանի տեսութեան: Տի՛ նա ոչինչ վերջացեալ ի յաճախութենէ շարաղէտն և անպատմելի ևս ճանաչի պաշտեցեալ կարողութեամբ զօրութեանն, որ ամենեւին պատշաճագոյն էր, եթէ նուաստ և ոչ առաւելեալ զասացելոցս զեկուցեալ եղանէլ ցոյց. զի թերևս առ պակասութեանն և հարուածոցն մասնաւոր հասեալ ի կրողն լինէր ներգործութիւն: Բայց յաւէտ թշուառութիւն այն է, զի ըստ ունակութեանն՝ և վճարմանցն ցուցեալ լինի ուժգնագոյն գործ, զսառա-

3 ZABCEH հիւսիւսայինն

4 AE սառամանեաց, Z<sub>2</sub> սառնամանեաց

12 FI զսորայն

16 EI<sub>1</sub> ասացելոցն

28 AI զախորժականն

5 Z<sub>3</sub>A կրել

7 CFHI շարեացն

26 ZEM զառաջարկելոյս

34 Z զսառամանեացն



մանեաց ասելով աստ հանդերձ բերմամբ ի վերայ իրերաց զձեանցն եւ զկարկտիցն եւ զնոցուն համանմանիցն, յոյց ի հետ ապա վնասարեր իմն ոսոխեալ սղոխք ի շարաշուքն հասեալ մերձակայսն կացուցանեն անձինս ի տգեղութեան ձեռի:

5 ժ. Եւ եթէ այլոց այսպէս զուարճալի պայծառութեանց խարխարիչ ասացաւ սա, յինքեան զի՞նչ ինչ վայելչանացն կարացէ ցուցանել գեղեցկութիւն: Եւ առաւել զի յայտ իսկ յերեւելութենէն լինի գիտելի բազմաց, վասն զի անբաժ ի բուրաստանացն եւ յայլ անտառախիտ եւ բաշուղէջ մայրեացն, եւ ի զանազան բուսոցն եւ 10 ծաղկացն հրաշալի տեսութենէ այնպէս ապաւեր եւ թափուր<sup>49</sup> յամենայնէ կացեալ մնայ, մինչ քան զոր անհնար լիցի յեղելոցս գրծուծ եւ անպիտանագոյն կարել երեւել շար տեսութեամբ:

15 ժա. Բայց միայն յայնմանէ, զի յետ բազում ինչ անցեալ ի վերայ ամառնային ժամանակի՝ սա ապա ուրեմն զօրէն ծանրաշարժ տաղտկալի ուրուք բնութեան վիժածս եւ անցս<sup>50</sup> արտայայտել բոյսս, որ զանբժշկելին սորուն զեկուցանէ հեղգութեան նշանակ. եւ զնոյն ինքն սղարար զալարույ ընծիղումն եթէ յարեզակնայինն ընկալեալ շարժմանէ զրկութիւն, անկար էր եւ ըստ մտածութեանն իսկ ումեք ի սմա իմանալ յեղանակի, թող թէեւ կամակարապէս տեսութեամբ զփորձ առնուլ բնութեան:

20 ժբ. Իսկ եթէ զմարմնական գոյութեան այսպէս զսխալանաց ի բարի կարգէն եզիտ բանս, զհոգեւորականն մասանց ո՞րչափ եւս առաւելագոյն, յորոց թէեւ կամեսցի իսկ որ զիմաստասիրականն ի մէջ առնուլ տեսութիւն, ո՞րպիսի օրինակաւ արդեօք զնորունն 25 հնարեսցի բերել լսողացն հաւաստութիւն: Զի ոչ քաղաքացն յարմարեալ ի սմա շինութիւնք, ուր խորհրդականք եւ ատեանք եւ այլ եւս յօրինեալ կացուրդք եւ հանդերձ այսպիսի պակասագոյն ի վայելչական թերութեան՝ ոլորտացեալ եւ ի մշակականն, եւ ի զինուորութեանն, եւ ի նաւաստութեանն ամենավայելուչ արհեստից, 30 յորս խոհականն զարգացեալ յառաջադիմութիւն:

ժգ. Եւ եթէ ոչ վրիպեսցուք ի ճշմարիտն ասելոյ, եւ արութեան անցքն իսկ ի դէպն հասեալ ունին կատարելութիւն: Եւ իբր յայնքանեացս սա որոշեալ պատշաճագոյն յարմարութեանց եւ անընտանի ամենայն էիցս է յարգարողի բանաւոր եւ մտաւոր մարդկա-

3 ABCHK, աւսոխեալ  
6 ZEIM վայելչականացն

17 Z(Z<sub>2</sub>)BHM գոյն  
19-20 ZBHM կամաւորապէս

յին տեսակիս, ո՞չ ապաքէն ստակարծութեան է զերկաբանչիրոցս այսոցիկ աստուտ առնուլ զերեւոյթ:

5 ժդ. Բայց ո՞հ մեծի շարեաց եւ անընտելի թշուառութեանց՝ առաջիկայիս ի սմանէ գործեցեալ վճարման, որ առ յոյժ շարադառն մշտնջենաւորեալ արկածի՝ ոչ միայն զբողջախոհութեանն, այլև զշափաւորն ամուսնութիւն, որ պատճառ է դաւակասիրութեան եւ ի կարգի դասեալ պարկեշտագոյն ժուժկալութեանն, այնպէս համառօտաբար ըստ կարեկցութեան առ իրեարս զեռնոցն գոյացութեան յինքեանն հրաժարեցուցեալ սահմանաց, զի թէ հնար ինչ էր 10 եւ զաշխարհ իսկ ամալի եւ զերեւացեալն ի վիճակեալն կացուցանէր բնակչացն, այլ զինքն եւ առանց յեղափոխութեան իսկ ամենայն իրօք:

15 ժե. Եւ զի բոլորովմբ ի սմա զշարեացն եղև խոստովանեալ մասունս, բեր աղէ եւ զառաջիկայիս տեսցուք կարգ: Վասն զի ո՞ որ ոչ համարձակեսցի ասել զուժգնագոյն անիրաւութիւն սովաւ բովանդակեալս, որ քաջայայտ ի հարցափորձէ այլոց տեսողացի լինի իմանալի: Քանզի ի՞բր զանխլացեալ ծածկիցի, թէ հաստատեալ ընդ լուսնովս վայրք ընդ անհեռն անկեալ սպասաւորութեամբն մտերմաբար յանբանս եւ ի բանաւոր կենդանիս՝ բերովք 20 զիրարանչիրն կատարեն արժանաւոր պաշտպանութիւն: Միայն ամբաստանեալս, որպէս զկարի որ ըմբահող եւ աուցեալ ամբարտաւանութեամբ, եւ ոչ մի ինչ ըստ իրաւացւոյն յառաջեալ ցուցանէ օգնականութիւն, ոչ ընդդէմ նմին բոլորեցուն ի սակեալ պաշտամանէն անիրաւաբար զզրկութեան ցանկորդեալ կատարէ 25 զգործ:

ժզ. Եւ ընդ այսոսիկ հայելով ոմանց սորուն հոլանեալ առ ամենայնսն յանդգնաբար ատելութիւնքն, ըստ ինքեան ստուգեցին ասելով զսոյն եւ աղքատութեան լինել ընդունակ<sup>51</sup>, ըստ ճշմարիտ խորհրդոյ բննողացն՝ մտրդկան եւ անասուն կենդանեացն յաւէտ մերկ եւ կողոպուտ ի պատուականագիւտն լեալ թագաւորական զարդուց եւ յայլոց զանազան նիւթոց, որ ի բարեկեցութեանն երթայ պէտս, զգածեալս շքաւորութեամբ:

1 Z<sub>2</sub>AEH ի տեսակիս  
3 Z<sub>1</sub>KM անտանելի  
4 Z<sub>2</sub>ACFHKM շարադառն  
5 Z գրողջախոհութեանն

14 ZABCFHKM կարգք  
25 FI<sub>1</sub>K գործ  
28 ACEFKM գոյնս  
31 AE բարեկեցութեանն



ժէ. Այլ եւս քասքնելի, ի միւսս. անցեալ՝ յամենաշարս ճանա-  
չի ի տեղուոց: Զի որքան ասացեալն զնուազագոյնսն կացոյց զիտելի  
զձձութիւն, այս զսաստկութեան իմն ցուցանէ նշանակ, զհամբա-  
ւոյն ասի կրեցեալ ի սմին աղիտից, ոչ միայն առ մերձաւորս, այլ  
5 իբր անչիւն մատենի<sup>52</sup> ընդ համաշխարհականս նշեցեալ. բնա-  
կիւն աշխարհի, որոց հիանալով ահագինն եւ գրաւելով տարակու-  
սիւք, եւ անգամ զանունս լսելոյ անբմբերագոյն զժուճարութեամբ զը-  
շարին: Իսկ այսպիսոյս ըստ բնաւ իրաց անշահութեան պատճառի  
յարմարիցի՝ ինչ սիրելութեամբ ընդ ումեք միաբանել՝ ըստ արժա-  
10 նաւորին եւ ոչ ընդ ումեք: Քանզի թէպէտ եւ խոստովանի շնորհա-  
ւորեալ իմաստնագունի բանի զհաւաքումն յերբեմն ժամանակի ի  
սա անասնոց<sup>53</sup> որումն, համայն սուղ ինչ զազարելով՝ վաղվադակի  
իբրեւ ի մահաբեր ինչ աղիտէ սրացեալ զբաղձալին երթեալ կրեն  
բարեբախտութիւն: Եւ կարի իրաւացի հրաժարումն, վասն զի որ  
15 միանգամ բերք դառնութեան երեւեալ յաշխարհի ոչ պարզաբար ան-  
խառն ի լաւէն ճանաչի<sup>54</sup>, եւ թերեւս հակառակին մասն երազավախ-  
ճան:

Ժբ. Այլ սա՛ առանձնացեալ ի բարւոյն, զմին եւեթ մշտնջե-  
նաւորեալ ունի անապակ շարութիւն եւ զնոյն ընդ ժուճկալեալն  
20 գոյական յաւէժութեան հրկարածիգ ամանակաւ. որոյ հաստատու-  
թիւն ըստ գերազանցագոյն կալեալ օտացուածի. եւ սպասելով աշ-  
խարհիս վախճանի նմանութեամբ բնականի եւ տարրացելոյ ի  
նմին հետեւման, առաւել քան զառաւել զխոցոտիչս զեղուցանէ  
անժուճկալի վտանգս:

Ժթ. Բայց զի յամենայն կողմանց էառ զինքեամբ զյանդիմա-  
նական ամբաստանութեան պարսաւանս, առ սա զո՞ որ ի տեղ-  
եացդ հաւասարիցեմք բերել զապագովութեանցն հանգոյն վարկ:  
Յայլոց եւ ոչ մի որ, իսկ զանօգուտ եւ զատեցեալ յամենեցունց  
երիզուտն վայրս, քանզի ըստ անկոխն եւ ոչ պտղաբերն լինելոյ՝  
30 ահա զուգահաւասարք. բայց մթազգածութեանն աղագաւ, եւ ընդ-  
դիմամարտ բքոցն շնչմամբք ի գերագոյն վնասակարութեանն  
սա առաւելեալ սաստկանայ:

ի. Իսկ արդ՝ յորժամ այսպէս մայրաքաղաք աղիտից եւ ան-  
մասն ի պատշաճագունէն՝ շարահամբաւ եւ դառնաթոյնս անուա-

3 EFH զսաստկութեանն  
12 Z<sub>1</sub>BKM ու բոււմն  
140

18 AEI<sub>1</sub> զմինն

նեցաւ տեղի. եւ իբր կարի ինչ զպանծանաց եւ փափագման արժա-  
նի, զպախարակելին հակառակ գովելոյն բնաւորեցոյց լինբեան  
պակասութիւն, ոչ զկերակրանացն, եւ ոչ զպատասպարանն լինելոյ,  
եւ ոչ զայլ եւս վայելչականացն՝ ի կենդանիս եւ ի բոյսս մատու-  
5 ցանել բարուք օժանդակութիւն եւ վերայ այսոցիկ սրամէտ եւս  
զսառամանեացն բոնութիւն առ ըմբոնեալան հասուցանէ յապա-  
կանութեան արկածս, ապա ո՞վ որ թողով զպախարականացն  
անկ, յանհամբոյր նմին ձեռնարկեսցէ զվայրապար ինչ զգովու-  
թեանցն առնել զհետեւումն. թէ ոչ՝ զի արդարակշիռն ի մէջ եղեալ  
10 ստուգութիւն, որոշելով ի բոլորեցունց գովելեացն զսա եւ սմա  
զժանրագոյնն հատուցեն անհատ ստգտանս եւ դարովութիւն:

<4.> Պարսաւ որքոյ<sup>55</sup>

ա. Թէ ըստ բնութեան իրաց հայեցի որ զիտել զբոլոր տեսա-  
կրս տնկոց, որ ընձեղին յերկրէ, գտցէ զամենայնսն յերկուց հակա-  
15 ռակացն խառնեալ՝ ի բարւոյ եւ ի շարէ<sup>56</sup> եւ յոմանս առաւելեալ  
զապականագործ շարութեանն խառնուած եւ յոմանս զկենա-  
պատճառն բարութեան եւ յայս հասարակ ունելով երկոցունց  
զխառնուածս: Յորոց մի ի դժբնդակ շարացն ճանաչի մոլեկանդ  
տունկ որթ, եւ մանաւանդ եթէ եւս շարագոյն: Քանզի այլքն զոր  
20 ինչ ունին ի գոյացութիւնսն պատահս յայտնապէս բարոզեն զգի-  
տութիւնս, շարք՝ զշարութեան կիրս, եւ բարիքն՝ զբարութեան:  
Ուստի շարքն ի բաց մերժելով համով կամ գունով զճաշակողսն  
ապրեցուցանեն, եւ բարիքն կոչելով ի խրախական ճաշակաւորու-  
թիւն՝ օգտեցուցանեն: Իսկ սա եւս ոչ մի յասացելոցս ունի զանա-  
25 զանութիւն, այլ երկզիմի որակութեամբ խառնեալ, որ է առանձինն  
սարաս շարութեան, հասարակ երկոքումբք վարի ի դաւող ներ-  
գործութիւնն: Վասն զի վեր ի վերոյ զբարւոյն երեւոյթս փափա-  
գելի ցուցանէ համով եւ գունով եւ ի ներքս ի խորոշն դարանեալ  
ունի զգժնդակ շարութիւնն: Ուստի եւ բարւոյն բաղձալի երեւութիւ

3 AI<sub>1</sub> պատասպարանն  
4 Z<sub>2</sub>K ի վայելչականացն  
9 EI արդար կշիռն  
13 Z(Z<sub>2</sub>) զիտել  
14 EK<sub>2</sub>Z<sub>1</sub> ընձիւղին, IZ<sub>2</sub> ընձեղին

18 BFI շարեացն  
26 EI սորա փխ. սարաս, Z<sub>1</sub> սորաս  
26—27 EI ներգործութիւն  
28 B<sub>1</sub> խորոշն



բանի կորզէ, զտեսողսն ի մերձաւորութիւն՝ եւ ծածկեալ շարան իբր  
մահազեղօք դիւրաւ ներգործէ զգրժութիւն եւ զոր ինքն ունի կար-  
ծիս ուրախութեան եւ ճշմարիտ գորտմութիւն զնոյն մատուցանէ  
ճաշակողացն ի սկզբան եւ ի կատարածի: Վասն որոյ անդէն պա-  
տահէ ըմպողացն նախ կարծիք ուրախութեան եւ ապա ցաւագին  
տրտմութիւն, նոյնպէս սիրելիական համբոյրք եւ ատելական կոխիք,  
բարեբան գովութիւնք միմեանց եւ թշնամական ձաղութիւնք, եւ  
այլ եւս զանազան անառակութիւնք, զորս սա բերէ ի յաշխարհի  
իբր զխաղամարար, եւ ամենաշար աղիտիցն պատճառ լինի սիրո-  
ղաց բնաւ մասանցն պատահիւք: Եւ զի այսպէս աներկբայ ունի  
առ պարստելիսն յանկութիւն բանի, վասն այսորիկ եւ ես ըստ  
արդարակ իրականց բուն հարից ապագովել զսա ըստ կարի:

բ. Եւ նախ հաւեցից ի տեղեացն, ուր շար տունկս ընծիւղի<sup>57</sup>:  
Արդ բնակութիւն ունի սա ոչ միայն ի դաշտալին շամբուտ ախ-  
տածետ վայրս, այլեւ յապառած գառ ի կողս եւ յանհարթ աւազի-  
նքս եւ յայլ եւս բազում վշտալի տեղիս, որք յամառնայինսն տար-  
մամբ աւազին ժոխցն վշտացուցանեն եւ յայլ ժամանակս հոս-  
մամբ թօնիցն բերմամբ հեղեղեն: Բայց առաւել եւս տարածեալ  
կրնի յիւրանման զնստագոյն եւ յոյժ խորին վայրս երկրի, որ ան-  
շափ ջերմութեամբ տապախառն օդոցն հոծեալ տաքին եւ զան-  
կշիռ անդուգութեանցն տանին պարսաւանս, յորմէ իբր յապակա-  
նող կիզողէ շժուածացեալ ի բաց փախչին կենդանիք յամառնային-  
սըն, եւ սա անցեալ մնաց ի մէջ անտանելի խորշակայեղց աղի-  
տից եւ իբր զտածանող վշտամբեր յարկածէ շամբիցն կրէ զտա-  
րակոյսս եւ ամենայն ուրեք որպէս եւ ասացաւ առաւելութեամբ  
տարերացգ վտանգի, որք իբրեւ զշար սերմն եւ զմոլութեան բոյս՝  
փութան ապականել:

գ. Եւ թերեւս յիրաւի, վասն զի ոչ ի բարի ումերէ բերաւ յօ-  
գուտ աշխարհի, եւ ոչ ի բարի ինչ իբր բնաւորեալ ունի զպէտս  
իւր, այլ ի շարահնարէ գտեալ՝ տուաւ պարգեւ շարաց եւ ի շար  
իրաց մատչի սպասաւորութիւն: Վասն զի շարառն եւ մոլեկան  
ոմն<sup>58</sup> ցուցեալ մատոյց զսա աւելորդ պէտս աշխարհի, զի սովաւ  
իբրեւ օգնականաւ վարեցեալ զօրացուցանէ զմոլեկան կատաղու-

թեանն արկածս եւ բազմացուցանէ զշուայական գիշութիւնս եւ  
զայլ անկարգութեան վարս:

դ. Զոր ընկալեալ որկորամոլ աւելաստացու ալանդակաց, որք  
զկարծիս քան զճշմարտութիւն եւ զաւելորդս իրաց՝ քան զկարեւոր  
պիտանացուս կարծեցին պատուական, իբր զբուն բարի համարել  
զվերջին շարս: Վասն որոյ փոյթ տարան մեծագոյն երկրով տնկել եւ  
բազմասերել, զի սովաւ պաշտեսցեն զանյագ որկորամոլութեան  
զխութիւն եւ զաւելաստացու ազահութեանն պարարեսցեն բաղձա-  
նքս, որք ոչն գիտացին թշուառականքն զաղցատր շափաւորացն դի-  
րութիւն, այլ մոլեալք աւելորդացն տոփանօք՝ ետուն զանձինս  
յանտանելի ծառայութեան շարիս:

ե. Որ բազում կարեօք պատանդեալ՝ անբաւ դարմանոց կարօ-  
տի յիւր պէտս, յորս եւ փորձին իսկ ընդունել սնունդ ի ձեռաց  
երկրագործացն, եւ սաստիկ աշխատութեամբ տաժանէ ի բրելն եւ  
ի բաժակելն, զաւելորդ ուղէշս յապաւել եւ զօտար բոյսս խլել զի  
գետնանախանձութենէն ի վեր ամբառնալ<sup>59</sup> եւ ջուրք արբուցանել<sup>60</sup>  
եւ զայլ ամենայն տանել տոյժս: Որում տեղեակ են տաժող սորին,  
որք մոլեալ անշափ տաժանին զգառն ծառայութիւն հարկանել եւ  
զցալգ եւ զցերեկ տքնել եւ տառապել յերկս եւ ի պահպանութիւնս  
շարիս<sup>61</sup>:

զ. Որ եւս սաստիկ տաժանէ զժնդակութեամբն բնական շար  
օրինացն, ոյց խտրանօք կարի ոչգութեամբ վարի եւ ոչ ընդունի  
զոյզն կանխագոյն կամ անագան զտաժան, այլ կշիռ յիւրումն պա-  
հանջէ ժամանակի, յորում թէ սխալեսցի ի միոջէ, անդէն վնասի  
յաստիանտի ծայրիցն, ի կանխագունէն՝ ցրտով եւ կամ անգիտու-  
թեամբ զբերբիսն խզելով ուսս եւ յանագանէն՝ ի զոյզն շարժմանէն  
պտղաթափ եւ ծաղկագերծ լինելով, ուստի անհնարին զժնդակ  
լինի երկրագործնացն զգուշանալ պահպանութեանցս սորա: Վա-  
սըն որոյ ի հարկէ զեղխեն, ըստ տեղեացն եւ օդոցն փոփոխման  
խաբեալք, եւ պատուհաս տանին զյանցանացն՝ զանբերութեանն  
դառնագոյն հարուած:

է. Բայց քան զասացելոցն գերագոյն տանի զանարգասա-  
ւորութեան մարմնոյն պարսաւանս ըստ նկնածեւ հասակին եւ աշ-  
լոց մասանցն տգեղութեան: Վասն զի հասակ ունի ոչ ըստ բար-

5 Z<sub>3</sub>I զկարծիք  
8 EI գոր  
23 Z(Z<sub>3</sub>)CHK մնայ

24 Z<sub>1</sub>HI<sub>1</sub> վշտաբեր  
33 Z(Z<sub>2</sub>)ABEM իբր

1 CDEFKM գիշութիւն  
3 EFi որկորամոլ  
7 FI որկորամոլութեան

22 Z(Z<sub>2</sub>)BCI ընշտութեամբ, Z<sub>3</sub>AEFH  
KM որկորութեամբ



ծրութեան ստեղծական արդուածոյ բարձեալ ի շքեղութիւն եւ ոչ  
ըստ ծայրից վարսաւոր ուսոց գեղեցկակերպ, այլ գետնանա-  
խանձ եւ երկրաքարչ են եւ անարգ եւ անբարոյ, զօրէն սեղխենոյ  
5 զերեսօք երկրի տարածեալ ի կոկլումն եւ ամենայն տգեղութեամբ  
եւ տկարութեամբ զգածեալ քան զրնաւ տունկս, վասն զի ոչ զօրէն  
այլոց՝ կարծր եւ տեւող ունի գտորն, այլ միջագար եւ վաղափուտ  
եւ յոյժ տկարագոյնս: Ուստի ոչ ի մեծ կամ ի փոքր շինուածոցն  
կարէ մտանել ի պէտս եւ ոչ ի յայլոց արուեստաւորացն կահս  
որովք վարին. այլ միայն ի նիւթ հորոյ մատչի իրր զանպիտան յա-  
մենայնի<sup>62</sup>:

Ը. Որ եւ զպտղահասութեանն յամրութիւն ոչ միայն քան զսեր-  
մանեացն բերս, այլ եւ քան զբազում ծառոց ապաժամ հասուցանէ  
եւ գրեթէ հուսկ յետոյ ամենեցուն գայ ի կուլս՝ զսուղս թողեալ  
զկնի: Ուստի բազում անգամ վթարեալ ի դառնաշունչ օգոց թշուա-  
15 ռացուցանէ զերկրագործսն եւ զկնի բազում երկոցն արձակէ յիւր-  
մէ ունայնս<sup>63</sup>:

Թ. Եւ թերեւ մարմնոյս անարգասի տխեղծութիւն փոքրա-  
գոյն է ասել վասն հոգեւոր իրացն խաղմութեամբ, զոր սա ոչ ըստ  
ինքեան առաւել քան յայլս ցուցանէ զօրէն զեղոյ, զոր ունին զօ-  
րութիւն, զոր խելացնորեցուցեալ ընկենու յանմտութիւն եւ յայլ  
երիս մասունս վատթարութեան, ուստի ոչ կարգիւ ընդելուզմամբ  
բերին յիրս եւ ի բանս ըմպողքն, այլ խառն եւ անկարգաբար զօ-  
րէն խելագարեալ բնութեանց ի շարախտականս ի սեւամաղձու-  
թենէն: Քանզի ո՞չ գիտէ եթէ սպրդեալ անապակն ի վերին որո-  
20 վանին վայրս՝ զախոնդանսն եւ որ շուրջ զնովաւ պատի դիկլի-  
կոն<sup>65</sup>, եւ զայլ մօտաւոր փորոտիսն առ հասարակ պասքեցուցեալ  
անշափ ջերմութեամբն պապախէ եւ ապա ի ստորուստ փորոտ-  
եացն ցողացեալ շարահոտ գոլորշիք զօրէն ծխախառն հորոյ զվերնա-  
յարկօքն պատին, որք զխելապատակն<sup>66</sup> եւ զշուտ պարուտակն,  
որ կոչին միտք, առ հասարակ կիզեալ ապականեն, եւ յիւրմէ  
30 գործոյն ընկեցեալ յընդդէմ մոլորութիւնս ածեն: Ուստի մտացն  
հետեւեալ իրրեւ սպասաւորք՝ թագաւորի, տխեղծանան եւ զգայու-  
թիւնքն մինչ զի անհեղեղս շարժին բոլոր գործականքն մասունքն,  
եւ տեսութիւնքն այլանդակաբար յածին, եւ բերանն զօրէն անաս-  
35 նոց անպատկանաւորս արձակէ ձայնս<sup>67</sup>:

Ժ. Իսկ զորս ի բանական աստիճանէն յանասնոցն իջուցանէ  
նմանութիւն, յայտ է թէ եւ անասնական ախտից՝ բղջախոհո-  
թեանն առնէ հաւասարորդս: Եւ մանաւանդ զի սաստիկ ջերմու-  
թեամբն, զոր ներգործէ, իրր ճանապարհաւ ածէ յորկորամոլութի-  
ւն, յորմէ ծնանին անշափ զելութիւնք, կտղանաց գիշութեան, եւ  
5 անխուզ վաւաշտութիւնք շոյլական ճակաճանութեանց<sup>68</sup>: Զոր  
գիտացեալ վարդապետ ոմն՝ կոչէ զսա արմատ զեղխութեան<sup>69</sup>, որ  
բորբոքեալ ածէ յանառակ ցանկութիւնս պղծալից գործոց:

Ժա. Եւ կնացուցեալ յեղու ի խէնէշ վատարտութիւն: Քանզի  
ո՞ ոչ գիտէ, եթէ զորս ի հեշտութիւնսն գլեալ ընկենու, անդէն  
զբաւէ եւ յերկշտութիւն<sup>70</sup>, վասն զի բնաւորեցաւ իմն հեշտախտա-  
կան պղծութեանցն հետեւել զարհուրանք, որպէս հակառակացն  
սորա՝ աներկուղութիւն: Ուստի կամակ հեշտ ցանկութեամբք ըմ-  
բրանեալ ածէ յերկեղածութիւն եւ կամ երազ յանդգնութեամբ, որ է  
15 եղբայր երկշտութեան, ընկենու յանարութիւն:

Ժբ. Բայց ընդ սմին ոք ծանիցէ զսա, եւ անիրաւութեան գոր-  
ծոց գործօնեայ. վասն զի այնչափ դրդէ յանշափ զեղխութիւն զըմ-  
պողսն, մինչ զի ոչ ի գործս տեառն թողու հայել, եւ ոչ յիրս  
մարդկան դառնալ, եւ ոչ ի կենցաղօգուտ երկս արհեստիցն կան-  
20 խել<sup>71</sup>, եւ ոչ փոխահատոյց լինել իւրաքանչիւրց սիրոյ եւ երկիրդի  
պարտուց, այլ յայգուէ մինչեւ յերեկոյ պատրէ ի պորտապարար  
զեղխութիւն զեգերել:

Ժգ. Ուստի դատարկութեամբն եւ որկորածեստութեամբ զոր  
ուսուցանէ, անօրէնութեան եւ տնանկութեան համանգամայն լինի  
պատճառ: Քանզի որք զգոյս եւ զհայրենի ինչս ծախեն<sup>72</sup> յոր-  
կորստութիւն, եւ ի կենցաղօգուտ գործս ոչ պարապեն կանխել,  
հարկ է ի վերայ հասանել եւ կարօտութեան աղցաւոր պիտոյից  
ստէպ պատահել:

Ժդ. Վասն որոյ անդէն իսկ սկսանին ատել զնա իրրեւ զթշնա-  
մի եւ զպատերազմող կենաց եւ հիբութեան եւ ձաղանաց առաջ-  
նորդ լեալ: Այլ ժուժկալ կրօնաւորաց եւ հարկաւոր բաւականու-  
թեամբ շատացելոց բնաւ իսկ ատելի է իրրեւ զաւելորդ շար ի կեանս

2—3 Z բողջախոհութեանն  
4 F1 յորկորամոլութիւն  
10 Z<sub>3</sub>BFHIM անդրէն  
12 A1<sub>2</sub>M հետեւեալ  
16 K ծանիցէ ոք  
17 EF1 անշափ վիս յանշափ  
29 Z(Z<sub>2</sub>)BH էրբ

9 Z(Z<sub>2</sub>)CE որովք մատչի  
144  
17 DF տխեղծութեան



մարդկան մտեալ: Բայց թէ եւ սիրի եւ սուղ ինչ ժամանակ ի յոր-  
կորամոլ ճակատանաց, որ փոխանակ Աստուծոյ պատուեն զպոր-  
տըս եւ ընդ փառաց՝ զգեցեալ են զամօթալի ձաղութիւնս<sup>73</sup>. այլ սա-  
կայն եւ նոքա ի հասանել կարօտութեանն, գրաւէ եւ յերկշտու-  
թիւն աղցաւորացն որպէս ասացաւ, իբր դաւողք ի թշնամութիւն  
զառնան:

ժն. Բայց տեսցէ որ զսա եւ երկրագործացն ատելի յեղանա-  
կաւ կենացն, վասն ոչ ըստ ինքեան ունել զերկարատեութիւն զօ-  
րէն այլոց տնկոցն, այլ թէ շատ եւ եթէ սակաւ տեւէ մշակացն օգ-  
նականութեան կարօտանայ, յոյց թէ դոյզն դերեւի ի դարմանոյ,  
ծերացեալ յապականութիւն զառնայ եւ շարագոյն խզմամբ սրոյ  
արընկմնեալ ի կենցաղոյս բերքի:

ժզ. Եւ զկնի հատման յանպիտանութիւն, եւ յանյուշ մոռա-  
ցումն երթայ, զի ոչ ի ձեռն կենցաղօգուտ շահից յիշի, եւ ոչ արա-  
գահասութեամբ շտաւեղաց՝ ի պտղածնութիւն, որք մեծագոյն  
երկով յետ բազում ամաց հասանեն ի շափ:

ժէ. Իսկ տունկ, որ այսպէս բոլոր բնական պատահմամբք տա-  
րաւ զպարսաւ եւ ապականացու եւ մոլութեան պատճառ այլոց  
ցուցաւ, զո՞ որ ի վայրենի եւ կամ յընտանի տնկոց ածեալ ընդ  
սմա բաղդատեսցուք, որ հնագոյն սորա շարութեանս կշռեսցի ի  
կալ եւ ի կրել. դուգահաւասար սմա: Այլեւս ոչ որ, բայց ամենեւին  
վատթարագոյնք ի տնկոց՝ սեխենի եւ մորենի<sup>74</sup>, որք մարմնովք  
նկնահասակք եւ գձուձ են հաւասար սմա եւ վատախառն խորշա-  
կասուն պտղովք մատուցանեն ախտածետութիւն ճաշակողացն եւ  
զկնի հատմանցն՝ յանպիտանութիւն նմանապէս մատչին: Այլ  
սա եւ զնոցա վատթարութեամբն քաջ ի բաց գերազանցէ մոլեկան  
խելայնդութեամբն, զոր ներգործէ յըմպողսն, եւ բղջախոհ՝ զեղ-  
խութեամբն եւ սաստիկ աշխատութեամբն, զոր հասուցանէ՝ գործո-  
ղաց, եւ այլ բազում շարեօք, զոր ոչ սորա եւ ոչ այլ որ ի տնկոց  
բերեն հաւասարութիւն:

ժը. Եւ արդ՝ տունկ, որ այսպէս երկբուսի խեղ ցուցաւ բնու-  
թեամբ, ի շարահնարէ հայթայթանօք գտեալ բերաւ յաշխարհ՝ եւ ի  
շարագոյն սպասաւորութիւն մատչի, սնուցանողաց. դժնդակ, եւ  
ապառում ըմպողաց հիբութեան պատճառ, մարմնոյն արգասեօք  
ախեղծ. հոգեւոր իրաց վատթարացուցիչ, ի կալն կարեօք պա-

1—2 EI յորկրամոլ  
33 ZDM սնուցողացն  
146

34 AE ապառում

տանդեալ եւ ի հատանելն՝ յանպիտանութիւն երթեալ: Զի՞նչ որ  
այլ քան զայս պարսաւանս կարացէ հատուցանել սմա, բայց  
թէ սա իսկ կարգեսցի գլուխ բազմականի պարսաւելեացն ամենե-  
ցուն:

5 <5> Պարսաւ նաւարկութեան<sup>75</sup>

ա. Թէ հաւասարապէս որ քննեսցէ զբնութիւն բոլոր իրաց, որք  
ի կենցաղումս վարին ի մէջ մարդկան, ոչինչ տաժանելի եւ ապա-  
ռումն շար գտցէ քան ի նաւարկութեանն գործս, ուստի գերագոյն  
եւ անբաղդատելի ունի զպարսաւանս քան զամենայն իրս: Եւ այս  
թէպէտ ամենեցուն յայտնի է ցուցիւ իրացն, այլ սակաւուց, որոց  
դոզն ինչ զանխլացեալ է զժնդակութիւնն սորա, եւ փորձեցաց  
անցանել բանիւ: Արդ՝ այլքն ամենայն, որ վարին յաշխարհի իբր,  
եթէ ոմանք սուղ եւ ոմանք յոքն ունին զվշտալի տրտմութեանն  
տեսակս, ընդ նմին խառնեալ բերեն եւ զմխիթարութիւն բարեացն  
հեշտութեան. զինուորութիւն՝ զաստիանդի պատերազմին հան-  
դիստ եւ ճոխութիւն ի հրապարակս, եւ շինողութիւն՝ զաւազակացն  
աներկեղութիւն եւ զիշերային անհոգ հանգիստ, եւ ճանապարհոր-  
դութիւն երկրի՝ զհաստատուն եւ զերեւելի ճանապարհացն դիրու-  
թիւն եւ սփոփանս օթեվանացն խրախութեան, նման սոցա եւ այլ  
իբր բերեն զհեշտալի դիրութիւն: Իսկ նաւարկութիւն եւ ոչ մի յա-  
սացելոցս խառնեալ ունի մխիթարութիւն յիրն տարակոյս. ոչ  
զհաստատուն եւ զերեւելի ճանապարհորդացն դիրութիւն, եւ ոչ  
դիրախութիւն օթեվանաց եւ զգիշերային հանգիստս, եւ ոչ զաւա-  
զակացն աներկեղութիւն խաղաղութեան: Այլ յամենայն կողմանց  
դօրէն շուրջ բնութեան անդադար բերի ի վշտալիսն. եւ անապակ  
ահիւք եւ անխառն խնդութեան տրտմութեամբք պատանդեալ է, եւ  
իբրեւ զախոյան ի ճակատս յամենայն ժամ առաջի աշացն նկարէ  
զմահ, ընդդէմ երթալով անպարտելի բռնութեանց: Վասն որոյ զօ-  
րէն անբաժ բարոյն անխառն գովութեան տանի զպարսաւանս՝ գե-  
բաղանցեալ զամենայնի, զորոյ պախարականս եւ ես թէպէտ եւ ոչ

1 DEFI երթալ  
7—8 BCFHKM ապառում  
8 AEI նաւարկութեան  
10 Z(Z1)M թէպէտ եւ  
12 Z2EI որով, Z(Z2)CH որք  
23 ZBH ի զիշերային  
27 BCEHKM իբր



կարիցեմ ըստ արժանոյն արտադրել, այլ ըստ կարի անցից ապագովել ի բնաւ մասանց:

5 Բ. Եւ նախ հաւեցից յանկայ եւ յարածուի գարշութիւն երեսաց, եւ ոչ յանուշահոտութիւն հոտոտելեաց երթան, ոչ պտուղ սերմանց ի խրախճանութիւն ճաշակաց, եւ ոչ տեսակր կենդանեաց պատեալ ի սիրոփանս մտաց փախչին խաղիւք, այլ յամենայն կենցաղօգուտ զարդուց ապալեր եւ ամայի<sup>76</sup> է: Եւ յառաջ քան այլովք վշտօք, զոր մատուցանէ մերձաւորացն, ահագին դժուարապատահութեան դիմացն տեսլեամբ պակուցանէ եւ անդադար բերմամբ բռնութեան յորձանիցն կոծէ յամենայն կողմանց, եւ ի ստորուստ զօրէն անհիմն տան անկայ սասանմամբ տատանէ. եւ ի վերուստ բռնութեամբ օգոցն իրր զանյարկս վտանգէ, եւ զմիտս անդադար գոչմամբ ձային սահանացն խռովեցուցանէ, եւ զտիրագոյն անդամոցն զլուխ շարահոտութեամբ աղտաղտին ջրոց թմբբեցուցանէ, եւ այսպէս ասացելովք թշուառութեամբք եւ այլ ամենազան աղիտիւք տառապեցուցանէ զանձինս բնակչացն: Եւ զի այսպէս հաւատարիմ ունի բան:

20 Գ. Վասն այսորիկ ոչ իբրեւ զօգտակար արհեստիցն հաւակս յիշեցեալ լինին գտակր սորա, այլ անյուշ եւ մոռացեալ են ի վերջնոցս մարդկան ազգէ, իրր սկզբունք շարեաց եւ առաջնորդք վտթար եւ մահացու իրաց, անարժանիք եղեալ գրոց եւ յիշատակական պատուոց, զոր տանին օգտակարացն հաւակք<sup>77</sup>:

25 Գ. Եւ համայն թէպէտ եւ յիշին ոմանք ի վերջին արհեստաւորացն արհեստիս ոչ գրով եւ գովութեամբ հանդերձ, այլ պարսաւանօք, իբրեւ զի վսեր եկեալս վասն աւելաստացու ազահութեան եւ մատնեալ զանձանց փրկութիւն ի մահու վտանգս վասն արտաքնոցն արեկ տենչմանց: Որոց բազումն ընչիցն այնչափ անյագ երեւի ունել<sup>78</sup> իբրեւ զգոփսս, մինչ զի ոչ շատանալ զանազան կենապատճառ պիտոյիւք ցամաքային պաճարանօք, այլ վարել փափագանօք 30 աւելորդաց ծովայինն շահից եւ յօժարել ի գուպար կոռոյ մտանել ընդ երկուս անպարտելի բռնութիւնս հողմոյ եւ ջրոյ եւ ընչին փայտին հաւատայ զանձանց փրկութիւն:

Ե. Եւ զայս ոչ ի խորհուրդս միայն, այլ փութան գործով կրթել զզեղիս հմտութիւն արհեստին, վասն որոյ տալով զանձինս իրր զը-

կենդանի յածունս ի տապանի, նային բբջջին յարածամ ձգմամբ շուանացն փոփոխել զառագաստն ըստ ընթացից օդոյն. եւ շրջշրջել զնաւս փոքրագոյն թեւոցն երասանակօք, եւ հատանել զարահետ ճանապարհ ի նշմարանս աստեղացն, ընդ որ խելացնորեալք անձանձորոյթ պշնուն զբոլոր գիշերս զօրէն յիմարելոց. եւ ճանաչել զխորուստ շուանօք խարսխացն ընկեցմանն փորձին: Եւ այսպէս իրր շար դահճաւ՝ ազահութեանն ախտի վարեցեալք ջրդին կրթել զանհաս արհեստին զեղիս հմտութիւն: Եւ սակայն ազահութիւնն ոչ զայս զծնդակ ծառայութիւն միայն ուսոյց նոցա հարկանել:

10 Գ. Այլեւ զլուտալի պիղծ օրինացն աւանդս աւանդեալ մատուց, զսպանութեանն եւ զգողութեան, զաւազակութեան եւ զզրկութեան եւ զայլ ամենազաւ շարեաց, զոր իրր զբնականս օրէնս արհեստիս փորձին բազումք յարուեստաւորացն գործով կատարել, եւ զանազան զրկութեամբք վարին ի վաճառականութիւնսն եւ զողութեամբ 15 դաւել զինչս մտելոցն առ նոսա հնարին, եւ ծովահեղձոյց առնել զբազումս վիժելով ի նաւաց ի վայր, եւ ի վերայ յարձակել աւազակութեամբք, որոց յաղթեցնեն նաւաց, յորս փութան անխնայ ընկուզանել յանդունդս զբազում անձինս. եւ զայս գաւ ոչ միայն առ օտարս, այլ բազում անգամ եւ առ իրեարս մատուցանեն զործակիցքն շարեաց եւ յանխնայ խեթկելով զընկերս ընկենուն կերակուր ձկանց զմարմինս նոցա:

25 Է. Տի՛ նա, ապագովելի իրս ոչ միայն առ օտարս եւ առ ընկերս զայս մատուց շարիս, այլեւ զանձինս հրամայեաց տտել եւ թողոյ անտաժս: Վասն որոյ իբրեւ զիս շար աւելորդ ինչ յանխնայ վանեն զմարմինս ամենավիշտ աղիտիւք եւ զցալց ցրտահարութեամբ սեւացուցանեն, եւ զցերեկ արեւակէզ առնելով զօրէն յորտնեալ մշակի բրտացուցանեն, եւ զմոյնսն ի տմունութիւն փոխեն, եւ զգոյնս ի տգունութիւն, եւ զբնական զեղեցկութիւնսն զոր ունին՝ ի տգեղութիւն<sup>79</sup>:

30 Ը. Եւ զգորութիւն՝ ոչ ի բարգաւաճելի նահատակութիւնս եւ կամ յըմբշամբցութիւնս կրթեն, ուր մարզեալ՝ օճառիւք հանգստիցն ստանան զօրութիւն, այլ յամօթալի եւ յանտած գործս վատնել ի նաւաբարշտութիւնս եւ յընդունայնաշան վաստակս, յորոց յարածամ յօգնեալ անկանին յուժոյ, իրր զանհանգիստ անխնամս:

1 BCFHKM կարեմ  
6 Z<sub>3</sub>ABCEFHMKM խաղուք  
23 Z(Z<sub>3</sub>)B Թէ եւ

31 ACFKM եւ ընդ  
32 Z<sub>1</sub>K հաւատան

1 EK բջջին Z<sub>2</sub> բբջին  
6 Z<sub>3</sub>BCEFHMKM գիւրուտս

17 AE յաղթեցիք  
28 CEFM զգոյնսն



թ. Ընդ նմին կորուսանեն զբնական ունակութիւնս արագութեան վասն ընտեղակաց խամութեանն շղթայից, զոր ունին ի նաւին իբր ի կապարանի երկաթի շղթայս, զոր սովորեացն մատուցանել զհեղգութիւն, որպէս կրթութիւն՝ զերագութիւնս՝ վասն զի ամենայն ինչ բնական ստացումն կրթութեամբ անէ, եւ խամութեամբ խամ-  
րանայ:

ժ. Ուստի յայտ է, զի նաւաստութիւն ոչ միայն զմարմնոյ ունակութիւնս եւեթ վթարէ, այլ եւս քաջ զհոգւոյն քառաթիւ առաքինութիւնս յընդդէմսն տապալէ. եւ փոխանակ իմաստութեան անմտագոյնս գործէ զիւրն սիրեցողս: Քանզի ուստի՝ կարեն իմաստնանալ, որք ոչ ի դպրոցն իմաստասիրացն զեզերին<sup>80</sup>, եւ ոչ ի քաղաքս կանառաւ միաբանին ի խօսակցութիւն բանաւոր մարդկան, այլ ձեռք ի շուանաձգութիւնս աշխատին, եւ աշք ի յառագաստս նաւաց պշուցեալ հային, եւ միտք զբաղեալ յածին ընդ անզգալի արարածոց յածմունս, եւ միայն զերկին եւ զշուր տեսանեն եւ անբան կրթութեամբ վարին:

ժա. Իսկ անբան կրթութիւն ազգակից եւ դրացի է բղջախոհութեան, որում ի զէպ ելանեն ըստ բնականի իրացն սորայն սպասուորք, որք թէպէտ եւ պահեն զպարկեշտութիւն, ոչ կամաւոր բարութիւն զգուշացեալք, այլ զօրէն անասնոց ակամայ բռնութեամբ արգելեալք գառազղանման նաւան եւ այլ եւս զանազան զբաղմամբք իբր անյոյժ կապանօք հարստեալք: Իսկ հարկեալն յայտ է, զի ոչ ողջախոհութիւն է, եւ ոչ զօրէն կամաւորի առաքինութիւն ասի:

ժբ. Ուստի ըստ հաւաստի բանի ի զէպ իսկ պատահէ սոցա անարի խենէշութեանն պարսաւանք: Վասն զի ոչ զօրէն քաջացն ըմբշական բազկամրցութեամբ նահատակին, եւ ոչ զազանական գուպարմամբ<sup>81</sup> կոռոյ, եւ ոչ ի ճակատս քաջացեալք մղեն զախոյանս, ուստի բարգաւաճանօք արագագոյն ըմբռնէին զմեծացուցիչ մրցանակս: Այլ զօրէն վատասրտացն ընդ անզգալիսն մարտնչին մենքեանայիւք, ուր ոչ քաջութիւնք երեւին եւ ոչ յաղթութիւնքն կատարին երբէք, այլ միշտ յաղթեալ վատթարանան իբր զկապեալս անարութեամբք եւ զարհուրեալք անձնապարծ փութան լինել յանպարտելի բռնութեանց:

2 Z<sub>2</sub>A<sub>12</sub> ընտելակաց  
13 Z(Z<sub>3</sub>)BCFH:K:M շուանա ձգութիւնս  
4 Z̄(Z<sub>2</sub>) դգալի  
17-18 Z բողջախոհութեան  
30 FHIK:M մեքեայիւք, EFH<sub>12</sub>K<sub>2</sub>M քաջութիւնքն

ժգ. Ընդ որս ի վսեր եկեալ հարկեցան մարտնչել վասն աւելորդացն տենչմանց, որ հն իսկ նոցա անիրաւութեանց պատճառ, որպէս շափաւորօքն շատանալ արգարութեան: Քանզի ո՞ւմ է ոչ խոստովանեալ, եթէ այս ամէ զնոսա ի խարդախութիւն վաճառացն, ուր կշռովք նենգութեանն զոյգ յաղթահարեն զմեծատունս եւ զազրատս, ու եւ տուրեւառիկ փոփոխմամբք խաբէութեանն զրկեն զանձինս ախմարաց: Եւ սակայն այսպիսի վաճառականութիւն թէպէտ եւ ինքն ըստ ինքեան խոստովանեալ է մայրաքաղաք անիրաւութեան, այլ փոքրագոյն առ զողութեան եւ աւազակութեան նոցա գործովք, որք դաւենն զինչս եւ ծովակուր առնեն զանձինս բաղմաց եւ մահաշունչ ատելութեամբ վարեն զօտարս եւ զընտանիս, զորս կարեն, որպէս եւ յառաջագոյն ասացաւ:

ժդ. Վասն որոյ անբարեկամք եւ անսիրելիք են յաշխարհի եւ զօրէն դիւաց ատեցողք ամենեցուն եւ ատեցեալք յամենեցունց: Եւ թէպէտ եւ ունին վեր ի վերոյ դոյզն ինչ բարեսացս, ոչ ի փառաւոր բարգաւաճելոց զոք, այլ յիրեանցանման հիբաբաւնիցն, որք վասն շքաւորութեան աղցաւորացն ի վսեր եկեալ ետուն զանձինս յայսպիսի թշուառութիւն:

ժե. Եւ վասն ստէպ դժնդակ վշտացն, զոր կրեն յարածամ՝ շժամանելով ի ծերութիւն, այլ ի կէս աւուրց ելանեն ի կենցաղոյս անճաշակք ի ծերութենէ, ոյց եւ վտանգաւոր եւ եղկելի մահուն յեղանակ ունի: Վասն զի ոչ ի հիւանդութեանն ի սիրելի սպասուորաց պաշտպանի, եւ ոչ մի մահուն խանդաղատանօք խօսակցութեան եւ համբուրիւք ողջունից յուղարկին յընտանեաց, այլ ի հիւանդութեանն անտած եւ անխնամ անկեալ տատանին, եւ ի մահուն անկարեկից եւ անհարց մեռանին, իբր ի մէջ թշնամեաց, որք զկնի մահուն ոչ պատանաց եւ թաղման հոգ տանին ըստ օրինացն բնութեան. այլ բարձեալ վիժեն զմարմինս նոցա կերակուր զազանաց՝ զօրէն մեռելոտի անասնոց: Իսկ եթէ հասարակաց դիպեսցի նաւբեկութեանն մահ, այն աղէտք ի վեր քան զքան, եւ անպատմելի թշուառութիւն, վասն զի ոչ նոցա մատուցանէ միայն ըստ բնութեանն զմահս, այլ եւ այլոց՝ հանդերձ զգայութեամբ բաղում մահըս<sup>82</sup>:

ժզ. Եւ արդ՝ զի այսպէս ամենազժպատեհ պատահիւք լի է իրս, զո՞ որ յայլոց իրացն առդատեսցուք, որ զուգահաւասար սորա հիբութեանցս ցուցանի. զայլ եւ ոչ որ գտցուք հանգէտ սմա, բայց

21 CH եղկեղի  
24-25 AFH<sub>1</sub> հիւանդութեան  
151



եթէ զգինուորականն<sup>83</sup>: Այլեւ զնա ոչ ամենայն մասամբբ, այլ միայն մահուն օրինակաւ. քանզի եւ նա ոչ ի մէջ սիրելեաց խօսեցեալ զտանն հրամանս, այլ ի թշնամեացն խողխողի զինուք զօրէն պաճարաց, բայց որպէս յառաջ քան զմահ, եւ զկնի մահուն գերականցեսցէ զսովաւ զինուորականն:

5

3 AF հրամանն, I հրաման, FI ի օմ.

<ԳԻՐՔ VII>

ՍԱՀՄԱՆ ԲԱՂԳՍՏՈՒԹԵԱՆ

Բաղդատութիւն է յարադրական բան ընդդէմ հարցաքննեալ միշտ առ մեծագոյնսն<sup>1</sup>: Պարտ եւ արժան է բաղդատել, կամ զբարի ընդ բարիս յարարկանելով<sup>2</sup>, եւ կամ զվատթար ընդ վատթարս եւ կամ զմեծամեծս ընդ փոքունս<sup>3</sup>, եւ կամ զփոքունս ընդ մեծամեծս:

5

Եւ բոլորովին բաղդատութիւն՝ կրկին ներբողեան է եւ կամ պարսաւ<sup>4</sup>: Եւ ի բաղդատելն պարտ է նախաշաղաւն վարել՝ զխովք, որովք ի ներբողեանսն կամ ի պարսաւանսն վարիմք: Սակայն ոչ զնոյն առնեն զգործառութիւն. այլ զգլուխ առ գլուխ մերձ զնել: Քանզի որ զԴիմոսթենէս եթէ առ Եսքինէս մերձ զիցէ, եւ ըստ ինքեան ասիցէ զԴիմոսթենի զգովութիւնն առանձինն եւ զԵսքինի զպարսաւն, ոչ եւս այն բաղդատութիւն լինի: Այլ որ բաղդատէ, պարտ է զԴիմոսթենի զազգն ասել, եւ ապա յարարկանել զԵսքինի զազգն, եւ դարձեալ զԴիմոսթենի զսնունդն առ Եսքինին զնել հաւասար<sup>5</sup>:

10

15

Եւ բոլորովին իսկ զգործառութիւնն այնպէս առնել պարտ է, զգլուխ առ գլուխ ընդդէմ հարցաքննել. քանզի ոչ այսպէսն յողն եւ ընդ պատճառաւ է<sup>6</sup>:

Եւ ամենեքան օրինակք<sup>7</sup> բաղդատութեան գովել արժանաւոր առնեն<sup>8</sup>, մանաւանդ որք զփոքունսն առ մեծամեծս մերձ զիցեն.

20

- |   |  |
|---|--|
| 2 MN <sub>1</sub> J հարցաքննել  | ZEFIN <sub>1</sub> N <sub>3</sub> N <sub>8</sub> եթէ որ զԴիմոսթենէս  |
| 4 J գատթար  |  |
| 7 J վարի  | 12 J բաղդատէն  |
| 8 K <sub>1</sub> J <sub>1</sub> J <sub>2</sub> N <sub>1</sub> N <sub>3</sub> N <sub>5</sub> պարսաւն, J <sub>3</sub> պարսաւն, CN <sub>7</sub> պարսաւան, Z(Z <sub>2</sub> )N <sub>2</sub> | 13 Z(Z <sub>1</sub> ) գազն, N <sub>3</sub> N <sub>4</sub> N <sub>5</sub> N <sub>6</sub> զազգս  |
| N <sub>4</sub> N <sub>6</sub> N <sub>8</sub> ի օմ., պարսաւն   | 15 -16 ABCEFHKM հաւասար եւ բոլորովին: Իսկ..., N <sub>1</sub> N <sub>3</sub> N <sub>4</sub> N <sub>5</sub> N <sub>6</sub> N <sub>7</sub> հասարակ եւ բոլորովին: Իսկ... |
| 9 ZIMJ <sub>3</sub> N <sub>1</sub> N <sub>4</sub> N <sub>6</sub> գլուխ փխ. զգլուխ, J <sub>1</sub> զգլուխն   | 16 Z(Z <sub>2</sub> )N <sub>3</sub> N <sub>5</sub> պարտ է առնել  |
| 10 N քան փխ. քանզի,   | 20 JMN <sub>1</sub> N <sub>7</sub> մեծամեծսն   |



վասն զի արագագոյն ճարտասանի պէտս ունի առ այսպիսւոյս ձեռնարկութեան արուեստ<sup>9</sup>:

<1.> Բաղդատուքին Աբրահամու եւ Եղիայի

5 Բաղում եւ ազգի ազգի շնորհօք առաքինութեանն ճանապարհք  
զիրաւ յարդարին ազգի մարդկան, թէպէտ եւ ոչ ի նմին ժամանակի,  
եւ ըստ իւրաքանչիւր ուրուք յառաջադիմութեան: Սակայն առ  
այժմ բովանդակն դադարմամբ շտեմարանեացի, եւ ի մէջ եկեացեն  
ինձ բանիւս մասնաւորք ոմանք ճշմարիտ զարդու հոգեւորականան  
10 փառաւորեալք եւ յառաջակողմանն աջողակ աստիճանի դասեալք՝  
երիցս երանելի հայրապետն Աբրահամ եւ բարձրագլուխ պարու  
մարգարէից մեծն Հեղիաս:

ա. Վասն զի ոմն ի սոցանէ հանդերձ իսկզբամբ իւրայէզեան  
բարետոհմն ազգին նախագուռն իմն եւ հզօր հիմն բոլոր բարե-  
պաշտութեան փափագողացն եղեալ հաստատեցաւ<sup>10</sup>:

15 ա. Եւ ոմն թէ եւ զկնի ժամանակաւ, այլ այնքան կատարեալ  
կամօք, եւ մանաւանդ ջերմեռանդն սիրով միանալ ընդ արարչին  
փութացեալ, մինչ զի նախանձախնդիր եւ անդանդաղ մշակ աս-  
տուածային սպասուորութեանն պատրաստական գտանել:

20 Բ. Ուստի առաջնոյս բնակութիւն նախ քան զցանկալի լոյս աս-  
տուածպաշտութեանն համբարելոյ ի հոգի, վկայի յանպատշաճա-  
գունիցն, յորմէ յիրաի բաջահաւան բարուք ըստ հաւատարիմ հրա-  
մանատուին հրաժարեալ հեռանայր<sup>11</sup>. որպէս զի առ փոքր փոքր  
փոփոխմամբ հանդիպեցի բարեացն բանակետեղ, որում ապա եւ  
արդեամբք իսկ գտաւ ժառանգաւոր պարգեւացն շնորհալից երկրի<sup>12</sup>:

25 Բ. Իսկ երկրորդիս գաւառ Գալիլեա եւ կայան բնակելոյն Թեզ-  
բիա<sup>13</sup>, նմանապէս աննուազ յառատ բարեկեցութեան պիտոյից լըր-  
մանէ, զյուլովս եւ զայլս առաւել եւս յորդորեալ զքաղցունս եւ զհեշ-  
տալիս ճաշակողաց՝ զըստ կաթինն եւ մեղու շաշիկանութիւն:

30 գ. Յորդորող զոր եւ առաջնորդ նախահաւելոյ ծերունիս յան-  
սխալ առաջնորդութիւն հաւատոյն ոչ եւս ի մարդկանէ երեւի ունել<sup>13</sup>  
այլ հայելով ի յուղիղ շաւիղս արդարոյն յիւրումն դարի նոյի եւ նո-

1 J առ օմն., 2 IN<sub>4</sub>N<sub>2</sub>N<sub>2</sub> աշուեստս 13 ZE բարետոհմ 27 Z<sub>1</sub> յարգարեալ, BC<sub>1</sub>HKM յորդորել 30 Z<sub>3</sub>EG<sub>12</sub> յառաջնորդութիւն

րին օրհնեալ գաւակի Սիմայ, զարգացոյց հետոց զընթացս առա-  
քինութեանն<sup>14</sup>. Եւ միանգամայն իսկ զստոյզն զեկուցանելով բան,  
ինքեամբ առանձինն սկսող կատարելագունիցն եղեալ<sup>14</sup>, զի եւ ոչ  
զծնողան սատարեալ լաւագոյն յորդորմանն իմանի:

5 գ. Հաւասարապէս եւ միւսս նախահարք մօտաւոր ճառեցելովս  
առ սա, պաշտպանեալ բարձրացոյց անստգտանելի օրինակաւ դա-  
նունն նուաստ եւ աներեւելի ծնողաց<sup>15</sup>, հռչակեցուցանելով ի վերայ  
իւր զգեր ի վերոյն քան զքնաւ անուն<sup>16</sup> զյառաջաձայնեալն ի սմա  
այր Աստուծոյ:

10 դ. Ախորժակ հայրապետիս խնդալից կամօք մշակելի ի հան-  
դերձիւսն հասարակաբար ամենեցուն ծանօթիցն եւ հեռաւորաց  
առատաբար զօտարսիրութեանն հատուցմունս<sup>17</sup>:

դ. նմանապէս եւ տեսանողիս կազմել զհեռանալն<sup>18</sup>, ի բազ-  
մամբոխ կաճառաց մարդկանէ, առ ի յանխափան եւ յանզբաղ յա-  
պահոժութեանն անընդհատ խոկալ միանալովն յաստուածային տե-  
սութիւնսն<sup>19</sup>:

ե. Զկնի որոյ միոյս ինքնաշարժ բնութեամբ նախ՝ զանկարգ  
ստահակութիւնս յինքենէ զատուցեալ<sup>20</sup>, ապա զընդ ձեռամբ հաւա-  
տացեալսն տնօրինել յօրինումն կարգաւորութեան:

20 ե. Այսպէս եւ միւսոյս երկուք այսոքիւք կատարեալ հրահան-  
գիւք՝ զաստիարակեալ կրթելով տանել զխարազն զգեստուցն խո-  
շորութիւն եւ զհարկաւոր կերակրանացն պէտս շափաւորան սահ-  
մանել ժառանգութիւն<sup>21</sup>:

25 զ. Նաեւ բնաւորեցաւ իսկ հիմնս օրինադրութեան միշտ ընդ  
անմոլար վարուցն գնացս թեւակոխել, զի եւ յառաջիկայսն նոյնք  
օրինաւոր կրօնք զկնի եղելոցն մարդկան գրովք գրողմեալք նկարա-  
գրեցան<sup>22</sup>:

զ. Զոր առնլով եւ ընտրեալ յաշորդս զգրաւորական աստուա-  
ծային պատուիրանն, եւ ոչ այնու միայն վարեցաւ գոլ ստոյգ եւ  
անգթելի աւանդապահ. այլեւ զնորոյ աւանդութեանս շնորհ իւրով  
անարատ կրօնիւք յառաջագոյն զեկուցանէր:

է. Ահա եւ պանծալի գեղեցկութիւն հայրապետիս յօտարազգե-  
ացն սքանչացմանէ լսելի եղեալ զրուատեցաւ, ոչք տեսանելով զա-

12 AEGK, զօտարասիրութեան 22-23 AEGIM սահմանեալ 13 ACEFIK զհեռանալ 24 AEG<sub>1</sub> հիմն 21 Z<sub>1</sub>AEGIM զխաբազնազգեստուցն



հաւոր կերպարանին նորա բարեձեւութիւն, խոստովանէին ի թագաւորէն թագաւորաց կարգեալ չինքեանս զսա թագաւոր<sup>23</sup>:

5 է. Գեղեցկապէս եւ մարգարէիս զանյայտն ի բազմաց եւ զքաջ-  
ըզձալի վայելչութիւնս փայլեցուցանելով՝ զարթուցանէր ի զարհու-  
րելի պակուցումն զտեսողսն, եւ առ հասարակ յորս միայն ազդե-  
ցումն մեծարգի բանին սորա հասանէր<sup>24</sup>:

10 ը. Արագաշարժ միս ի բոլոր բարեացն յորդորմունս, որպէս  
կանխելն ընդ առաւօտն՝ եւ զմիամօրն ի մեծին օրինակ ընծայել  
փութով պատարագին, մատուցանէր զօրէն բոլորապտողոց<sup>25</sup> եւ կամ  
զհրախաղաց թեթեւութեամբն ընթացքն ի նորահրաշ հիւրոցն ըն-  
դունելութիւն<sup>26</sup>:

ը. Հաւասար սմին եւ միւսս սլացեալ հատուածէր երագ երագ  
ի յառաջադէմսն. այս է ի լեռոն Աստուծոյ ի Քորէր<sup>27</sup>:

15 թ. Ուր ապա անդէն վաղվաղակի զօրաւոր քաջապնդութեանն  
հանդիսի վառեալ կատարէր զքառասնօրեայ աւուրբբ զպահօցն  
նահատակութիւն<sup>28</sup>:

20 թ. Զօրաւորագոյն եւս օժանդակեալս հաւատով բառնալ զհան-  
գրատաբեր բեռն ի վերայ ուսոց իբր ի հասակի երիտասարդութեան  
յանդու զդիեցիկ որթն, եւ հեշտալոյ խրախճանութեանն ճաշա-  
կումն<sup>29</sup>:

25 ժ. Սորին քաջապինդ նահատակի հանճարեղ խոհականութիւն  
յայտ նախ ի գիտելոյն զչափ տկար եւ հողեղէն բնութեանս մերոյ,  
զիջանէր խելամուտ խորհրդի ի համեմատելն զինքն ընդ անճառե-  
լոյն<sup>30</sup>, եւ երկրորդ՝ յառաջագոյն իմաստութեամբ խրատել զամու-  
սինն առ ի զգուշութեանն իւրոյ ամբողջ պահապանութիւն, եւ զայս  
օրինակ յամենայնի վարեցեալ կատարելական իմաստիցն առաջ-  
նորդութեամբ<sup>31</sup>:

30 ժ. Բայց եւ հարցաքննեալս պատրաստական ի խորհել եւ չի-  
մանալ. վասն զի եթէ բլրացուցանել զճառագայթս տեսութեան մը-  
տաց երկրաւոր որոգայթք յարձակին, երեւելի է՝ զի քաջատեսս եւ  
հոգեւորին եւեթ պարապեալ, թուի թէ անսուտ համարելի է երկա-  
քանչիւրովք զուարճացեալ՝ խորհրդով եւ պատշաճ բարեպաշտու-  
թեամբ, եւ համարձակապէս առ ի խրատելն եւ յուսուցանելն:

8 Z<sub>4</sub>AFGHI<sub>2</sub>M առաւօտ  
14 AE քաջապնդութեան  
21 AEGI հանճար

31 Z(Z<sub>1</sub>)BCF ի հողեւորին  
33 ZABIKM յուսուցանել:

ժա. Իսկ ապա զաւետեացն բան ընդունողս եւ ողջախոհ՝ այսու,  
զի թէպէտ եւ դժուարածուծելի վտանգ անզաւակութեանն շտա-  
պեալ կշտամբէր, օրինակ իմն աղամանդեայ կարծութեամբ սպա-  
նազինեալ՝ անհոյով ի հեշտութիւնսն միտելոյ յամրանայր եւ միայն  
5 յորդորմամբ ամուսնին ի պէտս որդեծնութեանն վարեցեալ, եւ ան-  
դրէն ի նոյն ողջամիտ մարբութիւն ամփոփեալ<sup>32</sup>:

ժա. Այլ նաեւ ամենեւին բարձրագոյն քան զլծակցութիւն ա-  
մուսնութեանն ամբարձեցելոյ եւ գրեթէ զվերին զօրութեանցն շնորհ  
ի յանձն ձգողի, զի՞նչ եւս մարմնական մարմաջուներ բոնադատել  
10 կարծեսցին. մանաւանդ որ եւ անբիծ բնութեամբ սրբեալ տաճար  
կանխագիտական լուսաւորութեանն յարգարեցաւ:

ժբ. Յաղագս որոյ քաջութիւն արդարոցն հօր՝ երեւելի ի շարա-  
շար խորտակմամբ վանելոյ զչորս ամբարհաւաճեալս զգոռոզսն, որ-  
ով եւ պատուեցաւ քահանայական բարեբանութեամբն տանել զար-  
15 ժանաւորն իւր վստահանալի յաղթանակ<sup>33</sup>:

ժբ. Եւս արիագոյն այրս Աստուծոյ ի բանական նահատակու-  
թեանն հանդիսի առ ի քաջապէս համարձակութեամբ կշտամբել  
զամբարշտութիւն թագաւորին, եւ յանդիմանել զայլանդակ նոր-  
ուն ամուսնին շարաբարոյ կամակարութիւն<sup>34</sup>:

20 ժգ. Առ որով միոջէս պատմի բստ իրաւացւոյն առ խոնարհա-  
գոյնն քան զինքն վարել եղբօրորդի. այլեւ ոչ դոյզն ինչ մասամբ  
խոնարհել յաւարող ժողովմանն շահս, թէպէտ եւ կարգաւոր եւ անկ  
սմին՝ աւարին էր յաճախութիւն<sup>35</sup>:

25 ժգ. Բայց արդարաբար հաւասարութեամբ եւ կանխադէտ տե-  
սանող կրկնապատիկ փոխահատոյց կամաւոր սպասաւորին գտա-  
նելոյ, աճեցուցանելով աղօթիւր զիւղոյն եւ զալերն նուազութիւն<sup>36</sup>.  
Թող զայս որ արդարապէս էառ զվրէժ ի ճշմարտութեան հակառա-  
կորդաց<sup>36ա</sup>:

30 ժգ. Յաջողեալ կենցաղօգուտ պիտոյից զեղումն ընչիցն միոյս  
գուշակի հաւատարիմ ընդծին հազարապետան, առ որս առաքե-  
ցան զեկուցանել կարգաւ զառատութիւն ստացուածոց զառաքողին  
տեառն իւրոյ<sup>37</sup>:

ժդ. Յաւէտ փարթամագոյն անապական մեծութեամբն եւ միւսս

6 EGI մաքրութեամբն  
7-8 EI ամուսնութեան  
11 Z<sub>3</sub>I լուսաւորութեամբ, Z(Z<sub>2</sub>)AEI  
17 ACGIM կշտամբեալ  
27-28 B ի հակառակորդաց  
33 B անապատական, Z(Z<sub>1</sub>) B միւս եւ  
լուսաւորութեան



թեև միայն սքանչելագործ մաշկեակն ճառեսցի, աստանօր բաւ-  
կան է ի ցոյցս այսորիկ յառաջանալ, մանաւանդ եթէ փոխանակ  
ապականացու շահից կարգեալ իշխան ի սկզբնագոյն լինելութեանց  
երկնի եւ երկրի՝ ի բանալ եւ ի փակել կարողագոյն<sup>38</sup>:

5 ժե. Կամակիցս մտերիմ ձերունոյս ի մարդկանէ ըստ իրում  
ժամանակին երեւի նուազագոյն եւ սակաւք ոմանք ի փառաւորա-  
գունիցն եւ յայլոցն եւ ոչ բնաւ ոք, վասնզի անծանօթք բարեպարիշտ  
հաւատոյն եղեալք եւ նմին իրի օտարք ի սիրելութենէ ընտրելոյս  
գտան: Այլ հարազատ բարեսիրոջս ասել սմա զվերին զօրութիւնս  
10 ի դէպ է զհանապազ գրեթէ զիջողսն առ սա յօժարմտութեամբ. եւ  
կամ թէ զբարեգութ ամենեցունց արարիչն, որ անծածուկ յայտնու-  
թեամբ զխորհրդոյն տեղեկութիւն ի վեր հանել խոստանայր<sup>38a</sup>:

15 ժե. Սոյնպէս եւ հարացարնեալ երկնաքաղաքացիս Եղիաս,  
իրբու ոչ ըստ աշխարհասիրացն ոմանց ծախելով յանրժանս զսի-  
րոյն մեծարգի՝ ջերմութիւն, բաց ի կոչեցեալն սէր<sup>38բ</sup> ի սրբազանին  
յԱստուած, որով եւ յամենայնի առնուլ զխնդրելին բաւականաբար  
զօրանայր:

20 ժգ. Բարեհամբաւ բարգաւաճանօք հայրապետիս աստ բաւ-  
կան զմիտս աստուածասիրացն զարթուցանել ի խրախամիտ զուար-  
ճացումն եւ հանդերձելոցն վստահանալ ի հանգստարան եւ  
անճառ վայելմանն օթեվան:

25 ժգ. Հրաշափառագոյն իմն ցուցեալ եւ նորոգապէս ճանապար-  
հորդս սքանչելի փոփոխմամբն ի ստորուստ ի վեր համբարձեալ  
յանմարմնոցն ուրախակցութիւն, այս ստուգապէս մեծանուն ճոխ-  
ութիւն հորդեալ ճանապարհ յառաքինութիւնն յորդորմանց յոյժ  
ընտանեգոյն մշտնջենաւորաբար կենդանի պահելոյ<sup>39</sup>:

30 ժէ. Առաջնոյս մնալն ի մարմնի շափեալ կարգի ընդ համարով,  
բայց պատուականագոյն քան զայս սնանելն ի բարեք ձերութեան  
եւ լցեալսն զաւուրսն ըստուգելի եւ անխոտան կատարելութեանն  
գլխաւորեղոյ, իսկ ի հրժարելն ի մարմնոյ հաստատուն քաղա-  
քականութիւն կենացն, անշարշարելի եւ խաղաղական հանգս-  
տեամբ՝ իրովք հարազատ ժառանգօքն ընկալեալ զզարմանալի  
ծածկոյթ թաղմանն<sup>40</sup>:

35 ժէ. Բայց երկրորդս անըմբռնելի դրժող խայթոցի մահուան  
եղեալ, ցորքան ժամանակս կրեաց զի վայրաբեր նիւթն՝ միշտ ան-

շարժ խորհրդով դաստիարակեաց ըստ լաւին, զկնի որոյ վեհագոյն  
շարժմամբն, որպէչ եւ սասցաւ, փոխանակ ի հասարակաց ստոր-  
նայնոց մայրս դառնալոյ ի ցնծալի կայանն օղագնաց լինելով ամ-  
բարեցաւ<sup>39</sup>:

5 ժը. Ուստի եւ բազմաց ազանց հայրս յարածամ տնկեալ ի մի-  
տրս երկիրլածից տեառն ի բարեբանել եւ ի խորհել յառաջնոյ եւ ի  
նորոյ պատուիրանացն աւանդութիւն, ոմամք մասնաւորին, եւ ոմ-  
ամք ընդհանուր ազգաց յիշատակելով սկիզբն ամենակատար լաւ-  
ութեանց ցուցանին:

10 ժը. Յիրաւի ապա ուրեմն անմոռանալի եւ նմանողս՝ ի բա-  
րեպաշտից մարդկանէ խոստովանեսցի երիցս երանելի, վասն զի  
սովաւ անհասանելի երանութեանն բարիք լուսազգեստ մեծապայ-  
ծառ փառաւորութեամբ ի լերինն գրեթե տեսանելի եւ յուսալի ար-  
ժանաւորացն տեսն ծանօթացաւ<sup>41</sup>:

15 ժթ. Արգ՝ այսպէս երկորին կատարեալ արքս տնկելով յաս-  
տուածային երկրագործութենէն<sup>42</sup> առատաբեր զարմտիս առաքինու-  
թեանն պտղոյ ընծայեցին ճշմարիտ խնամողին Աստուծոյ, որոց  
առանձնաբար հասակք եւ բաժանեալ ժամանակք, բայց կամք եւ  
20 որոյ արժանաւոր է միշտ առ որս պատիւ բանի ընտրի, երգակից  
լինելով գովարանել զսոցա անվթար նահատակութիւնս: Եւ արդար-  
եւ երանելիս զանձինս համարել, յորժամ ըստ սոցա անսխալն ըն-  
թացից յարմարեսցեն բան ներբողական:

<2.> Բաղդատութիւն մշակութեան եւ գինուորութեան<sup>43</sup>

25 ա. Ձցանկալիսն ամենեսեան՝ եւ ըղձիւք եւ յօժարամիտ կամօք  
որսալով հասանել ի փութալիսն, միայն յառաջացեալ ճանաչի  
մշակութեանս պատուական ախորժակ ամենայն ումեք, մանաւանդ  
ի խաղաղութեանն ողջունեալ լի բարեօք զուարճացելոցն:

30 ա. Բայց հանգոյն սմին լծակցեսցի ընդ գովելոյս եւ պահա-  
պանն մեծագունիս ի յերկրի մարդոյս եւ սորուն կենդանալէտ բա-  
րեաց պատերազմականն բարգաւաճեալ իր: Որ թէպէտ պարզա-  
մտաբար լսողացն թուեսցի զշարելի իմն ազգեցումն, այլ ի ճշմա-



րիտ քննութենէ գտանի պատճառ մեծաց շահից եւ ամբողջ շինութեան աշխարհի: Ոչք եւ յարադրելով առ իրեարս, փորձեցին զհամբարեալսն յինքեանս աշողուածս ի մէջ ունել<sup>44</sup>:

5 բ. Քանզի ուր միանգամ պատուեցան կեանք մարդկօրէն վարուց ի լեռնայինս եւ ի միջերկրայս, միանգամայն եւ ի հեռաւոր կղզիս, յայտոսիկ հասարակաբար վիճակեցաւ մշակելն:

բ. Բայց եւ հանդիսաւոր իրն ձգեալ յառաջանայ ի բոլոր ծագս տիեզերաց. այլ թէ եւ առաւելեալ ի գազանարարոյ վայրագսն գտանի, սակայն առ այժմ բանաճառեսցի յաղագս զգուշագունիցն ոմանց եւ ի պահու խաղաղութեանն զուարթնոց յարանունաբար ընկալելոյս զկոշումն:

10 գ. Սկսող փոխանորդելով ի նախաստեղծէն երկրորդ ազգիս նահապետն Նոյ, իբրու արդարեւ զհասարակաց կեննծայ հիմանէ բուռն հարեալ, մխեալ ի քաղցր աշխատսիրութեանն արգասաւոր ջան<sup>45</sup>:

գ. Իսկ յաղթողականիս հաւող հայրապետն Աբրահամ եւ ըստ նմանէ դարձեալ վեհագոյն առարինեացն բանակք, ոյց ի ճահճապետնն հաւատացաւ<sup>46</sup>:

20 դ. դ. Նաեւ եթէ ճշմարտիւ յայտնեսցի, նախահայր երկաբանչիւրոց ամենաբարի թագաւորն, ումեմն՝ անսխալ տնկագործութեամբն, եւ ումեմն՝ ի զօրավարելն վստահանալ ի մերձակայ:

ե. Սորին ի յառաջ խաղալով ի յառատ բարութենէն երկակի աշողակ բարեացս վտակք: Սպասաւորեցին միումս բարեգործք ոմանք երկրագործացն մանկունք:

25 ն. Սոյնպէս եւ միւսումս՝ հանդերձ զօրավարաւ զօրականացն դասք, որք յօժարամիտ կամօք ի սոցայս արծարծել պատրաստականք, ի յայս մրցանակ աստիճանի դասելով ախորժելի քաջալերագոյն խրոխտանօքն եւ մեծանուն պարծանօք համարձակել ի յանվթար հանդիսիս յորդորումն: Կամաւորս եւ օգտակարացն շտեմարանս զիրս հաստատէ ախորժել զհեզութիւն եւ զանքոյթ կայանսն

30 ի մրրկաց եւ ալէկոծեալ խոովութեանցն:

զ. Միովս կիրթք ի զանազան հրահանգիցն վարժմամբ<sup>17</sup> պատերազմականօքն հմտանալ փորձք, կորովակի աղեղնաւորութեամբ, զզիպողաբար շարժմամբ ասպարելն, զպատշաճ ձիավարելն, զան-

վրէպ հանդիպումն մարտացուացն եւ զսոցունց նմանողսն, որով յարդարեալ կատարին խառնմունք ճակատամարտիցն<sup>48</sup>:

5 զ. Իսկ միւսումն գիտնական ստանալի ոչ ի բազմահար ինչ հայթայթանաց, առաւել քան թէ ի դիրին գործոցն տեղեկանալ ըստ իւրաբանչիւր հմտութեանցն:

է. Նորին եւ վարդապետին մշակելեաւ ունեջ զվարս անըստգտանելի ճանապարհաց, ընտրեալք քաջալաւութեամբ, որոշելով զընական կարգաւորութեան սահման:

10 է. Գտանին եւ վատնողք հակառակորդացն՝ գնացեալք ի շափոս ուղիղս օրինաւորին. ի բաց մերժելով ի մտաց զանտի պանծանս ամբարհաւաճութեան. փոխանակ որոյ զիջանելոյ ըստ շափաւոր խոնարմանն, որ զի ըստ կամաց առաջարկեալն աջողեսցի:

15 բ. Ի սոյն գովելի իր որք որոշին երեւելագոյնք եւ բարեձեւք գեղեցկութեամբ դիմաց՝ պատշաճող հասակաւ, վայելչացեալք եւս ի զարդուցն կազմուածս եւ պայծառագզեստք ի փայլող զինուցն մաքրութենէ:

բ. Ոչ ահա անմասն յայսպիսի շքեղ տեսլենէ եւ աշխատասէրքն, թէպէտ եւ անմերձենալիս զինքեանս յարտաբուստ օտարոտի պատմուճանս արասցեն, սակայն բնութեանն քաջարոյս զարգացումն զուարթս եւ զարմանալիս տեսողաց զնոսա երեւեցուցեալ յարմարէ:

25 թ. Գումարեալքն ի պատերազմականս իր յիրաւի ծանիցին արտաբոյ տկարութեան տարակուսանաց առ կարողաբար ուժով բառնալ զինքեամբ զծանրութիւն հակող եւ բաշկագործ գրահիցն կատարել զգործ եւ աճառապինդ գործեացն բնութեամբ կրեալ ընդ ինքեանս զհատանողական սրոցն յուղովութիւն<sup>49</sup>:

30 թ. Նոյնպէս եւ յերկրորդումս պահանջի աշխոյժ պնդութեանն զօրաւորագոյնք ոմանք տեսութիւնք, որպէս զի ոչ միայն զանօսրն եւ զկակուղն, այլեւ զխտացեալ թանձրահողն եւ զխոշոր սպառաժուտն դիրեսցէ հզօր բազկաւ արօրադրելով կակղել, եւ բոլորովին իսկ ի սմա կարշնեղ զօրութիւնն կամակարաբար կատարի:

ժ. Երկոցունց սոցա գործօնեայք յոյժ հեռի ի հեղգութենէ. եզոյս՝ արագաշարժ փութով ժամանել ի հանդիսադրին տեղի, յաղագս

14 ԱԻԿ աշխատասիրութեան

21 Շ մերձակոյս

6 ՇԿ, վարդապետին

19 Շ(Շ<sub>2</sub>)| առնեն

27 Լ երկրորդումն, ԱԵ յերկրորդումն,

Ա պնդութեան, Շ<sub>2</sub>ԷԵ պնդութեամբ

29 Բ զթանձրահողն

31 Բ կամակարաբար



ճեպով տագնապի հասանելով ի վերայ ատելեացն եւ այնպէս ապա հերքելով զընդդիմակացն՝ կարացեն աներկեղ յանհոգութեան զիրեանցն կողմն ապրեցուցանել<sup>50</sup>։

5 ժ. Իսկ երկրորդիս՝ ի գալ ցնծալի գործառնութեանն ժամանակի զգժուարաշարժ յուլանալոյն հեղգութիւն քամահանս արարեալ, ընթանան անարգել յօժարութեամբ ի յազգի ազգի շահարեր գործոցն կատարմունս, յորմէ կենացն եւ փառաւորագոյն բարեբախտութեանն զեղանի յորգութիւն։

10 ժա. Երկրագործութիւնս հանճարեղ խորհրդով լուսաւորէ զիմանողականն գուլ զհնարաւորն<sup>51</sup> բազմաց. նախ՝ սկրզանցն բովանդակ եղևոցս շորբակ տարերցս խառնուածոցս իննել հմուտք, դարձեալ իմանալ եւ զփոփոխմունս ժամանակաց, ոչ անգիտանալ եւ զընութիւն կենդանեաց եւ տնկոց։

15 ժա. Ուստի յայտ է պատշաճ իմաստնանալոյ փորձք խելամուտք հնարաւոր իմաստիւք եւ ի զինուորելն փոյթք, զբազմապատիկ խորամանկութեանն զարանակալութիւնս նիւթել ընդդէմ զրժողացն եւ զգուշանալ ի նոցա դարականալ նենգութենէ եւ միանգամայն ոչինչ արտաքս քան զսահմանն իմաստութեանն, որով կատարելապէս բարձրագլուխս իր մղեալ յարգարի<sup>52</sup>։

20 ժբ. Քանզի մշակութիւն դարձեալ զիրն մանկունսն փութալ անբիծս յանմաբուր շաղախման արատոյ պահել իմն եւ պաշտպանել յաղագս ամբողջ ի յապականագործ արկածիցն վնասուցն մնալոյ սերմանեալն, զի թերեւս շնորհիւ ժողովեալն ողորմութեամբ ի վայելելն պատրաստեցի։

25 ժբ. Բայց եւս զեղեցիկ յաջորդ սորա ցուցանի հանդերձ պարկեշտութեամբ, ընդ մէջ անկեալ հեշտութեանցն հատման շարալուկ կարեաց նեղութեանն, եւ կամ թէ ողջամիտ գովութեամբ լուսալով հասանել պսակի եւ մեծաշահ պատուոյ եւ փառաց եւ վասն այսորիկ հանգել ի սմա պարապումն ողջախոհութեան ստուգեցի<sup>53</sup>։

30 ժգ. Ապա ուրեմն՝ սովաւ մեծ եւ անհամեմատելի արութեանն գերակատար բարձրանայ, որ եւ հարազատաբար հաստատութեամբ եւ առանձինն իւր զհոյակապ յաղթողսն եւ անկրելի նահատակս

1 B ապա om.  
18 ACE իմաստութեան  
21 KZ<sub>2</sub> շաղախմանէ

27 Z<sub>2</sub> ABCEFHK գորգութեամբ  
30 Z<sub>1</sub> K արութիւնն, AEI արութեան

ցուցանել, թէ եւ լուրիւք ումամբք գործ քաջութեանն կատարի՝ անգործ խենէշութեանն տաղտկանք հրածարեալ առաջիկայիւս<sup>54</sup>։

ժգ. Որ թէպէտ եւ յայլսն հանգիտեցաւ սմա իւրն լծակից, սակայն նուազանալ յայսմ երեւել քան զզուգակիցս։

5 ժդ. Այլ ի մէջ մատչելով աստանօր զզուգապատիւ բաժանումն արդարութեան՝ օժանդակեալ կանգնէ յառաւելութիւն։

ժդ. Այնքան գերազանցեալ ինքեամբ քան զսա, որչափ ի յարութեանն միւսս։

10 ժե. Լի յորդառատ զեղմամբ մշակութիւն, թէ ըստ բազմասեր արմտեացն բեղմնաւոր յաճախութեանցն վայելչական երեւի, եւ եթէ ըստ ստանալոյ ի լզփութենէ բերոցն հանդերձ վաճառաշահութեամբն մեծութեանցն առատութիւն։

15 ժե. Այսպէս եւ զինուորելս, յորժամ հերքեալ պարտեցին զօրք հակառակորդացն, այնուհետեւ ընդարձակեալ փոխանորդի առնուլ աւարառումն բռնմամբք զնոցին մեծութիւնս, որ եւ ոչ բնաւորեցաւ իսկ ինքն իրս ի շքաւորութենէ յաւէտ, քան եթէ յանկարօտ փարթամութենէն կատարել աղբիւրաբար բերողիս զպիտանացուսն մարդկան<sup>55</sup>։

20 ժդ. Միրողք բարեկամ հաշտութեան կարծեցին բազում անդամ ճառեցեալքն երկրագործքն, բայց հաւաստեաւ ունի հեշտալի կամեցողս զընդհանուրս երկնաւ ազնս կենդանեաց։

25 ժդ. Նաեւ հիման քաջութեանս թուեցին ընտանենալ յատուկ իւրքն<sup>56</sup>, այլ ճշմարտութեամբ վեհագոյնք ի սիրելութիւն թագաւորք՝ միանգամայն եւ պատուական ճոխքն, եւ առ հասարակ խաղաղացեալք ի սմանէ յանկասկած կեանս<sup>57</sup>։

ժէ. Առ որով զբարիոք յաղթանակ բարեփառութեան անզուստ տանի յաղագս ընծայելոյ ի բերոցն մասն ինչ եւ ի տէրունեան տաճարսն եւ կամ լիաձեռն զխայրեացն հատուցումն պտղաբերելոյն։

30 ժէ. Նման սմին եւ հետագայս, որպէս յառաջագոյն ցուցաւ, մեծանուն ճոխութեամբ, զի եւ ի սրանչելի վերին զօրութեանցն ըստ այսմ առաւելահրաշ իրի առնուլ կերպարան։

ժբ. Եւ զի համառօտելով զերկաբանչիւրոց սոցա համբաւ հեշտալուր առաջնովք հայրապետօքն, որ սկիզբն կատարելագունիցն արարեալ յառաջեցուցին, երիցագոյն ժամանակաւ եւ նախ ի յաշ-

11—12 ZCE վաճառաշահութեամբ  
13 AEFIM զինուորեալս  
14 AEI<sub>2</sub> ընդարձակել



խարհս գալ երեւի մշակականս, եւ մինչ իսպառ ընդ յաւիտենիս ձգեալ յերկարի:

ժբ. Այլ եւ հարցարննեալս ժամանակաւ ի վերջէ, ոչինչ նուազ ընդ երկրիս տեւողութեան յարամնալ եւ յերկարածգել: Որոց եւ իւրաքանչիւր արժանաւոր դադարումն մատուցանէ զբարօրութեամբն բերկրանս եւ զխաղաղական բնակութիւն:

ժթ. Յաղագս որոյ ապա յիրաւի պարտ եւ արժան է յարգել եւ զարմանալիս համարել զերկոցունց օգտաբերացս բնութիւն: Վասն զի ոմն անդրդուելի պարիսպ շուրջ անկեալ գտաւ խաղաղութեանն ցնծալի եւ մխիթարական շնորհօք<sup>58</sup>:

ժք. Եւ ոմն ի սոցանէ՝ մայրաքաղաք բարութեան, առ ի գրգանօք եւ փափկասնոյց բարեկրութեամբբ լցուցանել զվիճակեալսն, կրել զկենդանութիւն մարմնական: Այսպէս ահա յիրաւի ուրեմն սոքա անուանեսցին անսուտ վկայութեամբ իբր առաջինք եւ սպասաւորք առաջնոցն ի յերկրի օգտակարութեանց:

<3.> Բաղդատուրիւն գաւնայնոյ եւ ամառայնոյ<sup>59</sup>

ա. ա. Զառաւել զեղեցկութեամբ վայելչացեալսն, եւ զլոյժ մեծապայծառսն պատուականութեամբ ժամանակս, եւ միշտ կենցաղօգտակարագոյնսն բանաւորաց եւ անբանից՝ արդէն վերբերելով իսկապէս բանիւ, երկուք այսորիկ են, որ ցուցանին շրջագայութեամբ տարեւորականն շափելով աւուրբբ յաւէտ տիրականքս՝ գարնանայինս ահա եւ ամառնային կատարեալ ժամանակք: Որ թէպէտ փոքր ինչ զանազանին յիրերաց, այլ սակայն մանաւանդ ծանօթագոյնք մերձաւորք յարանան առ միմեանս ընտանեբար զրակցութեամբն եւ գրեթէ զմիւրորութիւնն իսկ ունելով շարագասին՝ առ ի զպիտոյիցն մատակարարել բարիս, իբրեւ ի շտեմարանէ անսպառ բերմամբն: Զորս եւ այժմ հարցաքննելովս տեսցուք զերկարանչիւրոցն սոցա բարեբախտութիւնս եւ միանգամայն առձեռնպատրաստ զօգնականութիւն տալոյ յիրեանցն համբուրական գոյիցն այնոցիկ, եւ որք զարժանաւոր սոցուն կամիցին հատուցանել զովութիւնս: Այսպէս.

բ. բ. Քանզի համազոյգք սոքա ընդ ամենայն սփռեալ տարածին աշխարհ, իբրու վերարկուելով համանգամայն իմն զծով եւ

զգացմաք եւ առատաբարն հասանելով ծածկեն եւ զի նոսասն բնակեալ բարութիւնս<sup>60</sup>:

գ. գ. Այլ սքանչելապէս եւ զպատիւ գոյացութեանն ունին երկորին ի միոջէն պատճառէ, ի մեծն ասեմ արեգակնային լուսաւոր պարգեւութենէ, վասն զի յորժամ փոփոխեալ զգնացսն ի խոյն կոշեցեալ դարձցի կենդանակ, յայնժամ զվայելչական զգարնայնոյս ծնանի ժամանակ: Եւ անդէն սուղ ինչ փոփոխմամբ փոխանորդ սմա ի մէջ անցեալ յառիժն կողմն, զամարայնոյն ցուցանէ կատարելագոյն ծնունդ եւ սոքօք զբովանդակն մատակարարէ բարիս ճըշմարտապէս ձեւով ազգի մարդկան<sup>61</sup>:

գ. Տի նա՝ միոյս, որոյ զեղեցիկն է ախորժակ, իբրու ի մեռելութենէ իմն կենդանացուցանել կամելով զսերմանեացն ընծիւղեալ ի դուրս զբողբոջս եւ զամենայն բուսոցն բերս, բնաւորեցաւ այնգունակ կոշել սկիզբն նորոգութեան:

դ. Իսկ միւսոյն յաջորդելով զկատարելագոյնսն, ի վերայ ասացելոցն փութալ հասուցանել ի շափ գրեթս պտղոցն ամենայն իւրովն ցանկալի ախորժակաւ յօգուտ մատուցանել:

ե. ե. Բայց եւ սքանչելի եւ ըստ անցնիւրն արհեստից յառաջխաղացութեան հանդերձ կրթութեամբ յաւէտ սորիմք ճանաչին պաշտպանեալք, առ ի զամենեսեան անզաղարս յիւրաքանչիւրն յորդորելով ախորժակս՝ ի բանական եւ ի գործականն կրթութիւնս: Այլ ոչ փոքր եւ զանասուն կենդանիսդ յիրեանցն փութացուցանեն վարժս: Այլ՝ նա այլ իմն արուեստակելով զարձեալ՝ իբրու մեծ հմտութեամբ զզանազան բուսոցն աճեցմունս ի սկզբանէ մինչեւ ի ծայր:

զ. Սոյնպէս եւ օրինաւորեալք են բնական սովորութեամբբ. առաջինս՝ զհամատարածն բարեխառնել օդս եւ անդունտ զառողջագործ յամենեսեան զեղուցանել խնամ<sup>62</sup>:

զ. Եւ երկրորդին՝ յառաւելն զնոյնս առեալ փոխէ ջերմայեղջ տապախառնութիւն, զհամեղ պարարտութեանցն ի պտուղս ամբարել մեծութիւն:

է. Ամենավայելուչ զեղեցկութեամբ գարնանայինս իմն զարդարեալ պաճուճի ժամանակ, զանազան ծաղկանցն յօրինմամբբ օրախացուցանելով զբոլոր կենդանիս<sup>63</sup>:

6 Z(Z<sub>1</sub>)EFHIKM կենդակ  
12 CFHKM ընծիւղել  
17 ZEH1 ախորժակաւ

22 ZհինAH փութացանն, BC փութայ անն



է. Բայց ոչինչ նուազ, այլ հանգէտ սմին եւ փոխանորդն գտանի պայծառութեամբ զքաջ բարգաւաճանացն մատուցանել վայելս ուռճագարդ ճառագայթիւքն՝ զխտութիւն պտղոցն եւ զբազմութիւն սաղարթիցն եւ զբարձրագեղ վարսիւք զոստոցն համբարձումն եւ զայլս մի ըստ միոջէ երեւելագոյն գեղեցկութիւնսն:

Ը. Զոյգք ահա եւ արագութեամբն հանդիպին: Նախագասն՝ անյապաղ փութով ի բուսուցանելն ճեպեալ՝ զամենայն, որ ի հողոյս ածանցին կենդանական սերմանք:

Ր. Եւ երկրորդն՝ նոյնօրինակ ի յեւ կատարելագոյնն առեալ, ըստ բազում անգամ ասացելումն յառաջատէ, թէպէտ եւ երեքամսեան շափի աւուրբք. սակայն յաւէտ զնա յանկումն ի բարւորքն ցուցանէ ձեւի՝ համօրէն բեղմնաւորութեամբ անդաստանացն եւ բուրաստանացն:

Թ. Սոցին եւ զգօրութիւն յաւեժացեալ գործով ի մէջ անցեալ տեսանի. նա՛ վասն զի արիւնայեղցութեամբն զբոլորն շնորհ կենդանիս, ուժեղագոյնս գործէ եւ կարշնեղս, թէեւ ինքն ըստ ինքեան անշունչ ստորակայ տարր է, այլ գոզցես իբրու յաւէտ բոնութեամբ կորզեալ ձգէ ի դուրս զնա՝ ի գոյութիւնս բուսոցն յերեւելիս ածելով:

Յ. Եւ սա զարձեալ իբրեւ դայեկաբար մատուցեալ առ սակաւ սակաւ պնդէ եւ միշտ զօրաւորագոյնս յարդարէ զայնս, որ ինչ միանգամ ամենեցուն առ ի կենցաղոյս մատչին դարմանոցն պէտք:

Ժ. Այսպէս եւ իմաստութեանն եղեալ պատճառ առաւել այսորիկ գտանին ժամանակք: Քանզի զարնանայինս ի ջերմագոյնն կանխաւ հասեալ տեղիս, բարեխառնութիւն բերեալ օդոց, որով մերժեալ զախտիցն փարատեցուցանէ ծնունդս, եւ այնպէս առողջն լցեալ խորհրդով՝ հանճարեղ զմարդկայինս գործէ բնութիւն:

Ժ. Իսկ սորուն դրակցին ձգեալ ի հիւսիսայինն կողմն եւ անդ նոյնօրինակ ի բաց զդառնաշունչն մղելով սառնամանիս, որք զխօղամաղձականն<sup>65</sup> բերեն ախտաժէտութիւնս եւ զմաղաւտոցն չուղմունքս. նմանապէս բարեխառնութեամբն զբնակիչսն իմաստնագոյնս ցուցանէ եւ յոյժ խոհեմագոյնս:

Ժա. Ժա. Որոց անդէն առձեռնպատրաստ բնձեռնն զբաշարութիւնն, զարեանն որպէս ասացի՝ առնելով զյաճախութիւնն<sup>65</sup> եւ ծայ-

9 Z(Z<sub>2</sub>)BEI ի om.  
15 Z<sub>2</sub>ի<sub>2</sub>Z<sub>1</sub>ABCEHI. օրինայեղցու-  
թեամբ

20 Z(Z<sub>2</sub>)CF գօրագոյնս, AEI գօրաւորագոյն  
27 ABCEFK հիւսուայինն  
28 BCHK սառնամանիս, բոլորք՝ զխօղամաղձականն

րապատար զերակացն գործելով առուս, բնաւորեցաւ նովիմբ նահատակաբար զբոլորեսին յիւրաքանչիւրումն զօրացուցանելով ի բարեգործութիւն եւ սահման ընկալեալ յեւ յաւէտագոյն փոխէ անզանգիտելի նահատակութիւնն:

Ժբ. Եւ յայնմանէ դարձեալ եկեալ յօրինի առ գարունն եւ պարկեշտ ողջախոհութիւնս, զի սակաւ աւուրբք յորդորեալ ի խառնիցն ածէ յարձակմունս եւ զայն՝ յաղագս փոխանորդութեանն զաւակի եւ անդրէն դարձեալ ի նոյն բնութիւնս՝ խաղաղացեալս զնոսա համեստացուցանէ<sup>66</sup>:

Ժբ. Այլ ամառնայինն բոլորովին իսկ յապահով դադարման լոցուցեալ զամենեսեան՝ մաքրագոյնս եւ պարկեշտալիցս պատրաստէ: Եւ այնպէս մի քան զմի առաւելուն բարեբախտութեամբ:

Ժգ. Ոչ միայն առ ասացեալսն, այլեւ յառաջիկայսն վարելով արդարութեամբ երեւի մի ի ժամանակացս առ ի հասարակաբար զամենայն սերմանիսն համանգամայն բուսուցանելով եւ զտնկոցն արձակելով բողբոջս, եւ ոչ առ մի որ երբէք ակնառութեամբ գնայ:

Ժգ. Սոյնպէս եւ լծակցեալս ընդ սմա զուգակչիւ հաւասարութեամբ ամենեցուն ըստ յանցնիւր բեղնաւորութեան միայն զվայելիցն մատակարարէ շնորհ եւ հարթաբար դարձեալ գեղջկաց մատուցանէ եւ թագաւորացն<sup>67</sup>, համանգամայն իսկ եւ անասուն կենդանեաց<sup>68</sup>:

Ժդ. Սորա եւ առաւելութեամբն երկօրին վայելչականք երեւին տեսանելի՝ յղփացեալ զոզցես իբրու ընչից իմն մեծութեամբ փարթամագոյն. առաջինն՝ ազգի ազգի բուսոցն յուղմութիւն եւ զծաղկաց եւս եւ զզանազան տնկախիտ ծառոցն ունելով բառացութիւն եւ զբազմածին հոյլս կենդանեաց եւ զանթիւ երամս թռչնոց, զուղակացն եւ զօղագնացից<sup>69</sup>, եւ որոց ոչ գոյ բաւ, պարունակելով յինքեան:

Ժդ. Հանգոյն սմին եւ զուգակիցս բազմաւորական փոխադրէ զշատագոյն փարթամութիւնն, եւ յայտ ի հոծ եւ ի խիտ շտեմարանացն ցուցցի, զի թող զայն զամենայն զնիւթս ընչեղութեանն, զլիութիւն հարկաւորացն առնելովն եւ զզեղումն հնձանացն, ընդ որոց փոխանակեալ միշտ ոսկոյն եւ արծաթոյն եւ ի պատուական բարանցն լինի:

3 Z<sub>3</sub>BEFIK բարեգործութեան  
10 KI<sub>1</sub> զաղաբմանէ  
11 CF<sub>1</sub>HK զամենեսին  
20 K թագաւորաց  
23 EK ընչիցն  
25 AEFI զանազան



ժե. Փափագողք են ժամանակացս այսոցիկ եւ յոյժ սիրելագոյնք. եզոյս՝ բազմախումբ մշակացն մանկունք եւ նաւազացն եւ ալլք, որ միանգամ կանխեալք ի յանցնիր յառաջեն գործառնութիւնս, անհատ բարեկամութեամբ եւ զցանկութիւն ունին առ սա:

5 ժե. Ըստ նմին ձեւի եւ յաջորդս՝ յարդարեալս պարծանօք լի միանգամայն զվայելողսն գրեթէ զամենայն բնդ երկնաւս ի սորայն գոյից զիշխանս եւ զիշխեցեալսն<sup>70</sup> հանդերձ վայելուչ յարմարական յարմարութեամբ շուրջ զսիրելեացն կացուցանէ պարս:

10 ժգ. Նոքին համօրէն եւ մեծարաղձ տենչանօք հանապազ բարեհամբաւեալք լինին փառաւորեալ ճոխութեան: Նախագահս՝ ի տէրունեան իսկ է բարգաւաճեալ մատենից, ըստ աշխարհարարութեանն ասեմ կարգի<sup>71</sup> եւ ըստ ապրանացն Նոյի ի սմին ժամանակի ի վտանգաւոր ջուրցն հեղեղէ<sup>72</sup>: Այլ զի սկիզբն ամսոց եւս նախակարգեալ եղեւ<sup>73</sup> եւ ի պայծառակացրդիցն բնդունակ ի հրնումբն եւ ի նորումս եւ արժանի արդարեւ բոլորովին Աստուծոյ հաճոյիցն գտեալ:

ժգ. Որպէս եւ ամառնայինս ժամանակ, յորումն եւ երեխայինացն ելանեն պտուղք եւ ազգի ազգի նուէրք յաստուածայինս մատչին տաճար, հանդերձ բազմաժողովրդականն խմբեալ տօնիք մեծամեծն սքանչելեօք:

ժէ. ժէ. Արդ՝ այսպէս եւ երկարաձգութիւնն զուգահաւասար չափեալ երկաբանչիւրոց ցուցանի երեքամսեայ բովանդակեալ աւուրբք եւ ի յանկումն եկեալ նոցա քաջալաւ սպառուածովք: Միւսոյն եղանի սկիզբն՝ ի զարմանալիսն մատչելով փոխանորդութիւն: Եւ նա դարձեալ յայլումն բարւօք կատարումն աւարտեալ ամենայն ծայրապատար յեղցեալ շտեմարանօք, որոց դադարումն հասարակաց հեշտալի վասն ի բոլորաբուխն վայելել ժողովման, եւ զկնի հանդարտութեան նոցա՝ ամենեքեան բերկրամիտ յուսով սպասեն դարձեալ ի նոյն նորոգել բարեբախտութիւնս:

30 ժբ. ժբ. Եւ արդ ժամանակք, որ այսպէս յամենայն կողմանց պատարեալ բարեօք եւ սուղ երեւեալ զանազանին յիրերաց, եւ ճըշմարտապէս միմեանց են օժանդակք՝ եւ մարդկան եւ անասնոց, եւ միանգամայն իսկ բարեբախտութեանց պատճառս ասել զսոսա եւ

3 BK յանցնիւրն  
7 ZEHM զիշխեցեալս  
10 Z2I ճոխութեամբ  
17-18 Z1CFM երախայրեացն  
23 Z2AEI եւ յանկումն  
29 AEI նորոգեալ Z:K բարեբախտութիւնս

բարեկեցութեան՝ սին եւ հաստատութիւն լինելով աշխարհի: Որոց յիրաւի ապա ըստ ամենիմաստ գոյութեան հատուցաք, եւ հատուցուր զմեծագոյն եւ զգլխաւորեալն զովական բան բարգաւաճանաց:

5 <4.> Բաղդատութիւն անդաստանի եւ նաւահանգստի

ա. ա. Ոչ ումեք յիմանալեացն յաւէժակայ ստացուածով մեծացելոց թողցին իբրու զփոքունս ոմանս անքննելիք՝ տեղեացն բնութիւն քննելիք, յաճախապէս բերողք օգտակարին: Բայց այժմ արժանաւորք ի զարմանալ համարեսցին միայն նաւահանգստացն եւ անդաստանացն գովելի վայրք, ոչք անհակառակաբար հաւասարութեամբ զգիտս շահաւետութեան եւ զբարօրութեան յերկիր յորդել պատրաստեալանք: Եւ վկայեալս զսոցանէ եղիցի արդեամբք լսել ի մերձ առ իրեարս հարցափորձելոցս առ ի գիտել զորոշումն եւ զհարազատ միաւորութիւնն զերկրքումբք զարգացելեացն բարեաց, այսպիսի սկզբամբք:

բ. Զի բնաւորեցաւ ունել զիրն հանգստակայ կայանս, միս՝ ի խառնուածի ծովու եւ ցամաքի, միջնորդել բաւականաբար երկաբանչիւրոցն կողմանց բնակչացն յանկարօտ պիտանացուացն բնդունելութիւն:

20 բ. Իսկ միւսս հասեալ սփռեցաւ յամենայն ծագս աշխարհի ի մերձաւորութիւն ընդհանուր ազգի մարդկան՝ քաղցր վայելմամբ զինքն ընտանեցուցեալ:

գ. գ. Սոցունց՝ գալ ի կատարելութիւն արարչական զօրութեամբն:

25 դ. Եւ խնամելն ումեմն ի սոցանէ յերկրագործացն նախահոգութեանէ:

դ. Եւ ումեմն յայնացանէ, ոչք ի նաւավարելն փոյթք, միանգամայն եւ ի տաժումն օգտաբեր տարրոյս յորդորամիտք:

30 ե. Յաղագս որոյ ի զիպողագոյն խորթումն նաւահանգստեան քարոզին ամբանալ հանապազ յանխողով հանգստարանի հանդարտութեան ի յուզմանէ ամբոխալից մրրկելոց ալեացն:

ե. Այլեւ անդաստանիս դիրելն զվտանկաւոր հարկս կերակրողութեան ի բանաւորէս եւ յայլոց կենդանեաց ծանօթանայ ախորժելի:

17 AEI եւ ի ցամաքի



գ. Ընդ այսու քաջաբեր տեղեալ իբրու ընդ հմուտ վարժողաւ աշակերտին աշխատասէր ջանացողն, տեղեկանալ կարգաւ զիրաքանչիւր գործոցն հմտութիւնս, որով եւ վառեալք փարատել ըզտաղտկալի գերեւանս անգործութեան յառաջագեմք ելով:

5 զ. Սոյնպէս եւ խաղաղականաւ հրահանգ վարժմամբ<sup>74</sup> յարդարին, վասն զի ոչ թողացուցանէ զրժող դատարկութեամբն խամանալ զիրան, բայց հանդիսացուցանէ կրթել ի խաղացման եւ ի գաղարման եւ լինել խելամուտ գործեացն պատրաստութեան:

10 է. Նոյն եւ ահա որոց հաւացան, առաջնորդէ ի վարս օրինաւորս, զի հանդերձելոցն զոյ գոհացողական երկիւղածութեամբ մուտրն պարսպեացի անսխալ աջողութեամբ, եւ յուղարկելոցն ընբոշխնել անընդդիմահար զիպուածով զստացուածոցն առաւելութիւն:

15 է. Այսպիսի աւանդ պատուիրանապահութեան ընձեռէ եւ միւսս հանապաղ բնաւորական կարգօր տնօրինել զընութեանն գործօնէից վայրապար խոնարհմունս, եւ զայսօրինակ դաստիարակեալ ի խրատ՝ զգաստագոյն զնոսին օրինագրէ:

20 Բ. Առ որով ի միողէն երեւի զարմանս տեղեաց երեքպատիկ վայելչութեան ձե՛՛ դեռագեռ ի սկզբամբ ի մատաղութեան բուսոյն եւ կամ ի միջահասակին կանաչայնովն գեղեցկանան ապա եւ զանազան եւ փայլող ծաղկացն գունաւորութեամբ հրճուեալ եւ կամ թէ զարձեալ հասկիցն կարմրագգեստ շքեղութեամբ:

25 Բ. Ըստ սմին օրինակաւ եւ ի միւսմէս տեսանի՝ պայծառանայն առագաստիցն սպիտակութեամբ եւ գեղեցկակարգ նաւացն յօրինմամբք եւ որքան այլ հոս ի նմա բնական բոլորակաձեւութեամբն բարեզարդութիւն վայելչանաց:

30 Թ. Ուժգնութիւն բարենշան անդաստանիս աներկբայ հաստատութեամբ յաղագս շոր եւ սակաւ ինչ զպաճառ սերմանեացն ընդունելով զալարացուցանել եւ ի բազմապատիկ լրումն առաւելով զբեղնաւորութիւն հզօրապէս ուժով:

30 Թ. Եւ նաւահանգիստ, թէպէտ ի հեռուստ եւ կամ ի մօտոյ ծովածուփ հոացումն մրրկիցի, սակայն անտեղիտալի պնդութեան այլեացն:

Ժ. Դիրախաղաց յառաջադիմութիւն միոյս ի փութացուցանել զբուսոցն աճեցումն, զորս եւ ի նմին շրջագայութեանն տարւոյն՝

4 Z ACEF գաւազակի  
9 Z1 հաւատարմաւ

12 ABCZ(Z2) անդիմահար  
34 ACEFHKM զբուսոյն

մանաւանդ եթէ երիւք երեսներորդօք աւուրց զարգացուցանէ եւ վաղվաղակի ի կատարելութիւն հասուցանէ:

5 Ժ. Արագ արագ թեթեւութեամբ ճեպեալ եւ յերկրորդումս է իմանալ զփոյթս՝ ի նաւօրն ճանապարհորդել, եւ անյապաղ երազութեամբ զարձեալ հրաժարեալքն իբրու թեւաբոյս սմին փափագմամբ ի յառաջադէմսն բերեալք, ուր եւ կամեցին, ընթանալ:

10 Ժա. Ի սմանէ եւ ընդարձակութիւն առատամիտ իմաստիցն դարելոցն յինքեան զեղեալ հետազօտել մտաւոր հայեցմամբ շարժմունս օգոյ եւ զտեղափոխութիւնս աստեղաց եւ նմանողօք սոցուն, ի ստանալն զհանձար՝ պաշտպանեալքն ի սմանէ:

15 Ժա. Տի նա ոչ անբաժս ի բննող հասմանէն հատանէ եւ զերկրագործսն եւ զուգակիցս, այլ իմաստասիրաբար իմն խնդրով տեղեկանալ մասամբն զբովանդակ երկրին զընութիւն, զհիթեղ բերրին եւ զապալեր անհիթն, զինքեամբ իսկ խոնաւագոյնն եւ զկարօտ ջրաբաշխութեան, ուստի յայտ է եթէ շորրեակ տարերցդ խառնուածոյ պատշաճի հմտանալն:

20 Ժբ. Ապա ուրեմն սքօքն լուսաւորեալք պատրաստք ի մերկանալ զբիծ ցանկութեանն: Վասն զի ոմանց պահել զպարեկշտութիւն ամբողջ շտեմարանելոյն աղագաւ զսերմանեալն եւ այնպէս քաղցր յուսով եւ գոհացող կամօք կոխել զշարութիւն պակշտութեանն՝ քաջալերեալ:

25 Ժբ. Եւ այլոյն՝ մնալ յողջամիտ սահմանի առաքինութեանն, նախ զի եւ ի հրամայեալ յամուսնացն հաղորդութենէ յովով ժամանակս առանձնանալն ի նմա գուշակէ եւ զկարճելն ի զեղիս յարձակմանէն. երկրորդ՝ ի մէջ անհուն վշտացն ըմբոնումն ջերմեռանդըն յօժարութեամբ բեւեռեացէ զնոսա ի յանարատ սրբութեանն մաքրութիւն:

30 Ժգ. Ոյք եւ անպարտելիք եւս ի հանդիսանալ ընդդէմ սաստկացեալ բերման ալեացն, մինչ զի քաջապէս բռնութեամբ զի վերայ իրերաց զկուտակեալսն<sup>75</sup> յորձանս հատանել անցանել ի կամեցեալն:

Ժգ. Անզանգիտելի քաջութեամբ վառեալք առ ի վաստակոյն իւրեացն. եւ ժիրք ի մշակելն զսա, փախուցանելովն զանընտել կենդանիս, հերքել զգժուարապատահ զիպուածսն:

3 ZEI ճեպել  
6 ZEI կամիցին  
9 ZEH1 նմանողք

17-18 Z մերկանալն  
24 A1, զկարճեալն  
29 E1 ալեաց, K գի օտ.



1 ժգ. Արունստաւորագոյնք բնաւորելովս ի միջասահման ծովու  
և ցամաքի բաժին հարթ հասարակութիւն հանդերձ անխարդախ  
շահավաճառութեամբն զուգիլ ըստ երկաքանչիւրոցն ոչ անօգուտ  
երթեւեկ բերիւքն զցամաքայնոցն ի կղզիս, և զկղզայնոյն ի ցա-  
մաքայինսն բնակելոց հատուցումն:

2 ժգ. Իմանի և յարգաւանդ վայրէս արծարծելովն զազգի ազգի  
բնութեանցն տեւողութիւն, զհամազգեացն և զառանձնացելոցն ի  
միմեանց պահելով զկենդանական շունչս:

3 ժե. Վասն զի սա և բաւական այսմ ի յորդառատ բխելոյն  
զարմտեացն լիութիւն, որպէս փոքր ինչ յառաջ ցուցաւ, ցանմամբ  
սերմանն բազմացուցանէ յերեսնաւոր և կամ թէ յես աւելի ի հա-  
րիւրաւորն փոխել զցանկալի բերոցն առաւելութիւն:

4 ժե. Բայց թուի թէ տիրական շահք մեծանալոյն համբարեալք  
են և ի հարցաքննելումս պատուական քարանցն գիտք, պաշտ-  
պանէ ընդ նմին և զգեստուցն առնել պատրաստութիւն ի մեծարգի  
նիւթոցն կազմեցելոց, այլ և զոսկւոյն և զարծաթոյն գիտս և  
պարզաբար իսկ բնաւիցն կենցաղօգուտ բնծայից անտարակոյս գոյ  
ձեռնտու:

5 ժգ. Յիրաւի ուրեմն այսքանեօք կենացն օճառիւք վայելչագու-  
նիս ստուգեսցին սիրողք՝ վերամբարձեալքն քան զկարիս կարօ-  
տութեանն, և կամ որք ի նմին չբաւորութեանն պաշարեալ. ոմանց՝  
զի ի գեր ի վերոյ փառս փարթամանալովն եղիցի յաւելուած, և  
կիսոցն՝ զի անդորրեացի կապանաւոր նեղութեանն տարակուսանք:

6 ժգ. Հաւասարապէս և ընդ յաջորդիս բարեկամանալ սովորե-  
ցին բարեկրեալքն ի յառատ բարեկեցութեան, և թշուառականքն ի  
չարալլուկ կենացն հարկաւորութեանէ. կէսքն հեշտալի յղփութեամբ՝  
վայելիցն աղագաւ, և այլքն՝ զի կարեւոր պարենիցն պատրաստու-  
թիւն գիւրեալ ընդարձակեացի:

7 ժէ. Սորա և հռչակաւորն բարեհամբաւութիւն յայտ ի յովովից  
աստուածաբանիցն է<sup>76</sup>, բայց առ այժմ երիցս երանելի հայրապետն  
ինքեամբ ճշմարտեալ և զայլս յառաջանայ ի բարեբանելն զհարա-

զատ որդին և յայսմ ցանկալի տեղոյ զազգեցեալ զանուշահոտու-  
թեանն բուրումն նմանեցուցանելով<sup>77</sup>:

8 ժէ. Նորահրաշ ճոխութեամբ բարգաւաճանայ և լծակիցս, վասն  
զի յամենայնի արժանաւորացն Աստուծոյ անճառելի բարութն խոս-  
տացումն հանգստեամբ իմն և անխող վապահովութեամբ վստա-  
հացեալ նորոգի ի բարեյուսութիւն բնակեցեալք:

9 ժբ., ժբ. Ընդ աշխարհիս կազմութեան երկոքեան և յաւեժա-  
նան մինչ ի բոլորելեացս յանկումն, որք թէպէտ և ի սահմանեալ  
ժամանակսն իրեանց առ փոքր ինչ զաղարեսցեն ստանալ զօրու-  
թիւն ի հանգստենէն, և կամ փափագելի ցանկութեամբ յորդորս  
առ ինքեանս գործեսցեն զմարդիկ, սակայն յետ այսոցիկ անդէն  
վաղվազակի ի կարգի գիւրաքանչիւր զբարիսն ամբողջ ունել պատ-  
քաստք են:

10 ժթ. ժթ. Իսկ արդ որք այսպէս ի յառաջնորդութենէ բանիս երե-  
ւցան փարթամութիւնք մեծարգի տեղեացս այսոցիկ ըստ ինք-  
եանցն բնութեամբ և զի զուարճացեալք առաւելան մի քան զմի  
բարեացն գեղեցկութեամբ և զօրացուցիչ ստորնայնոցս տուան  
տկարութեան, առ ի զարտաբուստն և զի ներքուստն լցուցանելով  
զպէտս<sup>78</sup> կարօտութեանցն: Ապա ո՞րք ոչ զգեր ի վերոյսն առնը-  
մանողք ի գովելիս իբրու յառաջազանցութեամբ սոցա տացէ տա-  
նել վեհապէս զմեծ և զերիցագոյն գովաբանութեանն զհատու-  
ցումն:

<5.> Բաղդատութիւն ձիոյ և արջառոյ<sup>79</sup>

11 ա. ա. Անհամարք ի հասարակաց ծնողէս ի յերկրէ երեւին  
միշտ ի յառաջ եկեալք բազմահոյլք տեսակք կենդանեաց, յորոց  
ոմանք հանդերձ հեռաբնակ կայանիւք ի բանաւորէս զատանելոյ և  
ոչ հաղորդեալք ինչ սորա վտանգիցն գիւրութեան գտանի օգնա-  
կանք, իսկ այլք և անուամբ անգամ անձանօթ գոյ: Բայց այնք ո-  
րոց միանգամ կարգեալ երկրաւորացս թագաւոր, գիւրսն լիով և  
ըստ կամաց ունի զարտաբուստ օգնականութեանցն պէտս<sup>80</sup>, յայսո-

2 Z հաւասարութիւն.  
3 Z զուգեալ  
7 A տեսեւողութիւն, Z<sub>1</sub> անսողու-  
թիւն

21 A<sub>1</sub> չբաւորութեան, AEIM պա-  
շարել  
23 AE նեղութեան  
27 FHIKM այլք  
29 ZBEH յովովիցն

2 Zհին ZBԻրբուծն  
3 ZEIM բարգաւաճանաց  
8 Z(Z<sub>1</sub> AEմինչեւ

21 AEI գովաբանութեան  
24 Z(Z<sub>1</sub>) անհամեմատք  
25 Z(Z<sub>2</sub>)A միշտ յառաջ



սիկ ոչ իւրք այնպէս որպէս ընդասուն եւ համարնակ կենդանեօրն  
փառաւորեալ սպասաւորի, ի ձիոյս ասեմ յարջառոյս, յաւէտ է կեն-  
ցաղօգուտ տեսակաց: Որք արդէն խոստովանեալ փորձի ցուցցին  
2 շահք առաւելութեան ի յարադրութենէ հաւաստի համեմատու-  
5 թեանցս առ իրեարս, թէ որպէս զանազանութեամբք ըստ իւրաքան-  
չիւր բնութեանցն ոչինչ նուազ միաւորեն զբարեացն հատուցմունս  
ընդունողացն: Եւ նախ յառաջելով աստուտ, զի անզատ ի մարդ-  
կանէ զկայանս բնակութեանն արարեալ՝ տարածեցան ի շորեսին  
կողմանս տիեզերաց, իբր որ զճշմարտապէս բեռին ծանրագունի  
10 բարձողք սփոփելով ի խորշ եւ յուրտս եւ յընդհանուր մասունս  
երկրի:

բ. Եւ ապա զի բաժանին աստանօր սուղ ինչ որոշմամբ. միոյս՝  
ի ճահ ասպարիսել պատշաճել ըստ արժանաւորին ի հարթարգակ  
զաշտան եւ ի յարդարեալսն համայն ի խափանիչ խոշորութենէն:

բ. Այլեւ միւսոյս գործ անըստգտանելի ժրութեանն զթանձրա-  
հող եւ զհիւթեղ անդաստանս կակղելով առ ի յանվթար բխել զա-  
ռատ պտղոցն լիաբեր արմտիս:

գ. Սկիզբն այսոցիկ ամբողջ բնութեանն բարելաւ կենդանե-  
ացս, որ եւ ամենայն բարի եւ գեղեցիկ լինելութիւնք<sup>81</sup> իմանալեաց  
20 եւ զգալեաց եկին ի կատարելութիւն: Ուստի բարեմիտ խնամածու-  
թեամբ դարձեալ ումեմն զօրէն հարազատ ժառանգի որոշեցան տե-  
սուշք ոմանք ընտիր իրի մշակութեանն մանկունք ուրախալից շնոր-  
հի պարսպեալք անապաշտաւ եւ գորովագոյն խանդաղտանօք ի  
տածելն պատրաստականք:

գ. Իսկ ումեմն՝ յառաջողէմ զօրականքն եւ այլք եւս զուարճա-  
ցեալք բարեբախտութեամբ եւ անկարօտ ընշեղութեանն յորդառատ  
գոյիւք, ոյք աննենգ միամտութեամբ ոչինչ ընդհատ ի ծնողացն  
25 ծնալասէր յանձանձանաց յայսմ գտանել խնամածութեան:

գ. Յաղագս որոց սորա ախորժակ բազմապատիկ պարենիւք  
30 եւ ի սնանելն, եւ յորժամ առուզացեալ զարգացցի՝ ի դարմանելն<sup>78</sup>  
զուգապէս զերկաքանչիւրոցն՝ զանբանից եւ զխօսնոց տիրապէս  
յիւրս մերձ դնել հեշտալի շահեկանութիւն:

3 ZFM ցուցին,  
4Z<sub>4</sub>EI յարջառութենէ  
5 ACFH իրարս, ZCEK իւրաքան-  
չիւրն

8 AE բնակութեան  
28 Z<sub>3</sub> յանձանց, E յանձանաց  
29 Z<sub>2</sub> որոյ

դ. Սնանի եւ երկասէր արօրածիգս<sup>82</sup> անպաճոյճ եւ դիրապիւտ  
կերակրանօք՝ շատանալով ինքնաբեր երկրի բանջարօք եւ անկազմ  
բուսոցն պատրաստութեամբ, ազատ ի տածանելի աշխատութեանց,  
զհոգացողն ինքեան պահելով:

5 ե. Ուստի եւ ոչ անմասն ի հրահանգից կրթութենէ<sup>83</sup> ազգ ձիոյս  
առ ի զխակ եւ զըմպահկող ապերասանութիւն նուաճելոյ հնազանդ,  
զի անխակ քաղցրութեամբ բերել զվերելակն ինքեան յառաջիկայ  
դիտաւորութիւնն:

6. Սոյնպէս եւ հարցարնեալս առ սա կրթի ընդ կենցաղօգուտն  
10 անցանելով վարժումն<sup>84</sup>, վասն յայլ եւ յայլ գործոցն առաջարկու-  
թեան ուսեալ զիշանելով եւ լծածիգ խոնարհման նուաստութիւնս,  
մղեալ եւս ընտելութեամբ բառնալ զ՛ի հեռուտ շահաւետ բերս<sup>85</sup>  
բեռնակրութեանն:

գ. Յորոց յայտ է ընտանի քաջուսումնութիւն բնաւորեալ օրի-  
15 նաւոր ի նախադասելումս խրոխտն եւ միշտ տիրական սարժանօք  
առնել զհամարձակագոյն զշահաւետականսն:

դ. Իսկ ի նորուն գահակիցս օրինաւոր կարգ հեղագնաց հան-  
գարտութեամբ տնկեալ ի ինքեան զխաղաղասէր հանգստեամբն  
յապահով կայանսն:

է. Ի միոջէս տեսանի վայելչակերպ ձեւ տեսակի եւ գեղեցիկ  
20 գունաւորութիւն զանազանաբար, քանզի չոմանց պայծառագետ  
սպիտակութիւն մաքրապէս փայլեալ եւ կիսոցն՝ հակառակն նորին  
շքեղ սեւութիւնն, այլոյ եւս դարձեալ ի քաջըղձալի ծայրիցս խառ-  
նուած ընդունելով գոլ երեւելագոյնք եւ պարզաբար իսկ՝ բոլոր  
25 բողբոջոց եւ զծաղկաց երփն երփն նմանութիւնս ի վերայ իւր նկա-  
րեալ:

է. Զուարճալից հաւասարապէս եւ միւսս՝ պատուեալ բարե-  
զարգ գեղեցկութեամբ, մինչ զի հանգոյն ասացելոցս եւ ի սմանէ  
գտանել զբազմաւորական գունոցն պայծառութիւն:

բ. Մեծութիւն հասակիս սահմանեալ երկաքանչիւրոցն շափա-  
30ւոր կշռութեամբ, որով մուս՝ հրճուելի բոցորագոյն նմանութեամբն  
գեղեցկանալ, վերջնովք եւ պակաճեւ յօրինուածով զարգարեալ  
խիտ եւ հրաշալի բարշին բարեմասնութեամբ:

I F երկրասէր, I երկարասէր  
4 Z<sub>3</sub>ACEIKM ինքեանց  
7 Z(Z<sub>4</sub>)ABCEFHKM գվերելակն  
10 EPIK յայլ եւ այլ  
18 A սնբեալ, E<sub>1</sub> տքնեալ  
23-24 ZHI խառնուածս  
25 ZK ծաղկաց  
32 ZHM վերջնովքն



ը. Այլև երկրորդս՝ մեծս եւ ահաւորս զտեսանելեացն ունելով զուարթագին հայեցուածս եւ օրինակ իմն իբրև զթագաւորական թագ զգերակալ բարձրութեամբ զդիր եղջերագեղ վրիժակացն:

5 թ. Քաջապինդ զօրութիւն ձիոյս, զի ոչ զսոսկ պատերազմողն տանելով հզօրապէս ի մարտին ժամադրեալ տեղի, այլ հանդերձ նովաւ զիւրն պատրաստական ձիադէնս, եւ զամրոցս, եւ զսպառազինութիւնն զինուորին զօրաւոր ուժով բառնալ զինքեամբ կարողացեալ:

10 թ. Ապա ուրեմն սոյն հաստատուն գոլ եւ յարջառոցս ազգի, վասն զի սկսմամբ յառաւօտէ մինչեւ ի մուտս արեգական անկրեւի բնութեամբ պատառեալ զերեսս երկրի բաւականացեալ, եւ կամ զաղխախեալ ի սայլսն զժանունս ինչ բեռինս ձգել զկնի իւր կարչնեղ կամակարութեամբ:

15 ժ. Թեթեաշարժ ընթացիւք եւ երագափոփոխ վազիւք եղոյս է գերագանցութիւն՝ առ ի սլանայն յորսորդութեանն հանդէս միշտ բերեալ ի յառաջադէմսն եւեթ: Տի՛ նա եւս հրաշալի՛ ըստ թագաւորացն գոլ փութապէս հրեշտակագնացութեան, առ այսու եւ ի հակառակամարտսն արշաւանք սովաւ անխափան ի յարձակմամբք յաղթութիւնք հաստատին յաւէտ:

20 ժ. Գիւրաշարժագոյն եւ մեծարգի յաջորդս է յառաջելովն անդանդաղ ի քաղցր երկոցն օգտարեւր վաստակս, անընհատ շրջագայութեամբ եւ ի կասուլ զսերմանեալն լինի, մանաւանդ թէ յառաջ բան զայս եւ ի սերմանելն կանխէ եւ այսպէս յամենայն բարեացն յորդորմունս վաղվաղակի ժամանել:

25 ժա. Այլ ահա սոյն ցանկալի կենդանի թէպէտ եւ եղև եւ անուանի անբան, սակայն ոչ ամենեւին անբաժ ի բանաւորապէս զյառաջադրեալն զգալոյ. նախ՝ զի առ անուանակոչութիւն համօրէն դառնայ, եւ երկրորդ անգամ՝ զի կազմ եւս ըստ հրամանի գործօնէին յարգելու եւ ի շարժել ի գործն, դարձեալ է՝ զի եւ ինքեամբ իսկ առաջնորդեալ գալ ի սովորական կայանն:

30 ժա. Ըստ սմին օրինակի եւ համազոյգս, եթէ ընձեռեսցի ի ձեռս հմուտ վարժողացն, յոլովիւք խոհեմաբար զիւրսն ցուցանէ ի ճահ արուեստ պատշաճ զօրէն մտաւորի եւ առ կամս ուղղողին

14 B երագափոփոխք  
20 Z1I զիւրազարժագոյն  
26 Z3IK բանաւորէս

27 ACFHM զի եւ առ  
28—29 FI գործունէին

զիւրահաւան ելով յարժանաւոր յառաջելն եւ ի հեշտական զադարմանն, ապա եթէ վնասակար խամութեամբն զերեւեսցի, յիշխանսն բան եթէ յիշխեսցեալսն<sup>86</sup> հրթիցէ մեղազրութիւնն:

5 ժբ. ժբ. Բայց ի ժամանակի սահմանեալ խառնիցն ընդոստուցման զոյգ ի հարկաւոր կենդանասերութեանն պէտս փոխանորդելոյն աղագաւ, եւ ի կատարել այսորիկ բաւականութեան հրաժարեալք ի վաւաշալից ի գամուութենէն՝ պահպանին ընդ մաքուր ամրոցաւ ողջախոհութեանն:

10 ժգ. Ուստի միովս ստուգապէս խոստովանեալ քաջարութիւնն բարձրագլուխ մղեալ յարդարի, վասն զի փոփոխէ զլքումն գետնաբարշ աշխատութեանն եւ այնպէս վերամբարձեալ հանգստեամբ օժանդակէ անուանի նահատակացն եւ յամրոզջ յաղթութեանն տալ խրախուսանս:

15 ժգ. Բայց եւ յաջորդս անգործ վհատելոյն զգանգիտանք ի բաց հրաժարեալք ի ժիր աշխատասիրութեանն յորդորմանէ:

ժգ ժդ. Այլ թէ եւ նուազեալ յայսմ երեւեսցի ամենակատար ընծայի արդարութեան հասարակարար ծագեցելոյ առ ամենեսնան, բարձրացուցանէ զերագանցեալ փոխանակ զուգակցիս ի քաջութեանն սմա ի յարդարակ մատակարարութեանն բաժանման:

20 ժե. Սոյն յոլովեալ յաճախէ ի ժառանգութիւն հասարակաց մարդկան, մինչ զի բարետոհմիկք եւ անարգք, մեծատունք եւ աղքատք, եւ բողոքովին վերջին տնանկութեամբն վտանգեալք՝ ի յայսմ կենդանուոյ պաշտպանին ի կենացն դիւրութիւն:

25 ժե. Այսպէս եւ յաջորդս, թէպէտ եւ ոչ ամենեցուն զիւրագիտ եղեալ ի ստանալն, այլ որոց հնարաւորն լինի, է ուրեք զի գրեթէ անթուելի դասակք աճեցեալ ի բազմութիւն:

ժգ. Անհատ սիրելութեանն յօգի զմիողէս միաւորեալք յառաջագոյն խոստովանեալք՝ հայրաբար խնամածութն, եւ միահամուռ վայելիւք վաստակոյ սքանչելագունի:

30 ժգ. Քանի եւ զերկրորդէս կախեալք փարելի միամտութեամբ փառաւորեալք ի յերկրի ճոխութեամբ աշխարհակալք, եւ ոչք ըստ պատուական իշխանութեանն աստիճանի ի նոցանէ կարգեալք:

1 Z2AF հրեշտական  
3 CEHM թէ  
10 HK քաղցրագլուխ, F փարցրագլուխ  
15 AE աշխատասիրութեան

17 Z(Z2)M ծագելոյ  
18 CK զերագանցել  
30 AEFHKM կախեալք  
32 AE իշխանութեան



Ապա ուրեմն եւ ոչ որ իսկ արտաքոյ փափագելուոյս չանկութեան  
օտարացեալ ի շերմեռանդն կամակեցութենէն երեւեսցի:

5 Ժէ. Համբաւ հեշտալուր բարեփառութեանն սոցա յայտ ի մե-  
ծաբոյս աստուածարանութեանցն գո<sup>87</sup>, զի ուրումն ի սոցանէ  
նմանութեամբ վկայի գեր ի վերոյ զօրութիւնն զիւր հրաշալի երի-  
վարս լծել ի կառս եւ նոքօք ձիւավարել զփրկութեանն ընթացս<sup>88</sup>:

Ժէ. Բարեպաշտագոյնս եւ առաջիկայ սրբութեամբ ընտրեալ ի  
տէրունեանն պատարագացն նուէրս մատուցանել ի յողջակէզսն  
կատարելագոյն քաւութեան եւ լուացման մեղացն<sup>89</sup>:

10 Ժը. Սոցունց ահա ցորչափ ժամանակս յերկարեսցի շարժելն  
զինքեանս լաւագոյն շնչով կենդանականաւ, միշտ պատրաստք ի  
յարբանեկել զբարեացն սպասաւորութիւն: Եւ ապա ի կասելն յայս-  
մանէ ըստ զառամութեանն տիոց զրգեալ փափկանայ միս վերըս-  
տին բարեխնամ կերակրողութեամբ, որպէս զի իբր զմու ի մեծա-  
15 շահագունիցն իւրոց ի կան մատուցի ինքն ի գովելի վախճանին  
ի վայելմունս հեշտակեցութեան:

Ժը. Իսկ լծակիցս թէն բնաւորեցաւ հնոր ի ճաշակմանն պի-  
տոյից մնալ, այլ հանգոյն նորուն ի զառամանայն պարարելոյս  
անդատին այսպիսեօք զարմանօք բարիկրեալ զրգի:

20 Ժթ. Յետ սրոյ ի միոջէս հրաշագործ կենդանիք ի յառաջ եկեալ  
բուսանին, յորոց ի զարմանալի վաստակոյն լիշատակելն սմին նո-  
րոցի անմոռանալի<sup>90</sup>:

Ժթ. Եւ միւսս յարանունաբար լինքնէ ծնիցելոցն<sup>91</sup> եւ յորդորա-  
գունից հրամանաւ ամենեցունցն արարչի ի վանումն հակառակա-  
մարտիցն առաքէր երբեմն ժամանակի<sup>92</sup>:

Իսկ արդ կենդանիսս, զոյս այսքան ուռճազարդս եւ լցեալս  
բարեաւ բանս դիտեաց ի յողոյ եւ ի մարմնոյ գովելի մասանց,  
ապա յիրաւի ուրեմն մեծահանճար իմաստնովքն սոցա վերբերես-  
ցի արժանաւոր եւ իմաստուն վեհագոյն ներբողաբանութիւնն: Վասն

30 զի օգտակարք արդարեւ իբր հաւատարիմ հազարապետք երկրայ-  
նոցս զոյ ամենեցունց թագաւորի, առ ի զմեծամեծսն եւ զգլխա-  
ւորագոյն աղցս կարեացն զիրելոյ, հանդերձ պաշտպանելով խորին  
խաղաղութեամբ<sup>93</sup>: Զոյց միանգամայն համառօտելով պարտ է  
ճանաչել զշահս ճշմարիտ բարելաւ կենդանեացս եւ ստանալով<sup>94</sup>

1 Z ցանկութեան  
13 AEFHKM տիրոցն

14 Z(Z1) իբրեւ զի որպէս  
21 A1 յեշտակել

5 Ժբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

Թբ. Եւստուցանել յարարէս պապացի, որ զերանութեանն ծայրն, զրախս աշ-  
խատանիքք մասաւորք եւ զով շինութեան ժաշտումարակարգ յայտողու-  
թեանն սկզբունք: Իսկ միջո յամեղացեալ յողո սրարամ .մ  
-ոյր զյմաւորակաւամա մայամծօղորք յմկր յմոտս սլոմմկիծ զյամ  
-այ մմամկնոցմայթ: Թագդաստրիւն Գրքեմայ Եր արմանմայթ  
գիտոց . զգլղամ? մաթանրայ սմ ցոյլս յո մմ բոջմաշաք ցամաւաք  
5 ա. Զոյց թ քաշալայելուչ պատուականութեամբ . ոք արդաւաճ-  
-ոյ յեկանի ի տոմարի մի կենի ի մե. զմիշտ պաշտպանն մեծաշաճ օգտակա-  
-ա յլուութեանն ստորի պէն լիքսմի . ոք չգծ արեւցել . յարդեւ զով ակայն բա-  
-ի Թմն ինքն լաղմի ի ք իոյմշաք մմմմկնորդամա մատոյլմայլ ասք ՕԻ

1 ZAEI հարստանել  
2 Z(Z1) արեւաշաճ  
5-6 AE զարդաւաճելն  
16 EFi ստանալանեացն  
18 ZABCEH հիւստանելն  
32 Z զուրակելն



միայն շուրջ զինքեամբ բոլորակարար բաժակելովն եւ այնպէս անկարօտ ի վտակացն ոռոգմանէ դարմանեալ սնանի<sup>97</sup>:

5 ե. Յաղագս որոյ համբարձեալ օրինակ իմն վարժող զարմանալի ձիթենոյս տունկ կրթել զգործօնեայն անտարակուսելի դիրութեամբ յուսումն շահաւոր, քանզի ոչ ոստարանցութեանն յապաւանաց պահանջող եւ ոչ այլոց եւս բազմաջան հնարից, որովք խելամուտն լինել ինքեան:

10 զ. Ընտանենայ հաւատար այսմ եւ արմաւենիս, թէպէտ եւ յուովիք պահաջի արկանէ զհրահանգս, ոչց հաւատացան, այլ ազատ յանպիտան անարգութենէն պահելով զի վերայ եկեալսն<sup>98</sup> ի բնութենէն կարկառէ ի պիտանացու շահս ընդունողացն:

15 զ. Անփոփոխելի կարգաւ հաստատեալ ի սմին մանաւանդ բաղջրահամ ունակութեանն բնական հիւթ, քան ի բնաւ ազգաց բերս օրինաւոր աւանդ:

20 զ. Եւ յերկրորդումս՝ զերազանցեալ առ ամենեքումք մրգաբերօքն բնաւորեցելով ի պտղին համեղ պարարտութեանն զեղմամբ:

25 է. Ի սմին բարեզարդ ձեւ զեղեցկութեանն յոյժ վայելուչ եւ անթարշամելի զուարճացմամբ տերեւոյն միշտ զալարանալ եւ պայծառազգեստ վարսաւորութեամբ ծաղկին հրճուել. եւ որքանօք եւս տեսակին երեւելագոյն յօրինուած յառաջ անցեալ սքանչելատեսիլ:

30 է. Հանգիտապատիւ այսմ եւ հարցաքննեալս առ սա՛ գտանի, մինչ զի ոչինչ ընդհատ գնոյնս զեղեցկութեանն պատիւ ի վերայ իւր նկարագրել, մշտափթիթն լինելով. եւ փայլող երփն երփն բարձրածեւ գունաւորութեամբն<sup>99</sup>:

35 զ. Տի՛ նա, դարձեալ եզս ի սոցանէ գովեջի է եւ հզօր քաջապնդութեամբն կարծրատորրն<sup>100</sup> ելով եւ սերտ, որով եւ ոչ տեղի տուեալ յինքեան դիրապախ տկարութեանն վնասուցն երեւի:

40 զ. Այլ եւ յարառեալս, յայտ է թէ անկեղակարծ խոստովանեցի յամենեցունց զօրաւորագոյն ունելով բնութիւն յաղագս քաջաւորց լինելութեանն բարձրագունի եւ լինելութեամբ ընդունելին լինելով, առ ի յանխափան գրեթէ զամենայնցն վճարել յինքենէ զգործառնութիւնս պատրաստութեամբ գործեացն զօրաւորագունիցն:

1 Z(Z1) զիւրեաւ փս զինքեամբ  
13 ZA ունակութեանն  
22 AEI այս

23 Z(Z4)AEI զեղեցկաշքեղութեանն  
27 Z1 կարծրատորրն, B կարծրատորրն

թ. Յաղագս որոյ իբրեւ ընթացիւք իմն ումեմն ի սոցանէ արագ ի փութալիսն յառաջադէմ ժամանելով՝ այնու դիրաշարժ առ ի բուսանելն եւ վաղվաղակի աւարտելն զպտղաբերութեանն հատուցումն:

5 թ. Եւ ումեմն ի բաց մերժելով զյամբ յերկարութեանն յապաղումն փութացուցանէ, զոր բնաւորեցան, յամբողջ կատարումն բովանդակել:

10 ժ. Բայց զարմանալի եւս զընտիր ստացուած մտացն, զիմաստութիւն ասեմ, հեշտալի պտուղ ձիթենոյս՝ կանգնեալ բարձրացուցանէ յայսպիսաբար: Քանզի ի բանական արուեստիցն փոյթս պարապելոցն, իբրու յորդորական իմն օգնական, զանլոյս աղջամուղջ գիշերոյն գրեթէ անստուեր միջօրեայ գործելով, օժանդակէ զարգացուցանել զհանճարեղ խորագիտութեանցն հասմունս<sup>101</sup>: նոյն խառնեալ եւ բժշկացն առողջական սպեղանիս՝ բազում անգամ զախտաժեւութիւնն փարատելով, արժարժէ ընդ առողջութեանն կարողապէս եւ զխորհրդոցն տեսութիւն:

15 ժ. Նպաստմատոյց հանճարոյ եւ բաղջրութիւն արմաւենոյս գոլ պտղոյ, որ նմանապէս բարեխառնելով զբնութիւնս ճաշակողացն, բաւական է յիմաստիցն ածել խելամուտիւնս՝ առաջնորդելով ըստ վայելչականին:

20 ժա. ժա. Զսոցունց ի խորհելն եւ ի զգաստաբար զգալն օգնականաց ճշմարտեսցի հրաժարեցուցանել յայնցմանէ եւ զանմաբոր հեշտ ցանկութեանցն անարգել մեղկութիւն, վասն զի մերձաւորաբար իսկ սովորութիւն կալաւ ընտանենալ միաբանապէս ընդ իմաստութեանն եւ համեստ պարկեշտութեանն վարս:

25 ժբ. Առ որով իմանալի է, զի ի միջէս կատարի զեղեցիկ քաջարութիւնն դարձեալ ըստ երկուց օրինակաց՝ զետնագնացացն յանդգնաբար յարձակմանց, որպէս արիաբար գոզցես ընդդէմ կացեալ զերակայ բարձրութեամբն, եւ ի վերայ ծայրիցն զօրէն պատնիշի փուշս շուրջ զպտղովն արկեալ, որպէս զի անկուուելի օղանացացն դարանակալութեան պահեսցի:

30 ժբ. Իսկ միւսոյս՝ ճնշեալն ի դուրս լուծիչ աշխատութեանցն եւ զօրացուցիչ ձիթոյն բնութիւն օժեալ մարդէ զըմբիշան աներկիւղս ի

9 ACFKM ձիթենոյս  
10 1 բնական  
17 CFKM արմաւենոյս

21 BFHKM զգաստաբարն  
25 ZBCFHKM վարբ  
32 BCF միոյս, միւս







ՍՍ.ՀՄԱՆ ԲԱՐԱՌՆՈՒԹԵԱՆ

5 Բարառնութիւն է նմանութիւն բարուց ենթակայ դիմաց: Եւ բարառնութեան<sup>1</sup> զանազանութիւնք են երեք. քանզի ոմն է նոյն բարառնութիւն, եւ ոմն՝ դիմառնութիւն, եւ ոմն՝ կերպարանառնութիւն<sup>2</sup>: Եւ բարառնութիւն է<sup>3</sup> եւ ուրանօր դէմքն ծանօթք են<sup>4</sup>, բայց զբարսն յատուկ<sup>5</sup> ստեղծանեմք<sup>6</sup>, որպէս. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանքս Աքիլեոս՝ Պատրոկղի ի բաց բարձելոյ<sup>7</sup>: Աստանօր Աքիլեայ դէմքն են ծանօթք<sup>8</sup>, բայց զբարսն յատուկ իրրու զբարկացելոյ<sup>9</sup> ստեղծանեմք:

10 Եւ դիմառնութիւն, ուրանօր զբարսն միանգամայն եւ զդէմս ստեղծանեմք<sup>10</sup>, որպիսի. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանս ծով՝ ծովակալ եղելոց լակեղմոնացուց<sup>11</sup>»: Աստ զդէմսն ստեղծանեմք խօսել, քանզի ծով ոչ բնաւորեցաւ խօսել, եւ զբարսն նորին տարակուսեալ, թէ ունիցին զնա միջերկրեայք<sup>12</sup>, որպէս Արիստիդէս արար, եւ Մենանդրոս ի դէմս դից ստեղծանելով զյանդիմանութիւնն<sup>13</sup>:

15 Իսկ կերպարանառնութիւն է, ուրանօր դէմքն են ծանօթք, այլ դադարեալք են<sup>14</sup>, եւ զդիմացն ի մէջ բերեմք զկերպարան, որպիսի. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանս Սողոն, եւ Միլտիադէս, եւ Արիստիդէս, արդ ի Պելեպաւնէսիականսն զօրավար լեալ Կղեովն»: Քան-

2 N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>7</sub> ենթակայս  
 3 Z զանազանութիւն  
 6-7 Z(Z<sub>2</sub>)N<sub>1</sub> բանս ասիցէ  
 7 N Աքիլեոս, J. Պարդեւէն N Աքիլեոսայ  
 12 ABEGIM լակեղմոնացուց, N զակեղմ(զմո)նացուց  
 13 J քանզի ծով ոչ բնաւորեցաւ խօսել om.  
 14 Z(Z<sub>3</sub>)AEHN<sub>1</sub>N<sub>6</sub> միջերկրայք  
 15 J ի om. դէմս դիցես  
 16 N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>6</sub>N<sub>7</sub> այլ om.  
 18 J Սողոնի, եւ om., N Միլտիադէս, I Մելաթադէս  
 19 J արդար J Կլեոն, AEGI Կղեոն, N<sub>3</sub>N<sub>3</sub>N<sub>6</sub>N<sub>6</sub> Կլեոնովն

զի ի Պելեպաւնէսիականսն անդ ո՛չ Սողոն, ո՛չ Արիստիդէս եւ ո՛չ Միլտիադէս մերձ էին. այլ իբր զկերպարանս նոցա մերձ բերեն խօսել ընդ աթենացիսն յաղագս Կղէովնի<sup>15</sup>: Որպէս արար Եպոդիս «յմսկի ազգին», եւ Արիստիդէս «Յաղագս շորիցն»<sup>16</sup>:

5 Եւ բարառնութեանց<sup>17</sup> ոմանք են տրամականք, ոմանք բարոյականք, եւ կէսք<sup>18</sup> խառնք: Եւ տրամականք, ուրանօր տրամութիւն ինչ ի ներքոյ կայ<sup>19</sup>, որպէս. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանս յանկանել Հեքտովրի՝ Պրիամոս<sup>20</sup>»: Եւ բարոյականք, ուրանօր միայն բարքն ի ներքոյ կայցեն<sup>21</sup>, որպիսի. «Զո՞րս արդեօք ասիցէ բանս միջերկրեայ<sup>22</sup> առաջին զծով տեսեալ»: Իսկ խառնք, ուրանօր բարք միանգամայն եւ տրամութիւն ի միասին գան<sup>23</sup>, որպէս. «Զի՞նչ արդեօք ասիցէ բանս Աքիլիոս ի Պատրոկղի անկանելն վրէժս առնուլ գիտելով<sup>24</sup>: Քանզի Պատրոկղի վախճանն՝ տրամութիւն, իսկ բարք՝ յաղագս պատերազմին խորհուրդ<sup>25</sup>: Արդ՝ բաժանումն այս է բարառնութեան<sup>26</sup>:

Իսկ պատկեր<sup>27</sup>, համառօտ եւ բացարձակ<sup>28</sup>, եւ վճարեալ յամենայն մանուածոյ եւ ձեւոյ: Եւ գործեսցես զնա<sup>29</sup> փոխանակ զխոց երիւք ժամանակօք՝ ներկայի եւ անցելովն եւ ապառնովն:

<1.> Զի՞նչպիսի բանս ասէր Ադամ Ելանելով ի դրախտէն<sup>30</sup>

20 ա. Ո՛վ մտզնազույն հաշումն եւ արդարեւ բոլորովին իսկ անընթերեի վտանգ<sup>31</sup>, որ ի վերայ իմս հասեալ կայ անձին, կասեցուցանելով զմարմնոյս զօրութիւն եւ ջլատեալ լքուցանելով ամենեւին զմտացս պնդութիւն եւ յայսցանէ ահա դժնդակ անտանելի պաշարմանցն փակի ինէն եւ գոնէ սուղ ինչ սփոփանացն եւ միթարութեանն մասն: Տի՛ նա առ ի դիմել ինչ մեծասուղ հառաչանացս յաւէտ ընկղմումն տրամութեան զիմս գրաւ սրտառուչ անձն: Քանզի յոյժ արդէն թիրեալ ի յուղիղ շաւղաց յանցաւորութեամբս զրտանիմ, զեր ի վերոյ զօրութեամբն հալածական ի փափկասնուցն եւ յանկարօտ բարեօք զուարճացեալ յամենալից տեղուջէս, եւ անկանիմ մերժեալ ի նմանող անդնդոց եւ յալէկոծութեամբ սահուն

1 IZABCFHMKM Սողոնի  
 2 ABCFGHKM Միլտիադէս  
 3 J Կլեոնի, Եւտոլիս  
 5 J եւ ոմանք  
 7 ACEFGHIMN<sub>1</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>J<sub>3</sub> որպէս om.  
 8 բոլոր (բացի Z1)՝ Հեքտոս ի բոլոր (բացի J)՝ Պրիամովս  
 13 J արամութիւնն  
 20-21 Z<sub>3</sub>ABCFHMK անըմբերի



հղեալ ի ցաւագին կեանս կենցաղոյս: Այլ նա՛ թերեւ մասնաւոր  
զուարթութեանն կարողութիւն գոլ հասանել, եթէ մինչեւ յայս մի-  
այն ինձ աղէտս հարկեցեալ կրելի եղանէր: Բայց արդ այժմ խո-  
ցոտումն ի վերայ կարէ՛վէր արկածից զնի՛ բնակելով դէմ յանդի-  
ման փափագելոյս: Եւ մանաւանդ զանիբաց բառնալի եւ ահաւոր  
կրճիմն ի մէջ անկեալ կենդանական եւ բոցեղէն պահապանացս  
ոմանց առ ի զգուշանալ սրանչեւագունիս կարգեցելոց<sup>32</sup>, ոչք զօրէն  
անհաշտ հակառակորդաց ի զարհուրեցուցանելն միայն զինեալք եւ  
ընդ նմին անհատ լուսաւորութեամբ ի տունջեան եւ ի գիշերի ի լու-  
սաւորն եւեթ պատրաստական հրամայեալն իւրեանց վայր եւ յա-  
ղագս այնորիկ խանդակաթս տխատանք հանդերձ երկիւղալից ահիւ  
գրեթէ հեղձամղձուկ առնել զթշուառականս յարձակին այր՝ տես-  
լեամբ լոկ եւ անճաշակ ի բարեացն վայելմանէ արգելլով:

Բ Այլ թէպէտ եւ վրիպեցի յոյժ հիբացեալս ես, սակայն լաւա-  
գոյն վարկանիմ առ ասացելովքս յիշատակել եւ զկանխան իմ  
եղեալ փառաւորութիւն, որով ուրախանայի անախտապէս յանտրո-  
տումն բերկրութեան այսպիսաբար իմն վայելիւք: Քանզի նախա-  
սկիզբն իբր առաջին հիմն ցնծալեացն իմոյ հաստատեցաւ այն, զի  
յանարգ եւ յանզգայ նիթոյ գոյացեալ կերպարանեցայ բաւական  
աջովն պատուական կենդանի, այլեւ բանաւոր ես եւ իմաստու-  
թեան շնորհի բնգունող: Եւ դարձեալ զի ճշմարտապէս նկարագրու-  
թիւն աստուածային պատկերին<sup>33</sup> ծագեալ ի սեփհական տաճարի  
բնակութիւնս, լուսաւորագոյն ինձ զկանխաղէտ տեսութիւնն հան-  
դերձ անաղտ մաքրութեամբն զեկուցանէր, հանդիպել աներեւութիցն  
երեւելապէս զեր ի վերոյ ամբարձմամբ բան զբնաւ երկրաւոր լինե-  
լութիւնս բարձրացեալ թագաւոր<sup>33</sup>, եւ ոչ այլուստ ուստեք յաւէտ  
բան թէ նոյն ինքն յինէն իսկ առելով մասամբն պաշտպանեալ յար-  
մարեցաւ հարազատ օգնականութեանն լրումն: Պատուեցայ այնու-  
հետեւ եւ աւարտեալ բարութեամբն առ ի հաւատալ զարեւելիայ  
տնկագործութեանն վերակացութիւն<sup>34</sup> եւ զնոյնս առաջի առնել ա-  
ռատաշնորհ պարգեւատուին ի բոլորէն խրախանալ հեշտալի շա-  
լիկանութեամբ: Յորում հանգերձ այլովքն ամենքումբք տուաւ իշ-  
խել անգամ եւ որ ի միջոցին ես տնկեալ կենացն է փայտ, որ ար-

9—10 AEI<sub>2</sub> գիշերի լուսաւորն  
11 BCF խանտակաթս  
14 EK<sub>2</sub> վրիպեցի  
16—17 Z(Z<sub>2</sub>)CDI յանս բտում  
22 Z<sub>2</sub>AI ծագել  
24 Z<sub>2</sub>AEI<sub>2</sub>M անախտ

դարեւ կենդանարեւ պտղաբերութեամբն բնձեռէր զինքն ինձ ի վա-  
յելումն առաւելու բարի ի բարիս: Տի՛ նա, ես բնկալայ զպատուէր  
հրամանի իբր օրինաւոր ամբութեանն պահպանական ասանդ ի ձեռն  
փայտին գիտութեանց գիտելոյ դրարի եւ զլար<sup>35</sup>. Եւ այնպէս յամե-  
նայն ժամ առ նոյն ինքն կատարեալ օրէնսդիրն հայելով զգուշա-  
բար՝ անհաղորդի մնացի ի ճաշակմանէն աներեւութացեալ շարին,  
միշտ վայելչացեալ մանաւանդ շնորհի զլուսաւորագունին երանու-  
թեանցն՝ անձնիշխան կամօքն ազատանալ<sup>36</sup> ի բունազատողական  
հարկաւորութենէն, լինելով աստուածանման: Ի վերայ այսոցիկ ա-  
սացեալ բարեաց, յայնժամ ապա ես ոչ գիտէի անհոգացեալ զիմա-  
նալի շարին մախանս, որ թափուր թերութեամբ ունայնացեալն եւ  
անխառն ի բարւոյն ընդդիմամարտն գոլ եւ դարանակալ ըինու ինձ  
սպասելով, յողայր աւարել զգեղեցկայարմար կենացն անմահագու-  
նից յօրինուածս եւ եկեալ զիս թշուառացուցանել կամելով պատճա-  
ռաւ իմն ցաւակցի եւ զօրէն իբրու նախահոգակ խրատու վարելով ի  
չարահնար խարդախութեանցն պատրանս<sup>37</sup>: Բայց այն էր ճշմար-  
տութեամբ մարտ՝ յիսորիմ պատերազմողի յարուցանել ընդդէմ իմ  
ի գլորել եւ ոչ ի կանգնել: Քանզի հայեցեալ այնուհետեւ ի պար-  
զամիտ բնութիւն եւ դիւրահաւան զուգակցիս, երեւեցոյց զձեւ  
հրձ գրգռեալ, սովաւ եւ ես սայթաքեալ անկանելով ի վայր ի հի-  
մանէ հաստատուն խորհրդոյ՝ ի պատուիրանազանց կամակորու-  
թիւն, յորմէ եւ գտայն բեր ի վերայ փոխանակ բարեխնամ հայրենի  
բաղցրութեանն՝ անձանօթանալոյն եւ զժուարպուր, լուսանացն  
բան: Այլ բնկալայ ընդ անաշխատ հանգստեանն՝ տաժանելի ջան  
եւ ընդ ուրախանալոյն ի բազմապատիկ վայելմունս բարեացն՝  
եւ ընդ ուրախանալոյն ի բազմապատիկ վայելմունս բարեացն՝  
փշոյ եւ տատասկի բուսուցումն եւ ընդ հրաշալի անապականու-  
թեանն՝ այսրէն ի հող զլուծումն հանդերձ թշուառական զուգակցա-  
ւքս, որում նմանապէս հրամայեցաւ այլովքն առ իս դարձ, եւ հեծու-  
թեան ցաւօք որդեծնութիւն:

գ. Եւ արդ ո՛րպէս եւ կամ ի՞նչ իւրեք արդեօք մէջ այսքանեաց  
նեղութեանց շուրջ զինեւ սաստկացելոց զթանձրամած տխրակա-  
նացս կարիս կարացից փարատել<sup>38</sup>, թէ ոչ որ զի որպէս թուիս,  
պատշաճեցի փոքր ի շատէ յոյս միխիթարութեան անկանգնելի

1 CFI<sub>1</sub> պտղաւորութեամբն  
6 BH մնաց  
13 Z(Z<sub>2</sub>)EF աւերել











5 յայտնէր զիրմէ կարծիս տալ ճնորի խրախուսանօք, իբրու թէ ինքն  
 իցէ տուիչ յաղթութեանն, եւ ոչ այլ որ<sup>55</sup>: Որ այնորքիկ սուտ կարծիք  
 եւ վերին անգամ երկնաբաղաբացի զօրականացն անարժան գոյ,  
 10 թո՛ղ թէ մարդկային տկարութեանս եւ ամենեւին իսկ ոչ: Ընդ այս  
 կարի յոյժ եւ իմ դժուարեալ յառաջադէմ լինէի յայնժամ, ընդ զըժ-  
 նեայ ապարասանութիւնն շարագոյն թուելով առաւել քան թշնա-  
 մանօք լի եւ աղարտանս անձինս<sup>56</sup>, ընդ կիտաղրեալն յաղթութիւն,  
 15 զոր սահմանէր բանիւ ազատութիւն յաղթութեան այլազգեացն, եւ  
 ծառայութիւն պարտութեան երրայեցւոցն. եւ անդէն ի գլխովին ա-  
 նուն պարծանաց յաւիտեան իւրումն ծառանգեցուցանէր անձին,  
 20 ցուցանելով սուտ վերերեւութեամբն<sup>57</sup> զանյայտութիւն պարծանա-  
 ցրն: Յորմէ ամենեւին վրիպեալն գտաւ, եւ եղև ոչ ըստ այնմ օրի-  
 նակի, այլ որպէս տեսանիս՝ լուծեալ ի վայր յինէն ի մանկագունէս,  
 25 զոր յառաջագոյնն ելից քինու, եւ այժմ անկեալ կայ ծաղր եւ երե-  
 ւոյթ ձեւով<sup>58</sup>:

գ. Բայց արդ լիցի կարի քաջ յայսմ, զի կատարեսցին ըստ սո-  
 րին ուխտադրութեան խորհարեալ<sup>59</sup>, եւ մերքս մտցեն ի մէջ բա-  
 նակին եւ հարցեն զզօրսն այլազգեացն. եւ այնպէս անխնայ ի դուրս  
 20 զզէն եւ զաւար նոցին առեալ բերիցեն, հրձիգ առնելով զգաւառս  
 նոցա, քանզի զքաղաքս, ի ծառայութիւն վարել զազգն, եւ համա-  
 ջինջ ի միջոյ զօրինացն բառնալ զամբարիշտ սովորութիւն<sup>60</sup>: Եւ  
 հաւասարապէս յօժարութեամբ յայնժամ ապա ի խոր խաղաղութե-  
 նէն<sup>61</sup> յաւէտ եւ զմերսն ծաղկեցուցուք օրէնս՝ հանգերձ քաղաքօքն,  
 25 եղեալ նուիրեսցուք ոչ այնոցիկ զյաղթութեանն պարս զինուց եւ  
 կազմութեանց մերոց առաւել քան թէ ստացողին բոլորեցուն<sup>62</sup>: Եւ  
 մանաւանդ ինձ առանձինն դարձեալ եղիցի նոյն խրատարանութիւն  
 ի դէպ՝ ապաստանել ի վերին օգնականութիւնն, եւ ճշմարտապէս  
 հրամայեցայց յապաւինելն միայն զօրութեանն Աստուծոյ ձեռին  
 30 գործ: Եւ յայնժամ ապա աւելի քան զասացեալսն ըմբռնեցից զբա-  
 րիսն՝ առաջնորդել Իսրայէլի, տիրել թշնամեացն եւ ի խաղաղու-  
 թեան միշտ զբազմախնճոյսն պահել քաղաքսն<sup>63</sup>:

6 A1K1 ապալասանութեան  
 17 Z(Z3) խորհրդադրեալ  
 18 ADEI2 հարցցեն, ZD զզօրս  
 19 BF գէն  
 23 ZBHI զմերս  
 24 ZBHI յաղթութեանն  
 28 Z(Z3) ձեռինն

<4.> Զի՞նչպիսի ապա բանս ասացել Պօղոս ի շրտնու աչացն<sup>64</sup>  
 ա. Ստոյգ արդարեւ այս ուրեմն ի վեր է քան զմիտս զարմա-  
 ցումն եւ ճշմարտապէս գործ աստուածային սքանչելեաց, որ զմի-  
 2 շաւորս շուրջ զինեւ սաստիկ փայլատակումն ճառագայթից ծա-  
 ւալեալ՝ բլշեցուցանէ զբնական ներգործութիւն տեսանելեացս<sup>65</sup>. Եւ  
 5 ահա անկեալ դնիմ լի սարսափելի եւ սրտապախ պակուցմամբ:  
 Եւ առաւել եւս հրաշալի այս, զի ոչ ի հակառակէն լուսոյ հարկա-  
 նիմ անտեսութեամբ<sup>66</sup>, այլ յորմէ արժանաւոր թերեւս լուսաւորա-  
 ցոյն եւս իմոց լինել երեսաց, այսու ի ներքս մտանէ աղջամղջին  
 10 կուրութեանս խաւար: Միանգամայն յարեալ լծակցի ընդ սմին եւ  
 ահաւոր բարբառ հնչեցուցանելով սակաւութեամբ<sup>67</sup> զմեծութիւն մոլո-  
 րութեան անձինս՝ առ ի զարհուրեցուցանել եւ զխաղաղացեալ  
 յապահովութիւն լսելեացս: Յայսցանէ կրկնապատիկ ահաւորու-  
 15 թեանց արտաքս մերժեալ հեռանայ յինեն եւ գոնեայ փոքր ինչ  
 քաջալերութեանն պնդակազմ հաստատութիւն: Նմանապէս եւ՝ զու-  
 ղեկցացս փոխանորդէ զպնդութիւն՝ լքումն, եւ զխորհել եւ զի-  
 մանալ՝ անզգայ թմբրութիւն, ոյք հաշեալք ահաբեկութեամբ գտա-  
 նին ի մէջ կիսամահ տագնապի<sup>68</sup>: Ուստի հարկաւորապէս կարծեմ  
 20 զփորձ առնելով այսպէս նշանաւոր երեւանս՝ անկար հասու գոլ  
 կատարեալ տկար եւ հոգեղէն բնութեանս: Այլ թէպէտ եւ զիջանէ  
 ձայնիս ի փոքր քաղաքէ նազարացւոց զինքն անուանել<sup>69</sup>, սակայն  
 ճանաչի ի կատարումն այնր զօրութեան, որով արարածք հաստա-  
 տեցան եւ պահին:

բ. Բայց ոչ անգիտանամ զփորձ զարհուրեցուցանողի դիպու-  
 25 ծոյս յաղագս յառաջագոյն խոտորելոյ յուղիղ ճանապարհէ՝ ճշմա-  
 րիտ խոստովանութեանն եւ զընդդէմ համբարձումն<sup>70</sup> աստուածա-  
 յին կամացն՝ բարեպաշտութիւն համարելոյ: Այլ եւ այսպիսի ջեր-  
 մութեան եւ ի նմին անհաւատութեան մնալոյ լինէր պատճառ նախ՝  
 զի յառաջին տիոց հրահանգեալ առ ոտս հաւատարմի վարժողին՝  
 30 ստանայի զփարիսեցւոցն քաջուսումնութիւն<sup>71</sup>: Նովիմբ դարձեալ  
 գիտութեամբն ծանօթանալ ինձ քան զամենայն ազգաց վերագոյն  
 փառաւորութիւն իմոյս ազգականաց ընտիր տոհմի ոչ անծանօթ  
 եղեալ, եւ եթէ ո՞րպէս սքանչելի տասնպատգամեան օրինադրու-  
 35 որոյ պանծալի իբրու բարենախանձ իմն յորդորմամբ ի հայրենի  
 տւանդութեանն գիտել, որով ձեռնամուխ լինէի այնուհետեւ յաւա-  
 28 Z2CFHM անհաւանութեան 35 E1 բարենախանձն



5 րումն եկեղեցւոյ. ոչ խնայէի ի մատնել զգասս հաւատացելոցն ի  
 րանտարգել շարշարանացն նեղութիւնս<sup>73</sup>, եւ զի կատարման առաջ-  
 նոյ նահատակին անխափան պարապումն սպանողացն ինեւ առա-  
 5 էլ գայր ի բովանդակութիւն<sup>74</sup>: Եւ այսպէս օրինակ իմն առաջնորդ  
 հալածչացն առաքելականն պարու լինելով՝ յամենայն ժամ ջանա-  
 չի աղարտել զճշմարտութեանն զարգացումն, մինչ զի ոչ միայն  
 զբնակեալան յԵրուսաղէմ, եւ կամ թէ որք շուրջ զնովա մօտաւորք  
 ի յամբոխելն զնոսա պատրաստական, այլեւ հեռարնակ սուրբս<sup>75</sup>  
 10 անչրելի քինապահութեամբ գրգռեալ՝ ի գուպար յարծակէի, եւ յայտ  
 յորում ըմբռնեցայս տանել գրով ամբաստանութիւն անբստգտանե-  
 լեացն<sup>76</sup>: Ընդ որոյ խափանմանս այժմ չիրաւի հատուցից յառա-  
 ջիկայսն յինէն գովութիւն Աստուծոյ, որ ոչ ըստ յանդանարբար բեր-  
 ման շարաշար սատակմամբ շիջոյց զկենդանութիւնս, այլ շնորհե-  
 աց խրատ զգաստացուցիչ ստահակութեանն:

15 գ. Զոր եւ իմ ընկալեալ կոխեցից զանհնազանդութիւնն հլու  
 հաւանութեամբ, դարձուցից զհայհոյող լեզուս ի բարեբանել զտէր  
 եւ խրատել զմարգիկ. եղէց փոխանակ հալածչի՝ քարող, ընդ աւա-  
 րողի՝ գերել զմիտս ամենեցուն ի հնազանդութիւն Քրիստոսի: Եւ  
 եւ հիմն այսոցիկ եղից զլուսաւորութեամբ աւազանին կնքումն,  
 20 առաջնորդեցայց ի լուսաւորացն ի տեառնէ կոչեցելոց՝ գալ ի գի-  
 տութիւն ճշմարտութեան: Հանդերձ այսորիւք եւ այսպիսեօքս եղի-  
 ցի ինձ աւարտ կատարելական ընտրելոց նախնեացն բարեյուսու-  
 թիւն, որպէս զի եւ նոցունց ցնծալի բարեացն խոստացելոց ժա-  
 րանգող լինել պատրաստեցի անվթար:

25 <5.> Զի՞նչպիսի բանս ասացէ Պետրոս զկնի ուրեւալոյն գուր<sup>77</sup>

30 ա. Ո՛վ սաստկագոյն հառաչումն եւ ցաւագին հեծութիւն<sup>78</sup>, որ ի  
 դժպատեհ յարծակելով ի վերայ՝ լնու խաւարազգած մթարութեամբ  
 զոգույս լուսաւորութիւն եւ ճմլեալ հեղձամղձուկ նեղութեամբ աղի-  
 տից՝ թարշամեցուցանէ զգօրութիւն բնութեանս, եւ այսպիսի կա-  
 պանաւոր եւ յանսփոփելի սգոյս բառնայ յինէն քաջալու յոյս մխի-  
 թարութեան: Քանզի ահա անկար օրինակ մեծի բարւոյ անսխալ

7 Z(Z<sub>2</sub>)CDH եւ om  
 9 Z<sub>2</sub>ACEFH գրգռել

25 Z գտէրն  
 31 Z(Z<sub>2</sub>) նկար

հաւատոյն, եւ յառաջաձայնեալս ի տեառնէ վէմ<sup>79</sup>, շարժիմ ի բարձր  
 աստիճանէ կատարելութեանն՝ յամենեւին ի ստորին եւ ի վերջին  
 խոնարհումն. մինչ զի ոչ ի մասնաւոր յանցանաց իմեքէ յաղթա-  
 5 հարիմ՝ խանդախանս առ մերձաւորն նիւթելով, եւ ոչ ի մարմնաւոր  
 կարեաց իմեքէ յեղում ի վրիպանս, այլ բովանդակ բաժանումն ի  
 կենացն աղբերէ ել, եւ խոտորումն ի ճշմարիտ ճանապարհէն ինձ  
 առաջի անկեալ կատարի: Եւ զսոյն փոքր ինչ թերեւս եւ դիւրակրելի  
 գու<sup>80</sup>, եթէ ի գայրացմանէ զազանաբարոյցից ոմանց ահաւոր իշխա-  
 նաց ելով՝ ընդդէմ աստուածպաշտութեանն համբարձելոց, ոյք  
 10 բազմապատիկ տանջարանացն պակուցմամբ բռնադատեն հաստա-  
 տել զստութիւն իրբու զստուգութիւն. եւ կամ թէ յայլմէ ինչ գու ի  
 բռնաւորական եւ յանժուժալի դիպուածոյ ցուցանել զյանկարծա-  
 դէպս հեղեալ ի վերայ հիբութիւն: Այլ զի ոչ ուստեք այժմ բարե-  
 տոհմիկ կերպարանիս ազատութիւն իջանէ ի ծառայական ամբա-  
 15 րըշտութեան զառածումն, բայց միայն որպէս ստուգեալ ճշմարտիս  
 ի վատթար եւ ի նուաստ բնութենէ, մանաւանդ թէ յապատոհմիկ  
 իսկ կնոջէ<sup>81</sup>, որ արդէն հարկեցուցանէս գոգցես զօրէն բռնաւորա-  
 դունի: Գարձեալ զատողականս խիղճ հոսեալ անբնդհատ յերկա-  
 20 րութեամբ յորդաբուխ արտօսք եւ զգորովալիր ողբովք զկակա-  
 նումն տանելով զթշուառական պատահումն մեղաց: Ո՛վ անհնա-  
 բին եւ արտատեղի տարակոյսք ողորմելի ողբերգութեանս, իբր որ-  
 պիսի՞ վտանգիւք ամբարշտութեան եկեալ հանդիպեցար ինձ՝  
 սաստկացուցանելով զանմխիթարական տրտմութիւն մի քան զմի  
 ի վերայ արկանել:

25 բ. Եւ զի ոչ արտաքոյ արժանաւորին այս է բան, մանաւանդ  
 յորժամ զառաջինն եւս զիմ չիշատակեմ զանցս բարեդիպութեանցն.  
 ուստի սկիզբն անհակառակ աշողուածոյ առաջնորդութեանն գիտեմ  
 հնչեցուցեալ առ իս զտէրունականն քաղցր բարբառ<sup>82</sup>, որ անդէն  
 վաղվաղակի ընդ լսելի լինել, փութացայ արհամարհել զի մանկու-  
 30 թենէն աշխատութեամբ կեցեալ զաշխարհականսս<sup>83</sup>. Եւ միանգա-  
 մայն անխափան զնալ ընդ շաւիղս ծագեցոյ փրկական լուսաւորու-  
 թեանն, յորմէ եւ պատուեցայ այնուհետեւ առաջնոցն առաջագոյն  
 գու զահերիցութեամբ: Այլ ես արժանաւոր լեալ պատուի անապա-

9 Z<sub>1</sub> համարձակելոց, FIK<sub>1</sub> համբար-  
 ձելոյ  
 12 FIK<sub>2</sub> յանժուժելի

28 I քաղցր քաղաքաց, Zհին<sup>7</sup>/<sub>2</sub> բոլորը՝  
 քաղաքաց փխ. քաղցր  
 30 FHI զաշխարհականս



կան փառաց եւ թափորական էի ի լերին, տեսանելով հաւատարմօք  
 եւ լուսազգեստ վկայութիւն զանճառելի այլակերպութիւն փառացն  
 տեսան<sup>84</sup>, ուր զի եւ առ յոյժ հեշտանալոյն իմոյ ի նորահրաշ հան-  
 5 գըստարանին, յօժարէի առնել ի նմին զանհետանալի բնակութիւ-  
 նն<sup>85</sup>, եւ երանի թէ յայն եղեալ էր ամրոց դժուարարժեքի խրամա-  
 տութեանս: Առ այսորքիւր բաւականացեալ էի յամենայնի ոչ միայն  
 յայլսն կենաւտ փրկութիւնսն, այլեւ յառողջամիտ եւս հարցուածի  
 լցեալ լինէի վարդապետական շնորհալից իմն կանխագիտութեամբ,  
 եւ անդրէն պատասխանովն դաւանեցի ստուգապէս եւ երանեցայ  
 10 ամենաբարի երանութեամբ: Այլ նա նմանապէս ասացելոցս այն-  
 բան բաւականացայ փորրոզի զնիւթական ծանրութիւն բեռինս առ-  
 նել, մինչեւ համարձակեցայ առնուլ օրինակ իմն որպէս ընդ հաս-  
 տատուն ընդ յատակ ճահապարհորդել ընդ անկայուն եւ շարժուն  
 երբեմն բնութիւն ջրոյն, որ ի ծովուն<sup>86</sup>: Եւ այնպէս ահա աւելի քան  
 15 զսոյն ամենայնիւ բարեկրեալ՝ զուրճանայի թագաւորաբար ճո-  
 խութեամբ, աւարելով զաներեւոյթ բանակսս հակառակորդացն: Ընդ  
 նոսին հալածականս եւ զախառժետութիւնս երկաքանչիւրոցն առ-  
 նէի՝ հոգւոյ եւ մարմնոյ<sup>87</sup>: Եւ զի՞ եւս մի ընդ միոջէ թուեցից. բոլո-  
 20 րովին իսկ այսպիսի սքանչելագործութիւնք օր քան զօր նորոգելով՝  
 ի միտսն զարգացուցանէի զչերմեռանդ սէրն ընդ անբաւ բարեացն  
 պարգեւողին իմոյ Քրիստոսի: Ընդ որում եւ մերձաւորագոյն յան-  
 ցելում գիշերիս ի յաղօթելն աղօթակից լինէի<sup>88</sup>, բայց եւ ինքնաձեռն  
 ի վրէժխնդրութիւն ունողացն էի: Զոր եւ ծանուցեալ հաւաստի դի-  
 տաւորութեամբ ամենատեսին, սակայն եւ այն օր խնամարկելով  
 25 արգելոյր զառաւել քան զարժանն զհամարձակութիւն՝ աստուածա-  
 բար զգուշացուցանելովն ի բաց զնել երկայնմտութեամբ զմարդ-  
 կօրէն յոխորտութիւնն<sup>89</sup>, եւ ուսոյց առնուլ զհեզ նուաստութեանն  
 պատուիրան<sup>90</sup> եւ այնպէս մինչդեռ կամէի անհաւան վիճարանու-  
 30 թեամբ զամենեքումք ելանել զզուգակցօքն, նորին աղագաւ աւա-  
 սիկ քան զամենեսին իջի խոնարհ՝ գայթակղութեամբս<sup>91</sup>:

գ. Ուստի եւ զի վերելսն եւ լաւագոյն կանգնումն<sup>92</sup> յուսացայց  
 նովիմբ յուսահատելոցն օգնականաւ գտանել. արարից նախաշաւիղ  
 վերստին ուզղութեանս զհակառակն այնորիկ, յորմէ գթեցին, զի

1 ZAF լերին, BCDFK1M տեսանելովն 16 DE աւերելով, D1 բանակս  
 5—6 AZ3BDFHK խրամատութիւնս 30 ZE1 զամենեսան  
 31 ZKM ի խոնարհ

զոր սակաւուցն առաջի քակեցի, առաջի բիրուց եւ բազմաց ան-  
 գրդուելի դաւանութեամբ շինեցից յաւելուած բարուր յորդորման, ի  
 բոլոր յուժոյ եւ յօժարամիտ ջերմութենէ մաքուր սրտի եւ խոնարհ  
 5 անձամբ զգեցայց զղջումն ապաշաւանաց: Նաեւ որ վրիպակ ազ-  
 դեցմամբ զկենացն բան լուտացաւ լեզուս, շարժեցի յայսմհետէ  
 ի նորին փառս բարեբանել եւ յուսուցումն մոլորելոցն: Ընտանաս-  
 ցի ընդ այսոսիկ եւ համբերող ժուժկալութիւն, զի թէ եղիցի ծովա-  
 կուր ընկղման մատնել եւ թէ ոմանց մարդախոշոշ զազանացն  
 վատնումն, սակայն կամաւորապէս դիմեցից իբրու յարգարեւ կա-  
 10 րապետ ուրախութեան. որպէս զի առ սակաւ սակաւ արծարծմամբ  
 լաւագունիցն հասից յառաջին ծայր կատարելութեանն. եւ եղէց  
 փակակալ արքայութեանն, հիմն եկեղեցւոյ, եւ հոգւոյն սրբոյ ըն-  
 դունող, եւ միանգամայն վայելող հանդերձելոյ եւ յաւեժակայ բա-  
 րութեանցն<sup>93</sup>:

15 <6.> Զի՞նչպիսի բանս ասացէ Յորդանէս բաժանեալ յեղիայ<sup>94</sup>  
 ա. Բռնադատիմ ահա եւ յոյժ վարանիմ յերկաքանչիւր կող-  
 մանց ի բնութենէս միանգամայն եւ ի հրամանէ առնս Աստուծոյ.  
 վասն զի բնութիւնս հզօրապէս զի վայրն հոսանից ունի կարգ<sup>95</sup>. եւ  
 սա այժմ բատ ոչ սովորական սարասի հրամայէ ինձ անդրէն ի վեր  
 20 կոյս ընդ կրուկ զիմս առնել դարձ, եւ իսկոյն բաժանմամբ հուն  
 ճանապարհի եւ զիրագոյն անցս իբրոց պատրաստել ոտից: Եւ զայս  
 ոչ գիտեմ թէ ո՞րպէս ի դրութեանն զիս ինքն կարեմ կացուցանել՝  
 25 զատել եւ որոշել, եւ համանգամայն ի մարգարէէս գեղեցկապէս  
 զերժանիլ կամաց: Քանզի միոյ կողմանս՝ թէ եւ կամիմ իսկ հարկա-  
 նել զսովոր սիրոյ սպասաւորութիւն, անկարելի գոլ յաղագս յոր-  
 ձանիցս անարգելութեան, եւ զերկրորդիս դարձեալ թէ անտես եւ  
 30 ծանրացս անարգելութեան, եւ զերկրորդիս դարձեալ թէ անտես եւ  
 ծանրացս, եւ ծանր եւս եւ ընդդէմ աստուածային նախախնամութեանն  
 գործոյ: Եւ արդ՝ իբրեւ յանհնարաւոր ի մէջ երկուց այսոցիկ անց-  
 եալ կամ վատնգից, եւ ոչ զմի ոք ի սոցանէ կարեմ ստուգապէս  
 ճանաչել ընտրմամբ զաջուցն եւ զահեկիցն, որպէս ասացին:

7 AE1 այսորիկ 24 ZEF1 զերժանել  
 8 EI մատնել 29 EI անհնարաւոր  
 9 EI արգարեւ 31 K որպէս եւ  
 20 Z(Z4)AE1 կրունկ



5 ԲԱյլ միայն զի վաղվազակի յայսմ նեղութենէ գայ վաղնչուցն  
 անգորր յիշեցեալ ինձ բարեբախտութիւնքն, զոր արդեան տարա-  
 կուսանացս բերեմ ի սփոփանս՝ այսպիսի բան: Ուստի նախ առա-  
 ջին էջս առեալ յանուանեալ ի Լիրանան լեռնէ միայն ես<sup>95</sup> եւ զոյս  
 5 բաշ գեղեցիկ զուարճացմամբ զաւետեացն սնուցանէի երկիր ար-  
 բուցմամբ<sup>97</sup>, շայնկանացեալ ի տունկս եւ ի բոյսս. եւ համօրէն  
 գրեթէ ամենայն գեղիցն եւ քաղաքաց, անբանիցն եւ բանաւորաց  
 պատճառ գոլ անցանել ի բազմութիւն եւ շէր ինչ յայնցանէ մնաց-  
 եալ բարեաց, զորս ոչ ինձն էր հաւատացեալ նախախնամութեամբ  
 10 լի երանութիւն՝ եթէ յերկնուստ եւ եթէ յերկրէ: Տի՛ նա եւ հոյանունս  
 էի պարծանօք, որ թէ կային եւս այլ խաղացմունք ուրեք լայնութե-  
 ամբ եւ խորութեամբ յաւէտ քան զիս, սակայն ոչ այնպէս զիրա-  
 քանչիր գաւառս ամենաբարիք համբաւեցան, որպէս եւ ես յատուկ  
 ի պարգևացն երկրի<sup>98</sup> յղփանայի երջանկութեամբ, եւ այնպէս մինչեւ  
 15 ցայժմ գրեթէ անգնալի խորութեամբն բնակչացն հանդիպեցայ. եւ  
 ազատարար ոչ բնաւ ումեք ծառայել հնազանդեցի, բայց միանգամ  
 եւնթ այսպես յաստուածատեսակն բռնազատեցալ ազգս<sup>99</sup> եւ զայն  
 ի վերուստ հրամանէն տեղի տուեալ խորշեցալ երկիրսիւ եւ անդրէն  
 20 զիմն արարի գնացս իբրու պարիսպ նոցա գործելով անցի կրեկաց  
 զտապանակ ուխտին տեառն, եւ պաղեալ այնպէս ցամաքութեամբ  
 կացի պաշարեալ, մինչ զի ոչ իշխեցի եւ ոչ զմիոյ ուրուք թանալ  
 զկօշիկս<sup>100</sup>: եւ սակայն զիրարգ եւ էր պատճառաւ մեծ սքանչելեացն  
 եղեն առ իս յայնժամ զօրութիւնք, զոր թուի թէ ահա յառաջիկայս  
 ուրեմն զնոյն հասցէ գործ:

25 Գ. Որով համարձակեալ իւ իւ է հնարիք առից այժմ զտեղի  
 ճանապարհ արարից, եւ ի հետ աստուածայինն երթայց կամաց,  
 որպէս եւ ամենայն հաստատեալքս եւ արարեալքս ի նորին վարին  
 բանէ: Ըստ նմին օրինակ եւ ես ցուցից մեծապէս հնազանդութիւն,  
 եւ քան զերբեմն կարմիրն ստացեալ ծով<sup>101</sup> եւ եղէց սիրելագոյն եւ  
 30 գլխաւորագոյն ի գետոց եւ միւսանգամ ընդունակ որպէս կարծեմ  
 այնմ հրաշից մեծի եւ գերաշխարհիկ բարույ՝ ակնկալութեամբ ա-  
 ւետեաց, որ ոչ այլում ումեք լիցի ջուրց համօրէն ամենայն գոյա-  
 ցութեան ընդ ենթարեգակամբս<sup>102</sup>:

17 FI յազգէ  
 23 CEFIKM առաջիկայս

25 Z ABCDEFHIM հանապարհ օտ.  
 27 ZABE հաստատեալք

<7.> Զի՞նչպիսի բաւս ասացէ, որ ի միջոցս երկրի բնակեալ  
 առային գծով տեսեալ<sup>103</sup>

5 Եւ Ո՛վ նոր իմն եւ սքանչելի անկարծելի տեսիլ, իբրու ո՞րպիսի  
 զարմանալեօք<sup>104</sup> եկեալ հանդիպիս ինձ, անքննելի հաստատութիւն  
 եւ ահագին պակուցանող տարեր, զորմէ եւ ոչ ընդ միտ անգամ  
 5 ածի խորհրդօրէն: Սա ահա գողցես յանկարծօրէն իմն այսմ զեղա-  
 նի հոսանուս ունելով բնութիւն, եւ մի միանգամայն ցոյցս երկիրի  
 յիս կացուցանէ: Եւ ի սոյն յորժամ հայիմ տեսանել, զի է ոչ այլ ինչ  
 ի յաւեժակայ գոյացութեանցս, բայց միայն ջուր համատարած ան-  
 10 պարագիր մեծութեամբ ծաւալեալ եւ յոյժ բացերեւակ դիմօք անդր  
 եւս քան զտեսանողականս գերազանցէ զօրութիւն՝ հարթարդակ  
 բնակութեամբս: Եւ այս զի ոչ ի լերանց պարունակի սահմանաւ,  
 եւ ոչ մի ինչ ցամաքային էութեամբ, այլ զի երբեմն կայուն ան-  
 15 դունդս է եւ երբեմն շարժուն, իմանամ վերագոյն դիտաւորութեամբ  
 ճշգրտեալ: Բայց թէ ո՞րպէս մերթ խաղաղօրէն ձեւով քստմենալ  
 ծածանիս, եւ մերթ լի ամբոխի զինէն յարուցանէ ալիս, ճմարտէ  
 ոչ զմու, յայսմ վարանեալ տարակուսիմ, լընտրման: Տի՛ նա զսոյն  
 20 զարձեալ գիտեմ, զի եւ անհասանելիք են խորքս, եւ անքննելիք  
 համբարեալքն ի սմ մեծութիւնք: Այլ թէ զի՞նչ ի միջոյն եւ այսր  
 լեռնօրէն յորձանօքս բարձրացեալ կուտակէ զանհատ ջուրց պա-  
 25 րարերութիւն եւ համայն իբրեւ կարծիս տայ անարգիլ բոնութեամբ  
 լընկղմումն վրիպակ յարձակել ի յաշխարհայս, որ միայն ոչ եմ  
 անգէտ, որ կարի յոյժ յայտնիս է: Վասն զի հասանելով ի յեղերս  
 խորտակի սպիտակացեալ ալի ցուցանել եւ աներեւութացեալ այնու-  
 25 հետեւ աւելի գոլ քան զայս եւ ոչինչ<sup>105</sup>, Բայց ո՛վ զարմանալի եւ  
 նորոգ տեսութիւն, զոր յառաջագոյն ոչ նմանապէս այսորիկ կարծէի  
 զսմանէ:

Բ. Այլ թէպէտ եւ լուր ընթացից ծամանեալ սորայն հասանէր ի  
 լսելիս, սակայն յորժամ պատմեալ լինէր, թուէր որպէս սակաւ ինչ  
 30 բաղկացեալ գոյացութիւն եւ նորին աղագաւ համարէի ապա զոր-  
 քանութիւնն լինել զօրէն լճաց ինչ, եւ կամ դուզնաքեայ խաղացումն  
 յորձանից գետոց, որք շափին եզերքք, բովանդակին մեծութեամբ:  
 Եւ բազում անգամ գնալիք մարդկան լինին՝ առ ի յանցս ճանա-  
 պարհի տեղի տալով, եւ թէ երբեմն սաստկանան սակաւագոյն յա-  
 35 ւելլով յուխից ոմանց, այլ յաւէտ ընդ նմին եւ շայնկանութեան եղեն

5 Z ահագինս  
 7 Z(Z3)DHI մի օտ.  
 199



հասեալք՝ եւ միշտ քաջաժայելչութեան իմն արժանաւորս կարգի։  
 Իսկ այս զոր տեսանեմն այժմ ոչ այսպիսի բերէ նմանութիւն, բայց  
 ծովու անհուն լինելոյ<sup>106</sup> ծանծաղի անբաժ եւ վիմաց, յոր թէ մեր-  
 5 ձեցայց հուպ երթալով, հաստատ գիտեմ զի միանգամայն անկա-  
 բացեալ ի սորայն լինեմ համոց՝ զայս իմոցս ցուցցէ մատուցանե-  
 լով քմաց. իբրու ոչ եւս քաղցուն ջուր ըմպելի աւելի քան զաղ-  
 տաղտն գտանել անպիտանութիւն<sup>107</sup>, եւ զմիշտ ընդդէմ հակառակն  
 յարուցմունս<sup>108</sup> աներեւութացուցանելովն յինքեան յաւետախաղացն  
 աղբերաց։

10 գ. Եւ որո՞վ արդեօք համարձակութեամբ համարձակեցայց, յո-  
 բում ոչ դալարեացն երբէք կարացեն ընծիւղել բոյսք, եւ ոչ տնկո-  
 ցրն ցուցին զանագան եւ հաստատուն վայելչութիւնք. եւ ոչ բնաւ  
 ալլում ումեք կենցաղականացս եղիցի յարգոյ եւ պիտանացու յիրս  
 15 ինչ, բայց միայն անցեալ գնասցէ ի բաց երթալով նաւորդացն  
 հմտութեան ընձեռեալ բազմազիմի ջանով շահիւք լի բարեբախտու-  
 թիւն<sup>109</sup>։

3 Z(Z<sub>2</sub>)AEH եւ ի վիմաց

5 Z<sub>1</sub> ցուցանէ, ABCHI ցուց է

12 B ցուց ին, Z<sub>1</sub>K ցուցանին

15-16 FHIM բարեբախտութեամբ

<ԳԻՐՔ IX>

ՍԱՀՄԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ

Արտասանութիւն է բան պատմական ի դէմս ամելով՝ երեւելա-  
 պէս զյայտնեալն։ Եւ արտասանելի է զդէմս<sup>2</sup> եւ զիրս եւ զժամանա-  
 կրս եւ զտեղիս<sup>3</sup>։ Զդէմս, որպէս Հոմերոս՝ զՈդիսեւս<sup>4</sup>. «Տըզնի էր  
 5 թիկամբք՝ սեւագոյն գանգրահեր»։ Եւ զիրս, որպէս Թուկիդիդէս  
 զնաւակոտութիւնսն<sup>5</sup>։ Եւ զտեղիս<sup>7</sup>, որպէս նոյն ինքն<sup>6</sup> նաւահան-  
 գիստն ձմեռնային<sup>8</sup>։ Եւ զժամանակս, որպէս թէ որ անցանիցէ ընդ  
 գարունս, կամ ընդ ալլ ինչ ժամանակ նոյնպիսի<sup>9</sup>։

Եւ արտասանութեանցս ոմանք են պարզք, եւ ոմանք<sup>10</sup> շարա-  
 10 լծեալք։ Պարզք, որպէս յորոց ասացի, իւրաքանչիւր ոք<sup>11</sup>։ Իսկ շա-  
 րալծեալք, որպէս արար Թուկիդիդէս զգիշերամարտութիւն, կոիւ  
 արտասելով հանգիպեալ ի գիշերի<sup>12</sup>. քանզի ժամանակս գիշեր, իսկ  
 իրք՝ կոիւն, եւ արտասէ զերկաքանչիւրսն ի միասին<sup>13</sup>։

Պարտ է յարտասելն զդէմսն՝ յառաջնոց մարմնոյ սկսանել<sup>14</sup>,  
 15 իսկ իրս<sup>15</sup> ի նախէիցն եւ որ ի նոսա է, եւ յետ այնոցիկ հանգիպե-  
 ցելոցն<sup>16</sup>։ Եւ պարտ է ասացուածին դաշնաւոր զոյ, եւ ծաղկել եւ  
 շարամանել ամենայն ձեւովք<sup>17</sup>։

<1.> Արտասանութիւն Արեանամու, յորժամ զչորսն վանեաց  
 բազաւորս<sup>18</sup>

20 Հռչակաւոր եւ յոյժ սքանչելի, որպէս ի բազմապատիկ ընթացս  
 առաքինութեանն զուգահաւասար եւ յանպարտելի քաջարութեանն

2 J պատմական՝ պարունական... պա-  
 տուական

4 N<sub>7</sub> հնդիկ, GIM հնդիկ, FKMN<sub>1</sub>J  
 հնդիկ

6 բոլորք՝ զնաւարկութիւնսն

7-8 J ձմեռն ընդ գարուն

9-10 ABCEFIKMN շարալծեալ

12 J ժամանակն

14 J յարտասանելն

15 բոլորք՝ իրս եւ տեղիս, J այսորիկ

16 J ասացածին, բոլորք՝ ծաղկեալ եւ  
 շարամանեալ



կատարեալ գտանի սպառազինեալն հաւատով հայրապետն Աբրահամ, որոյ թէ զհա՛րդ անշարժ հիմամբ հաւատոյն աւարտեցան ամբողջ եւ միահամուռ բարեգործութեանցն վարք եւ կամ ազգակից նոցին նահատակութեանն հանդէս, որով բարձրագույնս պարծանօք տարաւ եւ զյաղթութեանն քաջապէս անուն: Արդ թէպէտ եւ վկային այսօրիկ հաւատարմաւ մարգարէին Մովսէսիւ, վասն զի նա որպէս արդարեւ զմեծ իմն յիշատակելի գործ ընդ ամենայն հավատեալ պատմութիւնս կարգեաց ի սուրբ մատենագրութեանն զամենեւին ընտիր նախնոյն զբարեք սկիզբն, եւ զբարեյաւ կատարումն կենացն: Սակայն ոչ փոքր ինչ ըստ այնմ օրինակի եւ ես, էր ինչ որում յառաջագոյն իսկ յաստուածային օրինացն լսող եղեալ ասացելոցն զձերունոյն վճարմանց, եւ էր զի պատահեաց երբեմն եւ տեսող եւս քաջամարտիկ նորայն լինել նահատակութեան ըստ կենդանագրութեան իմն ճշգրտապէս նմանութեամբ յօրինուածոյ<sup>9</sup>:

Քանզի ղէպ եղեւ ինձ մտանել յամենապայծառ տեսարան, յորում յիշատակէր քաջացն անմոռանալի քաջութիւնք ի բազմութենէ պատկերագրութեանցն ցուցելոց՝ զոմանց յաղթողաց, եւ զոմանց ի պարտութիւն մատենելոց յարմարեալք: Բայց ոչ ուրուք ի նոցանէ երեսումն բաւական եղեալ այնպէս ձգեաց զմիտս ի զարմացումն, իրրեւ զհիանալի գործ սբանշեկեաց հայրապետին: Որ առ նմին տեսանէր հանեալ զկերպարանս ձեւոյ շորից բարբարոսական աշխարհակալացն, հանդերձ ամենայնիւ պատերազականն մատուցանելով փութով, մեծամեծօք եւ հանգոյն ինքեանց արամբք երեսելիօք եւ անհամար երիվարօք եւ յոլովախումբ եւս հետեւակազօրաւորօք արանց մարտկաց: Այլեւ լցեալք երեսութեանանային աւարառու եւ յորդառատ շահիւքն զոսկւոյ եւ զարծաթոյ եւ զբազմահոյ խաշանցըն առաւելութիւն<sup>10</sup>, եւ առ հասարակ իսկ անգամ եւ զազգակիցս ինքեանց մարդիկ անխնայ վտանգիւ գողցես խաղացեալ վարէին ի գերութիւն<sup>20</sup>: Ոչք եւ բնակեալք էին օրինակ իմն իբրու յանբութ հանգստարանի եւ յանկասկած յապահովութեան ամբացելոց, եւ կարծիս տալով թուէր, եթէ զընդդէմ համբարձեալսն ապստամբացն անհնազանդութիւն վանեալս առաջի եւ զնոցունց զկեանս եւ զժառանգութիւնս ի բոին ունելով պարծէին յոխորտացեալք եւ

9 EI բարեյաւ  
 11 AEI յորում  
 18 EGI<sub>2</sub> մատենելոցն  
 21 Z<sub>3</sub>AEGI հանել  
 27 AEGI գազգակից  
 28 Z<sub>2</sub>AEGI վտանգիւք  
 29 Z<sub>2</sub>EI<sub>2</sub> գերութեան  
 32 Z զնոցուն

ցայնքան բարձրագոյնս պանծային ի վերայ յաղթահարելոցն, մինչ զի ոչ միայն զգուշագոյն պատրաստութեամբն բամահանս առնէին, այլեւ ըստ հեթանոսականն յուսոյն եւ վնասաբեր բարօրութեանն առաջի արկանէին զանսահման շուայտութեան եւ արբեցութեան ընդարձակութիւնս: Զոյս զիտէի այնուհետեւ եւ գլխածանրեալս եւ ցնորիք թմբբութեանն բանդագուշեալս՝ լքանելով յանվայելուչ նիրհումն, եւ փոխանորդելով գրեթէ մինչեւ զտունջեանն ծագումն ընդ խաւարային զիշերոյն գալստեան<sup>21</sup>:

Այլ նա անդէն առ նոսին զեկուցանէ երկրորդ վերնադիրն այնուհետեւ զանուն ընդ ձերունոյն հանդերձ երեքարիւրովք եւ ութիւտասնիւք ընդոճնօք<sup>22</sup> եւ այլովք համանման մարտակցօք, ոչք էին պատրաստք եւ պնդկազմք ըստ ամենայնի պատերազմողացն օրինի, եւ իսկոյն յայնժամ ապա իւրաքանչիւր ոք երեւէր առ յոյժ շերմեռանդն կամաց եւ քաջապինդ արութեան նախածեոն ի խառնումն մարտին առնել: Յառաջանայր հայրապետն քաջալիբելով եւ ընդ նմին զօրանային ի վանումն հակառակորդացն նորուն մարտակիցքն, զկնի որոյ եւ համանգամայն իսկ ընդոճնացն հաւատարիմ դաս՝ ոչ վերջանային ի հանդիսաւոր մարտին գործակցութենէ, եւ որպէս ի վերայ հասանելով հեղգութեան թառամեցելոց ամպարըշտացն բանակի, ոչք առ յոյժ ահին ոչ կարէին բաց փայլ երեսութիւն ընտրել զիւրեացն եւ զօտարացն, եւ յայնմանէ աւելի բան ի վերայ անկելոցն ի միմեանց ստատակէին սրոց՝ ի թշնամեացն գեր ի վերոյ լինելոյ ի զանազան հարկանելոց հարուածս կրկնապատիկ հատուցմամբք շարեացն կացուցանելով ամենեցուն ողորմելի ողբերգութիւն: Եւ ահա յաղթութեանն պատիւ ճշմարտապէս կերպարանագործութեանն աստուածային օգնականութեամբն զօրացելոյ շնորհեալ պատրաստէր ձերունոյն, գերշաց կորուստ եղելով եւ գերելոցն՝ միսանգամ մխիթարական փրկութիւն:

Եւ ի վերայ այսոցիկ ասացեալ սբանշեկագործութեանցն անդ՝ տեսանել էր դարձեալ յաւէտ զզարմանալիս նահատակին գեղեցկաբար յարմարութեամբ խառնեալ ընդ արութեանն եւ զարդարութիւն: Քանզի ձեւանայր ոչ ըստ շահասէր յափշտակող անիրաւութեանցն սովորութեան, ոչք յամենայն ժամ որսալ զաւելաստացութիւնն են

2 Z<sub>2</sub>AEGI զգուշանոցոյն  
 3 CEK<sub>1</sub>M հեթանոսական  
 7 ZABE զծագումն  
 10 Z<sub>2</sub>FGHIM երեք հարիւրովք  
 23 EI հարկանելով  
 33 Z(Z<sub>2</sub>) սովորութիւն



փութացեալք, ալ ըստ իրաւացոյն վարելով՝ յայտնէր իմն լաւագոյն աւարամասն ինքեան առնուլ զնա<sup>23</sup> միայն, յազագս որոյ եւ դիմէր հանդիսաւոր իրին վճարումն. զոր եւ տայր գիտել ոչ ապականացու մեծութեանն զինքն ցանկացող, քան թէ ըստ արուորագոյն հոգւոյն ժրութեան եւ ջերմեռանդն մտացն, ի փրկութիւն հարստահարելոցն փափագելով՝ գալ յայնպիսի իրագործութիւն:

Վասն զի անդէն ի նմին կարգի վերստին հայի յուրումն նորահրաշ կերպարան ապա երկուք մեծարգի աստիճանօք պատուեալ՝ թագաւորութեամբ միանգամայն եւ քահանայութեամբ, ոչր անուն ծանուցեալ ի վերնագրէն, կոչէր Մելքիսեղեկ եւ նա զուարթագին կամօք եւ բոլոր ի սրտէ ուրախամիտ բերկրանօք ընդառաջ էլեալ նահատակին՝ զձեռս ի վեր համբառնալով զմնացականն եւ զյաւեժակայ բարեբանութիւնն ընծայէր. արդարեւ մտահանալի ըստ վայելչական իւրում ճոխութեամբ քաջալաւ յաղթանակ: Նոյն դարձեալ եւ ի նմանէ ի յաղթողէն ծանօթանայր պատուասիրական փոխանորդութեամբ տասանորդութիւնն ըստ համակամութեան օրինի<sup>24</sup> եւ այնպէս յամենեցունց լուսաւորէր կատարելագոյն առաջնորդացն խնդամտութիւն: Ընդ նոսին յորդորելով ի զուարթութիւն առ հասարակ եւ բազմութիւն փրկելոցն եւ փրկողացն մարդկան. ոմանք թէ ո՞րպէս ի դրժնդակ հինահարութենէն զերծեալք եւ յազագս ի հայրենի երկիրն եւ ի ժառանգութիւն դառնալոյ հրճուալիցք էին. եւ կէսք առ ի զլոյսութիւն շահից օրինին անեննգ հասարակութեամբ բաժանելոյ նմանապէս ուրախութեամբ ուրախանալին կացուցանելով տոնական խնճոյս:

Եւ իմ զայս ամենայն տեսանելով՝ զխաւարազգած տիրութիւն փարատեալ եւ լուսազգեստ ցնծութեամբ զգեցեալ պայծառութիւն, արժանաւոր վարկայ հաւաստագոյն բանի եւ ձերոյս առաջի պատմել լսելեաց, զի միշտ ուրախակիցք իմաստաբար իմումս լինիցիք բերկրութեան եւ պատմողք նորին սքանչելագործութեանն<sup>25</sup>:

<2.> Աւտասանութիւն ժողովրդեանն ընդ ծովն անցանելոյ

Զբազմաց նորասրանչ նշանագործութեանցն զիտութիւն միշտ զիրաւ տեղեկանալ ի սուրբ եւ ի պատուական տէրունեան մատե-

7 Z հայէի, BGHK յորումն  
12 AEG ամբառնալով եւ մնացականն

22 AFG զլոյսութիւն

նագրութեանց, ոչց ըստ իւրաքանչիւր արժանաւորին կատարեցան, ալլե ոչ մի ինչ յայսպիսեացն պատմութիւն ահաւոր եւ զարմանալի հրաշագործութեամբ կայցէ տեսանել, որպէս զկուչեցեալ Կարմիր ծովուն զբաժանումն<sup>26</sup> հզօր հրամանաւ բաժանողի առնն Աստուծոյ: Քանզի այնպէս իմն պատմութիւնն խառնեալ ունի լինքեան ոչ միայն զահաւոր պակուցումն եւ կամ զուրախալից խնդութիւն, բայց եւ զոմանց փրկութիւն եւ ալլոց զկորստեանն եղեալ պատճառս, եւ զոմանց փրկութիւն եւ ալլոց զկորստեանն եղեալ պատճառս, կարի յոյժ ի հիացումն զբոլորեցունցն ածէ անձինս: Եւ յայմ ահա կարի յոյժ ի հիացումն իրագործութեան պատահեաց երբեմն քաջայայտ խոստովանեցելոյ իրագործութեան պատահեաց երբեմն ժամանակ տեսող եւ իմումս լինել աշաց ըստ նկարագրութեանն արուեստաւորեալ յարմարութեանց<sup>27</sup>:

Յորում տեսանէի նախ ընդարձակութիւն նորագոյն եւ համատարած ծովուն. որ ընտաներար ունէր առ արեան, քան թէ առ ջրոյ բնութեանն զնմանութիւն նորագոյն տարեբց նորա: Տի՛ նա՛ թո՛ղ զգեղեցիկ ճշգրտութիւն կարմրայատակ գոյացութեանն, որ ի նոսին անցեալ ցուցանէր: Դարձեալ զայս երեւելի բանակաց բազմութեանն մարդկան յեզերն բանակեցելոց<sup>28</sup> հասարակաբար արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց, երիտասարդաց առուզագոյն բնութեանց վայելուչք եւ շքեղակերպք, ի մէջ նոցունց յաւէտ ոմանք եւ ծերունիք գոյին առաջնորդք, ոչց զեկուցանէր ըստ վերնագրին, առաջնոյն Մովսէս անուն կարդացեալ եւ երկրորդին նորին հարազատի եղբորն՝ Ահարոն<sup>29</sup>, եւ ալլոցն ամենեցուն բանակեցելոց միանգամայն՝ խորայէլեան ժողովուրդ: Եւ իսկոյն ի նմին կարգի գրեալ ծանօթանալր բանակ, ոչ եւս խառնիճաղանձ բազմութիւն եւ կամ թէ անկատար հասակք եւ այլիւայլ զանազանեալ կերպարանք. բայց ամենեքեան յարբունս տիոց ի ճահ գոլ պատերազմականն գործոյ՝ հանդերձ անբաւացեալ դօրու, կազմ կառօք եւ երիվարօք, եւս եւ մարտիկ հետեակօք, պէսպէս բերելով մարտացու զէնս՝ նիզակս, վահանս, աղեղունս, տէգս եւ ալլ, որ ինչ միանգամ պատերազմական փոյթն յառաջանայր ընտիր սպառազինութիւնն, արդարեւ իսկ ահագինք էին ի տեսանել. զորս եւ զիրիինն էր ճանաչել եւ զնոսա ի շարագրութեանէն բանիցն ասացեալ զգիպտացուցն գոռոզէն<sup>30</sup> եւ

19 AEI ժամանակի, Z<sub>2</sub>K տեսանող  
15 EI զեղեցիկ, AEI<sub>2</sub> գոյացութեան  
24 CEHI<sub>2</sub>M նորուն, ACEFIM եղբոր

23 ABCK<sub>2</sub> իէղեան  
29 BEFIM ի պատերազմական  
30 AEI<sub>1</sub> սպառազինութիւն



զնորին մարտակցաց: Ընդ որոց երկաբանչիւր միջոց բանակացն անկեալ ունէր ամպ խտացեալ, մթաբութեամբ անջրպետելով ի միմեանց զբանակեալսն եւ անյայտ յիրերարց առնելով<sup>31</sup>:

5 Եւ ահա իբրեւ այս այսպէս եղեալ յարդարէր, հուպ ի յառա-  
ւտաին պահուն, որպէս նշանակէր, դարձեալք ի վերջակողմն եբրա-  
յեցիքն հայէին ի գունդս թշնամեացն, յորմէ վաղվաղակի զահի  
հարեալք, յաճեամ արտունջ գոգցես եւ մեղադրութիւն բազում նո-  
ցա զնախամարգարէին լինելով, իբրու զկամօք մատնողէ ի ձեռս  
հակառակորդացն<sup>32</sup>: Զայս այնուհետեւ ոչ կարացեալ գիտել հաւա-  
տարիմ առաջնորդի զի վերնոցն այն բողոքումն<sup>33</sup>, եւ յառաջ մա-  
տուցեալ քաջալերաբար իմն յարձակէր՝ վստահացեալ յիւրն ա-  
ռաքինութիւնս, եւ ճշմարիտ հրամանան տեառն հայեցեալ յերկինս՝  
ի վեր ամբառնայր աջու ձեռամբն զտիրական գառազտնն, եւ հար-  
կանելով յանկարծակի զմիաւորեալսն ինքն ըստ ինքեան բաժանէր  
10 ջուր, յերկաբանչիւր կողմանս յարուցանելով հատուածս բարձրա-  
գոյնս: Եւ ի նորա զայս առնել սքանչելիս, որպէս ինձ երեւէր վա-  
րել զգայական ծանօթութեամբն, եւ ի պատրաստելն ընդ ինքեան  
զթագաւորականն ճանապարհ պարսպածն կառուցմամբ ի յաջմէ  
եւ յահեկէ հզօրապէս եւ անվթար հաստատութեամբ, այնպէս մինչ  
20 զի թէպէտ աստի եւ անտի յողորդումն ալեացն ամբոխեալ շարժ-  
էր, սակայն ի նոսին պարիսպ հասանելով իբրեւ զանշարժ վիմի  
բախեալ անդրէն ընդ կրուկն դառնայր եւ ընկրկէր:

Ուշադրեալ զիտէի, զի յանկարծօրէն իբրեւ չեղակարծումն ժա-  
մու զեղեցկայարմար կարգաւ մի ըստ միոջէ զիմեալ յարձակէին  
25 մտանել ի ներքս անթիւ խումբքն մարդկան եւ յառաջադասին ի  
հետ մեծին Մովսէսի ըստ իւրաքանչիւր պատուականութեան յուղի  
անկեալք ընդ նորոգ փողոց եւ ընդ հրաշագործ ճանապարհ<sup>36</sup>: Զոր  
անդ գոյր ապա տեսանել զիսրայէլեանն ազնուական ազն, ոչք ի  
ճանապարհորդելն ոչ այնչափ յառաջիկայսն եւ կամ ի գարշապարս  
30 ոտիցն ուշաբերեալք հայել, որքան թէ գուլս ամբարձեալք ի կա-  
տարս պարսպացն համբառնային զաշան: Եւ այնգունակ խնամով  
Աստուծոյ երթեալ հասանէին փութանակի զմիմեանս քաջալերելով  
ընդ ցամաք ի յայնմ կողմն ծովուն. եւ որք ի յառաջն ելանէին ուրա-  
խալիցք անդրէն դարձեալք, որգովն ձեռն տալով աճապարեալք զի-

6 Z գունդ  
17 AI պատրաստելսն  
22 ZABFHIM կրուկն  
206

28 ABC2, իէզեանն  
29 EI ճանապարհորդեալսն  
33 EI ցամաքի այնմ

րեանցն հանէին յաջորդս եւ նորա դարձեալ զերկրորդն եւ այլք՝  
զայս, ցայնքան մինչեւ ի սպառել շուտն: Յորս եւ վերջնոցն մեծա-  
պէս ազատելով յերկիւղէն, ընդ նոսին անյագարար ցնծութեամբ  
կայթէին պարելով՝ գոհացողք իննելով միաբանակի զամենեցունցն  
5 Աստուծոյ, եւ առ ետեղ բանակեալք շուրջ զեղերբն, միտ եղեալ եւ  
ի թշնամիան հայէին սպասելով, եթէ զինչ կատարած նոցայն եղի-  
ցի, զորոց կամեցան զփորձ առնուլ<sup>36</sup>. Եւ ի հետ մտեալ կարծիս տա-  
լին նմանապէս, իբրու թէ ի նմին էր ձեւի մնալ սքանչելեացն. այլ  
նա ոչ նոյնպէս յաւեժամնայր: Բայց նախաշաւիղ առաջիկայ արկա-  
10 ծից նոցա կորստեան նախ այն թուէր գու, յաղագս որոյ մտարե-  
րէինն հետամուտք լինել, զի զօրէն աճառապինդ շլթալիւ կապումն  
անխաղաց անուոց կառաց նոցա ժամանէր, ոչ տայր ըստ սովորա-  
կանին արագախաղացն լինել հուովմամբ, այլ բունադատելով քար-  
25 շէին մինչեւ յեզեր ծովուն<sup>37</sup>. նմանապէս կապեալք եւ երկվարքն  
յուտից՝ ի վայր լինէին մղեալք եւ ամենեցուն համարելով իւրա-  
յէլացուցն պէս յարմարական պողոտայ, առ հասարակ փողէին  
յանդգնաբար անկանելով յանդունդսն եւ յոխորտօրէնս: Առ որս  
հայիւղով միւսանգամ զերծեալքն ի ցամաք՝ տարակուսէին դարձ-  
եալք երկիւղալիցք ահաբեկութեամբ զարհուրեալք եւ կարծէին զար-  
20 դէն հասումն<sup>38</sup> առնել առ նոսա: Իսկ զեղեցիկ հրամանատուին  
համբերելով անսացեալ մինչեւ ի մտանել հակառակորդացն, յայն-  
ժամ որ ի բաժանելն յառաջադիմելով նովին զօրութեամբ արարչին  
ձգեալ զսուրբ աջն ի վերայ պատառման ջրոյն, արագ արագ բարձ-  
րագոյն համբարձումն պարսպին՝ ի նոյն լոյծ եւ տարած տարր  
25 զիջնցեալ խաղաղացուցանէր: Ընդ որում անդէն առժամայն խորա-  
սոյզ ընկղմումն ըմբռնելոցն տիրէր եւ առ հասարակ սուղանելով ի  
յանդունդս եգիպտացիքն կառօք եւ երկվարօք՝ հանդերձ ամբար-  
հաւաճեալ գոռողան եւ այլովքն ամենեքումբք ծովակուր, որպէս  
ասացի, եւ հեղձամղձուկ լինելոց<sup>39</sup>: Յորս էր ցուցանել շարագոյն եւ  
անհնարին ողբերգութիւն, զորս ոչ կարեմ ըստ հանդիպելոյն պատ-  
30 մել: Վասն զի զլանազան պատրաստութեանցն յօրինուածս ի փայ-  
տեղէն նիւթոց զկազմեալսն զայն ի վեր ունելով սահեցուցանէ ջու-  
րըն, զկէսն ծփելովն տեռազերծել զանկելոցն զգեստ, եւ զկէսս յոր-

3 Z ի յերկիւղէն  
9 Z, I յաւեժամնայր  
15-16 ACK, իէզացուցն  
17 Z յանգունդս

20 ZհինBFHK հրամայատուին  
25 FI խաղացուցանէր  
33 FI տեռազերծեալ Z, ABCFEIKM  
յորձանիւր



5 Ժանօք ալեացն յեզր ընկենուզ զոմանս ի ծանրութենէն սուգանելով  
 ի խոնարհ հասուցանէր ի յատական եւ զոմանս կիսամահս ի միջո-  
 ցին վայրավատինս կացուցանէր: Եւ զայս օրինակ ամենաշար-  
 շարողին համօրէն վանումն, որք թէ եւ փութալին ընդ կրուկ անդ-  
 10 րէն դառնալ, սակայն ոչ կարէին, այլ սասանեալք կորեան եւ իսրա-  
 յէլացուցն զլխովին կատարեալ փրկութիւն: Այլ նա յորժամ զի-  
 րեանց շահաւոր եւ առաւել քան զյոյս պաշտպանութիւն իմանա-  
 15 յին եւ զթշնամեացն զնորին հակառակն զկործանումն, յայնժամ  
 որպէս զյորդորական իմն զուարթութեամբ քաջալերեալք լինէին  
 արք եւ կանայք եւ ի միասին տօնելով ընծայէին Աստուծոյ ըստ  
 շնորհալից կրիցն հանել բարեբանութիւն եւ ձայն ցնծութեան: Եւ  
 զնոյնս նուագաւոր երգ եւ երաժշտական զուգաբարբառ հնչմամբք  
 պարաւորակք եղեալ յերկուս բաժանէին դասս, որոց առաջնորդեալ  
 20 հաւեր արանցն՝ մեծն ի մարգարէս Մովսէս, եւ կանանցն՝ նորին  
 համարին նուագերգողն Մարիամ: Եւ այնպիսաբար յամենեցունց  
 առաքելով հրեշտականման ուրախալից պարաւորութիւն՝ համբառ-  
 նալով զձեռս յերկինս եւ գոհանալով ի շնորհողէն յաղթութեան՝  
 բաղաձայնականն հեշտալուր բանիւք<sup>40</sup>: Յոր եւ իմ առաւելողոյն  
 ընդդիւրութեամբ զուարճացեալ ի տեսանելն զայսքանս նորահրաշ  
 25 զարմանագործութիւն, պատշաճ համարեցայ զնոյն ճառել եւ առա-  
 ջի ձերոյս լսելութեան, որպէս զի ի հաւաստեալ պատմութենէն  
 բերկրեալք եւ զուր տեսողք այնոցիկ լինիցիք ուրախացուցիչ տե-  
 սութեանց<sup>41</sup>:

<3.> Արտասանութիւն միայնամարտութեան Գալթի եւ  
 25 Գողիարու<sup>42</sup>

Պատերազմական հանդիսիցն գուպարք միշտ ահա երիւքս այ-  
 սորիւք զանազանութեամբք յաւետացեալ իւրաքանչիւրովքն ցուցա-  
 նին զօրութեամբ՝ ծովամարտութեամբ, ձիավարութեամբ եւ հետե-  
 ւականարտութեամբ: Բայց մի ի նոցանէ առաւել ողորմելի ունելով  
 30 գործառնութիւն, զի եւ թաղման անգամ արժանի ոչ արարեալ զիւր-  
 սըն արտորոշէ անկեալս: Իսկ ձիավարութեանն ոչ այնքան զնահա-

3 ВҒНІК, վայրավատինս  
 4 ZEI կրոււնկ  
 5—6 ABCEK իէզացւոցն  
 9 Z<sub>2</sub>AEI զուարթութեանց  
 208

13 EI երկուս  
 14 Z<sub>1</sub>I հոգուէք  
 25 ABČHKM Գողիարու  
 27 EI յաւետացեալք

տակութեանցն ունի փոյթ՝ որչափ թէ հեռագոյն վրիժակօք նետա-  
 ձգութեանն՝ կարծիս տալ անարութեան, զանձին եւեթ ճողոպրումն  
 5 փութալ հնարել: Իսկ հետեւակամարտութիւն առաւել քաջանուն  
 բանիւ զյաղթանակն ունի գովութեան, վասն զի ի դէմս իրերաց  
 գոլով մարտացու գործեօքն եւ աներկիւղ գրկախառնութեամբք  
 զախոյանիցն մերկացուցանելով յարգարէ գործ, կամ հերքող լինե-  
 10 լով՝ զաշխարհագովութեանցն տանել մրցանակ, եւ կամ մեռանել ի  
 վերայ հայրենի գաւառին՝ զպարծանացն բառնայ արդարագործու-  
 թիւն<sup>43</sup>: Որում յիրաւի ապա նմանապէս եւ ես փորձեցայց անցանել  
 բանիւ եւ համարելով զգոյն ի ճահ զԴաւթի եւ զԴոդիաթու միայնա-  
 կուութիւնն բերեալ այժմ առաջի ձերոյս եղից լսելեաց այսպէս:  
 Քանզի տեսող եղեալ իմ ողջամիտ հասմամբ ամենագեղեցիկ  
 կենդանագրութեան ի պատշաճագոյն ուրեմն տեղուոյ<sup>44</sup>, տեսանէի  
 15 նախ առաջին զպարունակեալ արուեստագործութիւնն, զի բաժա-  
 նելով ունէր զնիստ հաստատութեանն յերկաքանչիւրս ոմանս հա-  
 տածս լերանց՝ բարձրագոյնս յարուցելոց յերկրէ, եւ այն էր իբրու  
 ոչինչ կարի անձուկ յիրերաց ունելով միջոց, այլ բաւական հովիտ  
 առ ի զներհակացն բառնալ տանել հոյսս: Որ ի միում կողմանս ու-  
 20 նէր վերնագիր՝ ցուցանելով զիսրայէլեանն հարեալ բանակ. նոյն-  
 պէս եւ յերկրորդին զայլազգեացն հակառակ նմին գումարեալս<sup>45</sup>,  
 զորոց զհետ ելանէր նահատակ մի ի նմին կողմանէ ահաւոր ձեւով՝  
 յաղթ մարմնով, անձոռնի հասակաւ, եւ պակուցանող մեծութեամբ  
 զինուցն, տի՛ նա եւ այլովն ամենայնիւ զիւցազնական բոլորիցն  
 25 թուէր տեսողացն<sup>46</sup>: Եւ ոչ այնու միայն, այլ նա գոզցես խրոխտա-  
 կան իմն կարծեօքն եւ ձեւով մարմնոյն այսպէս ցուցանէր զինքն  
 ամբարտաւանութեամբ լի փքացեալ, եւ իբրեւ քամահանս արարեալ  
 երբայականն ազգի՝ ճանաչէր, որպէս թէ նա իցէ արդեօք տուիչ  
 յաղթութեանն եւ ոչ այլ ոք<sup>47</sup>: Բայց այն էին, որպէս նշանակէր  
 30 պատրանք կարծեաց սուտ վերբերութեան<sup>48</sup>: Վասն զի այլ ոմն նմին  
 զարձեալ հակառակ, նոյն օրինակ նահատակ յարուցեալ յերջանիկ  
 տեսական տոհմէ<sup>49</sup>, տեսանէի զի համբառնայր հատուածեալ ի  
 գնդէն մանուկ տիովք եւ յոյժ գեղեցիկ<sup>50</sup> եւ ի վերայ բարեձեւութե-  
 ան զիմացն ծաղկեալ շնորհ առաքինութեանն եւ զինեալ ընդդէմ այ-  
 յազգուոյն զնայր ախոյեանս: Երեւեցուցանելով զինքենէ ի ճշգրտա-

1 ZAI զփոյթ  
 8—9 CEFHIKM յարդարագործութիւն  
 10 BCHKM զԳողիարու, EI Գողիաթու  
 19 ACK<sub>1</sub> զիւցեանն  
 22 AEI մեծութեամբն  
 29—30 Z զարձեալ նմին



հան կենդանագրութեանն բերել ձեռն ոչ եւս զգիւնուորութեան, այլ  
 զհոլուական սովորութեանն, յորում եւ անցեալ ի մէջ նշանակէ  
 վատահ լինելով ոչ ի գէնս եւ յերիվարս<sup>51</sup> առավել բան թէ ճշմարիտ  
 նշանակօք հայեցուածովք մարմնոյ, նոյն եւ տարածմամբ ձեռացն ի  
 վերին օդնականութիւնան զյոյս ցուցանէր եւ յաստուածային նա-  
 խախնամական զօրութիւնան: Եւ իսկոյն ի տգաց միայն զպարսա-  
 տիկն աջոյ ձեռամբն առեալ եւ մախազ ընդ անութ, նոյնպէս եւ  
 ցուպ յահեկում բերելով ձեռին, երթայր գոգցես մինչեւ ի հեղեղատ  
 եւ անդուստ ի վեր առեալ ժողովէր ի մախազն զքարանցն ընկենելով  
 զպատեհագոյնս: Եւ զմի ի բազմացն ի ձեռն առեալ զողորկագոյնն  
 եւ զբոլորակ, եւ որ ի ճահ խորտակումն հակառակամարտին գոլ  
 գլխոյ, զնէր ի պարսատիկն<sup>52</sup>, եւ ինքն ընկճեալ խոնարհէր յաջն  
 յենելով ձեռն եւ այնպէս ձգէր յարձակեալ ի դէմս թշնամոյն, մինչ  
 զի հարեալ այնուհետեւ կշռակի ընդ աշամէջսն անցուցանէր ջախ-  
 15 լով արկանել ընդ սաղաւարտն եւ ընդ ճակատն ի ներս յուղիղն, զոր  
 եւ իսկոյն գիտացեալ լինէր, միումն՝ ի ճայթմանէ ազդեցութեանն  
 զօրութիւն յաղթութեան, եւ երկրորդին՝ լքումն եւ վայրաբերումն  
 պարանոցին<sup>53</sup>: Եւ միանգամայն առձեռնպատրաստ իսկ նորին  
 հակառակամարտին զինու հասանելով ի վերայ արագապէս եւ ան-  
 20 երկբայաբար բռնալ զգլուխն համարձակ քաջութեամբ, եւ անդրէն  
 միւսանգամ յաղթող պարձանօք յիւրն հատուածէր բանակ<sup>54</sup>:

Յորմէ ի փախուստ դարձեալ այնուհետեւ ալլագգեացն լինէր  
 կողմն, եւ ի պարտութիւն մատենեալ ի յերբայականացն համագունդ  
 յարուցելոց ի վերայ, եւ առ աճապարելն խուճապիւք լի այնպէս  
 կէսք վերջացեալք ի փախստեանն՝ սրոյ լինէին կուր, եւ ալք առա-  
 25 ջի մինչեւ ցորունս քաղաքացն երթային հալածեալք: Եւ անգ զօրէն  
 անբանից, զոմանս ձերբակալս արարեալ սատակէին, եւ զոմանս  
 հանդերձ բազում աւարաւ գերիս առեալ՝ յիւրեանցն խաղացուցա-  
 30 նէին տանել քաղաքս, վայելելով ամենագեղեցիկ բարեբախտու-  
 թեամբ<sup>55</sup>:

Եւ իմ ահա ամենայն ի տեսանելն սքանչացեալ բերկրեցալ  
 հեշտութեամբ լի եւ զնոյնս դարձեալ իրաւացի համարեցալ եւ ձեռ  
 պատմել<sup>56</sup>:

Գեղէնի պատերազմական իրագործութեանցն հանգամանք,  
 մանաւանդ գիշերամարտութեանն, քաջապէս իսկ ծանուցանի ինձ եւ  
 5 ի լրոյ պատմութեան անջինջ մատենագրութեանն, որ համառօտա-  
 բար բանիւ յայտնի զնորայն կացուցանէ զչեղանակս իրին ըստ  
 ամենայն ներգործութեան մասանցն: Բայց եւս առաւել ի հաստա-  
 տունն ճշմարիտ տեսութենէ նկարագրութեանցն, զոր տեսի ճշգրի-  
 տագոյնս արուեստակեալս ըստ բոլորի զիրացն նմանութիւն<sup>58</sup>, եւ  
 10 զնոյն արգէն փոյթ կալեալ զցոյց տեսական գործոյն, նուագեցից  
 եւ ձեզ պատմական բանիւս:

Քանզի նախ անդէն յիսկզբանն, որպէս եթէ անշափ եւ անթիւ  
 երեւէր հասեալ իբրու ի վերայ երկրին իսրայէլացւոց յարուցմամբ  
 բանակեալ բանակ հակառակորդաց եւ ընդ նոսին մածելոցն անհո-  
 մար քաղմութիւն ուղտերամակաց եւ ալլոց իաշանց, որովք շա-  
 մար բազմութիւն ուղտերամակաց եւ արկանել նորօք զանդաստանս նոցա:  
 15 Բայց նշանակէր յանուանէ, էր ոչ միայն զմագիանաց-  
 ոցն ահագին զօրուց, այլեւ զամաղեկացւոցն եւ զարեւելիայցն  
 եկելոց ազգաց յօգնականութիւն<sup>59</sup>: Յոյց ոմանց ահա զերկուցն լո-  
 20 ցից ասել զկերպարանս զգեստուցն եւ զինուց, եւ զմիոյն՝ զմագի-  
 անացւոցն ըստ հանդիպելոյն օրինակի սկսայց երգել անվայելչա-  
 կան պատմութիւն: Ոյք կարի յոյժ ժանտատեսիլ գունով զմարդկա-  
 յին տեսակիս նմանութիւն սոսկ զրիւ մարմնոցն մասանց եւթ  
 ունէին, այլ ալլով կազմածովքն՝ զինուցն կամ հանդերձիցն մեծ  
 25 միջոցաւ օտարակերպք էին ի բնաւ ազգաց: Վասն զի ծածկովթ  
 զգեստուցն ի միջոյն եւ ի վայր սփածեալս ունէին բաւական հա-  
 մարեալ այնքան միայն, մինչեւ զամօթոյսն ծածկել անդամս. իսկ  
 զայլն ամենայն գրեթէ ի բաց հոլանեցուցանելով եւ դոյզն ի վերոյ  
 զթիկամբք աղաբողոնս: Ալլ նաեւ վարսք գլխոցն միշտ անյապա-  
 30 ւելիք մնալով երկայնագոյնք էին, կախելով ի վերջ կոյս զուսովքն

12 Z<sub>2</sub>K ճընկեալ  
 14—15 ABCH ջաղխելով  
 15 Z արկանել  
 17—18 Z<sub>2</sub>AEI լքումն պարանոցին  
 23 բոլորը՝ հերբայականացն  
 25 ZAE այլքն  
 29 CFK<sub>2</sub> տանել տանել

17—18 AEI<sub>2</sub> զմիայնացոցն  
 18 EI եւ ահագին, Z զօրուցն  
 20 K գղինուց  
 22 K ժանտատեսիլք  
 24 ACEFHIM հանդերձից  
 27 AI ծածկեալ  
 1 Z Գեղէնովի  
 4 EI<sub>2</sub> գիշերամարտութեան  
 7—8 ZEFHIM հաստատուն  
 8 ZE եւ ճշմարիտ, Z<sub>3</sub>CEFKM ճշմար-  
 տագոյնս  
 12 Z<sub>3</sub>AI<sub>2</sub> յիսկզբանն  
 13 ABCK իեղացւոց



մարմնոյ զօրէն կանանց սովորութեան: Բայց ի վերայ այսոցիկ նո-  
 քայն էին ոչ ունելով սպառազէնս ի գործ, եւ ոչ սաղաւարտս ի  
 գլուխս, եւ ոչ սպառազէնս յոտս, եւ կամ զամբութիւն զրահիցն, այլ  
 5 փոխանակ ասացելոցս՝ զաղեղնաւորութեանցն եւ զնիզակացն եւ  
 զսուսերաց զտիգացն ընդ նոսին պատրաստութիւն, եւ որ ինչ սո-  
 ցին նմանք փոքունք զինագործութիւնք բարձեալ բերէին: Եւ իսկոյն  
 գոգցես ելեալ սփռէին, իբր զմարախ բազմութեամբ<sup>60</sup> հարկանել  
 զերկիր թշնամեացն, եւ անխնայ ապականութեամբ վարելով առ  
 նոսս՝ քանդէին ճարակել անբանիւքն զանդուցն բարութիւն, եւ  
 10 զգեղեցկութիւն այգեացն եւ բուրաստանաց, եւ յորունց համանման  
 մրգաբեր ծառոց ըստ սովորութեան թշնամեաց խամրացուցանել-  
 ւով, որպէս թէ ի բաց խլել յապաւէին նմանութեամբ հրոյ բոցա-  
 կիզեալս, կամէին եւ զշինուածս գեղիցն եւ քաղաքաց սպառել:

Իսկ մինչդեռ այս այսպէս անցեալ զմէջ ունէր ի նոցանէքն  
 15 ապականութիւնք<sup>61</sup> յայնժամ տեսանէի յարձակեալ ի վերայ նոցա  
 զօրէն իբր ի գիշերի եւ զԳեղէոն իւրովք երեքարիւրովք անդէն  
 սպառազինութեամբ խաղացեալս, եւ զային լոկ պատերազմականս  
 ունելով փողս եւ ընդ նմին ամանս խեցեղէնս, յորում ծածկեալ  
 բերէին ջահ: Եւ հասեալ մերձ ի բանակս թշնամեացն, անդէն վազ-  
 20 վաղակի յերիս առաջս բաժանէին ըստ օրինի գեղեցիկն հրամանի  
 եւ շուրջ կացեալք իբրու ընդ նա նայելով՝ ի նմին ժամու խորտակէ-  
 ին զամանսն, եւ աճապարեալք ի ձեռն առնուին յահեակն զջահս  
 եւ աջու ձեռամբ զպատերազմականն ունելով հարկանէին փողս, եւ  
 յանկարծօրէն խրախոյս բարձեալք նշանակէին մեծապէս աղաղա-  
 25 կաւ ստէպ զսուր տեսոն ասել եւ Գեղէոնի<sup>62</sup>: Եւ զգացեալք զայսոսիկ  
 նոցա, անհնարին երկիրդի խոնեալք ընդ միմեանս սաստիկ շփոթս  
 կացուցանէին եւ այնպէս առ ահի աստուածառաք բարկութեանն  
 անզգայացեալք զմիմեանս սատակէին, մինչ՝ զի ոմանք ընդ իւրանցն  
 իսկ ելանէին սուրս, եւ այլքն ի յոյժն փախստենէ զմիմեամբք անկա-  
 30 նելով առաջի, գիաթաւալ յեկիր դնէին<sup>63</sup>: Եւ զայն իմացեալ եբրա-  
 յեցուցն այնուհետեւ ի բաց զիւրեանց ընկենուին ջահս, եւ փողելով  
 ուժգին՝ մատուցեալ ձեռն ի գործ արկանէին ի նոսս նոցին զինուքն:  
 Եւ միտ եղեալ հայէի, զի աւելի եւս թող զնոցայն յիրերաց

1—2 ACEFHI նորա  
 16 AEFI երեք հարիւրովք  
 23 Z<sub>3</sub>AEFI աջոյ  
 26 FI խառնեալք  
 27 AI բարկութեան  
 30 Z<sub>2</sub>ACHK դիթաւալ  
 32 EI զինուք

հարուածս, ի մնացեալսն գեղէոնեանն ցուցանէր զօրութիւն, որ  
 զկէսս տապաստ արկեալ անդէն ի տեղուջ սատակէին, եւ կիսոցն  
 զհետ մտեալ զճանապարհայն մաշէին վանեալ սրով, եւ զոմանս  
 5 միանգամայն արտալածեալ արտաբոյ իւրեանցն վանէին սահմա-  
 նաց: Եւ անդուստ ապա անդէն դարձեալք ձեւանային ցնծութեամբ,  
 հաւաքելով զառ եւ զաւար բանակին զթշնամեացն անկելոց եւ զայս  
 արարեալ նոքա յղփանային ոսկւով եւ արծաթով եւ զանազանու-  
 թեամբք ընչից, այլ եւ խաշամբք անգամ եւ զինուք: Եւ զկնի ի վե-  
 րայ ժողովեալք ի մի վայր վայելչականագոյն սկսեալ պարէին  
 10 զյաղթութեանցն պարս գոհացողական ձայնիւք եւ եղեալ նուիրէին  
 զպարծանս նահատակութեանցն, ոչ զինուց եւ զօրութեանց, այլ  
 միայն անդադար բարեբանելով զյաղթող ձեռինն աստուածային  
 զօրութեանցն:

Եւ զայս տեսանելով իմ զնորասբանչ ի կենդանագրութեանն  
 15 զգործեալ գիշերամարտութիւնն, եւ ընդ նոյն կարի յոյժ զարմաց-  
 եալ, հարկեցայ եւ ձեզ պատմական բանիւ երգել զլեղանակս իրին,  
 զի ուրախակիցք միանգամայն եւ պատմողք իմուսս լինիցիք զու-  
 արճութեան<sup>64</sup>:

<5.> Արտասանութիւն որոյ<sup>65</sup>

Որսորդականս իրի ախորժակ յոյժ փութայ զվայելուչ հանդի-  
 20 սիցն նահատակութիւնս միշտ յերիս յայսոսիկ բաժանեալ գոյացու-  
 թիւնս բնաւորականապէս կատարել՝ ի ցամաքայինս եւ յօղագնացս  
 եւ ի ջրային լուղակս<sup>66</sup>, որոց պէտքն են երկաքանչիւրոցն՝ օղայնոց  
 եւ ջրայնոց, հնարիցն եւեթ իմաստութեան, եւ զանազան հմտօրէն  
 25 մենքենաւոր գործեացն: Բայց ցամաքայնոցն՝ ոչ այսց միայն,  
 այլեւ հարստակողն ուժոյ բերեալ օգնականութիւն, զի յամենուստ  
 անպարտելի մնալով՝ յառաջագէմ գովութեամբ, որպէս ասացի  
 անցեալ լիով՝ գեղեցիկս ախորժակ զիւրն տարցի յաղթանակ օգ-  
 տակարութեանն<sup>67</sup>: Որում արդէն եւ ես հանդիպեալ սբանչելի ի-  
 30 րագործութեանս զուարճացեալ լինէի, ոչ այնքան ի զրուցատրու-  
 թենէն լրոյ, որչափ յակահատեսն գոլ հաւաստութենէ, զոր ճշմար-  
 տապէս այժմ բերեալ յանդիման բանիւ ի բարեմիտս եղից լսողաց,  
 որպէս ինձն երեւեցաւ:

3 AEI վանել  
 9 Z վայելչականագոյնք  
 25 EFIK մեքենաւոր  
 28 Z<sub>2</sub>AI լինելով  
 33 AEI ինձ  
 21 Z ի յերիս



Բանգի յառաւօտին ժամու այն ինչ ի ծագել լուսոյն<sup>58</sup> գնալով  
 եւ արտաքս ընդ դուռն բնակութեանս, տեսանէի ելելալս ի քաղաքէս  
 անբաւ բազմութիւն մարդկան, իբրու յոյժ խոնելոց ի միասին: Ընդ  
 որ յաւէտ զարմանայի, ոչ միայն ընդ միարանականն շու, այլեւ ընդ  
 5 գեղեցիկ յօրինմունս կազմութեանն շուրջ խմբեցելոց, մանաւանդ  
 ընդ ձիական եւ հետեակ զօրութեանն: Որ զի ոմանք ի նոցանէ  
 տիգաւորք էին, եւ սրիհնաւորք, եւ ոմանք աղեղնաւորք, եւս այլ անդ  
 էր իմանալ դարձեալ, զի կէսքն բարձեալ ունէին թակարդս եւ ար-  
 10 բագազս, եւ այլք զձեռննէ ձգեալ զբազմութիւն շանցն գնացեալ  
 տանէին<sup>59</sup>. եւ այնպէս գոզցես ի ճանապարհորդելն իբրու ուրա-  
 խալիցք իմն էին եւ յարմարական ձեռովք համբուրեալք զխորին  
 խաղաղութիւն<sup>70</sup>: Եւ իսկոյն երթալին դիմաւք՝ առաջնորդելով ի  
 գլխաւորագունէ ումեմնէ, եւ հասանէին մեծապէս պատրաստու-  
 15 թեամբ ի տեղի ինչ անտառախիտ եւ յոյժ գեղուղէշ, յորում բոլք  
 անթուելիք էին էրէոց՝ դազարեալ յիրաքանչիւր ամբութեան, զո-  
 բով համօրէն գումարեալ ժողովք որսորդացն անցեալ կային այ-  
 նուհետեւ: Եւ նախ յառաջնում նուագին ամենեքեան զլուսթիւն  
 սիրելով՝ ցայնքան ոչ հանէին խոշին, մինչեւ շուրջ պարփակելով  
 20 թակարդեօքն եւ պառակական խմբիւքն եւ այլով հնարաւոր գոր-  
 ծեօքն՝ զբովանդակն արգելոյին վայր, իբրու անխրամատելիս գոր-  
 ծելով: Եւ յայնժամ վստահացեալք ապա յիրաքանչիւր նախզգու-  
 շութիւնսն, յանկարծօրէն առ հասարակ զաղաղակ հարեալք յոր-  
 դագոյն գոշմամբ ճայթիւն հանէին եւ յերկրէն անգամ առ ի յըն-  
 դոստումն երկիւղի անձեռնընտելիցն առնել, յորոց եւ նոքա յոյժ  
 25 խուճապեալք անդէն ի փախուստ դառնային եւ պառակտեալք այ-  
 սրբ անդր հարթուցմամբն անհետազօտելիք լինէին, ոչ ուրեք  
 երեւեալ՝ դուղելովն, եւ սարբելով ի մէջ խտացեալն անտառի, յոյս  
 ապաստանեալք եւ նոքա յարձակէին ի ներքս՝ հետաժարեալք  
 զասպականեացն հոյս<sup>71</sup>: Յաղագս որոյ եւ վտարեալքն իսկ եւ իս-  
 30 կոյն ի թողացուցանելն անթաքուստ յուղմամբ ելեալ ի վեր միւս-  
 անգամ սուր գնացս ունելով փախչէին յիրաքանչիւր դարանիցն եւ

3 AEI խոնելոցն  
 5 Z<sub>2</sub>K խմբելոց  
 17 EI յառաջնումն  
 18 CHIK ցայնքանս, Z<sub>2</sub>ACHIK խո-  
 շիւն  
 25 BCEHK պառակտեալք  
 23AI արձակէին, ZBEFM հետաժար-  
 եալ  
 31 Z(Z<sub>2</sub>)FI ունէին

կարծիս տային բոլորեցուն միանգամայն զանհասութեան ընթա-  
 ցիցն: Իսկ նոցա ամենեցուն նայելով յայն՝ աճապարեալք համան-  
 զամայն ի մէջ վարեցեալք անդր անկանէին ցուցանել զբաշտութիւն  
 5 րստ անցնիրն կարի, մանաւանդ թէ աւելի եւս քան զկարն հետա-  
 մուտ լինելովն թուէր երագութիւնն եւ ի յառաջանալոյն մի քան  
 զմի եւ ստէպ յել եւ ելան առնելոյ ի զարմացման եղեալ՝ ոչ կարէի  
 զբովանդակն պարադիտել զառաւելութիւն նահատակութեանցն:  
 Բայց միայն զձիոցն արագութիւն քան զմարդկանն յառաջել, եւ  
 զշանցն քան զձիոցն, եւ զերկոքումբք՝ զնետաձգութեանցն թեւա-  
 10 նալ, առնելով զյաղթանակ աղէնեղործութեանցն՝ ի վայր ընկեն-  
 լով զանբաւս յէրէոցն զանազան եւ պէսպէս սատակմամբք: Վասն  
 զի զոմանս ի նոցանէ կարէվէրս առնելով, եւ զայս այլովք հան-  
 դերձ կուր առաջի ամենեցուն արկանելով՝ վանդէին զրէթէ մինչեւ  
 իսպառ իսկ: Սակայն եւ նուազքն մնացելոցն երթեալք հարկանէին  
 45 յանկարծաղէպ յերագազան եւ անդուստ հարթուցեալքն ի թակարդ-  
 սրն շաղէին՝ յոյժ անզերծանելիք մնալով<sup>72</sup>:

Եւ ի վերայ այնոցիկ ամենեցուն վաղվաղակի հասելոց լցեալ  
 կատարէր յրմբոնելն զամենեքեան նմանապէս հանդէս որսորդա-  
 կան գործոյն հանդերձ զուարճալից խնդութեամբ: Յորս ժողովեալք  
 ապա ի մի վայր՝ պարէին պարս յաղթող քաջութեան<sup>73</sup> եւ կացու-  
 20 ցանէին երգս նուագաւոր ձայնից, եւ կատարելով զայն՝ մատուցեալ  
 բաժանէին, զուգապէս ցուցանելով զձեւ արդարութեան: Եւ գոհա-  
 ցողք լինելով զԱստուծոյ<sup>74</sup> անցեալ գնային ի բաց՝ բերկրեալք որ-  
 պէս ասացի, ոչ վասն հարկաւորացն եւեթ կելոյ եւ կամ բարի կե-  
 25 լոյ<sup>75</sup> բազմատեսութեամբ, այլ զի յամենուստ զմեծ յաղթանակ  
 գովութեանցն երթեալ տանէին:

Զոր ստուգապէս ուշագրութեամբ զայս ամենայն տեսանելով  
 իմ գեղեցիկ տեսութիւն, զնոյն եւ արժանաւորապէս խորհեցայ՝  
 իբրու ոչ եւս խորիւ եւ թաքուցանել, այլ յայտնի պատմութեամբ եւ  
 30 ձեզ վերագրեցի գովական բանիւ, զի միշտ վայելչակից ինձ եղեալ  
 գտանիցիք եւ սիրողք զեկուցման բոլոր պարառութեան բարոյ<sup>76</sup>:

3 ZFM վարեցեալ. BEHKM քաջու-  
 թիւն  
 6 CEH յելսն  
 19-20 Z(Z<sub>2</sub>) ապա ժողովեալ  
 23 ZB անցեալք  
 24-25 BCEHKM կելոց



3 յոժ փառաւորագոյն աշողութեամբ եւ միշտ նորասքանչ զարմանալեօք առաջնոյ մարդոյն նախաստեղծին Ադամայ թէպէտ եւ շնորհեցան կեանք կենցաղոյս կատարելագոյն բարեօք աւարտեալ,  
 5 եւ շահելով յամենայն կողմանց զանճառելի փառացն ընդունելութիւն, եւ յաւէտ երանութեամբ պատուեցաւ, սակայն զլուսի եւ ծայր երջանկութեանն դրախտին էին վայելք: Վասն զի զի՞նչ ինչ մեծ եւ կամ մեծաց գովութեանց արժաննւոր բերող, քան թէ որ յատուածային աշոյն մշակեալ խնամեցաւ փափակութեանն կողմամբ  
 10 ցանկալի տնկագործութիւնն<sup>78</sup>: Իսկ եթէ այս այսպէս ճշմարտութեամբ լի հանապազ եւ ի զիրս լինելութեանն<sup>79</sup> երգեալ վկայի, ապա յիրաւի ուրեմն եւ արդէն իսկ պաշտպանեալք ոմանք առատաբեր եւ յաւէտ շնորհալից բուրաստանացն շահաւէտ տեղեօքն ծանիցին կեալ ի մէջ բարեբախտութեան, եւ յանկարօտ բերկրանաց զուարճութիւն<sup>80</sup>:

Ըստ որոց եւ ես փոքր ինչ քան զընակութեանս վայր յառաջ մատուցեալ՝ տեսի<sup>81</sup> տեղի ինչ արգաւանդահող եւ բուրբովին յանհարթ խոշորութեանէն առնելով ի յարգարումն, առ ի զուգարար բաժանել ընդ ինքն զջրաբաշխութեանն ծաւալումն արգարակ հարթութեամբն<sup>82</sup> եւ պարարտութեանն զարձեալ անխափան հատուցանել զբեղնաւորութեանն յարգարութիւն, չորմէ եւ ի նմա էին տնկեալ տեսակք բազմաւորական օգտագունիցն տնկոց: Տի՛նա, զայնր վայելչական վայրի զիտէի, զի շուրջ զարտաքնոյն կողմանէ պարփակեալ ունէր պարսպածն կազմութեամբ ամբութիւն ի խիտ եւ ի խոցոտող մացառուտ փշոց, որովք միայն ահաւոր տեսլեամբքն բաւական լինէր զարհուրեցուցանելով երկիրլի ոչ միայն զդրժող կենդանեացն զդաս զգազանացն արգելլով եւ զյարձակումն այլոցն ամենեցունց, այլեւ զնոցին նմանողս վնասաբերս ոմանս մարդիկ՝ խափանելով կարճելն ի շարաշարն օցաելոյ զբովանդակութիւն բարեացն<sup>83</sup>: Ըստ որմէ եւ երկրորդ գասն երեւէր կարգեալ յարմարա-

7 Z(Z<sub>2</sub>) զբառտին. Z<sub>1</sub>K վայրք վայելեց  
 13 AEFHKM տեղեօք  
 9 A փափակութեան, I<sub>2</sub> փափակութիւն  
 16 ABCENK զընակութիւնս  
 E փափակութեամբ, B փակութեամբ  
 20 AEI պարարտութեան  
 22 EI օգտագունից  
 23 ACEFHKM զարտաքոյն

11 EI<sub>2</sub> լինելութեան  
 216

կայ յօրինուածով՝ զայնպիսիս ունելով ծառան ի փայտիցն, ոչք թէեւ հեռի ի պողաբերութեանն շահից գային, բայց առ չոյժ ուղղածիք բարձրութեանցն եւ ողորկատարր բնութեանն եւ առուղութեանն  
 5 զիրաւարմարք մատուցանելոյ ի պէտս շինողացն փութոյ էին տունկք ոփեացն եւ կաղամախեացն եւ հաւասարաց նոցունց ցուցելոց<sup>84</sup>: Այլ անդ էր տեսնել սակաւ ինչ ի ներքսագոյն քան զասացեալս զկարի յոյժ գեղեցկատեսակսն պարագացեալ զբազմօգամ աղգակիցն այնոցիկ բնաւորեացն ընծայել զբերս եւ զանագամ համովք եւ զունով՝ երթալ միովն ի հեշտալի ճաշակմանն շայեկանութիւն, եւ միւսովն՝ անցուցանել ի զգայութեանցն բերկրութիւնս<sup>85</sup>:

Բայց առ այսոքիք մատուցանէր ինձ հանդիպումն նորոգագործ երեւութի՝ արուեստաւոր իմն երկրագործութեամբ երկայնաձիգ ելուզմունք բարունակացն ընդ գերակայ ծայրս ծառոցն շարամանեալք, ոչք գրեթէ անորիշ յիրեաց եւ անբաժանելի թուէր յանկութիւն զմիմեամբք ողջունելն խառնուածոյն եւ միայն գիտելի ել զանագանութիւն ի բնութեանէն<sup>86</sup>, Զկնի այսոցիկ ամենեցուն ծանօթանայր գոգցես պատշաճագոյն չափով եւ ուղղակի կշռութեամբ  
 20 ածուատեալ միջոցն՝ յաղագս քաջառուգագոյն զարգացման պիտանացու բանջարացն լինելոց ի նոսա<sup>87</sup>, եւ անուշահոտ եւ պայծառազարդ ծաղկաց աճեցման: Զոյս յակննէի սքանչելի գեղեցկութեամբ վայելչացեալ զվայրն, ուստի զուգախաղաց հասարակութեամբ  
 25 նոյնպէս կրկնակի սփոփանք խրախամիտ զուարթութեանց յառաջանային ընծայել՝ բուրումն հեշտալի հոտոտելեաց, եւ փայլող գեղեցկագունութեամբ՝ զուարճացումն տեսանելեաց:

Այլ նա մի քան զմի հրաշափառ տեղոյն պայծառանայր զուարճացեալ լցեալ ցանկալի բարութեամբ, ցուցանել՝ իբրու թէ զարձեալ ի նմին լսելի եղեալ եւ ազգի ազգի նուագաւոր հնչմանցն քաղցրաձայնութիւնք, յոյժ հեշտութեամբ ուրախացուցանելով զլսելիսս, ի տարմաբարն խոնութեամբ շուրջ խմբեցելոց՝ ի բազմաւորական թռչնոցն երամոց, ոչք մի ըստ միոջէ երբեմն առանձնակի  
 30 եւ երբեմն խառն ձայնակցութեամբ բերեալ մատուցանելին նուագս

1 Z(Z<sub>2</sub>)AC ունել  
 17 EI ել օմ.  
 4 BCFH փոյթոյ  
 22 AEFI ահանէի  
 7 ZACEM զգեղեցկատեսակսն  
 32 CH թռչոցն  
 13-14 Z<sub>2</sub>AEI նորագործ



երգոց: Ոմանք բնաւորականք լինբեանց երգեցող երաժշտականութեամբն, եւ կէսք ի թեթեաշարժ թոկոցն՝ հանէին օրինակ իմն հեշտալուր բարբառս<sup>88</sup>, Բայց եւս մեծաց զարմանալեաց արժանի քան զամենայն անդէն զայն էր տեսանել՝ զհասարակաւոր յորդորումն աշխատասիրաբայ երկրագործին, ընդ նմին եւ զշարժումն վտակախաղաց եւ յորդառատ ջուրցն. զորոց ճշմարտապէս եւ ոչ կարէի բնտրել զառաւելութիւնն այնուհետեւ զստէպ այսր անդր զշութափել<sup>89</sup> մշակին, եւ կամ զյաւէտախաղաց ջրոյն հոսանաց. զի աշխոյժ ժրովեամբ գոգցես եւ քաղցրագոյն յուսով բաժանէր ըստ իւրաքանչիւր ուրուք ընդ-ձեռամբն եղելոց զարգացման: Եւ ոչ տայր գերագանցել քան զջրոյն յառաջագէմ խաղացմունս զիւրով անդանդաղ յօժարմտութեամբն, այլ որպէս զուզընթաց լինելով միշտ անվնաս ամենագեղեցիկն պահեալ նախախնամէր ոռոգանելով վայր<sup>90</sup>: Զոր եւ իմ ահա այսմ ամենայնի մի ըստ միոջէ գեկուցելոյ բարելու ունակութեանցն շնորհալիցն տեղոյ ընդ հանդիպելն, լցայ քաջահաճոյ խնդամտութեամբ եւ զսոյն կարգաւոր վարկայ երկրորդել եւ առաջի ձերոյ լսելութեան, որպէս զի չինիցիք զուարձակիցք պատշաճագոյն եւ դուք իմում զարմանալի տեսութեանցս<sup>91</sup>:

<7.> Արտասանութիւն նաահանգստի<sup>92</sup>

Ի քաղաքացն ոմանք<sup>93</sup> թէպէտ եւ միջերկրեայք են եւ ըստ երեւելութեան կարծիցին միշտ ի քաջավայելչութեանն բարիս յաւէտ յղփանալ, որպէս յարմարագոյն բանի, սակայն ճշմարտութեամբ ոչ այնպէս արդարեւ բարեբախտութեան փառս ի նոցանէ կարել ցուցանել ի յամենուստ՝ իբրու զմեծ եւ գեր ի վերոյ յորդառատ մեծութիւնսն, որք բնակեալ գեղեցկօրէն ուժով ի ծովեզերսն իցեն քաղաքք ի մէջ անառիկ ամրացեալ խաղաղութեան. եւ առաւել եւս անհամեմատելի երջանկութիւն զայնոցիկ համարել, ուր յարացեալ ի նոսին եւ նաւահանգստեանն իցեն մեծապատիւ շքեղութիւնք<sup>94</sup>: Այլ նա դարձեալ եւ որ ի նոսս գտիրական գովութիւնն յօրանայ բերել պարժանս շնորհի, յաւէտ բնականն է կազմութիւն եւ ինքնեղ նաւահանգիստ, քան զայն որ յարուեստիցն եւ ի հնարաւոր ինչ

5 CH աշխատասիրաբայ  
11 AI գերագանցեալ  
12 ABCDEF KM զուզընթացք  
18—19 IK տեսութեանց

21 ZABEFI միջերկրայք, 1 ի մէջ երկրեայք  
28 AI համարեալ  
31 AE բերեալ

մարդկանէ որսացեալ յարուցեալ կանգնեցին՝ համանուն ունելով կողումն: Վասն զի նա քան զնա այնչափ զօրանայ զանազանութեամբ պատուականութեանն, որչափ բնական իրք քան զմարդկայինսն առաւելուն ամենայն հաստատուն եւ անսխալ յարգանօք<sup>95</sup>:

Յոր ահա եւ ես փոքր ինչ անցանելով ըստ քաղաքս ի ծովեզեր կողմն, տեսի յարուցեալս յերկրէ երկաքանչիւրս ոմանս զուգահաւասար դասս, զի բարձրագոյնք էին ի ճահ ցուցանելով հրուանդանս իմն եւ սարաւանդակս եւ ուղղածիք համբարձմամբ մտանէին ի ցամաքէս ի համատարածն ջուրս անցանել պարիսպ. եւ անդ պատշաճողաբար՝ գոգցես զօրէն գեղեցկաձեւ կամարի յարմարեալ ծայրիւքն առ միմեանս, այնքան միայն ցուցանէին վայելչական մերձաւորութիւն<sup>96</sup>, մինչ ելի մտի եւեթ նաւացն գեղեցկացելոց: Զոր ի հետ այնորիկ դարձեալ յաւէտ սքանչելիս զմիջոցն նոցա ունէր պարփակեալ բազմութիւն անչափ նաւաց մեծավայելուչ յօրինեալ կազմովք՝ զոմանս առագաստիւք եւ զոմանս արձակս ի մենքենաւոր կապոցն, եւ զայլս՝ այլով անցեալ ի խաղաղութեանն ձեւի զղաղար առնուլ<sup>97</sup>: Եւ թէպէտ եւ զկէսս կռէին եւ զկէսս իջուցանէին, սակայն այնպէս հրաշափառագոյն դիտէի զվայրն՝ մինչ զի լցեալ գրեթէ բոլոր բարեբախտութեամբ գծովայինն իմանայի տեղի, որ իբրու մեծ իմն եւ ամենագեղեցիկ ցուցիւ աստուածակերտն կառուցաւ շինուած:

Տի՛ նա, զինչ ինչ անդ ոչ էր տեսանել եւ միանգամայն սքանչելիսն ի մարդկականէ լսել բարեպաշտութիւն, եւ երգս աստուածավայելուչս, որք ի յոյժ անդնդային ծփանացն յորժամ ի միջոցէն յանցանելով ի նկատեալն գային տեղի, յանյժամ խնդալիցք եղեալք՝ ձեռս յերկինս համբառնալով զոհանային զառաջնորդական աջոյ արարչին՝ որ ապրեցոյց զնոսս, եւ զլքնաղագիւտն իւրեանց ստացեալ ինչս. եւ այնպիսաբարն միահամուռ երաժշտական ձայնիւք երգէին նուագս երգոց եւ փութային հանել յիւրաքանչիւր բերանոց նոր բարեբախտութիւն՝ առ խնդութեան սրտիցն բերկրեցելոց: Եւ երկրորդ անգամ լսէի զաղաչանս քաղցրագոյն առ ստացողն բոլորեցուն<sup>98</sup> եւ զայնոսիկ դարձեալ, որք անդուստն ելեալ ի խորս

1 ZABFHKM ի մարդկանէ  
12 AEI եւ եթէ  
15 Z1EI կազմելուք, Z1 կազմեալք  
15—16 EF KM մեքենաւոր  
24 BCFHKM յանդնդային  
25 Z1BF1 անցանելով Z խնդալից  
30 EI բերկրելոց  
2 ZBHI որ



5

նաւէին հանդերձեալ զնալ ի վերայ լոյժ մկանացն յորձանուտն ալեաց, յաղագս երկուցն պատճառաց հայցել. նախ՝ վասն անձանցն փրկութեան, եւ միւս եւս՝ զի լիաբախտիկ անդրէն օգնականութեամբ ի խաղաղուտն դառնայցեն վայր, զնէին ուխտ եւ աղօթէին աղօթս<sup>99</sup>:

10

Չոր ի հետ այնոցիկ անյագարար ապա եւ ի սրահիցն հայէի գեղեցկութիւն, որ շուրջ զնովաւ յարկեալք ամենապայծառն վայելչութեամբ, ունելով ազգի ազգի կենդանագրութիւնս, այնքան ճշգրտահասն եւ նմանագործս բոլորի, մինչ զի որպէս թէ կարծիս իսկ տային ըստ իւրաքանչիւր գծեալ կերպարանաց եւ զկենդանական արդեօք շնչոցն ունելով արձակել բարբառս: Այլ նա, թող զնրկարուցն որ ի նոսա եւ զյօրինմունս երանգոցն, եւ կամ զչախճապակեայ հարթարդակն յատակացն, որ ի ներքսն զանթուելիսն ունէին ամբարեալ բարեբախտութիւնս՝ միանգամայն զծով եւ զցամաք<sup>100</sup>: Յորմէ էր ցուցանել միւսանգամ հոծ եւ խիտ զբարեփառան կացրդեալ մարդիկ, զի նստէին զօրինաւոր արկեալ զարքունեացն առնուլ զսակ, եւ ոմանք մատուցանէին վճարեալք եւ անդէն վաղվազակի զգորչն հաւատային հատուցումն: Եւ այլք զտուրեւառութեանց բերէին փոյթ՝ վաճառաշահիկք լինելով: Եւ այնգունակք փոփոխմամբ՝ կիսոց ի վեր ելեալ բախտիւ՝ զանձանց երեւեցուցանէին բարգաւաճանս, եւ կէսք ի բազում խնճոյիցն զրուատեալք զննրբողականն ընդունէին բան, ոչ միայն երջանիկքն, այլեւ հանդիսականք արուեստաւորացն մարդիկք բարեբանեալք ճայթէին իրբու լոյժ խրախութեամբ, զվայելուչն տեղուչ յայտնէին փառս: Եւ առաւել եւս այնորիկ, ոչք ընդ ուզղաձիգ մուտս փոզոցացն ի նմանէ ի քաղաքն մտանէին տանել ի ներքս զբարեզարդ վայելչութիւնս, որ յայսր անդր անցիցն ապա այնուհետեւ արանցն թնդէր անհուն բազմութիւն եւ իսկոյն ի սաստիկ փութոյն եւ ի զմիմեամբք ելանելոյ՝ արդարանման ձեւով յանյժամ զծովու եւ զցամաքի գեղեցկօրէն բարեփառութիւն, զանտիսն ի քաղաք տանել եւ զքաղաքիսն<sup>101</sup> անդրէն ածել:

30

Չորս արդէն եւ իմ զայս ամենայն մի ըստ միոջէ տեսանելով սքանչանայի եւ հեշտացեալ ահա՝ զնոյնս իրաւացի համարեցայ եւ ձեռք պատմելի<sup>102</sup>:

1 CFH մկանանցն  
2 AC պատճառացն  
10 B գծել. Z3 զործեալ  
11—12 Z3 Նկարուցն ի սոսա  
220

14 EI միւսանգամ  
19 CEFIKM այնգունակ  
33 AEI զնոյն

<ԳԻՐԳ X>

ՍՍԼՄԱՆ ԳՐՈՒԹԵԱՆ

5

Գրութիւն է այցելութիւն տեսութեան իրիք իրի<sup>1</sup>: Եւ զանազանեցաւ յընթացողութեանէ զրութիւն շրջակայիւրն<sup>2</sup>: Քանզի զրութիւն է, որպիսի ինչ: «Եթէ պարսպելի՞ իցէ»: Աստանօր յատուկ իրիս է այցելութիւն: Իսկ եթէ առդիցես սմին զրութեանս դէմս կամ պատթաղութիւնս<sup>3</sup>: Իսկ եթէ առդիցես սմին զրութեանս դէմս կամ պատթաղութիւնս<sup>3</sup>: «Ի ճառս, որք են շրջակայք, առնես ենթադրութիւն, որպիսի ինչ<sup>3</sup>. «Ի գալ պարսկացն<sup>4</sup> խորհէին լակեդոնացիքն պարսպել Սպարտէ»: Յաւելեալ դէմք լակեդոնացուցն, եւ պատճառք պարսկացն՝ ենթադրութիւն գործէ<sup>5</sup>: Արդ այսուիկ, որպէս ասացի, զանազանեցան զրութիւն եւ ենթադրութիւն:

10

Եւ ի զրութեանցս ոմանք<sup>6</sup> են քաղաքականք, եւ ոմանք տեսականք: Քաղաքականք, որք միանգամ քաղաքի դիպուածս դիտեն<sup>7</sup>, որպիսի ինչ. «Եթէ ամուսնանալի՞ իցէ», «Եթէ պարսպելի՞», «Եթէ նաւելի՞»: Քանզի այսոքիկ ի միասին ունին զքաղաքս<sup>8</sup>: Իսկ տեսականքն, որ սոսկ զտեսութիւնն ունին<sup>9</sup>, որպիսի. «Եթէ զնդաձեւ՞ իցէ երկին», «Եթէ հոգի անմահ՞»<sup>10</sup>: Այսոքիկ տեսութեամբք միայն ըմբռնին<sup>11</sup>:

15

Եւ դարձեալ<sup>12</sup> զրութեանցն կէսքն են պարզք, եւ կէսքն բաղդատականք: Պարզքն՝ «Եթէ ճարտասանելի՞ է»: Իսկ բաղդատականք՝

1 G սահմանադրութեան. M յաղագս  
սահմանադրութեան  
2 I իրի օմ.  
3 JIN յենթադրութեանէ  
4 J իրս  
5 Z ընթացողութիւն.  
6 BIMN<sub>1</sub>J լակեդոնացիքն, EG լակեդոնացիքն: N<sub>2</sub>N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>6</sub>N<sub>7</sub> զակեդոնացիքն CEFHGKM պարսպելու պարս է,  
IN<sub>3</sub> պարսպելու պարս է, N<sub>4</sub>N<sub>5</sub>N<sub>7</sub> պարսպելու պարս է, J զՍպարտէ  
8 BIMJ լակեդոնացուցն, N<sub>2</sub>N<sub>3</sub>N<sub>4</sub>N<sub>5</sub> N<sub>6</sub>N<sub>7</sub> զակեդոնացուցն  
10 Z ընթացողութիւն  
12 J որ  
16 BEI<sub>1</sub> տեսութեամբ  
19 բոլորը (բացի J)՝ իսկ քաղաքականքն եթէ ճարտասանելի է օմ.



«եթէ ճարտասանելի» է մանաւանդ՝ քան իմաստասիրելի»<sup>13</sup>: Արդ րաժանումն այս է գրութեան:

Իսկ<sup>14</sup> գործեսցես զնա առաջին՝ նախաշաղկան, որ է գովութիւն իրին այնորիկ, յաղագս որոյ ենթադրութիւն է<sup>15</sup>: Եւ ապա կատարելականօք գլխովք՝ օգտակարան, կարողան, իրաւացեան<sup>16</sup>:

Առաջին ի կրթութեանց ընդդիմադրութիւն ընդունի եւ լուծումն ըստ կարողութեան:

<1.> Եթէ ամուսնանալի՞ իցէ<sup>17</sup>

10 ա. Առաջին ի կարեւորացն եւ մանաւանդ հիմն կենցաղօգուտ պիտոյիցն մարդկան ամուսնութեանն բոլորովին մեծարգի ախորժակ թուի, թէ տարցի զարժանաւորն իւր պատիւ գովութեան ի հասարակաց երկրէ ածանցելոց կենդանեաց, յոմանց բանի եւ ի կիսոց լուծեամբ: Վասն զի այսպիսի իմն զկատարելագոյնն աւարտեալ բերէ ինքեամբ յաշխարհ՝ զցնծալի բարեացն շահս, մինչ զի միշտ պատուականութեամբ լի գեր ի վերոյ համարեալ է ախորժակ: Իսկ եթէ այս այսպէս է, ապա առաւել կարգաւոր եւ ումեք ի բանաւորացն փութալ բանիւ առ ի մեծարել զներբողականս իր եղիցի: Այլ նա իբրեւ կամաւոր պարտապան այսմ զինքն վարկցի, թէ ոչ յառաջանայցէ, զի որով ինքն ի կենցաղս չերեւելիս եկեալ եւ սորուն բազմապատիկ բարութեանց հաղորդեալ, նմին պատճառի այնուհետեւ պարտ է, թէ նախ քան այլոց գովելեացն, սմա տացէ ի դէպ զսքանչելի եւ զյաւէժ ներբողարանութիւնսն: Որ եւ ընդդէմ ապականագործին եւ զկենդանութեան յարդարուն կազմուածով քակտողի մահու սա միայն համբարտակ յարուցեալ, զի զոր նա առ սակաւ ի վերայ անկանելով բնական տկարութեանս ծախեաց, սոյն եւ աւելի քան զհակառակն անցեալ ի մէջ զըջումն արժարծեաց եւ զկենդանասերութեանն յառաջխաղացումն զարգացոյց եւ միշտ գործակից աստուածայինն գտաւ արարչագործութեանն<sup>18</sup>: Տի՛ նա զասացեալս աներկբայ ստուգութեամբ ի մեծամեծացն գերաշխարհիկ պարգեւացն յոյժ համարելի գոլ կատարելական տուրք բարի անդէն յիսկզբանն վկայեցաւ ընդ արարեալն եւ կազմեալ ինքեամբ բարելինելութիւնսն զուգելով<sup>19</sup>:

Այլ զուարճանայ ցանկալի ախորժակս. ամուսնութիւն սովորու-

4 Z<sub>1</sub>AG ենթագրութիւն  
13 Z<sub>2</sub>AE զկատարագոյնսն  
18 Z(Z<sub>3</sub>)A իբրու  
222

19 FIK երեւելիս, չհին եկեալ ի սորուն  
32 Z<sub>1</sub> բարի լինելութիւնսն  
34 Z(Z<sub>1</sub>)AHIM ամուսնութեան

5 թիւն կալեալ անդուտ մինչեւ ցայժմ զբազմացուցանելն եւ չերեքպատիկ տարերսդ բաժանմամբ ի պարծանացն կողման կարգել: Քանզի ի թռչունս, եւ ի լուղակս, եւ ի ցամաքային կենդանիս<sup>20</sup> բարձրանալով. ոչք թէպէտ եւ զուգահաւասար բնաւորեցան սովաւ պահել անհետ զարատես փոխանորդութիւն կենաց: Սակայն ոչ այսպէս առանձնաբար ըստ ամենայնի գեր ի վերոյ պատուով իբրու բանաւոր իսկ որոշեցաւ ազգի յաղագս ունելոյ զհանգէտ օգտակարութեանն օրինաւոր կրօնիւք զհասարակութիւն<sup>21</sup> ի նոյնութեան զուգեցելոցն առնել, որոց եւ կարգօք սկիզբն եւ վայելչական յարմարութեամբ բովանդակութիւն: Ի ձեռն որոց եւ հարազատ որդոց փափագելի պտուղ որովայնի, միաբան եւ ազգատոհմային շերմութիւն, ըստ կամաց տուր եւ առութիւնք և ըստ ըղձի ուրախակցութեամբն զուարճացումն. եւ միանգամայն որ ինչ միանգամ բարեզարգութիւն քաղաքաց եւ համօրէն բնակչացն երկիր բարիք՝ ոչ ուստեք, քան եթէ յարմատոյ արարչակցութեանս զեղեալ յորդեսցեն:

Այլ սա, եւ հանդերձ այսքանեօք մեծաշահ բարութեամբք առուելուլ եւս զմեծ ի բնութեանս մերում զմիտս հանճարեղս հասմամբ իմաստիցն զօրանայ: Քանզի քաջայայտ ամենեցուն, զի զյառաջագոյն յապահովագրութեամբ յանգահացեալսն յորժամ ընդ իւրով քաղցր ըմբռմամբն արկցէ, անդրէն ջննդս եւ նախահոգակս դիտելոյ զօրքստօրէ զաստանօք կենացն պէտս<sup>22</sup> պատրաստէ նախակարգաւ եւ խելամուտ հմտութեամբ զտնօրէնութեանն տեսչութիւն յարդարել, որպէս զի ներքնոցն քաջայարմար իմաստութեամբ ուղղեցելոց<sup>23</sup>, դիւրաւ ապա եւ արտաքնոցն պատասպարել երկայնմտութեամբ: Դարձեալ եւ եթէ ո՞րպէս խորհրդով առ մերձաւորացն իրս վարել իմանալ, եւ ո՞ւմ պարտ է զհնազանդութեանն պատիւ հատուցանել: Առ այսոքիւք ճանաչել՝ եթէ զիս՞րդ տարեւորական վայելմանցն նշմարեսցին բերք. եւ կամ որո՞վ օրինակաւ չեւս առաջիկայսն գանձել ժառանգութեանցն պատրաստութիւնս: Եւ այսպէս առաւել քան բանի ընդ նոյն ինքն իրս աշխարհաւ վարութեանն անցանելով փորձի, գերազանցել օրինակ իմն զփութացելովք ի բանի դեգերմունս պարապել, զրեթէ եւ զգլխաւորագունօքն իսկ իմաստասիրական բաւականութեամբ<sup>24</sup>:

3 E1 լողակս  
6 I այնպէս

32 E գերազանց, Z<sub>3</sub>12 գերազանցեալ  
33 B անպարպել



Ընդ նմին խոստովանելոյ յառաջագոյն առաքինութեանս՝ ազատք եւս ի զազրալի եւ ի ծառայական գարշելեացն հարկատուութենէ օրհնութեամբ ամուսնացեալքն պահպանին: Զոր երբեմն ի բովանդակ ուժոյ եւ ի զուգահաւան կամաց բարեպաշտօն սահմանել ուխտադրութեանցն կէտ՝ ընդ ցածուն եւ մաքրագոյն զգաստութեանն եւ բարեգործել եւս զլաւագոյնն յորդորէ, եւ երբեմն ճանապարհաւ եւ կամ այլով իսկ զիպուածով հեռացումն՝ զմիմեանց զաշն զսիրելութեանն ամբացուցանել բաւական գոր: նաեւ նոյն իսկ ըստ օրինաւոր հրամանի պատուական անկողնեացն միաւորութիւնս՝<sup>24</sup> եւ մանաւանդ շափաւորագոյն հարկաւորաւն միայն ի պէտս որդէծնութեան վարելով, ո՛չ ապաքէն բոլորովին իսկ այս համարեալ իմաստնոցն գործ զովելի յղջախոհութեանս<sup>25</sup>:

Բայց եւ բարեհամբաւ քաջարութեանն անուանի հանդէս հի՛ւ իւրք առաւել քան թէ սովաւ բարձրագլուխ իննելով: Բայց է կատարումն՝ ուստի զբազում յորդորմունս կարեւորս իրբեւ զհանդիսադիրս քաջալերութեանն ունելով յաւէժացուցանէ համարձակել ի յանկրելի նահատակութիւնս. եւ ասեմ յորդորող ի վերայ հայրենի արարոցն մինչեւ ի մահու շափ մրցումն՝ փոխանակ տան եւ ընտանեաց զնել զանձն: Այլիւ յորժամ յիշխացին ուժգին խանդաղատանօք գուրբ մանկանց եւ կամ նորին ինքեան ամուսնին յուրվագոյն յորդութեամբ առաջի արկանեն եւ ոչ սուղ ինչ կասել ի յառաջադէմ ի յաղթութենէն պատերազմելոց: Նոյնպէս եւ մտերիմ բարեկամացն եւ համատոհմիկ ազգայնոցն սիրելութիւն ընթանան յորդորել ի քաջութեան հանդէս: Այսոքիկ ահա եւ այսպիսիք բռնագոյն կարեկցութեան գրաւականք, թուի թէ ոչ միայն զքաջս, այլեւ զանփորձս ոմանս մարտից կարողագոյն զարթուցանել ի յաշխոյժ գուպար ընդդէմ հակառակամարտիցն<sup>26</sup>:

Անբաժանելի յայսցանէ երկից կատարեալագոյն առաքինութեանց եւ մասն սոցին շորրորդն՝ արդարութիւն առ ի պատուել բարելաւ ախարժակաւս յառաջ քան զանիրաւ զլացութիւն զաշխատասէր քրտանցն երկասիրութիւն, յորում բաժանին ըստ իւրաքանչիւր պիտոյիցն արժանաւոր բարեացն զուգահաւասար բաժանմունք՝

9 EI անկողնեաց  
10 I չափաւորական  
13 ZBH անուանի om.  
19 BC յիշեցին, EF՝ KM յիշեցին  
20 EK, մանկանցն

25 ABCFIK, M այլ om.  
25 ZA կարողագոյնս  
27 ZE հակառակամարտից  
30 I աշխատասէր, Z, I զաշխարհասէր

զուարթամիտ կամօք մշակել ի հրամայեալ ողորմածութեանն տրասէր բարեմտութեամբ նուէրս յարմտեաց անդաստանաց եւ յայլոց պտղաբերութեանցն ի տէրունեան տաճարացն ընծայս: Բազում անգամ եւ անխարդախ իրաւամբք առ ընկերակցացն վարել միաբանութիւնս, այլեւ ըստ արդարութեանն ուղիղ ընթացք, զի զիրեանցն արդարագործ բարելաւութիւնս գաստիարակելով զրել ի ծննդոցն բարս. որպէս զի նմանողք ըստ ամենայնի հայրենի ուղղութեանցն գտանիցին<sup>27</sup>:

Եւ արդ՝ իր, որ այսպէս ինքն ըստ ինքեան ի հեշտալեացն ցուցաւ, այլեւ այլոցն եւս ամենազան շահաւետութեանց մայրաքաղաք, որ եւ հանդերձ բազմապատիկ կենդանեաց յարատեւութեամբ անհատ եւս զբանաւորիս ունի զկենդանութիւն, ոչ ի յաւերջագոյն մանաւանդ քան ի հարկաւորացն ծանուցեալ շահաբեր պիտոյից եւ առ հասարակ իսկ շինութեան եւ ուրախալից սփոփանաց զօրավիզն, սա եւ ընդ ախորժելի մարմնական բարիսն ընդհնուել՝ բերէ ինքեամբ եւ զհոգեւորական վարուցն զգլխաւորագոյնսն զասացելոց շորից առաքինութեանցն կատարմունս: Ընդդէմ այսպիսի ապա ամենաբարի ախորժակի, թէեւ կարի որ ի հակառակասէր վիճողացն իցէ՝ ոչ իւրք կարասցէ ընդդիմաբանել եւ կամ բամբասասէր ապագովութեամբ յըստգտանելեացն արկանել յանպատիւ արհամարհութիւն:

Բ. Այլ «ամուսնութիւն, աւէ<sup>28</sup>, ի տրտմականացն է, վասն զի տարածամ մահս մանկանց եւ կենակիցն ամուսնի ի վերայ հասուցանելով՝ յոյժ յանփարատելիսն պաշարէ ցաւագին տրտմութեան»: Զի՞նչ ասես, զլուծիչ կապանաւոր թախժանաց եւ զառաւել սփոփանքս հրճուանաց ասելով՝ այժմ երթեալ տարցիս արդէն իսկ ի յայտնութենէ բանիս զյանդիմանութիւնս: Վասն զի զի՞նչ մեծ եւ յաւէտ պայծառագոյն բերկրանք խնդալից ուրախութեան, քան որ հանդերձ բազմախումբ պարաւորութեամբ ի սկզբունս զովելոյ իրիս կատարի: Ուստի քաջայայտ է զի սկզբանս<sup>29</sup> ի վերայ խրախամիտ զուարճմանն հաստատեցելոյ, այնուհետեւ օր ըստ օրէ զարգանալ անարտում զուարճութեանն հրճուանօք եւ յեսն առաջիկայսն երեւեսցին, մանաւանդ յորժամ բազմամանկութեանն ծաղիկ առաջի ա-

2 Z ի յարմտեաց  
4 Z յընկերակցացն  
15—16 ZEIM ընդհնուելալ

24 AE ցաւ ահագին  
26 Z, I անդրէն,  
32 ZEHM յեսս



չացն տեսանիցի, եւ ըստ համակամ հաճոյից ամուսնին, ո՞ ոչ զիտէ՞  
զի ժամ քան զժամ այնպիսեացն նորոգին ամենահնչտ բարեմտու-  
թեանն կիրք: Յաղագս որոյ եւ ի զատանել երբէք ըստ այսպիսի  
փափագելիս՝ ըղձիք իմն եւ յոյժ ջերմագութի հայեցուածու բաղկա-  
ցեալք, գտանել արգարիս զեղ մխիթարութեան, յորժամ զայնոցիկ  
բնութիւնս տեսցեն ամբողջ պահպանութեամբ պաշտպանեալս<sup>30</sup>:

Այլ ահա սովիմք այսու ի տրտմականացն ասելով դարձեալ՝  
ակամայ խոստովանութեամբ սահմանեցեր զընտրութիւն սորա  
յաստուածայնոյն անխտրութենէ, վասն զի ազատ եւ բոլորովին  
անբաժ ի հակառակին հաղորդութենէ, միայն գեր ի վերոյ քան  
զընաւ ստորինս՝ սուրբն վիճակեցաւ տէրութիւն վեհագոյն առանձ-  
նաւորութեամբ<sup>31</sup>: Իսկ յերկրիքս<sup>32</sup> ոչ այնպէս տեսանին երբէք վճար-  
մունք իրաց, այլ միշտ խառնուած ընդունելով յերկոցունց՝ ի լաւէն  
եւ ի զժպատեհ զիպուածոյն ճանաչին այնպիսի բանիւ: Որ զի ընդ  
երկրագործութեան լծակցի երբեմն եւ շարաշար վտանգ անբերու-  
թեանն, նոյնօրինակ եւ ընդ զինուորութեանն՝ պարտութիւնք եւ  
մահք տարածամք. ընդ նաւարկութեանն՝ զանազան վնասուցն  
թշուառութիւնք, եւ որքան այլք եւս նմանք այսոցիկ երկաքանչիւ-  
րոցն ընդդիմութեանց հաւասարեալք ցուցանին: Բայց սակայն թէ-  
պէտ եւ այսպիսիք բնաւորեցան ի յերկրի ախորժակք, այլ ոչ ան-  
յուսացեալք երբէք յիւրաքանչիւրն ինին օգտութենէ, բայց միան-  
գամայն զանշահն եւ զվնասաբեր յուսահատութիւնն իբր ի վերջ  
հարկանելով՝ մոռացոնս գոգցես զվրիպակն առնելով պատահմու-  
նս, յամենայնի ժիրք եւ ինքնայորոք լինելով մարդկայինս ազգ,  
անցեալ միայն սպասեն պատշաճ յաջողաւածոյն յօժարական կա-  
մօք: Եւ նորին աղագաւ պատրաստք այնուհետեւ ի զինուորելն  
պնդակազմ փութով, ի մշակելն եւ ի նաւավարել եւ ի բնաւս աք-  
հասարակ անհեղգարար յառաջանան ճեպելով<sup>33</sup>:

Ապա ուրեմն զի յայսմ այսպէս ստուգեցաւ ազատ յամբաս-  
տանութենէ, ի ճշմարտութենէ իբր ստուգեսցի: Սոյն երանելի եւ  
յօգտակարագունիցն, զորմէ որպէս յառաջագոյն զեկուցաւ, ի սմա-

նէ բազմահոյլ ազգականացն միաբանութիւնք, եւ սեռն սիրելու-  
թեամբ բարեկամացն ծանօթութիւնք միշտ երեւելագոյնս բարե-  
բախտիկն ազատութեամբ յոյժ լցեալ վայելչանան՝ յօրինելով հրա-  
պարակք, ատեան լինելով նոքումբք վստահանալիք ամբողջեամբ  
պարսպեալք եւ ի դրժող թշնամեացն են դաւաճանութենէ եւ քաջա-  
հաւան կամակցութեամբ ինքեանք առ իրեարս խաղաղացեալք: Այլ  
նա դարձեալ եւ ոչ ի զժուարորսալեացն է<sup>34</sup>, մանաւանդ քան թէ ի  
կարողագունիցն հասումն լաւագոյն ախորժակիս: Քանզի ոչ է  
ընդ անբաւութիւն անհուն եւ կամ լայնատարած խորոց ծովու  
ճանապարհորդել, եւ ոչ ընդ ցամաք բաղում օթեմանօք ի հեռաս-  
տանս ուրեք հատանել անցանել, եւ կամ անհանդուրժելի արդեօք  
զծախիցն իցէ առնել յոլովութիւն ընչից եւ ստացուածոց, եւ ոչ որ  
այլ ինչ ի պատճառացն բաղբաղելով: Բայց յատուկ ընդ կամելն  
անդէն եւ հանդիպումն առձեռնպատրաստ յարանայ. է զի ի նմին  
իսկ բնակութեան, եւ է զի ի մօտաւորսն բնակեալ տեղիսն: Եւ  
այսպէս ի յամենայնի ամենայն լեալ՝ բարեացն լրմամբ միշտ ան-  
խոտան ցուցաւ հասարակաց ամենեցուն ցանկալի գոլ, տարակու-  
սելի տրտմութեանն գրաւման պատշաճագոյն փարատիչ՝ կարեւոր  
օգտակարագունիցն պաշտպան զիրահանար ի գիրս ստանալու:  
Յայսցանէ ահա եւ յայլոցն քաջայայտ եղելոցն ի սմանէ վայելչա-  
կան բարեզարդութեանց կարգաւոր է ընդունել սմա և զանհակա-  
ռակ գովաբանութեանցն հատուցումն, որպէս զի եղիցի յորդորա-  
կան յօժարութիւն արժանաւորացն սորա, նախ քան այլոցն հասա-  
նել սմին ի կեանս աշխարհիս:

գ. Այլ ամուսնութիւն, ասէ, ի տաղտկալեացն գոլ<sup>35</sup>, վասն զի  
չարալուկ կարեօք հոգոց պատանդեալ է մանկանցն եւ կենակիցն  
ամուսնի, եւ բազում եւ այլոցն հարկաւոր պիտոյիցն՝ առ ի հաշել  
զըմբռնեալսն: Եւ արդ եկ աղէ ճշմարտիւ ի բոլորն մարդկան վճար-  
մունս ուչ եղեալ հայեցուք, որ ի նոցանէ առանց յառաջախորհրդի  
զիտաւորութեան եւ բնաւ իսկ առանց բազմաջան տաժանմանց  
տարցի զբովանդակութիւն: Քանզի ահաւասիկ այժմ ի յընդունայն  
վիճաբանելոք երկուց այսոցիկ անգիտութեանց առեր զքեւ եպեր-  
անս: Մի զի ոչ ուսար ի կազմութենէ ահաւոր եւ մեծս արարածաց,

4 FI հայեցածոց  
9 AEI յաստուածայնոցն  
11 BI<sub>2</sub> ստորինս  
12 ABCEK<sub>2</sub>M յերիքս, FZ<sub>1</sub> յերեքիս,  
Z<sub>1</sub>I յէքս  
14 Z(Z<sub>1</sub>)EKM զի թէ  
15—16 EI անբերութեան, I վտանգա-  
բերութիւնք  
20 AEI ախորժակ  
23 Z<sub>2</sub>AI զվրիպականն  
27 EI նաւավարելն  
28 ZM ճեպով

3 Z(Z<sub>1</sub>)A վայելչականն, Z<sub>2</sub>I վայել-  
չական  
9 AEI<sub>2</sub> անբաւութեանն  
14 Z<sub>1</sub>I յօրանայ  
32 Z<sub>2</sub>AEI վիճաբան (... om. մինչև էլ  
228.36)... զործաց



ոյք ակնարկելով եւ միայն հրամանական բանիւ արարչին ընկա-  
լան զգարդ եւ զհաստատութիւն իւրեանց, եւ որքան անդէն իսկ  
ամենահար զօրութեամբն անաշխատ կատարի կամեցեալն: Եւ  
երկրորդ՝ զի եւ ոչ ի բում բնութենէ եւ կամ յազգակցացն տեղե-  
կացար, եթէ հանդերձ ժիր եւ անդանդաղ աշխատութեամբք մարդ-  
կան գործք սահմանեցան գալ յանկումն կատարելութեան: Յաղա-  
զս որոյ առաքինեացն եւ ի վեր քան զվերջինն տաղտկանս խենն-  
շութեանն համբարձեցելոցն է փոյթ հանդիսանալ ընդ քաղցր եր-  
կասիրութեանն վաստակս, որով զիրաքանչիւր անգործութեանն  
զժուարինս զիրեացեն ի հեշտալի վայելիցն աջողութիւնս: Իսկ ա-  
մուսնութեան սակաւ ինչ մասն հոգոցն զիրակրելի այսու առաւել,  
զի ի յովոյս նախահոգակս մասնեալ բաժանի, վասն զի եւ օգնա-  
կանին սատարութեամբ եւ ի շափ հասելոց ժառանգացն հոգա-  
բարձութեամբ գիտելի է զկարեացն թեթեացուցանել զվտանգա-  
ւոր ծանրութիւն եւ զբարեաց բերել խնդակից կամօք զհասարակու-  
թիւն:

Սոյն այս ցանկալի իրագործութիւն ի մէջ ամենապատիկ բա-  
րութեան վկայեալս զարդարի եւ ըստ կորովակի իրաւացւոյն մա-  
սին. զի որպէս ումեքն ի քաղցրագունիցն համարեալս զինքեանն  
յաշխարհս գալ. ուստի եւ ի սմա նախ՝ որ եւ վկայեցաւ իսկ ճշմար-  
տութեամբն, առաջին ճաշակել տեսլեամբ զպայծառ լուսոյն զժա-  
ւալումն, եւ զայլսն մի բոս միոջէ անբաւ բարեկրութեանցն վայել-  
մունս չինքն ձգեալ, իրաւացի է ըստ իւրոց բարութք շահաւորութե-  
անցն յաջորդեալ նմանապէս առ այլսն զփոխարկութեանն հատու-  
ցումն, ուստի եղիցի այնուհետեւ յառաջանալ ընդ տնարար շինու-  
թեանն եւ հարազատարար ժառանգակալացն փոխանորդութեան:  
Փոխանակ ընդ որոյ եւ պատրաստին կրկնապատիկ բարիք պատ-  
րաստել՝ դարձուցանել զարժանաւոր դարձուածս հայրենի աշխա-  
տութեանն ի ծննդոցն՝ ի կենդանութեան պատկառելի պատուոյն կա-  
մակատարութիւն եւ ծերատածութեանցն<sup>36</sup> վերստին խնամակալու-  
թիւն: Իսկ յորժամ հասցէ հարկաւոր փոփոխմանն հրաժեշտ ի կեն-  
ցաղոյս, յուղարկեալք այնուհետեւ ի նոցանէ իբրեւ ի խաղաղական  
հանգիստ: Եւ կամ թէ զնոյն ինքն կենան մնացելոցն չերկրի շառա-  
ւեղացն, համարել արգարեւ անձանց բարեկեցութիւն, զորս վեհա-  
գոյն քան զանշունչ կենդանագրութեանցն ձեւ ի կենդանագրացն  
յօրինեալ, եւ կամ ի կարծր ինչ նիւթոց պատկերագործաց զստեղ-

15 BCFHKM բերեալ

228

ծուածս պատկերաց թողլով յիշատակարանս՝ զպատուական բա-  
նաւորացն մնացուածս, ոչք անմոռաց նորոգմամբ յիշատակել յա-  
րածամ զգութ հայրենի ջերմութեան յորդորականք են եւ լինին:

Իսկ արդ իր, որ այսպէս ի ստույգ եւ ի կարգաւոր քննութենէ  
բարիս գտաւ բոլորովին յառաջագաս, եւ բնութեւագոյն կատարելու-  
թեանցն շտեմարան, եւ պատկառելի ծերատածութեանն խնամոյ  
պատսպարան, արժարժիչ բարեկարգ շինութեան եւ յապահովացեալ  
բարեբախտութիւն կենաց բարգաւաճագունից եւ պարծանօք լցե-  
լոց, առաջնորդ օրինաւոր կատարմանն վստահանալի բարեյուսու-  
թեամբ: Ի գլխաւորեցուցիչ ի վերայ ամենայնի համառօտելով զա-  
մենարարի իրս ի գովութիւն, զի իմաստագոյն եւ յաւէտ ընդ երկիւ-  
ղածութեանն պատուիրանապահ՝ ամբողջութեամբ գրաւեալս զայնոսիկ  
է համարել մարդիկ, ոչք աստուածային օրհնութեամբն ասացելոյ  
ախորժակիս զհետ անցցեն՝ հանդերձ ամենայն անբստգտանելի  
բարեպաշտութեամբ:

<2.> Թէ պարսպելի՞ է<sup>37</sup>

ա. Ինձ ոչինչ այլ այսպէս ուժգնակի հիացումն զարմացման  
բերեալ մատուցանէ, քան թէ զայնոցիկ մարդկան ախորժակս  
մտաց, որ զբաղաբացն զանազան յարմարակարգութիւնսն զովեն,  
եւ հեշտաւ տանին զբնակելն անդ, եւ ի բիրապատիկ բարութիւն-  
սըն հանապաղ վայելողս, այլեւ սքանչանան եւս ընդ նախագտակս  
արուեստի այնպիսի ամենարարի իրագործութեան եւ ի պարսպե-  
լոյն խոյս տուեալք՝ զժուարելով ի բաց զիրեանցն զարձուցանեն  
դէմս: Եւ զայս ոչ գիտեն թշուառականքն, զի առանց սորա եւ ան-  
ուանել իսկ ոչ կարեսցէ քաղաք. եւ թէ անուանեցի երբէք, սակայն  
զլետին թշուառութեանցն ամենայն իրօք երթեալ տարցի վարանս  
ի թշնամեացն եւ արտատեղի տարակոյս աղիտիցն: Քանզի ստույգ  
արդարեւ սա իսկ է սկիզբն եւ յառաջագաս ամենայն՝ զեղեցկա-  
կարգութեան բարեացն եւ պատճառ զանազան արհեստիցն յառաջ-  
խաղացութեան, եւ յայսմանէ մեծանալով վայելչական իրք մարդ-  
կան, որով զկենացն եւ զբարի կենացն<sup>38</sup> անցեալ տանին շահս: Յա-  
ղագս որոյ իմաստնագոյնք եւ յոյժ բարգաւաճեալք ի բանաւորացս

5 AEI առաջագաս

13 EI համարեալ

20 EI<sub>2</sub> բարութիւնս

25 BF կարացի, Հհն ի բազաբ



սմին հոգ տանելով գործոց, քաջապէս իմն զոգցես ժառանգեն՝ կատարելով միշտ զբարօրութեանցն զիպուածս եւ լիաբախտիկք ի կենցաղումս յօրանան փառօք:

5 Եւ թերեւս յիրաւի յաղագս պատուականագունին այնորիկ, որ ոչ միայն մարմնականագունին այնորիկ պատասպարան ելով պահէ ի խորին խաղաղութեան, այլեւ հոգեւորին յաւէտ եւս օճառ<sup>39</sup> բարեպաշտութեան մատուցանէ այսպիսի բանիւ: Վասն զի յերկուս ժամանակս կրթեալ ածէ զմարդիկ ի շորից առաքինութեանցն հանդէս: Ի խաղաղութեան ժամանակի իմաստութեան եւ յողջախոհութեան, եւ ի պատերազմականին՝ յարութեան եւ յարգարութեան: 3 Իմաստութեան, զի մի վայր հաւաքելով զբազմութիւնս արուեստաւորացն՝ պարապեցուցանէ զըրոյորս հանապաղ իբր ի յոյժ վարժման՝ ի կալ ի հրահանգս գիտութեան յիրումն բնակութեան, յորոց կէսք ի միմեանց փորձին զզանազան հանճարս՝ բանական եւ գործական արհեստից, եւ կէսք յառաջանալով բերեալ անցուցանեն զիրաքանչիւր զիմաստիցն գիտու: Ուստի ոմանք պատարեալ հանճարով՝ զառաջնորդութիւն հասարակաց ստանան եւ զյարմարական քաղաքավարութիւն քաջապէս մատուցանեն քաղաքաց, եւ ոմանք առանձնակի յիրաքանչիւր տանց տանին զտնտեսական խնամս շինութեան: Եւ յողջախոհութեան զի ոչ խառն ի խուռն յարձակին ի զիս իգամողութիւնս խառնիցն, այլ յարմարական կարգիւ դասու գան յամուսնութիւն ըստ բուն բարոյն կամաց. եւ քաջապէս որոշելով յայլոց՝ պարապեն իրաքանչիւր ամուսին զուզակցացն լինել մտահաճոյ, որով քաջասնութիւնք 25 ապա մանկանց յաւետանան եւ բարեկարգ շինութիւն տանց եւ յաստուածայինն օրինաց:

Իսկ յարութեանն՝ այնու զի զնա ունելով յոյս ապաստանի ի խոռովութեան ժամանակին ի թիկունս, եւ այնուհետեւ կամ արտաքս ելանել իբր ի մարզարանէ արիաբար մարտնչին ի վերայ հայրենի գաւառին, եւ կամ անդուստ իսկ քաջացեալ վրիժակեն աներկիւղ զի վերայ յարուցեալսն անիրաւութեամբ<sup>40</sup>: Որ է ճշմարտապէս արգարեւ սոյն եւ արդարակ գործոյն պաշտօնեալ, առ ի վճարումն առնլով սատակել զսատակիչսն շարացելոց թշնամեացն եւ ապրեցուցանել զանձինս եւ զիրեանցն սիրելիս եւ յաւէժ ի բարե-

4 A12 պատուաղուսնին 21 E12 յարձակեն  
6-7 E11 բարեպաշտութեանն 25 ACF բարեկարգք

զարդութեան զտէրունեանն պահել տաճարս՝ հանդերձ խայրեօքն եւ նուիրօք, եւ ամբողջ ընդ նմին զամուսնութեանցն յարմարութիւնս եւ զայլ ամենայն պահելով՝ ցուցանել բարեկարգութիւն քաղաքի<sup>41</sup>:

5 Եւ արդ իր, որ այսպէս զանազան արուեստից պատճառ է նորոգութեան, եւ գեղեցկակարգութեան կենցաղոյս եւ յապահով հանգստարան բիրապատիկ բարեդիպութեանց ի զուարճացուցանել եւ ինքն ըստ ինքեան յոյժ ի վայելչականացն մայրաքաղաք ելով ի խաղաղութեան՝ իմաստութեամբ եւ ողջախոհութեամբ զարդարէ եւ ի պատերազմականին՝ արութեամբ եւ արգարութեամբ: Սմա ապա ո՞ որ այնքան ի թշուառականացն հղիցի մինչ զի փոխանակ յարգելոյ եւ մեծարելոյ՝ զայսպիսի ընդունակ բարեաց, ընդդէմ ինչ ասել բամբասանս կարասցէ յանդգնաբար ձեռնարկութեամբ համարձակել:

15 Բ. Այո ասէ, այլ պարիսպ երկշտութեան է նշանակ, վասն զի զորս ի ներսն արգելեալս փակէ յիրումն հաստատութեան, զոգցես անարիս իմն եւ յոյժ խենեշագոյնս զնոսա ցուցանէ: Զգուշութիւն եւ զյառաջագոյն պատրաստութիւն իրաց, որ յաւէտ արուորագոյն քաջութեան, խենեշ վատութեանն նշանակիչս ասել գով<sup>42</sup>, եւ թուիս զայդ ասելով քո այժմ, միանգամայն երթեալ տարցիս աստուստ վաղվազակի զչամբուշ իմարութեանն մրցանակս. քանզի եթէ այդ այդպէս է, յոյժ զիրագոյն է քեզ եւ զայլն ամենայն պատրաստութիւնս իրաց հակառակ անուամբ ձայնելի<sup>43</sup>: Ուստի ժամ է այսուհետեւ ասել քեզ անարութեան ցոյցս եւ զգինուորութեանն հանդերձումն սպառազինութեան, եւ զնաւաստութեանն մենքենաւոր հնար փրկութեան, եւ զճանապարհորդութեանն նախազուշութիւնս 25 եւ այլոց իրացն ամենայնի զպատրաստութիւնս, որով հանգիսացեալ մարդիկ յիրաքանչիւրն արիանան, զործառնութիւնս եւ անցեալ տանին զյաղթութեանն կենցաղօգտութիւնս: Իսկ եթէ այս ամենայն որպէս սասցաւ, արութեան եւ ոչ անարութեան են ցոյցք, նմանապէս սոցա եւ յաւէտագոյն եւս ծանիր զպարսպաւորութիւն քաջարութեանն զօրավիզն եւ բոլոր փարթամ օգտակարութեանցն

2 Z(Z1)EFK զյարմարութիւնս 25 EFHIKM մեքենաւոր  
6 Z(Z1) աշխարհի փխ. կենցաղոյս 27 ZEM զայլոցն իրաց, AEFHIKM որովք  
11 BCH եզ ցի 32 E12 քաջարութեանց FHIK3 M օգտակարութեանց  
16 CH զորսն BCEFHIKM արգելեալն  
21 AEI2 իմարութեան



առիթ, որ միշտ ի չարձակմանէ զրկողացն մարտակից եղեալ  
իրոցն մանկանց ամենայնիւ զետեղ պահէ եւ իրր անհատ կապա-  
նօք սիրոյ ածեալ զբոլորս ի միաբանութիւն յարմարէ եւ տուրեւտիկ  
հանգանակութեամբք վաճառաց զբնաւս անկարօտ կացուցանէ եւ  
5 բանական եւ գործնական արուեստիւր, որ է վեհագոյն բարի  
մարդկան հանապազ պայծառացեալ զարգարի<sup>44</sup>:

Այլ նա առաւել սքանչելի, զի զայսչափ օգտութեանցն պատ-  
ճառ ոչ դժուարին, այլ դիւրագոյն եւ կարելի ի յարուցանել: Քանզի  
ոչ ընդ համատարած լայնութիւն ծովու նաւարկել եւ հաւաքել զնի-  
10 վբքսն, եւ ոչ ի հեռարձակ վայրաց բազմաշխատութեամբ հայցել եւ  
ածել զարուեստաւորաց էր պարս, բայց կամացն միայն պէտք են  
յօժարութեան առ ի յառաջարկութիւն գործոյն գալ, եւ անդէն վաղ-  
վաղակի առ ձեռն նիւթոյն գտանի պատրաստութիւն: Ընդ նմին ոչ  
15 սուղ եւ շինողացն բազմութիւն, որք արուեստակելով երագապէս  
զհետ կամացն ածեալ՝ եւ զգործոյն ցուցանեն կատարելութիւն: Իսկ  
որ այսպէս յաղթատուր ստացողացն խոստովանեցաւ իննել եւ օգ-  
տակար միանգամայն եւ դիւրահնար ի յարուցանել, յայտ է ահա  
թէ ի գովելեացն է եւ մանաւանդ դիւրին իսկ յառաջնոցն:

գ. Այլ դարձեալ. «պարսպաշինութիւնն, ասէ, յորնագոյն ծախ  
20 ընչից գործէ, եւ սաստիկ աշխատութիւնս մարմնոյ հասուցանէ»: Քաջագոյն  
գիտեա զասացեալսդ ի քէն, ո՞վ ամբաստանողդ հասարակաց.  
վասն զի մի գուցէ անխորհրդաբար զաչդ ասելով՝ զերկուց  
այսոցիկ շարահամբաւ եւ վատթարագոյն իրաց անցեալ տարցիս  
պախարականս՝ զագահութեան բոհշտ բարուց եւ զանարի տաղտուկ  
25 վատութեանն եւս կարծիս: Յաղագս որոյ եւ ո՞ ոչ գիտէ զայս, թէ  
ամենայն մարդկային իրք երկուց այսոցիկ կարօտանան պիտոյից  
ի կատարումն իրեանց՝ ծախից ընչից եւ տաժանման մարմնոյ,  
եւ մանաւանդ պատուականագոյնքն եւ յոյժ պիտանացուքն եւ յա-  
ւէտ եւս զասացելոցս պահանջեն վարկս<sup>45</sup>: Եւ քան զսա զինչ ոք կա-  
30 րացցէ ցուցանել վեհագոյն եւ ամենեւին պիտանացուն, որ ի մի  
տեղի հաւաքելով զբազմութիւն մարդկան՝ տեսողս եւ վերակացուս  
իրերաց կացուցանէ եւ յանդիմանական պատկառանօք ամօթոյ  
միմեանց եւ կշտամբութեամբ ահի տանջանաց դատաւորաց ատե-  
նիւ ի բաց առնի եւ յանիրաւ զրկութեանց զբոլորս, եւ ածեալ յի-  
35 բաւացուցն հաստատէ կանոնի: Ուստի յայտ է, թէ զայսպիսի իրա-

8 ABCFHK<sub>1</sub>M ի om.

10 Z<sub>2</sub>BÇEFIK<sub>1</sub> բազմաշատութեամբ

ւացուցս պատճառ արուեստակեալս պարիսպ, եւ զորս միանգամ ի  
նախահարց տարաւ որ բարի ստացուած՝ հատուցանել զփոխանակն  
ծննդոց, եւ հետագայ մանկանցն, կրկին արդարութիւն է եւ յաւե-  
տագոյն իրաւացի եւս գործ. թէ ոչ եւ յումեքէ ընկալաւ զսոյնպիսի  
5 վեհագոյն ստացուած, եւ ինքն իրրու նախահաւակ ելով յաջորդես-  
ցէ մտերիմ սիրելեաց, եւ անմոռաց յիշատակ երախտեաց ի մէջ  
մարդկան զպարիսպս թողցէ ազգաց յազգս:

Եւ արգ իր, որ այսպիսաբար յամենայն կողմանց վայելչանայ,  
եւ իրաւացուցն, որով բժշկէ զիրս մարդկան, սկիզբն եւ վերակացու  
է եւ պահապան ընչեղութեան<sup>46</sup> եւ բարեզարդ ճոխութեան, եւ ընդ ն-  
մին ամենազան գիտութեանց, ոյց կենցաղոյս պայծառանայ վար-  
ժարան, եւ մտերիմ ընդ միմեանս սիրոյ կապ յարմարութեան, եւ  
տուրեւառ վաճառաց, անկարօտ կենաց պատճառ, եւ նախախնա-  
մող դարման իշխանաց եւ իշխեցելոց<sup>47</sup>: Ի սորա շինութիւն փոյթ  
15 պարապոյ ցուցանել եղիցի ինձ եւ իմոց հաւանեցելոցն. եւ կամ  
մեծապէս գովութեամբ գովել զայնոսիկ եւ որք փութանն յարուցա-  
նել զսա:

<3.> Թէ նաւելի\* Է<sup>48</sup>

ա. Քան զամենայն իրաց զէպս գործոյն, որ ի կենցաղումս վա-  
20 րին ի մէջ մարդկան ի պէտս կենաց, հրաշափառագոյն եւ նորա-  
սքանչ ցուցանի նաւաստական իրիս արուեստ եւ գրեթէ գեր ի վերոյ  
անցեալ կայ քան զբնաւ բնականագոյն ախորժակս բանաւորացս:  
Այլ նա թէպէտ եւ այսպէս ունի զբնութեանն պատահմունս իրս, սա-  
կայն աստուածային շնորհաւ վարեցեալ<sup>49</sup> զանկարելիսն եւ զան-  
25 բնականս զանազան մենքենայաւոր հնարիւքն կարելիս եւ զնաչա-  
կանս կացուցանէ ամենեցուն եւ զնայ տառին ճանապարհորդութիւն  
քան զյերկրի գնացս<sup>50</sup> եւս դիւրագոյնս կազմէ հարկանել ցամաքա-  
յինս: Եւ այսպէս զերկուս տարերս համադրոյցս արկանելով ի գործ  
հարկաւոր պիտոյիցն՝ զծով եւ զցամաք, երթեալ տանի զմեծ եւ  
30 զզանազան բարեդիպութեանցն բերս հասարակաբար յերկաքան-

2 Z \*բ տարաւ,  
2-3 AE զփոխանակ ծննդոցն  
3 ZB յետադայ  
4 Z(Z<sub>1</sub>)E զայսպիսի, 1 զայնպիսի  
14 ABCEPHK<sub>2</sub> փոյթ փոյթ  
17 AE զայս  
19 AEIK, կենցաղումն  
25 EI մեքենաւոր, HK<sub>2</sub> մեքենայաւոր  
27 ABEFM զերկրի  
30 EK զզանազան, ZHI<sub>1</sub>KM զբարեդի-  
պութեանցն



չիւր կողման. եւ զի նմանապէս ահա ունելով բերէ յինքեան զմեծա-  
փառ փարթամութեան իրաւ: Վասն այսորիկ եւ զծովեզերակայ քա-  
ղաքացն բնակիչս, որք սովաւ վարեցաւ եւ վարին, զանազան եւ չը-  
նազազիւտ բնչիւր յղփացեալ, եւ այլովք ստացուածովք հոյակապս  
5 եւ հոչակաւորս ի մէջ ամենայն տիեզերաց եցոյց եւ ցուցանէ: Տի՛  
նա սա եւ յերկրորդ հատած ցամաքի անցեալ ի ծովային կղզիս,  
էած զապալներն եւ զամայի վայրս<sup>51</sup> ի քաջաշինութիւն քաղաքաց,  
որք սովիմբ բնտելակրթեալք իբր յոյժ արուեստի՝ ամենազան քա-  
րերախտութեամբք, եւ պայծառագօզ շինութեամբքն քաջ ի բաց  
10 զերազանցեցին զմիջերկրեայ զհոչակաւոր քաղաքօքն:

Այլ սա ոչ ասացելոցս բարեխառութեամբք միայն յօրանայ,  
բայց եւս վեհագոյն եւ առաջիկայիւքս ճանաչի. եւ մանաւանդ ի-  
մաստութեամբն, յոր ժարզեալ զիրն ածէ մանկունս, եւ զայնս թէ-  
եւ կարի յոյժ բնդունելով ախտս, արագագոյն գտցէ եւ հմուտս,  
15 թուի եւ քան զիմաստասիրացն պարս, որ հանապազ յիմաստութե-  
անն ղեզերին դպրոցս<sup>52</sup>, յաւէտ զերազանցեալս ցուցանել ի բնա-  
կան տեսութեանցն հանդէսս: Ուստի զարեգական գնացս ճանա-  
պարհացն դիտէ կշռակի, որով եւ զյեզեղմունս ժամանակաց գործէ՝  
փոփոխելով յաստեղատունսն: Բայց ոչ զպարս աստեղաց եւ եթ  
20 խուզելով, եւ զլեզուան՝ զգիտութիւն նշանակացն. այլեւ սա զբնու-  
թիւն օդոցն փոխէ՝ ի ջերինս, եւ անդուստ ի վիշտս ամպրոպաց.  
ըստ նմին օրինակի դարձեալ եւ զաստեղացն յածմունս ըստ ժա-  
մանակի տեղեացն ի տեղիս: Եւ ամենայն, որ հանգոյն սոցա բնա-  
կան իրաց զիտութիւն լիապէս ծանուցանէ, ցայնքան մինչ զի գրե-  
25 թէ մարգարէական շնորհաւ վարեցեալ ի ներկայումս զհանդերձե-  
լոց ժամանակաց բնդունին զգիտութիւն, եւ յառաջագոյն զգուշա-  
նան ի մրրկաց եւ յապագայ դառնաշունչ ձմերայնոյ սառամանե-  
աց<sup>53</sup>:

Եւ զի յայսմանէ պարապով քննութենէ ասացելոցս ամենեցուն  
30 եւ զանազան զբօսանօք երկոցն, եւ երկիւղի՝ առաջիկայ արհաւ-  
րացն վտանգի խափանեալ արգելու զիրան ոչ միայն յօտար ան-  
կողնակցաց ի վաւաշոտական իզամոլութենէն, բայց ի հարազատն  
ամուսնաց. ի բաց վարեալ տանի ի խառնից հեշտ ցանկութենէն եւ

15 E1 յիմաստութեան  
18 ACEFM զյեզեղմունս

27 ZEFIM սառնամանեաց  
30—31 Z1 արհաւորացն, ABCFK ար-  
հաուրացն, Z1 զարհուրանացն

գրեթէ որպէս անմարմին զօրութեանցն հաւասարեցուցանէ ի պար-  
կեշտանալ՝ զողջախոհութեանն հաստատելով սահմանի<sup>54</sup>:

Այլ ոչ փոքր եւ յարգարութեանն պարծի մասին այսորիկ աղա-  
դաւ. վասն զի ո՞վ ոչ գիտէ, որպէս ասացին, ըստ նմին օրինակի,  
5 թէ հահի հանդերձելոցն եւ յանիրաւ զրկութեանց եւ զողութեանց եւ  
ի նոցին համանման շարեաց եւ լոկ փութացուցանէ կրթել ի հան-  
դէս շահից արանցն վաստակոց, եւ անտի դարձեալ վասն շահիցն  
եւ անձանց փրկութեան հարկեցուցանէ գալ եւ յուխտիցն պաղա-  
տանս առ նախախնամողն ամենեցուն Աստուած: Զոր եւ բնկալեալ  
10 զխնդրուածսն ճեպի միւսանգամ հասուցանել նոքօք տրիտուր տու-  
ողին, փոխանակ ապրանացն՝ զգոհութեանն պատարագս, եւ զնու-  
ագաւոր բարեբանութիւնս<sup>55</sup>: Բայց շեւեւ զմեծն նորա ասացեալ կե-  
ղև զնահատակութիւնս առաքինութեանցն զվեհագոյնն քաջարու-  
թենէ, յորում յաւետացեալ գոհութեամբ զիրան ցուցանէ ախորժո-  
15 զս: Եւ զայն ոչ ի միում ժամու զօրէն այլոց նահատակաց, եւ ոչ  
ընդ միում դարձեալ հոմասեռ ումեր դիմաց, եւ կամ ընդ բազմաց,  
այլ յարածամ ահա եւ ընդ երկուս բռնագոյնս եւ անպարտելի տա-  
րերս օդոց եւ ջուրց, որոց մրցմունք զծնդակագոյնք են քան զա-  
մենայն նահատակութեանցն հանդէսս՝ ըստ ասացելումն եւ մրցա-  
20 նակքն բազմազանք եւ պատուականագոյնք, որովք մեծապէս պսա-  
կեն զյաղթողս, եւ առաւել արիացուցանէ<sup>56</sup>:

Իսկ արդ իր, որ այսպէս զանբնական իրս բնականս կացուցա-  
նէ եւ զանսովորս՝ սովորականս, եւ կրկին բարեփառութեան պատ-  
ճառ լինի ազգի մարդկան, եւ զուգահաւասար մատուցանելով ի պէ-  
տրս զծով եւ զցամաք, այլ քաջագոյն եւս զչորիւքն զարդարէ առա-  
քինութեամբք՝ աստուածահաճոյս երեւել: Ապա արժանավայելուչ  
է անյապաղ փութով յայսմ անցանել ախորժակի եւ կամ գովել զայ-  
նոսիկ, որք սովաւ վարին ի հասարակաց շահս. եւ ի մեծապայծառ  
շինութիւն քաղաքաց եւ բարեկեցիկ փարթամութիւն անձանց:

Բ. «Այո, ասէ, նաւաստութիւն, թող զայլ ամենայն վտան-  
30 գըս տաժանմանց երկոց, եւս շարագոյն զնաւաբեկութեանցն ունի  
գտարակոյս, որ հանդերձ ամենայն ստացուածոց վնասուց եւ լի-  
տին թշուառութեան մասն է մահու եւ զկնի մահուանն եւ թաղման

6 Z2K սոցին  
13 Z1K2M զվեհագոյն  
21 Z1K արիացուցանեն  
22 ABEFHK1 որ om.  
26 AEI երեւեալ  
31 E12 նաւաբեկութեանցս



5 ևս անգամ շտնէ արժանի գմարմինս մարդկանս: Պարտ էիր զնա-  
 ւաստութիւն աստուածային եւ մարդկային արուեստ ասել, որով  
 վաղվազակի ի բաց վճարեալ լինէր յամբաստանութենէ պատաս-  
 խանեացն. վասն զի յաշխատութենէ տաժանմանցն երկոյ, եւ ի  
 10 տարակարծ դիմաց վնասու, եւ վտանգէ մահու յատուկ աստուածա-  
 յին զօրութիւնքն վիճակեցան առանձինն զգեղեցիկն ազատութիւն:  
 Իսկ որ ի ներքոյ լուսնոյս վարին իրք եւ ի մէջ մարդկան, միշտ  
 երկուց հակառակաց ընդունակ լինելով՝ բարւոյ եւ շարի, տանին  
 երբեմն զնորին բարին եւ երբեմն՝ զնորին հակառակն տարակոյս  
 15 կորստեան<sup>57</sup>. որպես եւ ճանապարհորդութիւնն բազում անգամ  
 զաւազակացն յարձակմունս գրծանաց. եւ ամուսնութիւն՝ զսիդե-  
 խասպանութիւնն եւ զինուորութիւն՝ զպարտիցն պարտութիւն վան-  
 ման. նմանապէս սոցա եւ այլն ամենայն իրք զիրաքանչիւր պա-  
 տուհաս վնասուցն: Իսկ արդ՝ յաղագս վտանգի վնասուց արդեօք  
 20 ո՞չ ճանապարհորդեսցոր յերկրի, եւ ո՞չ յամուսնութեանն եկես-  
 ցոր յօրէնս, եւ ո՞չ զարձեալ զինուորեսցոր ընդդեմ թշնամեաց,  
 եւ ո՞չ այլ ինչ ըստ աշխարհիս վարեսցոր արհեստս. եւ զիա՞րդ  
 կարասցեն կալ հաստատուն կարգք կենցաղոյս, եւ կամ ո՞րպէս  
 յաշխարհիս վայելեսցոր բարութիւն: Ապա թէ ոչ կասեալ ի  
 25 վտանգէ աղիտիցն լքանին յիրաքանչիւր արուեստիցն, այլ ամուս-  
 նանան եւ զինուորին եւ ճանապարհորդեն եւ այլովն ամենային  
 վարին արուեստիւք, որովք զարդարի կենցաղս. եւ բոլորք յիրա-  
 քանչիւր իրաց վայելին օգուտս<sup>58</sup>:

30 Արժանավայելուչ է սոչնպէս եւ յաւետագոյն եւս դալ զնաւաս-  
 տական իրս<sup>59</sup> արուեստիւ, որ քաջալուազոյն քան զամենայն մատ-  
 շի ի պէտս մարդկան, այլ ի սուղ ժամանակի, յոր ախորժէ որ, մեր-  
 ձեցուցեալ հասուցանէ օգուտս. զվաճառականս ի յգիտութիւն բազ-  
 մազան լքանազապիտ ընչից, գտեսլասէրս՝ ի զանազան նորահրաշ  
 տեսութիւնս, քաղաքաց, եւ լեռնային եւ գաշտային եւ գետեզերաց,  
 35 եւ բազում նշանաւոր վաչրաց եւ սքանչելի իրաց, եւ զհարստակող  
 ըմբիշս ետես ի մարտս նահատակութեան մրցման<sup>60</sup> ի բացարձակ  
 օտարաշխարհեայ քաղաքաց, ուր քաջապէս զլաղթութիւնս կա-

5 ZA եւ ի վտանգէ  
 6 AEI առանձին  
 8 Z<sub>1</sub> տանի, Z(Z<sub>2</sub>)K<sub>1</sub>M աան  
 14 K վնասու (I), FI վնասուցն (II)  
 18 FHI կարգ  
 19 FI աշխարհիս  
 22 AEI որով  
 28 Z<sub>2</sub>EI<sub>1</sub> ի նորահրաշ  
 29 AK<sub>2</sub> գետեզերաց  
 32 FK<sub>1</sub> գյաղթութիւնսն, AEI գյաղ-  
 թութիւնն

5 տարելով՝ անցեալ տանին մեծապէս յաղթանակս: նմանապէս եւ  
 զողբերգական՝ յողբերգութեան շահս, եւ զիմաստասէրս՝ ի վարժա-  
 պետութեան, եւ զբուժիչս՝ ի բժշկութեան, եւ զայլ ամենայն արու-  
 ւեստաւորս՝ յիրաքանչիւր արուեստից: Եւ սակայն զայսչափ շահա-  
 ւետութիւնս ոչ սաստիկ ծախովք ընչից մատուցանէ զօրէն այլոց  
 10 իրաց, եւ ոչ զծուարին տաժանմամբք երկուց մարմնոց երկայն ժա-  
 մանակաց, յաղագս որոյ ոչ հետեակ քայլափոխութեամբ երկարա-  
 ձիգ ճանապարհաց աշխատէ զմարմինս, եւ ոչ բեռնակիր անաս-  
 նովք զբազում ժամանակաց օթեվանս, զոր գործէ ծախ ընչից: Այլ  
 15 առանց ծախոց եւ աշխատութեան մարմնոյ, իբր ի բազմականի  
 պահելով՝ զիրաւ եւ հեշտի հասուցանէ յօգտակարութեանցն տե-  
 զիս, եւ ի սուղ ժամանակի, որպէս ասացի, զիրաքանչիւր ախոր-  
 ժակն բազմանաց ըստ ըզձի մատուցանէ: Եւ արդ իրագործութիւն,  
 որ այսպէս բոլոր բոլորովին ունի զքաջարարութիւն, եւ զամենե-  
 20 զուն ախորժակս զիրահեշտի կատարէ եւ ի սուղ ժամանակի եւ զո-  
 մանս՝ ընչիւք յղփացուցանէ եւ զոմանս տեսլեամբք զուարճացու-  
 ցանէ, որո՞վ իւրք որ կարասցէ պախարակել զսա, որ պարսաւա-  
 դէտ բարս ունիցի, եւ ընդդէմ ասել բամբասանս շար փոխանակ  
 բարւոյ:

20 գ. «Այլ նաւաստութիւն, ասէ, յանրնական իրաց է՝ ցամաքա-  
 յինց ընդ ծով ճանապարհորդել»: Զոր փոքր մի յառաջ ներբողեալ  
 ի մէնջ՝ բնական եւ հնարաւոր ցուցաւ, եւ յոյժ զիրին քան զամե-  
 նայն ախորժակս առ ի վճարել զպէտս կենցաղօգուտ գործոց, զայս  
 այժմ շամբշարար յամբաստանութիւն բերեալ մատուցանես, զոր  
 25 պարտ էիր բնական եւ յոյժ զիրագոյն ասել եւ ի վերայ այսր օգ-  
 տակարագոյն եւ իրաւացի գործոց գործօնեայ: Եւ զայս ո՞ ոչ զիտէ,  
 թէ զերկուս անջատեալ ազգ մարդկան լայնատարած միջնակայու-  
 թեամբ նայ տառիդ ոչ այլ որ, բայց սա զօրէն միջնորդի ի միա-  
 բանութիւն յարմարական սիրոյ ածիցէ, եւ զառաւելութիւն երկա-  
 30 քանչիւրոցն ի միմեանցն նուազութիւնս հարթէ, եւ զնուազութիւնս  
 յառաւելութեանցն լնու, եւ զուզութեանց եւ հաւասարութեանց լինի  
 բաշխող բոլորեցունց: Եւ եւս իրաւացի այս, զի զոր Աստուած  
 պարգեւեաց արուեստս յաշխարհի ի պէտս մարդկան, սա նորին

1 Z<sub>1</sub>EI տանի նմին  
 7 ZFK<sub>1</sub>M քայլափոխութեամբք  
 14 Z<sub>1</sub>FHI բոլոր օտ  
 21 AEI ճանապարհորդեալ  
 22 EI մէջ  
 26 FI գործունեայ  
 27-28 Z<sub>2</sub>հին ACFFHK<sub>2</sub> միջնակայու-  
 թեամբն այտառիա, Z<sub>2</sub> յայտառիթ



շնորհաց սպասուոր եղևալ ի կիր արկանէ վարել յառաջ եւ զմար-  
դոյս տիրական իշխանութիւն զուգահաւասար ստացուցանէ ի ծովու  
եւ ի ցամաքի, ուստի բարեպաշտօն առ Աստուած լինի զհաճոյսն  
կատարելով, եւ բարեգործ առ մարդիկ զիրաւացիսն եւ զօգտակարս  
յառթել:

5

Եւ արդ յորժամ այս այսպէս գեղեցիկս ախորժակս կրկնակի  
իրաւամբք զարդարեալ նագի, զրոյտրեսեան ամէն ամենազան բա-  
րեօք վայելչացուցեալ յղփացուցանէ եւ պայծառս քաղաքացն  
կացուցանէ բնակիչս եւ ի վերայ երագագոյն զիրութեանցն հան-  
գուցանելով՝ հասուցանէ զբնաւս յիրաքանչիւր իղձս բաղձանաց:  
Յիրաւի ապա օրինօք լիցի ներբողարանել զսաչ եւ յամենայն զօ-  
րութենէ սիրել եւ գովել դարձեալ եւ զայնոսիկ, որ հանապազ սո-  
վաւ վարին ի պէտս կենցաղոյս:

10

4 Z<sup>1</sup> AB EFHK առ օմ.

< Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ >

< 1. > Զի՞նչպիսի բանս ասիցէ Ազամ՝ ելանելով ի դրախտէն<sup>61</sup>

ա. Ահա անկումն անհնարին եւ տարագրութիւն ի վեր քան  
զբան, նորոգ լուր դժնդակ, վէր սաստկութեան, որով յոյժ վարանի  
իմս տարակուսանօք անձն: Ահա ոչ ախորժելի ելք ի հեշտասուն  
5 գրգարանէ եւ խաւարազգած մութք արտաքսրնկեցութեան կայենից  
ի հրաժեշտ գեղեցկանազ բարօրութեանց եւ բնտանակցութիւն շա-  
րահամբոյր եւ անտանելի պատուհասից: Բանան ինձ աւասիկ  
դրունք արտօսրահոս տրտմութեանց ի մշտնջենաւոր եւ յանզրաւ  
թախծանաց յուղարկելով ճանապարհ, եւ փակին լուսագնաց խնդա-  
մտութեան շաւիղք: Զարհուրիմ սարսափելի դողացմամբ ի յերջա-  
նիկն ահեղ բարբառոյ սակս իմոյ ստգտանելի սխալանաց, զարրտ-  
մտականն ի վերայ բերելով ցասումն, ոչ նուազ ինչ եւ մասնաւոր  
ձայնիւ, այլ ընդհանուր եւ բոլոր պատուհասից բերմամբք, քաղցր  
եւ խնդամոլի միապետութիւն ազատ եւ ի վերջմբերձիկ գահեղու-  
15 թեամբս անկանի ընդ բազմազլուխ եւ անթիւ ախտից ծառայու-  
թեան: Է՛ եղեռնաւոր եւ յանկարծահաս ուղխին խաղացելոյ, որ աս-  
տէն եւ աստ շլացութեամբ զիս պաշարելով սկէ եւ անչալտացուցանէ  
զվայելչութիւն աստուածատունկ զբաստի: Սերմանող անհաս՝ տա-  
րահաւանութեամբ հնձեմ լիաբուն զամբարշտութեան տոյժս, եւ  
20 համբարեմ ինձ երկայն ամանակաց զանդերծանելի եւ զանզրաւ  
հիբութիւնս: Զձեզ աղաչեմ, տառդ երկնի եւ երկրի եւ զօրութիւն  
աւազակապ ծովու, նորագործք ընդ նորաստեղծիս ողբանուէր աշ-

1 Z(Z<sup>1</sup>) սասացէ  
5 ZB| խաւարազգածք  
6 ZIM բնտանակցութիւն  
8 Z(Z<sup>2</sup>) յանվճար՝ փխ յանզրաւ  
16 CFHK եղառնաւոր  
17 Z հին CFH պաշարելովս կէ  
18 AEIM զբախտի  
19 Z հին ACEFKIM տարահաւանու-  
թեան



խարանօր տուր սատարութիւն իմոյս թշուառացիւում անձինս: Քա-  
 նանիւթեայ շնչակիր լրութիւնք երեւելեացս՝ օգնեցէք ցաւակցու-  
 թեամբ անկանգնելի անկելոյս վիրաւնութեամբք, եղարամարք գո-  
 5 լով անբուժելի վտանգիս աւաղածայնութեան: Անօգնական մար-  
 մին, անընկերելի անձն դրժող օգնականս՝ զպատրանս ի վեր քան  
 զճշմարտութիւն կարծելով ըստ որոգայթադիր խորամանկ օձին  
 վարդապետութեան, այժմ ահա ի պտղոյ գործոցս ճաշակեմ զան-  
 շայեկանութիւն, միանգամայն ի համանգամայն ամենայնի կողո-  
 պուտ մնալով՝ առանձնակ զհիբութեանս կրեմ տարակուսանս:

10 ք. Բայց ոչ զիս արդեանս աղէտք քան եթէ անցելոցն քաջա-  
 փառութեանցն յիշատակք խոցոտեն դժնդակք, զորոյ սքանչելի եւ  
 զհրաշաւորագոյն իրագործութեան մասունս եւ ասել անբաւանամ,  
 բայց միայն սուղ ինչ դմտաց ակն ի ներքս հայեցուցանելով եւ  
 այնու ամենային փղձկեալ՝ ի տիրութեան ըմբռնեցայ պարաւան-  
 15 զբս: Յորժամ ամենարարն հրաման զերկինս ինձ լուսաւորօք հրա-  
 շագործ խորան նորակերտէր, եւ զերկիր ակրղձեալ բոլորաւէտ լրու-  
 թեամբ ամենածին կայեան յօրինէր: Նաեւ ծով անգնդայեղջ խորու-  
 թեամբ բազմազան կերակրին լուզակացն աճեցմամբ մշտավայե-  
 լեալ ինձ անկարօտութիւն շտեմարանիւր: Ո՛ր իմ այն ճոխութեանն

20 հանդէսք, յորժամ յանէութենէ ես տիրական ձեռօքն կենաստեղծեալ  
 լինէի: Աւա՛ղ անցելոյ երջանկաւէտ բառացութեանն, ուր զի ի գրբ-  
 գանս ինձ եւ հեշտալի դբօսանս փափակասուն եւ երանալից տնկա-  
 գործիւր դրաստ, միապետական գոյացուցանող ակնարկութեամբ,  
 եւ ես ի զանազան եւ ի բազմաշնորհ բառացութեանն տեղուջ մի-  
 25 ջակացեալ, յաւէժ բարօրութեամբ յզփանայի յոքնասեր մրգոցն  
 հազեղութեան, ճաշակօք, եւ որակայեղջ վերերեւութեամբ տենչալի  
 գունոց, տեսութեամբ ցանկ զուարճացեալ: Մածկեցաւ յինէն ան-  
 վրէպ դիտողութիւն ճշմարտաքնին հանդիպութեան, յորժամ ամե-  
 նարարն հրաման միաբանութիւն զընդհանուր երկրագործացն ազգս

30 յանդիման իմ ածեալ, ազդէր ըստ անցնիւր պատշաճի յարագրել  
 անուն, եւ ես ոչ միայն յայնս առատացեալ անմոլար հանճարով  
 տեսութեամբ, այլեւ օգնականիս կռչեցելոյ յինէն առաւելութեան

եղան եւ պատճառ ծանօթ: Ո՛վ փախուցելոյ մեծարգի հրաշափառու-  
 թեանն, լսող եղեալ իմ խնդացուցանողն ձայնի եւ խօսակակից ան-  
 համեմատելի վերաբանութեան, եւ ես յանկարօտ փառս հանգոյն  
 նմին հանգուցեալ, եւ այժմ համանգամայն ի ճառելոյ արգասա-  
 5 ւորութեանց կողոպուտ եւ մերկ մնացի: Եւ փոխանորդեալքս ընդ  
 առաջնոյն ժամանեցին ինձ հակառակօք, անէժք հասարակակիր եւ  
 տրտմութիւն անբոյժ, հաց ցաւոց եւ տաժանելի քրտունք, վշտա-  
 ծնութեան երկունք եւ հնազանդութիւն ծառայական, եւ հաւասարա-  
 պէս երկաբանչիւրոցն ի հողով գոյացելոցս ի նոյն անդրագարծիլ  
 10 երկիր: Եւ առաւել եւս այս, որ արտաքսընկեցութեանն սաստիւ  
 զլանդիման տենչալոյս ունիմ բնակութիւն գարբելի տեսութե-  
 ամբ ի ցանկութեանն հաշման միշտ ընկաւեալ զհաշումն, եւ հրե-  
 դէն սրորէական անաշառ սուր արգելեալ պահէ զտարփաւոր ծա-  
 ռոյն կենաց ոչ միայն զարքունեան պողոտայ, այլեւ զգողուղի հե-  
 15 տեւանաց արահետ: Եւ այսպէս ընդհանուրս աղիտիւք երանելիս  
 նախաստեղծեալ՝ բոլորդ ի հիբութեան ընկեցայ գոգ:

գ. Արդ զի՞նչ արարից, որպիսի՞ս հնարեցայց, զո՞ր սպեղանիս  
 կազմեցից ծայր ի ծայր վիրաւնութեանցս, ո՞ւմ մաղթեցից օգնել  
 անկելոյս ի ձեռս՝ ահագին վտանգից, եթէ յաճախեցից միշտ մնալ  
 20 եւեթ ի տրտմականս, մի գուցէ եւ այս տարահաճելի: Այլ առից  
 ապաւինեցայց յանջրելի անեղին գթութիւնս, բուռն հարից զնորին  
 գործական հրամանաց, եւ կալայց զիս անմեկնելի ի բաւականին  
 յուսոյ. զի թերեւ շնորհեցին ինձ երկայնմտութեանն պարգեւք.  
 եւ երկարագոյն զղջման ամանակօք հասից թողութեան շնորհի: Ա-  
 25 ճեցեն ծնունդք ըստ առաջնակն օրհնութեան, եւ բազմորգութեանն  
 աճմամբ հնարեցայց աղաչել զկեցուցանողն երեսս: Ժամանեցից  
 միւսանգամ դարձի հաշտութեան, եւ ըստ կարգի ընդ աղօտ տեսու-  
 թեանս երեւեցին ի վերջին ժամանակս մուտք ծոցածինն սկզբնա-  
 կանի անդրանկանն ըստ նշանարարութեան կողաշինիս ըստգտա-  
 30 նելի եւ ի սուրբ կուսէն, որով բոլորք՝ վախճանեալք եւ կենդանիք  
 գտցեն զփրկութեան հանգամանս, եւ աշխարհ ի նախագոյակն ժա-  
 մանեցէ հաճութեան, եւ ես փարատեալ ի տխրեցուցիչս ցաւոց՝

8 Z<sub>2</sub>CEFKM համանգամայնց  
 9 AE մնանալով  
 14 BCFH փղձեալ Z(Z<sub>1</sub>)K պարուան-  
 դանս  
 15 AEI հրամանս  
 23 EI գրախա  
 27 Z<sub>1</sub>ACHKM ծաղկեցաւ  
 28 EF դիտողութիւն, 1 զիսելութիւն

13 ZEIM սրովրէական  
 14 Z հին Z<sub>1</sub>ABPHK զգողուչի  
 16 FH նախ ստեղծեալ  
 24—25 AEI<sub>2</sub> աճեցին  
 26 Z երես  
 31 E աշխարհին



նորին հանդիսարար սքանչելագործութեամբբ հասից միսանգամ  
նորոգմամբ ի հրաշափառ վիճակս:

5 Ո՞ւր իմ առաջին բարեբաստութիւնն՝ եղեմական զրգարանին  
հեշտալից կիրբ, եւ ապա տիրեաց ի վերայ իմ ծառայականն խը-  
րոխտ: Ո՞ւր իմ հոգեղինացն զուգապատիւ բնակութիւն, յորժամ  
հրաշակերտ զբախտաճուն անմահաճաշակ պտղոցն դատողաբար  
մտաց ընտրողութեամբ զատուցանէի վայելչապէս, ուստի տակաին  
հրապուրիչ անջրպետն զիս արտակայ: Աւա՛ղ ծաղկատեսակ հաս-  
տատուն պարագրութեանն, որ յաղագս իմ վրիպագործէրն, եւ  
10 զփշոցն վերածեաց աղէտս: Եղո՛ւկ իմածին զարմբ, որ սակս իմոյս  
մահասահման ճաշակացս եւ նորին յարտասահման վիճակեցան  
վտանգս: Աւա՛ղ եւ նախահասակ զուգակցին, յորմէ ես նախաշխար-  
հօք յաստուածաշնորհ տարագրեցայ ժառանգութենէ: Զի՞նչ արա-  
րից. որպիսի՞ հնարեցայց բուժանս. զո՞ր սպեղանիս կազմեցից ի-  
15 մոյ վիրաբուժեանս: Եթէ յաճախեցից ի տրամականս՝ յաւիտենա-  
կան տիրեսցեն ի վերայ իմ դժոխք, նա՛ թէ եւ զերկշտութեանն  
համբուրեցից անգործութիւն, ի մշտնջենաւորութեան լինիմ յիմ  
կորուստ: Այլ առից ապաւինեցայց քաջալերութեամբ յայն, որ ար-  
ար զառընթերակաց դէմս հաստատնոցս: Խուսեցից ի կորստասեր  
20 ծառոյն պատուիրանազանցութենէ եւ առ երկրորդս հպեցայց  
կենաճաշակս պտուղ, որով իմս դիրայարմար նորոգեցի կենցաղ:  
Յարեցայց յապաշխարութեան զղջումն հանդերձ իմոյինս համա-  
զուգաւ, թորեցից վտակս ի նամէտ բնութեան ի մեղսահայեցայց  
վկայարանաց, ածից ի գութ վամենից ճարտարապետն Աստուած:  
25 Նաստատեցայց ի յոյս կուսածին փրկչին. միաւորեցից զմեղանշա-  
կան մարմինս տէրունական շարչարակցութեանն. գիտեմ զմարդա-  
սիրութիւն նորա, զոր եւ ինձ օրինադրեաց. «Յորժամ դարձցիս եւ  
հեծեծեսցես՝ յայնժամ կեցցես, եւ գիտասցես, թէ դառնացաւ քեզ  
զիս թողուն»<sup>62</sup>:

30 Եւ արդ՛ ոչ դադարեցից զապաշխարութեանն հեղուլ արտօսը՝  
մինչեւ զգեցայց զանհնազանդութեանն մերկացեալ պատմուճան,  
որով առանց ամօթոյ ի դասս արփիազարդ բանակացն եզախմբե-  
ցայ, յորոց մախանօք բանսարկուին գտայ արտակացեալ, յետ  
որոյ եւ յաջակողմանն արժանաւորեցայց դասուն կայանի:

2 Z հրաշափառս վիճակ  
8 CF արտակայր  
12—13 Z<sub>2</sub>ABEFK նախաշխարհօք  
242

23 ZBH վտակ, Z<sub>2</sub>AF նայ մէտ  
32 FI եզախմբեցայց

<2.> Զի՞նչպիսի բանս ասիցէ երկիր՝ ընդունելով զարիւն Արեւի  
արդարոյ<sup>63</sup>

5 Ո՞վ վիրագ անհնարին՝ ոչ ի մերձաւորէս ակնածու եւ ոչ ի  
հօրէն սարսող, ո՞վ լիրբ եւ կատաղի գազան՝ ոչ ի հաստատիս  
խնայող, անհնարին մարդախոշոշ տեսանելով զթշուառականն ան-  
10 ձրն, առաջնորդ մեղսամակարդս խարդաւանաց: Ոչ պատերազմաց  
յարուցմունք, եւ դու եզունապէս զգործ աղիտից կատարես, սակս  
որոյ ոչ երկաթակուռ զգեստ առաջի եւ ոչ ամենահատ պողովա-  
տիկք թեքի առ ի վանումն թշնամեաց, եւ ոչ կափիւն լայնալիճ  
10 աղեղանց, եւ ոչ ակնարկումն վեհիցն առ ի քաջամարտիկ ախոյա-  
նիցն գուպարս, որ գործով արիութեան զհանդէս գեղեցիկն իրի կա-  
տարեն: Եւ սա առաջնորդ բազմապարունակս շարեաց եղանի: Ան-  
բաւանան դաշտք սորայս վրիժագործ աղիտիք, չհանդուրժեն լե-  
րինք յողորմազին ձայնէ, ալեկոծի անհնարին ծփանօք յովկիանե-  
15 անս նայամէտս բնութիւն առ ի յընդունումն արդարակ եւ բազմա-  
հոս արեանս, որ դեռես տարածի ի տրամարնակս կայեանս: Ըն-  
դէ՞ր փոխանակ քաղցրաշունչ օղոյս՝ զնշխար ժանտահոտութեան  
սփռես ի վերայ իմ: Հի՞մ զհարազատ եւ զբարեսէրդ եղբայր սպա-  
նաննս: Սակս որո՞յ գարելի եւ անողորմն վրիժուք մակածես դմին  
20 զկենցաղազրաւ հիբութիւն: Սակս է՞ր գազանամիտ բարուք խող-  
խողես զքոյին մերձաւորդ: Առ իմէ՞ շաղախես զընդհանրատարած  
բնակութիւն արիւնոռոզդ հոսմամբ: Ընդէ՞ր խամրես զիմածին դե-  
ռաբողբոջս զարմ, եւ զփշոցն փոխատուես տխրութիւն: Հի՞մ զգար-  
միցն քոց խմբես զեկս ջրհեղեղին. որ զմահահրաւէրն յաջորդես  
25 կորուստ: Զի՞նչ առնեմ, ո՞ւր բողբոքմ զյանկարծադէպ պատու-  
հասողաք բարկութիւն, զոր վատաբախտիկս անձն կատարէ ի  
վերայ իմ շարահնար փութով: Եթէ առ նախաստեղծիկն մարդ յան-  
էան ունի զբնականս պատիւ հանդերձ Եւայի: Իսկ եթէ առ աստուա-  
ծութիւնն բողբոքեցից, եւ գոչեմ զշարեացս հաւումն, որ կատարիս  
30 յիս, դեռես ամենադէտ ակամբն երկայնամտէ, սակս որոյ մեղսա-

1 Z ասացէ  
5 BI զթշուառական  
11—12 GE կատարին  
15 Z<sub>2</sub> նամէտս, EGI<sub>1</sub> նամէտս  
19 Z<sub>1</sub>EI գարշելի  
22—23 AG դեռազողջոյս, AEI զարմն  
25 EI զանկարծադէպ  
29 ZAB գհաւումն



մակարդս գազան զանողորմս յանգէ գործ. եւ ես յամենայն կողմանց զթշուառութեանցս համբուրեմ անմխիթար տրտմութիւն:

5 Բ. Ո՛ւր այն իմ ժամանակ, յորժամ ընդ ասել բանին<sup>64</sup> եւ ես յորնազանն վերաբերէի բուսակս ի կենցաղաւետս աստից: Իցի՛ւ  
5 այն բարեբաստութիւն, յորժամ քաղմազան անուշահոտ բուսակօք զարգարէի իբրեւ զհրաշագիտակն սիրամարգ, սակս որոյ եւ օդ քաղցրաշունչ ի ձեռն արեւելեան ցօղոյ, եւ քաղմագուլ խնամով սնուցանէին զիմ աստիցն զարմն, յորժամ ճառագայթքն յելս առաւօտուն հարթածաւալ տարածանէին, եւ ես քաջուղէշ բուսակօք հըր-  
10 ճուէի: Աւա՛ղ իմում նախէին բաստի, յորժամ օրհնութիւնն Աստուծոյ ի վերայ իմ հաստէր, եւ յինէն նուիրատրութիւնք անմահ տեսակին ընծեռէին<sup>65</sup>: Այլ մանաւանդ եւ հոսանք ականակիտն աղբերաց անյաշաղ տակառասելեան ինձ, եւ ես գեղեցիկ անդաստանօք ուրախանայի ի ձեռն յարագուարճն փառատրութեան, որով անբանիցն եւ բանաւորացն հրամք զուգահաւասարն եւ մեծարգին ընդունէին վայելչութիւնս: Յորժամ զարաստանքն ընծեռէին մահկանացուս ազին զպտղոցն քաղցրահամ ճաշակատրութիւն. եւ ամենայնքն առ հասարակ ինձ մատուցանէին զփառաբանութեանն նուազս: Զրկեցայ ի բազմերանգն պայծառութեանց, տարածեցի ի վերայ իմ մութ անհնարին հանդերձ ողորմագին արկածիւք, շրջապարեցաւ զինեւ եւ ժամանեցին ինձ աղէտք շարեաց, փոխանակ յարագուարճ ուրախութեան՝ սուգ վտանգի համբուրեցի: Ծածկեցին ստուերք մահու, եւ խաւար անհնարին խամրեաց զիմաստացիկս բարութիւն, սակս որոյ ի մեծարգին պատուոյ զգծձատեսակս ըմբոշխնեցի եպերանս:

25 Գ. Արդ՝ զի՛նչ արարից, որպիսի՞ բուժանս հնարեցայց անպատում շարեացս, ուստի՞ կազմեցից սպեղանիս անբժշկականս հարուածոց: Այլ առից ապաւինեցայց՝ առ նոյն ինքն աստուածութիւնն բողոքեցից զվտանգ անկարելի աղիտիս, սակս որոյ վիրագն անծին եօթնեկին վրիժուց պահանջեցին տոկոսիք, եւ ես միւսանգամ նորոգեցայց արեգաւէտս կենդան՝ առաջնակ բաստայից դրուատարան գովութեամբ:

1 Z հին Z<sub>3</sub>DGEFK<sub>2</sub> յանդէ  
7 CDHK արեւելեայն  
8 ZB դարմ

16 EFH դարաստանք, GI դատաստանք  
20—21 Z(Z<sub>3</sub>)BI շրջապատեցաւ  
24 FH բարութեան

<3.> Զի՛նչպիսի բանս ասիցէ Յակովբ՝ տեսանելով զպատմութեանն Յովսեփայ<sup>66</sup>

5 Եւ Ո՛ւր անհուն աղիտաւորութիւն, սահանք տրտմութեան, աշխարհածուփ խոռվութիւնք, որ ինձ ի սերկեան հանդիպի: Ո՛ր խաւար թանձրատարած կորացուցիչ երկաղիտակս զգայարանցս: Ո՛ւր սուգ անմխիթար, եւ անողորմ վրիպանք թշուառացուցիչ անծինս: Ո՛ր խորհուրդ լի անօրէնութեամբ, եւ ոչինչ ի ներքո նշխար բարեպաշտութեան: Ո՛ւր լիրբ եւ կատաղի գազանք, որ խամրէք շարաշուէր արկածիւք զգեռաբողոքս զարմ: Ո՛ւր մարդախոշոշ ժողովք վիրագաց, որ ոչ ի հայրենիս խնամոց երկնչիք, եւ ոչ զանհնարին պատժապարտ հզօրագունէն զմտաւ ածէք: Հի՛մ շարախանձ ժանեօք ի կորստեանն յուղարկէք խորխորատ զբարեւէրդ անձն: Սակս որո՞յ շար գործոց կենագրաւ հիբութեամբ յուղարկէք յարենաճեմս հոլովիչս զձերովին մերձաւորդ: Սակս է՞ր մակածէք ծերունեանս հօր սակի զողորմագին դաւաբեր վտանգ: Առ իմէ՞ շիջուցանէք զկայծակն արծարծիչ վատարաստիկս անծին, քանզի յորժամ տեսանեմ զծաղկատարփակս պատմութեան արիւնագանգ ոռոգմամբ, սակս որոյ տրտմութիւն բերէ յինքեան, յոյժ շտապէ զիս երկունք աղիտից. շժոժամ անհնարին ցաւոցս, շեմ բաւական ի տարակուսանս վտանգից սակս որոյ ոչ եւս ուստեք կայ մխիթարութեան զիւտ: Արդ՝ զի՛նչ առնեմ, ո՞ւր բողոքեմ զպատուհասառաքս բարկութիւն, ո՞ւր փախչիմ, յո՞ ապաւինիմ, զերկս շարեացս, որ հասին ի վերայ իմ ի գաղտորակ որոգայթից թշնամեաց, որ դարանագործ մենքենայիւք ըմբռնեցին ի խողխողումն զգարամանագանեալն համբակ: Եթէ առ Ռաբէլ, նա անդ ի տեղուցն ունի զբնակունակն կայեանս: Իսկ եթէ առ աստուածութիւնն բողոքեմ զանպատում շարեացս, դեռեւս նա յերկայնմտութեան է՛ ըստ ամենիմաստն իշխողութեան. եւ դառն գազանամիտս տեսակք՝ անողորմ թշուառութեամբ զանհնարինսդ կատարեն գործ: Իսկ եթէ առ ազինս ամենայն, աստուատ ազինք հակառակորդաց զներհակս բարոյն մատուցանեն, եւ ես յամենայն կողմանց զաղէտս թշուառութեանց համբուրեմ:

Բ. Ո՛ւր այն ժամանակ, զի զիմածին գեղեցկահրաշն զարմ

1 ZM ասացէ, FI Յակովբ  
5 ACFHIK զգայարանաց  
9 Z մարդախոշոշք

11 Z<sub>1</sub>AEI շարանախանձ  
24 EFIKM մեքենայիւք  
31 AE եւ ես եւ



քաղցրաճաշակն հայրախնամն գթով սնուցանէի՝ անվնաս ի թշնամեացն դաւոյ, յորժամ յօրինէի նմին զլուսաթոյրն զգեստապարոյրն պատմուճան առ ի կենցաղոյս վայելչութիւն<sup>67</sup>, եւ ես մեա զուարճանայի սպիտակավարսիւքն ծաղկեալ: Իցի՞ւ այն բարեբաստութիւն, յորժամ յանուրջն դիտաւորութեան պարբ լուսաւորացն զերկրպագութիւն մատուցանէին ի ձեռն աստուածային երկրպագութեան իմածին ղեւածաղիկն համբակի, եւ ես առաւել զուարճանայի պայծառութեամբ գեր զերկնապատիկն զամբարս: Սակս որոյ հրահանգէի զնոյն փութով բարեպաշտութեան յառաքինաւէտն ասպարէզս, որով զիմաստից գոյս պատրաստէի ի վայելս նմին, առ որս անկողոպուտն պահէի ի թշնամեացն դաւոյ, եւ սփոփանս մխիթարութեան ունէի ծերութեանս անձին: Արդ՝ աւա՞ղ իմոյ նախէին բաստի, յորժամ բերկրէի ամենապարծ փառօք իբրեւ զտերեւախիտն ի բուսակս ի գնացս շուրց, յորժամ յանսուտն բերանոյ ընդունէի անուանակոչութիւն, եւ մեծակայազօրն արիութեամբ յաղթող գտանէի անմահն տեսակի<sup>68</sup>. սարկս որոյ յոքնորոշ ասպարէզն զիտէի ի ստորուստ ի վեր եւ զպարս հրեշտակացն, որք ուղեւորէին ընդ նոյն: Կորուսի զմեծապարծուն փառաց առէս. զրկեցայ յառաջնական փառաբանութեանց, եւ փոխանակ այնորիկ զգծձատեսակն համբուրեցի վտանգս: Սակս այնորիկ անկաւ ի վերայ իմ մութ անհնարին, եւ ստուերք մահու ժամանեցին ինձ, տագնապն զիս երկունք աղիտից, եւ սուգ անմխիթար ըմկղմեաց զիս ի կորստեան վայր: Անօգնականեցայ յամենայն կողմանց, եւ ոչ որ էր, որ ինձ ի թիկունս հասաւ. չէր որ, որ արբուցանէր զիս ուրախաւէտն բաժակաւ: Վայ եւ աւաղ միանգամայն հասին ի վերայ իմ, եւ խաւար ի միջօրէի եւ ի հասարակ գիշերի անակնկալ աղիտից հանդիպեցաւ անձն իմ ի պաշարումն շարեաց, պարագիպեցան զինեւ ահա ամենուստ տագնապաւ վշտաց. ըմբռչխնեցայ զանբարեբավայելուչն պատիւ:

գ. Արդ՝ զի՞նչ արարից, ուստի՞ խնդրեցից սպեղանի իմոյ անբժշկականս հարուածոց, զո՞վ գտից մխիթարիչ անուրախաւէտն տրտմութեան, ո՞ւմ պատմեցից զգուժապարտն շարիս: Արդ՝ եթէ առից կալայց սուգ անմխիթար՝ յարուցիչ կոծապարոյս, յորդորեցից զեղարամարս յաշխարանուագ ձայնս, ապա եւս առաւելագոյն

3 Z1 միտ, Z1 միշտ, CK մէտ  
 11 ZBF գաւէ  
 15 E1 զանուանակոչութիւն

19 A1 այնոցիկ  
 22 E1 ախտից

յորդորեցից ի վերայ իմ զպատուածառան բարկութիւն, եւ մեղսամակարդն գոյիւք յուղարկիցիմ յորովայն մահու: Այլ առից վասեցից զծերութեանս միտս իմաստից կորովիւք, զխենէշտութիւն մըտաց արտաքսեցից, ապախնեցայց ի նոյն ինքն յաստուածութիւնն, երկրպագեցից ամենայողթ տէրութեան նորա. բողոքեցից զշարեացս հաւումն, զի շարքն շարաւ կորիցեն, ի ձեռն ամենապատարն շարութեանց զշարեացն կրեցեն պատիժս: Եւ ես նորոգեցայց միւսանգամ ամենապարծն փառօք՝ հոգւոյն ազատութեամբ, եւ զնորակերտն ժառանգեցից փառաբաստութիւն:

ՄՈՎՍԷՍԻ ՔԵՐԹՈՂԻ ԱՐԱՐՈՂԻ

Պիտոյիցս տառի խրատարանութիւն յորդարական առ Թէոդորոս ոմն աշակերտ իւր, ներակրթիլ քաջուշիմն վարժիւք յիմաստ նարտասանական արհեստիս:

Աստուատ ի բարձրագոյնս վերաթեւելով՝ գեղեցկապէս գեղապարեսցես ընդ երջանիկ պարս պերճացելոց երգաբանել ի պարերգակն ճեմարանի: Յորում բանապաճոյճ խոհականութեամբ արհեստապէս ճարտասանելով իմաստաճեմն երամոց յաւէտ դրուատիցիս ի քաջն հոգեպատումս, ընթերցասէր կրթականութեամբ հանդիպելով ի գուպարս բանամարտիցն՝ ըմբերանեսցես հանճարեղ բանիւ զբանիւն պանծացեալսն: Հասեալ ի բենազն աստիճան, ուր զկայրգոցն կատարելով, եւ բարեպաշտ փութով տօնասէր անձանց, բարուք յարմարեսցես զովասանական հանդէս: Արդ՝ ի յոքնախումբ ժողովարանի ի համօրէն քահանայազարդ դասուց՝ ի բոլոր ազատերամն երաստից երանաւէտ ձայնիւ բարեբանեսցիս: Եւս՝ ի դատողականն ատենի ըստ ներագրելոցն օրինաւոր կրօնից արտադատել զիրախոյն խնդիր, ի պատիւ նախաթողոցն յաշորդեսցիս: Նովին գեղապանծ հրճուանօք եղիցես պարծանք համատոհմեայց, եւ բաղձալի արհեստասէր համբակաց, ընդհանուր հոշակելով զիտողական համբաւով:

Այս է նախագումն կրթարանիս եւ ասպարէզ ենթակայս իրի

3 E1 զծերութեան  
 3-4 E1 մտացս  
 7 E1 գպատիժս  
 20 AEFHIK պանծացեալս  
 21 ZB տօնասէրս  
 25 EF դատողական, Z1 ներագրելոց



հետորական հանդիսատրաց, համանգամայն ուշեղագոյն պարմանեացն: Ի յայս ներակրթեալ երկասիրաբար՝ հետեւելով վարժապետիս քովին Մովսէսի, բոլորեսցես քեզ պսակ հոգեծաղիկ վարսագեղ՝ ունել ի ներ անձինդ, ո՛վ Թէոդորէ: Զայս առադրելով գաղափար, յօրինեալս առասպելականս կրթարանիս ճարտարագոյնս՝ Մովսէս քեզ Թէոդորի՝ սաղապելով ի սոյն մէտ երանեսցիս: Զայն անտաւոր հրատարակէր առ մետասան երամս օղապարիցն, ի վեհագոյն վեհիցն պետաւորէ՝ երագապէս ժամանել ի յօրն երեւելի. որ որ ի ձէնջ իցէ գէղաղէշ ի վայելուշ դիտաւորութեան՝ ի հասարակացն գումարութեան աոցէ զթագից աստիճան: Ոյց թեւածեալ փութապէս ճախրէին համաշուելով սեռք թեւահերձացն ըստ իւրաքանչիւր հոմերամ տեսակացն՝ հասանել ի տեղիս լոգարանացն. իջեալ առ հեզասահ վտակաւ խաղիցն յորդահոսան յստակագոյն աղբերացն, եւ ծայրալիր վայրօք վայելչացեալք, երամ երամ գնդիքն բանակէին: Որոց հանդէսք ներանձինցն բոլորակամ քատակապէս առ ի զարդան պաճուճանացն զանհաւասարան ի փետրոցն յօրինելով՝ պանծային զգերապատին առնուլ ձիրս: Անդ տխրեբանգ հաւն խարդաւանեալ զառ ի յայլոցն արտաքաղելով, բաղադրելով յիրում սեւաթուր սարասին, ի մէջ բիրակերպ հաւուցն պայծառանայր՝ դիտաւորեալ բոլորիցն նորահրաշ, որ ծաղկազարդ երանքօքն պաճուճանաց եւ գերապարծ հրճուանօք զզարդուց բոցափայլիւր ի հասարակացն: Առ որ հնչելով գերանաւէտ զձայն համագունդ ժողով գումարելոցն՝ նուիրէին նմա վիճակին յաւէտ ըստ արժանի արքայական ճոխութեան: Իսկ խորամանկ թռչունն գիշերասէր ի հոշակելին մերձակաց գոլով, պարատեսող խոհականութեամբ ծանօթանայր իւր իրանն երանգի: Իսկոյն առեալ ի բաց գերծանելով համանման իւրոյինն ներգոյից, բացադրելով օրէն հոմագին արտայայտէր զրապանծ խորոխտանս պերճացելոյն: Հետեւելով եւ այլքն անգիտասարաս իրեանցասարաս երանգոց գիտակ ելով ըստ մօտազգաց իրադիտողին՝ զիրաքանչիւր համանգամայն կապտէին: Երգ այպանելի եւ ծաղրական անզարդ յարտուտն զարդարանաց, եւ մերկագոյն յիրոցն սարասից՝ ծաղրերաստս յընազան հաւուցն եղանիր<sup>69</sup>:

8 ABCEPHKM պէտաւորէր  
9 CIKM եւ վայելուշ  
12 Z(Z<sub>4</sub>) հասեալ  
248

16 Z<sup>ա</sup> om.  
24 Z<sub>2</sub>AI գիշասէր  
28 F1 պերճացելոցն

Մ Ա Ն Ո Ւ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Թվում էր, թե «Պիտոյից գրքի» խրթին բնագրի ծանոթագրությունները պետք է այն մեկնարանող, լուսաբանող բնույթ ունենային, իսկ կրթման էլ նույնիսկ անհասկանալի տեղիների թարգմանությունը հանդիսանային: Սակայն մենք այլ ճանապարհ ենք ընտրել, բնագրի վերջնական վերծանման գործը թողնելով մեր հետագա թարգմանությունը՝ այստեղ մենք փորձել ենք բացահայտել նրա կապերն իր հունարեն սկզբնագրի և նախորդին, ինչպես նաև հայերեն աղբյուրների հետ: Այդ աշխատանքի արդյունքները, լսողական, կնիպատենք բնագրի բովանդակության մեջ խորամուխ լինելուն: Մենք չստանցել ենք ցույց տալ, թե ինչից է բաղկացած, կամ ինչպես է կազմվել այդ բնագիրը, թափանցել նրա հեղինակի աշխատանոցը:

Սույն ներածության մեջ մենք նպատակ ենք հետապնդում ամփոփ կերպով ներկայացնելու այն բոլոր բնագրային կապերը, որոնք առանձին-առանձին արտահայտված են ծանոթագրություններում՝ կոնկրետ նախակրթությունների, առանձին նախադասությունների կամ մտքերի համար:

Մինչև այժմ բանասիրությունը հստակ պատկերացում չունի «Պիտոյից գրքի» թարգմանական կամ ինքնուրույն մասերի հարաբերության, ինչպես նաև նրա հունարեն սկզբնագրի կամ նախորդինակի մասերի (տես Մուրադյան Գ., 1):

Հնարավոր հունարեն նախորդինակներն առաջին անգամ մատնանշել է հրատարակիչ Զոհրապյանը (Գիրք պիտոյից, էջ Ե-Է), զրանք են Թեոնի, Հերմոգենեսի, Ափթոնիոսի և Կրանիոսի նախակրթությունները՝ Ա. Բաումգարտները, նեղացնելով հնարավոր աղբյուրների շրջանակները, զրանք թվին է դասել Թեոնի և Ափթոնիոսի ձեռնարկները և մի երրորդ ենթադրյալ աղբյուր, որից իր օգտվել է նաև 5-րդ դարի հեղինակ Նիկոզայոս **Մյուռացին** (Nikolaos; նրա մասին տե՛ս Stegemann, Nikolaos von Myra; Hock, O'Neil, էջ 235—269) իր **նախակրթությունները գրելիս** (Baumgartner, էջ 461—462): Հ. Մանանդյանը թարգմանություն էր համարում մերթ ողջ «Պիտոյից գրքի», մերթ էլ նրա մեծ մասը (Մանանդյան Հունարան դպրոցը, էջ 106—111, 115—116): Ի դեպ, ինչպես և Ա. Բաումգարտները, նա համարում էր, որ սահմանումների լեզուն, հանգույ, ինչպես և Ա. Բաումգարտները, նա համարում էր, որ սահմանումների լեզուն, համարում նախակրթությունների հետ, ավելի հունարեն է (նույն տեղում, էջ 115—116):

\* Հերմոգենեսի և Ափթոնիոսի նախակրթությունների մասին տե՛ս Առաջարանը: Թեոնի (մ. թ. 1 դար) երկն իրենից բուն նախակրթություններ չի ներկայացնում, այլ գրանց նվիրված տեսական աշխատություն է, Կրանիոսի նախակրթությունների ծավալուն ժողովածու է՝ առանց սահմանումների (տե՛ս Theon; Libanios; Stegemann, Aelius Theon; Hock, O'Neil, էջ 61—112.; Foerster):



Baumgartner, էջ 474, ծան. 1): Ըստ Ս. Արեշտայանի «Պիտոլից-գրքի» սկզբնագիրը մի ճարտասանական ժողովածու պիտի լիներ, կազմված Ափթնիոսի, Քնոնի և Նիկողայ-յանի նախակրթություններից, որը «չբռնանառության մեջ էր Հայաստանում և թարգմանվել է 5-րդ դարի 70-ական թվականներին» (Аревшатян, էջ 179): Վերջերս մատնանշվել է մեկ այլ հնարավոր աղբյուր՝ անանուն հեղինակի Ափթնիոսի մեկնությունը (Sgarbi):

«Պիտոլից գրքի» մանրագրին համեմատությունը բոլոր նշված աղբյուրների հետ բացահայտեց հետևյալ պատկերը. 1) տեսական հրահանգները (սահմանումները) Ափթնիոսի հրահանգների բառացի հունարան թարգմանությունն են (տե՛ս Aphthonios՝ Վայցի հրատարակությունը), 2) 54 նախակրթություններից (չհաշված հավելյալ երեքը) քսանվեցը բովանդակությունը մոտ են Ափթնիոսի և Կիրանիոսի նախակրթությունների մնացածների համար զուգահեռներ չկան: Վերը նշված մյուս նախակրթությունների ժողովածուների հետ «Պիտոլից գրքին» ուղղակի առնչություն չունի Այժմ ավելի մանրամասն անդրադառնալով նշված կետերին:

1) Գեոնես Ա. Բառագաբոյններն ուղղորդություն է դարձրել այն հանգամանքին, որ համեմատելով Ափթնիոսի և «Պիտոլից գրքի» սահմանումների բնագրերը, հունարան թարգմանություններին հատուկ բառացի, նյութական հատվածների կողքին կարելի է գտնել բազմաթիվ բնագրային անհամապատասխանություններ, տեղափոխված հատվածներ և այլն (Baumgartner, էջ 470—471): Այդ անհամապատասխանությունները կարող էին առաջ գալ թարգմանության պահին, կամ էլ ինչպես հունարեն, այնպես էլ հայերեն բնագրի հետագա պատմության արդյունք հանդիսանալ: Ինչպես ցույց է տալիս Մաշտոցի անվան Մատենադարանի բոլոր ձևագրերի ուսումնասիրությունը, հայերեն բնագիրը համարյա փոփոխությունների չի ենթարկվել, իսկ տարբերությունները զուտ գրչական բնույթի են: Ինչ վերաբերում է Ափթնիոսի բնագրին, այն կարող էր որոշակի փոփոխություններ կրել իր բազմադարյան կիրառության ընթացքում, սակայն մենք ոչ մի տեղեկություն չունենք նրա որևէ այլ խմբագրության գոյության մասին: Քնն մենք չենք կարող «Պիտոլից գրքի» սահմանումները համարել Ափթնիոսի նախնական խմբագրության լիակատար բառացի թարգմանություն, սակայն որոշ դեպքերում կարելի է պնդել, որ հայերեն այս կամ այն ընթերցումը Ափթնիոսի վաղ խմբագրության վկայությունն է, քանի որ մենք հնարավորություն ունենք համեմատելու դրանք նրա աղբյուրների հետ: Առաջինը նրա հիմնական աղբյուրն է՝ Հերմոգենեսի նախակրթությունները (տե՛ս Her- mogenes, Ծպենգելի հրատարակությամբ), որոնց հետ նրա բնագիրը հաճախ համ- ընկնում է բառացի. մյուսը Քնոնի նախակրթություններն են (տե՛ս Theon), որոնցից նա որոշ մտքեր և մի շարք օրինակներ է բաղել (Brzoska, էջ 2798): Կան զեպրեր, երբ թարգմանությունը՝ համընկնելով աղբյուրի հետ, առաջ է Ափթնիոսի սկզբնական ընթերցումը: Ավելի սակավաթիվ են այն դեպքերը, երբ ընդհակառակը՝ աղբյուրները հաստատում են Ափթնիոսի ընթերցման հնությունը, ստիպելով բացա- արել թարգմանության անհամապատասխանությունը թարգմանչի ինքնուրույնությունը կամ բնագրի հետագա փոփոխությամբ (երբեմն հնարավոր է դիտարկել և բուն պատ- ճառը): Երբեմն մի բնագիրն օգնում է ճշգրտելու մյուսը՝ ելնելով բովանդակությունից,

կամ էլ թարգմանությունն օգնում է հաստատելու, թե սկզբնագրի որ տարբերակումն է նախնականը: Իսկ երբեմն էլ Ափթնիոսն այնքան է հոռուսում իր աղբյուրներից, որ նրանք չեն կարող նպաստել նրա սկզբնական ընթերցումը վերականգնելուն, սակայն մեզ թվում է, որ հայերեն բնագրի հետ մնացած անհամապատասխանությունների մեծ մասը ավելի համոզիչ է բացատրել հունարեն բնագրի փոփոխությամբ\*:

Անհրաժեշտ է համառոտակի անդրադառնալ նաև թարգմանական մեթոդին (տե՛ս- նիկային): Թարգմանությունը հունարան է, բառացի, սկզբնագիրն էլ տերմիններ պարու- նակող սահմանում է և շատ ճշգրիտ թարգմանություն է պահանջում (այստեղ դիտար- կում ենք և թարգմանական վերնագրերը). հիշենք նաև, որ հունարան դպրոցի գործու- նեությունն առաջին փուլում նյութականության սկզբունքը դեռևս բացարձակ չէր դարձել և չափավոր էր (Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 111, 121—122): Միշտ չէ, որ յուրաքանչյուր հունարեն բառ ունի իր միակ հայերեն համապատասխանը և ընդհա- կառակը (Terlan Philo, էջ 10—12), որ զրկել է Փիլոնին վերագրված «Յաղագս Յովնանում ճառի հրատարակիչ Հանս Աեիին հակադարձ թարգմանությամբ չպահ- պանված սկզբնագրի վերականգնման փորձի հնարավորությունից (Lewy, էջ 107— 111): Նույնիսկ Թրակացու մոտ հանդիպող տերմինները միշտ չէ, որ միօրինակ են թարգ- մանվել (διδασκαλίας-երկարբառ, երկձայն, βραχύς-սուղ, աղօտ, տե՛ս Մուրադյան Ա., էջ 322—323)\*\*, նույնպես և մեր բնագրում, տերմինների մեծ մասն, անշուշտ, մի- օրինակ է թարգմանված, սակայն օրինակ էլ γλωσσίζω (Aphthontos, էջ 85, 12, 87.6, 87. 18, 93.9) թարգմանված է ոչ միայն «ենքը դեմ» (էջ 95), այլև «չգովեմ» (էջ 95):

Նույնպիսի երևույթ է դիտվում և շարահյուսության բնագավառում: Հունարենին հա- տուկ և հայերենին խորթ շարահյուսական դարձվածքները երբեմն պատճենվում են, երբեմն էլ թարգմանվում են կարգադրական եղանակով՝ հայերենի համար նորմալ կառուց- ված քննելով. դրանք են՝ հայցականն անորոշ դերբայի հետ (accusativus cum infinitivo) բացարձակ սեռականը (genetivus absolutus), մասնակի սեռականը (genetivus partiti- vus); —ի-ով ապառնի դերբայով և օժանդակ բայով արտահայտված ստորոգյալը (խոսքն անցողական բայերի մասին է.) կարող է ունենալ ուղղական հոլովով ենթակա, որ սա- կայն տրամաբանական ուղիղ խնդիր է, և այդ դեպքում դերբայը հանդես է դալիս որ- պես կրավորական: Այդպիսի կառուցվածքը նորմալ է դասական լեզվում (Աբրահամյան, էջ 137): Նույն իմաստը կարող է արտահայտվել, եթե դերբայն ընկալվի որպես ներ- գործական և անցեմ կիրառությամբ. այդ դեպքում տրամաբանական խնդիր խնդիր է նաև ձևական տեսանկյունից, այսինքն՝ զրված է հայցական հոլովով: Հենց վերջին եղա- նակով են թարգմանված սահմանումների բոլոր հունարեն-էջո-ով բայածականները, երբ նրանք հանդես են դալիս անցեմ կիրառությամբ (չեզոք սեռով) և ունեն հայցական հոլովով խնդիր: Հունարեն հոգ անցեցող դերբայական կապակցությունները թարգմանվում են կամ հարաբերական նախադասությամբ կամ դերբայով՝ անցյալ, եթե դերբայն որոշիչ տուում է, և անորոշ դերբայի գործիական հոլովով, եթե այն պարագայի առումով է: Սակայն եթե անհրաժեշտ է շեշտել անցյալ իմաստը, պարագայի առումով հանդես եկող դերբայը կարող է թարգմանվել և անցյալ դերբայով: Հանդիպում է նաև հակասակ եր-

\* Այս առումով որոշակի նյութ են բնձնում և Ափթնիոսի մի շարք հետագա բնագրի նախակրթությունները, որոնք բոլորն էլ գեաեղված են Վայցի վերոհիշյալ 1 հատորում (գրանց արժեքը, համեմատած աղբյուրների հետ, բնականաբար, այնքան մեծ չէ):

\* Մանոթագրություններում արտահայտված են բոլոր անհամապատասխանու- նեքը. հնարավորության դեպքում նշված է և պատճառը:

\*\* Հմմտ. նաև Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 119—122:



վույթը (անորոշ զերբալի գործիական հոլովի կիրառությունը որոշի առումով), որ արդեն լեզվի նորմերի խախտում է:

Ինչ վերաբերում է ձևարանությանը, պետք է նշել, որ բայական դիմավոր «է» ձևը (3-րդ դ., հզ. Թ.) նրկու անգամ զերբալի դեր է կատարում (ենթակայական՝ «եզող»):

Բառակազմության կամ բառապատճենման բնագավառում մեր Թարգմանությանը հատուկ են հետևյալ առանձնահատկությունները: Սահմանումներում առկա են նախածանցավոր բառերի նախածանցավոր պատճենումներ\*, որոնց համարյա կեսը նորակազմ բառեր են\*\*: Երբեմն որպես նախածանցավոր բառի պատճենում հանդես են գալիս բարդ բառեր\*\*\*, նրբման էլ բառակապակցություններ, որոնցում որպես նախածանցի համարժեք մակերայ է կիրառված\*\*\*\*: Այս միջոցը հաճախ է կիրառված այնպիսի «նախահունարան» Թարգմանության մեջ, ինչպիսին է Գրիգոր Նազիանզացու ճտերի Թարգմանությունը (Lafontaine, Coulie. էջ 133—136. հմմտ. նաև Վիլ. Իմաստ. 46. «ի վերայ կոչումն» - VI. 30. ἐπι καλῆσι): Վերջին երկու միջոցները կարելի է անվանել «կիսապատճենում»: Որոշ նախածանցավոր բառեր Թարգմանված են իրենց պարզ համարժեքներով, որոնց մի մասը գալիս է դասական Թարգմանություններից\*\*\*\*\*, մի բանին էլ այդպես են Թարգմանվել Թրակացու\*\*\*\*\* մոտ:Բարդ պատճենումներին մի բանին ունեն տերմինարանական նշանակություն\*\*\*\*\*: Կան և իմաստալին պատճենումներ\*\*\*\*\*:

Թարգմանական տեխնիկայի քննությունը հնարավորություն է ընձեռում որոշ տերմինարանական հետևություններ անելու: Օրինակ, Ափթնիոսի առկա բնագրում (Aphthonios էջ 101) բացակայող մի նախադասության Թարգմանության մեջ հայցականը անորոշ զերբալի հետ դարձվածքի և «պելեպականեխականը» հոգնակի ածականի գոյականակերպ օգտագործումը (τῶν Πηλοποννησιακῶν ἐπιβουλήων պատերազմ) անկասկած են դարձնում սկզբնաղբի նախնական խմբագրություն մեջ համապատասխան նախադասության գոյությունը (տե՛ս VIII. ժան. 15):

Մեր նշած առանձնահատկություններն առկա են նաև հունարան դպրոցի առաջին շրջանի մյուս Թարգմանություններում՝ Գիսնիսիոս Թրակացու Քերականության և Փիլոնի որկերի մեջ (մանրամասն տե՛ս Մուրադյան Գ., 3):

\* ընդամենը 20 այդորինակ բառ

\*\*արտասահունքիւն (էջ 201) - ἐκφρασις (A. 103, 104), արտելուքիւն (էջ 71) - παρῆλασις (A. 81.12), բացայիշատակ (էջ 30) - ἀπομνημόνευμα (A. 62.13) ևլն (ընդ. 7 բառ)

\*\*\* առաւելահարաշ (էջ 44) - ὑπερβολικός (A. 68. 2), շրջակայ (էջ 221) - περιστασις (A.109.3,4) ևլն (ընդ. 5 բառ)

\*\*\*\* ի բաց հանումն (էջ 74) - ἐκφραγή (A. 81. 13), մերձ դն՝մ (էջ 153) - παραβάλλω (A.98.2,6) ևլն (ընդ. 7 բառ)

\*\*\*\*\* Եզոմումն (էջ 60) - ἑρμηνεύω (A. 72), պարսու (էջ 124) - φάρος (A. 93.4,5, 97.22) ևլն

\*\*\*\*\*գէմք (էջ 95, 124, 201) - προσωπον (A. 86, 93, 103)

\*\*\*\*\*գիմանունքիւն (էջ 184) - προσωποποιία (A. 101) ընդ. 11 բարդ բառ

\*\*\*\*\*սիրելի (էջ 33) շընկեր, բարեկամ - φίλος (Lib. 63)

2) 26 նախակրթություններ, որոնք բովանդակության ընդհանրություն են ցուցաբերում Ափթնիոսի և Լիբանիոսի հետ, նրանցից ոչ մի Թարգմանական հատված չունեն, բացի վերնագրերից: Ափթնիոսի հետ անընդող բանմեկ նախադասություններից միայն մեկն է առկա նրա ժողովածուում, մնացածները գտնում ենք Նիկողայոսի անվան տակ պահպանված ժողովածուի մեջ\*: Նրանցից հինգը (I. 1, II. 1, IV. 3, VI. 4, X.1) զուգահեռ ունեն նաև Լիբանիոսի մոտ, սակայն հայերեն նախակրթություններն ավելի շատ ընդհանուր կետեր ունեն Ափթնիոսի համապատասխան նախակրթությունների հետ, ուստի վերջիններս պետք է համարել նրանց նախորինակը:

\* Անհրաժեշտ է նշել, որ Նիկողայոսի (իմա՝ Ափթնիոսի) ժողովածուի ընդամենը ինք Լիբանիոսի հետ վերնագրերով համընկնող և միևնույն թեման արժարժող ընդամենը ինք նախակրթություն: Այսինքն՝ աշակերտը մրցում է իր ուսուցչի հետ, ջանալով տարբերվել նրանից ինքնուրույն մտքերով, իր խոսքերով մշակել նրա մոտ առկա թեմաները, սակայն անխուսափելիորեն փոխ է առնում նրանից առանձին մտքեր և արտահայտություններ: Ափթնիոսի նախակրթություններն ավելի համառոտ են, քան Լիբանիոսիները և ավելի են համապատասխանում իր տեսական հրահանգներին: Սակայն նրան չի հաջողում դերագանցել իր ուսուցչի՝ հանրահայտ հետադրի, արամբանական խաղի ներբությունն ու սրամտությունը, ինչպես նաև նրա փայլուն լեզուն և ոճը:

Այդ Լիբանիոսի ընդօրինակությամբ գրված ինք նախակրթություններից վերոհիշյալ հինգն իրենց հերթին նախորինակ են ծառայել «Պիտոյից գրքի» հեղինակի համար: Ուրեմն, Ափթնիոսը մրցում էր Լիբանիոսի, իսկ «Պիտոյից գրքի» հեղինակ՝ Ափթնիոսի հետ բանմեկ նախակրթության մեջ: Մնացած հինգը (1.2, IV.2, IX.5, 6, 7), որոնց համար զուգահեռներ կան միայն Լիբանիոսի մոտ, ավելի հետո են հունարեն նախորինակից, քան Ափթնիոսի մոտ զուգահեռ ունեցողները: Այդ հանգամանքը հուշում է մեզ, որ այստեղ էլ միջանկյալ օղակ է եղել՝ Ափթնիոսի մոտ շրջապահված հինգ նախակրթություն: Ստացվում է ընդօրինակությունների նույն շղթան՝ Լիբանիոս → Ափթնիոս → «Պիտոյից գրք»:

Այսպիսով, Ափթնիոսի նախնական ժողովածուն ընդգրկում էր սահմանումների նախնական խմբագրությունը (տե՛ս 1), Ափթնիոսի և Նիկողայոսի նախակրթությունները և 18 նախակրթություն Լիբանիոսի ժողովածուից, որոնք, ըստ Օրինակու, Ափթնի-

\* Շտեգերմանը (Stegemann, Nikolaos. էջ 454—456) ենթադրել է, որ Ափթնիոսի նախնական ժողովածուն ընդգրկում էր նաև այն նախակրթությունները, որոնք նրա համառոտումից հետո (առկա ժողովածուն ունի մեկական նախակրթություն յուրաքանչյուր տեսակի համար, տե՛ս Aphthonios), առանձին ժողովածուի ձևով վերագրվել են ճարտասանության ուսուցչի Նիկողայոս Մյուսացուն (մով. 430 թ.), որը նաև ուրիշ ճարտասանական երկերի հեղինակ էր (ունի նախակրթություններ գրելու տեսություն): Այդպիսի ենթադրության համար նա ունեն հետևյալ հիմքերը. 1) երկու ժողովածուների լեզվի և ոճի նմանությունը (Նիկողայոսի լեզուն մանրամասն ուսումնասիրված է; տե՛ս Orjynsky), 2) Լիբանիոսին ընդօրինակելը (9 նախակրթություն), որ ավելի բնական էր նրա աշակերտի՝ Ափթնիոսի համար, 3) Նիկողայոսի՝ նախակրթություններն ավելի շատ հետևում են Ափթնիոսի սահմանումներին, քան իր սեփական տեսությանը, 4) նրանցում անհամեմատ ավելի շատ զուգահեռներ կան Ափթնիոսի ժողովածուի բնագրի հետ, քան վերջինիս ընդօրինակողների մոտ: Մենք կարող ենք ավելացնել 5-րդ ապացույցը՝ «Պիտոյից գրքի» կազմը:



ոսի գրչին են պատկանում (Orynsky): Մակայն «Պիտոյից գրքի» նախակրթությունները կազմը օգնում է ոչ միայն հաստատելու նիկողայոսի անունը կրող նախակրթություններին հեղինակային պատկանելիությունը, ինչպես նաև կրթանիոսի և «Պիտոյից գրքի» միջև միջանկյալ օղակ հանդիսացող հինգ նախակրթությունների գոյությունը, այլև ենթադրելու, որ ևս հինգ նախակրթություն (I. 3, II. 4, 5, 6, III. 3) պետք է նախօրինակ ունենային Ափթնիոսի մոտ: Այսպես, բոլոր անտիկ հեղինակների, պատմական զրվագների, դիցարանության մասին տեղեկություններ պարունակող նախակրթությունները գրված են Ափթնիոսի ընդօրինակությամբ, որից և բաղկված են նրանց մասին բերվող համարյա բոլոր տեղեկությունները: Այս խմբի մեջ պետք է գիտել առաջին երեք զլուխների բոլոր տասնվեց նախակրթությունները, և վերոհիշյալ հինգը չզբաղված քաջատուփյուն կազմեն, մանավանդ որ Ափթնիոսի ժողովածուի ճակատագիրն, ինչպես տեսանք, շատ բարդ էր և կորուստները՝ շատ հնարավոր:

Եթե նշված տասնվեցին գումարները շորրորդ գրքի առաջին երեք նախակրթությունները, ապա կտեսնենք, որ «Պիտոյից գրքի» առաջին տասնինը նախակրթությունները հունարեն նախօրինակ ունենին: Տասներկու նախօրինակ ունեցող նախակրթությունները բաշխված են մնացած գրքերի միջև, բոլորում գրքերից ոչ մեկը չունի չէ այդպիսիններից, իսկ X գրքում ինքնուրույն նախակրթություն չկա, որ կարելի է բացատրել «գրություն» տեսակի համեմատական բարդությամբ:

V, VI, VII գրքերում (ներբողան, պարսա, բաղդատուփին) նախակրթությունները կազմը համապատասխանում է սահմանումների մեջ թվարկվող այն առարկաներին, որոնք կարելի է ներբողել, պարսպիլ և բաղդատուլ՝ «դէմք, իր, ժամանակ, տեղի, ածրան կենդանի, տունկ»: Այստեղ հեղինակն առաջին անգամ է դիմում աստվածաշնչական թեմաներին, երեք գրքերում էլ՝ «դէմք» տեսակի համար:

VIII և IX գրքերում (բարաանութին, արտասանութին) բոլոր ինքնուրույն թեմաներով գրված նախակրթությունները գրված են աստվածաշնչական սյուժեներով:

Այսպիսով, եթե զանց անենք X գիրքը, նախակրթությունները բաշխված են հետևյալ կերպ. գրքի սկզբնական մեկ երրորդ մասը առանց բացատրության փոխառյալ թեմաներով նախակրթություններ են, այնուհետև հայտնվում են ինքնուրույն ընտրված սյուժեներով նախակրթություններ, իսկ գրքի վերջում գրանք գերակշռող են գտնում: Հավանաբար, հեղինակը՝ վարպետություն ձևը բերելով փոխառյալ թեմաները ինքնուրույն մշակելիս, ավելի ու ավելի շատ է ընդգրկում իրեն ավելի հարազատ, իսկ հունական նմանօրինակ գրականությունը խորթ թեմաներ, սակայն մինչև վերջ էլ չի հրաժարվում, երևի վարժության համար, փոխառյալ թեմաներից:

Առանձին նախակրթությունների հարաբերություններն իրենց նախօրինակների հետ կրենարկվեն ծանոթագրություններում, սակայն այստեղ նշենք մի քանի ընդհանուր բրինձափոխություն:

1) Ափթնիոսից թեմաներ փոխ առնելով, «Պիտոյից գրքի» հեղինակը ձգտում էր հնարավորին չափ ինքնուրույն լինել, մշակել այդ թեմաները սեփական մտքերով և խոսքերով, սակայն անխուսափելիորեն կրկնում էր Ափթնիոսի որոշ տեղեկություններ և մտքեր, բայց և երբեք բառացի չէր թարգմանում և ոչ մի խոսք (բացի վերնադրերից):

2) Հայ հեղինակը խստիվ կերպով հետևում էր սահմանումների վերջում բերվող տվյալ տիպի նախակրթությունը զլուխների բաժանելու պահանջին (համարյա բոլոր ձևագրերում գտնում ենք՝ ա... բ... գ...): Ափթնիոսն այդ բաժանմանն այդքան խստո-

բեն հետևում էր միայն γρηγο (պէտք) և γνομεν (խրատ) գրքերում, իսկ մնացածներում նա բոլոր կետերը չէ, որ մշակում էր:

3) «Յաղագս պիտոյից» (I) և «Յաղագս խրատու» (II) առաջին՝ «սասողին գովութիւն» զլուխը, որում ամենից հաճախ են տեղեկություններ հանդիպում անտիկ աշխարհի նշանավոր մարդկանց մասին, միշտ ավելի ծավալուն է, քան նախօրինակում, սակայն հավելումը, որպես կանոն, արված է ոչ թե գովությանը արժանացած անձի վերաբերյալ, այլ հարակից տեղեկությունների հաշվին:

4) Նույն առաջին երկու գրքերի վերջում «յարացոյց» (παράδοξα) և «վիպաութիւն հնոցն» (μαρτυρία παλαιων) զլուխներում, ի տարբերություն Ափթնիոսի, որ օրինակներ և իմաստուն ասացվածքներ է բերում անտիկ պատմական կամ դիցարանական հերոսներից, «Պիտոյից գրքի» հեղինակը, կարծես մրցելով իր հեթանոսական սկզբնաղբյուրի հետ, Աստվածաշնչից է հայթայթում իր միտքը հաստատող նշանավոր անձանց և իմաստուն խոսքեր:

5) Իր նախօրինակում հանդիպելով անտիկ կյանքի իրականությունների՝ մեր հեղինակը ձգտում է շրջանցել դրանք, կամ էլ փոխարինել ընդհանուր բնույթի դատողություններով:

6) Հեթանոսական աստվածների փոխարեն «Պիտոյից գրքում» միշտ հիշատակվում է աստված, բացի «Եղծ զնեպոլբայ» (III. 1) և «Եղծ գերակեայ» (III. 3) նախակրթություններից. առաջինում կետն իր զավակներ Ապոլլոնի և Արտեմիսի հետ, իսկ երկրորդում՝ Հերակլեսը եղծվող առասպելների կենտրոնական գործող անձինք են (վերջինում՝ հիշատակվում են նաև «վեհք»՝ աստվածները):

7) Եթե համեմատենք «Եթե նաւելի է» (X. 2) և «Պարսա նաւարկութեան» (VI. 5) նախակրթությունների «անձն». բաժնի զլուխները, ուր դրանք հակառակ նշանով են հանդես գալիս, կտեսնենք, որ նրանցում միմյանց հակասող, հակադարձ մտքեր են արտահայտվում: Նույնպիսի հակադարձ գնահատականներ, ճիշտ է, ոչ այդքան հետևողական, առկա են «Պարսա ձիոյ» (VI. 2) և «Բաղդատուփին ձիոյ և արշառոյ» (VII. 5) նախակրթությունների մեջ: Այսպիսի միմյանց բացառող գաղափարների մի գրքի մեջ համադրակցումը բխում է ճարտասանության էությունից, որը խոսքի գործիքները համողելու միջոց հանդիսանալով, սկզբունքորեն պարտաւտ էր ընդունելու ցանկացած թեմա, այն մշակելու և նրան ցանկացած ուղղություն տալու համար՝ վերացնելով գաղափարից: Օրինակ, կրթանիոսի ժողովածուում գտնում ենք. 'Ανασκευή θεοι οὐκ εἰκότα τα κατὰ Διάντα τὸν Λόχρον (Libanios, V № 2) և Κατασκευή θεοι εἰκότα τα κατὰ Διάντα τὸν Λόχρον (Libanios, VI № 3, միևնույն առասպելի «եղծումը» և «ստեղծումն» է): Ափթնիոսն էլ ունի Մեղեպի և Նիսիի ինչպես «եղծումը», այնպես էլ «ստեղծումը» (Nikolaos, VI. 5, 6, 8, 9)\*:

Եվ այսպես, մենք գտնում ենք, որ Ափթնիոսի նախակրթությունների հետ առնչություն ունեցող նախակրթությունները մեր հեղինակի ինքնուրույն շարադրանքի արդյունք են, և ոչ թարգմանությունը մի շարահայանված հունարեն բնագրի, որն աղբյուր է ծառայել Նիկողայոսի նախակրթությունների համար (Baumgartner, էջ 461—462), կամ

\* «Եղծումն» (III) սահմանման վերջում այն հիշատակվում է որպես «ստեղծումն» (թարգմանիչը փորձել է հարդրողը ἀνασκευή և κατασκευή բառերի համահնչյունությունը):



էլ Ափթոնիոսի, Քենի և Նիկողայոսի նախակրթութիւններէց կազմված մի ժողովածու է եղել (Аревшатян, էջ 179): Մեր այս գրույթի մեկ ապացույց կա՝ մեր բնագրի իր հայերէն աղբյուրների հետ ունեցած բազմաթիվ բնագրային կապերը:

Կարեւորագույն աղբյուրը Աստվածաշունչն է (աստվածաշնչական զտգահեռների մեծ մասը բերել է Հ. Զոհրապանն իր ծանոթագրութիւններում, տե՛ս Գիրք Փիտոյից): Տասներեք նախակրթութիւններ արժարժում են նրանից բազմ թեմաներ: Աստվածաշնչույնում իրենց գործող անձանց գործունեության նկարագրութեան վրա են հիմնված V (Ներքողեան) 1, VI (պարսաւ) 1, VII (բաղդատովին) 1 նախակրթութիւնները, սակայն ուղղակի մեջբերումներն աղբյուրից սակավաթիվ են, հեղինակը ձգտում է փոփոխել այն, իսկ նրանում պակասող տեղեկութիւններն էլ ինքն է հորինում: Երբեմն նա այդպիսի տեղեկութիւններ է բաղում Աստվածաշնչի մեկնութեանը նվիրված աղբյուրներից (օրինակ, VII. 1. դ՝ Փիլոնից):

Առավել ազատ է վարվում հեղինակը Աստվածաշնչից բազմ թեմաների հետ բատոնայրայնեանում (VIII. 1—6), որտեղ շկան մեջբերումներ, որ բնական է, քանի որ այդ տեսակի մեջ առավել զգալի է երևակայութեան, հորինվածքի առկայութիւնը, մանավանդ խոսողի հոգեվիճակը լուսարանող պսթոտիկ հատվածներում (եւս գլխում): Իսկ վերապատմելով Աստվածաշնչի գրվագները, նա սովորաբար փոխում է դրանք երբեմն իր մեկնարանութեան տարրերով:

Եթէ հունարեն նախօրինակ ունեցող նկարագրութիւնները («արտասանովին») սովորաբար սկսվում են այսօրինակ խոսքերով. «Ես դրա ականատեսն եմ եղել, սրան շացել եմ, ուզում եմ և ձեզ պատմել (շխարհնել), որ դուք էլ շղկվեք այդ հաճույքից», ապա Աստվածաշնչի հիման վրա հորինվածներում ասվում է, որ այդ մասին գրված է Սուրբ Գրքում (1. «ի սուրբ մատենագրութեան», 2. «ի սուրբ և պատուական տէրունան»՝ մատենագրութեան», 4. «ի լրոշ պատմութեան անջինջ մատենագրութեան»), իսկ երբեմն նաև որ հեղինակը տեսել է դրանց պատկերները: Շարադրանքի տարրեր գրվագներում էլ նա հայտնվում է որպես հանդիսատես: Հետևելով սահմանման «եւ ծագկեալ եւ շարմանեալ ամենայն ձեովք» պահանջին՝ հեղինակը դրամատիկ տեսարաններ է նկարագրում, որոնք կարծես տեսել է մեծակտավ նկարներում: Ընդ տ է, նա ջանում է չիրկնել իր աղբյուրի շարադրանքը, սակայն երբեմն արտահայտութիւններ և մակդիրներ է բաղում նրանից՝ նրան էլ ինքն է հորինում նոր մակդիրներ, նոր տեսարաններ և գրվագներ:

Աստվածաշնչից ուղղակի մեջբերումներ կան միայն I և II գրքերի «վկայութիւն հնոցն» գլուխներում, սակայն հաճախ այդ մեջբերումներն էլ զգալի փոփոխութիւններ են ենթարկվում: Նույն գրքերի «յարացոյց» (օրինակ) գլխում Աստվածաշնչի գրվագ-

\* Մատենագրութիւն բառն առկա է եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի թարգմանութեան մեջ՝ «մատենագիրք»-Ավգերյան՝ scriptores (նախիրոս, Քրոնիկոն, էջ 61), «մատենագրութիւնք»-Նաբբաշաի (նույն տեղում, էջ 43), «մատենագիրք»-Շալաբաշեան (նույն տեղում, էջ 278), հմմտ. նաև I Եղբ. 6.21 «ի տուն մատենագրաց»-էն տուց Յիլափալաշաշուց. սակայն Աստվածաշնչի վերաբերյալ առաջին անգամ կիրառված է մեր բնագրում:

\*\* Փիլոնի մտա կա «տէրունեան գիրք» արտահայտութիւնը (իմաստ, էջ 99, լին. IV. 1, էջ 1240, տեսական 13-ից շրջապատ 128. ժ բան 232 իբր յաբալ, ժ բան 262 իբր յիլալու): հմմտ. նաև «գիրք լինելութեան» (Փիլ. լին. 1.1, իրեն. առաք, 41):

ների գործող անձինք հանդես են գալիս իրենց անուններով, բացի մեկ դեպքից՝ «մեծն ի մարգարէս» (II.5. խոսքը Մովսէսի մասին է):

Մյուս նախակրթութիւններում նույնպես կան ուղղակի կամ փոփոխված հղումներ, գործող անձանց ուղղակի հիշատակութիւններ (անուններով՝ V.4. դ, 5. ժէ, VI.2. ժգ, ժե, VII.2. դ) և անուղղակի հիշատակութիւններ (անվան փոխարեն նշվում է մակդիրով՝ VI.4. ժ, VII.4. ժէ, .6. ժգ): Կան նաև Աստվածաշնչի ուղիղ կամ անուղղակի վկայակոչումներ (V.4. ա, .5. ա, իպ, VI.1գ, ժէ, .3. ժէ, VII.3. ժգ, էջ.6, X.1):

«Փիտոյից գրքի» հեղինակն օգտվել է նաև այլ աղբյուրներից, որոնց թվում կարեւորագույնը Փիլոն Ալեսքանդրացու թարգմանութիւններն են: Անգնն աչքով կարելի է տեսնել, որ վերջիններս լեզվաճական ազդեցութիւնը «Փիտոյից գրքի» վրա շատ ավելի զգալի է, քան ետրեանացու և Եղիշի երկերի:

Այն փաստը, որ այդպիսի ազդեցութիւն եղել է, նկատել է արդեն Գ. Զարպահայանը (Զարպահայան, Պատմութիւն, էջ 379). նա բերել է նաև այդ փաստի երկու վկայութիւն (Զարպահայան, Մատենագրաբան, էջ 746): Ցավոք, նրա այդ դիտարկումը լրիւպել է հետագա հետազոտողների ուշադրութիւնից: Այսպես, Հ. Մանանդյանը խոսում է նրանց բառապաշարի նմանութեան մասին, ընդհանուր բառերի մեծ ցուցակ է բերում, նույնիսկ երկու բնագրային զուգահեռ, որոնցից մեկը համընկնում է Զարպահայանի բերած առաջին օրինակի հետ (Մանանդյան, Հունարան դպրոցը, էջ 107—111), սակայն նա եզրակացնում է, որ նրանք պետք է համարվեն միևնույն դարաշրջանի և միևնույն թարգմանական դպրոցի գործեր (նույն տեղում, էջ 111): Եվ դա բնական է, քանի որ ըստ նրա «Փիտոյի գիրքը» մեծ մասամբ թարգմանական էր, և հետևաբար, մեծ թվով ընդհանուր բառերի և նույնիսկ նախադասութիւնների առկայութիւնը նրան թվում էր միևնույն թարգմանական մեթոդի արդյունք:

Սակայն Փիլոնի երկերի թարգմանական, իսկ «Փիտոյից գրքի» մեծ մասի ինքնուրույն շարադրանքն աներկբայի է են զարձնում փոխառութեան բուն փաստը և նրա ուղղութիւնը: Եթէ փորձենք դասակարգել փոխառյալ բառերը՝, ապա կտանանք նախածանցավոր\*\*, բարդ\*\*, վերջածանցավոր բառապատճենումներ\*\*\*\* (հմմտ. թարգմա-

\* Մանանդյանի մոտ դա արված չէ, բացի այդ նրա ցուցակը մի կողմից լրիվ չէ, իսկ մյուս կողմից նրանից անհրաժեշտ է հոսանցնել այն բառերը, որոնք հանդիպում են արդեն ոսկեդարյան թարգմանութիւններում, և բացի այդ նա ձեռքի տակ չի ունեցել «Փիլոնի Հերբալիցոյ ճառք, որոց հելլեն բնագիրք հասին առ մեզ» (Փիլոն, 1892) հատորը և բնականաբար, նաև հունարեն բնագրերը:

\*\* արտայայտ (էջ 79, 114) — Փիլ. այլար. 152-1. 244 ἐκδύλαξ, բացափայլ (էջ 203) — Փիլ. ն. 1.11, ժ բան 76—VII 260 τήλασγίς (ընդ. 19 բառ)

\*\*\* ամենիմաստ (էջ 46, 47, 49) — Փիլ. իմաստ. 36—VI.10 πάντοπος, լին. 4.341, էլ. 2.31, աստուածառար (էջ 52, 62) — Փիլ. նիս. 2, 72, էլ. 1.4 θεγλατος. սեւ ամաղձութիւն (էջ 144) — Փիլ. այլար. 164—1. 268 μελαγγελια (մոտ 70 այդպիսի բառ)

\*\*\*\* բաշխեբարար (էջ 206) — Փիլ. Սամփս. 559, բնատրական (էջ 105, 132) — Փիլ. ժ բան 261—VII. 82 φουλας, բուժիչ=«բժիշկ» (էջ 76, 237) — Փիլ. տեսական 5-X. 114 θεραπευτης, վարժարան (էջ 232) — Փիլ. նիս. 2.108 γυμνασιον. երկակ (էջ 75, 113) — Փիլ. այլար. 106—1 148. θιάς. լին. 1.15 (ընդ. 22 բառ)



նական հատվածների լեզվի բնութագրեր), ինչպես նաև մի շարք բառեր, որոնք պատճենումներ չլինելով, չեն հանդիպում ուրիշ ավելի վաղ գրված երկերում: Վերջածանցավոր բառերի մեջ մտնում են մի շարք նորակազմ մակրայններ, վերացական գոյականներ, գրարարում ամենապրոզոկտիվ «-ովին» ածանցով, ածականներ՝ գրարարում ամենապրոզոկտիվ «-ական» ածանցով (Туманян, էջ 144), տեղի անուն ցույց տվող բայի հիմքից կազմված գոյականներ՝ «-արան» ածանցով և «-ակ» ածանցով կազմված գոյականներ և ածականներ: Վերջին ածանցով կազմությունները առանձնահատուկ ուշադրության արժանի են, քանի որ գրանք այնքան էլ մեծաթիվ չեն դասական գրարարում (եթե մի կողմ թողնենք նրա՝ նվազական ածանցի նշանակությունը): Դրանք ինչպես իրանական փոխառություններ են (Schmitt, էջ 31), այնպես էլ արդեն հայկական հոդված ստեղծված գործող անձի անուններ, nomina instrumenti, բայի հիմքից կազմված գոյականներ, գոյականի հիմքից՝ իմաստի նեղացումով կամ կոնկրետացումով կազմված գոյականներ: Հունարան դպրոցի թարգմանիչները բառապատճենման նպատակով օգտվել են ոչ միայն լեզվի պրոզոկտիվ մոդելներից, այլև արհեստականորեն ակտիվացրել են նաև ոչ պրոզոկտիվ մոդելները. այսպես, նրանք զանգվածային կիրառություն են հաղորդել հազվագյուտ հանդիպող մի քանի նախածանցների (Ջահուկյան, էջ 45): Նույնը կարելի է ասել և «-ակ» ածանցի մասին. մեծ թվով նրանով կազմված բառեր առկա են Փիլոնի թարգմանություններում: «Պիտոյից գրքի» հեղինակը կիրառելով Փիլոնի թարգմանություններում, ինչպես նաև ավելի վաղ թարգմանություններում կերտված «-ակ» ածանցով բառերը, ինքն էլ դրանց նմանակությամբ մի շարք բառեր է ստեղծել (գործող անձի անուններ և ածականներ. մանրամասն տե՛ս Ասատրյան, Մուրադյան)\*\*:

Ուշադրության արժանի է «բնատրեցայ» անցյալ կատարայի («բնատրիմ» բայից) կիրառությունն անորոշ բայի հետ «սոփորություն ունենալ, հավված լինել մի բան անելու» իմաստով, որը հունարեն πειραζομαι ձևի պատճենումն է (Գրսա «ծնվել, լինել» բայի պերֆեկտն է):

Փիլոնի թարգմանություններում առկա են մի շարք դասական լեզվի կանոններից շեղվող քերականական ձևեր՝ 1) ցուցական «սա, դա, նա» դերանվան արհեստականորեն ստեղծված իգական սեռի «սէ, դէ, նէ» ձևը (օր. այլար...<sup>\*\*\*</sup> 125), եզ. տր. «սարա» (նույն տեղում, 157—1. 250 αὐτῆ), եզ. հայց. «զս» (նույն տեղում, 156) հոգն. սեռ. «սացա» (նույն տեղում, 157—1. 254 αὐτῶν), 2) «եմ» օժանդակ բայից ստեղծված դասական լեզվում գոյություն չունեցող «ել» անորոշ դերբայը, որը հաճախ հանդես է գալիս քերականության հետ «ելու», «ելով» (օր., Փիլ. իմաստ. 48, բազմ. 202, լին. 2. 3, ել. 1. 1, 3), «է» դիմավոր ձևի կիրառությունը ենթակայական դերբայի նշանակությամբ՝ «եղող» (հմտ. սահմանումներում):

\* աղջատր (էջ 143) — Փիլ. իմաստ. 94—VI. 110, րհ. 198—VII. 186 նαγχα-  
τος, զնեմ (էջ 31) — Փիլ. նխ. 1.19 (ընդ. 32 բառ)

\*\* «մղեղակ» (էջ 81) նշք (II, էջ 186) թարգմանում է «մղեղ, փոշի»՝ վկայակոչելով միայն մեր բնագիրը, սակայն ածանցի իմաստի բացահայտումը հուշում է մեզ, որ «հուրը մղեղակ» պետք է հասկանալ «փոշի դարձնող հրով»:

\*\*\* Փիլոնի ձևերի վերնագրերի համաստացրությունները տրվում են ըստ ՆՁԲ-ի, կողքը նշվում է էջը, կամ դիրքը և պարագրաֆը (Փիլոն 1822, 1826, 1892):

եթե վերջին առանձնահատկությունն առկա է միայն թարգմանական սահմաններում, ապա նախակրթությունների բնագրերում կան մյուս ձևերը՝ «սէ, դէ, նէ» (էջ 66, 68, 69), սեռ. «ներա» (էջ 63), հայց. «զնէ» (61, 62, 163) «ել, ելու, ելով» (էջ 36, 67, 81, 84, 85, 131, 179, 180, 195, 217, 230): Բացի այդ այստեղ հանդիպում է թրակացու «Քերականության» մեջ կիրառված (Адонц, էջ 9, 11, 15) «եզ» իվականը (էջ 82, 92, 161, 168, 176), որն օգտագործվում է «մի»-ին զուգահեռ՝ «եզ քան զմի» (էջ 45), «մի ըստ եզոջ» (էջ 45, 93): Մեկ անգամ հանդիպում է նաև «մու» ձևը (էջ 175)\*\*:

Նշենք նաև Փիլոնի թարգմանությունների ազդեցությամբ կիրառված շարահյուսական հունարանությունները. 1) nominativus cum infinitivo (ուղղականն անորոշ դերբայի հետ՝ 4 անգամ), 2) accusativus cum infinitivo (հայցականն անորոշ դերբայի հետ՝ 18 անգամ), 3) genetivus partitivus (մասնակի սեռական՝ ութ անգամ), 4) genetivus absolutus (բացարձակ սեռական՝ 5 անգամ), 5) ածականի հոգնակի թվի կիրառությունը վերացական գոյականի իմաստով, 6) նախդրավոր կապակցությունից առաջ ողջ կապակցությունը գոյականացող «զ-» նախդրի (հունարեն հոդի դիմաց) կիրառությունը, որի հետևանքով ստացվում է երկու նախդրերի միացում, 7) «զ-» նախդիրը և հոդը անորոշ դերբային կցելը, 8) -ի-ով ապանի դերբայի կիրառությունն ուղիղ խնդրի հետ (հմտ. սահմանումների լեզուն), 9) Փիլոնի թարգմանիչը հաճախ «կանգնել», «ստեղծ» իմաստն արտահայտող բայերի անցյալ կատարյալ ժամանակները թարգմանելիս՝ ավելորացնում է «անցեալ» դերբայը, կարծես շեշտելու համար վիճակի գաղափարը. «անցեալ նստի» (այլար. 39) - ἐγχαθίστατο (I. 286), «անցեալ կայ» (իմաստ. 77) - ἵσταται (VI. 84), «անցեալ գնացեալ» (իմաստ. 77) - ἀποστάντα (VI. 84): «Պիտոյից գրքում» այդ «անցեալ» վերադիրը հանդես է գալիս ամենատարբեր բայերի հետ՝ «անցեալ հայցելը պատասխանիս» (էջ 34), «անցեալ յորանայ» (էջ 47, 52), «անցեալ թողուցուն» (էջ 38), «անցեալ գտցի» (էջ 38), «անցեալ տեսցուք» (էջ 49), «անցեալ պատմի» մնացին» (էջ 62), «անցեալ նստիք» (էջ 75), «անցեալ կալու» (էջ 82), «անցեալ (էջ 46, 57), «անցեալ գնայ» (էջ 62), «անցեալ պարադիտեսցուք» (էջ 63), «անցեալ համբարի» (էջ 83), «անցեալ գնայք» (էջ 86), «անցեալ մնացէ՛ք» (էջ 88), «անցեալ կացին» (էջ 97), «անցեալ տանին» (էջ 231), «անցեալ սպասեն» (էջ 226) և այլն: Այստեղ այն կարծես դեկորատիվ բնույթ է կրում:

Կա ևս մի առանձնահատկություն, որն ավելի շուտ ոճական բնույթի է: Այսպես, Փիլոնի թարգմանություններում որոշ դատողություններ երբեմն սկսվում են այսօրինակ խոսքերով. «եթէ զայս ոչ կամեսցի որ տալ» (նխ. 1, 5), «եթէ թուեսցի որ յառաջնմէն» (տեսական 36), «ում այլ ումեք հուատայի է» (իմաստ. 101), «եթէ որ փառոք մեծամեծս ինչ խորհրցի» (նխ. 2, 57), «եթէ որ երգել ձեռնարկիցէ» (նխ. 2, 77), «զի՛նչ որ ասասցէ» (կիս. 168), «ոչ առաջին ումեք զգալի է» (լին. 1. 61), «եթէ կամիցի որ ի հարց առնու» (լին. 2. 1), «ասասցէ որ...» (ել. 2. 87) և այլն: Այսպես են սկսվում «Պիտոյից գրքի բազմաթիվ նախակրթությունների» «գարմացի որ» (I.1), «եթէ որ հրաշացեալ զարմացի» (II.3), «ընդ միտ արկանելով ուրուք» (II.7), «տեսցէ որ» (III.1), «եթէ որ սխալեսցէ» (III.2), «պատմութիւնս...պատճառ կորստեան որ բազրաղեսցէ» (III.3), «ընդ յոյժ պատուականագոյնս ո՞ որ... ոչ... ձգտեսցի» (V.

\* Հր Աճառյանը (ԱՔ||, s. v. «եզ», s. v. «մու», Աճառյան, էջ 148—149) ենթադրում է, որ այդ ձևերն օգտագործվել են երեք սեռի համար, սակայն թրակացու մտա զա այդպես չէ:



5), «որ որ...քննել կամիցի» (VI.2), «բլ... հաւեսցի որ» (VI.4) և այլն. նմանա-տիպ արտահայտություններ գտնում ենք և բնագրի ներսում. «եթէ որ համադուցի կա-մնացի» (II.1), «զգասս կատակերգակացն տեսանելով ուրուք» (II.5), «զացէ որ» (II.6), «ի բաց դարձուցանելով որ... զղէմս» (III.1. ք)»:

Փիլոնի թարգմանությունների աղղեցությունը «Պիտոյից գրքի» նախաբերությունների վրա չի սահմանափակվում լեզվական աղղեցությամբ և բառային փոխառություններով. բացի վերը նշված երեքից այս երկու բնագրերի միջև կան բազմաթիվ զուգահեռներ: «Պիտոյից գրքի» հեղինակը երբեք անփոփոխ չի բերում Փիլոնի խոսքերը, սակայն միշտ պահպանում է զաղափարը և յուրահատուկ բառապաշարը. զրանց մեջ կան ինչպես առանձին բառակապակցություններ, այնպես էլ համեմատաբար ծավալուն բնագրի հատված-ներ: Նա ձգտում է փոխել փոխառյալ հատվածի շարահյուսական կառուցվածքը, տեղա-փոխություններ կատարել նրա մեջ, մակդիրները վերագրել որոշորովին այլ կարգի առար-կաներին:

Այստեղ մենք կանգ կառնենք միայն «Պիտոյից գրքում» լայն տարածում գտած մի մտորվի վրա. նախաբերությունների զգալի մասում կան մարդկանց «բարեբախտություն-ները» և «զժրախտությունները» նկարագրող բառակապակցությունների շարքեր, որոնք բանաձևային բնույթ են կրում և պարզագույն դեպքում բաղկացած են խնդիրներով օժ-տրված բայական զոչականներից, և ցույց են տալիս քննարկվող անձի պատճառած բա-րիքները կամ շարիքները, կամ էլ որոշի արժեք ունեցող բառակապակցությունից, որի կենտրոնը անական է: Կան նաև նույնատիպ մտքեր արտահայտող ավելի բարդ բառա-կապակցություններ, երբեմն ամբողջ նախադասություններ: Շարքի անդամները փոփոխ-վում են տվյալ նախաբերության բովանդակությանը համեմատ: Որպես օրինակ բերենք «Յադագս պիտոյից» գրքի առաջին նախաբերության «զ» պատճառ» գլխից իմաստուն մարդկանց բնութագրի. «սիրելիք կարի բաշ թաղուրաց, պարծանք ծնողաց և բո-վանդակ շինտեան տան և գաւառի պատճառք»: նույն նախաբերության «զ»՝ «բնդղի-մակ» բաժանում այս թեման արժածվում է, բնականաբար, հակառակ նշանով. «ոչ ի մեծ առնիցն վարին ճանդէս, և ոչ յալ ինչ ի մի արժանաւորացն և պանծալեացն, այլ թախիժը զրացեացն գոլ և մերձաւորաց տխուր տրտմութիւն, և զխտվին առնիք՝ հա-րադատն ամուսնաց, և զրեթէ հասարակաց ամենայն իսկ մարդկան, իշխանաց և իշ-խեցելոց»:

Հմմտ. նաև I.2. գ, գ, 4. դ, 5. գ, դ, II.1. ա, գ, դ, 3. գ, գ, 4. գ, գ, 6. գ, IV.1. ա, է, 3. բ, ը, 4. ա, V.4. գ, ժ, ժ, 1:

Մեր կարծիքով, այդ կարգի արտահայտությունների համար անթ կարող էին հան-գիտանալ Փիլոնի հետևյալ տեղիները. «որ մեծամեծաց բարեաց պատճառք են գաւառաց» (Փիլ. շն. 278), «բշնամիր ծնողաց և կանանց և մանկանց և թշնամիր հայրենի գա-ւառին և թշնամիր անձին իրեանց» (տեսական, 18—19), «անմարդութիւն և նուազու-թիւն առաքինի ազգին մարդկան, ամլութիւն և անպաղտութիւն» (նույն տեղում)\*\*:

Բացի Փիլոնի երկերից «Պիտոյից գրքի» հեղինակն իր աշքի առաջ ունեցել է և այլ

\* Հմմտ. նաև Nikolaos, էջ 274—280 και πολλῶν μὲν ἀντὶς Διγμοσθέντων Ἰαχυμάστει (էսե բազմաց որ զԴիմոսթենէս զարմասցի...):

\*\* Հմմտ. նաև Բրս. պճ. ա (PG 31. 184). «Պահք՝ բաղարի բարեկեցութիւնք, գոն-հից բարեկեցութիւնք, տանց խաղաղութիւնք, փրկութիւն գոյիցն» և Ագաթ. 4. «...նորա և զարդ բաղարաց, նորա և մեծութիւն գաւառաց»:

թարգմանական երկեր. մի զգալի հատված (VI.4) զրված է բարսեղ Կեսարացու «Ջարրեցողաց» ճառի աղղեցութեան տակ:

Եվս մի անհրաժեշտ դիտարկում. ուսումնասիրելով բնագրի այն բառերը, որոնք, թվում էր, պետք է հունարենից պատճենված լինեին, զրանց զգալի մասի համար դրա-կան պատասխան և աղբյուր գտանք: Գրանք են՝ բացի Փիլոնի թարգմանություններից, որոնցից փոխառյալ բառեր կազմում են «Պիտոյից գրքի» դեմքը, Գրիգոր Նազիան-դացու և Բարսեղ Կեսարացու ճառերի թարգմանությունները՝ Սրանք այսպես կոչված «նախահունարան» թարգմանություններ են (տե՛ս Առաջարանը), և բառապատճենում-ները նրանցում ավելի շատ են, քան սովորական թարգմանություններում, մյուս կող-մից նրանք զենու «հունարան» չեն, և նախածանցավոր բառապատճենումները նրան-ցում չնչին թիվ են կազմում: Ծատ ավելի փոքր թվով բառեր բնագրի մեջ անցել Թրակա-ցու «Քերականությունից»\*\*, «Պատմութիւն Աղեքսանդր Սակեղոնացու» և Իրենեոսի թարգմանություններից: Մի սովոր խումբ այդօրինակ բառերի համար էլ մեզ չի հաջող-վել աղբյուր գտնել: Սակայն մեր կարծիքով, եթե պատկերացնենք, որ նրանց փոքր մասը նՆԲ-ի հեղինակների կողմից շօտազործած, կամ նրանց ուղղորդվածից վրի-պած, զենու շճատարակված, վերջապես զենու շճատարակված, կամ էլ մեզ բնահան-րապես չհասած բնագրերից է, ապա մեծ մասը փոխառյալների նմանությամբ պետք է կերտեր «Պիտոյից գրքի» հեղինակը, ինչպես «-ակ» անանցով բառերի դեպքում\*\*\*:

Ինչ վերաբերում է աղբյուրների վկայակոչմանը, մեր հեղինակը զրան դիմում է միայն Աստվածաշնչի դեպքում, այն էլ, ինչպես տեսանք, սահմանափակ ձևով: Սակայն առանձին դեպքում, մասնավոր տեղեկություններ հաղորդելիս՝ սովորաբար բնագրի տական բնույթի (բույսերի, կենդանիների, բնական երևույթների մասին), նա ավելացնում է. «բառ իմաստասիրացն բանի» (VI.2. մլ՝ ձերի մարմիններից ձիաստանների ծնվելու մասին, ակնարկվում է Փիլոնը), կամ «բառ ոմանց իմաստնադոյն բնաստութեան» (I 5. զ՝ տատարակների ամուսնական հավատարմության մասին, ակնարկվում է Բարսեղ Կեսարացին): Մնացած դեպքերում ա) կամ այդօրինակ վկայությունների հասցեատերը մեզ անծանոթ է (V.5. ժգ, բ) կամ զրանք բնահանուր՝ բնույթի են՝ առանց որևէ հասցեատիրոջ ենթադրելու (VI.3. դ, ժգ, 2. ա, 1. է):

Քանի որ «Պիտոյից գրքի» աղբյուրների աղղեցությունը նրա ոչ թարգմանական մասերի վրա արտահայտվել է նաև լեզվի բնագավառում, որ ստիպեց մեզ մանրամա-սքն բնութային ենթարկելու նաև լեզվական հարցեր, փորձենք ամփոփել այդ թեման: Չուր չէ, որ «Պիտոյից գրքի» լեզուն հետազոտողների վրա այնպիսի տպավորություն է թո-ղել, որ ստիպել է ողջ զիրքը համարել հունարան թարգմանություն: Սակայն, ինչպես տե-սանք, այդ «հունարանությունը» արդյունք էր ոչ թե թարգմանական լինելու, այլ «հունարանու-

\* Մեր բնագրում մեզ հաջողվել է գտնել զրանցից վերցրած 21 նախածանցավոր, 75 բարդ, 20 վեջածանցավոր բառ. ի դեպ, սրանց զգալի մասը վկայված է նաև Փիլոնի մոտ, որ ավելացնում է «Պիտոյից գրքի» և Փիլոնի համար վերը նշված բնահանուր բա-ռերի թիվը:

\*\* 1 նախածանցավոր, 6 բարդ և 3 վեջածանցավոր բառ:

\*\*\* Օրինակ՝ «բարեկեցութիւն» (էջ 72) բառը կարող էր ստեղծվել «բաշնանու-թիւն» բառի նմանակությամբ (էջ 112, 230) — Փիլ. Նխ. 2. 118, իմաստ.— 1.4 εὐτοφροῦσα, հմմտ. նաև «երկնագնաց» (էջ 129)՝ «արփեղանց» (Փիլ. Լիս.), «ծովամարտութիւն» (էջ 230)՝ «հետեակամարտութիւն» (էջ 208, 209) — Փիլ. լին. 1. 100 և այլն:



Յյունները՝ միտումնավոր կերպով կիրառելու: Ընդհանուր է, շարահյուսական և ձևարանական հունարանությունները համեմատաբար հաճախ չեն կիրառվում, սակայն նույնը չի կարելի ասել բառապատճենումների մասին, որոնք շատ ավելի առատ են, քան Փիլոնի Թարգմանություններում: Վերջինս՝ Թարգմանություն լինելով հանդերձ, ավելի դյուրընթաց է մեր բնագրի համեմատությամբ, նաև այն պատճառով, որ «Պիտոլից գրքի» հեղինակը միտումնավոր կերպով բարդացնում է իր շարահյուսությունը: Բացի վերոհիշյալ առանձնահատկություններից պետք է նշել երկարաշունչ բարդ նախադասությունները, դերբայների և երկրորդական նախադասությունների կուտակումները, որոշի և որոշյալի, ինչպես նաև հատկացուցչի և հատկացյալի միջև բազմապատկեր բառակապակցությունները, որոնք և բնդհանրապես բառերի ոչ ավանդական կարգը, օժանդակ բայի հաճախակի ներմուծելը և բնդհանրապես բառերի ոչ ավանդական կարգը, օժանդակ բայի հաճախակի բացակայությունը, նրբման էլ նույնիսկ ոչ հետևողական շարահյուսությունը: Սրան է գումարվում ոճական խրթնարանությունը՝ մակդիրների (հաճախ բարդ) կուտակումները, իրերը ոչ իրենց անուններով, այլ այլաբանորեն կոչելու հակվածությունը և այլն: Եվ, ինչպես արդեն ասվեց, մեծ թվով բառապատճենումների կիրառությունը:

Նշենք նաև, որ «գեր» բառը, որ գասական լեզվում ստիպ է միայն «գեր ի վերոյ (բան)» մակրայի կազմում, մեր հեղինակը կիրառում է վերջինիս փոխարեն. նրան հաջորդող բառը գրվում է սովորաբար հայցական հոլովով, երբեմն էլ՝ տրական. «գեր դամենայն» (էջ 32), «գեր զբնա» (էջ 38), «գեր զմարդիկ» (էջ 41), «գեր զայս» (էջ 41), «գեր զմահուն վտանգս» (էջ 48), «ավելի դեր զտացեալս կիրոս» (էջ 50), «գեր զբազումս» (էջ 68), «գեր զկրտսերագոյն զոյնցն» (էջ 108), «գեր զբան» (էջ 124), «առանկ զեր զգմա» (էջ 84), «գեր զշարափոխն գառնաբարոյնի խոստովանեացի կրել ստտակումն» (էջ 93), «գեր զհուշակելին եւ զվեհն ամենայն քրիստոսացի Հոմերոս» (էջ 47), և այլն:

Մյուս կողմից «գեր ի վերոյ» հանդես է գալիս՝ որպես ածական՝ «գերագոյն» իմաստով. «գեր ի վերոյ ամբաստանութիւն» (էջ 73), «գեր ի վերոյ զօրութեամբն» (էջ 178, 185), «գեր ի վերոյ հանդիպումն» (էջ 188), «գեր ի վերոյ բարեխառութիւն» (էջ 182), «ի գեր ի վերոյ փառս» (էջ 172), «գեր ի վերոյ արտօմակ» (էջ 222), «զգեր ի վերոյն էա զովութեամբ մրցանակս» (էջ 102): Հմմտ. սակայն Ածար. ի բաս. 177. «գիմաստաւորութիւն...զգեր ի վերոյ ամբարձան» - F.G. 35.528. φιλοσοφίαν τήν... ανω βαιουσαν, նույն տեղում, էջ 182, «զանդ բնութիւն եւ զգեր ի վերոյ քան զժամանակն» - PG. 36.537. τήν άχτιστον φύσιν καί ύπεργρονος:

Մենք արդեն նշել ենք, որ երբ հավելյալ բարանությունների և վերջարանի լեռն և ուր տարրեր են մնացած բնագրից: Նրանց հեղինակն էլ ավելի խրթնարան է, հակում ունի դեպի բարդ՝ հաճախ նորակազմ բառերի կուտակումները, այլաբանությունը (օրինակ, «երկազիտակ զգայարան»՝ աչքերի համար, «վեհագոյն վեհիցն պիտաբոր»՝ Որմիղն է, «անջրելի աննդ»՝ աստված և այլն): Նա խոստովում է սովորական, պարզ բառերից՝ փոխարենը կիրառելով այնպիսի բարդություններ, որոնց իմաստն էլ առաջին հայացքից երբեմն զժվար է վերծանել («զբախտանուն», «կորստաւեր», «վրիպազործիլ», «աղատերամ», «շարահամրոյր», «մահասահման»): Կան և բառակազմության նորմերին հակասող բառեր («իմաստացիկ», «իմածին», «իրեանցասարաս»):

### Գիրք I Յաղագս Պիտոլից

Aphthonios, էջ 62. ὅρος γρησιας.  
Hermogenes, էջ 6. περί γρησιας.

1. Եւ ասացել է այսպէս յոռոց կիաց կենցաղոյս օգտակարագոյնն «Եւ կոչվում է այսպէս այն բաների համար, որոնց շնորհիվ այն կյանքի համար շարահայնց օգտակար է»: Aphthonios, էջ 62. γρησιώδης δὲ οὕσα προσαιγορούσται γρησια («Եւ պիտանի լինելով՝ կոչվում է պէտք»): Միգուցէ նախնական բնագրում եղել է βιωφελής բառը, որը գտնուել ենք թեոնի բնագրի համապատասխան տեղում (Թէոֆն, էջ 86՝ «կենցաղօգուտ», էջ 35) և որը Փիլոնի երկերում սովորաբար թարգմանվում է «կենցաղօգուտ» և «կենցաղոյս օգտակարագոյն» (Ժ բան, 243, բազն. 215, տեսական 22, նի. բ. իմաստ. 59):

2. ոմանք...ոմանք Aphthonios էջ 62. τὸ μὲν... τὸ δὲ... «ոմանք գերանվան իրի առումով հանդես գալը շեղում է դասական լեզվի նորմերից. հոգնակի թիվը բացատրվում է «պէտք» բառի անեզական բնույթով (Հմմտ. Փիլ. ալլար. 124. «ոմանք լարուեստիցն տեսականը են... եւ ոմանք գործականը»):

3. միայն Aphthonios, էջ 62-63՝ չուհի, Hermogenes, էջ 1. 10՝ μόνον (M. K. 122. 26. μόνον):

4. գոստս... (ասաց) բուսանիլ accusativus cum infinitivo: Aphthonios, էջ 63. 1. τούτους... κλιόνας (ἐλεγε) φύσεται: Ողջ նախադասությունը շարահայնցությամբ տարրեր է Ափթոնիոսից, սակայն վերջինիս մոտ այն առաջնային պետք է զիտել, բանի որ համարնվում է Թեոնի համապատասխան օրինակի հետ (Թէոֆն, էջ 43):

5. կենցաղոյս շափ Aphthonios, էջ 63. 3. τὼν ἀνθρώπων ο βίος («ժարդկանց (ժարդկային) կյանքը»), նույնը՝ Թէոֆն, էջ 39. նկարագրական թարգմանություն է:

6. Ողջ նախադասությունը բացակայում է Ափթոնիոսի մոտ և նրա աղբյուրներում:

7. յերկախանցիտաց Aphthonios, էջ 63. 3. ἐξ ἀμφοτέρων («և մեկով, և մյուսով»)՝ մակրայացված քարացած կապակցություն է, որ թարգմանիչը պատճենել է:

8. սակով Aphthonios, էջ 63. 8. ἐπεικων (Mon. 1, εἰπων) նախընտրելի է սոցատակի տարբերակները (նաև Anon. 129. 28):

9. գովարին...պվտսն...զպատմսն...զարագոյն Aphthonios, էջ 63՝ գրությունների անունները տրական հոլովով են (որ կթարգմանվիր գործականով), սակայն Hermogenes, էջ 7-3՝ ուղղական:

10. հնոց Aphthonios, էջ 63. 12. παλαιών. Հմմտ. նաև II. «զվկայութիւն հնոցն»:

11. եւ աստեպեցես զպվտսն զուգնախայ ի վերայ բանի Aphthonios, էջ 63. 12. ἐπιλόγω βραχῆ. Hermogenes, էջ 8. 12. ἐν δὲ τῷ τέλει παράκλιτον προσθήσεις:

12. Nikolaos, էջ 272. Διογένης μαιράκιον ἐφορακίως ἀτακτοῦν τὸν παιδαγωγὸν ἐτύπησεν ἐπεικων. τί γὰρ τοιαῦτα παιδεύσεις;

(Հմմտ. նաև Libanios, III, 2): Հմմտ. սահմանման բնագրում. «Գիտորնէս համրակ տեսանելով ստահակեալ, զմանկածուն տանչեաց, սակով. քնդէր այրպէս դաստիարակես»: Վերջին հատվածի բացակայությունը վերնագրում պատճառ է դարձել, որ այն կոչվի «պէտք գործականը», չնայած սահմանման մեջ բերվում է որպես «պէտք խառնը» - ի օրինակ: Համարյա նույն հունարեն նախադասության (տարրեր են միայն ἐτύπησεν և ἐπεικων) թարգմանության մեջ տարրերություններ կան՝ «համրակ»-«զմանկ», «տեսանելով»-«տեսեալ», «ստահակեալ»-«ստամրակ», «տանչեաց»-«գաւազանան էհար»:

13. նոցա զոլ բանի լուցն genetiivus absolutus, սակայն դարձվածքը կատարյալ կլինեք, եթե լինեք ընդա գոյց բանի լուցն» (Հմմտ. հաջորդ ծան.՝ «եղելոցն»):



«բանի որ նրանք (մնացած փիլիսոփաները) (իմաստուն) խոսքի (այսինքն՝ սպեյտր-ի, «խրատ»-ի) առումով լուռ էին (և նրանց նախասիրությունը բնական գիտություններն էին)»:

14. այնց յոյժ բարբառս եղևոցն genitivus absolutus. «Բոսի սրանք (շնականները) միշտ զարդարված լինելով կյանքի համար շափազանց կարևոր խրատներով, սրանց այս առաքելությունն արտահայտվում է ինչպես խոսքի, այնպես էլ գործերի մեջ»:

15. Ափթոնիոսի մոտ ( Nikolaos, էջ 272) ա. «ասողին գովութիւն» ἐγκωμίων τοῦ εἰπόντος գլխին (ինչպես և I—II գրքերի մնացած նախադրություններում) չի նախորդում մեր բնագրում առկա «ասողի» բնագավառը գովաբանող նախաբանը, իսկ նըշված գլխում խոսվում է այն մասին, որ Դիոգենեսն ուղղել է փիլիսոփայությունը բարբերի կատարելագործմանն, այնինչ մնացած փիլիսոփաները դրաղվել են արևի և մյուս լուսատուների շարժումով:

16. զխակութիւն անգգամութեանն հմմտ. Փիլ. լին. 4.14. «Իսակ եւ անգգամ» (պատանիների մասին է):

17. Հմմտ. 11.5, դ. «զկելոյն...և զբարի կելոյն վայելչականութիւն», IX.6. «կելոյ եւ կամ բարի կելոյ», հմմտ. նաև Փիլ. բագն. 216. «Երկու պատճառք կելոյ են, հոտոտելիք եւ ճաշակելիք, եւ երկու բարիք կելոյ, տեսանելիք եւ լսելիք»:

18. իշխանաց եւ իշխեցեցոց հմմտ. Փիլ. ժ բան 264. «իշխանաց եւ որ ընդ իշխանութեամբ են՝ ի հաւանութիւն իշխանաց, եւ իշխանաց՝ յօգտութիւն իշխեցեցոց» - VII, 88. ὑπεχόους μὲν εἰς πεπαισθητὴν ἡγεμόνων, ἡγεμόσι δ' εἰς ὀφέλειαν τῶν ὑπεχόμενων: Տե՛ս նաև V. 4, Սե. IV. 3, դ., IV. 5, Թ, V. 2, Ժգ, VII. 3, Սե, VII. 5, Ժա, X. 2 (էջ 233):

19. «ընդդիմակ» ἐναντίον գլխում մեր հեղինակը ձգտում է ինքնուրույն լինել նախօրինակի համեմատ, այլ ուղղությամբ շրջելով իր միտքը: Այստեղ դա նրան հաջողվել է. փաստորեն այս զրույթը նախորդ՝ «պատճառ» գլխի (որի միտքը հիմնականում Ափթոնիոսից է գալիս) հակադարձ միտքն է արտահայտում, իսկ Ափթոնիոսն ասում է, որ եթե Դիոգենեսը հարվածեր պատանուն, ապա նրան կարելի էր մեղադրել վերջինիս անվայելույթ վարքի պատճառները չհասկանալու համար:

20. յանեռանագն ելոյ՝ յանդիման կացուցանել: Ափթոնիոսի մոտ՝ ինչպես նախատինների սխալների համար պատասխանում է նավավարը, երգչախմբի սխալների համար՝ ուտուցիչը, զորքի սխալների համար՝ զորավարը, այնպես էլ երեխաների սխալների համար պատասխանում է դաստիարակը:

21. Տե՛ս բագ. գ. 14: Ափթոնիոսի մոտ՝ աթենացիները, երբ Հելլենապոնտոսում գոհվեցին բազմաթիվ գինվորներ, մեղադրեցին զորավարներին, իսկ Թևմիստոկլեսին վերադրեցին Սալամինի հաղթանակը, չնայած այդ ճակատամարտին մասնակցել էր և՛ ժողովուրդը, և՛ ողջ բազարը:

22. Եզեկ. 3.17. «Եւս կացուցի գրեց տանն Իսրայելի»: Ափթոնիոսի մոտ (Nikolaos, էջ 274)՝ ըստ Սոֆոկլեսի, ղեկավարները կարող են փշաջնել բազարի բարբերը, իսկ ուտուցիչները՝ մարդկանց:

23. Հմմտ. Libanios III, I, Ἀλέξανδρος ἐρωτήσῃς παρὰ τινος τοῦ ἄν εἶχε τοὺς ἡγεταυροὺς τοὺς φίλους ὑπέδειξεν. Ֆորստերը տեղեկացնում է, որ մի կորած ձեռագրում եղել է τοὺς φίλους ὁ Μακρίων (Foerster, էջ 2519): «Միքելի» (չընկեր, բարեկամ՝ իմաստով), φίλος բառի իմաստային պատճենումն է նախադրության բնագրում «բ» տողը՝ φίλος բառի իմաստային պատճենումն է նախադրության բնագրում «բ» տողը՝ φίλος բառի իմաստային պատճենումն է նախադրության բնագրում «բ» տողը: «Գնայն ինքն զզէտսն փոխելով ասացես» գլխում՝ «բարեկամ»։ Ը ձեռագրում (№ 1803) այս նախադրությունն ինքնուրույն է շարադրված (էջ 9ա—11ա): Բնագիրը բերվում է ձեռագրի ուղղագրությամբ, միայն առանց պահպանելու համառոտագրությունները:

«Պէտք բանականը»

ա Ի հարցումն զթագաւորն Աղեքսանդրոս, թէ ուր են գանձք քո ասաց սիրելիքն են գանձք իմ: <Ա>մենայն ումք և որ առաւել իմաստնալուծիցն մարդկան յոյժ գիտելի է միշտ բարձրացեալ առաւել զարմանալ ի թագաւորութիւն Աղեքսանդրի, որ փոր ինչ ի հօրէն առեալ իշխանութիւն վաղվազակի հառաջելով հասեալ ծայրագոյն ի զլուխ թագաւորութեան և նովա զառի ներքոյ առեղական ասհասարակ ծովու և ցամաքի աստուածաբար տիրեաց: Զայն ոչ միայն բաշտութեամբն քան թէ լավէտ իմաստութեամբն յարդարեալ հնազանդեցոյց: Վասն զի տեղեակ և առաւել ընտիր վարժեալ էր ուսուցանելովն Արիստոտելի բազում անգամ որով ահեղ և զարմանալի ցոցացներ զինքն ամենեցուն ինչ զի տեսեալ ոմն, զյոյժ մեծութիւն և զփառաւորեալ պատիւ թագաւորութեան և ընդ միտ ածեալ գանձափութիւն ծածուկ գանձոցն հայցիք գիտել զտեղիսն թէ ուր են գանձք քո: Իսկ նա առեալ զսիրելիսն մեկնէր նմա հարցանելոյն պատասխանի: Գեղեցկապէս և արդար և ի իմաստութեամբն. այլ ևս քան զամենայն խրատական բանս, այս պատական ասացաւ քան զի որ սիրելիօքն մեծացեալ աշխարհի թոփ. թէ քան զամենայն փառաւորութեամբ լցեալ լինի բարեօք յամենայն կողմանց բանի սիրելիօք պահի տերութիւն թագաւորին որով առաւել հանապազ ուրախանայ ի կենցաղում այլ և իշխանք նորք յաջողեալը լինին հաստատ ամբուրութեամբ վարելով զիշխանութիւնն այլև սորք գաւառաց բարեկարգութիւն և բազարաց պաշտառութիւն և իւրաքանչիւր տանց շինութեան գեղեցկի պատճառն սա լինելով: Մինչ որ ամենայնի պատճառ լինելով մարդկան խորին խաղաղութեան և աջուրութեան և ամենայն փառաւորութեան նաև աստուածային բարեպաշտութեանցն լցեալ կատարին կամք անձանձիր յորդորմամբք. ընդ որ բաշխեալ լինին <ե>ախախնամութեամբ մարդասիրութիւնք, բայց պարզաբար կարճ ի կարճոյ, ասացից թէ ինչ միայն գամ բարութեանցն վերայ բերումն սիրելեացն մերձաւորութեամբն զարդարեալ պատուին: Իսկ որ դատարկ լինին ի բարեկամաց ո՛վ ոչ գիտէ զի վերջին ազրատութեանց լինի ընդունակ զժուարտութիւնս ի թշնամեաց կրելով անարգութիւն ի դրացնոց բանդումն և անբումն բնից և ստացուածոց ի բազարացեաց և ի գեղեցկաց և ի հակառակորդ սահմանակցաց և միայն դամայն յամենայն կողմանց գայ շքատութեանց նեղութիւնք և բարութեանցն բնաւ ոչ երևին գնացք: Եւ զայս ի գիւտութեանցն ժողովն և ի նաւավարութեանցն հաստատ գիտելի է. որ և թէ ոչ ունիցին ընդ ինքեան ուխտագիր և յոյժ սիրելի հաստատ գիտելի է. որ և թէ ոչ ունիցին ընդ ինքեան ուխտագիր և յոյժ սիրելի պատերազմակից ոչ միայն թէ յաղթութեանցն զգտանէ կարողութիւն այլև յաղթեալ ևս ի պատերազմութեանցն լինանեացն վաղվազակի շարժաստամբ զրկի ի կեթեալ ևս ի պատերազմութեանցն ամենայն սիրելեաց օգնականութեանցն և ոչ իսկ գործն նացս և նաւարկութեանցն առանց սիրելեաց օգնականութեանցն և ոչ իսկ գործն



ի տեղն կատարի: Զայս և ի մեծ անուանի նահապետին է տեսանել զգործ որով ընդ ինքեան ունիւով զուխտադիր բարեկամսն և զսիրելի ծառայս որ ի տանն ծնեալ է ի և նորք զորպապ զորս թագաւորսն որ զ«<բ>» ցեալ էին ի վերայ հինգ թագաւորացն յազնեալ սատակէր զնոսա և այնպէս զգրեալ էր որորորգեան թափէր և զարձացանէր քրիստոսին: Աստ նմին օրինակի և ոմն իմաստասեր, ասաց թէ հաւատարիմ բարեկամն զեղ է կենաց: Զոր արժան է մեծաւ զովսեմամբ պատուել և բարձրացուցանել զմեծագրին Աղէքսանդրոս թագաւորն որ այլ ոչինչ հարմարեալ լաւագոյն բարերախտութեան պատճառս կենաց քան թէ բազմութեամբ սիրելեացն հարստանալ և յամենայն ժամանակս պայծառապէս և քանութեամբ ծայրագոյն պարճանաց բարի անուամբ լցեալ և զարմանալի յապառնիսն թողուր յաշխարհի յիշատակս:

24. ... համարելի է ... քաղաքութիւն հունարեան կառուցվածք է, ինչպես «Ներքողի է զգլմս, զիրս» (V), փիւ. «համարելի է թագաւորութիւն». տես ծանոթագրութիւններն ներածական հոդվածը, էջ 259, հմմտ. նաև II, ծան. 40 և այլուր:

25. Հմմտ. I. 3. ա. «ի ծայրագոյն վարդապետութեանն ժամանեալ հասաւ գահ»:

26. գ'առ ի ներքոյ արեգակն հմմտ. Փիլ. իմաստ. 85, «գ'առ բոս իւրաբանչիւրսն առաքինութեանն կարծիս» — VI. 108. τὰ καὶ ἐκάστην ἀρετὴν δόγματα.

27. կրքութեամբ... էր հրահանգեալ հմմտ. VII, ծան. 83, 84:

28. Հմմտ. կրքանիտի մոտ՝ Ալեքսանդրի ծախալուն զովսասանքը՝ երկու մայրցամաքները բախտազորեցնելու, իմաստութեամբ սիրելու համար, որի շնորհիվ նա զարձակ Արիստոտելի աշակերտը, ի տարրերութեամբ շքեղ կյանքը զերազատող մյուս թագաւորներին, թագաւորներին ոչ բնորոշ ընկերասիրութեան և պարզութեան համար, որ և թույլ տվեց ինչ-որ մեկին մոտենալու և իր հարցը տալու:

29. օճառ են խորն խաղաղութեան հմմտ. II. 2. ք. «որ է մայրաքաղաք խորին խաղաղութեան և օճառ անբա բարութեան», տե՛ս նաև I. 1 «խորին խաղաղութեանն, I. 3. «խորին խաղաղութեամբ», III. 2. դ. «խորին խաղաղութեամբ», IV. 3. ա. «ի խորին խաղաղութեանն», V. 3. է. «խորին խաղաղութիւն», VII. 5. ծթ. «խորին խաղաղութեամբ», VIII. 3. գ. «ի խոր խաղաղութեանն», IX. 5. «զխորին խաղաղութիւն, X. 2, «ի խորին խաղաղութեան... օճառ բարեպաշտութեանն», տե՛ս նաև Բրս. պճ. 5. «ոչ ինչ խափան լինէր խորին խաղաղութիւն (βελῆταιν εἰρήνην— PG.31.192) զու յամենայն աշխարհի»:

30. Տես ծննդոց ժդ., հմմտ. նույն թեմալով՝ IX. 1. «հոշակաւոր հայրապետն Արրահամ... ի միմեանց սատակէին սրոց... զերիչը... զերեալը... լաւագոյն աւարտման» (նաև VII. 1. ժր. V. 4. դ). կրքանիտի մոտ (Libanios, էջ 71—72) հիշատակվում է Հերակլիտի և Քեսեպի, Քեսեպի և Պելլոպոնեսի, Օրեսեսի և Պիլագեսի, Արիլլեսի և Պարոնիտի բարեկամութեամբ:

31. Տե՛ս Սիրաք. դ. 16. «Բարեկամ հաւատարիմ՝ զեղ կենաց»: կրքանիտի մոտ (Libanios էջ 73) վկայակոչվում է եմբիպիդեսը:

32. Չնայած ձեռագրերի մեծ մասը (հնագույնները) ստիպում են ընդունել «հազարս» բնիւրցումը սակայն վերջինս զուրկ է «վճար» կամ նման տիպի իմաստից (հունարենում էլ այդպիսի իմաստ չկա, որպեսզի պատճենում համարենք): Ինչ վերաբերում է «համար»-ին, հմմտ. ա. մակ ժ. 44, 45. «ծախ համարոյն յարբոնուստ վճարեցի», Մտթ. ժր. 36. «Տացեն համար յաւորն գատաստանի» կն:

33. Նախօրինակը չի պահպանվել: Այդ խոսքը Բաղկասկի անունով հանդես է գա-

լիս վատիկանյան մի գնտնուդիոնի մեջ. Isocrates used to say: „Teachers ought to receive large fees from their students—from the gifted because they learn much and from the dull because they are much trouble“. (Հղում է քսա Hock, O'Neil, էջ 5), Սակայն նախադրութեան բնագրում բերվող համառոտ կենսագրական տեղեկութիւնները և մանավանդ նրան իմաստակների (սովետականներէ) շարքին դասելը ստիպում են մեզ ենթադրելու, որ Ափթնիտի մոտ նույն Սոկրատը պետք է լինէր (որը բուն իմաստակ չէր, սակայն ազանդութեամբ կապում էր նրան վերջիններս հետ):

34. Հմմտ. I. 2. ա. «ի ծայրագոյնն թագաւորութեանն ժամանեաց գահ» (ծան. 25):

35. Տե՛ս ծան. 32:

36. գրեզն B (լուս.) «որ է անպտուղ»:

37. Ելից. Լ. 15 «... մեծատուն մի՛ յաւելցէ և տանին մի պակասուցէ ի կիսոյ երկրամեկին ի տալ...»:

38. անչինջ մատենիւմ հմմտ. VI. 3. ժ. «անչինջ մատենի»:

39. Հմմտ. Ափթնիտի մոտ (Nikolaos, էջ 277). Ληζων ἐρωτηθεὶς τίνας ἀν εἶεν τῆς Σπέρτης οἱ ὄροι, τὸ δὲ οὖν εἰδείσεν: «Ὑλ' ἵαυμ վայրի» հազանարար ուշ հավելում է, բանի որ այդպիսի խոսքեր չկան ոչ Ափթնիտի մոտ, ոչ էլ ոմնայ տեղի աղբյուր՝ Քեոնի մոտ (Թէոփն, էջ 40): Հավելումը կատարված է, հավանաբար, «պետք խանք» խորագիրն արդարացնելու համար, մի գուցէ և «ասաց, ի ստաս» (2)-ի նմանակութեամբ: Ձեռագրերը միաձայն ունեն «ցցեալ», սակայն εἰδείσεν («ցուց տվեց») ստիպում է մեզ ուղղելու «ցուցեալ» (տե՛ս և Ակիւնյան, Թէոփնեայ, էջ 209): Այս «պետքն», քստ Մանանդյանի (Թէոփն, էջ 12) նույնպիսի փովսականութեամբ ունի խորեանցաւ «զի սահմանք բաշացն ասէ, զէն իրեաց, որբան հասանէ, այնքան ունի» (I, Ը) հատվածի աղբյուրը լինելու, ինչպես և համապատասխան «պետք»-ը Քեոնի մոտ. «Եւ ես լակոնացի այր հարցեալ ուրումն զնա՝ ու՛ր զսահմանս երկրին ունին լակեղմեմեցիքն»՝ հոյոց զհիզակն» (Թէոփն, էջ 40):

40. խորին խաղաղութեամբ տե՛ս ծան. 29:

41. Լակեղմեմեցիքների (Սպարտայի բնակիչների) «զովսեման» մեջ Ափթնիտը հիշատակում է, որ նրանք սերում են Հերակլեսից:

42. ցցանկալիս բուրաստանացն հմմտ. ծան. 44:

43. Ափթնիտը համեմատում է աշխատասեր հողագործների հետ, որոնք աշխատանքով բազմապատկում են իրենց ծառերը, ինչպես լակեղմեմեցիքներն իրենց տարածքները (Nikolaos, էջ 277):

44. Տե՛ս ա. թագ. ժէ: Հմմտ. նաև V. 4. է. VIII. 3 («մեծ և գանարդի կերպարան») և IX. 3 «ցցանկալիս գաւառացն» genitivus partitivus.

45. Տե՛ս Ցեսուայ. ա. 6. «Զօրացի՛ր եւ բա՛ջ լեր, յի դու բաճանեցես մողովրդեանդ այգմիկ զերկիրն, զոր երզուայ հարցն քոց տալ դոցա»: Ափթնիտի մոտ վկայակոչվում է Ակիւնյան, քստ որի ոչ թէ ծառերն ու բարերը, այլ այրերն են կազմում բաղաբը:

46. Բաուզգարտները համարում էր (Baumgartner, էջ 465—466), որ այս վերնագրերը Թարգմանված է Քեոնից. Θεάνω τῆ Πυθαγορικῆ φιλόσοφος ἐρωτηθεῖσα ὑπὸ τινος, ποστὰτα γυνὴ ἀπ' ἀνδρός καθάρῃ εἰς τὸ Μεταφορεῖον κατεῖπον, εἶπεν, ἀπὸ μὲν τοῦ Ἰδίου παραχρηῖμα, ἀπὸ δὲ τοῦ ἄλλοτρίου οὐδέποτε., Քեանով Պիթագորեան հարցեալ յումեմն է բանօրեակն է կին յառնէ մարուր ի Քեոնիօրոնն իջանէ, ասաց՝ յերմէն եւ նոյնօր-




ման յօտարէն եւ երբէք ոչ\* (Թէոփն, էջ 36—37): Սակայն այդպիսի կոթարգրութեան անհրաժեշտութիւն չկա, քանի որ այդ թեման արծարծել է եւ Ափթնիսոսը (Nikolaos, էջ 274). Յետո՞ւ ի Խաղաղութեան փիլոսոփոս Էրօտրիւսէս ասոն Էստի Էպ' Էնոթոս շոնոյ քրօսէլոթոս տօս Դէրօփօրօս, Էի մէն Է՛՛ Էսէիօս քարաչրէմա, Էփղ, Էի Դէ Էպ' Էլլօթրօս միջօթօս: Եկատարելով զԹէանոփ ճայցակահանի եւ Յետո՞ւ ուղղակահանի անճատարատարութիւնը, Է. Տաշյանը մատնացուցց է անում մի այլ աղբյուր՝ «Բանք իմաստասիրացը»: «Յիլոմնաս ոմն կին պիթագորական ճարտելու, Թէ յետ քանի՞ ատար մտցէ ի տուն կոսց այր որ լինի բնոյ կնոջ, ասէ, յիւրն՝ նոյն օրին եւ յօտարին՝ ոչ բնաւ» (Տաշյան, էջ 207-218): Չնայած ազատագրումը նույնն է, եւ երկու դեպքում էլ Քեանոն դադարել է պիթագորական լինելուց, սակայն այն, որ «Պիտոյից զբրե՛» Հեղինակը ճիշտ էր հասկացել Ափթնիսոսին, երևում է թեկուզ քրօ գիրքից. «Վասն զի լսող ոմն մեծագոյն նորա եղևու իմաստիցն, կին՝ անուն Թէանոփ, որ ճարտելու լինէր յումնմնէ...»: Այնպես որ մեր վերնագիրը համարաբար սկզբում ճիշտ է եղել եւ կապ չունի «Բանք իմաստասիրաց»-ի հետ: Երանից է ծագում, ամենայն հավանականութեամբ, Սերեոսի էլ պիլիի ազատագրումը համարված. «ԶԹէանոփ ոմն զկին մարդ գաշակերտ Պիթագորայ ճարտելու եղև թէ յետ քանի ատար մերձատրութեանն ի կին մարդ արժան է յարբանիս մասնել: Եւ նա ասէ. «Յիւրմն նոյն օրին յօտարէն եւ ոչ բնաւ» (Սերբէոս, էջ 159. մատնանշած բոլոր հատվածների հնարավոր փոխհարաբերությունների մասին Գ. Արզաբաբեի դիտարկումները տե՛ս նույն տեղում, ծան. 583, 585, էջ 336, 337, 338. տե՛ս նաև Ակինյան, Թէոփնեայ, էջ 207-208, Հովսեփյան, Փափիթ Հարբացի, էջ 214—216):

- 47. վարժել եւ հրահանգել հմմտ. VII. ծան. 83, 84:
- 48. Ափթնիսոսի մոտ (Nikolaos, էջ 274) խոսվում է միայն այն մասին, որ Պյութագորասն առաջինն է, որ «վարդապետութիւն էր մատակարարում նաև կանանց»: Թերևս միակ դեպքն է, երբ անտիկ աշխարհի մասին խոսելիս մեր Հեղինակը տեղեկություններ է ավելացրել իր նախորդների համեմատ. նշենք, որ այդ տեղեկությունները Պյութագորասի մասին շատ տարածված էին:
- 49. խորին խաղաղութեան տե՛ս ծան. 29:
- 50. գայս ի բոշուն կենդանեաց (գոյ) իմանալ accusativus cum infinitivo, սակայն «գոյ» բառից հետո այդ դարձվածքը բերականորեն ճիշտ չէ:
- 51. ... գառառակաց գոյ (ասացին) երուս accusativus cum infinitivo:
- 52. Հմմտ. Վեցորեայ, էջ 272, բնագրային գուգահնո շի դիտվում:
- 53. παραβολή գրեսսմ Ափթնիսոսն ասում է (Nikolaos, էջ 275), որ անօրեն հաճույքների նկատմամբ հիվանդագին հակում ցուցաբերող մարդիկ հեռացվում են աստվածների պաշտամունքի ծեսերից ճիշտ այնպես, ինչպես զհարեությունների ժամանակ զոհերից անջատվում են հիվանդ անդամները:
- 54. Աթենացի բրմուհի Նիեսոս, խառնելով զոհեր մատուցելն ու սեփական հաճույքը՝ մեծ պատիժ կրեց (Nikolaos, էջ 275):
- 55. Երբայ. մղ. 4. «Պատուական է ամուսնություն ամենևին եւ սուրբ անկողինք, բայց զշոուն եւ զպատնիկս դատի Աստուած»: Ափթնիսոսի մոտ Առթուկիւն ասում է, որ աստվածներին հաճո են ողբախոս՝ մարդիկ, իսկ հաճույքները գերադասողների նկատմամբ նրանք թշնամարար են արամագրվում:

Aphthontios, էջ 67. օրօս Գնօմոց Hermogenes, էջ 8. քարի Գնօմոց.

1. Գնօմոց Էստի Լօցօս { Էն Էպօփանսէս (Pag., Mon. 1, E. A. X) Էպօփասէս (Mon 2) քափալաթօճից (Aphthontios, էջ 67) Էպօփասէս (Vind.) Էն Էպօփասէս (M. K. 123.7, Sch. A. 592.3)

«բացասութեամբ»—Էպօփասէս (փղմի բայից), վերջինս ունի եւ բացաբերութեամբ նշանակութիւնը, որը նշված կոնտրաստում արամարանորեն պիլիի արդարացված կլինէր, հմմտ. հակառակ սխալ թարգմանութիւնը թրակացու բերականութեան մեջ՝ Էպօփասէս «պպրեւութիւն»՝ փիլ. բացասութիւն», տե՛ս Bolognesi, Studi argumenti, էջ 31—37, Մուրադյան Ա., էջ 289, սակայն նույն նշանակութիւնն ունի եւ Էպօփանսէս (փայնօ բայից) ձևը: Հերմոգենեսն ունի Էն Էպօփանսէս բնութեցումը. այս տեղի բնագրային պատմութիւնն այսպիսին է.



2. զլիւսուորեալ քափալաթօճից Էսեղմ, համառօտս:

3. յողղեղելով յինչ եւ կամ հրածարեցուցանելով Էպի տի քրօթրէքօն ի Էպօթրէքօն. զիբ. բայներն այստեղ կիրառված են որոշիչ առումով, որը հասուի չէ անորոշ բայի գործիական հոլովին. սակայն վերջինս կիրառված է շեշտելու համար, որ այդ գիրքայինը ներկա ժամանակի են, որ չէր կարող հողղողել հայերեն անցյալ դերբայը. այդպիսի թարգմանություն կարող ենք գտնել թրակացու մոտ. "Όνομα Էստի մէրօս Լօցօս քրօտիկօն սօփա ի քրաչիմա սիլմաօնօն Է՛՛ Անուօն Է մասն բանի հոլովական մարմին կամ իր նշանակելով» (Αδωνα, էջ 12,22): Հմմտ. եւ IX. 1:

Այս սահմանումից հետո Ափթնիսոսը թվարկում է խրատների տեսակները. քանի որ այդ ցուցակը չկա ինչպես մեր բնագրում, այնպես էլ Հերմոգենեսի մոտ, այն ուղ հաղվում ենք համարում:

4. Եւ խրատաս ոմն է մասնակի սեռական պատճենված է (էլչ Դէ Գնօմոց տօ մէն Էստի Ա. 67.2). «ոմն» դերանվան իրի առումով հանդես գալը նույնպես դասական լեզվի նորմերի խախտում է. հմմտ. X. 6. ա (ծան. 6):

5. Երատի տեսակների հերթականությունը տարբերվում է ինչպես Ափթնիսոսից, այնպես էլ Հերմոգենեսից.

Հերմոգենես	Ափթնիսոս	«Գիրք Պիտոյից»
ἀποτρέπων (8.18)	προτραπτικόν (67.6)	բացասական (Էպօփանտիկօն)
προτρέπων (8.20)	ἀποτραπτικόν (67.8)	հրածարական







Դավթի մեկնության մեջ. «տազ սախ հոմերականն, (Адонц, էջ 89,15): Տե՛ս նաև II. ծան. 40, 60:

22. գեր ի վերոյ զինն (ասաց) լինելaccusativus cum infinitivo:

23. զվինն ամենայն բերրոպաց genetivus partitivus (մասնակի սեռական):

24. զվեցաղօգտակարազոյնս ախորժակացն գոյականացված ածական է հոգնակի իվով, և գերադրական աստիճանի հետ կիրառված մասնակի սեռական: Հմմտ. Փիլ. իմաստ. 48. «զեղեցկագոյնք էիցս» —VI, 32. τὰ ζῆλιστα τῶν ὄντων: Ափթնիոսի մոտ Հնարողոր ճշմարտացի պատմել է Մուսաների և աստվածների մասին, տալով վերջիններիս ծագումնաբանությունը. սակայն ամենից շատ նա գովության է արժանի այն բանի համար, որ պատմել է տնտեսությամբ զբաղվողների մասին:

25. Տե՛ս Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 200. «... եւ ոչ շամբուշ մտօք ընդ վեհօն բան զինքն հակառակիր»:

26. ի զուպարս ըմբշաց հմմտ. V.2. ք. «ի մէջ ըմբշական մրցման», II.7. և. «յըմբշամարտ... ի զուպարս հանդիսիցն», VII.2. ժրշ. «զըմբշունև. ի զուպարս ատենցին», X.3 (էջ 236). «ըմբիշս... ի մարտս մրցման», տե՛ս և Փիլ. լին. IV, 228.«ի զուպարս ըմբշաց», «ըմբշաց մրցումն եւ զուպարբ»:

27. Դժնեայ ճարտասան հմմտ. IV.3ա. «զղծնեայ եւ բուական գիտութեամբ (ճարտասանացն)». պատճենում է ձեւով: Բ՛ՂՏՈՐ արտահայտության «ճարտար ճարտասան», «խոսքի վարպետ», իսկ ձեւով: Բ՛ՂՏՈՐ բառի առաջին նշանակությունն է «ճանվոր, սարափելի»: Հմմտ. Բրս. գորղ. «ճարտասանի... կամ բանագրի դմելի...» — PG, 31.489. Բ՛ՂՏՈՐՏ Կ՛ ԼՈՂՂՐՁՐՁՐՈՍ ձեւով... Տե՛ս նաև Փիլ. տեսական 28. «զղծնակութեան ճարտարութեան բանիք» —IX, 158. եւ: ձեւով: ԼՈՂՂՐՁՐՁՐՈՍ:

28. Ըստ Ափթնիոսի նավավարը զոհվում է, եթե պայքարում է ուժեղ բամինների դեմ:

29. Քուռց. ժգ. Ափթնիոսի մոտ բերվում է Քերսիտեսի օրինակը, որն ամենաստորն էր հույներից և հանգզնեց թշնամանալ նրանց առաջնորդի՝ Ազամեմոնի հետ (Հոմ. Իլ. 2. 211—277) որի համար և խիստ պատիժ կրեց Ողիսեսից:

30. Առակ. իգ. 4. «Մի ձգտիր եթէ տնանկ իցէս ընդ մեծատան, ալլ քո իմաստութեամբդ մերժես ի նմանէ: Եթէ հաստատեսցես զերեսս քո ի վերա նորա, ոչ ուրեք երեւի»: Ափթնիոսի (Niko'aos, էջ 282) հիանում է Սոֆոկլեսով, որն ասում է, որ թույլերը ենթարկվում են ուժեղներին, և որ պայքարողը կպարտվի, եթե հավասար չէ իր առջև գտնվողին:

31. Հմմտ. I. 2. գ., ծան. 29:

